

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ
ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

•
YEREVAN STATE UNIVERSITY

ARTAK MOVSISYAN

**HISTORY
OF WRITTEN CULTURE
OF ARMENIA BEFORE MASHTOTS**

YEREVAN • 2021

Ը/Կ 129 Էմ/Կ Արեւիկայի թիւ

ՀՀ ԳԱՍ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՄԱՇՏՈՅՅԱՆ
ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

A 10x822



Գրքի հրատարակման համար հեղինակի ընտանիքն իր խորին երախտագիտությունն է հայտնում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռ. Ղազարյանին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի վարիչ Ա. Քույսանին, «Չանգակ» հրատարակչությանը՝ ի դեմս տնօրեն Ս. Մկրտչյանի, որոնք մեծ պատրաստակամությամբ մեծնամուխ եղան սեղմ ժամկետներում գրքի լույսընծայման աշխատանքներին:

ISBN 978-9939-68-905-0

© Մովսիսյան Ա. Ե., 2021 (իրավունաբեր)
© «Չանգակ-97» ՄԳԸ, 2021

Ըստ իրավունքնեղ արչարանված են:
Սույն հրատարակության ոչև հատված չի կարող վերադարձվել ՕնլայնԻրական Լեկզրունային,
բազադաբանմանման, տնտազման և այլ կտրվակներով առանց հրատարակիչ գրադիր համա-
ձայնության:



Handwritten signature

ԱՐՏԱԿ ՄՈՎԱՍԻՍՅԱԼ

Ծնվել է 1970 թ. ապրիլի 10-ին Արծվյան քաղաքում:

Բարձրագույն կրթությունը ստացել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում: Դեռևս ուսանողության տարիներին զրամ առաջին՝ «Նագույն պետությունը Հայաստանում. Արատտա» (Ե., 1992) ուսումնասիրությունը «Երիտասարդ գիտնականներ-1993» համահայկական մրցույթում հաղթող է ճանաչվել իբրև լավագույն պատմագիտական աշխատանք:

1994 թ. էքստեն կարգով ավարտելով ԵՊՀ պատմության ֆակուլտետը՝ Ա. Մովսիսյանը շարունակել է կրթությունը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում, որն էլ ավարտել է 1997 թ.՝ պաշտպանելով «Վանի թագավորության (Բիայնիի, Ուրարտու) մեկնագրությունը» խորագրով թեկնածուական առեմալտություն՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Աշխատանքային գործունեությունը ևս սկսել է ուսանողության տարիներին: 1991-1997 թթ. աշխատել է Հայաստանի պատմության պետական թանգարանում՝ որպես գիտաշխատող, 1997 թվականից՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում (2004 թվականից՝ ավագ գիտաշխատող), 1998 թվականից՝ ԵՊՀ հայոց պատմության ամբիոնում (սկզբում՝ որպես ամբիոնի դոցենտ, 2016 թվականից՝ որպես ամբիոնի վարիչ):

Կրթական և գիտական բնագավառներում ձեռքբերումների համար Ա. Մովսիսյանը պարգևատրվել է ԵՊՀ ոսկե մեդալով (2015 թ.) և ՀՀ պաշտպանության նախարարության «Լազգեն Սարգսյան» մեդալով (2016 թ.):

2015 թ. Ա. Մովսիսյանը պաշտպանել է դոկտորական առեմալտություն՝ «Հայաստանի գրավոր մշակույթը նախամաշտոցյան ժամանակաշրջանում» թեմայով ստանալով պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2016 թ. նրան շնորհվել է պոդֆեսորի գիտական կոչում:

2016-2020 թթ. ղեկավարել է ԵՊՀ հայոց պատմության ամբիոնը:

Խիստ ծավալուն է Ա. Մովսիսյանի ներդրումը գիտության ստաբիլիզում: Հայագիտության բնագավառում նա էական գործունեություն է ծավալել հատկապես հնագույն Հայաստանի պատմության և նախամաշտոցյան զրեի եետագտումն ոլորտում: Ա. Մովսիսյանի ժառանգությունը արտացոլված է բազմաթիվ գիտական և հանրամատչելի գրքերում, Հայաստանի և արտերկրի գիտական հանդեսներում տպագրված հոդվածներում: Խիստ կարևորելով հայոց պատմության առանցքային դեմքերի, վայրերի և պատմական իրադարձությունների լուսարանումը՝ նրա հեղինակությամբ նկարահանվել են գիտահանրամատչելի փաստագրական ֆիլմեր: Ա. Մովսիսյանը ստեղծել է նաև ուսումնական ձեռնարկներ՝ նպատակով դպրոցական և բուհական կրթական համակարգերի բարելավմանը, ազգային կրթության զարգացմանը ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում:

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌՎՋԱՐԱՆ ՀՀ ԳԱՄ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆՍՏԻՏՈՒՄԻ ԿՈՂԱՄԹ 7

ԱՌՎՋԱՐԱՆ 8

Գլուխ Ա. ՀԱՐՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀՌԵ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ԳՐԱՎՈՐ ԱՂՔՑՈՒՐՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՆԱԽԱՄԱՇՈՑՑԱՆ ՀԱՅՄԱՏԱՆՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԱԾ ԳՐԵՐԻ ԵՎ
ԴՊՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 18
2. ՀԱՅՄԱՏԱՆԻ ՆԱԽԱՄԱՇՈՑՑԱՆ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ
ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ 49

Գլուխ Բ. ՆԱԽԱՄԱՇՈՑՑԱՆ ՀԱՅՄԱՏԱՆՈՒՄ ՍՏԵՂՇՎԱԾ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

1. ԳՐԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՆԱԽԱՓՈԽԸ ՀԱՅՎԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ... 95
2. ՀԱՅՄԱՏԱՆԻ ՉԱՐԳԱՅՄ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (ԳԱՂԱՓԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ)
ԳՐԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՎԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՂ ԲՐՈՆՉԻ
ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ 100
3. ՀԱՅՄԱՏԱՆԻ ԳՏԱՅԻՆ ԳԻՐԸ 103
4. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՇԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 113
5. ՀԱՅՎԱԿԱՆ ՄԵՇԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԻՆՑ ՄԻՆՉԵՎ ԲՐՈՒՍՏՈՆԵՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՐՈՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ ՀԱՅՄԱՏԱՆՈՒՄ 177
6. ՀԱՅՎԱԿԱՆ ՄԵՇԵՆԱԳՐԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՄԱՏԱՆՈՒՄ
ԲՐՈՒՍՏՈՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀՈՉԱԿԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԵՏՈՒ 179

Գլուխ Գ. ՆԱԽԱՄԱՇՈՑՑԱՆ ՀԱՅՄԱՏԱՆՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՀՍԱԿ ԶԹՎԱԳՐՎՈՂ ԵՎ ԱՌՆԵՂՇՎԱԾՅՈՒՆ ՆՇԱՆԱԳՐԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՋԱՆՆԵՐ

1. ՀՍԱԿ ԶԹՎԱԳՐՎՈՂ ՆՇԱՆԱԳՐԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՋԱՆՆԵՐ 189
2. ԱՌՆԵՂՇՎԱԾՅԱԿ ՆՇԱՆԱԳՐԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՋԱՆՆԵՐ 191

Գլուխ Դ. ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՍՏԵՂՇՎԱԾ ԵՎ ՆԱԽԱՄԱՇՈՑՑԱՆ ՀԱՅՄԱՏԱՆՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

1. ԽԵԹԱ-ԼՈՒՄՎԱԿԱՆ ՀԻՐՈՂԱՓՈԽԿԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅՄԱՏԱՆՈՒՄ 198
2. ԱՍՈՒՐԿ-ՔԱՐԵԼՈՆՅԱՆ ՄԵՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՎԱԿԱՆ
ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ 204
3. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՊԱԳԻՐԸ 207
4. ՀԱՅՄԱՏԱՆԻ ԱՐԱՄԵՏԱՌ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 217
5. ՀՈՒՆԱՐԵՆԻ ԵՎ ՀՈՒՆԱԿԱՆ ԳՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՄԱՇՈՑՑԱՆ
ՀԱՅՄԱՏԱՆՈՒՄ 231

6. ԿԱՌԱՐՈՒՄԵՆԻ ԵՎ ԿԱՌԱՐՄԱՆ ԳՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	258
7. ԴԱՐՄԱԿԵՐԵՆԻ ԵՎ ԴԱՐՄԱԿԱՆ ԳՐԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	259
Գլուխ Ե. ՕՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹՈՂՆՎԱԾ ԳՐԱՎՈՐ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ	262
Գլուխ 2. ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒԹՅՈՒ ՄԻ ՔԱՆԻ ԱՅՈՒՆՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ	
1. ՎԴԱՍԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒ ՈՐՊԵՍ ԳՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՄԻՋՈՑ	280
2. ԹՎԵՐԻ ՆՇՄԱՆ ՄԿՉՔՈՒՆԱՆՆԵՐԸ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՎՈՐ ՄԱՍԻՆ ԿԱՐԳԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՇՏՈՑՅԱՆ ԱՅՔՈՒՐԵՆԻ ԹՎԱՎԱՄԱԿԱՐԳԸ	282
3. ԳՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒ ՎԻՇԱԿԸ IV ԴԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	287
ՎԵՐՉԱՔԱՆ (ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒԹՅՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ)	294
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ	298
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	300
ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	331
ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ՆԿԱՐՆԵՐ	345
ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ԱՐՅՈՒՄԱԿՆԵՐ	416
ՀԱՎԵԼՎԱԾ Գ. ԶԱՐՏԵՉՆԵՐ	436
Ա. ՄՈՎԱՍԿՅԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	443
Ա. ՄՈՎԱՍԿՅԱՆԻ ՀԵՂԻԱԿԱԾ ԳԻՏԱՀԱՆՐԱՍԱՏՉԵԼԻ ՓԱՍՏԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԸ	445

ԱՌԱՋԱՐԱՆ

« ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Անվանի հայագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտակ Մովսիսյանը հայագիտության այն երախտավորներից էր, ով իր կարճատև կյանքի ընթացքում անջնջելի հետք թողեց գիտակրթական ոլորտում, հասարակական կյանքում և ընդհանրապես իր ժամանակակիցների հիշողության մեջ: Այսօր մենք խորապես զգում ենք Արտակի կարիքը, գիտակցում գիտական նոր արարումների նրա մշտական ձգտումը: Նա արժանիորեն վայելում էր իր գործընկերների և հատկապես հազարավոր ուսանողների անվերապահ հարգանքը: Հագիվ թե այսօր գտնվի մեկը, ով չհիշի Արտակ Մովսիսյանի պատրաստակամությունը օգնելու մերձավորներին:

Ա. Մովսիսյանը իր աշխատանքային գործունեությունը սկսեց և գիտության մեջ իր առաջին քայլերը կատարեց « ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում, դառնալով այդ ընտանիքի անբաժանելի մասը: Ավելի ուշ Ա. Մովսիսյանը ամբողջությամբ նվիրվեց նաև իր հարազատ բուհի՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետին:

Ա. Մովսիսյանի մեծաքանակ մեկագրություններն ու հոդվածները՝ հրատարակված Հայաստանում և արտերկրում, նրան բերեցին արժանի հեղինակություն:

« ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի և ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդների կողմից հրատարակության երաշխավորված սույն մեկագրությունը Արտակ Մովսիսյանի դոկտորական ատենախոսությունն է, որը նա հաջողությամբ պաշտպանել է « ԳԱԱ Պատմության ինստիտուտի մասնագիտական խորհրդում: Գիրքը հերթական նվերն է հեղինակի կողմից պատմագիտական հանրության և հայոց պատմությանը հետաքրքրվողներին:

« ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

ԱՌԱՋԱՐԱՆ

Գիրն իրավամբ դասվում է մարդկության մեծագույն նվաճումների շարքը: Գրի շնորհիվ են պահպանվում և ապագային փոխանցվում մարդկանց մտքերն ու նվաճումները: Իբրև մշակութային երևույթ՝ այն նրևան է գալիս բավականին ուշ՝ սկզբնավորվելով հասարակական նկատելի վերելք ապրած ժողովուրդների մոտ: Գիրն առաջ է գալիս իբրև քաղաքակրթության ճնունդ և դառնում վերջինիս շարժիչ ուժը:

Հնում քաղաքակիրթ ժողովուրդների հավատալիքներում գիրը սրբացվել և համարվել է աստվածաստեղծ: Բազմաստվածության ժամանակաշրջանում մի շարք ժողովուրդների դիցարաններում եղել են գրի, դպրության և իմաստության աստվածներ (օրինակ՝ հին եգիպտական Թոտը, հին բաբելոնյան Նաբուն, հին հնդկական Սարասվատին, հին հունական Հերմեսը, հայկական Տիրը և այլ աստվածներ): Այդ հատուկ վերաբերմունքը պահպանվել է նաև միաստվածության դարաշրջանում. պատահական չէ, որ միջնադարում գրեթե ստեղծած անձինք (գոթական այբուբենը ստեղծած Վուլֆիլան (Ուլֆիլա, IV դար), Մեսրոպ Մաշտոցը, սլավոնական այբուբենի հեղինակներ Վերիլն ու Մեֆոդիև և ուրիշներ) սրբացվեցին¹:

Ե՛րբ է Հայաստանը մտել քաղաքակրթական դաշտի այն սահմանագիծը, որը բնորոշվում է իբրև գրավոր մշակույթի դարաշրջան:

Հայաստանի գրավոր ժառանգությունն աշխարհում ամօրի ճանաչված է հինգերորդ դարից սկզբնավորված մաշտոցյան դպրությանը: Եվ դա հասկանալի է: Մակայն պակաս հետաքրքիր չէ նաև մինչմաշտոցյան ժամանակաշրջանի գրավոր մշակույթը, որը դարձել է մեծաթիվ ուսումնասիրությունների ու բուռն քննարկումների առարկա:

Նախամաշտոցյան Հայաստանի գրի և դպրության հարցը հատուկ ուշադրության առարկա է եղել դեռևս հայոց նոր այբուբենի ստեղծումից առաջ՝ Մեսրոպ Մաշտոցի որոնումների ժամանակ: Հայտնի է, որ երբ Մաշտոցը և կաթողիկոս Սահակ Դարբեղը ներկայացան ու իրենց մտադրությունը հայտնեցին Վասնշապուհ արքային, վերջինս նրանց հաղորդեց, որ տեղյակ է Միջա-

¹ Հին և միջին դարերում գրի՝ սրբազան փնելու պատկերացումների մասին ամփոփ տե՛ս Tonopos, 1992, էջ 314-316 (և եղիված գրականությունը): Գրի և քաղաքակրթության կապի ամենախառն արտահայտություններից մեկը «գիր ունեցող ժողովուրդների» թմատիկայի սովորությունն է անտիկ և միջնադարյան գրականության մեջ: Ուշագրավ է այս թեմայի փարսերէյալ VI դարի առթիվ մատենագիր Անդրեյկոս Ինաստանի «Գիրք ժողովուրդների և երկրների մասին» երկում պատգամված հետևյալ գնահատականը. «...Մեմից, Ջամից և Հարթեցի անբժցին այս 73 ժողովուրդները, ազգայությունը և բարևները: Նրանցից քսանհազ ևն 15-ը, իսկ մյուսները չեն տարբերվում կենդանիներից, բոլոր որպես անգիտանից գրեթե, թափառում են երկրի երեսին» (Историческая, 1962, էջ 336-339):

գետրի հյուսիսում պահպանված հայոց հին գրերի մասին²: Դանիել անունով ասորի եպիսկոպոսից թերված գրանշանները, սակայն, չբավարարեցին խնդրի լիակատար լուծմանը, և Մաշտոցը ձեռնամուխ եղավ նոր գրային համակարգի ստեղծմանը:

Հարցի նկատմամբ հետաքրքրությունը չմարեց նաև հետագա դարերում: Ասվածի վկայություններն են բազմաթիվ մատենագրական տեղեկությունները, որոնց կանոնադատանք մեր շարադրանքի ընթացքում: Հարցը շատ ավելի լայն քննարկումների ու բանավեճերի առարկա դարձավ նոր ժամանակների գիտության մեջ՝ հայագետներին բաժանելով երկու մասի, առանց ընդհանուր ընդունելության արժանացած մի տեսակետի ձևակերպման: Մեր օրերում թեպետ բանավեճը չի շարունակվում (գոնև անցյալի կրքոտությամբ), չի կարելի ասել, թե այն վերջնական լուծում է գտել:

Ներկայացվող աշխատանքում կանոնադատանքը Հայկական լեռնաշխարհում գրի ծագման և զարգացման վաղ փուլերին (նախագրային դրսևորումներին), կենրկայացնենք նախամաշտոցյան Հայաստանում կիրառված գրային համակարգերը՝ իրենց առանձնահատկություններով, ինչպես նաև ի մի կերպենք Հայաստանից գտնված տեղական և օտար ծագում ունեցող արձանագրությունների մասին տեղեկությունները:

Հայոց դպրության պատմությունն ընդունված է բաժանել երկու մեծ դարաշրջանների՝ նախամաշտոցյան և մաշտոցյան: Երկրորդի դեպքում մենք գործ ունենք աշխարհի ամենակատարյալ այբուբեններից մեկի հիմքով ստեղծված մշակույթի հետ, որի համաշխարհային նշանակությունն անուրախակի է: Այս դարաշրջանն սկսվեց՝ հիմքում ունենալով գրի զարգացման ամենաբարձր աստիճանը՝ այբուբենը: Մինչդեռ առաջին՝ նախամաշտոցյան դարաշրջանի ակունքները հասնում են մինչև նախապատմական ժամանակաշրջաններ, սկզբնավորվում քարի դարի վերջով թվագրվող ժայռապատկերներից, զուգահեռ ընթանում հայ ժողովրդի ծագմանն ու կազմավորմանը, հայկական պետականությունների զարգացմանը: Այս առումով Հայաստանի նախամաշտոցյան դպրության ուսումնասիրությունն արդիական է բոլոր ժամանակներում, քանի որ այն ճանաչելի է դարձնում ոչ միայն գրավոր մշակույթի մի մեծ դարաշրջանը, այլև մեր ազգային մի շարք առանձնահատկություններ՝ իրենց պատմական զարգացման ընթացքում: Այս թեմայի ուսումնասիրությունը բացահայտում է նաև այն հիմքերը, որոնց վրա բարձրացավ հայոց դպրության Ոսկեդարը:

Սույն հետազոտությունը նվիրված է Հայաստանի նախամաշտոցյան դպրության ուսումնասիրությանը: Մեր նպատակն է համակողմանի ուսումնասիրության ենթարկել հիմնախնդիրը՝ մինչ օրս հայտնի ողջ նյութի հետազոտության հիմամբ, հնարավորինս բացահայտել քնազավաթի մինչ օրս չուսարան-

² Կոպյուն, գլ. 2; ՄՀ-Ա, էջ 236-237; Մովսես Խորենացի, գլխ. Բ, գլ. ԾԲ; ՄՀ-Բ, էջ 2080; Կազար Փարսեղյի, ղրկագ Ա, գլ. Ժ; ՄՀ-Բ, էջ 2212-2215:

ված կամ քիչ լուսաբանված հարցերը: Այդ նպատակով սկզբնաղբյուրների հանգամանակի վկայակոչմամբ նախ կենրվայացնենք հիմնախնդրի ուսումնասիրության պատմությունն ինչպես հայ և օտար մատենագրության շեղում, այնպես էլ նոր ժամանակների գիտության մեջ: Այնուհետև ցայսօր կուտակված ողջ նյութի հիմամբ կ'իտրծենք մանրամասնորեն վերականգնել հայաստանյան գրավոր մշակույթի ծագման ու զարգացման պատմությունը՝ սկզբից մինչև Մեսրոպ Մաշտոցի գյուտը: Այդ նպատակով Հայաստանում ստեղծված մինչմաշտոցյան շրջանի ողջ գրավոր նյութը կարգադասել ենք ըստ ծագման ու պատկանելության, ըստ այդմ էլ գլուխների ենք բաժանել քննարկման առարկա ողջ նյութը:

Հետազոտությունն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհում գրի սկզբնավորումից մինչև Մեսրոպ Մաշտոցի գյուտն ընկած ժամանակաշրջանը: Բացի այդ, աշխատանքում քննարկվում են նաև քրիստոնեական դարաշրջանում մեհենագրերի կիրառման վերապրուկային դրսևորումները, որոնք հասնում են մինչև մեր օրերը:

Ուսումնասիրության նյութի աշխարհագրական սահմանները հիմնականում վերաբերում են Հայկական լեռնաշխարհին: «Նախամաշտոցյան Հայաստան» ընդհանրական անվան տակ աշխատանքում ընդգրկված են ինչպես Հայկական լեռնաշխարհը¹, այնպես էլ հարակից այն տարածքները, որոնք մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում գտնվել են հայկական թագավորությունների կազմում: Գրային հուշարձանների տարածման աշխարհագրությունն ակնհայտ դարձնելու նպատակով ներկայացվող աշխատության շեղում գետնից ենք քարտեզներ:

Չնայած քազմաթիվ սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների առկայությանը, հիմնախնդիրը քազմաթիվ հարցերում մնացել է չլուսաբանված, քիչ չնև նաև թերի, ոչ լիակատար պատկերացումները: Վերջին տասնամյակներում հարցի քննարկումների ժամանակ, փոխարենն առկա ամբողջ նյութը հավաքելու և ուսումնասիրելու, ավելի հաճախ քավարարվել են տեսական դիտարկումներով և անցյալում արդեն քազմիցս չարչրկված մատենագրական տեղեկությունների անպտուղ վերաքննարկումներով: Երբ կան հազարավոր հնագիտական փաստեր, տրամաբանական չէ դրանք մի կողմ թողնելը և, փոխարենը, դրանց մասին դարեր անց պահպանված մատենագրական տեղեկությունները քննարկելը:

Ծավալիորեն, մինչ օրս ի մի չեն բերվել և համապարփակ ուսումնասիրության առարկա դարձել նախամաշտոցյան Հայաստանից մեզ հասած բոլոր գրավոր հուշարձաններն ու դրանց առնչվող տեղեկությունները: Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր բոլոր հուշարձանների հրատարակումը կոթողային մի մատենաշարով մնում է հայագիտության չլուծված կարևորագույն խնդիրներից մեկը:

¹ Հայկական լեռնաշխարհի սահմանների մասին տե՛ս Դորսթոն, 1979, էջ 12–16; Հակոբյան, 1984, էջ 5–29; Գաբրիելյան, 2000, էջ 8–15 (և նրանց գրավաճառությունը):

Հետազոտությունը կատարված է երկու տեսակի սկզբնաղբյուրների հենքի վրա՝ գրավոր աղբյուրների հաղորդումների և հնագիտական հայտնաբերումների: Մատենագիրների երկերի և հնագիտական պեղումների արդյունքների հրատարակումներից բացի օգտագործել ենք աշխարհի տարբեր թանգարանների կատալոգները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության թանգարաններում պահվող բազմաթիվ նյութեր, որոնք առաջին անգամ ուսումնասիրվել և շրջանառության մեջ են դրվել մեր կողմից: Կարևորել ենք նաև նախորդ ուսումնասիրողների եզրահանգումները, որոնք կատարվել են նշված աղբյուրագիտական խմբերից ստացված փաստերի հիմամբ:

Հայաստանի նախամաշտոցյան գրավոր մշակույթի բնագավառում մեր ուսումնասիրությունները սկսել ենք 1990-ական թթ. առաջին կեսին: Հայկական մեհենագրության կարևորագույն փուլերից մեկի՝ Վանի թագավորության մեհենագրության հետազոտության արդյունքում մեզ հաջողվեց ոչ միայն վերականգնել գրային համակարգի ամբողջական պատկերն ու կազմել առաջին լիակատար նշանացանկն ու արձանագրությունների ժողովածուն, այլև 1995 թ. ստանալ գրահամակարգի վերձանության բանալին:

Այնուհետև, ավելի ընդլայնելով հետազոտության դաշտը և ընդգրկելով ամբողջ նախամաշտոցյան դպրությունը, հավաքեցինք ու համակարգեցինք հրապարակի վրա եղած ամբողջ նյութը: Մեր հետազոտությունից առաջ ընդունված էր նախամաշտոցյան դպրությունը բաժանել երեք փուլի՝ նախնադարյան նշանագրություն, Վանի թագավորության մեհենագրություն և Վանի թագավորության անկումից մինչև քրիստոնեության պետական կրոն հռչակումը ժամանակաշրջանի, որի ընթացքում գործածվում էին գերազանցապես օտար գրեր:

Մենք նախ առանձնացրեցինք գիր և նախագիր հասկացությունների դրսևորումները Հայկական լեռնաշխարհում: Մինչուրարտական ժամանակաշրջանը բաժանեցինք զարգացած պատկերագրության՝ գաղափարագրության, և Հայաստանի գծային գրի փուլերի, վերականգնելով այդ պատկերագրային համակարգերի պատկերը, ինչը չէր արվել մեզանից առաջ: Առաջին անգամ մեր կողմից գիտական ուսումնասիրության հիմքի վրա դրվեց մի գրահամակարգ ևս՝ Հայաստանի երկրորդ սեպագիր համակարգը: Համակարգված ուսումնասիրության առարկա դարձրեցինք և լուսաբանեցինք հայկական մեհենագրերի կիրառության մի շարք դրսևորումները չորրորդ դարից մինչև մեր օրերը:

Ի՞նչ կարող է տալ այս ուսումնասիրությունը: Նախ և առաջ այն ունի ճանաչողական նշանակություն. ամբողջությամբ լուսաբանում է հայոց գրավոր մշակույթի առաջին կեսի պատմությունը, օգնում է հասկանալ դրա հետ կապված բազմաթիվ խնդիրներ, այդ թվում՝ այն նախաղբյուրները, որոնք ծնունդ տվեցին մեր մշակույթի Ռսկեդարին: Ուսումնասիրությունն օգտակար կլինի քննարկվող բնագավառների (պատմագիտություն, բանասիրություն, գրաբա-

նություն և այն) հետազոտողների համար: Այն նաև կարող է դառնալ ձեռնարկ բուհական ուսանողության համար: Եվ, վերջապես, կարող է բավարարել հիմնախնդրով հետաքրքրված ընթերցող լայն խավերի հետաքրքրությունը:

* * *

Ցավով պետք է նշել, որ Հայաստանի նախամաշտոցյան դպրության ուսումնասիրությունը հայագիտության մեջ վերջին մի քանի տասնամյակներում ընթացել է ոչ ճիշտ ճանապարհով, ինչը, թերևս, պայմանավորված է եղել մի քանի հանգամանքներով:

Առաջինը՝ փոխարենը ուսումնասիրելու հնագիտական պեղումներից հայտնաբերված մեծաթիվ նյութերը (որոնք մենք կներկայացնենք առաջիկա շարադրանքում) և եզրակացություններ կատարելու դրանց հիմամբ, մեզանում անընդհատ քննարկվել են մատենագիրների հաղորդումները, որոնց մեծ մասը վերաբերում են քրիստոնեական դարաշրջանին, այսինքն՝ դարերով հետո են բուն նյութից: Դեռևս 1893 թվականին Ստ. Մալխասյանը նկատում էր. «Հայոց գրի գիտի մասին և Դանիելեան նշանագիրների մասին զանազան բանասերներ այնքան բազմաթիւ կարծիքներ են յայտնել մեկը միւսին հակառակ՝ որ այսօր մարդ ինչ կարծիք էլ հայտնելու լինի այդ նիւթերի վերաբերութեամբ՝ դժւար թէ բոլորովին նոր լինի այդ կարծիքը – նա հաւանօրէն արդէն աւուած է եղել ուրիշներին»⁴: Ավելացնենք, որ հաճախ անպտուղ բանավեճերն երբեմն ընթանում էին գիտական էթիկային ոչ վայել արտահայտություններով:

Երկրորդը՝ քանի որ տասնամյակներ շարունակ իշխող էին հայերի եկվորության և Աբաբաա–Ուրարտուի ոչ հայկականության մասին տեսակետները, Բ.ա. VII–VI դարերից ավելի վաղ հայտնաբերված գրակիր հուշարձանները հիմնականում դուրս են մնացել հայագետների քննարկումներից: Քննարկվել են միայն Երվանդական, Արտաշեսյան և Արշակունյաց դարաշրջանների նյութերը: Պատշաճ ուշադրություն չի դարձվել Վանի թագավորության մեհենագրությանը, անգամ այն քանից հետո, երբ Լ. Բարսեղյանն ու Հ. Մարտիրոսյանը հատուկ ուշադրություն հրավիրեցին այդ և դրան նախորդող փուլերի վրա՝ հիմնավոր կերպով ցույց տալով դրանց քնիվ հայաստանյան ծագումը:

Երրորդը՝ մի շարք հայագետների մոտ կա կանխակալ մոտեցում, որի հիմքում ընկած է այն կրթաբանական (երբեմն՝ նաև բարձրաձայնվող) մտավախությունը, թե ընդունելով նախամաշտոցյան հայ դպրության գոյությունը՝ ստվերած կլինենք Մեսրոպ Մաշտոցի վաստակը: Խորին հարգանք տածելով մեր մեծանուն գիտնականների անվան և գործի հանդեպ՝ պետք է նշենք, որ նման մոտեցումը բնավ արդարացի չէ: Չմոռանանք, որ հենց ինքը՝ Մաշտոցն էր հայոց հին գրերը գտնելու գործում ամենաշահագրգիռ անձը, նա էր երկու տարի ջանք թափելով՝ ձգտում վերականգնել հայոց հին գրահամակարգը:

⁴ Մալխասյան, 1893, թիվ 3, էջ 41:

Գործողը՝ գրաբանական (գրամատողական) գիտելիքների պակասը է եղել մեզանում: Բազմիցս կարելի է հանդիպել այն միտքը, որ նախամաշտոցյան դպրության գոյության հարցի քննարկման ժամանակ ավելորդ է խոսել մինչապրքեևական գրանշանների՝ գաղափարագրերի, հիերոգլիֆների, հնայական նշանների մասին, քանի որ դրանցով, իբրև թե հնարավոր չէր ստեղծել դպրություն: Չարմանալի է նման պնդումը, քանի որ Հին աշխարհի մինչ օրս վերծանված բոլոր գրահամակարգերում էլ միևնույն նշանները ծառայել են թե՛ նեղ կրոնական պահանջների համար (աղոթքներ, հնայական բանաձևեր, կախարդանքի ու գուշակությունների զանազան տեքստեր), թե՛ դրանցով ստեղծվել են գրական, պատմագրական և այլ բնույթի հուշարձաններ: Այդպես է և՛ շումերական, և՛ եգիպտական, և՛ հին արքայական, և՛ ասուրաբարելոնյան, և՛ խեթական, և՛ խուռիական, և՛ ուգարիթյան, և՛ հին երբայական, և՛ այլ դպրությունների պարագայում. ինչո՞ւ միայն հայկականը պետք է բացառություն կազմեր՝ մնալով զուտ հնայական–կախարդական գործառույթի կամ պարզունակ գաղափարագրության շրջանակներում:

Անհասկանալի է նաև, երբ մեր հեղինակները գրի զարգացումը պատկերացնում են *պարզ գաղափարագրություն (զուտ բառագրություն) – վանկագրություն – տառագրություն* ճանապարհով, մոռանալով, որ զուտ բառագրության և վանկագրության միջև կա *բառավանկային* կամ *գաղափարահնչունագրային* մեծ փուլը, որում ևս գրում էին գաղափարագիր–մեհենագրերով: Վերջիններս գործածվում էին և՛ որպես բառ–գաղափարանշան, և իբրև վանկ ու հնչյուն (ընթերցվում էր միայն բառի սկզբնավանկը, ինչի պատճառով էլ այդ երևույթը գիտության մեջ կոչվում է «ակրոֆոնիա»՝ հունարեն *ἀκρος* – «ամենավերին, սկզբնական», *φωνή* – «ձայն, հնչյուն»): Բառավանկային կամ գաղափար–հնչյունագրային էին Հին Արևելքում կիրառված գրեթե բոլոր հիերոգլիֆ և սեպագիր գրահամակարգերը, ուստի այստեղ ևս բացարձակապես անհիմն է ենթադրելը, որ հայկական մեհենագրությունը պետք է բացառություն լիներ:

Նույն շարքին է պատկանում նաև մեհենագրերով կամ հիերոգլիֆներով հարուստ գրականություն ստեղծելու հնարավորությունը բացառելու մասին միտքը: Չարմանք է հարուցում անգամ նման հարցադրումը. իսկ ինչո՞վ են ստեղծվել, օրինակ, հին եգիպտական և խեթական հարուստ դպրությունները հին աշխարհում, կամ հին աշխարհից մինչ օրս շարունակվող չինական հարուստ գրականությունը:

Դժվար է գտնել մի հայագետի, որը գրադվելով Հայաստանի վաղ միջնադարի պատմության խնդիրներով, այս կամ այն կերպ անդրադարձած չլինի նախամաշտոցյան դպրության հարցին: Հատկապես շատ են հրապարակումները հորեցանական տարիներին՝ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան ու այրուքնի

ստեղծման 1500, 1550, 1600 և 1650 ամյակների առթիվ: Հաճախ կարելի է հանդիպել, երբ հրապարակումներում (այդ թվում՝ լրագրային հոդվածներում) հեղինակները, ի միջի այլոց, մեկ-երկու նախադասությամբ հայտնում են իրենց կարծիքը նախամաշտոցյան դպրության գոյության մասին՝ առանց պատշաճ հիմնավորման: Հասկանալիորեն, այստեղ չենք ներկայացնի նման հրապարակումները (ինչը ֆիզիկապես ևս անհնարին է), այլ կանդրադառնանք միայն գիտական ուսումնասիրություններին, որոնք ընտրության առարկա են դարձրել մեզ հուզող հիմնախնդիրը:

Մենք չենք անդրադառնա մաշտոցյան այբուբենի և տառերի ծագման հարցերին, որոնք առանձին ու հատուկ ուսումնասիրության խնդիր են: Կանդրադառնանք միայն այն հեղինակներին և միայն այնքանով, որքանով դրանք առնչվում են նախամաշտոցյան դպրության խնդիրներին²:

Միաժամանակ նշենք, որ հարցի պատմագրությունը ներկայացնելիս մենք ձեռնպահ կմնանք բոլոր հեղինակների կարծիքների նկատմամբ մեր վերաբերմունքն արտահայտելուց՝ կրկնություններից խուսափելու նպատակով, քանի որ ասկա բոլոր հիմնական փաստերին ու փաստարկներին անդրադառնալու ենք կամ նախապես, կամ տվյալ բաժնի ամփոփման մեջ:

Շարադրանքի ընթացքում հատուկ ուշադրություն կդարձվի ոչ թե բնագրերի առանձնահատկություններին (գրանյութ, չափեր, կատարման եղանակներ և այլն), այլ գրային համակարգերի բնութագրիչներին, որոնք կներկայացվեն հետևյալ կետերով.

1. Գրային համակարգի ծագումը,
2. Գրային համակարգի (հայաստանյան կիրառության) ուսումնասիրության պատմությունը,
3. Արձանագրությունների ժամանակագրությունն ու տարածումը,
4. Գրի և նրանով արձանագրված լեզվի ծանոթության աստիճանը,
5. Բազմալեզու արձանագրություններում մեզ հետաքրքրող գրային համակարգի ատկայությունը,
6. Գրակիր հուշարձանների բնութագիրը,
7. Արձանագրությունների քանակն ու տեսակները (ծավալը, կառուցվածքը և այլ հատկանիշներ),
8. Արձանագրությունների խմբային դասակարգումն ըստ բովանդակության,
9. Գրության ուղղությունը,
10. Գրանշանների ռճական բնույթը,

² Կանդրադառնանք այն տեսակետներին, որոնք հեղինակները վերրուծում են մաշտոցյան այբուբենի՝ գտնելով, թե դրա տառերի մի մասը ծագում է նախամարտապան շրջանից, այսինքն՝ Մաշտոցը դրանք ներառել է իր այբուբենի մեջ՝ Դանիել Ասրուս մոտ պատկանված գրանշաններից: Սակայն կանգ չենք առն այն պնդումների վրա, որոնց հեղինակները գտնում են, որ Մաշտոցը անբողոքությամբ ինքն է ստեղծել այբուբենը՝ ինքնուրույնաբար կամ սառանակող քաղցրով այս կամ այն պարբերից (այդ տեսակետների մասին՝ մանրամասն հղումներով՝ տե՛ս Շարությունյան, 1892, էջ 261-301; Անադյան, 1994, էջ 474-555; Թեֆալայան, 2003, էջ 51-80):

11. Նշանների թիվն ու գրային համակարգի տեսակն ըստ այդմ,
12. Նշանների խմբային դասակարգումն ըստ արտաքին տեսքի,
13. Որոշիչներ (դետերմինատիվներ) և կցագրում,
14. Թվանշանների և օժանդակ նշանների կիրառությունը,
15. Վերձանությանը նպաստող օժանդակ տվյալների գոյությունը, այդ թվում՝ համաժամանակյա գրավոր աղբյուրներից ստացվող տեղեկությունները (չվերձանված կամ վերձանության ընթացքում գտնվող համակարգերի պահպանում),
16. Այլ գրային համակարգերի հետ ունեցած առնչությունները:

* * *

Նախամաշտոցյան Հայաստանից հայտնաբերված գրավոր մշակույթի հուշարձաններն ըստ ծագման և պատկանելության կարելի է բաժանել երեք խմբի՝

1. Հայաստանում ստեղծված ու զարգացած պատկերագրային համակարգեր, որոնք բաժանվում են երկու հիմնական խմբի՝

ա) հայկական մեհենագրությունը՝ իր փուլերով,

բ) հստակ չթվագրվող, առեղծվածային արձանագրություններ, որոնք ունեն զուտ հայաստանյան ծագում,

2. օտար ծագում ունեցող, բայց Հայաստանի բնիկների կողմից կիրառված գրային համակարգեր,

3. Հայաստանի տարածքում հայտնաբերված, սակայն օտարների կողմից ստեղծված գրակիր հուշարձաններ:

Հենց այսպիսի խմբավորմամբ էլ կմատուցվի առաջիկա շարադրանքը, որում հիմնական շեշտադրումը կարվի առաջին երկու խմբերի գրային համակարգերին (հատկապես, դրանց կիրառման տեղական առանձնահատկություններին):

Շարադրանքի ընթացքում ծանոթագրությունները տալիս ենք տողատակում՝ նշելով հղվող աշխատանքի հեղինակին և հրատարակության թիվը (նույն հեղինակի մեկ տարում լույս տեսած մի քանի աշխատանքները տարբերակված են տպագրության թվականին կից փակագծերում նշված լատինական այբուրենի տառերով): Ծանոթագրության մեջ չենք նշում էջերն այն դեպքում, երբ հղվում է աշխատանքն ամբողջությամբ: Օգտագործված գրականության և համառոտագրությունների ցանկերը զետեղված են վերջում: Լատինական այբուրենում բացակայող հնչյունների համար օգտագործել ենք հետևյալ տառադարձումները՝ *Տ*, *Տ* – շ; *T*, *t* – տ; *H*, *h* – իւ; *Ç*, *ç*, – չ:

* Մեր նախորդ աշխատանքներում նախամաշտոցյան գրավոր մշակույթի հուշարձաններն ըստ ծագման և պատկանելության բաժանել ենք չորս խմբի՝ առանձնացնելով ստեղծվածային նշանակության, հստակ չթվագրվող արձանագրությունները, սակայն նշելով, որ դրանք ևս ունեն զուտ հայաստանյան ծագում (տե՛ս, օրինակ, Մովսիսյան, 2003 (ա), էջ 229; Մովսիսյան, 2003 (բ), էջ 153; Մովսիսյան, 2005 (հ), էջ 95; Movsisyan, 2006, էջ 289; էջ 21–22; Մովսիսյան, 2006 (ե), էջ 60; Մովսիսյան, 2013, էջ 11–12): Մակայի բնիկ տեղական ծագումը նկատի ունենալով նպատակահարմար ենք համարում դրանք միաժողով առաջին խմբում՝ առանձնացնելով որպես նկատառում:

Ընդթություն չառաջացնելու նպատակով էշենք, որ «ասուրական գիր, ասուրերեն» եզրերով էշվում է Ք.ա. 605 թ. անկում ապրած Հին Ասորեստանի սեպագրային համակարգն՝ իր լեզվով: «Ասորերեն, ասորական գիր» ասելով նկատի ունենք Ք.ա. II դարից ինքնուրույն գրական լեզվի վերածված արևելաարամեական բարբառը՝ 22 տառանոց բաղաձայնային այբուբենով: Վանի թագավորության գրահամակարգերը ներկայացնելիս օգտագործել ենք պետության և՛ Քիայնիի, և՛ Ուրարտու, և՛ Արարատ անվանումները, ավելի շատ նախապատվությունը տալով առաջինին, որը երկրի ինքնանվանումն էր:

Քանի որ մեզանում զարգացած չէ հին գրարանությունը⁷, և չկա հստակ մշակված տերմինաբանություն, հարկ ենք համարում անդրադառնալ նաև մի քանի եզրույթների: Մեր աշխատանքում «հիերոգլիֆ» (հունարեն՝ սրբազան գիր) տերմինին համարժեք և զուգահեռ գործածված է «մեհենագիրը»: «Պատկերագրություն» բառը կիրառվում է գրի զարգացման երկու փուլերի առնչությամբ. ըստ այդմ զանազանվում են «վաղ պատկերագրությունը» (կապված նախագրային փուլի հետ) և «զարգացած պատկերագրությունը» զաղափարագրությունը: Գիտական գրականության մեջ ընդունված «ղետերմինատիվ», «բիլինգվալ», «լիզատուրա» տերմինները մեր աշխատանքում, համապատասխանաբար, հանդես են գալիս հայերեն համարժեքներով՝ «որոշարկիչ, ցուցիչ», «երկլեզու արձանագրություն» և «կցագիր»:

Բուն շարադրանքին անցնելուց առաջ մեր հաճելի պարտականությունն ենք համարում մեր երախտագիտությունը հայտնել բոլոր այն անձանց, ովքեր ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստեցին այս աշխատանքի ստեղծմանն ու հրատարակությանը: Թանգարաններում պահվող ու մասամբ դեռևս չիրատարակված նյութերի ուսումնասիրության հնարավորության ընձեռնման և հրատարակման իրավունք արտոնելու համար շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի պատմության պետական, Հայաստանի ազգագրության, Երևանի հիմնադրման «Վերբուխ» թանգարանների տնօրինություններին: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում մեր հնագետներին, ովքեր իրենց պեղած և դեռևս չիրատարակված նյութերը սիրով տրամադրեցին մեզ ուսումնասիրման ու հրատարակման համար. նրանցից յուրաքանչյուրի անունը կհիշենք իր նյութերը վկայակոչելիս:

Շնորհակալ ենք մի շարք մասնագիտական հարցերում խորհրդատվությամբ և գրականության տրամադրմամբ մեզ աջակցած բոլոր գիտնականներին, որոնց անունները հիշատակված են շարադրանքի ընթացքում:

⁷ «Գրաբանություն» (գրամատուցիվ) տերմինը գրի պատմությունն ուսումնասիրող գիտության համար առաջին անգամ շքանատության մեջ է դրել Ի. Գևորգ (Geib, 1963; ռուսերեն թարգմանությունը՝ Բեռն, 1982): Հասագրում այն կիրառվեց ամլիի թյն իմաստով՝ ընդգրկելով ոչ միայն պատմությունը, այլ գրավճանային բոլոր համակարգերի ուսումնասիրությունն ընդհանրապես (Вотсон, 1982, էջ 6-7):

Մասնավոր շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի առաջատար գիտաշխատող, պ. գ. դ. Երվանդ Գրեկյանին, ով սիրով հանձն առավ աշխատանքում ներկայացված քարտեզների կազմումը:

2028/11
A 108822



ՀԱՐՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Այս գլխում ներկայացվում են Հայաստանի նախամաշտոցյան դպրությանը վերաբերող մատենագրական տեղեկություններն ու հարցի քննարկումները նոր ժամանակների գիտության մեջ: Իսկ մինչամաշտոցյան շրջանում կիրառված գրային համակարգերը, առանձին արձանագրությունների հրապարակումներն ու խնդրին առնչվող հնագիտական հայտնագործությունները կներկայացվեն յուրաքանչյուրը համապատասխան բաժնում:

1. ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ԳՐԱՎՈՐ ԱՐՔՈՒՐՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԱԾ ԳՐԵՐԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախամաշտոցյան Հայաստանում զանազան գրերի գործածության մասին հայկական և օտար գրավոր աղբյուրներում պահպանվել են մի շարք տեղեկություններ, որոնք կարելի է բաժանել երեք խմբի.

ա) հայալեզու և հայագիր դպրության մասին վկայություններ,

բ) տեղեկություններ նախամաշտոցյան Հայաստանում գործածված այլ լեզուների և գրերի մասին,

գ) վկայություններ գրերի կիրառման մասին, որոնցում չի որոշակիացվում, թե ինչ լեզվով էին դրանք գրված:

Յավով պետք է նշել, որ Հայաստանի նախամաշտոցյան դպրության մասին գրականության մեջ տեղ են գտել շինժու, իրականությանը չհամապատասխանող, անզամ կեղծված տեղեկություններ: Ուստի, մինչև հիև և միջնադարյան աղբյուրներում պահպանված իրական տեղեկություններին անդրադառնալը՝ հարկ ենք համարում նախ կանգ առնել դրանց վրա: Դրանք շրջանառվել և շրջանառվում են հայագիտության մեջ՝ ծնունդ տալով սխալ ու մտացածին եզրահանգումների:

ԿԵՂԾ ԵՎ ՀՈՐԻՆՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տիրան «Հայկազնի» առասպելը: Հայագիտության մեջ հորինվել և տարածում է գտել Տիրանիոն քերականի «Հայկազն» լինելու մասին կեղծ պատ-

կերացումը: Մեր ուսումնասիրողներից ոմանք գրում են, թե իբր Լուկուլյոսի կողմից Միիրդատյան երրորդ պատերազմում գերի տարված և Հոմոմում մեծ հռչակի հասած քերական և հոետոր Տիրանիոնը եղել է ազգությամբ հայ⁶: Ընդ որում, բոլորը հղում են միևնույն աղբյուրների՝ Կիկերոն, Ստրաբոն և Պլուտարքոս, որոնք որևէ նշում չունեն Տիրանիոնի հայկական ծագման մասին, այլ նշում են միայն երա՝ Պոնտոսի Ամիսոս քաղաքից լինելը, որտեղից էլ և գերվել է:

Այս տեղեկությունը վկայակոչողները հղում են Հ. Նահապետյանի 1927 լույս տեսած մի հոդվածը, որում միանշանակ ասվում է, թե Տիրանիոնը հայ էր⁷: Սակայն Հ. Նահապետյանն իր հերթին հղում է «Ռոլենի Գաղիացույ Հնախոսություն, Հատոր վեցերորդ, Վենետիկ, Մուրբ Ղազար, 1829» աշխատությանը, որում ասվա է լիովին այլ տեղեկություն. «ՏԻՐԱՆԻՈՆ քերական անունակի յաուրս Պոնպէի. էի ամիսացի յաշխարհէն Պոնտոսի, և կոչէր յառաջն Թեփրաստ. այլ վասն յաշտանագիւոյ տորս գոստամակնիցան, թերևս և զաշակերտս իւր, կոչեցա Տիրանիոն, որ թարգմանի բռնատոր»⁸: Նույն տեղեկությունը ժամանակին շրջանառվել է նաև հայ ուսումնասիրողների շրջանում⁹, սակայն, զարմանալիորեն, դա անտեսվել և շրջանառվել է հորինված կեղծ վարկածը:

Օղեսայում գտնված նախամաշտոցյան հայկերեն ձեռագրի հորինվածքը:

Մեկ այլ առասպել է «Օղեսայի ձեռագիրը», որն իբրև թե նախամաշտոցյան հայ գրով գրված մատյան է: 1830 թ. Վենետիկում հրատարակվում է Մինաս Բժշկյանցի «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» գիրքը, որում հեղինակն ի թիվս քազում այլ տեղեկությունների՝ նշում է Օղեսայի հայերից մեկի տանը տեսած եզիպտոսից բերված 32 էջանոց մի ձեռագրի մասին՝ բերելով մի էջի պատկերը (տե՛ս հավելվածում, նկ. 79)¹⁰: Ակնհայտ է, որ դա եթովպական գրով ձեռագիր է, որը, ծանոթ չլինելով որոշ հեղինակների¹¹, ընկալվել է որպես նախամաշտոցյան հայկական գրի հուշարձան:

Վկայել է, արդյո՞ք, Փիլոն Երրայեցին նախամաշտոցյան հայ դպրության մասին: Ամբողջությամբ թյուրբմբոնումների վրա է հիմնված հորինվածքը, ըստ որի, իբրև թե Փիլոն Երրայեցին (որը հայտնի է նաև «Փիլոն Ալեքսանդրացի» անվամբ, Ք.ա. I – Ք.հ. I դդ.) վկայում է իր ժամանակ հայոց լեզվով գրված կամ թարգմանված գրքերի մասին, ինչը վերջերս մեծ տարածում ստացավ մամուլում և, հատկապես, համացանցում:

⁶ Տե՛ս, օրինակ, Ալպոյանեան, 1937, էջ 202; Խրոպյան, 1978, էջ. 34–36; Աբեսսերո, 1973, սրբ. 24; Նազարեան, Ներսիսյան, Բալզոնյան, 1986, էջ 14–15; Եղիազարյան, 2014, էջ 61 և այլն: Այն ասանձնե՞ր «Տիրան Հալիագի» բառաբանումով տեղ է գտել նաև Հայկական տիբոլոգիան հանրագիտարանում (ՀԱՀ, հ. 12, 1986, էջ 16): Ժամանակին մենք ևս, վաստակելով եղված ուսումնասիրողների և հանրագիտարանի հեղինակությանը, օգտագործել ենք Տիրան «Հալիագի» մասին վերոշարադրյալ տեսակետը (Movsisyan, 2006, էջ 14):

⁷ Նահապետյան, 1927, էջ 170–171:

⁸ Ռոլենի Գաղիացույ ... 1829, էջ 12–14:

⁹ Տե՛ս, օրինակ, Ալիշան, 1901, էջ 20–21:

¹⁰ Բժշկյանց, 1830, էջ 224:

¹¹ Տե՛ս, օրինակ, Ալիշան, 1986, էջ 100; Հեղունի, 2006, էջ 105:

Հայտնի է, որ Փիլոն Երրայեցին գրել է բազմաթիվ գրքեր, որոնցից մեկը վերաբերում է կենդանիների բանականությանը և կրում է «Ալեքսանդր կամ անասուն կենդանիների մտաբանականության գոյության մասին» վերնագիրը: Երկը պահպանվել և մեզ է հասել միայն հայերեն թարգմանությամբ¹⁴: 1953 թ. Կ. Վ. Տրևերը, հղում կատարելով Մ. Ալեմանի ուսումնասիրությանը, որում հեղինակը Մետրոդորոս Սկեփսացուն համարում է կենդանիների բանականության մասին գործի հեղինակ¹⁵, ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ վերոնշյալ երկի հայերեն թարգմանությունը հիշվում է Փիլոն Երրայեցու աշխատանքների մեջ: Կ. Վ. Տրևերն իր կողմից կարծիք է հայտնում, ըստ որի Մետրոդորոս Սկեփսացու գործի հայերեն թարգմանությունը կարող էր պայմանավորվել այդ աշխատության՝ հայոց արքունիքում գրված լինելու հանգամանքով¹⁶: Ա. Գ. Աբրահամյանի մոտ այս տեղեկությունը թյուրիմացաբար ներկայացված է որպես Փիլոն Երրայեցու հաղորդում, որն իր տեղեկացնում է, թե իր ժամանակ Մետրոդորոսի երկը թարգմանված է եղել հայերեն¹⁷:

Հարկ է նշել, սակայն, որ «Ալեքսանդր կամ անասուն կենդանիների մտաբանականության գոյության մասին» երկն իսկապես պատկանում է Փիլոն Երրայեցու գրչին, ինչի մասին վկայում է նաև IV դարի ականավոր գործիչ Եվսեբոս Կեսարացին¹⁸: Այդ երկի սկզբնագիրը կորած է և այն աշխարհին հասանելի է հինգերորդ դարում մեր Սուրբ Թարգմանչաց ձեռքով կատարած հայերեն թարգմանության շնորհիվ: Հետևաբար, Փիլոն Երրայեցու այս երկի հայերեն թարգմանությունը ոչ մի կապ չունի ո՛չ Մետրոդորոս Սկեփսացու, ո՛չ էլ նախամաշտոցյան հայալեզու դպրության հետ:

Աերջերս Փիլոն Երրայեցուն վերագրվեց մի նոր «վկայություն». Ալեքսանդր Մուշեղյանը նախամաշտոցյան դպրությանը նվիրված հրատարակումներում հանդես եկավ մի «հայտնագործությամբ», նշելով, որ ինքն է դա առաջին անգամ կատարում: Նա գրում է, թե իբր «Փիլոն Երրայեցին «De providentia» («Նախախնամության մասին») երկում մատնանշում է, որ «Երեք զիբր հայոց լեզվից թարգմանվել է Ալեքերոսի (գուցե՝ Ավգերի – Ա. Մ.) ձեռքով» – «Libri tres ex Armenia lingua ab Auchero conversi»... Փիլոն Երրայեցու նման քաջատեղյակ և թճախողի օտար հեղինակի այս համոզիչ հաղորդումը մեր թվարկության հարազակին գոյություն ունեցած հայալեզու գրականության մասին, որ վկայա-

¹⁴ Երկի գոյության բնագիրը և անհիմնական թարգմանությունը՝ կատարված Միխայիլյան հայր Աղոսի Ավգերոսի կողմից՝ Փիլոն Երրայեցու..., 1822, էջ 123–172: Աշխատության անգլերեն թարգմանությունը՝ հանգամանաի ուսումնասիրությամբ, տև. Մ. Terian, 1981 (գրքում զետեղված է նաև Մ. Ավգերոսի երկերու հրատարակությունը):

¹⁵ Wellmann, 1917, էջ 135:

¹⁶ Trpesep, 1953, էջ 11:

¹⁷ Աբրահամյան, 1982, էջ 80: Նույն այս թյուր տեղեկությունը, թե իբր Մետրոդորոս Սկեփսացու գործը թարգմանվել է հայերեն միևն Ք.Յ. I դարի կեսերը, կրկնում է Ա. Մուշեղյանը՝ իրեն վերագրելով այդ տեղեկության առաջին անգամ վկայությունը (Մուշեղյան, 2006, (d), համապատասխան հասցեն՝ <http://www.armenianworld.com/detail.php?paperid=445&pageid=15777&lang=>):

¹⁸ «Եվսեբիոսի ակնարկներ», զիբր երկերով, գլ. 18, 6:

կոչվում է առաջին անգամ, չի կարող չաստանել նույնիսկ ամենակարծր հավաթեզերը»¹⁹:

Անշուշտ, Փիլոն Երրայեցու վկայությունը կունենար բացառիկ նշանակություն, եթե դա համապատասխաներ իրականությանը: Բանն այն է, որ Փիլոն Երրայեցու այդ երկը, ինչպես նշեցինք, պահպանվել է միայն հայերեն: Այն և հեղինակի ևս երկու աշխատանքներ՝ պահպանված գրաքարով, Մխիթարյան հայր Մկրտիչ Ավգերյանը հրատարակեց 1822 թվականին՝ զուգահեռ զետեղելով նաև դրանց՝ հայերենից լատիներեն իր կատարած թարգմանությունը²⁰: Փիլոն Երրայեցու այդ երեք գործերը նոր ժամանակների գիտական աշխարհին հասու դարձան գրաքարով և գրաքար հայերենից կատարված թարգմանությամբ, իսկ թարգմանիչ Մկրտիչ Ավգերյանի ազգանունը հրապարակության լատիներեն տիտղոսաթերթին ներկայացված է կրճատ՝ Ավգեր՝ «Auchero»²¹: Ա. Մուշեղյանի վկայակոչած լատիներեն նախադասությունը («Libri tres ex Armenia lingua ab Auchero conversi» – «Երեք գիրք հայոց լեզվից թարգմանվել է Ավգերի ձեռքով») վերաբերում է Փիլոն Երրայեցու երեք գրքերի՝ Մկրտիչ Ավգերյանի 1822 թ. հրատարակած թարգմանությանը... Դա իբրև Ք.ա. I – Ք.հ. I դարերի մատենագրի վկայություն ներկայացնելը Ա. Մուշեղյանի ցանկությունն է, որը, սակայն, կապ չունի իրականության հետ²²...

Այլոմանը չի գտնվում Կորդուցում: 1909 թ. Իրանական Քրդստանի Ավրոման (Հավլաման) հնավայրից գտնվեցին Ք.ա. 88–21 թթ. թվագրվող արամեատառ պահլավերեն գրությունք մագաղաթ և առուձախի ու ժառանգության վերաբերյալ հունարեն երկու վավերագրեր, որոնցում տեղեկություններ կան նաև Տիգրան Բ Մեծի մասին: Հղում կատարելով 1933 թ. «Հանդես Ամսօրեայ» հանդեսում Հ. Տաշյանի թարգմանությամբ լույս տեսած Օ. Գ. Վեսեղոնկի ուսումնասիրությանը²³, Ա. Գ. Արրահամյանը գրում է այդ մասին, սակայն, զարմանալիորեն, «Քրդստան» տեղանունը փոխարինում է «Կորդուք»-ով. «Արամեական գրի լայն գործածության օգտին է խոսում 1909 թ. Կորդուցում ապիտրի մեջ գտնված մագաղաթի վրա գրված պատասիկը... Ուշագրավն այն է, որ մագաղաթը գրված է Ք.ա. առաջին դարում, այն ժամանակ, երբ Կորդուքը նվաճված էր Տիգրան Մեծի կողմից և գտնվում էր հայոց պետականության կազմում» («Հանդես Ամսօրեայ», 1933, էջ 211)²⁴: Ծեշտենք, որ Օ. Գ. Վեսեղոնկի աշխատանքում նշված է Իրանական Քրդստանը, որը Կորդուքը չէ,

¹⁹ Մուշեղյան, 2006 (c), էջ 4:

²⁰ Փիլոնի Երրայեցու... 1822, 179 էջ:

²¹ Philonia Judaei Sermones Tres Haereticos Inediti. I. et II. De Providentia et III. De Animalibus, per Baptistam Aucher Ancyratum, Venetiis, MDCCCXXXII (1822).

²² Չափմանալի չէ, որ հեղինակն սղ տեղեկությունը բերում է՝ առանց աղբյուրի հղման, այն դեպքում, երբ մյուս տեղեկություններ վկայելուցում է հանգամանալի ծանոթագրություններով...

²³ Վեսեղոնկ, 1933, էջ 209–231:

²⁴ Արրահամյան, 1982, էջ 78:

իսկ Ավրոման հնավայրն էլ հայրուրավոր կիլոմետրերով հեռու է ոչ միայն Կորդոբից, այլև ընդհանրապես Հայկական լեռնաշխարհից²⁵:

Այլ «հայտնագործություններ»: Նշվածներից բացի կատարվել են նաև այնպիսի հրապարակումներ, որոնցում արվում են զուտ զգացմունքային, մտացածին հայտարարություններ, որոնք որևէ կապ չունեն գիտության հետ: Դրանց նկատմամբ ոչ լավատեսյակ ընթերցողները համախառնապես են ընծայում՝ վստահելով հրապարակողների հեղինակության ու տիտղոսների: Այդպիսի հրապարակումներից են, օրինակ, Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Տ. Օվանեսովի ռուսերենով հրատարակած աշխատանքները (Օванесов Г. Т., «Клинописъ», Ереван, 1995 և «Сомник с пояснением и алфавит Атлантиды», Ереван, 1996), որոնցում Վանի թագավորության սեպագիրը համարում է «Ալանտիդայի այբուբեն» և բոլոր գրային համակարգերի հիմքը...

Մեկ այլ տիտղոսակիր հեղինակ՝ ակադեմիկոս Պ. Մ. Հերունին (ժադիոֆիզիկոս) «Հայերը և հնագույն Հայաստանը (Հիմքերը հայոց)» (Ե., 2006, անգլերեն տարբերակը լույս է տեսել 2004-ին) գրքում ոչ միայն ազդարարում է, որ «հայոց լեզուն եղել է աշխարհի առաջին լեզուն, Աստու լեզուն, հնդեվրոպական բոլոր լեզուների հիմքը և միջազգային լեզու մինչև Ք.ա. II-I հազարամյակները», «հայոց լեզուն ծագել է Հայաստանում սկսած հոմո սապիենսի ժամանակներից՝ 40-45 հազար տարի առաջ», «հայկական այբուբենը ծագել է Մեծ Հայքում մոտավորապես 15-12 հազար տարի առաջ», «եղել է առաջին այբուբենը, որից սկիզբ են առել մյուս բոլոր այբուբենները», այլև արամեացիներին զրկում է, իբրև ինքնուրույն էթնոս, գոյության իրավունքից՝ հայտարարելով. «Այսպես կոչված «արամեացիները», «արամեական» լեզուն և այբուբենը իրականում եղել են հայերը, հայոց լեզուն և այբուբենը... Պ. Հերունին պնդում է, թե իբր Մեսրոպ Մաշտոցի՝ հայերեն գրքեր գտնելու մասին վկայում է Փավստոս Բուզանդը, այն դեպքում, երբ Փավստոս Բուզանդի երկն ավարտվում է 387 թ. Հայաստանի բաժանման պատմությանը և Մեսրոպ Մաշտոցը նրա երկում ընդհանրապես չի հիշատակվում²⁶...

Հասկանալիորեն, այս աշխատանքում չենք քննարկի գիտության հետ կապ չունեցող նման հրապարակումները: Այժմ անցնենք նախամաշտոցյան դարության մասին իրական, վավերական տեղեկությունների վկայակոչմանն ու քննարկմանը:

²⁵ Ավրոմանի լեռանցի՝ հանգանակի ուսումնասիրությանը, տե՛ս Minns, 1915, էջ 22-65, սղ. I-III:

²⁶ Հերունի, 2006, էջ 93-140: Ազգային-հնդեվրոպականների կատարած հաշվարկների համառոտ հայերեն հնդեվրոպական մաթ լեզվից անբարձիկ և ինքնուրույն լեզու է դարձել Ք.ա. IV հազարամյակում (Մանուկյան, 1987, էջ 76-78), իսկ ըստ գննադրված ուսումնասիրությունների՝ Ք.ա. VI հազարամյակի երկրորդ կեսին (Gray, Atkinson, 2003, էջ 435-439; Atkinson, Gray, 2006, էջ 91-109)...

ԳՐԱԿՐՈՒ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԿԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՍԽՈՒՄՆԵՐՈՅԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻՈՒ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԱՄ ՀԱՅԱԼԵՋՈՒ ԵՎ
ՀԱՅԱԳԻՐ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախամաշտոցյան Հայաստանում հայալեզու և հայագիր դպրության մասին վկայություններ են պահպանվել ինչպես հայկական, այնպես էլ օտար գրավոր աղբյուրներում: Նախ ներկայացնենք հայկական սկզբնաղբյուրները:

Նախամաշտոցյան Հայաստանում գրի ու զրականության երկարատև ավանդույթի գոյության ամենախտուն փաստը Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ պահպանված հաղորդումն է դպրության Տիր աստծո և նրա մեհյանի մասին, որն առաջինն ավերվեց Տրդատ Գ-ի հրամանով քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո. «Ապա ինքն իսկ թագաւորն խաղաղ զնայր ամենայն զարաքն հանօղորձ ի «Կաղաղապատ քաղաքէ՝ երթնալ յԱրուշատ քաղաք, աւերել սեղ զբազինան Անահտական դիցն, ևս որ յԵրազանդն տեղիան անուանեալ կայր: Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տրի դից, դպիր գիտութեան քրմաց, անուանեալ Դիւան գրի Ռրնգղի, ուսման ճարտարութեան մեհեանս»²⁷: Տիր աստծո պաշտամունքը հայոց նախաքրիստոնեական դիցարանում լավագույնս վկայում է այդ դարաշրջանում մեր ժողովրդի՝ սեփական դպրություն ունենալու մասին: Առանց դպրության, հասկանալիորեն, որևէ ժողովուրդ չէր կարող ունենալ դպրության աստծո պաշտամունք:

Ազաթանգեղոսի երկում հայտնվում է նաև նախաքրիստոնեական նշանագրերի գործածության մասին, ընդ որում, տարբեր առիթներով: Առաջինը՝ երբ հեղինակը ներկայացնում է տարբեր դպրություններին իր ծանոթությունը և հայտնում, որ պատմություն գրելու պատվեր–հրամանը ստացել է անձամբ Տրդատ Գ արքայից. «Արդ՝ ջան յանձին կազնալ մտանել ի պատմագիր մատենիցս խորութիւն, ցուցանել պնոցիկ, ոչք իմաստութեամբ կամիցին ունկնդիր լինել ազտակար պատմութեանս: Արդ՝ հրաման հասնալ առ իս ոմն Ազաթանգեղոս, որ ի քաղաքէ ի մեծն Հռովնաց, ևս վարժեալ հայրենի պրուստոխ, Հռուսցերէն ևս Յունաքրէն ունալ դպրութիւն, ևս ոչ կարի ինչ անտեղեակ լնալ ձեռնարկութեան լշանագրաց... Արդ՝ հասնալ առ իս հրաման ի մեծ արքայէն Տրդատոց՝ կարգել ինձ ի ձեռնարկութենէ լշանագիր ժամանակագրացն պատմել նախ զհայրենեացն զործս քաջութեան քաջին Խոսրովո, ևս որ ինչ զործք զործեալք քաջութեան մարտից

²⁷ «Ապա ինքն իսկ (Տրդատ) թագաւորը անբող զբոցով հանօղորձ «Կաղաղապատ քաղաքից շարժեց զնայ Արուշատ քաղաքը՝ աւերելու պետել զանկող Անահտ օճցունա թագիկն և այն, որ Երազանդն կոչած անդրում էր գտնվում: Նախ ճանապարհին հանդիպեցին քրմական գիտության դպիք, Ռրնգղի (Արածագղի) գրի Դիվան կոչած երազացոյց, երազահան պաշտամունքի Տիր աստծո ճարտարության ուսման մեհեանը և ամենից սուաջ սկսեցին այն բանիկ, սքրն, աւերել» (Ազաթանգեղոս, ՃԸ, 778; ՄԸ-Բ, էջ 1675):

պատերազանացն, ընդ շրջշրջունն տէրութեանն փոխելոյ ընդ կրցս հարկանելոյ, և ազգաց խոտկելոյ...»²⁸:

Հաջորդ երկու դրվագները վերաբերում են հայոց արքայի դպիրներին, որոնք նախ գրի առան Հռիփսիմնի և մյուս կույսերի հալածանքի ժամանակ տեղի ունեցածը, ապա՝ տանջվող Գրիգոր Պարթևի խոսքերը, որոնք ներկայացրեցին արքային. «Արդ, իբրև այս շիրիք անբոխի եղև ի ևոցանէն ի մէջ կուտակելոցն մարդկան բազմութեան ոմանք ի մեծամեծ պատաստրացն արքունի անդէն ընթացան պատմով թագաւորին զամենայն բանս ևոցս. քանզի դիպեցան անդ Էշանազիրք, որ գրեցին զամենայն բանս, և ընթերցան ստաջին թագաւորին»²⁹: «Եւ միեկդեռ կայր ևս կախնալ սղակէս, իստանցաւ զայս ամենայն. և գրեցին ստե՛նակալ դպիրքն Էշանազրացնց Եւ այլ ևս բազում քան զայս իստանցաւ՝ միեկդեռ կայր կախնալ գլխիվայր և գրեցին և մատուցին զայն ստաջի թագաւորին»³⁰:

Ազաթանգեղոսի երկի վրացերեն թարգմանության մեջ Էշանազրերով դպիրների հատվածն ունի այս տեսքը՝ «Իսկ այնտեղ գտնվող ոմանք գրեցին նրա խոսքերն ու տարան ցույց տվեցին դրանք թագավորին»³¹: Իսկ արաբերեն խմբագրությունն ունի այս տեսքը՝ «Եվ երբ ևս կախված վիճակում էր, ասաց այս բոլոր խոսքերը, իսկ արագազիր դպիրները Էշաններով գրեցին սրբի խոսքերը... Գրի առան դպիրներն այդ բոլորը և ներկայացրեցին թագավորին...»³²:

Արժեքավոր տեղեկություններ է հաղորդում պատմահայր Մովսես Խորենացին: Շամանակագրական հեթոթականությամբ դրանցից առաջինը հայոց անվանադիր նախնի Հայկի թոռ Պասքամի որդի Տորք Անգեղայի՝ ժայտերը հարթելով տախտակներ պատրաստելու և դրանց վրա «արժիվներ և նման բաներ գրելու» մասին տեղեկությունն է³³: «Արժիվներ և նման բաներ գրելն» ակնհայտորեն կապվում է հիերոգլիֆիկ ավանդույթի հետ, այսինքն՝ Տորքը ներկայանում է որպես գրի հետ կապված հերոս կամ աստվածություն:

²⁸ «Արդ՝ ջանք ասննն անելով մտնէ պատմության մաշտանների խոցության մեջ. խոսքը կուրջով երանք, որ կամենում են ինաստուրյանք ունկեղք լինել օգտակար պատմության: Արդ՝ երաման է հասել ինձ՝ Ազարակեղոսոս, որ մեծ Հոռո ըստարքի եմ, կրթված հայրենի գիտությամբ, սովորել եմ յասիներենն (հունարենն) ու իտալերենը, ուսանելի դպրությունը և ոչ խիստ անտեսյակ [մնացել] Էշանազրերի արվեստին... Արդ՝ ինձ երաման է հասել Տորքսո մեծ արքայից՝ կարգով գրի անել ժամանակներից դեպքերը, պատմելով նույն ըստ իտալերի հայրենական պատերազմների ժամանակ կատարած թաղարքությունները, տեղության մեջ տեղի ունեցած հարձակումները, ազգերի խտվությունը...» (Ազարակեղոս, Առաջաբան, 12-13; ՄՀ-Ք, էջ 1309-1310):

²⁹ «Արդ՝ երբ այս խառնաշփոթությունը եղավ, կուտակված մարդկանց բազմության մեջ, արքունի մեծամեծ պատավորներից ոմանք գտնվեցին գրագիրներ, որոնք գրեցին ամեն ինչ և ընթերցեցին թագաւորի արեւն» (Ազարակեղոս, ԲԺ, 176; ՄՀ-Ք, էջ 1390):

³⁰ «Այս ամենը խոսեց այնպես կախված դրությամբ, և գրեցին Էշանազրերի ամենակալ դպիրները... Դեռ սրանից առջին էլ խոսեց՝ գլխիվայր կախված վիճակում, և գրեցին ու մատուցեցին այն թագավորին...» (Ազարակեղոս, Ը, 99; ՄՀ-Ք, էջ 1357):

³¹ Մուրադյան, 1982, էջ 162-163:

³² Տեր-Ղևոնդյան, 1968, էջ 79:

³³ «Քանզի երգելն նմա բուն հայրկանկ գործարար վիճակ մեռալք, ուր ոչ գրք գեղարթին և ներքի ըստ կանաց մեծ ևս զգրք. և ընդլ նեղվածքն ևս կազմել որպէս տախտակ, և գրել նույնպէս եղեգամբ իւրոյք արծուխ և այս պաշտիս» (զիջք Ք, գլ. Ը; ՄՀ-Ք, էջ 186): Այլապես ասած և ուստերեն թարգմանություններում «գրել արծուխ»-ը դարձրել է «գծում էր արժիվներ» (Մովսես Խորենացի, 1968, էջ 138; Мовсес Хоренати, 1990, էջ 64), ինչը շեղում է բնագրային իմաստից (իննա. Թիսաթեան, 2003, էջ 47):

Մյուս կողմից, Տորքը կապվում էր հայոց հնագույն պատկերացումների անդրաշխարհի հետ (Անգեղ տուն, որից էլ նրա «Անգեղեա» անվանումը)³⁴: Ելնելով հին աշխարհում այլ ժողովուրդների դիցարաններում ևս դպրության աստվածների՝ անդրաշխարհի հետ ունեցած կապից (ինչպես եգիպտական Թոտը, քաբելոնյան Նաբուն, հունական Հերմեսը և այլն), կարելի է եզրակացնել, որ Տորք Անգեղյան հայոց հնագույն դիցարանում պաշտվել է նաև որպես գրի ու դպրության հետ կապված աստվածություն, ավելի ուշ վերածվելով նախնի-հերոսի:

Հաջորդը վերաբերում է Արամ նահապետի՝ արևմուտքում կատարած գործերի նկարագրությանը, երբ նա տիրելով Տիտանյանների նվաճած Սև և Միջերկրական ծովերի միջնատարածքին (*«զմիջոց երկուց ծովոց մեծամեծաց, գ՞րնտուն և գ՞րկկխանոս»*), *հրամացեց տեղի բնակչությանը՝ «ստիրելդ հայոց խոսքն ու լեզուն»* (*«ուսասնեզ գիսուս և զեզուս հացկակսն»*)³⁵: Հայոց լեզուն օտարներին սովորեցնելն, ինչ խոսք, հնարավոր էր միայն հայալեզու դպրության ասկայության պայմաններում³⁶:

Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրման մասին տեղեկացնելիս՝ Պատմահայրը նշում է, որ Արտաշես արքան մայրաքաղաք բերող ճանապարհի վրա կանգնեցրել է նաև դպրության Տիր-Ապոլոն աստծո արձանը. *«Երթեալդ Արտաշահի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծանար, և հանեալ ընդ բլուրն շինեց քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ: Չեռնաւո լինի նոս և Երասխ փայտիւք մայրեաց, փասն որոյ անաշխատ և երազ շինեալ կանգնէ ի նոս մեհեան, և փոխէ ի նա ի Բագաշանէ զպատկերն Արմեղիեայ և զաննեացն կուսս հայրենիս. բայց զԱպոլոնին պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուս ի ճանապարհն»*³⁷: Այս տեղեկությունը համապատասխանում է Ազաթանգեղոսի հաղորդմանն այն մասին, որ Տիր աստծո մեկնանը գտնվում էր Վաղարշապատից Արտաշատ ճանապարհին, ուստի կարելի է ենթադրել, որ նշված արձանը կանգնեցվել է հենց Երազամույն կոչվող վայրում, որտեղ 301 թ. ավերվեց Տիր աստծո տաճարը: Դպրության աստծո արձանի կանգնեցումը նախամաշտոցյան դպրության մասին վկայող անուղղակի, սակայն կարևոր փաստ է, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Արտաշեսի օրոք արձանագրություններ են կանգնեցվել ոչ թե հունական, այլ արամեական գրով, ընդ որում, չի քացառվում այդ արձանագրությունների՝ արամեագիր հայերեն լինելու հնարավորությունը (տե՛ս ստորև, համապատասխան բաժնում):

³⁴ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ միջազնային անդրաշխարհի տերմինով Լեզգայի անունը փոխարինված է Անգեղով (Թագավորաց Գ, 17, 50), ինչը ցույց է տալիս վերջինիս նույն դերը կատարելը հայոց հին դիցարանում: Իսկ Անգեղի պաշտամունքի կենտրոնը՝ Անգեղ տուն գաղափար գտնվում էր հենց Արևմտյան Տիգրիսի ակունքներում (Արևիկր նահանգում):

³⁵ Մովսես Խորենացի, զվերք Ա, գլ. ԺԴ: ՄՀ-Բ, էջ 1791:

³⁶ Հնարավոր է դպրության գրչության նման անուղղակի վկայություն կարելի է համարել նաև Ստրաբոնի տեղեկությունն Արտաշես Ա-ի ժամանակաշրջանի մասին, որի համաձայն՝ արքայի միակերպ քաղաքակրթության ապրուստում Մեծ Հայքի բոլոր գաղափաները «խոսում են միևնույն լեզվով» (Ստրաբոն, XI, 14, 6, 1940, էջ 57; հմմտ. ՀԺՊՔ, 2007, էջ 281):

³⁷ Մովսես Խորենացի, զվերք Բ, գլ. ԽԹ: ՄՀ-Բ, էջ 1925-1926:

Իր սկզբնաղբյուրների մասին նշելիս Մովսես Խորենացին հիշատակում է Արամազդի պաշտամունքի զվսավոր կենտրոն Դարանադյաց Անիի Ողյուճակ քրմին, որը գրել է «Մեհենական պատմություններ» աշխատությունը³⁸:

Պատմաւոր մատյանում հիշվում է Բարդաճան Եղեսացին (Բար-Ղայսան, Բարդայճան, Բարդեսանես, 154–222 թթ.), որը Հայաստանում քրիստոնեություն տարածելու անհաջող փորձ է կատարել: Լինելով Դարանադյաց գավառի Անիի մեհենական արխիվում նա «կարդաց մեհենական պատմությունը, որի մեջ նաև թագավորների գործերը: Նա իր կողմից ավելացրեց իր ժամանակի անցքերը, բոլորը թարգմանելով ասորերենի և այսպէս կոչուելով իւր անունով»³⁹:

Չափազանց ուշագրավ է այն փաստը, որ Բարդաճանի ժամանակակից, ակնավոր քրիստոնյա աստվածարան և պատմիչ Հիսպոլիտոս Հոռմեացին (Քոստրիացին) շնչտում է, որ Բարդաճանը (քնագրում՝ Բարդեսանես) ազգությամբ հայ է⁴⁰: Մովսես Խորենացին խուսափում է նրա ազգությունը նշելուց՝ քավարարվելով միայն «Բարդաճանը, որ Եղեսիայից էր» քնդոշմամբ: Գուցե պատճառն այն է, որ նա հինգերորդ դարում պաշտոնական եկեղեցու կողմից նգովված աղանդի հիմնադիր էր և նրա հայազգի լինելը հիշատակելն այնքան էլ ցանկալի չէր: Այդուհանդերձ, Պատմաւոր հաղորդման մեջ կան հատուկ ուշադրության արժանի երկու կետեր, որոնք կարող են համահունչ լինել Հիսպոլիտոս Հոռմեացու հաղորդմանը: Առաջինը, ինչպես արդեն վկայակոչել ենք, այն է, որ Բարդաճանը մուտք է գործում հայոց գերագույն աստծու զվսավոր տաճար և լրացում կատարում այնտեղ պահվող մեհենական պատմության էջերում, հայոց արքաների գործերի մեջ՝ ավելացնելով իր ժամանակի անցքերը, մի բան, որ հազիվ թե թույլ տրվեր օտար մեկին: Եվ երկրորդը, ըստ Մովսես Խորենացու՝ նա գրել է մի շարք գործեր, այդ թվում՝ նաև «մեր աշխարհի կուրքերի պաշտամունքի» մասին⁴¹: Քրիստոնյա-գնոստիկ հեղինակի նման հետաքրքրության հիմքում ևս կարող էր լինել նրա ազգային ծագումը: Այդուհանդերձ, նշենք, որ Բարդաճանը պատմության մեջ մնաց իբրև ասորական գրական լեզվի հիմնադիր և եկեղեցական երգեցողության հայր:

Բարդաճանի թարգմանած աշխատանքը դարձել է Մովսես Խորենացու հիմնական սկզբնաղբյուրներից մեկը: Իրախցի են այն ուսումնասիրողները,

³⁸ Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. ԽԸ: ՄՀ-Բ, էջ 1924–1925: Ողյուճակ քրմի «Մեհենական պատմությունների» վերաբերյալ հանգամանակի ուսումնասիրությունը տես Սարգսյան, 1966, էջ 139–241:

³⁹ «Նամ գի նին նա սարք, որպես գի սարկիտոսի գրք փայտայլ ի խում հնարանապա. և իբրև ոչ ընկալուց նյն՝ նմառ նա յանուն ՂԱՆԻ, և ընկերցեսզ գեհենական պատմութիւնն, յորում և գրորես թագաւորացն, յաւելլով իր և որ ինչ առ իրումն, և փոխեաց զամենայն ի յնր սարկի. որ և այսպ ստեղ յնչաւ ի յոն յաւն» (Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. ԿԶ: ՄՀ-Բ, էջ 1950–1951):

⁴⁰ Hippolytus of Rome, 1921, գիրք VII, գլ. 19: Բարդաճանի անունը «Բար-Ղայեսան» քառաբայի նշանակում է «Դայեսան (զնույնի որդի», ըսնի որ ըստ Միջագե Ասորու, նա ծնվել է Դայեսան գետն անցնելու ժամանակ: Երվանդ Տեր-Մինասյանը նկարագրել է համարում ինչպես Բարդաճանի՝ ազդույթամբ հայ փնեղ, այնպես էլ՝ հայ համարփնեղ Հայաստանում քաղաքած ավանարանի լինելու պատճառով (Տեր-Մինասյան, 1968, էջ 56–57):

⁴¹ Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. ԿԶ: ՄՀ-Բ, էջ 1950:

Հատուկ ուշադրության է արժանի «թարգմանեկու» մասին վկայությունը, ինչից իրավացիորեն եզրակացվել է⁴⁵, որ չորրորդ դարում կատարվել են թարգմանություններ հունարենից, քնականաբար, հայերենի: Ընդ որում, ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ պատմիչը շեշտում է եկեղեցու կարգը վարելու ոչ թե հունապեզու լինելը, այլ՝ հունագիր («ունակաևան վարէիև») լինելը: Այս փաստերը համադրելով՝ կարելի է եզրակացնել 360–ական թվականներին հունագիր հայերենի գործածության մասին:

Համանման, այս դեպքում՝ պարսկագիր հայերենի կիրառության մասին վկայություն կարելի է համարել Մովսես Խորենացու մեկ այլ տեղեկությունը: Դրա համաձայն՝ Պարսկաստանի գերիշխանության տակ անցած Արևելյան Հայաստանի արքունիքում Մաշտոցի գյուտից առաջ՝ Վտամշպուտ արքայի օրոք կիրառվել է պարսկական գիրը. «...գի մինչ գևաց Մեարտս յարքունական դրանէն ոչ գոր ի նարտարաց գտանէր սեղ ի դարաց, քանզի պարսկականս վարէին գրով»⁴⁶: Այստեղ ևս ձևակերպումը նույնպիսին է՝ «պարսկականս վարէին գրով». պարսկական գրով, և ոչ թե պարսկերեն⁴⁷:

Իր ապրած ժամանակաշրջանում հունական և պարսկական գրերով առկա մեծաքանակ մատյանների մասին Մովսես Խորենացին գրում է. «Այլ սահցէ որ արդեսար. վասն ոչ լինելոյ գիր և դարտոթին ի ժամանակին, կամ վասն պէս պէս պատերազմացն, որ կուտ զմիմեանց զկնի ի վերաց գային: Այլ ոչ արդարև այտրիկ կարծեցեալ լինի. քանզի գտանին և միջոցք լեալ պատերազմացն, և գիր Պարսից և Յունաց, որոնք այժմ գիտից և գատաց, ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին ևսբար գրուցաց մատուանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայսազատութիւն»⁴⁸: Այստեղ ևս մեծ հավանականությամբ կարող ենք ենթադրել, որ խոսքը հունագիր և պարսկագիր հայերեն մատյանների մասին է:

Հայտնի է, որ արևելքից կատարված ապարտակությունների ժամանակ Հայաստանից որպես ավար տարվել են մեծաքանակ ձեռագրեր: Լենկ Թեմուրի ժամանակ Հայաստանից տարված Սամարղանդում պահվող ձեռագրերի մասին ուշագրավ տեղեկություն է հրապարակվել 1847 թ. «Բազմավեպ» հանդեսում: Ըստ այդմ, «խոսառուր Յովհաննեսեան անունով Ասպահանցի Հայր արևելք մեծ անուն ունի իբրև աշխարհատես ու լեզուագետ մարդ»։ Նա մուտք է գործել Սամարղանդի ձեռագրերի մի պահոց և այնտեղ տեսել հայերեն ձեռա-

⁴⁵ Տե՛ս, օրինակ, Тери Мовсесов, 1902, էջ 21–22; Броссан, 1918, էջ 52–53:

⁴⁶ «... այն օրից, որ Մեարտն արքունական դռնից հնուցաւ, ևս (Վտամշպուտ արքան) ոչ մի նարտար դպից գտեց չէր կարողանում, որովհետև պարսկական գիր էին գործածում» (Մովսես Խորենացի, գիրք Գ, գլ. ԾԲ: ՄՀ–Բ, էջ 2079):

⁴⁷ Հմմտ. Մաքևույան, 1990, էջ 104–105, որտեղ բերվում են նաև նման այլ օրինակներ:

⁴⁸ «Բայց գրեց մինք այժմ այն ժամանակ գիր ու գրականություն չէինքու պատմաբով (կապ պրոպիս), կամ զառաջան պատմագրանկնի պատմաբով, որ անընդհատ մեզ մուտին հաջորդում էին: Բայց իրավացի չէ չեմ պրոպիս կարծելը, քանզի նրեք են պատերազմների միջև ժամանակակիցոցնր, և կայն պարսից ու հունաց գրելը, որոնցով գրված մեզ մտա այժմ գտնվում են ևնրիվ քանակությամբ գրույցների մատյաննր, գրույցի ու գրավանկնր, յուրաքանչյուր տնրի անկամանություն, ընդհանուր փննքի ու բաշխմանր, մանաւանդ, անպուհական ազգեկանություն ծագան վերաբրկյալ» (Մովսես Խորենացի, գիրք Ա, գլ. Գ: ՄՀ–Բ, էջ 1753):

գիր Աստվածաշունչ, Եղիշնի «Կասն Կարդանայ եւ պատերազմին Հայոց», վրացերեն և արաբերեն ձեռագրեր: Դրանց կողքին նա հիշատակում է երկու մատյաններ, մեկը՝ հունագիր հայերեն, մյուսը՝ ասորագիր հայերեն: Խաչատուր Հովհաննիսյանի համար ամենազարմանալիս իր չափերով այքի ընկնող մագաղաթյա հունագիր հայերեն մատյանն էր, որը կրում էր հետևյալ վերնագիրը՝ «*Պատմութիւն Կասնի դիցազանց ամենայն ազգաց շարագրեալ ի քրմաց մեհենկնցն Անահայ և Մրտաի*»⁶⁹: Յավոք, այսօր հայտնի չէ այս մատյանների գտնվելու վայրը:

Հինգերորդ դարում հանրահայտ էր, որ ժամանակին գոյություն են ունեցել հայկական գրեր, և Մեսրոպ Մաշտոցն իր այբուբենի գյուտից առաջ ջանացել է գտնել ու կիրառել դրանք. այդ են վկայում Կոդյունը, Մովսես Խորենացին և Դազար Փարպեցին:

Կոդյունի հաղորդումից հանկացվում է, որ գործածությունից դուրս եկած հայկական գրերը պահպանվել էին Դանիել անունով ասորի եպիսկոպոսի մոտ: Այդ մասին տեղեկացան Մեսրոպ Մաշտոցն ու Մահակ Պարթևը Կամաշապուռ արքայից, երբ նրան ներկայացրեցին հայտնագու և հայագիր դարություն անդձնելու իրենց ծրագիրը. «*Յացեժամ պատմէր ևոցա արքացն փասն ստն ուրումն ասորայր ևպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կրչկնցելոյ, որոյ յանկարծ ուրմնն գտեալ ևշանագիրսա տփարետաց հայերէն լիզուի*»⁷⁰: Արքայի պատասխանը ոչ միայն կասկած կամ տարակուսանք չառաջացրեց Մեսրոպ Մաշտոցի ու Մահակ Պարթևի մոտ, այլ ընդհակառակը, նրանք ոգևորված սկսեցին հորդորել արքային՝ ժամ առաջ թերել տալ այդ նշանագրերը Հայաստան: Նշանագրերը թերվեցին, և երկու տարի Մաշտոցը դրանցով սովորեցնում էր մանուկներին: Մակայն ժամանակի ընթացքում համոզվեցին, որ դրանք լիովին չեն բավարարում խնդրի լուծմանը. «*Իսկ իբրև ի վերայ հասնալ, թէ չեն բաւական ևշանագիրքն ողջ սծնդ գսխորոջս գկապս հայերէն լիզույն, մանուխանդ գի ևւ ևշանագիրքն իսկ յայոց դպրութեանց թաղեալք ևւ յարուցեալք դիպեցան, յետ այնոյիկ դարձեալ կրկին անգամ ի ևոյն հոգս դատեալին, ևւ ևմաին ելս խնդրէին ժամանակս ինչ*»⁷¹: Այնուհետև Մաշտոցն անձամբ մեկնեց Եղեսիա, հանդիպեց Դանիել Ասորուն, բայց ավելին չստանալով՝ շարունակեց որոնումներն ու աստվածային

⁶⁹ Զարբանուզում, 1847, էջ 202–204: Հրատարակության վերջում նշված են միայն եռնիսուսի անվան և ազգանվան ստաշին աստերը (Պ. Չ.): Ենթադրելով, որ դա Գարեգին Զարբանուզյանի կրտսերակույնն է, մենք նաևսովով դիմեցինք «Մազմալագ»-ի խմբագրությանը՝ հրատարակելու: Օրոշմանկարությանը կեցին, որ 29.04.2015 թվականի նամակով հանդիպեցին թարգմանչությանը և հավանությունը, որ ուշագրավ այս կրտսերակույնն երեխան է, իբր, նայր Գարեգին Զարբանուզյանն է:

⁷⁰ «Ան ժամանակ (Կամաշապուռ) այցոս դատեց ևրանք մի մարտ: Դանիէլ անունով մի արքեպիսոս ասորի Խայկոպոսի մասին, որ Կամաշապուռ գտել է հայերն լիզլի այբարեւմեղի կհանազեցել» (Կոդյուն, գ. 2: ՄՀ–Ա, էջ 236–237):

⁷¹ «Իսկ իբր Խաչատուր, որ այդ կհանազեցել թագիսան յն հայերն լիզլի պերտանեղը – խաղերն անկողնոջսան պտտանազանու հանազը, – մանուխան որ կհանազերն էլ խոստան ուրի՛ դպրութեաննորից թայլում ու հայրություն ասած ինքեպիսին, – ցարիպ կրկուրդ անգամ ևոյն հոգի մեք ընկան և մի բանն ժամանակ կըր լին վնարում ցրան» (Կոդյուն, գ. 2: ՄՀ–237): Կոդյունի այս նախաձեռն (նախկապուս Գայոց դպրութեանց թայլուքը ևւ յարուցեալք» արտահայտությունը) գրողականության մեջ բազմաթիվ ու բազմազան մեկնաբանություններ կան, որոնց կանոնադրականը ստորև:

տեսիլքով ստացավ նոր այրուբնեղ, որ Կորյունը բնութագրում է իբրև հայերեն լեզվի «նորոգ և սրանկեղի» նշանագրեր⁵²:

Մովսես Խորենացին, անդրադառնալով նույն դրվագին, Դանիել եպիսկոպոսի մոտ պահպանված գրերը կոչում է «զվաղեղուն գտնալ»⁵³ *Լշանագիր տառից»*⁵⁴:

Նույնն է հավաստում նաև Ղազար Փարպեցին, երբ ներկայացնում է Մեսրոպ Մաշտոցի խորհրդածությունները հայագիր և հայալեզու դպրության ստեղծման մասին. «Չայս ի բազում ժամանակս գտնաւ անեալ երանելի տն Մաշտոցի, և փոփոցեալ յանձն իր, մասնատել թէ գոն Լշանագիրը հայերէն լեզուոյս, որով հեար Է ինքնան ծայնի, և ոչ մուրացածոյ յարքաւով, շահել զոգիս արանց և կանանց ստ հասարակ յանձնեացն ևկեղեցիս բազմութեանն»⁵⁵:

Հատկանշական է Ղազար Փարպեցու ձևակերպումը՝ կապված Մեսրոպ Մաշտոցի այրուբնի հետ, երբ նա խորհուրդ է տալիս ընթերցողին մանրամասների համար կարդալ Կորյունի երկը. «Եւ զայս թէ կամիցի որ զիտել հաստնեալ ի պատմութենէ զրոյց տն ցանկալի Կորնան, աշակերտի նորին երանելոյն Մաշտոցի, կարդացեալ տեղեկացի զվարս կնեաց նորս և զիտ հայերէն Լշանագրացն...»⁵⁶: Ղազար Փարպեցու «զիտ հայերէն Լշանագրացն» արտահայտությունն ինքնին ցույց է տալիս, որ եղել է մեկ այլ, ոչ մաշտոցյան (քնականաբար՝ նախամաշտոցյան) հայերեն Լշանագրային համակարգ:

Ղազար Փարպեցու հետագա շարադրանքում ավելի է ընդգծվում, որ Մեսրոպ Մաշտոցը կարգավորել և կատարելագործել է հայոց հնագույն գրահամակարգը⁵⁷: Հայոց աշխարհիկ և հոգևոր դասերի վերնախավի ներկայացուցիչները (Վտամշապուռի արքայի և Մեսրոպ Մաշտոցի գլխավորությամբ) դիմում են Սահակ Պարթևին, որպեսզի նա հանձն առնի Աստվածաշնչի հայերեն թարգմանության դժվարին գործը: Այդ ժամանակ ավագ քահանաների՝ Սա-

⁵² Կորյուն, գլ. Զ-Ը: ՄՀ-Ա, էջ 236-238:

⁵³ Ձեռագրերը պահպանել են և՛ «գտնալ», և՛ «գեբալ» տարբերակները (տե՛ս Մովսես Խորենացի, 1913 (1991), էջ 326: ՄՀ-Բ, էջ 2080):

⁵⁴ Մովսես Խորենացի, գիրք 9, գլ. ԾԲ: ՄՀ-Բ, էջ 2080:

⁵⁵ «Եվ Լշանիկ այդ Մաշտոցն այդ մասին երկար ժամանակ խորեմ էր ու բայի իր ներսում, չ՛ որ կային հայերեն լեզվի Լշանագիր, որոնցով հնարավոր է սեփական ծայնով և ոչ թե մուրացածո լեզվով ևկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և ստիասարակ բազմության արտերը» (Ղազար Փարպեցի, դրվագ Ա, գլ. Ժ: ՄՀ-Բ, էջ 2212):

⁵⁶ Ղազար Փարպեցի, դրվագ Ա, գլ. Ժ, 4: ՄՀ-Ա, էջ 2212:

⁵⁷ Ղազար Փարպեցու ձեռագրերից մեկում ժամանակին կատարվել է ներմուծում Մովսես Խորենացու «Նայոց պատմության» 1695 թ. Ամստերդամի հրատարակչությունից (Խանգամանորեն տե՛ս Տեղ-Մկրտչյան, 1901, էջ 542-549): Դանիելի մտոյց գրանշանները բերելու և Վտամշապուռի արքային, Սահակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին հանձնելու դրվագից հետո ավելացված է Խորենացու պատմությունը Մեսրոպ Մաշտոցի տեսլիքի մասին: Այդ հատվածը, քնականաբար, դուրս է բերվելում քնական բնագրից՝ բերվելով միայն տղատակի ծանոթագրություններում (Ղազար Փարպեցի, 1904, էջ 15: ՄՀ-Բ, էջ 2213): Ղազար Փարպեցու երկն աշխարհաբար թարգմանության ևեղենակ Բազդաստ Ուլուրաբբեյը, ինքը ևս կելով, որ դա ներմուծում է Մովսես Խորենացուց, այնուամենայնիվ, այդ հատվածը բողել է բուն տեքստում՝ ստալով դրան իր բացատրությունը ծանոթագրության մեջ (Ղազար Փարպեցի, 1982, էջ 32-35, ծանոթագրությունը՝ էջ 490-491): Նման մտնեղեն արդարացված է, քանի որ դա հակասության մեջ է մտնում Ղազար Փարպեցու քնագրի շարունակության հետ, ուր նա Մեսրոպ Մաշտոցին ներկայացնում է իբրև փորձուց զոված Լշանագրերը կարգավորող (տե՛ս Ղազար Փարպեցի, դրվագ Ա, գլ. ԺԵ: ՄՀ-Բ, էջ 2214-2215):

հակ Պարթև կարողիկոսին ուղղված խոսքում նշվում է, որ հայոց նոր այբուբենը «գվաղեղուցն գրեալ» գրերն էին, որոնք չէին կիրառվում և Մեսրոպ Մաշտոցը դրանք կարգավորեց աստվածային շնորհով. «Մեք որ կաղքս ստացի թո, հանդերձ նրանեղեան Մաշտոցի, զոր զարթոյց աստուածացինն շնորի ի ցանկութիւն այս կարգել գվաղեղուցն գրեալ շարագիրս տառիցն, զորս ոչ ոչորք էր հոգացեալ արկանել ի կիր... Եւ ռատցիչքն հանելով յոգոցն եւ հատցելով զղջանացին զստոսի ցանն իւրեանց, յորում ոչ գրք յուսումնասէր ժողովեղոցն տեսանէին սագտեալ ի վարդապետութենէ հոգևոր իրատուցն, որ է կերակոր եւ պարարտանն իմաստնախելոյր անձանց. միեզն գտաւ զիր եւ աշողելով Քրիստոսի եկեալ յսնումն տակալին զարանայ»⁵⁸:

Ավելորդ չենք համարում այստեղ մեկ անգամ ևս հիշելը, որ Կորյունը մաշտոցյան գրանշանները բնութագրում է իբրև հայերեն լեզվի «նորոգ եւ սքանչելի» նշանագրեր⁵⁹: Կարծում ենք, որ «նորոգ» (և ոչ թե «նոր») եզրույթի ընտրությունը պատահական չէ:

Վաղուց նկատվել է, որ հինգերորդ դարի հայ պատմիչներից ոչ մեկը չի նշում Դանիելի մոտ պահպանված հին հայկական գրանշանների թիվը: Հետագա դարերում դրանց վերագրվել են տարբեր քանակություններ (17, 22, 24, 29), որոնք կապվում են փյունիկյան, արամեական, ասորական, հունական այբուբենների հետ կամ այն մտքի, որ Մաշտոցը առեղծել է միայն ձայնավոր հնչյունների նշանները⁶⁰:

Այստեղ առաջին անգամ ցանկանում ենք առաջ քաշել տեսակետ՝ հիմնված Դազար Փարպեցու կարևոր մի հաղորդման վրա, ըստ որի **Դանիելի մոտ պահպանվածը ոչ թե այբուբեն էր 2-3 տասնյակ նշաններով, այլ՝ հայկական մեհենագրային համակարգը, որի գրանշանների թիվն անցնում էր երկու հարյուրից**:

Դազար Փարպեցին օգտվել է Կորյունի անվաթար բնագրից, որը մեզ չի հասել, և Մաշտոցի մասին իր տեղեկությունները ստացել է նաև նրա աշակերտներից ու գործակիցներից: Ուստի նրա հաղորդումներն ունեն բացառիկ կարևորություն: Դազար Փարպեցին տեղեկացնում է, որ Դանիելից նշանագրերը ստանալով Վոսաձապուհ արքան, Մահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը մեծ ուրախություն ապրեցին, ինչից հետո Մաշտոցը ձեռնարկեց այդ նշանագրերը ըստ հունարենի հնչյունական դասավորության կարգավորելու գործը: Եթե Դանիելից ստացված նշանագրերը լինեին 2-3 տասնյակ նշաններ,

⁵⁸ «Մեք, որ թո ստաք կանգնած ենք նրանեի Մաշտոցի հետ միասին, որի մեք աստվածային շնորհք ցանկություն արեանշունք լուրջավորել վարկուց գրեալ նրանացորեղ, որոնք կիրառույունք ոչ որ չէր հոգացել... Ուստցիներք հոգայ հանելով ու հատցելով արեստում էին իրենց գոյք ցանկրելի համայն: Ուսումնասիր հարցադրանքից որ մեկն օրում չէր ասանում հոգևոր իրատուների վարդապետությունից, որն իմաստասեր մարդկանց անանց է ու զգայալուց, միևեկ ցանկնց գիրք և անելով զնուս գրեալում է Քրիստոսի օգնվածություն» (Դազար Փարպեցի, զրգվա Ա, գ. ԺԱ: ՄՀ-Բ, էջ 2214-2215):

⁵⁹ Կորյուն, գ. Ը: ՄՀ-Ա, էջ 236-238:

⁶⁰ Այդ տեղեկությունների և դրանց հնագրավոր մեկնաբանությունների մասին տե՛ս Աննայան, 1984, էջ 441-460:

ապա Մեսրոպ Մաշտոցը, որ մանուկ հասակից տիրապետում էր հունարենին և եղել էր արքունի դպիր, առանց դժվարության մեկ էջի վրա անմիջապես դրանք կդասավորեր՝ ըստ հունական այբուրենի դասավորության: Մակայն այդ գործի համար Սահակ Պարթևը նրան տվեց չորս օգնականներ, ընդ որում, հինգ հոգուց բաղկացած խումբն աշխատելիս, երբ դժվարության էր հանդիպում, դիմում էր հենց իրեն՝ կաթողիկոսին. «Եւ այսպէս դիպեալ զհատի Էջանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշտոց, յնրիսերով զնա սուրբ հայրապետին Հսոցոց Սահակաց, դիւրահեւոր ճանապարհ ցուցանելով կարգադրութեան գրեւորս ևս հեզնեային ուղղաձայնութեան. կարով ևնա ազնականս ևս այլ արս բանիբունս ևս մտացիս ի քահանայիցն Հսոցոց, որք էին ատ սակա մի ևս ևորս, որպէս երանելին Մաշտոց, մերձատրեալք ի յունարէն հեզնեայինս. որում առաջնոյն անուն էր Յոհան ի գաստէն Եկեղեցաց, և երկրորդին Յովսէփ ի Պաղանական ստանէն, և երրորդին Տէր ի Խորձնեղ, և չորրորդին Մուշէ ի Տարաւոյ: Որոց ազնեւորսն զարէր երանելի Մաշտոց, հանդիպեցուցանէր զհայերէն արտօքայն ըստ կարգման սիրովբայիցն Յունաց, ատէպ հարգմամբ ևս ուսանելով ի սուրբ կաթողիկոսէն Սահակաց զարտօքայնիցն զատարհար, ըստ անսարքարտեան յունիկն»⁴¹:

Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ համապատասխանեցվում էին ոչ թե տառերը, այլ՝ վանկերը («զհայերէն արտօքայն ըստ կարգման սիրովբայիցն Յունաց»): Նշանակում է՝ Դանիել Եպիսկոպոսի մոտ պահպանվածը ոչ թե 2–3 տասնյակ տառանշանից բաղկացած այբուրեն էր, այլ շատ ավելի բազմանիշ և բարդ համակարգ (թերևս՝ վանկային կամ բառավանկային), որի վրա աշխատեց հինգ հոգուց բաղկացած հանձնախումբը՝ Մեսրոպ Մաշտոցի գլխավորությամբ, երբեմն օգնություն ստանալով նաև կաթողիկոսից⁴²:

Այս փաստին դեռևս 1907 թվականին ուշադրություն է դարձրել Տ. Կ. Սահակյանը. «24 տարի առջև տատեր շարեղ՝ (մեկ էլով ցանկ մ'յօրինելը) ի՛նչ Էջանակոյթին կրնայ ունենայ՝ որ բոլոր պատմիչները յիշատակեն և այնքան հանդիսատրութեանը, այնքան յուզված... Որքան անտեղի է կարծել, թէ չորս հոգոյ յանձնաժողով մը կազմուել էր (Յովհան, Յովսէփ, Տիր և Մուշէ) հայերէն տատերը յունարէնին առջև շարեղու համար! և բաց ստորի յոյն տատերու մասին ատէպ հարցնէին և սուրբին Ս. Սահակէն... Դարձեալ Σέλλαστος «վանկ» կը Էջանակէ ևս տատերը մի ատ մի յոյնին առջև շարեղու համար՝ ոչ մեկ պատճառ կար վանկե-

⁴¹ «Եվ, այսպես, հայոց Էջանագրերը գտնելով երանելի Մաշտոցը գործը ձեռնարկեց: Հսոցոց սուրբ հայրապետ Սահակն էլ գործը հարձարեցնելով տառերի դասավորության և հեղուկային ուղղաձայնության դրոշմի ճանապարհ ցույց տալով, ինչպես նաև հայոց քանանականերից երան օգնականներ կարգելով մարտարարան ու ինքամիտ մարզկանց, որոնք, երանելի Մաշտոցի պես, չէին գիտնին հունարեն հեղուկաբանությունը: Երանցից առաջինի անուն էր Հոհան՝ Եկեղեցաց գաղափար, երկրորդին՝ Հովսէփ՝ Պաղանական անից, երրորդին՝ Տիր՝ Խորձանեղ, չորրորդին՝ Մուշէ՝ Տարաւոյ: Երանց օգնությամբ երանելի Մաշտոցը կարողացավ հայերեն վանկերը կարգավորել-դասավորել ըստ հունարենի հեղուկային-վանկական անսարքար դասավորության՝ համախ հարցնելով ու սուրբ Սահակ կարողեցոյից իմանալով հունարենի վանկերի օրինակները» (Մազար Փարսեցի, դրվագ Ա, գլ. Ժ, ՄՀ-Բ, էջ 2214):

⁴² Դանիելի մոտ պահպանված զբանշաններն ըստ հունական այբուրենի հեղուկաբանության դասավորելու մասին հարցրելով ունի նաև Մովսես Խորենացին (գիրք Գ, գլ. ԾԲ), ով, ավարակ, դասավորման հեղուկ է նամարում հենց Դանիելին:

րու վրայ խօսելու»⁶³: Հեղինակը ենթադրում է, որ Մաշտոցն իր չորս աշակերտների հետ և Սահակ Դարբևի օգնությամբ ստեղծել է հունարեն–հայերեն բառարան: Գեղեցիկ լինելով հանդերձ՝ ենթադրությունը համոզիչ չէ, քանի որ այդ դեպքում բառարանը կհիշատակվեր, մասնավոր, կարգված Աստվածաշնչի թարգմանության հետ: Մինչդեռ թե՛ Մովսես Խորենացին, թե՛ Դավաթ Փարպեցին հստակ էշում են Դանիելի մոտ պահպանված նշանագրերն ըստ հունարենի հերթականության դասավորելու մասին:

Դանիել Ասորու մոտ պահպանված և Մաշտոցի ստեղծած գրահամակարգերի մասին X–XI դդ. ապրամ պատմիչ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն ունի հետևյալ հաղորդումը. «Եւ զտաք հանդիպեալ յերկրորդ ամին Արտաշէրի արքային Դարսից՝ զհինգերորդ ամն և տամ–Շապիոյ արքայի Հայոց. յորում Մաշտոցն երանելի, որ էր ի գաւառէն Տարօնոյ ի գեղջէն Հացնկաց՝ ի մեռն և տամ–Շապիոյ և մեծի Հայրապետին Սահակայ Դանիէլեան կշանագրօք զդպրութիւն ըստ հայունս յօրինէր ընկերօք ոմանք, տուելովք նմա ի Սահակայ: Եւստ որոյ դարձեալ ևս ի վեցերորդամն նորին և տամ–Շապիոյ, որ է ամ առաջին և տամ–Կրման արքայի վերտին աստուածատուր կշանագրօք զնոյնս յեղանակեալ յօրինէր, որովք և դպրութիւնք և զիրք աստուածաշունչք ուղղեալ թարգմանէին, որպէս պատմեն Կորիսն և Դազարս»⁶⁴: Մեկ այլ տեղում Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն ավելի է մանրամասնում իր տեղեկությունը՝ «Թէտղոս փոքր որդի Արկաշու, ամս ԽԲ... ի տրսա աւուրս էր ստրք հայրապետն Հայոց Սահակ, յորոյ աւուրս դպրութիւն Հայոց յեզուիս ԻԹ զիր ի Դանիէլէ փիլիսոփայէ Ասորոց կարգեցաւ, իսկ զեօթն զրոցն պակասութիւն Մարութք Երանելի Տարօնեցի ինդրուածովք յԱստուծոյ անուն»⁶⁵:

Սամուել Անեցու (XII դ.) հաղորդումը ևս վկայում է հօգուտ այն մտքի, որ Դանիելի մոտ պահպանված գրահամակարգն ընդգրկվեց Մաշտոցի այբուբենի կազմում. «ԵՒԱ... Սկիզբն դպրութեանս Հայոց. Մաշտոց, որ է Մարտայ երանելի և մեռն Իսահակ գ' Դանիէլի կշանագիրսն յօրինէին ընկերօք հանդերձ: Եւ յետ միոյ ամի դարձեալ աստուածատուր կշանագրօք՝ զնոյն յեղանակեալ. որով և դպրութիւնք և զիրք աստուածայինք ուղղեալ թարգմանէին»⁶⁶:

⁶³ Սահակեան, 1907, էջ 441–443:

⁶⁴ «Եւ տես երեսնս դաստանն, որ Դարսից Արտաշէր արքայի երկերոյ տարում և Հայոց արքս և տամապետն և հինգերօրօրում, եւք երանելի Մաշտոցը, որ Տարօնի գաւառի Հարձեայ գաղցի էր, և տամապետն արքայի և հինգերօրօրի մեռն հարապետն մեռցով, մի քանի ընկերակիցների հետ մեռան, որոնք Սահակն էր աւարկել կրս Սահակ մեծ հարապետն մեռցով, մի քանի ընկերակիցների հետ մեռան, որոնք Սահակն էր աւարկել կրս Սահակ մեծ հարապետն մեռցով հարկուն դպրութեանը երկինք: Եւ որպէս ինչ հետ դարձեալ նոյն և տամապետն փեղկերոյ տարում, որ և տամ–Կրման արքայի տաւաքն տարին էր, զկրտսին աստուածատուր կշանագրերով վեցերօրօր տարում, որ և տամ–Կրման արքայի տաւաքն տարին էր, զկրտսին աստուածատուր կշանագրերով վեցերօրօր երանելիով արքայապետն է, որոնքով և դպրութեանն և Աստվածաշունչք արքայոջ թարգմանում են, ինչպէս որ պատմում են Կորյունն ու Դազարս» (Սահակեանի Տարօնեցու Ասողիկն... երկերոյ հանդես, գլ. Ա, 1885, էջ 74; ՄԿ–ԺԵ, էջ 683–684):

⁶⁵ «Արկաշի որդի Թէտղոս Փոքրի՝ իրք բաւառուներն տարի... սրս ժամանակներում էր Հայոց հարապետն ստրք Սահակը, որի օրոք կարգավորվեց մեր Հայոց թագի դպրությունը՝ իրք բաւառիկը զիր հանդէս Ազոթի փիլիսոփայից, իսկ յոր գեղի պակասությունը առաջով երանելի Մարտայ Տարօնեցի՝ Սամուել ինդրուածովք» (Սահակեանի Տարօնեցու Ասողիկն... երկերոյ հանդես, գլ. Զ, 1885, էջ 139–140; ՄԿ–ԺԵ, էջ 731):

⁶⁶ Սամուել Անեցի, 1893, էջ 68:

Կիրակոս Գանձակեցին «Հայոց պատմության» Ա գլխում Դանիել եպիսկոպոսի մոտ գտնված գրքերի մասին հաղորդում է. «Եւ ծանուցանեն զխորհուրդն Առաջնապետոյ թագաւորին: Եւ նա սասաց, թէ՛ անկէ էի եւ ի կողմանս Ասորոց, սասաց ինձ ոմն եպիսկոպոս ասորի՝ Դանիէլ անուն, թէ՛ տեսիմ եւ կշանագիր հայերէն լեզուի»⁶⁷. Եւ անհիշոյց արարի առ ժամն: Եւ առաքէն զնախադար գունն, Կրպիւնայ անուն, առ Դանիէլէն խնդրել ի նմանէ զկշանագիրն... Եւ իբրև տեսիմ՝ ուրախ եղին, և սկսան ի հայ լեզու փոխել զամենայն զիրս Աստուածաշունչս. բայց հայեցնալ տեսին, զի ոչ էր բաւական զամենայն փոփոխան ողջ անել, և զշաղկապս և զբառս, սկսան դարձնալ ի հոգս մտանել վասն սցեղոբիկ»⁶⁸:

Համանման տեղեկություն է պահպանել նաև Կարդան Արևելցին (XII–XIII դդ.), որը համարում էր, որ մաշտոցյան այբուբենը ստեղծվել է Դանիելի մոտ գտնված վաղ հայկական գրքերի ցուցամամբ. «... սուրբ Մեսրոպ յօրինէ հայերէն դարձութիւն՝ քան և երկու զիրս առ Դանիէլի ասորոյ գտնալ ՚ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս անհոգացնալ եղև յառաջնոցն՝ յոյն և ասորի և պարսիկ գրով շատուցնալ: Եվ Մեղոպ ոչ կարել էր կորոյ փոխել զԱստուածաշունչ մատենանս ՚ի հայ բարբառ. ծան էրոյ աղօթից տունալ զանձն՝ գործակցութեանք սրբոյն Մահակայ, տայ նմա Աստուած չորքրտատան զիրս աշտին իբրով դրշննալ առաջի կորսա՝ որպէս մեծին Մովսիսի՝ ի յնառն Սիւնայ, և անա՝ ՚ի յնառն Բաղուայ, որպէս տակաւին ցուցանի դրշնն աստուածագիծ ՚ի վիսին և նկարք գրեցոյն»⁶⁹:

Որպես հիմնավորում նախամաշտոցյան հայ այբուբանի գոյության, Կարդան Արևելցին ավելացնում է մի ուշագրավ տեղեկություն. «Եւ զի լնալ է հայերէն զիր ՚ի հնոյն – վերցնալ ՚ի ժամանակս Լևոնի սրբայի. զի գրաւ դրաւ ՚ի Կիլիկիս հացելէն գրով դրշննալ զանուն կրասպաշտ թագաւորացն հայկազանց»⁷⁰...

⁶⁷ Կիրակոս Գանձակեցի, 1961, էջ 25–26: «Այս մտադրութեանը հարմար է նաև «Առաջնապետ թագաւորին և նա ասում է, թէ՛ «եթ եւ Ասորիի կողմերում էի, Դանիէլ անունով մի ասորի եպիսկոպոս ինձ սասաց, թէ՛ «ես հայոց թագի կշանագիր ունեմ», եւ այս ժամանակ անուշաբուրբայան մատենից»: Եվ «Կաթինն անունով մի նախադարի ուղարկում է Դանիէլի մոտ նրանից կշանագիրը խնդրելու... Եվ եթ տեսնեմ, ուրախացան ու սկսեցին հայերենի թարգմանել ամբողջ Աստվածաշունչը, բայց ետևելով նկատեցին, թե չի բավականացնում բոլոր ձվերը, ժամկիներն ու քաներն անորոշումն արտասպառելու, սկսեցին դարձով մտածողով այդ արթին» (Կիրակոս Գանձակեցի, 1982, էջ 35):

⁶⁸ «... սուրբ Մեսրոպ երբևեւ է հայոց դարձութիւնը՝ ասորի Դանիէլի մոտ գտնելով հին ժամանակներից մնացած բաներնու առա, որոնք մեր թագի յնդարձակութեանը ցրացանապետու պատեստով անուշակ էին մեր նախնիների կողմից, և նրանք բավարարվել էին հույնական, ասորական և պարսկական գրով: Եվ ոչ էլ Մեսրոպ կարող էր հրահրել Աստվածաշունչը փոփոխելու հայերենի: Դրա համար նա իրեն նախընտրեց «սուրբ Մանանի» օգնությանը, և Աստված կատարեց նրա խնդրանքը՝ նրան տալով տառերու տեսեր, որոնք իր այբով հղանում է նրա առաջ պնդան, ինչպես մեծն Մովսիսին Սիւնա բնուն վրա, իսկ այս Բաղու յնուն վրա, որտեղ տակաւին նրանում են աստվածաստեղծ վնքի հղանն ու ստեղծի պատկերները» (Կարդան Արևելցի, գլ. ԻԵ, 1861, էջ 70):

⁶⁹ «Եվ որ մեր նախնիներն ունեցել են հայերեն գիր, նախաառաջին Լևոն սրբայի ժամանակներում, որպիսին «Կիլիկիսում գտնվելուց հետո, որին զուգահեռ էին «Հայկազան կրասպա թագաւորների անուններ՝ հայերեն գրով» (Կարդան Արևելցի, գլ. ԻԵ, 1861, էջ 70): «Մտապ դարձրում այդ մասին նախնիներն անհեղափոխ ենեցին և հղանց հնարակող մեկնարկությունների մասին տե՛ս Անտառն, 1984, էջ 441–460: Կիլիկիսում գտնված նախադիր դրամի մասին տեղեկության մեր մեկնարկությունը տե՛ս Մովսիսյան, 1996 (Ի), էջ 68–71, ինչպես նաև այս աշխատանքի «Հայկական մեկնագրերի գործածությունը Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո» բաժնում:

Կարապետ Մասնեցին (XII–XIII) և Դանիելի մոտ եղած գրերի թիվը համարում է 22, իսկ Մեսրոպ Մաշտոցի տեսիլքով ստացածը՝ 14. «Որոյ ստիպապո ստեպ ընդ իւր՝ թարգմանելով զվարդուց արարեալ էջանան կրկին տասուն»⁷⁵ և գերկու տասն, որք ոչ բասական[ան]յային բայից մերոց... զՏէրն հրեշտակաց՝ մարգարեական աշաւք՝ որ գրէր մատանագիծ ի սալա սրտի իւրոյ յորեքտասան տար»⁷⁶:

Նշվածներից բացի կան մի շարք այլ, ստույգ չթվագրվող մատենագրական հաղորդումներ ևս: Դրանցից է Դավիթ Անադոյթին վերագրված մի հանելուկ, որում փոխարքերական կերպով ներկայացված է հայոց գրերի թիվը Մաշտոցից առաջ՝ 24, և Մաշտոցի գլուխից հետո՝ 36. «Ձեռք Աննևակալին տողծին զիս և բարձրեալն ՚ի բարձանց ՚ի բարձունս ընծայեաց զիս: Չափ հասակի ինոյ երկիցս երկրոտասան, սցծն եւ երիցս երկրոտասան»⁷⁷:

«Յաղագս սրբոց վարդապետացն Հայոց Մովսեսի և Դաւթի» անվավերական գրվածքում Դանիել եպիսկոպոսի մոտ պահպանված գրաբանների թիվը նշվում է 29⁷⁸: Նույն թիվն է նշվում «Ոսկեփորիկ» ժողովածուների ձեռագիր երկու մատյաններում⁷⁹:

«Կարդանագիրք» կոչվող մատյանում, որը կազմել է Կարդան Արևելցին Կղիկյան Հայաստանի արքա Հեթում Ա–ի պատվերով, ասորական այբուբենի հիմքով ստեղծված հին հայկական այբուբենի նիշերի թիվը համարվում է 17, որին հետագայում Մաշտոցը հավելեց 19 տառ՝ ստանալով 36 տառանոց նոր այբուբենը.

«... Ասորիք ընդ մեր թագաւորօրն էին, և լոցացն է քսան և կոկու գիր է, ի լոցանէ ջանացան ստեղծ մեր գիր: Եւ լեալ էր հայերէն էջանագիր ի հին ժամանակս՝ տարս. և զի չկարէին բանալ լորոք, թողին ևս մոռացալ: Եւ երբ դարձեալ ի խոնիր եղին, գտաւ առ Դանիէլ անուն ասորի եպիսկոպոս մի. և Սահակ և Մարտոյ առաքեցին զԱրեզ անուն երէց ասորի, և երէր: Եւ զի չբարէր լիով զասորոտօրին լեզուխ, զնաց դարձեալ Մարտոյ առ լոյն եպիսկոպոս Դանիէլ. և ասիա ինչ աշխատ եղին, և չկարացին ինչ անելի շածիլ զի գառաջինն ի լոցանէ էր ստեղծ եւջին ևս տասն գիր, զի հինգ գիրն թողեալ էր և չէր թարգմանեալ. երբ ջանային թէ թարգմանենք քստ մեր լեզուխ, չգայր ի բան այն հինգ գիրն: Այրս յաթօրս սարախինալ՝ տնտանէր մարգարեական աշօք՝ թագձ ձնոյն աշոյ, որ գրէր ի վերայ միմի և ամնեայն հանգարաներն և որպիսութիանս սարաւորնցալ ի սիրտն և վաղիարակի տողծանէր ինն ևս տասն գիր»⁸⁰:

⁷⁵ Մեկ հասած ձեռագրում «տասն» է միջոցի պետք է փնի «տասան», ինչպես սրբագրում է Հ. Ամասյանը (Ամասյան, 1984, էջ 475):

⁷⁶ Կարապետ Մասնեցու... 1897, էջ 41, 43–44:

⁷⁷ Յոսու, 1896, էջ 214: Հանելուկի մեկ այլ տարբերակում թվերի վաճառության հասնածը ներկայացված է այսպես՝ «եւ յայն ամաց ինոյ յառաջ էր երկու թձ (-24). այժմ աննոյս և արագացայ և եւ գ ծգ (-39): Արջի՞մ՝ 39 թիվը ցույց է առնիս, որ այս հանելուկն իրականում ստեղծվել կամ գրան խմբագրվել է Արջի՞մ հետո, երբ «և, օ, ֆ»-ի հավելմամբ մաշտոցյան այբուբենի նիշերի թիվը հասավ 39-ի: Հօգուտ նախամարտյան 24 աստղի գրչության վերաբերյալում է նաև անվանք մի վրայույթուն՝ հարցուպատասխանի տեսքով. «Բանի՞» գիր գտաւ Մեսրոպ որ ի յերկարացուցն չկար: – «Պատասխան. ծր (-12) գիր էր, ամեն յզ (-36) պիտի» (Ամասյան, 1984, էջ 442):

⁷⁸ Ամասյան, 1984, էջ 442:

⁷⁹ Նույն տեղում:

⁸⁰ Յարութիւնեանց, 1892, էջ 267–269; Ամասյան, 1984, էջ 446–447, որտեղ նշված են նաև այս հասնածի ուր հրատարակությունները:

Մեկ այլ աղբյուրում «Յայամաուրբում», նույնպես նշվում է, որ Դանիելի մոտ պահպանված գրերն անբավարար էին, միայն թե այս դեպքում այդ գրահամակարգի հիմքը համարվում է ոչ թե ասորական, այլ հունական այբուբենը⁷⁶:

«Գանձարան» կոչվող ժողովածուի մեջ Դանիել Ասորու մոտ պահպանված գրանշանների թիվը 29–ն է.

«Աստ հոգին շարժեալ,
Առ նոսա ազդեալ,
Հայ գիր արինեալ,
Վտամշապուի գործակցեալ,
Դանիել շնորհեալ,
Քսան և ինն զըտեալ,
նախնեաց արարեալ:
Ամս երկուս չեերքեալ,
Բագում աշխատեալ,
Եւ ոչինչ օգտեալ...
Աջ ձեռն երևեալ
Իբր ի ձեռն զըրեալ
Եւթ գիր յորինեալ...
.....
Քսան և ինն էր զըտած
Այլ անազուտ էր ընթերցողաց,
Չի և ոչ կապէր հեզ քառից անուանց,
Այլ անհոգն մարմնոյ նըմանած...
Աջն Աստուծոյ անեղին փառաց
Ըզեւթն գիրն ի քարին գրեաց...»⁷⁷:

Նույնպիսի քացատրություն կա հունարենից թարգմանված «Կայսերաց գրքում», որը լրացված է հայություն մասին կարևոր տեղեկություններով: Ըստ այդմ, Մաշտոցն իր այբուբենը ստեղծել է՝ հիմք վերցնելով «Դանիելյան» 29 գրանշանները, դրանք լրացնելով իր ստեղծած 7 ձայնավորներով. «Ի սորա աուրսն էր սուրբն Սահակ հայրապետն, յորոյ աուրս գտաա քսան և ինն գիր հայերէն լեզուի ի Դանիել Փիլիսոփայէ ասորոյ, զոր ետ բերել Վտամշապուի թագաւորն. իսկ զեւթն գրոցն պակասութիւն Մեսրոպ երանելի տարաւնեցի ՚ի Հացնկաց գեղջէ յազատ տանէ՝, ամսօրեայ պահովք և աղօթիք հանդերձ աշակերտովք հայցէր յԱստուծոյ...»⁷⁸:

⁷⁶ Չարքեանագան, 1897, էջ 45:

⁷⁷ Թագուրթանագ, 1892, էջ 263–265; Անադյան, 1984, էջ 442–443; Չարքեանագան, 1897, էջ 45–46:

⁷⁸ Չարքեանագան, 1897, էջ 42; Թագուրթանագ, 1892, էջ 263–267; Անադյան, 1984, էջ 442–443:

Մի շատ ուշագրավ տեղեկություն է հաղորդում է Գևորգ Ասորին (որը հիշատակվում է որպես «եպիսկոպոս արարաց») Յեշուա ճգնակցացի հարցմանն ի պատասխան 714 թ. գրած ասորերեն թղթում: Թղթի հինգերորդ գլուխը պատմում է Գրիգոր Լուսավորչի մասին, որը գրելիս Գևորգ Ասորին վկայակոչում է Լուսավորչի մեզ անհայտ մի կենսագրություն: Քննարկվող նյութի տեսանկյունից այստեղ առկա է շատ ուշագրավ մի հաղորդում., որը բերում ենք Մյիթթարյան հայր Հակոբ Տաշյանի թարգմանությամբ. «... ինչպես որ յայտնի է իր կենսագրութեան խոսքերէն, տղայութեան ժամանակ Հայոց աշխարհ եկաւ կամ Դիոկղեոսիանոսի քրիստոնէից ղեմ յարուցած հպաճանաց կամ ուրիշ մեզի անծանօթ պատճառաւ: Եւ երբ Հայոց երկրին մէջ սնաւ ևս ոսաւ **սևոնց գիրն ու լեզուն**՝ իր անունը տարածուեցաւ ևս հոշակեցաւ, այնպէս որ Տրդատ թագաւորին մերձապնդերէն և ծառաներէն եղաւ, որ սցն ստեն կը թագաւորէր Հայոց աշխարհի վրայ»⁶⁴ (ընդգծումը մերն է – Ա. Մ.): Փաստորեն, տեղեկությունը վկայում է Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակումից առաջ, Գրիգորի մանուկ հասակում Հայաստանում սեփական, հայալեզու գրի գոյության մասին⁶⁵:

Հատուկ ուշադրության է արժանի Մեծ Հայքի արքա Տրդատ Գ-ի և Սուրբ Մարգսի մասին պատմող եթովպական բնագիրը: Բանափյունական տարրերով հարուստ այդ բնագրում պատմվում է, որ Տրդատ Գ-ի օրոք հայոց լեզվի համար ստեղծվել է 22 տառանոց այբուրեն, որի հեղինակները երկու սուրբ հայ հոգևորականներ էին՝ Թադեոս և Մարտիրոսը⁶⁶: Կարելի է ենթադրել, որ առաջին սրբի անունը կապվում է Թադեոս առաքյալի հետ, կամ՝ երկու սրբերին նույնացրել են Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի հետ: Սակայն նման ենթադրությունները քիչ հավանական են: Բանն այն է, որ եթովպական եկեղեցի գործուն կապի մեջ է եղել հայոց եկեղեցու հետ, և Մեսրոպ Մաշտոցը պետք է քաջամանթո լիներ եթովպական հոգևորականությանը:

Մյուս կողմից, տրամաբանական է, որ Տրդատ Գ-ի ժամանակ փորձ արվել ստեղծել այբուրեն հայերենի համար. չէ՞ որ հայ ժողովրդին հունարենով և ասորերենով քարոզչության անարդյունավետությունը հասկանալու համար ոչ թե մեկ դար, այլ մեկ ամիսն էլ քավական էր: Այս դեպքում, իհարկե, պետք է պատասխանել հարցին, թե ինչո՞ւ հայկական աղբյուրներում ոչինչ չի ասվում այս այբուրենի ստեղծման մասին: Կարելի է ենթադրել, որ այբուրենը ստեղծողները պատկանել են մի ուղղության, որն արգելել է պաշտոնական եկեղե-

⁶⁴ Տաշյան, 1891, էջ 4; ՀժԳԻՐ, 2007, էջ 511-512: Լույս հատվածը՝ Հ. Մեղրեյանի թարգմանությամբ. «... նա մտնու է հասակից եկել է հայրից իրվելը Դիոկղեոսիանոսի քրիստոնեաների զմեջ հարուցած հպաճանքներից խոսափելու և կամ մի այլ պատճառաւ, որը մենք չգիտենք: Երբ ևս Հայոց երկրում մեծացաւ ու ստորեց հրանց գիրն ու լեզուն, նա հանրաջն տարածեց, մինչև որ զարմօթ հայրից երկուսն իշխող Տրդատոս թագաւորի արտօտօղորդելից կամ ծառաներից մէկը (Մեղրեյան, 1970, էջ 190-191):

⁶⁵ Տարբերակ է, բայց այս տեղեկությունն անուշադրության է մատնել նախամաշտոցյան գրի և դարձրյան հարցի քննարկումներում, թեպետ այն վերաբերվել է մի շարք հայագետների աշխատանքներում (տե՛ս, օրինակ, Աղջող, 2006, էջ 179; Մեղրեյան, 1970, էջ 190-191):

⁶⁶ Տաշյան, 1895, էջ 37 (ընդլուծւմ է վնայն համաստեղ բովանդակությունը); Պատմութիւն Տրդատոս, 1895, էջ 75-76; Պատմություն Հայոց արքա Տրդատի (Թեղթագի) մասին, 2011, էջ 58-60:

ցու կողմից, իսկ նրանց հետ կապված ամեն բան մոռացության է դատապարտվել: Այդպիսին էր, օրինակ, արքունտիկների քրիստոնեա-գնոստիկական ուղղությունը Հայաստանում, որի առաջնորդ Եվտակտոսը (IV դարակես) հայտնի է օտար աղյուրներում⁸⁷, սակայն նրա մասին ոչինչ չեն հաղորդում մեր պատմիչները:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՄՍՄԱՄԱՇՏՈՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՄՈՒՄՍ ԱՅԼ ԼԵՁՈՒՆԵՐԻ ԵՎ ԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս շարքում հնագույնը Մովսես Խորենացու հաղորդումն է Ծամիրամին վերագրվող Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների վերաբերյալ, որոնց մասին խոսվում է Վանի շինարարության նկարագրության ընթացքում. «Իսկ զամենայն երեսս քարին իբրև գրչաւ զնոմ հաղթեալ՝ քազում զիրս ի նմա գրեաց. որոյ հացեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ: Եւ ոչ միայն այս, այլ և ի քազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նուիին գրով յիշատակ ինչ իւր իդամայէ գրել. և ի քազում տեղիս սահմանս նուիին գրով հաստատել»⁸⁸:

Անուղղակի վկայություն կարելի է համարել Քսենոփոնի հաղորդումը, որի համաձայն՝ հունական վարձկան զինվորականները հայերի հետ շփվում էին պարսիկ թարգմանի միջոցով: Ընդ որում, պարսիկ թարգմանի հետ պարսկերենով ազատ շփվում էին և՛ հայ գյուղապետը, և՛ աղյուրից ջուր տանող պատահական հայ կանայք ու աղջիկները⁸⁹: Դրա հիմամբ որոշ ուսումնասիրողներ ենթադրում են, թե պարսկերենը տարածված գործածական լեզու է եղել Հայաստանում, կարող էր գործածվել նաև իբրև դպրության լեզու⁹⁰:

Դիողորոս Միկիլիացու «Պատմական գրադարան» երկում (գիրք 19; 23, 3) պահպանվել է տեղեկություն Նուխնի արքայի նամակի մասին, որն ընդունված է համարել Հայաստանում դեռևս Աքեմենյանների օրոք արամեերենի գործածության ապացույց. «... Նամակը, որ գրված էր ստոյակյան գրերով, ուղարկված էր Օրոնտոսի կողմից, որը տիրում էր Արմենիայի սատրապությանը և Պեկեստոսի քարեկանն էր»⁹¹: Սակայն Դիողորոս Միկիլիացին նույն երկում (գիրք II, 13, 2) այդպիսի գրերով գրված է համարում Բագաստանայի (Բեհիսթունի) արձանագրությունը⁹², որն, ինչպես հայտնի է, սեպագիր է: Հայտնի է, որ

⁸⁷ The Gnostic Scriptures, 1995, էջ 191-198:

⁸⁸ «Իսկ քարածայի ուղ երևալ հարթելով, ինչպես գրով հարթում են մոդրանոն, փան շատ գրեք զեղ տվեց, որոնց տեսը միայն բոլորին զարմացնում է: Եվ ոչ միայն այստեղ, այլև Հայոց աշխարհում շատ տեղերում արձաններ կանգնեցրեց և նույն գրերով իր մասին ինչ-որ իշխատակ երանայեց զեղ, և շատ տեղերում նույն գրով սահմանեց է հաստատում» (Մովսես Խորենացի, գիրք II, գլ. ԺԶ; ՄՀ-Բ, էջ 1800):

⁸⁹ Քսենոփոն, Անարասիս, գիրք IV, գլ. V, 9 և 34 (Քսենոփոն, 1970, էջ 95-96, 98; հմմտ. Մամանդյան, 1977, էջ 377, 380; ՀԺԳՔ, 2007, էջ 248-250):

⁹⁰ Օրինակ՝ նման կարծիք են հայտնում է. Պիլիպպանը և Լ. Խալեբյանը, որոնք գտնում են, թե Բարսիլանի թարգմանած «Մենեմական պատմության» լեզուն կազող էր լինել պարսկերենը (տե՛ս ստորև):

⁹¹ Դիողորոս Միկիլիացի, 1985, էջ 130; ՀԺԳ, 1971, էջ 908 (լրամի հեղինակ՝ Գ. Ա. Տրպալյան); Աբրահամյան, 1982, էջ 78 և այլն:

⁹² Դիողորոս Միկիլիացի, 1985, էջ 28:

սեպագիրը գործածվել է ինչպես Արեւմեայանների օրոք, այնպես էլ հետագայում, ուստի և այս տեղեկությունն ավելի մեծ հավանականությամբ կարելի է համարել Ք.ա. V–IV դարերում Հայաստանում ոչ թե արամեական այբուրենի, այլ սեպագրի գործածության վկայություն: Տեղեկությունն, ինչ խոսք, կարող է վկայել սատրապական Հայաստանում պետական դիվանի գոյության մասին⁹⁵:

Հայագիտության մեջ արամեական գրի գործածության հետ է կապվել Մովսես Խորենացու տեղեկությունն արտաշեսյան սահմանաքարերի մասին, որոնց վրա, սակայն, Պատմահայրը գրեր չի հիշատակում⁹⁶...

Մենք ունենք մի շարք մատենագրական տեղեկություններ այն մասին, որ հատկապես Արտաշեսյան թագավորների օրոք Հայաստանում լայն տարածում էր ստացել հունական գիրն ու գրականությունը: Դրանցից առավել ուշագրավ է Տիգրան Մեծի ժամանակաշրջանում հույն փիլիսոփա և պատմագիր Մետրոդորոս Մկեփացու կողմից հայոց արքունիքում գրված Տիգրան Մեծի պատմությունը⁹⁷, որը մեզ չի հասել:

Տիգրան Մեծի արքունիքում է ստեղծագործել նաև Ամֆիկրատես Աթենացին, որը հեղինակել է «Մեծ մարդկանց մասին» վերնագրով մի աշխատություն. դժբախտաբար, սա ևս մեզ չի հասել⁹⁸:

Պլուտարքոսի հաղորդման համաձայն⁹⁹, հայոց Արտավազդ արքան հունարեն լեզվով գրել է որոշերգություններ, նաեւ ու պատմական երկեր, որոնցից մի քանիսը հայտնի են եղել նաև հռոմեացիներին Ք.հ. II դարի սկզբին: Հայտնի է նաև, որ մեծ թատրոններ են գործել Արտաշատում և Տիգրանակերտում, որոնցում ներկայացվել են նաև հույն թատերագիրների երկերը, օրինակ՝ Եվրիպիդեսի «Քարոսուհիները» Ք.ա. 53 թվականին, որի ժամանակ բերում են Կրասոսի գլուխը¹⁰⁰:

Նետարտաշեսյան շրջանում Հայոց Սոհեմոս–Տիգրան թագավորի ժամանակ (II դար) Հայաստան է հրավիրվել հռոմեացի նշանավոր հոետոր, գրող և մատենագիր Յամրիքոս Բարելացին, որը, դատելով Փոտիոսի հաղորդումից, մեր երկրում է գրել իր 35 հատորանոց «Բարելոնականը» պատմական վեպը¹⁰¹:

Նախամաշտոցյան Հայաստանում հունարենի, ասորերենի և պարսկերենի գործածության մասին բազմաթիվ տեղեկություններ են հաղորդում վաղ շրջանի հայ մատենագիրները: Նշենք դրանք՝ ըստ ժամանակագրական հերթականության:

Ագաթանգեղոսի հաղորդման համաձայն, Տրդատ Գ–ն ստացել էր լուրջ կրթություն հունարենով, այդ թվում փիլիսոփայական. «Չի յունական աշխարհ»

⁹⁵ Հենտ. Կրասոս, 1972, էջ 106–109:

⁹⁶ Տե՛ս այս աշխատանքի «Հայաստանի արամեոստ արձանագրությունները» ենթաբաժնում:

⁹⁷ Սարգսյան, 1969 (ա), էջ 108–110 (և երկրորդ գրականությունը):

⁹⁸ Կրասոս, 1953, էջ 12 (և հիմնված):

⁹⁹ ՀժԳԸ, 1981, էջ 271 (թարգմ.՝ Պ. Հ. Հովհաննիսյանի); Սարգսյան, 1969 (ա), էջ 110–112:

¹⁰⁰ Հեղինակական դարաշրջանի Հայաստանի թատերական կյանքի մասին հանգամանորեն տե՛ս Դոստ, 2000, էջ 79–174:

¹⁰¹ Մանուկյան, 1978, էջ 42–43 (և երկրորդ գրականությունը):

հական դպրոթանան, երկնատր խնատոթանան, յառաջագոյն էր տեղեակ, առակ փիլիսոփայական մտաց հանճարագիտութեան հմտտ էր, զի ուսնայ էր զացն¹⁰⁰: Նույն պատմիի համաձայն, թրիստոնեութեան պետական կրոն հռչակումից հետո Տրդատ Գ–ն բացել է հունարեն և ասորերեն կրթութեան դպրոցներ. «Եւ ի տեղեաց տեղեաց սահմանացն Հարցո՞ տացր հրաման թագաւորն Տրդատ՝ խոր իշխանութեանն յաշխարհաց և ի գաւառաց թագմութիւն մատաղ մանկուոց ամէլ յարուստ դպրութեանն, և կարգել ի վերաց հաւատարիմ վարդապետս. առակ զազգս պղծագործ թրմացն և մանկունս անցս ի նոյն ժողովել, զունարել յարժանատր տեղիս դասս դասս բոճկաց կարգել: Եւ զնոսս բաժանեալ, զունանս յԱտրի դպրութիւն կարգեալ, և զունանս ի Հելլէն»¹⁰¹:

Փափտոս Բուզանդը Ներսես կաթողիկոսի նախաձեռնությամբ կատարված քարեկորագումների շարքում հիշատակում է «Հայաստանի թորո գաւառներում հունարեն և ասորերեն լեզուներով դպրոցներ» հիմնելը¹⁰²:

Մովսես Խորենացու մտտ պահպանվել են նրա գլխավոր սկզբնաղբյուրներից մեկի՝ Մար Աբաս Կատինայի մատյանի մի շարք հատվածներ, որոնք ևս գրվել են նախամաշտոցյան շրջանի Հայաստանում¹⁰³: Մար Աբաս Կատինայի գործունեության մասին Պատմահայրը հաղորդում է. «Նա (Վաղարշակ արքան) գտաւ մի ուշիմ ասորի՝ Մար Աբաս Կատինա անունով, քաղղեանկան և հունական գրութեան մեջ վարժ, և նրան ուղարկեց իր եղբոր՝ Արշակ Մեծի մոտ արժանավայել ընծանելով, (խնդրելով) բանալ նրա առաջ արքունական դիվանը: Նա (Մար Աբասը) աջի անցկացնելով թորո մատյանները՝ գտնուս է մի մատյան՝ հունարեն գրված, որ ուներ, ասում է, այսպիսի վերնագիր. ՄԱՏԵՆԻ ՄԿԷՉԲԸ. «Այս Մատյանն Աղեքսանդրի հրամանով քաղղեներեն լեզվից թարգմանված է հունարենի և պարտունակում է բուն հների ու նախնիների պատմությունները»:

Մար Աբաս Կատինան այս մատյանից հանելով միայն մեր ազգի հավատի պատմությունը հույն և ասորի գրերով բերում է Մծբին՝ Վաղարշակ թագավորին: Եվ բարևկազմ ու քաջ աղեղնավոր աչի Վաղարշակը, հոնտորն ու հանճարեղը, ընդունելով այն՝ համարելով առաջինն իր գանձերի մեջ՝ հրամայում է մեծ գգուշությամբ պահել արքունիքում և մի մատը նրանից արձանի վրա դրոշմել»¹⁰⁴:

¹⁰⁰ Ագարանգեղոս, ՃԻԿ, 863; ՄՀ-Յ, էջ 1717–1718:

¹⁰¹ «Հարց երկի տացրել կարմրին Արտան տղեց՝ իր իշխանութեան նախնեկերից, զայնուներից ուսան հառց մատաղ մանկներից թագմութեան բերել և նրանց վրա հմտտ ուսուցիչներ կարգել: Առաջնապես հռչակել պղծագործ ցեղին և նրանց մանկներիցն պետել հարկալի, հարևար տեղեղում զաս-զաս խորել և սպորտառի թուլակ նշանակել: Երանց երկու մասի թաժանելն, ուսանց տղեցին ասորի դպրոթոթան և ուսանց՝ Աղեղնայան (Ագարանգեղոս, ՃԻԿ, 840; ՄՀ-Բ, էջ 1704):

¹⁰² «Կարգել և ի տեղիս տեղիս դպրոցս յունարեն և ասորերեն յամենայն գաւառս Հարցո», Փափտոս Բուզանդ, դպրոցոսն Գ, գլ. Գ; ՄՀ-Ա, էջ 317:

¹⁰³ Մովսես Խորենացին Ա զգրի Ը զվիցի միելս Բ զգրի Ժ գրեիլ շարարեղինս գլխավոր սկզբնաղբյուր է ունեցել Մար Աբաս Կատինայի մատյանը:

¹⁰⁴ «Եւ գտեալ զուն ասորի Մար Աբաս Կատինայ, այց ուշիմ և վարժ քաղղեացի և յոյն գրով, զոր յոլ ան եղբայն իւր Արշակ Մեծ արժանի ընծայել, բանալ նմա զքեանս սորունք...

և իուզեալ նորս զամենայն մատնանս՝ գտանել մտածան մի եղևնացի գրով, յորո վերայ էր, ասէ, Վաղարշակը պալատի. ՄԿԷՉԲԸ, ՄԱՏԵՆԻՆ. «Այս մատնան հրամանա Աղեղնայանցի ի Վաղարշակոց թարգմտոց վերանայ ի յոյն, որ ունի գրուն հնորն և գնախնեաց բանս»...

Հատուկ ուշադրության է արժանի Մովսես Խորենացու հաղորդումն այն մասին, որ Հայկի պատմությունը Մար Արաս Կատինան քաղել է հունարեն մի մատյանից, որը Ալեքսանդր Մակեդոնացու հրամանով թարգմանված է եղել *քաղդեերենից*: «Քաղդեերենը» հին Բաբելոնի լեզուն էր, որից էլ հեկեկեկովի դարաշրջանում կատարվել են թարգմանություններ հունարենի (այդպիսի թարգմանություններից ամենահայտնին Բերոսոսի «Բաբելոնիկա» եռահատոր աշխատությունն էր¹⁰⁵): Իսկ դա նշանակում է, որ ժամանակին հայկական միջավայրում ստեղծված «Հայկ և Բեր» վիպասը մակեդոնական արշավանքներից շատ ավելի վաղ պետք է գրի առնված լիներ, թարգմանվեր և արձանագրվեր բաբելոնեանով: Հետագայում մակեդոնական արշավանքների ժամանակաշրջանում, քաղդեերենից հունարեն թարգմանվելով՝ վիպասը տեղ է գտել Մար Արաս Կատինային իբրև սկզբնաղբյուր ծառայած մատյանում:

Պատմահայրը տեղեկացնում է Գառնիի ամրոցի և այլ շինությունների կառուցման կապակցությամբ Տրդատ Մեծի թողած «*հեղեկեացի գրով*» արձանագրության մասին¹⁰⁶:

Հիսուս Քրիստոսի հետ նամակագրություն ունեցած Արգար արքան, որին մեր ավանդությունը համարել է Հայոց թագավոր, ըստ Մովսես Խորենացու, կառուցում է Եղեճիս քաղաքն ու այնտեղ «*փոխադրում Մծբինից իր սարգունիքը և բոլոր կոտրքերը՝ Նսզորը, Քիզը, Բաթնիքաղը և Թարսթան, Լույնկուս և մեծասների վարժարանի մատյանները և առհասարակ թագավորների դիվանները*»¹⁰⁷: Հենց այդ դիվանում են պահվել Հիսուսի կենդանագիր պատկերն ու նրա պատասխան նամակն Արգարին, նաև այդ դեպքերի մասին պատմող Աբուրբևա (Լարբուբևա) դպրի մատյանը¹⁰⁸: Այնուհետև պատմվում է, որ Միջագետքում հայոց իշխանության վերացումից և հռոմեացիների տիրապետության հաստատումից հետո վերջիններս Եղեճիայում «*են ժողովում նաև բոլոր դիվանները, և հիմնում երկու դպրոց. մեկը բուն տեղական սատրապան, մյուսը՝ հունական*»:

Ծագով մասնե՛ն Մար Արաս Կատինայ գմբոց սարգն միայն հաննայ զպատմություն հասարակ՝ իբրև ստ Նաղազական սարգն ի Մծբին յոյն և սարգի գրով: Զոր տանայ անմուսկեղծն և թագաւորական սարն Նաղազական, փրոտկարանոյն և հաննարեղի, առաջին իւրոյ գանձան հաննաւով զնէ յարդանման ի գանձարի մեծաւ գրուչալանայ, և գնան ին յարմանի հրանայ զդրմնը» (Մովսես Խորենացի, գիրք Ա, գլ. Ը-ճ; ՄՀ-Ք, էջ 1772-1774):

¹⁰⁵ Բերոսոսի և նրա գործի մասին հանգամանորեն տե՛ս Schabel, 1923 աշխատությունը:

¹⁰⁶ «Չայտա ժամանակաւ կատարէ Տրդատ զշինում ամրոցին Գառնոյ, զոր ըրմաքար և կռիւմոյ զմանց, երկարագան և կազարով մանուցան յորմ քինուլ և տուն իովանոց, մասարձանաք, սքանկի դրաւուսածոք, քարնք քանդակաւ, ի համար ըն իւրոյ հարսովիջտոյ և գրեալ ի նա գիշառակ իւր հեղեկեացի գրով» (Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. Դ: ՄՀ-Ք, էջ 1993): 1945 թ. Գառնիից գտնվեց Տրդատ սարգնի հունարեն արձանագրությունը, որի հեղինակն հարցը (Տրդատ Ա, Բ, քն՝ Գ) դարձել է ռաուճաճարտաբանների բուն քանակման առարկա (տե՛ս Մեծ Հայքի հունարեն արձանագրությունների բաժնում):

¹⁰⁷ Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. ԻԷ: ՄՀ-Ք, էջ 1892:

¹⁰⁸ Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. Լ - ԼԳ: ՄՀ-Ք, էջ 1896-1907: Աբուրբևա (Լարբուբևա) դպրի անունը Խորենացու մատյանում (ընդհանուր գրիչների մեքոմ) ունի Աբուրբևա ննչ, որը վերնագր է:

թյան տակ գտնվող Արևելյան Հայաստանում պարսկերենը կիրառվում էր որպես պաշտոնական գրագրության լեզու:

Ղազար Փարպեցին տեղեկացնում է, որ Հայաստանում Մաշտոցի գյուտին նախորդած տարիներին արքունի գրագրությունն իրականացվում էր հունարեն և ասորերեն, իսկ եկեղեցական արարողություններն ու Աստվածաշնչի ընթերցումները՝ ասորերեն լեզուներով. «Մանուկ հասակում սովորելով հունարեն դպրությունը, Մաշտոցը Հայոց արքա Խոսրոսի արքունիքում գինեղանակի ծառայության էր և կարգված արքունի մատենագիր դպիրների խմբի մեջ, քանի որ արքունի դպիրներն այն ժամանակ Հայոց թագավորների վեհոների ու հրովարտականների գործը կատարում էին ասորերեն ու հունարեն գրերով: Եկեղեցական արարողությունները և Սուրբ Գրքի ընթերցումները Հայաստանի փանքերում ու եկեղեցիներում կատարվում էին ասորերեն, որից ոչինչ չէին հասկանում կամ օգտվում սցազիսի մեծ երկրի բնակիչները. և ասորերեն լեզուն շիականազուց եկեղեցական պաշտոնյաների աշխատանքն ու ժողովրդի ցանքերն սպարդյուն էին դառնում: Եվ երանելի սրբ Մաշտոցն այդ մասին երկար ժամանակ խորհում էր ու լալիս իր ներսում. չէ՞ որ կազին հայերեն լեզվի կշանագրեր»¹¹⁴:

Հինգերորդ դարի մատենագիրների համաձայն՝ հունարենի կատարյալ իմացությամբ փայլում էր կաթողիկոս Մահակ Պարթևը, որն էլ գլխավորեց Աստվածաշնչի՝ հունարենից հայերեն թարգմանության գործը: Ղազար Փարպեցու բնորոշմամբ՝ նա հունարենի իմացությամբ, փիլիսոփայական գիտելիքներով և հոեւտորական ունակություններով «քարոզ էր հունաց շատ գիտնականներից»¹¹⁵:

Համադրելով Ազաթանգեղոսի, Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու վերոհիշյալ տեղեկությունները՝ կարելի է եզրակացնել, որ քրիստոնեության պետականացումից հետո արքունի գրագրության մեջ ասորերենի ու հունարենի գործածման Տրդատ Գ-ի սահմանած կարգը խախտվել է Խոսրով արքայի գահընկեցությունից (389 թ.) հետո, փոխարենը հաստատվել է պարսկերենի կիրառությունը:

Չնոք Գալի գրառման շնորհիվ Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» էջերում պահպանվել են մեր նյութին առնչվող ուշագրավ տեղեկություններ, որոնք վերաբերում են Հայաստանում քրիստոնեությունը պետականացնելու դեպքերին: Հայոց վերջին՝ Արձան քրմապետի կողմնակիցների և նոր քրիստոնեացած թագավորի ու իշխանների ճակատամարտից հետո ընդհանուր թաղում կատարվեց և հուշարձան կանգնեցվեց զոհվածների հիշատա-

¹¹⁴ «Ի սիս մանկության իւրոյ ունեալ օրբարտիւն արեմ, գնեւորեալ ի դուն Հայոց արքայն Խոսրոսայ, կարգեալ յերա մատենագիր արքունի դպրացն. քան զի ասորի և յոն զտոյ վնարէն յանժամ գրած թագաւորացն Հայոց՝ արքունի դպիրն, զմտոցն և զերտնարտախոսն... Բանքի պաշտան եկեղեցոյ և խորայաննքն ցոյց ասորի ունեալք փարէն ի փանդոս և յեկեղեցոս Հարստան ժողովորոս, յոյճն ոչ ինչ էն կարող յան և ազան ժողովորոցն արաքիսի մեծ աշխարհի, և յնչնը պաշտանէկն աշխատարին և ժողովորոցն անաւուրոյն յանկուրոննէ յերախն ասորոյ: Ըարս ի թաղում ժամանակս գնեւաւ աննալ կրանքի սոմ Մաշտոցն, և փորկացեալ յանն իւր, մանաւան յէ գոն կշանագրք արքերն յերուրս...» (Ղազար Փարպեցի, դրժնագ Ա, օջ Ժ; ՄՀ-Բ, էջ 2211-2212):

¹¹⁵ Ղազար Փարպեցի, դրժնագ Ա, օջ Ժ; ՄՀ-Բ, էջ 2214:

կին, որին «ատրի և հեղինացի գրով և յոյն և խմայեղացի նշանով» գրեցին հետևյալը. «Տեղի ունեցավ ատաշին պատերազմը. այստեղ է հանգում հույժ քաջամարտիկ Արման քրմապետը, նրա հետ նաև հազար նրնասուույթ հոգի, որոնք կրվեցին հանուն Գիսանն կոտորելի և հանուն Քրիստոսի»¹¹⁶:

Եթե ատրական և հունական գրերի կիրառությունը քրիստոնյա Հայաստանում հանրահայտ իրողություն է, ապա այս տեղեկության մեջ անակնկալ է «խմայեղացի», այսինքն՝ արարական նշանների գործածության վկայությունը, որը, հավանաբար, հետագա դարերի հավելում է¹¹⁷, քանի որ արարներն իրենց զրավոր մշակույթով, ինչպես հայտնի է, մեր տարածաշրջան են մուտք գործել հարյուրամյակներ հետո միայն¹¹⁸:

Կարևոր պատմական այս երկից տեղեկանում ենք, որ չորրորդ դարի սկզբին գործուն նամակագրություն կար հայ և ատրի քրիստոնեական եկեղեցիների միջև: Ըստ Չենոբ Գակի՝ ատրի հոգևորականները նամակով դիմում են Գրիգոր Լուսավորչին՝ ցանկանալով տեղեկանալ Հայաստանում քրիստոնեության հաստատման մանրամասների մասին: Պատասխան տեղեկացնող նամակ գրելը Գրիգոր Լուսավորչիը հանձնարարում է հենց Չենոբ Գակին, որն ազգությամբ ատրի էր¹¹⁹:

«Տարոնի պատմության» մյուս հաղորդումը վերաբերում է Գրիգոր Լուսավորչի կողմից Սբ. Կարապետի նշխարները տեղափոխելուց հետո նրա իսկ անունով կրչված վանքում կանանց մուտքի արգելմանը, որի մասին նա գրել է պղծնե տախտակի վրա և դրել եկեղեցու բեմի վրա¹²⁰: Նույն տեղում նշվում է, որ դրան անկունից մեկ թզաչափ հեռու և կես թիզ զետեից բարձր կան «զբևեռու նշանաց», ինչը կարող է տարակերպ մեկնարանվել¹²¹...

Սերետսի կամ Սերետսին կից Անանունի երկում¹²² հեղինակը վաղ շրջանի պատմության իր հունարեն սկզբնաղբյուրների մասին հաղորդում է հետևյալը. «Անդ հայելով ի մատնանն Մարտարս պիլիստոսի Մծորևացոյ, գոր եզիտ որոշմնայ ի վերայ արձանի ի Մծրին քաղաքի, յայգարանն Սանատրուկ արքայի, հանդէպ դրան արքունական տանարին, ծածկեալ յաւերածն արքունական կայենիցն:

¹¹⁶ Յովնան Մամիկոնեան, 1941, էջ 94–95; Հովնան Մամիկոնեան, 1989, էջ 42–43; ՄՀ–Ե, էջ 1017:

¹¹⁷ Եթե, ինչպես, «խմայեղացի» տերմինը քննազուս գործածված է այլ մեկ դեպքում անհայտ նշանակությամբ: ¹¹⁸ Այս նպատակով մեր մի աշխատանքում ներառել ենք, որ կարող է տեղի ունեցած լինել զբոսարանի վերաբերյալ սկզբնական քննարկում կարող էր լինել «խարայեղացի», որն արտազուրկ դարձրել սխալի հետևանքով դասարան «խմայեղացի»: Նման վերաբերյալ հավանական է, ճանաչված, եթե նկատի ունենանք, որ երկրաչափը զբոսարան «Ե» և «Բ» տարրի գոտիները տարբերվում է ստորին ձախ ժամկետով (Մոսկիտյան, 2006 (Ե), էջ 236–237):

¹¹⁹ Յովնան Մամիկոնեան, 1941, էջ 62–64; Հովնան Մամիկոնեան, 1989, էջ 44; ՄՀ–Ե, էջ 996–999:

¹²⁰ Յովնան Մամիկոնեան, 1941, էջ 102–103; Հովնան Մամիկոնեան, 1989, էջ 44; ՄՀ–Ե, էջ 1021–1022:

¹²¹ «Տարոնի պատմությունը» ժամանակակից հայերենի վերածող Վ. Կարապետյանը «զբևեռու նշանաց» արտահայտությունն անձանկանախորհի մեկնաբանում է որպես «նշանադրոշ» (տե՛ս Հովնան Մամիկոնեան, 1989, էջ 44): Վեմագրավուն Գ. Գրիգորյանն այն համարում է Գրիգոր Լուսավորչի ժամանակ «դեռևս կիսավճիռ քրեականի նշանների», արժեքը՝ սեպագրի մասին նկատարություն (Գրիգորյան, 2000, էջ 15):

¹²² Առաջնախորհրդների մի մասը «Պատմություն» Ա–Չ գլուխների հեղինակ են համարում VII դարում ստեղծված Անանունի պատմիչին, իսկ մյուսների կարծիքով դրանք պատկանում են հենց Սերետսի գրչին: Վերաշուրջում է վերջին կարծիքը (տե՛ս Սերետս, 2004, էջ Ա–Գ, հղումներով հանդիպել):

Քանզի գախն տանագին այնորիկ խնդրեալ ի դուռն արքային Պարսից, և քանզնազ գաւերածն փանս սնանցն՝ առտ դիպան սրճամանագրին, դրոշմեալ ի վերայ վիմի գանն և՛ գաւուրս հին թագաւորացն Հայոց և՛ Պարթեւաց յունարէն դպրութեամբ. զոր իմ գտնեալ ի Միջագետս ի Լորին աշակերտացն կամեցազ ձեզ գրուցակարգել. մանզի այս ունէր վերնագիրն այսպէս.— «Ես Ազգութեանցնդու գրիչ գրեցի ի վերայ սրճամանիս այսորիկ խոմ ձեռամբս գանս առաջին թագաւորացն Հայոց, կրամանաւ քաշին Տրչասոյ՝ ստեալ ի դիանէ՛ արքունի»։ Զոր փորք մի և՛ սպա յիւրուս տեղտչն տնոցն գաբաննն»¹²³։

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԵՐ ԼՍԽՈՍՍԱՇՏՈՅՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԵՐԻ ԿԻՐԱՌԱՆ ԱՍՍԻԿ, ՈՐՈՆՑՈՒՄ ԶԻ ՈՐՈՇԱԿԻԱՑԿՈՒՄ, ԹԵ ԻՆՉ ԼԵԶԿՈՎ ԷՆ ԴՐԱՆՔ ԳՐՎԱՏ

Լախամաշտոցյան Հայաստանում գործածված գրերի մասին վկայություններում քիչ չեն նաև այնպիսիք, որոնցում չի որոշակիացվում, թե ինչ լեզուներով են դրանք եղել գրված։ Դրանցից հնագույնները միջագետքյան և խեթական սեպագիր արձանագրությունների հաղորդումներն են Արատտայում, Մուրուրում և Հայասայում կիրառված գրերի մասին։ Շուամբական քնագրերի համաձայն՝ Հայկական լեռնաշխարհում այսօր հայտնի առաջին՝ Արատտա պետություն (Ք.ա. XXVIII–XXVII դդ.) ունեցել է սեփական գիր, որն ի տարբերություն շումերականի՝ չի եղել սեպագիր¹²⁴։ Դրանից կարելի է ենթադրել այդ գրահամակարգի պատկերագիր լինելը, սակայն՝ ինչ լեզվով, չի հաղորդվում։

Ք.ա. XXVI–XXIV դդ. սեպագիր աղբյուրներում հիշատակվում էին Հայկական լեռնաշխարհի Մուրուր երկրից (որը գտնվում էր «Վերին ծովի»՝ Վանա լճի ափերին) Միջագետք գնացած դպիրները և դպրապետերը¹²⁵։

Խեթական արձանագրությունները հիշատակում են Հայասա (Ազգի, Ք.ա. XV–XIII դդ.) երկրի հետ ունեցած գրավոր բանակցությունների մասին. դրանցում սակայն, չի նշվում, թե որ լեզվով էին ընթանում բանակցությունները՝ խեթերեն, հայերեն թե ժամանակի միջազգային լեզուներից մեկով¹²⁶։

¹²³ «Վերնոց Լայնոմ փիխտիսն Մարցարս Մուրուրուցոյ մասցանը, որը (ևս) գտնով սրճամանի վրա գրուցված Միջին քաղաքում Սանաթուրի արքայի ապարանքում, արքունական տանագի դուռն հանդերձ՝ ծածկված արքունական հատագրչի արճարճերի մը։

Քանզի այդ տանգի դրանից պարսից արքան պատանկից (տանն) արքունիք, և պատանկի պատանաւոյ արճարճերը քաշելով՝ պատեց հանցեղեկին արճամանագրութեանը՝ գրուցված վիմի վրա՝ հայոց և պարսկաց ին թագաւորներն տարներն ու Եզդեթ՝ հաւարնն դպրոցայնար գրուցված, որը ևս, Միջագետքում կրա աշակերտանի մոտ գտնելով, կամեաւ իմ ձեզ պատմել, քանզի սա ունէր պարսիկ վերնագիր՝ «Ես Ազգութեանցնդու գրիչս, քաշն Տրչասի կրամանոմ արքունի գիվանից ստեալով՝ այս սրճամանի վրա իմ Լայնոմ գրեցի Հայոց առաջին թագաւորներն տարները»։ Մյուս պատաննը մի փոքր Լեռն կրամանն իր տեղումս Արգաթայան, 1965, էջ 31–33; Սեյժուս, 1979, էջ 47; Սեյժուս, 2004, էջ 4–5; ՄԱ՝Դ, էջ 453։

¹²⁴ Kramer, 1952, էջ 35; Kanana, 1964, էջ 216; ETCSL, 1.8.2.3, տող 454–455; Vanistiphout, 2003, էջ 83; հմմտ. Մովսիսյան, 1992, էջ 60–62; Մովսիսյան, 2005 (ա), էջ 102–103։

¹²⁵ Gelb, 1944, էջ 31–32; հմմտ. Մովսիսյան, 2005 (ա), էջ 103։

¹²⁶ Խեթագետ Նշան Մարտիրոսյանը, վկայակոչելով այդ հաղորդումները, կարծիք է հայտնում, որ Հայասայում կիրառել են հայալեզու սեպագիր (Մարտիրոսյան, 1959, էջ 131–134)։

Չափազանց ուշագրավ է հույն պատմիչ և զորավար Քսենոփոնի տեղեկությունն այն մասին, որ Տիգրան Երվանդյանն *աշակերտում էր ինչ-որ իմաստասերի, որը հիացնում էր Տիգրանին*¹²⁷... Հեղինակը, սակայն, չի որոշակիացնում, թե ո՞վ էր այդ իմաստասերը, ի՞նչ ազգի ներկայացուցիչ և ո՞ր լեզվով էր ընթանում դասընթացը:

Մովսես Խորենացին հաղորդում է Տիգրան Երվանդյանի և Մարաստանի արքա Աժդահակի (Ասոխագեսի) նամակագրության մասին՝ առանց որոշակիացնելու նամակագրության լեզուն. *«Եւ ձեռնարկէ սցեռհետեւ ի գործն ի ձեռն պատգամաւորութեան, գազ ևոցա ի տեսութիւն միաբանութեան ի տեղի միշոց սահմանաց երկրոցնց թագաւորութեանցն. իբր բան ինչ եւ գործ հարկաւոր հասնաւ, որ ի ձեռն գրոյ եւ երեշտակութեան կատարել ոչ է կարողութիւն, եթէ ոչ եւ ղեմք երկրոցնց հանդէպ լինիցին: Այլ գիտեցով Տիգրանաց գառաբերոյ իրին կատարումն ոչ ինչ յորոց խորհէրն Աժդահակ՝ ծածկէ, այլ ի ձեռն գրոյ յայտնէ որ ինչ ի նորայն խորութիւն պոտի»*¹²⁸:

Դատմահայրը հայոց Արտաշես արքայի որդի Վրույրին ներկայացնում է իբրև *«այր իմաստուն և բանաստեղծ»*¹²⁹: Դժբախտաբար, նա չի տեղեկացնում Վրույրի ստեղծագործությունների մասին. մեզ հայտնի չէ նաև, թե ինչ լեզվով են գրվել դրանք:

Հետաքրքրական է Մովսես Խորենացու տեղեկությունը Վաղարշակ արքայի արքունիքում *«գրով հիշեցնելու»* պաշտոնն ունեցող երկու դպիրների մասին, ըստ որի նրանցից մեկն արքային պետք է հիշեցնէր բարի իրադարձությունները, իսկ մյուսը՝ վրեժխնդրության ենթակա. *«... Եւ յիշեցուցանողս երկուս ի ձեռն գրոյ. այլ ոմն գրարի յիշողութիւնս ստեղծով, եւ այլ ոմն գլխովխնդրութեանցն»*¹³⁰:

Մովսես Խորենացին Տիգրան Երվանդյանի մասին տեղեկությունները քաղում է չորս մասից («ժանգերզություններից») բաղկացած մի արքյուրից, որը պատմագիտության մեջ ստացել է «Հիսուսն պիտոյից» կամ «Տիգրանի ներքոյան» անվանումը: Ծավոք, պատմահայրն այս դեպքում էլ չի նշում, թե ինչ լեզվով էր գրված այն: Չի նշվում նաև հեղինակի անունը, թեպետ նրան ներկայացնում է իբրև «իմաստուն, իմաստունների մեջ իմաստնագույն և բազմաբոլորն հեղինակ»¹³¹:

¹²⁷ Քսենոփոն, Կյուրոպակեյա, գլխք Բ, գլ. I, 14 (Քսենոփոն, 2000, էջ 98; հմմտ. Մանանդյան, 1977, էջ 391; ՀԺԳՔ, 2007, էջ 216):

¹²⁸ «(Մովսեսին) սցեռհետեւ գրով է ձեռնարկում պատգամաւորների ձեռքով (ստեղծարկելով Տիգրանին), որ բարեխմանքս տեսակցության համար գա երբեք թագաւորաւորութեանն ի սահմանադրեմ մի տեղում, իբրն յոն մի կարեւոր գործ առ խառնելք նա, որ չի կարելի գրի և պատմութեամբուցան միշտով, յայց միայն անմասք զնո առ մի հանդիպելով: Սակայն Տիգրանը պատմութեամբուցան դիտակցութեամբ իմանալով Մովսեսին զնո խորութեանց ոչ մի բան ծածկել չի յայտնում, այլ գրով կարծեմ է, ինչ որ կրա պոտի խորքում կայ» (Մովսես Խորենացի, գլխք Ա, գլ. ԻԳ; ՄՀ-Ք, էջ 1825):

¹²⁹ Մովսես Խորենացի, գլխք Բ, գլ. ԾԳ; ՄՀ-Ք, էջ 1932:

¹³⁰ Մովսես Խորենացի, գլխք Բ, գլ. Ը; ՄՀ-Ք, էջ 1863:

¹³¹ Մովսես Խորենացի, գլխք Ա, գլ. ԺԹ, ԽԱ; ՄՀ-Ք, էջ 1803, 1809: Առաջին անգամ «Հիսուսն պիտոյից»-ը իբրև սասանին վերջնապետը է գիտատեսի Մանուկ Աբեղյանը «Հայ մտղիվայական աստագիտելոց

Բյուզանդական պատմագիր Ամմիանոս Մարկելլիոսը Պապ (քնագրում՝ Պարա) թագավորի մասին ունի ուշագրավ հաղորդում, ըստ որի «Լադես կայսերը տեղեկացնում էին, թե նա «Կիրկնի»¹³² սոգական բոլոր գաղտնիքները գիտեր այլակերպումներ գործելու համար»¹³³:

Ամենայն հավանականությամբ, Պապ թագավորի հետ է կապված IV դարի երկրորդ կեսին վերաբերող ուշագրավ մի փաստ: Այդ ժամանակ ապրած Օլիմպիոդորոս Ալքիմիկոսը հայոց արքա Պետասիոսին է ուղղել իր նշանավոր գրվածքներից մեկը ալքիմիայի («սուրբ և աստվածային արվեստի») մասին: Եղիշե Դուրյանի ուշագրավ դիտարկման համաձայն՝ հայոց արքա Պետասիոսը (Պեր(պ)ասիոս?) պետք է լիներ հենց Պապ թագավորը¹³⁴: Հասկանալիորեն, հայոց արքան պետք է լիներ այդ գիտությամբ հետաքրքրված (գուցեն այն հավանավորող) անձնավորություն:

Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» էջերում տեղեկացվում է, որ քրիստոնեության պետական կրոն հռչակման շրջանում հայ իշխանները ռազմական գործողությունների ժամանակ իրավիճակի մասին իրար տեղեկացնում էին գրավոր, չի նշվում, սակայն, թե ինչ գրով ու լեզվով¹³⁵:

Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ Մամիկոնյան իշխանները Տարոնի իրենց տիրույթների, բնակավայրերի ու դրանց բնակչության մասին տեղեկությունները գրանցում էին հատուկ մատյանում¹³⁶: Նման մատյաններ կարող էին ունենալ նաև երկրի մյուս իշխանական տները:

* * *

Սրանք են նախամաշտոցյան Հայաստանում եղած դպրությունների մասին մեզ հայտնի օտարագրի և հայ պատմիչների վկայությունները: Դրանցում հստակ ընդգծվում է հայալեզու և հայագիր դպրության գոյությունը, ինչի խտուսն վկայություններն են հայոց դիցարաններում դպրության աստվածների (Տորք Անգեղան Հակյան դիցարանում և Տիրը 301-ի նախօրյակին) առկա-

Մ. Խորենացու «Հայոց պատմության մեջ» աշխատության էջերում (տե՛ս Արեւյան, 1985, էջ 208–232, առաջին անգամ ույս է տեսել Էջմիածնի «Աշտարակ» ամսագիր 1899–1900 թթ. համարներում), ինչը առաջել է ընդհանուր ճանաչում: Կան առարկաբանություններ այդ աղբյուրի թվագրման փոփոխության: Օրինակ, եթե Մ. Արեւյանը այն համարում է գրված մաշտոցյան հայերենով, ամենափոքր՝ V դարում, Գ. Ասրաթյանը հավանական է համարում, որ այդ գրքը նախաքրիստոնեական շրջանում գրված լինի հայերեն կամ այլ լեզվով, իսկ V դարում թարգմանվի կամ վերածվի մաշտոցյան հայերենի (Ասրաթյան, 1969 (ա), էջ 120–123): Նշենք նաև, որ սրալեզու աղբյուրի չգոյության մասին ոչ համոզիչ մի տեսակետ է հայտնել Լ. Միրիչյանցանը, ըստ որի «Հյուսիսն պետք է»-ը պետք է հասկանալ իբրև պետական պատմությունների կոլեկցիոն, այդ թե՛ գրքի անուն, իսկ «Չորս հանգրվանություններ»-ը թե՛ ասանձին գիրք է, այլ «Լեռնադատի գրքի չորս գրքերը, որոնցում ինչպես է Կյուրոսը (Միրիչյանյան, 1977, էջ 181–199):

¹³² Հունարեն դիցարանության մեջ կախարհողի, «Նիոմի և Պերսիի դուստրը»:

¹³³ Ամմիանոս Մարկելլիանոս, «Գործունեություններ», զրոյր XXX, 1, 17; հմմտ. Դուրյան, 1934, էջ 280: Հիշենք, որ Պապ թագավորի «կախարհական» ունակությունների մասին բարերի արձագանքը արտահայտվել է նաև հայ մատենագրության մեջ:

¹³⁴ Դուրյան, 1934, էջ 280:

¹³⁵ Շամիան Մամիկոնյան, 1941, էջ 83–84; Հովհան Մամիկոնյան, 1989, էջ 37–38; ՄՀ–Ե, էջ 1011:

¹³⁶ Շամիան Մամիկոնյան, 1941, էջ 110–111; Հովհան Մամիկոնյան, 1989, էջ 48; ՄՀ–Ե, էջ 1026–1027:

յությունը, ինչպես նաև ցայսօր հայտնաբերված մեծաթիվ գրակիր հուշարձանները: Միանշանակորեն ընդգծվում է նաև հայերի կողմից ստեղծված օտարալեզու և օտարագիր մշակույթի գոյությունը, ինչը փաստվում է նաև հնագիտական բազմաթիվ հիմնավորումներով: Դատելով որոշ հաղորդումներից՝ կարելի է եզրակացնել, որ 301–405 թթ. ընթացքում հայերն օտար գրերով գրել ու կարդացել են հայերեն, այսինքն՝ առկա է եղել հայալեզու օտարագիր գրականություն: Իսկ եթովպական ավանդազրույցից դատելով՝ կարելի է ենթադրել, որ քրիստոնեական դարաշրջանում սեփական այբուբեն ստեղծելու առաջին փորձը Հայաստանում կատարվել է հենց Տրդատ Գ–ի ժամանակ:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՍԻԱՄԱՇՏՈՑՑԱՆ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նախամաշտոցյան դպրության հարցի քննարկումը նոր ժամանակներում սկսվում է հենց հայ նոր պատմագրության հայր Միքայել Չամչյանցից: Քննելով միջնադարյան մատենագրության հաղորդումները՝ Մ. Չամչյանը եզրակացնում է, որ Մաշտոցի այբուբենից առաջ գոյություն ունեցած «Դանիելյան» նշանագրերը եղել են հայերենին հարմարեցված հունարեն տառեր՝ որոշակի մշակմամբ, իսկ Մաշտոցը ստեղծել է միանգամայն նոր այբուբեն: Միաժամանակ Մ. Չամչյանը հնարավոր է համարում, որ Մաշտոցից առաջ հայերն ունեցել են գաղափարագրեր, որոնցով փոխանցվել են ոչ թե հնչյուններ, այլ ամբողջական բառեր, ինչպիսիք գործածվում էին նաև իր ժամանակ¹²⁷: Այսինքն՝ Մ. Չամչյանցն ընդունում է միևյուրյուրից հայտնաբերության գործածության հնարավորությունը՝ մերժելով նախամաշտոցյան այբուբենի գոյությունը:

Հայագիտության մեկ այլ մեծ երախտավոր՝ Մկրտիչ Ավգեյանը, ընդունում է միևնաշտոցյան հայկական գրի գոյությունը, որը պահպանվել էր Դանիել Ասորու մոտ: Նա գտնում է, որ այդ գրահամակարգը կամ ինքնուրույնաբար ստեղծվել էր մեր նախնիների կողմից Մաշտոցից առաջ, կամ խառը կերպով քաղվելով հունական և ասորական այբուբեններից՝ հարմարեցվել էր հայերենին. «... կամ էին աբխաբերացի խառն 'ի յունե՛ և յասորոյ'՝ անբաւականք մերումս լեզուի, և կամ առ նախնեօք հայոց երբեմն հնարեայք իրիք նշանագիծս, և խափանեայք որպէս մթինս և անյաշողակս»¹²⁸: Ֆրանսիական հայագիտության հիմնադիր Անտուան Ժան Մեն–Մարտենը գտնում էր, որ մաշտոցյան այբուբենը ստեղծվել է նախամաշտոցյան Հայաստանում կիրառված գրանշանների հիմքի վրա (առանց որոշակիացնելու, թե դրանք ինչ գրանշաններ են), որոնց հավելելով նոր տառեր՝ Մաշտոցն ստեղծել է իր նոր այբուբենը: Բազմաատոր «Biographic Universelle» հանրագիտարանի «Մեսրոբ Մաշդոց» հոդվածում նա

¹²⁷ Չամչյանց, 1784, հ. Ա, էջ 755–761:

¹²⁸ Ավգեյան, 1813, էջ 289–290:

գրում է՝ «Այս այբուբենը, որ բարեկամ է 36 տառերից, կազմվել է երկրի բազմաթիվ հին գրականներից և հաստիկ տղի հորինված տառերից»¹³⁹։ Մեկ այլ աշխատանքում հեղինակը կարծիք է հայտնում, որ «Դանիելյան» գրերը նման են եղել հունական տառածաներին, իսկ Մաշտոցն իր այբուբենը ստեղծելիս օգտվել է նաև պարսից և ասորական գրերից¹⁴⁰։

Վենետիկի Մխիթարյաններից մեկ այլ ակադեմիկոս ներկայացուցիչ՝ Դուկաս Ինճիճյանը, յուրօրինակ կերպով է բացատրում հայոց դպրության անցած ճանապարհը։ Ելնելով հին ու միջին դարերի պատմիչների հաղորդումներից՝ նա գտնում է, որ դպրությունը Հայաստանում սկզբնավորվել է դեռևս մինչքրիստոսյան ժամանակներում։ Արտաշեսի օրոք տեղի է ունենում «հայոց դպրության ստացին նորոգությունը», իսկ Վասնշապուհի օրոք՝ «երկրորդ նորոգությունը»¹⁴¹։ Ղ Ինճիճյանը գտնում է, որ Դանիել եպիսկոպոսի մոտ պահպանված գիրը հայոց նախաքրիստոսյանական բաղաձայնային այբուբենն էր («գրքս ոչ կթժ Դանիելի էր յօրինեսոյ, այլ առ նմին Դանիելի պահեսոյք հին հայկական կշանսագիրք»), իսկ Մեսրոպ Մաշտոցը լրացրեց դրանք ձայնավորներով¹⁴²։ Միաժամանակ նա ընդունում է օտարագիր հայալեզու դպրության գոյությունը՝ նշելով իր ժամանակ հայտնի ասորաոտա հայերեն ձեռագիր մատյանների մասին¹⁴³։

Հայոց լեզվի համեմատական ուսումնասիրության հիմնադիրներից Հայերիս Պետերմանը գտնում է, որ հայերն ունեին սեփական գիր Մեսրոպ Մաշտոցից առաջ, իսկ Մաշտոցը ոչ թե ամբողջ այբուբենն է ստեղծել, այլ հին, վաղուց մոռացված գրերն է վերականգնել, կատարելագործել և տարածել, իսկ տառերի դասավորմանն ու անվանակոչման հարցում հետևել է հունականի օրինակին¹⁴⁴։

Կարլ Կոխը նույնպես հավանական է համարում, որ հայերը հնում ունեցել են սեփական այբուբեն, որը կատարելագործել և քնդարձակել է Մեսրոպ Մաշտոցը։ Նա նշում է նաև, որ մինչ այդ հայերը գործածում էին հունարենն ու ասորերենը, որոնք անբավարար էին հայերենի հնչյունների համար¹⁴⁵։

Հայոց դպրության պատմությանը նվիրված աշխատանքում Մտեփանոս Նազարյանն անդրադառնում է նաև նախամաշտոցյան գրականության խնդրին, գտնելով, որ այն եղել է մասամբ հայալեզու, մասամբ օտարալեզու։ Ինչ վերաբերում է գրին, ապա, նրա կարծիքով, Մեսրոպ Մաշտոցի գյուտից առաջ հայերը գործածել են հունական, ասորական և պարսկական գրերը։ Այլ կերպ ասած, Մտ. Նազարյանը կողմ է արտահայտվում նախամաշտոցյան հա-

¹³⁹ Saint-Martin, 1821, էջ 427-428։

¹⁴⁰ Տե՛ս Մաշտոցի նկատմամբ, 1892, էջ 294։

¹⁴¹ Ինճիճյան, 1835, հտ. 9, էջ 33-41, 68-70։

¹⁴² «Արդ ՚ի բազում յարտի վկայութեանց նախնեաց յարդ է թէ ՚ի սկզբան անդ ՚ի հնումն գրք առ մեզ գիր հայկական, բայց ստանց ձայնաորին» (Ինճիճյան, 1835, հտ. 9, էջ 73-77)։

¹⁴³ «Մինչև ցայժմ յանց ուրիշ ուրիշ գրասիլե հայկական մատենից զոչալ ասորի տառից յորոց զմե՛ն ինքնին տեսալ վրայեաց մեզ Միտն ստանանքին, որ մի էր ՚ի վարժապետացն ՚ի Պետապիոս» (Ինճիճյան, 1835, էջ 71)։

¹⁴⁴ Petermann, 1837, էջ 3; 1877, էջ 663-681։

¹⁴⁵ Koch, 1846, էջ 404-406։

թե Ղանիել նախկուպոսի մոտ պահպանվածը հին հայկական գրերն էին, որոնք ստեղծվել են ասորական այբուբենի հիմքով¹⁵¹:

Ֆրիդրիխ Մյուլլերը, քննելով մատենագրական հաղորդումները, եզրակացնում է, որ հայոց այբուբենի հիմքում ընկած են ոչ թե հունական, այլ սեմական, մասնավորապես, արամեական գրերը: Նա հավկած է «Ղանիելյան» գրերը համարելու 22 նիշանոց, որոնց Մաշտոցն ավելացրել է 14 (7 ձայնավոր և 7 քաղաձայն): «Նուագայում նա վերանայել է իր տեսակետը՝ ևս երկու քաղաձայնի ստեղծումը վերագրելով Մաշտոցին¹⁵²: Ստեփանոս Պալասանյանը գտնում է, որ նախամաշտոցյան շրջանում չկային հայերեն տառեր, որի պատճառով էլ այդ շրջանում Հայաստանում ասկա էր հունագիր և ասորագիր դպրություն: Նա այդ շրջանում ներառում է երկու տեսակի՝ քաղաքական-արքունական և կրոնական-մեհենական դիվանների գոյությունը¹⁵³:

Գարեգին Չարքիանայանը գտնում է, որ «սակարեղի է սևգիր քաղաքականության մը ներթափել՝ մեր պատմությանը այն ընդարձակ միջոցին մէջ որ յատաջ քան զգիտ գրոյն, հասանականարար մերոնք ազ իրենց յատուկ գրերը ունենալէն յատաջ դրացի ազգաց տասերը գործածելու սովորությունն ունեցած պէտք է ըլլալ»: Նրա կարծիքով, մեր նախնիները նախ կիրառել են «հայկական բնետակերպ գրություն մը՝ երկրին բնակացը ոչ անմասօթ», որից հետո գործածել են զենդական գիրը՝ քաղաքական գրագրության նպատակով, իսկ քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո՝ նաև հունարենն ու ասորերենը¹⁵⁴: Անդրադառնալով Ազարանգեղոսի հիշատակած նշանագրերին, որոնք գործածում էին հեթանոս Տրդատ արքայի քրմերը, Գ. Չարքիանայանը հավանական է համարում Մ. Էմինի կարծիքը՝ դրանց հիերոգլիֆներ լինելու հարցում, կամ էլ սովյի հավանական է գտնում Վ. Լանգլուայի կարծիքը, որ դրանք կարող էին լինել սղագրության նշաններ, ինչպիսիք էին հռոմեական «տիրոնյան»¹⁵⁵ կոչվող նշանները¹⁵⁶: «Նեղիմակը հանգամանորեն քննարկում է մատենագրական տեղեկությունները, վկայակոչում նոր ժամանակների ուսումնասիրողների կարծիքները, անդրադառնում նախամաշտոցյան դարաշրջանում ստեղծված գրական հուշարձաններին և դրանց հեղինակներին, իսկ Ղանիել Ասորու մոտ պահպանված նշանագրերը համարում է «ինի հայկական նշանագրեր»՝ ձեռնպահ մնալով պատասխանելու այն հարցին, թե ի՞նչ չափով է օգտագործել

¹⁵¹ Langlois, 1867, էջ XV, 15:

¹⁵² Müller, 1865, էջ 431–438: Նշված վերջին կարծիքը նա հայտնել է Ն. Տարյալարթոնի գրված ետնություն (Տարյալարթ, 1895, էջ 19; տե՛ս նաև Տարյալարթենաց, 1892, էջ 295–296; Անադան, 1984, էջ 487–488):

¹⁵³ Պալասանյան, 1865, էջ 45–46; Պալասանյան, 1922, էջ 141–145, 231:

¹⁵⁴ Չարքիանայան, 1897, էջ 10–17: Գարեգին Չարքիանայանի աշխատության առաջին հրատարակությունը եղել է 1865 թվականին (Չարքիանայան, 1865): Մեր օգտագործել և հղում ենք ուսումնասիրության երբեք հրատարակությունը, որը քարեֆոնված և ցածրած է (Չարքիանայան, 1897):

¹⁵⁵ Այդպես էին կոչվում հռոմեացի հայտնի քերական Մարկո Տուցիո Տիբուլի անվան, որը Ջ. Ա. Ի դարում նշանից ստացություն այդ համալսարանը:

¹⁵⁶ Չարքիանայան, 1897, էջ 17–18:

կամ օգտագործել է արդյոք Մաշտոցը «Դանիելյան» գրերն իր այբուբենը ստեղծելիս¹⁷⁷:

Ղևոնդ Ալիշանը, վկայակոչելով մատենագրական տեղեկությունները՝ հավանական է համարում նախամաշտոցյան հայալեզու գրի գոյությունը՝ «Այն ստինն հայերէն լեզուի գիր կա՛ր թէ ոչ. – հաւանիմք թէ որ և է կերպով կար գիր մի, բնիկ կամ օտարի, և մանաստեղ լեզանագիր»¹⁷⁸: Նա գտնում է, որ Դանիել եպիսկոպոսի մոտ պահպանվածը հենց «հին հայերէն գրեր» էին¹⁷⁹:

Գաբրիել Այվազյանը գտնում է, որ հայերը նախ գործածել են սեպագիրը (Հայաստանից հայտնաբերված սեպագրի արձանագրություններն այդ ժամանակ դեռևս վերձանված չէին), ապա զենդական, հունական, ասորական այբուբենները և հայկական նշանագրերը, որոնցով, սակայն, իր ժամանակ կուրթական վկայություններ դեռևս չէին հայտնաբերվել: Նա հավանական է համարում, որ Դանիել եպիսկոպոսի մոտ պահպանվածը հայերենին հարմարեցված ասորատառ գրահամակարգ էր: Եվ քանի որ ժամանակի այբուբեններից ոչ մեկը չէր բավարարում հայերենի հեյուսային ողջ հարստությունը հաղորդելու համար, Մաշտոցը ստեղծեց նոր այբուբեն՝ «տեսիցով լոյս առաւ միտքը՝ մեր այբուբենը ձեւացնելու»¹⁸⁰:

Մարի–Ֆելիստե Բրոսսեն Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» ֆրանսերեն թարգմանության ծանոթագրություններում, վկայակոչելով «Դանիելյան» գրերի մասին հայ պատմիչների տեղեկությունները, նգրակացնում է, որ նախամեսրոպյան այդ այբուբենը բաղկացած է եղել 22 տառից, որոնց Մաշտոցն ավելացնելով ևս 14–ը, ստացավ նոր այբուբենը՝ դասավորելով այն ըստ հունական այբուբենի հերթականության¹⁸¹:

1870–ական թվականներին նախամաշտոցյան դպրության կողմնակիցների համար ոգեշնչող էին Անդրեաս Մորդոմանի ուսումնասիրությունները, որոնցում հեղինակը Վանի թագավորության սեպագիր արձանագրություններն ընթերցում էր հայերեն¹⁸²: Սակայն նրա փորձը քննադատվեց և մերժվեց, մանավանդ այն բանից հետո, երբ Ա. Մորդոմանը հայերեն կարդաց նաև Տուշպա–Վանի հիմնադրման արձանագրությունը, որն աստիճան էր:

Հայերիիս Հյուրշմանը, որ ժամանակին հիմնավորապես ցույց տվեց հայերենի՝ հնդեվրոպական լեզվաընտանիքում ինքնուրույն ճյուղ լինելը, գտնում է, որ Մաշտոցը լրացրել և կատարելագործել է Դանիել Ասորու մոտ պահպանված 22 նիշանոց հին հայկական գրահամակարգը: Ընդ որում, նա գտնում է, որ հայոց հին այբուբենը կազմված է եղել ոչ թե ըստ արամեական կամ ասորական, այլ ըստ հունական այբուբենի օրինակի¹⁸³:

¹⁷⁷ Չարհանպիան, 1897, էջ 19–48, 157–265:

¹⁷⁸ Ալիշան, 1901, էջ 35–42:

¹⁷⁹ Ալիշան, 1869, էջ 324:

¹⁸⁰ Այվազյան, 1869, էջ 6–11:

¹⁸¹ Brosset, 1870, էջ 13:

¹⁸² Mordtmann, 1872, էջ 465–696; Mordtmann, 1877, էջ 406–438:

¹⁸³ Hübschmann, 1876, էջ 62–65:

Վիկտոր Գարդիաուզենը հիմնական հարցերում կրկնում է Հ. Հյուբշմանի տեսակետը. նա նույնպես գտնում է, որ Մաշտոցն ավելացրել է 14 գրանշան, իսկ նախապես գոյություն ունեցած 22-ի հիմքը համարում հունական այբուբենի տառերը՝ ներկայացնելով դրանց համեմատական ուսումնասիրությունը¹⁶⁴:

Արսեն Մուրքյանը, վկայակոչում է Փիլոտրատոսի և Վարդան Արևելցու վկայությունները, սակայն իր ժամանակ նախաքրիստոնեական գրերով հայտնի որևէ արձանագրության գտնված չլինելու պատճառով հավանական է համարում նախամաշտոցյան հայ դպրության բացակայությունը¹⁶⁵:

Կառլ Ֆաուլմանը գտնում է, որ Մաշտոցը ո՛չ թե հայկական և վրացական տառերն է հայտնաբերել, այլ նրանց ժամանակի և հմայանքի հնագույն նշաններն է վերականգնել: Իսկ հոգևոր տեսիլքի իմաստն, ըստ Կ. Ֆաուլմանի, այն է, որ Մաշտոցը կատարեց դրանց իբրև ընթերցանության նշաններ կիրառելու գյուտը¹⁶⁶:

Հայոց դպրության պատմությանը նվիրված ընդարձակ հոդվածաշարում Մուրիաս Պարոնյանն առաջ է քաշում մինչ այդ չհնչած մի տեսակետ: Նա նախ գտնում է, որ Դանիել Ասորու մոտ եղել է ոչ թե *Լչանագրերի ցանկ*, այլ մի *հին հայագիր մատյան*, որից հանվել են նշանները, որոնք, սակայն, չեն բավարարել հայերենի հնչյունների լիակատար ներկայացման համար: Նա հատուկ ուշադրություն է դարձնում Մովսես Խորենացու այն հաղորդմանը, որ Մաշտոցը Փյունիկեի վրայով անցել է Սամոս, որին հավելում է Մովսես Կաղանկատվացու տեղեկությունը՝ Մաշտոցի Երուսաղեմ գնալու մասին (գիրք Բ, գլ. ԻԷ): Արդյունքում Ս. Պարոնյանը եզրակացնում է, որ Մաշտոցը լրացրել է իր ձեռքի տակ եղածը հին արևելյան (հատկապես՝ սեմական) այբուբենների օգնությամբ¹⁶⁷:

Հայ մատենագրության պատմությանը նվիրված համառոտ ձեռնարկում (հասցեագրված՝ «ի պետս ազգային վարժարանաց»), Եղիշե Դուրյանը նշում է նախամաշտոցյան Հայաստանում հունական, ասորական և զենդական գրերի գործածության մասին: Նա «մեր ազգային մատենագրութեան գանձն» է համարում «մեհենական պատմութիւններն ու նախաքրիստոնեական գրուածներն, որոնց կորստեան հաւանական պատճառը կը համարին ոմանք տզէտ դարերու մոլոտանդութիւնն»: Սակայն հեղինակը չի անդրադառնում հարցին, թե ինչ գրերով էին ստեղծված նախամաշտոցյան զրվածքները, ինչպես նաև չի

¹⁶⁴ Gardthausen, 1876, էջ 74–80:

¹⁶⁵ Մարքիան, 1877, էջ 97–109:

¹⁶⁶ Faulmann, 1880, էջ 497–500:

¹⁶⁷ Պարոնյան, 1884, էջ 400–402, 491–498; 1885, էջ 51–59, 99–109, 147–156, 202–210, 243–251, 295–301, 339–347, 387–392, 483–492, 551–559 (ամփոփումը՝ էջ 551–559-ում): Դրանցից տարիներ անց Ս. Պարոնյանը Ն. Տադևոսյանի «Շատուն հայ տարի» գրքի գրախոսականում քննադատում է նեղիկալին, որ վերջինս կրկնում է իր տեսության ճշտությունը՝ նախկին ինտրադյուրված ներկայացնելով դրանք (Պարոնյան, 1896, էջ 72–76):

քննարկում, թե ինչ էին իրենցից ներկայացնում Դանիել Եպիսկոպոսի մոտ գտնվող «հայկական նշանագիրները»¹⁶⁶:

Արժարժեղով հայերենի քերականագիտական մի շարք խնդիրներ, Բարսեղ Սարգիսյանը կանգ է առնում նաև նախամաշտոցյան շրջանի և մաշտոցյան այբուրենի ծագումնաբանության հարցերին՝ քննելով ինչպես մատենագրական տեղեկությունները, այնպես էլ ժամանակի ուսումնասիրողների տեսակետները: Նա գտնում է, որ «մեսրոպեան նշանագրոց հաստատութենէն առաջ Հայք վեց դար անընդհատ պարսիկ, յոյն և ասորի դպրութեամբ վարեցան. ուստի ամենաբնական և ամենայարմար էր, որ իրենց դպրութեան կամ գրականութեան գրերն ևս ՚ի նոցանէ հայթհայթէին»¹⁶⁷: Նույն տեղում Բ. Սարգիսյանը ներկայացնում է մաշտոցյան տառածևների ծագման իր տեսությունը՝ դրանք մակարերելով հենց հունական, սլաոնական և ասորական այբուրեններից:

Իսահակ Հարությունյանը «Հայոց գիրը» աշխատության մեջ, իբրև նախագիտելիք, նախ համառոտակի ներկայացնում է «գիր» և «գեղու» հասկացությունները, գրի զարգացման փուլերն՝ ըստ իր ժամանակի գիտության: Նա մերժում է հայոց մեջ պատկերագրության և նշանագրության գործածությունն իբրև «սխառեմատիկական գիր»: Դա հիմնավորելու նպատակով Ի. Հարությունյանը քննության առարկա է դարձնում Մ. Էմինի հրատարակած 84 նշանագրերի ցանկը և ամբողջությամբ հրատարակում Մոսկվայի Լազարյան ճեմարանում տվյալ ձեռագրի նշանագրերի ցանկն ամբողջությամբ (տե՛ս հավելվածում, աղ. 2)¹⁶⁸: Ինչ խոսք, չի կարելի համաձայնել հեղինակի հետ, քանի որ նշվածներից առաջինն ավելի շատ պատկերագրերից է բաղկացած, իսկ երկրորդում գերազանցապես մաշտոցյան տառածևներից կազմված համառոտագրության նշաններ են: Այդ միջնադարյան ցանկերը, ինչպես հետագայում պարզեց Ա. Արրահամյանը, ծագում են դպրության տարբեր կենտրոններից, ինչով էլ քացատրվում է դրանց ծագումը:

Այնուհետև Ի. Հարությունյանն անդրադառնում է նախամաշտոցյան դարաշրջանում հայոց մեջ հնչյունագրության կիրառությանը՝ նզարկացնելով, որ հենց «Դանիելյան» այբուրենն է եղել նախամաշտոցյան հայալեզու գրահամակարգը. «...Դանիելյան կոչումով այբուրենը հայոց հին գործածական գիրն էր, սակայն տեղի տալով յունաց, ասորոց և պարսից գրերին՝ մոռացութեան էր տրուել միևնչև որ նորից գտնուեցաւ և սր. Մեսրոպի և Սահակայ ջանիք կատարելագործուելով կրկին գործածական դարձաւ ամբողջ ազգի համար»¹⁶⁹: Իր այս միտքը հիմնավորելու համար Ի. Հարությունյանը մատնանշում է Լազար Փարպեցու և Վարդան Արևելցու վերոհիշյալ վկայությունները: Դրանց լիակատար հաստատում է համարում Կորյունի խոսքերը՝ «մանասանդ գի ևւ կշա-

¹⁶⁶ Դուրեան, 1885, էջ 2-3, 7-15:

¹⁶⁷ Սարգիսյան, 1889, էջ 27-36: Իր տեսանկյունի հիմնական դրոյթներից տեղ են գտել նաև հեղինակի՝ մեկ տարի անց յուր տեսած մեծագրության էջերում (Սարգիսյան, 1890, էջ 286-297):

¹⁶⁸ Ծարսիսենյանց, 1892, էջ 105-112:

¹⁶⁹ Ծարսիսենյանց, 1892, էջ 240:

նազիրըն իսկ՝ յայոց դպրութեանց թաղեայր եւ յարուցեայր դիպեցան», ընդգծելով, որ «Լորինը ակնարկում է այն հանգամանքն, որ հայոց հին այրուքները մոռացուել էր՝ տեղի տալով այոց դպրութեանց, այսինքն՝ այոց գրերին և ապա կրկին յայտնուեք»¹⁷²: Նա եզրակացնում է, որ հայոց նախամաշտոցյան այրուքները («Դանիեյան» գիրը) «հայերն անմիջապես փինիկացիներից, կամ թե ասորաբարեկացիների միջնորդութեամբ, վերցնելով Փունիկեան քսան և երկու տասերից բաղկացած այրուքները՝ մի քանի փոփոխութիւններով դարձրին իւրեանց ազգային գիրն, որ յետոյ գտնուեցաւ Դանիելի մօտ և կատարեպագործուեցաւ սուրբ Մեսրոպի միջնորդութեամբ»¹⁷³: Ի. Հարությունյանը հանգամանորեն քննարկում է նաև «Դանիեյան» գրի մասին մատենագրական վկայություններն ու նոր ժամանակի ուսումնասիրողների կարծիքները:

Ի. Հարությունյանից առաջ, ինչպես նշել ենք վերը, բազմաթիվ հեղինակներ են կողմ արտահայտվել նախամաշտոցյան հայալեզու դպրութեան գոյության հարցին, սակայն խնդրին անդրադարձել են ի թիվս այլ հարցերի: Ի. Հարությունյանն առաջինն էր, որ խնդրի առթիվ հանդես եկավ հատուկ մենագրությամբ, որը, ինչպես և սպասելի էր, անարժազանք չմնաց: Առաջին արձագանքողներից մեկը եղավ բանաստեղծ Դազարոս Աղայանը, որը կտրականապես մերժում էր նախամաշտոցյան հայալեզու դպրութեան գոյության հնարավորությունը, իսկ «Դանիեյան» գրերի հեղինակ համարում հենց Դանիել եպիսկոպոսին¹⁷⁴: Չմտնելով հարցի մանրամասների մեջ՝ նշենք միայն, որ նման պնդումը հիմնավորող որևէ փաստ սկզբնաղբյուրներում չի պահպանվել:

Ի. Հարությունյանի գրքի հաջորդ, նույնպես բացասական գրախոսողը եղավ Ստեփանոս Մալխասյանցը, որը միանշանակ մերժում է հայալեզու դպրութեան գոյությունը նախամաշտոցյան Հայաստանում: Նա հայկական չի համարում նաև Դանիել եպիսկոպոսի մոտ պահպանված գրերը. «...Մեր այժմեան ունեցած փաստերի հիման վերայ Դանիելեան նշանագիրները հայերեն գրեր չէին, և հայերը մինչև Ս. Մեսրոպի գիրը՝ չունեին սեփական ազգային այրուքն (չհաշվելով սեպագիրը)»¹⁷⁵:

Ի. Հարությունյանի «Հայոց գիրը» գրախոսեց նաև անվանի հայագետ Հակոբոս Տաշյանը, որը միանշանակ է համարում մատենագիրների հաղորդումը մինչմաշտոցյան հին գրահամակարգի մասին: Սակայն, ըստ նրա, մատենագրական տվյալների քննությունը թույլ չի տալիս պարզելու դրանց քանակն ու ինչ լինելը, իսկ Ի. Հարությունյանի տեսությունը՝ այն համարելու փյունիկյան այրուքն, մնում է սուկ ենթադրություն, որը կարիք ունի հավելյալ հիմնավորման: Հ. Տաշյանը չի ընդունում նաև, որ Ազաթանգեղոսի տեղեկությունները

¹⁷² Ծագությունեանց, 1892, էջ 240–242:

¹⁷³ Ծագությունեանց, 1892, էջ 309, 329:

¹⁷⁴ Աղայան, 1892, էջ 1841–1851 (ցանկով պետք է նշել, որ սիրված բանաստեղծի գլուխադրությունը տեղ-տեղ «նամենձան» է գիտական բանաձևի երկրային անմարդ արտահայտություններով):

¹⁷⁵ Մալխասյանց, 1893, թիվ 4, էջ 59: Սուր. Մալխասյանցը նույն տեսակետն է հայտնել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» իր կատարած աշխարհագրա-քարզմանության ծանոթագրություններում, որը տարագրվել է մի քանի անգամ (տե՛ս, օրինակ, Մովսես Խորենացի, 1990, էջ 287–288):

նշանագրերի մասին և «Կարդան Արևելցու հաղորդումը «կտապաշտ Հայկազանց» դրամների գրերի վերաբերյալ կարելի է համարել նախամեսրոպյան հայ դպրության գոյության ապացույց»¹⁷⁶:

Անտոն Գարազաշյանը մինչմեսրոպյան գրի հայ դպրության գոյությունը փորձում է հիմնավորել տեսականորեն՝ շեշտելով հայոց լեզվի կատարելությունը V դարում («ի հատակոտորս երգոց վիպասանաց, որոց կատարեալ նմանութիւն է թարգմանեաց լեզուն»), ապա նաև վկայակոչելով Ղազար Փարպեցու տեղեկությունը Մաշտոցից առաջ հայերեն լեզվի նշանագրերի գոյության մասին: Հեղինակը նաև կարծիք է հայտնում, որ «Դանիելյան» գրահամակարգը ասորերենի ոճով ստեղծված առանց ձայնավորի սեմական ծագումով գիր է՝ հարմարեցված հայերենին, ինչը, սակայն, չի բավարարել հայերենի պահանջները¹⁷⁷: Ընդունելով Ա. Գարազաշյանի եզրակացության առաջին հատվածը, պետք է նշել, որ նրա վերջին կարծիքը չի հիմնավորվում որևէ փաստարկով:

Նազարեթ Տաղավարյանը նշելով, որ հայերը հնում ունեցել են սեպագիր դպրություն, անհնար է համարում, որ դրանից հետո՝ մինչև Մեսրոպ Մաշտոցի ժամանակը, հայերը զուրկ լինեին քաղաքակրթական այդ կարևոր նվաճումից. «արդարև՝ հնար չէ որ արչայի վաղիս գրականության ունեցող մի ազգության, յանկարծ դադարի ուրոյն գիր ևս դպրութիւն ունենալէ, միեղիտ իւր դրացի անգիր ազգեր իսկ՝ մեծ ընդունելութիւն կ'ընեն նորահնար տառերուն ևս նույնա գրականութեան կը սկսին»¹⁷⁸: Քննելով մատենագրական հաղորդումներն ու նոր ժամանակների ուսումնասիրողների տեսակետները՝ Ն. Տաղավարյանը եզրակացնում է, որ Մաշտոցից առաջ հայերն ունեցել են իրենց 22 տառանոց այբուրենը, որը պահպանվել էր Դանիել Ասորու մոտ: Այն ծագելով հին սեմական այբուրեններից՝ հարմարեցվել էր հայերենի համար, իսկ V դարի սկզբին լրացվել ու կատարելագործվել է Մեսրոպ Մաշտոցի կողմից¹⁷⁹:

Ն. Տաղավարյանի գրքի քննադատությամբ հանդես եկավ Գարրիել Մենևիշյանը՝ Գ. Մեն ծածկաևունով, որը լիովին մերժում է նախամաշտոցյան հայալեզու և պարսկալեզու դպրության գոյությունը՝ նյութական ապացույցների չգոյության պատճառով: Իսկ մաշտոցյան այբուրենի ծագման հարցում նա ապացուցված է համարում հունականից բխեցումը, միեղիտ սեմական ծագումնաբանությունը համարում է «ձրի ենթադրություն»¹⁸⁰:

Գերմանացի արևելագետ Դետեր Ենսենը խեթա-յուվիական հիերոգլիֆիկայի վերծանության սկզբնական ժամանակաշրջանում առաջարկեց դրանք վերծանել վաղնջական հայերենով՝ եզրակացնելով նաև, որ խեթերը հայերի

¹⁷⁶ Տալեան, 1893, էջ 88–92:

¹⁷⁷ Գաբրիելյան, 1895, էջ 32–40, 70:

¹⁷⁸ Տաղավարյան, 1895, էջ 7–8:

¹⁷⁹ Տաղավարյան, 1895, էջ 7–36: Ի դեպ, Ն. Տաղավարյանն առաջին հայացված էր, որը շրջանառության մեջ գրեց Տրդատ Գ Մեծի օրոք ստեղծված 22 տառանոց հայկական այբուրենի մասին կրթականական ակադեմիայից (նույն տեղում, էջ 37):

¹⁸⁰ Մեն, 1896, էջ 213–217:

նախնիններն են, իսկ հիերոգլիֆիկ խեթերենը՝ հայերենի ամենաին վիճակը¹⁸¹: Նրա աշխատանքը բուժն արձագանք գտավ ժամանակի հայագետների և Հին Արևելքի ուսումնասիրողների շրջանում, քնականաբար, յուրօրինակ լուծում համարվելով ինչպես հայոց ազգաձագման, այնպես էլ նախամաշտոցյան հայալեզու դպրության խնդիրներում: Սակայն տարիներ անց ցույց տրվեց, որ այդ արձանագրությունները գրված են ոչ թե հայերեն, այլ մեկ այլ ազգակից, հնդեվրոպական լեզվով...

1870–ական թվականներին Ա. Մորդթմանի՝ Վանի թագավորության սեպագիր արձանագրությունները հայերեն կարդալու տեսությանը հաջորդեց 1882 թ. Ա. Մեյսի ոչ հայերեն վերձանությունը: Սակայն 1900 թվին Հովսեփ Սանտալյանը կրկին հանդես եկավ այդ արձանագրությունների հայերեն ընթերցմամբ՝ հրատարակելով իր ժամանակ հայտնի քիսայնական սեպագրերի ժողովածուն¹⁸²: Թեպետ այս փորձը քննադատվեց, այնուամենայնիվ, Հ. Սանտալյանը ցույց տվեց բազմաթիվ ընդհանրություններ և նույնություններ հին հայերենի ու սեպագրերի լեզվի միջև:

Մեսրոպ Տեր–Մովսեսյան Աստվածաշնչի հայերենի թարգմանությանը նվիրված կոթողային ուսումնասիրության մեջ հինգերորդ դարի հայերենի բարձր զարգացածությունը արդյունքն է համարում նախորդած դարերում գրավոր լեզվի առկայության¹⁸³: Նա հատուկ ուշադրություն է դարձնում 360–ական թվականներին Մերուժան Արծրունու կողմից հունարեն գրքերը ոչնչացնելու և հունարենից թարգմանություններ կատարելն արգելելու մասին Մովսես Խորենացու տեղեկությանը, որը, իրավացիորեն, համարում է վկայություն նախամաշտոցյան Հայաստանում հայալեզու թարգմանական գրականության մասին¹⁸⁴: Մեսրոպ Տեր–Մովսեսյանն առաջինն էր, որ ուշադրություն դարձրեց Մեծամորի նշանագրերին, ենթադրելով, որ դրանք կարող են լինել ինթական նշանագրեր¹⁸⁵:

Աշխարհի գրային համակարգերի պատմությանը նվիրված ընդհանրաօրինակ աշխատության էջերում Յակով Գնիցերն անդրադառնում է նաև հայոց այբուրենին՝ այն (վրաց այբուրենի հետ) համարելով զենդական ծագում ունեցող: Ըստ հեղինակի՝ մինչ այդ հայերը գործածել են հունական այբուրենը, իսկ ալֆբի վաղ՝ Արեմեյանների (հեղինակի մոտ՝ Դարեհի) ժամանակ՝ պահլավերենը, որը փոխարինելու էր եկել սեպագրին¹⁸⁶: Ինչ խոսք, անհավանական են հեղի-

¹⁸¹ Jensen, 1898, էջ 1–254, հավելվածում՝ նշանացանկը: «Նենեփ այս աշխատության համառոտած ստորերևակ է խնդրին անցվող բազմաթիվ եղապարտումներ յույս են տեսել «Հանդես Ամսօրնայ»-ի 1898–1904 թվականների համարներում: 2012 թվականին Վառազն Խաչատրյանը կատարեց զրոյս արձողական հայերեն թարգմանությունն ու էլիթրոնային ստորերևակ եղապարտումնց համադասակցում՝ https://drive.google.com/file/d/0B_sAC74Oox-QQTgzZ13uUDB4MFWM/edit հասցեով:

¹⁸² Saadeghian, 1900 (լրացումները՝ «Հանդես Ամսօրնայ»-ի 1913 թ. համարներում):

¹⁸³ Терс Моисеевич, 1902, էջ 15–27:

¹⁸⁴ Терс Моисеевич, 1902, էջ 21–22:

¹⁸⁵ Տեր Մովսեսյան, 1913, էջ 65–66:

¹⁸⁶ Կասար, 1903, էջ 155–157:

րին՝ որոշակի գումարի դիմաց: Հաղորդագրության հեղինակը կասկած է հայտնում, որ դա կամ կարող է լինել կեղծիք՝ մեծ գումար վաստակելու նպատակով, կամ, եթե այն կեղծիք չէ, կարող է վկայել, որ «*ժայռերն գրեթե գոյություն են ունեցել Սահակից և Մեսրոպից շատ սուսք*»¹⁹⁹: Քանդակի յուսանկարը նա ուղարկում է խմբագրությանը: Այս առեղծվածային քանդակապատկերի յուսանկարը տարիներ անց հրատարակեցին և երկտող գրությանն անդրադարձան Գ. Լևոնյանը, Գր. Ղափանցյանը, Ա. Աբրահամյանը և ուրիշներ (տե՛ս ստորև):

Գառնիկ Ֆեոդոսյանը՝ Գ. Փառնակ գրական ծածկանունով, Մեսրոպ Մաշտոցին նվիրված հողվածաշարում անդրադառնում է Դանիել Ասորու մտպահպանված գրահամակարգին: Նա գտնում է, որ նախամաշտոցյան քնիկ հայ գիր չի եղել, իսկ «թաղված ու հարություն առած» գիրը եղել է միևնույն պահպանված գրահամակարգի: Հեղինակն ավելացնում է, որ մաշտոցյան այբուբենի տառերի մի մասը ծագում է հին պահլավական այբուբենից՝ հայելային շրջամբ, քանի որ վերջինս ունեցել է աջից ձախ ուղղություն: Ըստ նրա, Մաշտոցն իր գրահամակարգի մի մասը փոխառել է հունական այբուբենից, իսկ մնացածն էլ ինքն է ստեղծել ու ամբողջացրել նոր այբուբենը²⁰⁰:

Հրայա Աճառյանը նախամաշտոցյան հայալեզու դպրության գոյությունն իսպառ քացատողներից է: Այս խնդրին նա առավել հանգամանորեն անդրադարձել է «Հայոց գրերը» աշխատության էջերում, որը լույս է տեսել 1907–1928 թվականներին²⁰¹ և կրում է այդ ժամանակ ընդունելություն գտած տեսությունների ազդեցությունը: Մասնավորապես, նա ներկայացնում է խեթա–լուվիական հիերոգլիֆները (ընագրում «*ժայռյան գրեր*») և Վանի թագավորության սեպագրերը (ընագրում «*խաղյան քեռագրեր*») իրեն հայերից առաջ Հայաստանում ապրած այլ ժողովուրդների գրեր²⁰²: Իսկ ժայռապատկերների առկայությամբ նշում է, որ եթե դրանք հայկական են, պետք է ստեղծված լինեն Ք.ա. VI դարից հետո²⁰³: Ակնհայտորեն, գործ ունենք հայերի եկվորության տեսության հետ, որն ընդունված էր ժամանակին, սակայն լիովին հերքվեց հետագայում:

¹⁹⁹ Սիբիասի, 1903, էջ 2–3:

²⁰⁰ Փառնակ, 1905, էջ 128–130:

²⁰¹ Աշխատության առաջին մասն առանձին գրքով լույս է տեսել Փարիզում 1907 թվականին (Աճառյան, 1907), այնուհետև, երբորդ մասն, իրեն նախվածաչափ, լույս է տեսել «Հանդես Աճառյան»-ի համարներում (ՀԱ, 1910, № 2, էջ 46–52; № 6, էջ 171–176; № 7–8, էջ 212–216; № 10, էջ 311–315; 1911, № 4–5, էջ 231–242; № 6–7–8, էջ 347–365; 1912, № 2–3, էջ 133–147; 1913, № 34, էջ 137–158; 1914, № 5–6, էջ 299–319; 1915, № 1–12, էջ 135–172; 1921, № 5–6, էջ 298–315), ապա առանձին գրքով՝ Վիեննայում 1928–ին (Աճառյան, 1928): Աշխատության առաջին և երկրորդ մասերը մեկ գրքով լույս են տեսել երեսուսուներեքամյակի մահվանից հետո (Աճառյան, 1968): Աշխատության վրաստատար տպագրելուց Հր. Աճառյանը հրատարակության է պատրաստել դեռևս 1935 թվականին, սակայն ինչ–ինչ պատճառներով այն լույս չի տեսել: Մեծաթիվը ուսումնասիրությունն ամբողջական մեկ գրքով լույս տեսավ միայն 1984 թվականին՝ Էդ. Աբրահամի խմբագրությամբ (Աճառյան, 1984), որն էլ մեզ կհիշեն մեր աշխատանքում: Հր. Աճառյանի իր մյուս աշխատանքներում նախամաշտոցյան գրի վերաբերյալ նամատառակի հայտնում է իր կարծիքը՝ հիշելով «Հայոց գրերը» աշխատությանը (տե՛ս, օրինակ, Աճառյան, 1951, էջ 65), ուստի մեք ընտելության տարբեր ենք դարձրել հենց էրված աշխատանքը:

²⁰² Աճառյան, 1984, էջ 393–406:

²⁰³ Աճառյան, 1984, էջ 406–408:

Հր. Աճառյանը քննարկում է միջնադարյան մատյաններում պահպանված նշանագրերի նախամաշտոցյան ծագում ունենալու խնդիրը, վերլուծում տարբեր ձևազրկերից իր հավաքած 509 նշանագրերը և եզրակացնում, որ դրանք ստեղծվել են հետմնաբուրայան շրջանում¹⁹⁴: Ինչպես կոտեսները քիչ հետո, քազմավաստակ լեզվաբանն այստեղ վրիպել է, ինչը պարզ դարձավ տարիներ անց Ա. Արրահամյանի՝ նշանագրերի ուսումնասիրության ժամանակ կատարած բացահայտումներով:

«Դանիելյան» գրերին լոյրված բաժնում Հր. Աճառյանը հանգամանալի քննության է ենթարկում նախամաշտոցյան շրջանում հայալեզու դպրության մասին վկայող մատենագրական տվյալներն ու ուսումնասիրողների կարծիքները (այդ թվում՝ «Դանիելյան» գրերին նախորդող տեղեկությունները): Իր վերջնական կարծիքը նա ձևակերպում է այսպես. «Հայերը նախքան Մեսրոպը գրավոր գրականություն չեն ունեցած. եղել է միայն բանավոր գրականություն, որի հատակոտորներն են վիպասանական երգերը. այսպիսի գրականություն ունի նաև ամեն անգրագետ ազգ: Մեսրոպից առաջ հայերեն գրականություն ենթադրելը, որ իբր թե ջնջեց Լուսավորիչը՝ այրելով բոլոր հայերեն գրքերը, անմիտ հեքիաթ է միայն»¹⁹⁵: Իսկ «Դանիելյան» գրերը նրա կարծիքով «հայերեն չէին, հայոց մեջ երբեք գործածված չէին, այլ կորած հին սեմական մի ազգի այբուբեն»¹⁹⁶: Մեկ այլ աշխատանքում Հր. Աճառյանը «Դանիելյան» գրերի մասին կարծիք է հայտնում, որ դրանք «ուրիշ բան չէին, եթե ոչ ինչ-որ արամեական հնացած տառեր», որոնք շփոթմամբ են համարվել հայկական՝ «արամեական» և «արամյան» (հայ) բառերի շփոթությունից¹⁹⁷:

Կատարած իրաշալի աղբյուրագիտական աշխատանքի կողքին ակնհայտ է Հր. Աճառյանի կանխակալ միտվածությունը, որի պատճառը, թերևս, այն չբարձրաձայնվող մտավախությունն է (որն ամկա է նաև շատ այլ հայագետների մոտ), թե ընդունելով նախամաշտոցյան հայ դպրության գոյությունը՝ սովորած կլինենք Մեսրոպ Մաշտոցի վաստակը, ինչին արդեն անդրադարձել ենք: Օրինակ, ներկայացնելով Փիլոսոփաառու Փլալիոսի տեղեկությունը Հայոց Արշակ արքայի օրոք հայագրության մասին, Հր. Աճառյանը զարմանալիորեն գրում է. «Մ'րն է այն Արշակ թագավորը... նթն իրոք պատմությունը ճշմարիտ է, ավելի պարթև թագավորի անուն պետք է լինի և այն մակագրությունն էլ ավելի պահլավերեն, քան հայերեն»¹⁹⁸: Այստեղ չենք կարող միտում չտեսնել, քանզի և՛ 1920-ականներին, և՛ ավելի վաղ հայագիտությանը հայտնի էին Տակիտոսի հաղորդումները, որ Չենոն-Արտաշեսից հետո Հայաստանի գահին բազմեց Պարթևտտանի Արտավան Գ արքայի ավագ որդի Արշակը (Արշակ Ա, 34–35 թթ.): Կամ, զարմանք է առաջացնում հայոց քրոնիկ կողմից նշանագրե-

¹⁹⁴ Աճառյան, 1984, էջ 408–430:

¹⁹⁵ Աճառյան, 1984, էջ 455–456:

¹⁹⁶ Աճառյան, 1984, էջ 459:

¹⁹⁷ Աճառյան, 1946, էջ 38–39:

¹⁹⁸ Աճառյան, 1984, էջ 434:

րի կիրառման մասին Ազգաբնագեղոսի տեղեկությանը տված գնահատականը՝ «... Ազգաբնագեղոսի աշխատությունը իբրև Ե դարի աշխատություն՝ արժեք չունի բնավ այսպիսի մի կարևոր խնդրի լուծման մեջ, մանավանդ երբ խնդիրը վերաբերում է հին ժամանակի պատմության և կյանքին»¹⁹⁹... Սա այն դեպքում, երբ իր քննարկած բոլոր հարցերի աղբյուրները ոչ միայն V դարի պատմիչներ Կորյունը, Մովսես Խորենացին և Ղազար Փարպեցին են, այլև շատ ավելի ուշ դարերում ապրած այլ մատենագիրներ (Վարդան Արևելցի, Ստեփանոս Տարոնացի Ասողիկ և այլք)...

Վրթանես Փափագյանը 1910 թվականին լույս տեսած երկու աշխատություններում կարծիք է հայտնում, որ Դանիել եպիսկոպոսի մոտ պահպանվել էին հայոց «շատ հին դարերում, մեհեանների մեջ մշակված, քույրների միջավայրում միայն գուցե գործածուղ մայրենի լեզվի նշանագրերը», որոնք թվով 22-ն էին: Ըստ նրա, երկամյա ուսուցումից հետո, երբ վերջնականորեն պարզվեց այդ գրանշանների անբավարար լինելը, Մաշտոցը դրանք իբրև հիմք օգտագործեց որակապես նոր այբուբենը ստեղծելիս²⁰⁰: Անդրադատնալով օտարալեզու գրահամակարգերի կիրառմանը՝ Վրթ. Փափագյանը հայաստանյան դպրության պատմությունը սկսում է Վանի թագավորության (Ուրարտու) սեպագրից, որից հետո, ըստ նրա, Ք.ա. VI-V դարերից մինչև Ք.հ. IV դարը կիրառվում են զենդական գրերը՝ պարսկերենով, մակեդոնական արշավանքներից հետո՝ հունարենը, իսկ քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո՝ նաև ասորերենը²⁰¹:

Մաղաբիա Օրմանյանը, քննության առնելով մատենագրական հաղորդումները, նշում է, որ նախամաշտոցյան «Դանիելեան նշանագիրները Հայ դպրութեան սկզբնադրութիւնը նուիրագործեցին», քանի որ դրանցով էր Մեսրոպ Մաշտոցը երկու տարի ուսուցանում, իսկ հետագայում (ըստ Մովսես Խորենացու որոշ ձևագրերի հաղորդման) դրանց հավելեց յոթ ձայնավորներ: Ընդ որում, նա «Դանիելյան» գրերը համարում է «ասորական կամ սեմական աղբյուր է բխած, առանց ձայնադրի այբուբեն մը», սակայն չի անդրադառնում այն հարցերին, թե դրանք ե՞րբ և ո՞ւմ կողմից էին ստեղծվել²⁰²:

Գալուստ Տեր Մկրտչյանը չի ընդունում նախամաշտոցյան հայալեզու դպրության գոյությունը: Նա ուշադրություն է դարձնում Սևանա կղզում գտնված մի խաչքարի արձանագրությանը, որի մաշտոցատառ գրության մի մասում առկա է գրերի աջից ձախ դասավորություն: Գ. Տեր Մկրտչյանը ենթադրում է, որ ժամանակին Հայաստանում կիրառված «Դանիելյան» գրերը հեղինակել է հենց Դանիել Ասորին և այն «հաւանօրէն պիտի լինէր աջից-ձախ

¹⁹⁹ Նույն տեղում:

²⁰⁰ Փափագյան, 1910 (a), էջ 65-67; Փափագյան, 1910 (b), էջ 26-33: Հեղինակի կարծիքով, Մեսրոպ Մաշտոցն այդին նրան 22 տառին հավելել է 7 ձայնավոր և 7 բարդաձայն՝ ստանալով իր նոր այբուբենը. Վրթ. Փափագյանը, վառատրեն, կրկնում է Մ. Ըմիկի վերադարձողըստ տեսակետը:

²⁰¹ Փափագյան, 1910 (a), էջ 51-65:

²⁰² Օրմանյան, 2001, էջ 309-314 (ստառնի նրատարակությունը՝ 1912 թ.):

գրում ըստ ասորականին: Մաշտոցի արած փոփոխություններից մեկը պիտի լիներ ըստ յունականին գրությունը դարձնել ձախից աջ»: Ուստի և հեղինակը հնարավոր է համարում, որ ավանդույթի ուժով նաև հետագայում մաշտոցյան տառերով գրած լինեին աջից ձախ²⁰²:

Արրահամ Չամիչյանը, ելելով հանդերձ, որ իր ժամանակ նախամաշտոցյան հայաբզու որևէ արձանագրություն չի գտնվել, համոզմունք է հայտնում, որ եղել է նախամարտայան հայաբզու դպրություն: Նա ասվածի հիմնավորում է համարում ինչպես դպրության Տիր աստծո մասին տեղեկությունն ու այլ մատենագրական վկայությունները, այնպես էլ հինգերորդ դարում հայոց լեզվի կատարելությունը, որը չէր կարող ունենալ «ոչ խոսակցական լեզուն»: Հեղինակը հավանական է համարում, որ մեր նախնիները նախամաշտոցյան շրջանում հայերեն գրելու համար կիրառեին օտար գրեր, հատկապես, զենդական այբուբենը: Ա. Չամիչյանը հայ գրականության պատմության մեջ առանձնացնում է նաև նախամարտայան քրիստոնեական շրջանը՝ չորրորդ դարը, իսկ Դանիել Ասորու մոտ պահպանված գրանշանները համարում է նրա իսկ ստեղծածը, որն անկատար էր և մի կողմ դրվեց²⁰⁴:

Անիի պատմությանը նվիրված մեծարժեք աշխատության մեջ Նիկողայոս Մառը հայտնում է հետաքրքիր կարծիք. «Ողջ Կովկասը, ներառյալ Հայաստանը, քաղաքակիրթ էր դեռևս ասորա-քարեկական ժամանակներում: Հայաստանում մայրենի լեզվով կար տեղական գիր դեռևս մեր թվարկությունից մի քանի դար առաջ»²⁰⁵: Բիչ անց հեղինակը նույն կերպ է բնութագրում նաև մաշտոցյան դպրությունը. «Ստեղծվեց նոր քրիստոնեական դպրություն, ընդ որում, այս անգամ ևս տեղական ժողովրդական լեզվով...»²⁰⁶: Մեկ այլ աշխատանքում, անդրադառնալով «Դանիելյան» գրեթին, Ն. Մառը գտնում է, որ դրանց հեղինակը եղել է ոչ թե Դանիել Ասորին, այլ «*հայերեն կշակագրերն առաջին անգամ հնարել են անհայտ ասորի քարագիյները Հայաստանի հարավ-արևելքում*»²⁰⁷:

Լեոն նախամարտայան հայ դպրության համոզված կողմնակիցներից է, որն իր տեսակետի լավագույն հիմնավորումներից է համարում V դարի գրաբարի հղկվածությունը, որը բնորոշում է իբրև «շատ կանոնավոր, լավ մշակված, նույր արտահայտություններով և չքնաղ պարզությամբ օժտված լեզու»²⁰⁸: Լեոյի հիմնավորումներից է նաև Հայաստանի պետական-քաղաքական զարգաց-

²⁰² Տեր Մկրտչյան, 1913, էջ 137-141: Մինչ այդ, 1912 թ. Էջմիածնի «Արարատ» հանդեսում հրատարակված հոդվածում նա կարծիք էր հայտնել, որ «Մարտպան տառերը «մայրաուրար կշակեր, կամ կշակներ» ունեին, որոնցից երևի գուցե էին Դանիելյան գրերը» (Տեր Մկրտչյան, 1913, էջ 512: վերադարձությունը՝ Տեր Մկրտչյան, 1962, էջ 196):

²⁰⁴ Չամիչյան, 1941, էջ 26-32 (առաջին հրատարակությունը՝ 1914 թ.):

²⁰⁵ Մառ, 1939, էջ 10:

²⁰⁶ Մառ, 1939, էջ 12-13:

²⁰⁷ Մառ, 1915, էջ 34:

²⁰⁸ Լեո, 1966, էջ 385-387: Լեոյի «Հայոց պատմության» առաջին հատորի առաջին հրատարակությունը եղել է 1917 թվականին: Ելելով, որ ավելի վաղ՝ 1904 թ. հրատարակված «Ա. Մարտպ» մատագրության մեջ նա խուսափում էր հարցի բնագավառից՝ փաստորի ոչ լավագույն լինելու պատճառաբանությամբ (Լեո, 1904, էջ 163-165):

ման մակարդակը. «Կորեոյի է, ուրնէն, ալիկի մնծ հալիսակալուտիւթեանը եկթաղընդ որ հայկական իշանագրեր գոյութիւն ունենին հին ժամանակներից և կրակց ցուցակը գտնուում էր Դանիել սիրիացու մոտ պատահաբար: Մենք դեռ Արտաշեսյան հարստութեան ժամանակներից տեսանք, որ հայ պետութիւնը չէր կարող առանց դպրոցական դաստիարակութեան զարգանայ, քանի որ մի երկիր էր դա, ուր բազմակեզ գեղեր կային, որոնք հասցնվեցին, պետական մի արտոլոյթեան մեջ ձուլվեցին հատկապես հայերէն լեզվի միջոցով: Որ հայ ժողովուրդը պիտի ունենար իր գրականութիւնը, որը թելադրում է ասել և կրա լայն տարածված ու ներքնապես զարգացած հեթանոսական պաշտամունքը: Եվ վերջապես Լույնիակ Կորիւնն ու Դագար Փարպեցին էլ շատ մութ ակնարկներով հիշատակում են «վաղեցուց» գոյութիւն ունեցած հայկական իշանագրերը»²⁰⁹: Առոն գտնում է, որ Մեսրոպ Մաշտոցի կարևորագույն գործը եղել է Դանիել եպիսկոպոսի մոտ պահպանված հին հայկական գրերի «փոփոխությունը, լրացումը և կատարելագործումը»²¹⁰:

Վալերի Բրյուսովը, նշելով հանդերձ, որ նախամաշտոցյան հայ դպրոցյան գոյութեան հարցը վերջնականապես լուծված չէ, միանշանակ է համարում, որ բազմադարյա պետականության պայմաններում հայերը պետք է ունենային մայրենի լեզվով դպրոցություն, ինչի առհավատեցյան է նաև V դարում գրաբարի կատարելությունը: Հեղինակը միանշանակ է համարում, որ հայալեզու դպրոցություն V դարից առաջ գոյութեան է ունեցել օտար (հունական և այլ) այբուբեններով, ինչի ուղղակի վկայություններից է համարում (հետևելով Մեսրոպ Տեր-Մովսէսյանին) 360-ական թվականներին Մերութան Արծրունու կողմից հունարեն գրքերը ոչնչացնելու և հունարենից թարգմանություններ կատարելն արգելելու մասին Մովսէս Խորենացու վկայությունը: Վ. Բրյուսովը նաև ենթադրում է, որ օտար այբուբենների հետ զուգահեռ գործածվել է նաև 22 տառից բաղկացած հայկական («Դանիելյան») գրահամակարգ, որը կատարելագործել է Մեսրոպ Մաշտոցը՝ հավելելով 14 տառ²¹¹:

Հայոց պատմության ընթացքում կրթական գործի ուսումնասիրութեանը նվիրված աշխատութեան մեջ Վարդան Հացունին գտնում է, որ նախամաշտոցյան Հայաստանում չի եղել ոչ հայալեզու դպրոցություն, ոչ էլ, հետևաբար, հայալեզու կրթահամակարգ ու գրականություն: Իսկ Դանիել եպիսկոպոսի մոտ պահպանված գիրը նա համարում է հունական այբուբենով հայերեն գրելու փորձ, որը ձախողվել է «հեղին այբուբենին անբաւականութեան պատճառաւ»²¹²:

1927 թ. Արմավիրի պեղումների ժամանակ Սմբատ Տեր-Ավետիսյանը հայտնաբերեց մեկ մեհենազիր և երեք հունազիր արձանագրություններ մի խոյածն քարակոթողի վրա²¹³: Մեհենազիր բնագիրը (որի առաջին հրատարա-

²⁰⁹ Առ, 1966, էջ 507, 508:

²¹⁰ Լույն տեղում:

²¹¹ Երսոուս, 1918, էջ 47-54; Բրյուսով, 1931, էջ 103-109:

²¹² Հացունի, 1923, էջ 80-85:

²¹³ Тер Аветисян, 1941, էջ 62-64; Տեր-Ավետիսյան, 2010, էջ 449-461:

կիցը եղավ Աշխարհիբեկ Քալանթարը²¹⁴), Ս. Տեր-Ավետիսյանը թվագրում է նախաուրարուական ժամանակաշրջանով:

Աշխարհիբեկ Քալանթարը, իր հավաքած և ուսումնասիրած նյութերի հիմամբ պնդում է «գրի գոյությունը, որ ունեցել է Հայաստանի բնակիչն այդ հեռավոր անցյալում. մեզ մինակվեց պարզել ոչ միայն հնագույն գրի գոյությունն Արագածի վրա, այլև նրա մեծ տարածումը Խորհրդ. Հայաստանի բազմաթիվ այլ վայրերում, ներկայացված գրի զարգացման մի շարք էտապներում՝ սկսելով ժայռափորումների և ժայռագրությունների ամենապրիմիտիվ օրինակներից, մինչև հիերոգլիֆիկայի գրի կազմակերպված սխեմները, որ իր խոշոր չափերով նախնական հագուստ գոսկա-նության ներկայությունն է հայտարարում Հայաստանում»²¹⁵: 1927 թ. Արմավիրից հայտնաբերված մեհենազիր արձանագրությունը նա թվագրում է նախաուրարուական ժամանակաշրջանով՝ Հայաստանում գրի ծագման դարաշրջանը համարելով նոր քարի դարը²¹⁶:

Հին հայոց մեջ կրթական գործի մեկ այլ ուսումնասիրող Գևորգ Սարաֆյանը ընդգծում է հեթանոս Հայաստանում սեփական կրթահամակարգի գոյության փաստը: Չկենդոնանալով կրթահամակարգի և դպրության լեզվի խնդրի վրա՝ նա նշում է, որ հելլենիստական շրջանում հայոց կրթահամակարգը մեծապես ազդվել է հունականից²¹⁷: Հայաստանում գրի ծագման ու զարգացման վաղագույն փուլերի ուսումնասիրության մեջ կարևոր ներդրում ունեցավ Իվան Մեշչանինովը²¹⁸, որն ի մի բերեց էլենենդորֆի, Տանձատափի, Արմավիրի և Վանի նյութերը՝ դրանք թվագրելով Ք.ա. I հազարամյակի սկզբով: Նրա կարծիքով, սեպագիրը եղել է միայն վերնախավի գիրը, իսկ հիերոգլիֆները գործածվել են ժողովրդի կողմից և ունեն տեղական ծագում²¹⁹:

Նախամաշտոցյան հայ դպրության համոզված կողմնակիցներից է Մ. Մինասյանը, որը, անկախ հայտնաբերված նյութերից, պարզապես անհնար է համարում հայության դպրություն չունենալը՝ դարեր շարունակ անընդհատ առկալելով հարևան քաղաքակիրթ ժողովուրդների հետ²²⁰:

Հին Հայաստանի մշակույթին նվիրված նոսահատոր ուսումնասիրության էջերում Խաչիկ Սամուելյանը հատուկ բաժնով անդրադառնում է գրի խնդրին: Նա նախ համառոտակի ներկայացնում է գրի ծագման ու զարգացման ընդհանուր օրինաչափությունները, ապա քննարկում իր ժամանակ հայտնաբերված հայաստանյան նյութերը: Խ. Սամուելյանը կիսում է Ի. Մեշչանինովի կարծիքը՝ Հայաստանում սեպագրի ներմուծված և մեհենագրության (հիերոգլիֆի-

²¹⁴ Kalantar, 1929, էջ 43–44:

²¹⁵ Քալանթար, 1935, էջ 73; Քալանթար, 2007, էջ 313–314:

²¹⁶ Kalantar, 1929, էջ 43–45; Քալանթար, 2007, էջ 254–260: «Նայ գրերը, ինչպես ընդգծել եմ տարբեր աղբյուրներով, սակայն են զարգացման բազմաթիվ փուլեր. հնագույն արձանագրությունները, սկիզբնաբար, սերում են նեոլիթի դարաշրջանից» (Kalantar, 1929, էջ 44–45; Քալանթար, 2007, էջ 260):

²¹⁷ Sarafian, 1930, էջ 26–29:

²¹⁸ Meščaninov, 1932, էջ 51–55; Meščaninov, 1933, էջ 34–65:

²¹⁹ Meščaninov, 1932, էջ 55; Meščaninov, 1933, էջ 60–62:

²²⁰ Մինասյան, 1932, դեկտեմբերի 26–ի համարում (նշումն ըստ Արթուրյանի, 1982, էջ 18–19):

կայի) տեղական ծագում ունենալու վերաբերյալ: Նա ևս Հայաստանում գրի ծագման վաղագույն փուլը՝ սիլվոտոգրաֆիկ նշանագրերի ծագումը, կապում է նեոլիթյան, իսկ հիերոգլիֆիկայի զարգացումը՝ բրոնզի և վաղ նրկայի դարաշրջանի հետ: Իբրև ամփոփում, հեղինակը գրում է. «Հայկական բնագիտություն, միանգամայն անկախ սնվածն էշանագրերից, որոնք ստորական ծագում ունեն, գործածվելիս են եղել տեղական սոցիալ-կուլտուրական հանգամանքներից բխող հիերոգլիֆյան ձևի յուրահատուկ էշանագրեր, որոնց օգնությամբ այդ արխայիկ դարերի մարդը կուրական ձևավորումով արտահայտում էր իր գաղափարներն ու մտածողությունները»²²¹:

Սեդրակ Բարխուդարյանը ևս փաստում է գրի զարգացման միևնույն ուղու փուլերի լայն կիրառումը՝ «...Հայաստանի բնակիչ ցեղերը հնչարտաբերական գիր չունեին, այդ ունեին միայն գաղափարագրեր ... Առաջին անգամ պատմական բուն Հայաստանի տեղիստորիայի վրա երևան եկավ հնչարտաբերական գիրը, խաղրական պետության շրջանում: Գիր և գրականությունը այդ սկզբնական շրջանում մասնաջական բնույթ չէին կրում»: Ամփոփելով քննությունը, նշում է՝ «Հայաստանում գրի զարգացման այդ ընդհանուր երեք հիմնական ստիճաններն էլ երևան են գալիս և բոլորից էլ մենք ունենք փաստացի կրթություն»²²² (խոսքը գաղափարագրի, վանկագրի և օտար՝ արամեա-հունա-հռոմեատառ գրերի մասին է՝ - Կ. Թ.):

Ներսես Ալիկյանը, վկայակոչելով մատենագրական տեղեկություններից մի քանիսը և իր ժամանակ հայտնի Հայաստանից հայտնաբերած հունարեն և արամեագիր կոթողները, գտնում է, որ հայկական մեխաններում հայ քրմական դասը սեփական հայալեզու գիր ու գրականություն չի ունեցել: Նա ընդունում է միայն նախամաշտոցյան օտարալեզու գրականության գոյության փաստը, իսկ «Դանիելյան» գրերը համարում է ասորի հոգևորականների ստեղծածը, որը, հավանաբար, եղել է ասորականի նման քաղաձայնային և աջից ձախ ուղղությամբ: Այն, քստ Ն. Ալիկյանի, Մեսրոպ Մաշտոցը չի օգտագործել իր այբուբենը ստեղծելիս. նա 18 տառաձևեր վերցրել է հունական գրերից, 4-ը՝ ասորականից, և դրանց ավելացրել 14 նոր նշանաձևեր²²³: Հարկ է նշել, որ Ն. Ալիկյանն ունի ընդգծված կանխակալ վերաբերմունք նախամաշտոցյան հայալեզու դայրության խնդրում, ինչն ակնհայտ է որոշ աղբյուրներ չվկայակոչելու փաստից²²⁴:

Գրիգոր Գրիգորյանը հայ իրականության մեջ առաջին անգամ փորձել է ստեղծել գրաբանության համառոտ ձևնարկ՝ վերնագրելով այն «Գրի պատ-

²²¹ Սամուելյան, 1941, էջ 183-190: Շքավերթի արձանագրությունների նկարները՝ Սամուելյան, 1931, աղ. XXXV:

²²² Բարխուդարյան Ս. Գ., Խորհրդային Հայաստանի կուրական կուլտուրայի ինչարձանները, Եր., 1935, էջ 49-50, 58:

²²³ Ալիկյան, 1938, էջ 286-318; Ալիկյան, 1949, էջ 227-270:

²²⁴ Օրինակ, Ն. Ալիկյանը չի վկայություն Փարգեմոս Ըոռնաչու և Գևորգ Սարգսի վկայությունների, չի կրում Շքավերթի և Արձանիքի մեկնազարդ արձանագրությունների մասին, որոնք նայածի էին վերաբերված աշխատանքների երեսուցարկությունից շատ առաջ ...

մուրթունք»: Հայկական գրին նվիրված բաժնում նա, հիշատակելով մատենագրական տեղեկություններն ու որոշ ուսումնասիրողների կարծիքները, միանշանակորեն մերժում է ոչ միայն նախամաշտոցյան հայ դպրության, այլև օտար գրերով հայալեզու դպրության գոյությունը: «Դանիելյան» զիրը նա համարում է արամեական, որը «արամեական» և «արմենական» բառերի շփոթության հետևանքով է համարվել հայկական²²⁵:

Հակոբ Մանանդյանը թեև հատուկ քննության առարկա չի դարձնում նախամաշտոցյան հայալեզու դպրության խնդիրը, սակայն Մեսրոպ Մաշտոցի կյանքին ու գործունեությանը նվիրված աշխատանքներում տեսակետ է հայտնում, որ միևնույն շրջանում հայերն ունեցել են միայն օտարալեզու գրականություն: «Դանիելյան» գրերը նա (հետևելով Ն. Մատին) համարում է IV դարում հայալեզու դպրություն ստեղծելու փորձ, որը կատարել են ասորի հոգևորականները՝ քարոզական նպատակներով²²⁶:

1906 և 1932 թթ. Սևանա լճի ավազանից հայտնաբերվեցին երկու արամեատառ քարակոթողներ, որոնք վերձանվեցին Անդրեյ Բորիսովի կողմից: Նա գտնում էր, որ դրանք արամեատառ, բայց ոչ արամեերեն արձանագրություններ են (նման կարծիք արդեն հայտնել էին Պ. Կոկովցևն ու Հ. Պերպլերյանը), որոնք պետք է կարդալ հնագույն հայերենով²²⁷:

Հովսեփ Օրբելին, մեկնաբանելով Ա. Բորիսովի վերձանությունը, արամեատառ կոթողները նույնացրեց Մովսես Խորենացու հիշատակած «Արտաշիսյան սահմանաքարերի» հետ՝ նույնպես եզրակացնելով, որ դրանք պետք է վերձանել հայերեն: Նա եզրակացրեց, որ այդ կոթողները նախամաշտոցյան հայ դպրության վկայություններ են և հայոց դպրության պատմությունը պետք է սկսել ոչ թե V, այլ Ք.ա. II դարից²²⁸:

Գարեգին Լևոնյանը հատուկ քննության առարկա է դարձրել «արտասահմանյան ամուսնադրերից մեկում» հրատարակված «ժայգական հին բարձրաքանդակը», որը ներքևի մասում ունի երկու տող գրություն²²⁹: Դա նույն վերոհիշյալ քանդակն է, որի մասին հաղորդագրություն է հրատարակվել 1903 թ. «Նոր դար» հանդեսում: Գ. Լևոնյանը կատարում է մի շարք հարցադրումներ, որոնց նպատակը մասնագետների ուշադրության հրավիրումն էր տվյալ քանդակապատկերի և, հատկապես, երկտող գրության վրա: Նա, մասնավորապես, գրում է. «Կարելի է ընդունել, որ քանդակապատկերն իսկապես հեթանոսա-

²²⁵ Գրիգորյան, 1940, էջ 69–75:

²²⁶ Հակոբ Մանանդյանի իր տեսությունը շարադրել է բազմաթիվ կրթագրականներում (Մատուցում, 1941: Մանանդյան, 1957: Մանանդյան, 1962: Մանանդյան, 1978), որոնցից մեկը կիսիք Փարին երկուսը՝ Մանանդյան, 1962, էջ 39–46: Մանանդյան, 1978, էջ 260–265:

²²⁷ Բորիսով, 1941, էջ 3: Եզրաձու, 1946, էջ 97–107: Այս մասին հանգամանորեն կետավ պատմաառարձանագրությունների բաժնում:

²²⁸ Օրբելու, 1941, էջ 4:

²²⁹ Հելլենական այդ հուշարձանի մասին տեղեկություններ չի հայտնում, քանիտ այդ մասին, ինչպես վերը նշեցինք. «Այբրիլագի» մանրատնով թղթակիցը հայտնաբերություն է հրատարակել «Նոր դար» հանդեսում դեռևս 1903 թվականին (Այբրիլագի, 1903, էջ 2–3): Քանդակի լուսանկարը տե՛ս Խաղիչիանում, նկ. 80:

կան դարերի գործ է... քայց իՆչպես հաշտեցնել այստեղ հայերեն գրերի առկայությունը, մի՞թե ուրեմն պիտի ընդունենք նրանց գոյությունը Մեսրոպից առաջ, կամ եթե իրոք Դանիելյան կոչված գրերն են դրանք, ինչո՞ւ են գրված ձախից աջ և ոչ աջից ձախ»: «Նեղինակը ենթադրում է նաև կեղծիքի տարբերակը, սակայն ավելի հավանական է համարում բնօրինակ լինելը՝ ավելացնելով այլ հարցադրումներ ևս: Օրինակ՝ նա նշում է, որ արձանագրության նշանագրերը նման են VI–VII դդ. հուշարձանների հայկական տառանձևերին, քայց միաժամանակ շեշտում է, որ երկտող գրության մեջ կան տատեր, որոնք չկան մաշտոցյան այբուբենում»²³⁰:

Արտաշես Կարինյանը հայկական նախաքրիստոնեական թատրոնին նվիրված հոդվածում կողմ է արտահայտվում նախամաշտոցյան դպրության գոյության խնդրին՝ գտնելով, որ հայկական հնագույն թատրոնի ուսումնասիրությունը կարող է լուսաբանել հայ հին գրականության չլուծված հարցերը. «Անուղղակի կերպով – հակառակ մի քանի բանասերների համառ թերահավատությանը – այդօրինակ հետազոտությունը կարող է հաստատել այն, որ հեթանոս արվեստի կողքին հայերը տեղի են իրենց ազգային հեթանոս գրականությունը»²³¹:

Արշակ Ալպոյանյանը, վկայակոչելով քազմաթիվ մատենագական տեղեկություններ, ընդունում է նախամեսրոպյան դպրության և կրթական զարգացած համակարգի գոյությունը: Սակայն նա, ակնհայտորեն, զերգանահատում է հունարենի դերը՝ պնդելով, թե նախամաշտոցյան դպրության, այդ թվում, տեղական մեհենագրության լեզուն եղել է քաջառապես հունարենը, իսկ IV դարից սկսած՝ նաև ասորերենը²³²:

Գեորգ Գոյանը ևս ընդունում է միջմեսրոպյան հայալեզու դպրության գոյությունը, շեշտելով հայոց դիցարանում դպրության աստծո առկայության փաստը: Նա գտնում է, որ նախամեսրոպյան շրջանում հայերը կիրառել են ոչ միայն հունարենն ու արամեերենը (նաև ասորերենը և պահլավերենը), այլև արամեական այբուբենը՝ հարմարեցված հայոց լեզվին: Գ. Գոյանը հնարավոր է համարում նաև նախամաշտոցյան Հայաստանում հունարենին զուգահեռ հայերեն գրավոր դրամատուրգիայի գոյությունը²³³:

Կամիլա Տրևերը հավաքել և ի մի է բերել նախամաշտոցյան Հայաստանից հայտնաբերված իր ժամանակ հայտնի հունարեն, արամեաստառ և լատիներեն բոլոր արձանագրությունները՝ հանգամանորեն ներկայացնելով դրանց ուսումնասիրության պատմությունը: Նա գտնում է, որ հայերը չորրորդ դարից առաջ, չունենալով սեփական այբուբեն, «օգտվել են օտար գրերից՝ հարևան այն ժողովուրդների այբուբեններից, որոնց հետ նրանք քաղաքական կամ մշակութային կապեր ունեին: Հայերի օգտագործած այդ գրերն են եղել սկզբում արա-

²³⁰ Անոյան, 1941, էջ 69–70:

²³¹ Կարինյան, 1941, էջ 50–54:

²³² Ալպոյանյան, 1946, էջ 1–43:

²³³ Տրև, 1952, էջ 429–453:

մեականը, իսկ հետո՝ հունականը և պարթևականը, այսինքն՝ փեղկի լեզվով գործածվող նույն արամեական գիրը»²³⁴:

«Նետևելով Ա. Բորիսովին և Հ. Օրբելուն՝ Կ. Տրևերը կարծիք է հայտնում, որ նախամաշտոցյան Հայաստանում արամեական այբուբենը հարմարեցվել է հայերենին, այսինքն՝ գոյություն է ունեցել նախամարտայան հայալեզու արամեատառ դպրություն»²³⁵:

Եղիա Քասունին հայ մշակույթի և հայ դաստիարակության պատմությանը նվիրված երկու մեկագրություններում միանշանակորեն մերժում է ոչ միայն նախամաշտոցյան հայ դպրության, այլև օտար գրերով հայալեզու դպրության գոյությունը, ընդունելով միայն հայ բանավոր զրականության առկայությունը: Հիշատակելով մատենագրական տեղեկություններն ու որոշ ուսումնասիրողների կարծիքները, նա գտնում է, որ մեհենական պատմությունները պետք է որ գրված լինեին հունարեն և ասորերեն, իսկ Երազամույնում գտնվող Տիր աստծո տանաքը եղել է մոզույան դպրոց, որի «ուսման լեզուն Չնեդերենի հետ Պահլաւերեն կամ Պարսկերեն պիտի ըլլար»: Ըստ Ե. Քասունու, «Դանիելյան» գրերը, որոնք հիմք են ծառայել Մեսրոպ Մաշտոցի այբուբենի համար, «աղագրական նշաններ» էին, «որոնցմով թարգմանիչները Ս. Գրոց քնագրի օտարալեզու (մանսուանդ ասորերեն) ձևազիրներուն վրայ տողընդմէջ հայերեն թարգմանութիւնը կը նշանակէին՝ իրենց յիշողութեան օգնելու համար»²³⁶:

Բարձր գնահատելով Ե. Քասունու կատարած աշխատանքը, նշենք, որ նրա դիտարկումները մեհենական պատմությունների, Երազամույնի դպրոցի լեզուների և «Դանիելյան» գրերի մասին բավարար հիմնավորված չեն:

Կարելի է ասել, որ հայ իրականության մեջ ախտարական գրականության ուսումնասիրությունը գիտական հիմքերի վրա է դրել Հակոբ Անասյանը: «Հայկական մատենագիտություն» հանրագիտարանային աշխատության էջերում ախտարական գրականության և դրա մասը կազմող հմայագրության մասին նա գրում է. «Ախտարական նյութերը մեր գիտական գրականության մեջ դեռևս պատշաճ ուշադրության անարկա չեն եղել, մինչդեռ նրանք լայն հնարավորություններ են տալիս պատմական-հասարակական երևույթների ուսումնասիրության համար: Ախտարական նյութերի մեջ կան մարդկային հասարակության հասկացողություններն ու պատկերացումները դեռևս նախնադարյան շրջանից... Մենք հայերեն ախտարական գրվածքները խոշոր քաժանամար վերածել ենք երկու խմբի. առաջինի մեջ դասավորել ենք նկարագրական և աղոթքական բնույթի բնագրերը (ախտարական գրույցներ, երդմանցուցիչ բանաձևեր, աղոթքներ), իսկ երկրորդի մեջ՝ գուտ բժժական բնագրերը (ախտարական տոմսեր կամ գրեր)»: Հ. Անասյանը ներկայացնում է նյութերի ու գրականության հանգամանալի ցանկ, բերում հմայական

²³⁴ Тревэр, 1953, էջ 97–293, աղ. 68–90:

²³⁵ Тревэр, 1953, էջ 162–174:

²³⁶ Քասունի, 1954, էջ 108–111, 166–181, 216–227, 262–270, 271–274, 315–318; Քասունի, 1959, էջ 12–16:

գրերի (հեղինակը դրանք անվանում է «ծածկագիր նշաններ») մի քանի օրինակներ, և, թեպետ դրանց ուսումնասիրությամբ նա չի զբաղվել, սակայն նրա կատարած աշխատանքը կարևոր հենք դարձավ հետագա ուսումնասիրությունների համար²⁷⁷:

Առաքել Առաքելյանը վկայակոչում է իրեն հայտնի նախամաշտոցյան վիճակի հուշարձանները, հանգամանորեն ներկայացնում հայ մատենագիրների երկերում եղած տեղեկությունները մինչամաշտոցյան գրավոր ժառանգության վերաբերյալ, իրեն նախորդած ուսումնասիրողների կարծիքները, ինչից հետո ամփոփում է իր դիտարկումները տասներեք կետերով: Նա նշում է, որ Արտաշես Ա-ի օրոք գործածվել են արամեական, այնուհետև մինչև 387 թ. Հայաստանի բաժանումը՝ հունական գիրն ու լեզուն: Բաժանումից հետո արևելյան Հայաստանում գործածվել են պարսկերենն ու ասորերենը, իսկ արևմտյանում՝ հունարենը: Պաշտոնական գրագրությանը զուգահեռ մեխյաններում կիրառվել է հայկական մեհենական գիրը, իսկ Մաշտոցի գյուղից առաջ հունարենին զուգահեռ կիրառվել են «Դանիելյան» գրերը, որոնց ծագման մասին հեղինակը ձեռնպահ է մնում կարծիք հայտնելուց: Նա եզրակացնում է. «Մետրոպոլիտանից առաջ թե՛ «հեթանոս» Հայաստանում և թե՛ «քրիստոնյա» Հայաստանում գոյություն է ունեցել 2 տեսակ գիր՝

- ա) տեղականը, մայրենին, հայկականը, որ հայ ժողովրդի սեփական ստեղծագործության արդյունքն է եղել ու մասսայականը, հասկանալին,
- բ) հունականը, որ բնիկ ժողովրդականը չի հանդիսացել»²⁷⁸:

Հին և միջնադարյան Հայաստանի մաթեմատիկայի պատմության լավագույն մասնագետներից Գարեգին Պետրոսյանը գտնում է, որ «Հայաստանում նախամետրոպոլիտանական ժամանակաշրջանում գոյություն է ունեցել հայերեն լեզվով գրականություն... Մեր կարծիքով, անկասկած պետք է համարել նաև այն, որ Հայաստանում նախամետրոպոլիտանական ժամանակաշրջանում գոյություն է ունեցել թվարկության մի որոշ սխեման, հավանական է՝ դա եղել է այբբենական սխեման»²⁷⁹:

Մանուկ Աբեղյանը չի ընդունում նախամաշտոցյան հայալեզու դպրության գոյությունը²⁸⁰: Դրանով հանդերձ, նա չի քաջադուռ, որ «Մետրոպոլիտանական գրե-

²⁷⁷ Անասյան, 1959, էջ 424-467: Ծավով պետք է նշել, որ կորոշակի բացառիկ աղբյուրի աշխատության միայն երկու հատորներն են կրաստացավել իտերիզացիոն իշխանության տարիներին, ևս մեկ հատոր՝ Հայաստանի անկախացումից հետո (հասցնելով «Գ» տառով սկսող բառադրվածների կետին), իսկ մյուս հատորները տակալին մնում են անտպալ...

²⁷⁸ Առաքելյան, 1959, էջ 44-48, 165-215: Նշենք, որ մեծածախալ այս քննության մեջ կան նաև վիճարկման: Օրինակ՝ էջ 48-ում նա որպես արամեական մեհենական գրի նմուշ է ներկայացնում Եզրալիտի ցարսոր չվերծանված երկուդղ արձանագրությունը, կամ էջ 167-ում, խոսելով Բարդուխանի՝ Անիի մեհենական պատմությաններից առերեմն, ապա հունարեն թարգմանելու մասին, ստանջ էմմանգործան գրում է. «Այս նշանակում է, որ գրված է եղել հայերեն, բայց, ինքսկի, հունական տառերով», ինչը համառոտ է հենց իր անվտանգ եզրակացությանը:

²⁷⁹ Պետրոսյան, 1959, էջ 37-38:

²⁸⁰ Մանուկ Աբեղյանը խնդրի կկատմամբ իր զիջողությամբ հայտնել է մի շարք կրաստացավումներում: «Մետրոպոլիտանական գրե-» վերաբերյալ իր էմմանգործան աշխատանքը

րից ստաջ փորձած լինելն գրել կամ լույսիկակ գրած լինելն որևէ բան հայերեն լեզվով, բաց այլ լեզուների էջանագրերով»²⁴¹:

Մխիթարյան հայրերից Կյուրեղ Քիսրայանը միանշանակ մերժում է ոչ միայն հայերեն, այլև օտար գրերով հայալեզու դպրությունը՝ գտնելով, որ նախամաշտոցյան հայ գրականությունը եղել է բանավոր, իսկ գրավոր ժառանգությունը՝ միայն օտարալեզու²⁴²:

Մինչմետրոպոլիտան հայալեզու դպրության գոյության ամենաշեղծ կողմնակիցներից է Աշոտ Աբրահամյանը²⁴³, որը հատկապես այքի ընկավ XX դարի երկրորդ կեսին նախամաշտոցյան հայ գրի ու գաղանթության շուրջ ծավալված երկարամյա բանավեճում: Նա, հանգամանորեն քննարկելով մատենագրական տեղեկություններն ու նախորդ ուսումնասիրողների տեսակետները, եզրակացնում է, որ նախամաշտոցյան Հայաստանում գոյություն է ունեցել հայալեզու օտարագիր դպրություն. «Եթե դիվանագիտական հարաբերությունների համար օգտագործվել է հունական և արամեական գիրը և լեզուն, ապա ներքին կարիքների համար գործ են անվել հունական և արամեական տառանիշերը հայերեն գրելու համար»: Ա. Աբրահամյանն ընդունում է հնագույն շրջանում գաղափարագրության (հիերոգլիֆիկայի) կիրառությունը, որի վերապրուկները կարող էին պահպանված լինել հմայագրության և «Նշանագիրը իմաստնոց» ցանկերի մեջ: Նա շեշտում է, որ հայոց քրմության և մեհենական դպրության գիրը եղել է արամեականը, որն էլ եղել է հենց Դանիել Ասորու մոտ պահպանված գրահամակարգը: Իր տեսությունը հիմնավորելու համար հեղինակը վկայակոչում է նաև նախարհիստոնական Հայաստանում աստղագիտական-տոմարագիտական մտքի բարձր մակարդակի, ոսկեդարյան հայերենի լեզվի բացառիկ հղկվածության և բազմաթիվ այլ տվյալներ²⁴⁴:

Գնահատելով հեղինակի կատարած կարևոր աշխատանքը (հատկապես «Նշանագիրը իմաստնոց» ցանկերի ուսումնասիրության ոլորտում, որին կանդորադատնանք համապատասխան բաժնում), ևչնք, որ, այդուհանդերձ, բավարար չափով հիմնավորված չէ հայոց քրմության ու մեհենական դպրու-

նա հրատարակել է Կոլոյնի «Նաք Մաշտոցի» երկ մի քանի տպագրությունների անոտագրանում, նաև իբրև առանձին հոդված՝ «Մտվտական գրականություն» անագրում (1941, թիվ 1, էջ 47-51: թիվ 2, էջ 41-51), ապա 1962-ին յույս տեսած «Մխարոյ Մաշոց» հոդվածների ժողովածուում (Արևշյան, 1962, էջ 242-305), որին էլ կաննեք մեր հղումները: Բառացիորեն նույն մտքերը Մ. Արևշյանն արտահայտում է նաև «Նաքոց ինն գրականության պատմության» Գ հատորում (Արևշյան, 1968, էջ 84-93):

²⁴¹ Արևշյան, 1962, էջ 250-256:

²⁴² Քիսրայան, 1992, էջ 27-49, 59-60 (զգրի ստաջին հրատարակությունը եղել է 1944-ին):

²⁴³ Աբրահամյան, 1941, էջ 41-52; Աբրահամյան, 1948, էջ 12-21, 37-42, 87-98; Աբրահամյան, 1959, էջ 17-46, 56-62, 139-173; Աբրահամյան, 1963, թիվ 4, էջ 131-44; Աբրահամյան, 1969, թիվ 1, էջ 27-36, Աբրահամյան, 1973, էջ 13-26: Չժմանվորքին նվիրված ինդիակի ուսումնասիրությունների հավաքածուսը եղավ նրա հատուկ մնացորդությունը՝ Աբրահամյան Ա. Գ., Նախամաշտոցյան հայ գիր և գրություն, Ե., 1982:

²⁴⁴ Ճեղնակի իմանական եզրակացությունները տես Աբրահամյան, 1982, էջ 143-145:

թյան՝ արամեագիր լինելու վարկածը²⁴⁵: Երբեմն հեղինակի մոտ առկա են փաստական անճշտություններ²⁴⁶:

Սեպագրագետ Նշան Մարտիրոսյանը, միանշանակ կողմ է արտահայտվում Մեսրոպ Մաշտոցից առաջ հայերի գիր և գրականություն ունենալու խնդրին՝ դրա համար մատենաչելով բավականին հին սկզբնաղբյուրներ: Նա վկայակոչում է խեթական աղբյուրների հաղորդումները հայկական հնագույն թագավորություններից մեկի՝ Հայասա-Ազգիի արքունի գրագրության մասին՝ եզրակացնելով, որ մեր նախնիները սեփական գիր ու դպրություն են ունեցել դեռևս Ք.ա. XV–XIII դարերում: Նա ենթադրում է, որ Հայասա-Ազգիում կարող էին կիրառվել իրենց լեզվին հարմարեցված սեպագիր, ինչպես նաև «իրենց դրացի և զաշնակից եղող Պալացիներուն վերագրուած պատկերագրերը գործածած ըլլան սեպագիրէն զատ, իրենց լեզուն նշանակելու համար, ճիշտ այնպէս՝ ինչպէս ըրած են փոքրասիական ուրիշ ազգեր»²⁴⁷:

Մերոք Ղազարյանը հայոց գրական լեզվի պատմությանը նվիրված մենագրության մեջ նախ ներկայացնում է նախամաշտոցյան հայ դպրության կողմնակիցների տրամաբանական փաստարկները՝ չորս կետով, ապա վկայակոչում դրան վերաբերող մատենագրական տեղեկություններն ու հայագետներից մի քանիսի դիտարկումները, ի վերջո եզրակացնելով. «Հայաստանում հինգերորդ դարից առաջ տեղեկված չեն եղել հայերենի հեյտնակրան համակարգը արտացոլող, հայերենի համար պետքական նշանագրեր, հետևաբար չի եղել հայերեն գրելով գրի տեսված գրականություն»: Նա միաժամանակ չի բացառում, որ Մաշտոցի գյուտից առաջ հունական, պարսկական և ասորական գրերով գրած լինելն նաև հայերեն, իսկ «Դանիելյան» գրերին վերագրում է ասորական ծագում հետևելով Ղ. Աղայանի տեսակետին, որը քննադատել էր Հր. Աճառյանը²⁴⁸:

XX դարի երկրորդ կեսին ծավալված վերոհիշյալ բանավեճում Աշոտ Արսահանյանի ամենագործուն ընդդիմախոսը եղավ Էդուարդ Աղայանը, որը խնդրին անդրադարձավ ոչ միայն հողվածով, այլ նաև առանձին զրքով²⁴⁹: Նա, բոլոր հիմնական հարցերում հետևելով Հր. Աճառյանին, հանդես է գալիս իր իսկ ձևակերպած հետևյալ հիմնադրույթներով.

²⁴⁵ Հեղինակը, ինչպես նշվեց, Դանիել Ասրուտ մոտ պահպանված գրածանակարգը ևս համարում է սքամնական, թեպետ ժամանակին համոզմունք էր հայտնել, որ այն տեղեկվել է հունական ստատաներից, բայց այսօր էն է եղել 24 նշանից, որոնց ևս 12-ը հավելելով՝ Մեսրոպ Մաշտոցը ստացել է իր երբ այդտեղն (Արսահանյան, 1948, էջ 22–36; Արսահանյան, 1959, էջ 56–62; Արսահանյան, 1963, էջ 137–144):

²⁴⁶ Օրինակ՝ Ա. Արսահանյանը Արմավիրի մեծնազիր արձանագրության հայտնաբերող է համարում «Հարություն Մարտիրոսյանին (1973 թ. թվյա տեսած նրա մեծնագրությունը բնագրվելիս), այն դեպքում, երբ այն հայտնաբերվել է շատ ավելի վաղ՝ 1927 թ. Ա. Տեր-Ավետիսյանի դիմադրած պեղումների ընթացքում: Հեղինակը, բյուրիմացաբար, Ավետիսյանի գտնված բնագրից համարում է Կրդուրիցից հայտնաբերված (1948-ի սքամնատեսա արձանագրությունների բաժնում): Հելլոդ ուսումնասիրությունների վերնագրերում կան բազմաթիվ անճշտություններ...»

²⁴⁷ Մարտիրոսյան, 1959, էջ 131–134: Նույն տեսակետը հեղինակը հայտնում է նաև Մամբրույում թյա տեսնող «Մարմարա» թերթի 1963 թ. հունվարի 23-ի համարում տպագրված «Սեպագիր կիրառումը մեր նախնեաց մոտ՝ Մ. Մեսրոպյան առաջ՝ հողվածում:

²⁴⁸ Ղազարյան, 1961, էջ 129–140:

²⁴⁹ Աղայան, 1969, էջ 33–40; Աղայան, 1977:

1. Մարոպ Մաշտոցից առաջ հայակեզու մատենագրություն չի եղել, եղել է միայն օտարաղեզու և օտարազիր գրականություն, որը հայոց գրավոր մշակույթի անբաժան մասն է,

2. «Դանխեցան» գրերը հայկական գրեր չեն,

3. Մաշտոցը չի օգտագործել այդ գրերն իր այրուբերը հորինելու համար:

Մենք չենք քննարկի այս բանավեճի մասնակիցների փաստարկներն ու փոխադարձ մեղադրանքները: Ինչպես նշեցինք առաջաբանում, մեծ հաշվով այս բանավեճը մնաց անպտուղ և փակուղի մտքրեց քննարկվող հարցի ուսումնասիրությունը: Ափսոսանքով պետք է նշել, որ բանավիճող երկու կողմերն էլ ցուցաբերում էին կողմնակալություն՝ հօգուտ սեփական տեսակետի հիմնավորման, ինչի բացակայության դեպքում բանավեճն, անշուշտ, ավելի շահեկան կլիներ: Օրինակ, զարմանալի է, երբ վաստակաշատ բանասերները (այդ թվում է. Աղայանը) բացառում են մեհենագրերով (գաղափարագրերով, հիերոգլիֆներով) դպրություն ստեղծելու հնարավորությունը՝ համարելով, որ դրանք կարող էին ծառայել միայն կրոնական նեղ պահանջներին. «Մենք ընդունում ենք, որ նախադրիստոնեական Հայաստանում գոյություն են ունեցել միայն մեհենական գրեր. դրանք ծառայել են կրոնական պահանջներին և ոչ մի դեր չեն խաղացել հայկական գրականություն ստեղծելու, հայ գիր ու գրականություն ունենալու տեսակետից»²⁰⁰: Չարմանալի է նման պնդումը, քանի որ Հին Աշխարհի մինչ օրս վերածանված բոլոր գրահամակարգերում էլ միևնույն նշանները ծառայում էին թե՛ նեղ կրոնական պահանջներին (աղոթքներ, հմայական բանաձևեր, կախարդանքի ու գուշակությունների զանազան տեքստեր), թե՛ դրանցով ստեղծվում էին գրական, պատմագրական և այլ բնույթի հուշարձաններ: Այդպես է և՛ շումերական, և՛ եգիպտական, և՛ հին արադական, և՛ ասուրա-բաբելոնյան, և՛ խեթական, և՛ խուրիական, և՛ ուգարիթյան, և՛ հին եբրայական, և՛ այլ դպրությունների պարագայում. ինչո՞ւ միայն հայկականը պետք է բացառություն կազմեր՝ մնալով զուտ հմայական-կախարդական գործառնության շրջանակներում... Անհասկանալի է նաև, երբ մեր հեղինակները գրի զարգացումը պատկերացնում են պարզ գաղափարագրություն (զուտ բառագրություն) – վանկագրություն – տառագրություն ճանապարհով, մոտանալով, որ զուտ բառագրության և վանկագրության միջև կա բառավանկային կամ գաղափարահնչյունագրային մեծ փոլը, որում ևս գրում էին միայն գաղափարագիր-մեհենագրերով: Վերջիններս գործածվում էին և՛ որպես բառ-գաղափարանշան, և՛ իրրև վանկ (ընթերցվում էր միայն բառի սկզբնավանկը, ինչի պատճառով էլ այդ երևույթը գիտության մեջ կոչվում է «ակրոֆոնիա»): Բառավանկային կամ գաղափարահնչյունագրային էին Հին Արևելքում կիրառված բոլոր հիերոգլիֆ և սեպագիր գրահամակարգերը, ուստի այստեղ ևս բացարձակա-

²⁰⁰ Աղայան, 1969, էջ 40; Աղայան, 1977, էջ 95–97, 195–198:

պես անհիմն է ենթադրելը, որ հայկական մեհենագրությունը պետք է բացառություն լիներ²⁵¹:

Էմանուել Պիվազյանը նախամաշտոցյան հայալեզու դպրության շուրջ ծավալված բանավեճի գլխավոր դեմքերից է, ով բուռն կերպով դեմ էր արտահայտվում նման դպրության գոյության հնարավորությանը: Ծեշտելով, որ «Մաշտոցից առաջ հայերեն տառերով գրի տեղաված ո՛չ մի տող, ո՛չ մի բառ գոյություն չունի», նա մերժում է նաև օտար գրերով հայալեզու դպրության գոյությունը (հնարավոր համարելով օտար այբուբեններով հայերեն գրելու փորձերը), ընդունում է միայն նախամաշտոցյան օտարալեզու գրականության փաստը: Է. Պիվազյանը համոզմունք է հայտնում, որ «Ղանիկեան» գրերը հայալեզու չէին և Մեսրոպ Մաշտոցը որևէ կերպ դրանք չի օգտագործել իր այբուբենը ստեղծելիս²⁵²:

Հայկազ Ժամկոչյանը գտնում է, որ նախամեսրոպյան շրջանում օտարալեզու գրականությանը զուգահեռ գոյություն է ունեցել հայալեզու դպրություն: Ընդ որում, նա հավանական է համարում, որ հայկական մեհենական նշանագրերը «նաստացական գործածության համար չեն եղել, այլ, ինչպես Եգիպտոսում և այլ երկրներում, ունեցել են կատասցական բնույթ, դրանց ծանոթ են եղել միացն քրմերը և դրանցով գրվել են բացառապես կրոնական գրքեր և մեհենական տարեգրություններ: Հայերեն լեզվով աշխարհիկ լուսնոչափություն ունեցող երկեր, բանատեղեղություններ, երգեր, նամակներ և զանազան գրություններ գրելու համար հայերը օգտագործել են արամեական, պարսկական և հունական տառերը»: Հեղինակի կարծիքով՝ հայերեն են գրված եղել Ուլյունայ քրմի և Բարդաձանի թարգմանած մեհենական պատմությունները, նաև «Հխսումն Պիտոցի» երկը²⁵³:

Գուրգեն Սևակը ևս տեսականորեն անհնար է համարում նախամաշտոցյան գրի չգոյությունը. «Անկարելի է պատկերացնել, որ արդեն այդ ժամա-

²⁵¹ Ավերյաններ, որ ինչպես նախամաշտոցյան հայալեզու դպրությունը չընդունող գիտնականների մեծագույն մասը, է Մեսրոպը ևս իզուր իր տեսակետի փաստարկ է բերում կրթական վերադարձների բացակայությունը, ինչը բացարձակապես չէր համարաբանաբանում լրջանական: 1977 թվականից առաջ հրատարակվել էին հնագիտական պեղումներից հայտնաբերված մեծ թվով մեհենագիր արձանագրություններ և մանաշաններ, որոնք թվագրվում էին «նախ բացալվորության և նախաքրդ դարաշրջաններով: Դրանց մասին ուսումնասիրություններ էին հրատարակել Ի. Մելանիկեանը, Բ. Պիտոբախյանը, Լ. Բարսեղյանը, Հ. Մարտիրոսյանը, Ռ. Բարսեղը և ուրիշներ, որոնց աշխատանքները հեղինակն անզուս է ինչուստակում: Ծավոք, վերաբերել հայտնաբերված նոր կրթության ուսումնասիրելու, մեր գիտնականները թափարկվում էին արդեն վարդաջ հայտնի և բազմիցս քննարկված միևնույն մասնագրական տեղեկությունների անպատշաճ փոխանցումներով սա կարելի է ասել ինչպե՞ս բանավեճի յուր մասնակցների մասին...

²⁵² Պիվազյան, 1962, էջ 153–70; Պիվազյան, 1963, էջ 285–324; Ծավոք, էջ Պիվազյանին ևս բնորոշ է կանխադաս պատմադրությունը, ինչի դրսևորումներից մեկն էլ հեղինակի կողմից կնքադիվներով հարուստ գրականություն ստեղծելու հնարավորության բացառումն է: Ծարձակ է հարուցում անգամ նման հարցադրույթ. իսկ ինչո՞ւ են տեղեմել, օրինակ, էին կեղծական և խնդրանք հարուստ դպրությունները Հին Ալիարիում, կամ մինչ օրս ծաղկող չինական և ճապոնական հարուստ գրականությունը...

Նշելը, որ նախամաշտոցյան հայալեզու դպրության գոյության քննադատություն է Պիվազյանը և Վ. Հակոբյանը հանդես են եկել Ա. Արամյանի «Հաղոց զիբ և գրություն» (Ե., 1973) գրքի գրախոսականում (Պիվազյան, Հակոբյան, 1975, էջ 205–207):

²⁵³ Ժամկոչյան, 1961, էջ 330–333; Ժամկոչյան, 1975, էջ 193–196; Ժամկոչյան, 2006, էջ 293–296:

նակ դարավոր մշակույթի տեր, պետականություն, քաղաքներ, արվեստներ և առևտուր ունեցող ժողովուրդները չունենային իրենց գրչությունն ու դպրությունը թեկուզ և օտար՝ ասորական, հունական, պարսկական գրերով կամ նրանցից սերված նշանագրերով»²⁵⁴։ Նա հատուկ ուշադրություն է հրավիրում Մեսրոպ Մաշտոցի հեղինակած երեք՝ հայոց, վրաց (խուցուրի) ու աղվանից այբուբենների և հարավ-սեմական գրերի նմանության վրա՝ ենթադրելով ծագումնաբանական կապ. «Աշխարհի բոլոր լեզուների գրերից հայ-վրաց-աղվանական գրերի պատկերին ու ոճին նման են միացն հարավային սեմական գրերը և գլխավորաբար՝ գրյուզ, արքամ, տաբա և ախմար գրերը, որոնք անկախաբար ծագած են փյունիկերենից և այդ ժամանակ արդեն իսպառ դուրս եկած գործածությունից։ Դրանցից միացն ախմարականը Եթովպիայում հարստուում է միջևե այսօր»։ Նա ենթադրում է, որ Դանիել եպիսկոպոսի մոտ եղած գրերը եղել են հենց հարավ-սեմական նշաններ, որոնցով երկու տարի աշակերտներին ուսուցանելուց հետո Մեսրոպ Մաշտոցն այնքան էր վարժվել դրանց, որ հենց դրանց ճճական և գծագրական տեսքով էլ հետագայում ստեղծեց հայոց, վրաց ու աղվանից այբուբենները²⁵⁵։

Նշենք, որ Գուրգեն Սևակի այս տեսությունը, որը հետագայում ունեցավ քիչ թվով հետևորդներ, հիմնված էր միայն նշանների արտաքին նմանության վրա, ինչը չի կարող բավարար հիմք լինել գիտական կարևոր խնդրի լուծման համար։ Ճիշտ չէ հեղինակի այն պնդումը, թե Մաշտոցի ժամանակ հարավ-սեմական գրերը (բացի ախմարականից) մոտացված էին²⁵⁶, առավել անհավանական է այն ենթադրությունը, թե Դանիել եպիսկոպոսի մոտ պահպանվածները եղել են հարավ-սեմական գրեր, որոնք համարվել են հայկական «արմին, արամն, արամ անունների շփոթության հետևանքով»²⁵⁷։ Այդ անունների շփոթության հետևանքով ավելի հավանական է, որ հայկական համարվելին արամեական, այլ ոչ թե հարավ-սեմական գրերը։

«Հինգերորդ դարի հայ դպրություն» մենագրության մեջ Աշոտ Ալուրյանը, հիմնվելով մատենագրական տեղեկությունների (հատկապես դպրության Տիր աստծո մասին հիշատակության) և ոսկեդարյան հայերենի բացառիկ մշակվածության փաստերին, ընդունում է նախաքրիստոնեական հայալեզու ինքնուրույն դպրության գոյությունը, որն արգելվեց քրիստոնեական եկեղեցու կողմից, ուստի և IV դարում «ուսումն ու դպրությունը գերազանցորեն եղել են կրոնական, այն էլ օտար լեզուներով»²⁵⁸։ Իսկ «Դանիելյան» նշանագրերը հեղի-

²⁵⁴ Սևակ, 1963, էջ 193։

²⁵⁵ Սևակ, 1962, էջ 44-54; Սևակ, 1963, էջ 163-205։ Գ. Սևակը ուշադրություն է հրավիրում նաև հայկական միջնադարյան մեսագրերում պատկանած «Լախապաղանկերան», «Լախապաղանկան» և «Լախամաղարայան» անունները կրող ծածկագրերի վրա՝ ենթադրելով, որ չի բացառվում, որ դրանք ունենան նախամաշտոցյան ծագում, տե՛ս Սևակ, 1963, էջ 206-208։

²⁵⁶ Այդ վնասը մատուցույց է տեսնում հենց այս տեսության հեղինակը Գ. Օրբելովն՝ շեղվելով, որ հարավ-սեմական գրերը ոչ միայն մոտացված չէին Մաշտոցի ժամանակ, այլև այդ գրերով դպրությունը ծաղկում էր ապրում Եթովպիայում (Օռաբորե, 1975, էջ 207-217)։

²⁵⁷ Սևակ, 1962, էջ 51-54։

²⁵⁸ Ալուրյան, 1968, էջ 85-95։

նակը համարում է հայերենի հետ կապ չունեցող և գտնում, որ Մաշտոցը դրանք բնավ չի օգտագործել իր այբուբենը ստեղծելիս²⁷⁹:

Նիկոլ Աղբալյանը հայ գրականության պատմությանը նվիրված աշխատության էջերում չի ընդունում նախամաշտոցյան հայալեզու դպրության գոյությունը: Նա ընդունում է միայն օտարալեզու գրականության առկայությունը՝ շեշտելով, որ այն ստեղծողները եղել են նաև հայագիի հեղինակները²⁸⁰:

Մկրտիչ Մկրչյանը գտնում է, որ «*գրիստոնեության մուտքից առաջ, հեթանոսական ժամանակներում, առաջին հերթին, մեհենական կենտրոններում գոյություն է ունեցել բախական լավ զարգացած գրականություն*»: Հեղինակը նաև հավանական է համարում, որ «*Դանիելյան*» գրերը «*հեթանոսության շրջանում գործածված գրեր էին*»²⁸¹:

Արզար Մովսիսյանը թեպես Մեսրոպ Մաշտոցին համարում է «*ժայգազիր դպրոցի հիմնադիրն ու առաջին ուսուցիչը*», այդուհանդերձ ընդունում է, որ «*ժայգերն ունեցել են նախամեսրոպյան գրականություն, մասնախանյո մեհենական գրականություն, սակայն անհայտ է մնում, թե ինչ տատելով է ստեղծված այդ գրականությունը: Բայց մի բան պարզ է ու անստարկելի, որ հայերը նախքան մեսրոպյան գրերը, դարձրել շարունակ, տարբեր ժամանակներում օգտագործել են սևապրեր, հունական, ասորական, պարսկյան ու դանիելյան տատերը, մեզ հայտնի բազմաթիվ տեսակի լեռնագրեր և ինչպես Խորենացին է ասում՝ «վաղընչուց գտնալ» գրերը*»²⁸²:

Նախամաշտոցյան Հայաստանի դպրության ուսումնասիրության գործում կարևոր աշխատանք կատարեց Լավրենտի Բարսեղյանը, որը հատուկ ուշադրություն հրավիրեց իր ժամանակ կուտակված հնագիտական նյութի վրա: Մասնավորապես, նա առաջինն արեց Վանի թագավորության մեհենագիր արձանագրությունների հավաքման և համակարգման փորձ՝ ի մի բերելով Թոփրաք կալեի և Կարմիր բլուրի նյութերը (բացի տարողության չափերի և կնիքների վրայի նշաններից): Նա հրատարակեց 97 նշան (61–ը՝ Թոփրաք կալեից, 36–ը՝ Կարմիր բլուրից), նշելով, որ իր հավաքած հիերոգլիֆների թիվը հասնում է 150–ի²⁸³: Հեղինակը եզրակացնում է, որ «Հայաստանում հիերոգլիֆն ապրել է զարգացման երկու ժամանակաշրջան: Առաջին ժամանակաշրջանի նմուշներին մենք հանդիպում ենք ուրարտական նյութական կուլտուրայի մնացորդների վրա, իսկ երկրորդ ժամանակաշրջանը, որտեղ անկասկած պահպանվել են ուրարտական, գուցե և խեթական հիերոգլիֆ գրի տրադիցիաները, համապատասխանում է արդեն Ք.հ. XIV–XVII դդ.»։ Լ. Բարսեղ-

²⁷⁹ Մկրտչյան, 1968, էջ 100–102:

²⁸⁰ Աղբալյան, 1970, էջ 284–292:

²⁸¹ Մկրչյան, 1976, էջ 70–77, 105–106; ան՝ս նաև Մկրչյան, 1963, էջ 135–136:

²⁸² Մովսիսյան, 1963, էջ 224, նաև՝ 214–215, 217:

²⁸³ Барсегян, 1967, էջ 85–90; Барсегян, 1964, էջ 48–51–ում հեղինակը կատարել է 134 նշաններից բաղկացած ցանկ, որում, սակայն, որոշ մեհենագրերի տարբերակները ներկայացված են իբրև ստանդին կյաններ:

յանը Յուլյանի արձանագրությունները թվագրում է Ք.ա. IX-VIII դարերով, իսկ Արմավիրինը՝ Ք.ա. II հազարամյակի վերջով²⁶⁴:

L. Բարսեղյանը առաջարկել է Կարմիր բլուրի բրոնզե թասերից մեկի յոթանիշ (այն ժամանակ՝ ամենամեծ) արձանագրության վերծանություն²⁶⁵: Ցավոք, այս փորձը լիովին անհաջող էր, քանի որ տվյալ արձանագրությունը Բ. Պիտոբովսկու կողմից հրատարակվել է գլխիվայր (տե՛ս ստորև, Վանի թագավորության մեհենագրության բաժնում):

Բարկեն Առաքելյանը թեև հատուկ ուսումնասիրություն չի նվիրել նախամաշտոցյան դարության խնդրին, սակայն ընդհանրացնող աշխատանքներում ընդունում է դրա գոյությունը՝ առանց մասնավոր հարցերի մեջ խորանալու. «Մեծիանները և քրմական դասը իրենց ձևերում էին կենտրոնացրել զիջը, գրականությունը, դպրոցն ու կրթությունը, քաղաքացիական ակտերի (ծնունդ, ամուսնություն, ընտանիք և ընտանեկան հարաբերություններ) կարգավորումն ու տնօրինումը, օրենքների սահմանումը, դատական իրավասությունը, գուշակությունն ու աստվածների առջև բարեխոսությունը, անգամ բժշկությունը, մի խոսքով, ողջ հոգևոր կյանքը»²⁶⁶:

Գևորգ Տիրացյանը հնարավոր է համարում, որ «ի՞նչ Հայաստանում գոյություն ունեցած լինեն ինքնուրույն նշանագրեր, որոնք գործ են ածվել հայկական մեծիաններում, և այդ նշանագրերի, ինչպես նաև, հայկանաբար, արամեական և հունական տառանիշերի օգնությամբ գրվող հայագեղա գրականությունն ինչպես մեծիանների շրջանակներում»: Նա միաժամանակ նշում է, որ «այդ հնագույն, բայց ըստ երևույթի սահմանափակ կիրառություն ունեցող նշանագրերի կողքին հայերն աստատորեն օգտագործում էին հարևան պետությունների գրերն ու լեզուները»՝ վկայակոչելով նախամաշտոցյան ժամանակաշրջանից հայտնաբերված հունարեն, արամեատառ և լատիներեն արձանագրություններն ու մատենագրական հաղորդումները²⁶⁷: Փաստորեն, Գ. Տիրացյանը հնարավոր է համարում և՛ հայալեզու մեհենագրության, և՛ օտարազիր հայերեն դարության գոյությունը:

Ճարտարապետ Սուրեն Պետրոսյանը, որ տասնամյակներ շարունակ զբաղվել է ժայռապատկերների ուսումնասիրությամբ, Ք.ա. IV-II հազարամյակներով թվագրվող ժայռապատկերներում առանձնացնում է մի մեծ խումբ նշանագրեր, որոնք կարող էին դառնալ նախամաշտոցյան դարության հիմքը: Միաժամանակ նա կարծիք է հայտնում, որ այդ նշանագրերը կարող էին դառնալ նաև մաշտոցյան այբուբենի հիմքերից մեկը²⁶⁸:

Աստուր Մնացականյանն ուշադրություն է հրավիրում միջնադարում տարածում ստացած տեղեկության վրա, ըստ որի՝ Մաշտոցն իր գլուտը կա-

²⁶⁴ Բարսեղյան, 1964, էջ 48-51:

²⁶⁵ Барсегян, 1961, էջ 238-244:

²⁶⁶ Տե՛ս, օրինակ, Առաքելյան, 1971, էջ 906: Հեղինակն ի մասնավոր չի անդադարում և կրթական գրերի ու լեզուների խնդրին:

²⁶⁷ Տիրացյան, 1971, էջ 907-915:

²⁶⁸ Պետրոսյան, 1971, էջ 4-5: Նույն տեսակետը հայտնվում է եղիմյանի՝ կենտրոնական օրոք անավարտ մնացած և հետմահու կրթաբարձրված զգրում՝ Պետրոսյան, 2005, էջ 5-30:

տարել է Բալուում, որտեղ առկա «գրման քարին» պահպանվել է Մենուա արքայի սեպագիր արձանագրությունը: Նա հակված է կապ տեսնելու հայաստանյան սեպագրի և մաշտոցյան երկաթագիր տառատեսակների միջև, որոնք ունեն ուղղազիծ նախաներ: <Նդիհակը նման կապի հնարավոր հիմնավորում է համարում Վանի թագավորության և միջնադարի հայկական թվարանական համակարգերի նույնականության մասին Գ. Պետրոսյանի ուսումնասիրությունը²⁶⁶:

Մեծամորի ժայռագիր նշանները (որոնց մասին առաջին տեղեկությունները հրատարակվել էին դեռևս 1913 թ.) ամբողջությամբ հրատարակվեցին միայն 1973 թվականին²⁷⁰: Հրատարակելով դրանք՝ Կոռյուն Մկրտչյանն ընդգծում է այդ նշանների, Վանի թագավորության մեհենագրերի և հայկական միջնադարյան ձեռագրերում պահպանվող նշանագրերի ընդհանրությունը՝ ակնկալելով, որ դրանք կդառնան հատուկ ուսումնասիրության նյութ²⁷¹: Յավոք, դա տեղի չի ունեցել մինչ օրս:

Մեծամորի նյութերի հետ Կ. Մկրտչյանն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց Թալինի ենթաշրջանի Կաբալաձոր գյուղի տարածքում գտնվող ջրի պաշտամուտքին նվիրված չափազանց ուշագրավ ժայռափոր մի հուշարձան՝ համեմատելով այն մեծամորյան համանման փորագրությունների հետ²⁷²: Դժբախտաբար այս կարևոր հուշարձանը ևս շարունակում է մնալ գրեթե անտեսված:

Նախամաշտոցյան զրավոր մշակույթի ծագման ու զարգացման ուսումնասիրության գործում շատ մեծ ավանդ ունի հնագետ Հարություն Մարտիրոսյանը: Նա զգալի աշխատանք է կատարել ժայռապատկերագրության ուսումնասիրության ոլորտում²⁷³, համադրել է նախնադարյան, բրոնզեդարյան, ուրարտական ժամանակաշրջանների և հայկական միջնադարյան նշանագրերը՝ հիմնավոր կերպով ցույց տալով, որ դրանք հայաստանյան պատկերագրության միևնույն ժառանգական շրջայի օղակներն են²⁷⁴: Նա եզրակացնում է, որ Հայաստանում Ք.ա. III հազարամյակում «արդեն ձևավորվել էին գրչության ամենազարգ տեսակները», որոնք հետագայում, իբրև գաղափարագրային համակարգ, կիրառվել են սեպագրի հետ զուգահեռ: Ավելի ուշ, չքա-

²⁶⁶ Մնացականյան, 1972, էջ 157–163: Կշեթը, որ ժամանակին Կարսպետ Բամաջյանը կարծիք էր հայտնել, թե մաշտոցյան այդպիսի կնքում կարող է ընկած քննել արևմտյան սեպագիրը: Այդ տեսակետը ես հայտնել է Ֆրիդրիխ Մյուլլերին ուղղված նամակում: Ի պատասխան Ֆր. Մյուլլերը նամակով հերքում է այդ վարկածի նկատարկությունը, ինչն ընդունում է Կ. Բամաջյանը: Ֆր. Մյուլլերի մտածանքն է հետևյալն է, Բամաջյանը կրատարակել է իրենց նամակագրությունը «Բազմախոր»-ում վերաբերելով այն «Մասկ մը Ֆրիդրիխ Մյուլլերի գերեզմանին վրա» (Բամաջյան, 1898, էջ 533–535):

²⁶⁷ Խանգուղյան, Մկրտչյան, Պալասյան, 1973, էջ 149–165, ազ. XXXI–XXXIV (շատի նեղնակ՝ Կ. Վ. Մկրտչյան):

²⁷¹ Խանգուղյան, Մկրտչյան, Պալասյան, 1973, էջ 163:

²⁷² Խանգուղյան, Մկրտչյան, Պալասյան, 1973, էջ 151–153, նկ. 151:

²⁷³ Ժայռապատկերների ուսումնասիրության ոլորտում երա աշխատանքի ամփոփումը տե՛ս, Խանգուղյան, Մարտիրոսյան, Իսախանյան, 1971 և Մարտիրոսյան, 1981 հատորներում:

²⁷⁴ Մարտիրոսյան, 1973, գիտատեսչամատչելի տարբերակով Մարտիրոսյան, 1978: Ուսումնասիրության ամփոփումն ու եզրահանգումները տե՛ս Մարտիրոսյան, 1973, էջ 68–70, ազ. XXIII (շատ Հ. Ա. Մարտիրոսյանի կազմել ենք մեր հավերժի մտ. 3–ը):

վարարելով «զարգացող երիտասարդ պետականության և համապատասխան զարգացման պահանջներին», դրանք աստիճանաբար լայն գործածության ասպարեզը զիջում են օտարազգի հնչյունային գրերին, իրենք սահմանափակվելով «մեխաններում» իրեն կրոնական հմայական գրչության ձև: Հեղինակի կարծիքով «նախնադարում ծագած նշանագիր զարգացրությունն, այսպիսով, անցնում է չորսհազարամյա պատմություն»²⁷⁵:

Գազիկ Մարգարյանն ընդունում է նախաքրիստոնեական Հայաստանում օտարալեզու (արամեերեն և հունարեն, III–IV դարերից՝ նաև ասորերեն ու պարսկերեն) գրականության փաստը, հայալեզու դպրության հնարավորությունը, անգամ շուրջ 500–ամյա պատմագրական անընդհատ ավանդույթի գոյությունը, իսկ «Դանիելյան» գիրը համարում է Մաշտոցից առաջ հայերեն գրելու փորձ²⁷⁶: Նա առաջ քաշեց ուշագրավ մի վարկած, ըստ որի՝ չորրորդ դարում ևս հայալեզու դպրությունը չի ընդհատվել, այլ արտահայտվել է հետերիոգրաֆիայի եղանակով: Վերջինիս համաձայն՝ օտարներից փոխառված գիրը կիրառվում էր բառերի նույն գծագրությամբ, սակայն կիրառողներն այն ընթերցում էին ոչ թե տվյալ լեզվով, այլ իրենց լեզվի նույնիմաստ բառով²⁷⁷: Ուշագրավ և տեսականորեն հնարավոր այս վարկածը, սակայն, ցայսօր չի հաստատվել չորրորդ դարով թվագրվող որևէ հնագիտական փաստով:

Նախամաշտոցյան գրի ուսումնասիրության գործում կարևոր ներդրում ունեցավ Ա.Ռոն Խաչիկյանը՝ չընդունելով հանդերձ միջմեսրոպյան դպրության գոյությունը՝ այդ հասկացության լայն ըմբռնմամբ: 1963 թ. հայկական հմայագրությանը նվիրված հոդվածով նա, փաստորեն, սկզբնավորեց հմայագրերի գիտական ուսումնասիրությունը, ինչի կարևորությունը տարիներ առաջ ընդգծում էր Հ. Անասյանը: Լ. Խաչիկյանը հիշյալ հոդվածում անում է ուշագրավ մի քանի դիտարկումներ. «Հ. Անատյանը, Մ. Արեղյանը, Հ. Մանանդյանը, Ստ. Մալխասյանը և այլ գիտնականներ, երբ ասում են, թե Մաշտոցից առաջ հայ գրականություն չի եղել, դրանով նրանք բնավ էլ չեն ժխտում պատկերագրերի կամ զարգացման գոյությունը Հայաստանում. այդ հարցը նրանց չի էլ հետաքրքրել... «Պրիմիտիվ մտքեր գրանցելու համար հեթանոսական ժամանակներում Հայաստանում կային, ուրեմն, ինչ–որ նշանագրեր (հավանաբար՝ զարգացման գրեր), որոնց դեմ երկար դարեր պայքարում էին հայոց եկեղեցու զարգացման գրերը... Եվ եթե Մաշտոցը, ծանոթ լինելով հմայագրերին, մայրենի լեզվով գրականություն ստեղծելու համար ստիպված էր տարիների տրևազան աշխատանքի գնում՝ ի նորո ստեղծել հայկական այբուբենը, այդ նշանակում է, որ հայկական հմայագրերը ի վիճակի չէին ծառայելու ժամանակի պահանջներին»²⁷⁸:

²⁷⁵ Մարտիրոսյան, 1973, էջ 69:

²⁷⁶ Մարգարյան, 1969 (ճ), էջ 122–126:

²⁷⁷ Շարուն, 1978, էջ 1–10 (նույնը՝ նաև Ֆրանսերեն); Շարուն, 1980, էջ 15–20; Մարգարյան, 2006, էջ 224–229:

²⁷⁸ Խաչիկյան, 1963, էջ 145–157; Խաչիկյան, 1995, էջ 15–27:

«Դանիելյան» գրքի հարցում Լ. Խաչիկյանը կրկնում է < Անառայանի կարծիքը, ըստ որի այն եղել է արամեական այբուբենը և սխալմամբ է համարվել հայկական՝ «արամեական» ու «արամյան» (հայկական) քառերի շփոթության պատճառով²⁷⁹:

Լ. Խաչիկյանն անդրադասնում է չորրորդ դարում ստեղծված օտարալեզու հայ գրականությանը, որի հիմնադիր է համարում Գրիգոր Լուսավորչին: Նա ի մի բերելով նաև իրենից առաջ այս ոլորտում կատարած ուսումնասիրությունները՝ մատնանշում է հունարենով և ասորերենով հայերի համար (մեծ մասամբ՝ հայերի կողմից) ստեղծված մի շարք գործեր, որոնք հինգերորդ դարում թարգմանվել են հայերեն²⁸⁰:

1973 թ. հրատարակված և 1988-ին վերահրատարակված «Մեսրոպ Մաշտոցը առաջ հայը գիր ունե՛ր» փոքրածավալ մենագրության մեջ Հրանդ Փափազյանը միանշանակ կողմ է արտահայտվում նախամաշտոցյան հայալեզու դպրության գոյության հարցին՝ գտնելով, որ այն եղել է արամեագիր (քանի որ Արտաշես Ա-ի ժամանակներից գտնվել են արամեագիր կտթողներ): Նրա կարծիքով, արամեական այբուբենը հարմարեցվել է հայերենին, որն էլ հենց «Դանիելյան» այբուբենն է: Միաժամանակ նա ենթադրում է, որ Մեսրոպ Մաշտոցը ավելացրել է 7 ձայնավոր և 7 «նմանաձայն»: «Մեսրոպ Մաշտոց, որ քաջ հելլենագետ էր, չհանեցաւ սեմական այբուբեններուն նման առանց ձայնաւորի գրուող հին հայ տառերուն եւ ուզեց յունականի նման եւ աւելի կատարեալ այբուբենով մը օժտել իր ժողովուրդը»²⁸¹:

Դմիտրի Օլդերոգեն, հետևելով Գուրգեն Սևակի տեսությանը, նախ կատարում է ճշգրտում՝ կապված Մեսրոպ Մաշտոցի ժամանակ հարավ-սեմական գրերի մոտացված չլինելու հետ, նշելով, որ Աբսումի եթովպական թագավորությունը IV-V դարերի սահմանագծին համարվում էր Բյուզանդիային և Սասանյան Գարսկատանին հավասարազոր թագավորություն, իսկ հայեթովպական մերձեցումը կարող էր տեղի ունեցած լինել միարևակ-քրիստոնեական հողի վրա, որին Մեսրոպ Մաշտոցը պետք է լավատեղյակ լիներ: Նա բերում է հայոց այբուբենի և եթովպական գրերի մի քանի համապատասխանության օրինակներ և նշում, որ իր դիտարկումներով՝ մաշտոցյան այբուբենի տառերից 22-23-ը ունեն լիակատար նմանակներ հարավ-սեմական գրերում²⁸²:

Հայկական ձեռագիր թախամաններին նվիրված ուշագրավ հետազոտության մեջ Ասյա Օդարաչյանը ևս գտնում է, որ հմայագրությունը ծագում է նախաքրիստոնեական ժամանակներից և կարող է կարևոր հիմք դառնալ միջմաշտոցյան դպրության ուսումնասիրության համար. «Գոյություն ունի հմայական նշանների մի խումբ, որն ունի ականայտ հիերոգլիֆային բնույթ:

²⁷⁹ Խաչիկյան, 1964 (ա), էջ 14-15; Խաչիկյան, 1995, էջ 48:

²⁸⁰ Խաչիկյան, 1964 (բ), էջ 301-330; Խաչիկյան, 1973, էջ 27-51; Խաչիկյան, 1995, էջ 28-44, 57-91:

²⁸¹ Փափազյան, 1988, էջ 13, 26:

²⁸² Омаепоpтe, 1975, էջ 207-217:

Դրանց մեջ կան նշաններ, որոնք զուգահեռներ ունեն բրոնզի դարի ժայռապատկերների, ինչպես նաև միջնադարյան հնագրական նշաններում: Դրանց ուսումնասիրությունը կարող է որոշակի լույս սփռել ինչպես միջմենսոպան ժամանակաշրջանում հայկական դպրության գոյության, այնպես էլ հայոց այբուբենի ձևավորման հետ կապված մի շարք այլ հարցերի վրա»²⁸³:

Արտաշես Մարտիրոսյանը, քննարկելով մատենագրական տվյալներն ու իրեն նախորդած ուսումնասիրողների աշխատանքները, եզրակացնում է, որ սկզբնապես գոյություն են ունեցել հայալեզու նշանագրեր («ուրարտա-հայկական նշանագրեր»՝ հիմք ընդունելով Հարություն Մարտիրոսյանի ուսումնասիրությունները), որոնք հետագայում իրենց տեղն են գիջել Արեմնեյան շրջանից Հայաստանում տարածում գտած արամեերենին և արամեական այբուբենին²⁸⁴: Ըստ նրա՝ արամեերենը հունարենի հետ միասին նախամաշտոցյան Հայաստանում կիրառվել է իբրև lingua Franca: Քննարկելով Լևոն Խաչիկյանի վերահիշյալ հոդվածը հմայագրերի մասին՝ Ա. Մարտիրոսյանը նախ հնարավոր է համարում, որ դրանք կարող էին լինել մեհենական նշաններ, բայց անմիջապես բացառում է, կարծելով, որ դրանք «վաղուց պետք է, որ ետ մղվեին արամեերենի կողմից և մոռացության տրվեին»: «Եղինակը բացառում է նաև «Նշանագիրք իմաստեղ» ցանկերում պահպանված նշանների կապը նախամաշտոցյան ժամանակների հետ: Ի վերջո նա եզրակացնում է. «Այդպես, վիմագրական և մատենագրական ոչ մի տվյալ չի կարող հուշել նախամաշտոցյան հայոց գրի մասին: Այն չկար»: IV դարի մասին խոսելիս նա համարում է, որ ողջ գրականությունը եղել է հունարեն և ասորերեն²⁸⁵: Իսկ «Դանիելյան» գրերի մասին պատմությունը համարում է հորինվածք՝ հենց Կորյունի կողմից, որը ստեղծվել է ասորական հոգևորականության դեմ պայքարի նպատակով²⁸⁶:

«Եղինակի կատարած աշխատանքի դրական կողմերը գնահատելով հանդերձ, պետք է նկատել, որ այստեղ ևս կրկնվում է հայագիտության մեջ տարածված սխալ նույնացումը «գիր» և «այբուբեն» հասկացությունների առնչու-

²⁸³ Հարավ-սեմական գրերի և Մեծադա Մաշտոցի այբուբենի կապի քննարկն փրչին ծավալան անընտարձը կատարելի Արեմնեյան եղիայանը՝ խնդրին նմրելով մի ամբողջ ժնաագրության (Եղիայան, 2005): «Եղինակն չի անդրադարձնում նախաբնիտենական ժամանակաշրջանում հայոց դպրության գոյության խնդրին: Նա նախ կարծիք է նայում, որ Դանիել եղիակույուց հայոց այբուբեն է ուղարկել 29 տաստեղց հաշվով-արքայական այբուբենը, որը որը ժամանակից համարվել է հայերենի հեղուկագրությանը յնամատակառայանող (Եղիայան, 2005, էջ 215-239): Իսկ Մեծադա Մաշտոցը, հեղուկագրությանը, որը ներկայում ծանոթացել է 182 կլանանոց գնեկ կրկուց գրանամակագրին (26 թառ Ա. Եղիայանի, Եղիակույու ծանոթացել է 182 կլանանոց գնեկ կրկուց գրանամակագրին (26 թառ Բ. Եղիայանի, որոնցից յուրաքանչյուրին միտնում էր 7 մայնակորներին մեկը (26 x 7 = 182), ինչի սրբապատկան, որոնցից յուրաքանչյուրին միտնում էր 7 մայնակորներին մեկը (26 x 7 = 182), ինչի սրբապատկան տեղեկություն էին լույս փանկեր, ստեղծել է իր գրանամակագրը, ինչով էլ պետք է բացատրել գնեկի և մաշտոցյան այբուբենի սկզբնու տեղանությունը (Եղիայան, 2005, էջ 121-184, 240-263): Օգտնառու, 1976, էջ 107-130: Ապագայելով և բարձր գնահատելով Հ. Անտոսյանի աշխատանքը սեփաբանական գրանամակության ուսումնասիրության ոլորտում, հեղինակը, զարմանալորեն, չի կիչատակում հեղուկագրության և նախամաշտոցյան դպրության կապին նմրված Լ. Խաչիկյանի 1963 թ. լույս տեսած վերոնշյալ հոդվածը:

²⁸⁴ Դրա համար նա կնք է ընդունում՝ Դիոդորոս Միվիլիացու վերոհիշյալ հարցորումը, որն, ինչպես կելից փրք, թյուրըմբռնման սրբույն է:

²⁸⁵ Մարտիրոսյան, 1982, էջ 18-66, 110-121:

²⁸⁶ Նույն տեղում, էջ 176-198:

թյամբ: Նա մի կողմից ընդունում է հայալեզու նշանագրերի գոյությունը՝ անգամ տալով դրանց «Հայկական» անվանումը (չգիտես որտեղից ենթադրելով, որ դրանք բավարար էին միայն հմայության և գուշակության համար), մյուս կողմից քացառում է «նախամաշտոցյան հայոց գրի» գոյությունը: Քննադատության չի դիմանում նաև հեղինակի տեսակետը հայկական մեհենագրության՝ արամեալեզու լինելու վերաբերյալ, որը չի հաստատվում ցայսօր հայտնի որևէ փաստով²⁸⁷:

Լևոն Միրիջանյանը «Հայ քանաստեղծության ակունքները» մեհագրության էջերում կարծիք է հայտնում, որ «հայկական դպրությունը, այն է՝ գրավոր մշակույթը, այդ թվում՝ զեղարվեստական գրականությունը, գոյություն ուներ դեռևս Ք.ա. VI դարում»: Միաժամանակ նշելով, որ «առայժմ փաստված միակ իրողությունն այն է, որ նախամեսոպոպյան դարաշրջանից մեզ չի հասել հայերեն գրով դպրություն», նա գտնում է, որ այն «օտարալեզու էր՝ գրված ոչ հայերեն, այլ արամեերեն, ասորերեն, պարսկերեն կամ հունարեն: Ինչ լնզվով էլ եղած լինի, դա վերաբերում է քուն հայկական կյանքին, Հայաստանի ներքին և արտաքին քաղաքական-հասարակական անցուդարձերին, հայկական մշակույթին և, ըստ այդմ էլ, հանդիսանում էր *հայկական ազգային դպրություն*»²⁸⁸:

Սերգեյ Մուրավյովն այն ուսումնասիրողների թվին է պատկանում, որոնք գտնում են, թե «Դանիելյան» այբուբենը ոչ թե անցյալում ստեղծված գրահամակարգ էր, այլ ստեղծվել էր հենց Դանիել Ասորու կողմից: Ելնելով երկաթագիր տառատեսակների ձևակազմական վերլուծություններից՝ Ս. Մուրավյովը առաջարկում է վերականգնել 24 տառանոց հինք-աղյուսակ, որն էլ, նրա կարծիքով, եղել է հենց Դանիել եպիսկոպոսի ստեղծած այբուբենը²⁸⁹: Նա չի ընդունում նախամաշտոցյան հայ դպրության գոյությունը:

Ընդունելով հանդերձ Ս. Մուրավյովի վերլուծության գրավությունը՝ նշենք, որ նրա մեկնաբանությունը համոզիչ չէ, քանի որ հիմնված է միայն տառաձևերի արտաքին վերլուծության վրա:

Ռաֆայել Իշխանյանը հնարավոր է համարում նախամաշտոցյան հայերեն գրի գոյությունը՝ գտնելով, որ «այս հարցն առայժմ մնում է քաց (թեև անձնական կարծիքս է, որ, այնուամենայնիվ, նախամաշտոցյան շրջանում ինչ որ ժամանակ հայերեն գրել ենք)»²⁹⁰: Անդրադառնալով Հայաստանի ժայթապատկերներում մաշտոցյան տառաձևերի նմանակներին՝ նա հավանական է համարում, որ դրանք կարող էին տպավորված լինել Մաշտոցի մտապատկերում, ապա վերարտադրվելին նրա մարում «հոգեկան տվյալանքի և երկունքի պա-

²⁸⁷ Լշենք, որ Ա. Մարտիրոսյանը ցուցաբերում է նաև որոշակի միասնամատչություն: Օրինակ՝ Գևորգ Ասորու վերոնիշյալ տեղեկությունը նա մեջբերում է՝ քաց թողնելով վերջին հատվածը (էջ 101–102), ըստ որի Գրիգոր Լուսավորիչը մատուկ հասակում սովորել է հայոց «գիրն ու թզուն» (Մեջբերում, 1970, էջ 190–191)...

²⁸⁸ Միրիջանյան, 1977, էջ 201–208:

²⁸⁹ Mouraviev, 1980 (a), էջ 55–85; Mouraviev, 1980 (b), էջ 87–111; գիտահանրամատչելի տարբերակ՝ Myrassen, 1985, էջ 83–102; Myrassen, 2006, էջ 132–138:

²⁹⁰ Իշխանյան, 1987, էջ 22:

հերին» և «ինչ որ ձևով օգնած լինել, սուկ նշաններ-նշանագրեր զծելու գործում»²⁹¹:

Նախամաշտոցյան հայ դպրությանը նվիրված հատուկ ուսումնասիրություն Գևորգ Ջահուկյանը չի հրատարակել, թեպետ մինչամաշտոցյան շրջանն իր աշխատանքներում, սովորաբար, անվանում է «նախագրային շրջան»²⁹²: Դրան զուգահեռ, պետք է նշել, որ Գ. Ջահուկյանը միանշանակ է համարում, որ նախամաշտոցյան Հայաստանում եղել է «վերքարբառային խոսակցական լեզու, որով հաղորդակցվել են տարրեր նահանգների ու գավառների ներկայացուցիչները, օրինակ, ընդհանուր զորահավաքների ժամանակ, հայտնվելով արքունիքում, կաթողիկոսի մոտ, եկեղեցական ժողովներում, դատի ժամանակ, զանազան հավաքներում, տեղից տեղ շրջող գուսանների երգերում ու գրույցներում և այլն, այսինքն՝ այն բոլոր դեպքերում, երբ հարկավոր էր բոլորին հասկանալի մի լեզու, ինչպես ասում են՝ «ստանդարտ լեզու»: Մենք հակված ենք կարծելու, որ մինչև գրաբարի հանդես գալը այդպիսի մի ստանդարտ լեզու պետք է գոյություն ունեցած լինի և անցած լինի զարգացման որոշակի ուղի. այլապես դժվար է բացատրել, թե ինչպես առաջին իսկ գրավոր հուշարձաններում առկա է բավականաչափ մշակված լեզվական վիճակ, որ մեզ հայտնի է «դասական գրաբար» (ըստ ռմանց՝ «սովեղաբանական գրաբար») անվան տակ»²⁹³: Նա միանշանակ էր համարում նաև Մեսրոպ Մաշտոցից առաջ հայերենի՝ գրավոր մշակման ենթարկված լինելը. «Գրական լեզվի բառապաշարը, ինչքան էլ աղքատ լինի, մի քանի, երբեմն մի քանի տասնյակ անգամ զերագանցում է յուրաքանչյուր բարբառի բառապաշար: Բարբառի միջին բառապաշարը սովորաբար հաշվում են 7-8 հազար. գրաբարի մեջ ավանդված բառապաշարը, այն էլ ոչ լիովին հայտնի, անցնում է 60 հազարից»²⁹⁴: Խնդրին՝ թե որ գրով կամ գրերով է մշակվել նախամաշտոցյան գրական լեզուն, Գ. Ջահուկյանը չի անդրադառնում:

Գ. Ջահուկյանը հանդես եկավ նաև «Կանի թագավորության սեպագիր արձանագրությունների ներածական բանաձևերից երեքը հայերենով ընթերցելու առաջարկով»²⁹⁵: Ի տարրերություն նման նախորդ վործերի, այն բավականին համոզիչ է ոչ միայն լեզվաբանական, այլև սեպագրության տեսակետից, թեպետ, ինչպես խոստովանում է հեղինակը, նրան չի հաջողվել հայերեն ընթերցել նաև ներածական բանաձևերին հաջորդող արձանագրությունների բուն հասկանալի:

Քննելով հիմնգրողը դարի հայ պատմիչների վկայությունները՝ Անդրանիկ Կոստյանը միանշանակորեն գտնում է, որ «Նանիկյան» գրերը հայոց նախա-

²⁹¹ Իշխանյան, 1987, էջ 24:

²⁹² ՏՆՍ, օրինակ, կրա կորոզային ուսումնասիրության ֆերագիրը՝ «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» (Ե., 1987):

²⁹³ Ջահուկյան, 1992, էջ 77-78:

²⁹⁴ Նույն տեղում:

²⁹⁵ Ջահուկյան, 2000, էջ 124-129:

քրիստոնեական մեհենագրերն են: Սակայն նա կարծում է, որ վերջիններս հայոց քրմերն իրենց հերթին ժամանակին փոխառել են մեկ այլ ժողովրդից՝ ասանց փորձելու որոշակիացնել այդ աղբյուրը: Ա. Կոսնյանը գտնում է, որ «Դանիելյան» մեհենագրերը կազմում էին անձայնավոր մի համակարգ, որը ձայնավորների հավելմամբ և այլ կատարելագործումներով նորոգեց և 36 տառանոց այբուրենի վերածնց Մեսրոպ Մաշտոցը²⁹⁶:

«Յոթնագրյանը» մատյանների մասին հրապարակումներով հանդես եկած Դոդոս Դոդոսյանը հատուկ մի գրքույկ է նվիրել Մեսրոպ Մաշտոցի այբուրենի ծագումնաբանությանը: Նա մաշտոցյան գրերի նախատիպարներ է համարում ոչ թե Մաշտոցին ժամանակակից հետքրիստոնեական, այլ դասական շրջանի հին հունական այբուրենի տառերը: Հեղինակը նաև ենթադրում է, որ եթե Մաշտոցը հիմք է ընդունել «Դանիելյան» գրերը և լրացրել դրանք, ապա Դանիել Ասորու մոտ պահպանված գրահամակարգը ևս պետք է ունենար նույնպիսի ծագումնաբանություն²⁹⁷:

Հայ պատմագրական մտքի զարգացմանը նվիրված մենագրության մեջ Ալբերտ Ստեփանյանը թեպետ չի անդրադառնում դպրության լեզվի խնդրին, սակայն անում է մեր նյութին առնչվող ուշագրավ դիտարկումներ: Նա հայ պատմագրական ավանդույթի սկզբնավորող է համարում Մեսրոպողոս Սկեփսացուն, որն իրականացրեց Տիգրան Բ Մեծի պատվերը: Նրանից վեց դար անց Մովսես Խորենացին, ամփոփելով նախորդների ձեռքբերումները, նոր մակարդակի բարձրացրեց հայ պատմագրական միտքը՝ դառնալով նոր սկիզբ²⁹⁸: Ա. Ստեփանյանն անում է ուշագրավ վերակազմություն՝ ցույց տալու համար, թե ինչպես կարող էր նախաքրիստոնեական ժամանակներում մեհենագրերով գրանցվել Վահագնի ծննդյան հիմնը՝ գործածելով նախ շումերական և եգիպտական հիերոգլիֆները, ապա՝ միջնադարի հայկական մատյաններում պահպանված «Նշանագիրը իմաստնոց» ցանկերի նշանները²⁹⁹:

Հայաստանի նախամաշտոցյան դպրության մասին մեր ասաջին հրապարակումը «Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա» (1992 թ.) մենագրության «Արատտայում գրի գոյության հարցը» գլուխն էր³⁰⁰: Դրան հետևող տարիներին մեր կատարած ուսումնասիրություններն ու հրապարակումներն ի մի բերվեցին «Կանի թագավորության (Քիսինիի, Ուրարտու, Արարատ) մեհենագրությունը (1998 թ.), «Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը» (2003 թ.), «Հայկական մեհենագրություն» (2003 թ.), «The Writing Culture of pre-Christian Armenia» (2006 թ.) և «L'héritage écrit de l'Arménie préchrétienne (Caractéristique générale)» (2007 թ.) մենագրություններ:

²⁹⁶ Կոսնյան, 1991, էջ 147–179; Կոսնյան, 1992, էջ 61–80:

²⁹⁷ Դոդոսյան, 1991, էջ 50–91:

²⁹⁸ Կոսնյան, 1991, էջ 115–189:

²⁹⁹ Կոսնյան, 1991, էջ 64–71:

³⁰⁰ Մովսիսյան, 1992, էջ 60–62:

րում³⁰¹: Ինչպես այդ մեկագրությունների, այնպես էլ դրանց հրատարակմանը հաջորդած տարիներին Հայաստանի նախամաշտոցյան դպրության վերաբերյալ մեր կատարած հրատարակումների և ուսումնասիրությունների հիմնական արդյունքներն ամփոփված են ներկայացվող աշխատանքում:

Մեկագրագետ Հովհաննես Կարազոզյանի աշխատանքները՝ կապված նախամաշտոցյան դպրության խնդրի հետ, կարելի է բաժանել երկու մասի: Առաջինը վերաբերում է «Լանի թագավորության մեհենագրությանը, որը վերջանելու փորձ է կատարել հեղինակն՝ այն հրատարակելով 1998 թվականին»³⁰²: Անկախ վերծանության փորձի հաջողվածության աստիճանից՝ հեղինակն ընդունում է հայալեզու դպրության գոյության հնարավորությունը Արարատ-Ուրարտու թագավորության ժամանակաշրջանում³⁰³: Հ. Կարազոզյանի աշխատանքների երկրորդ մասը վերաբերում է Հայաստանում արամեական գրի կիրառությանը: Հեղինակը կողմ է արամեական գիրը Արտաշես Ա-ի ժամանակ, ի սկզբանե այն կիրառել են ոչ թե արամեերեն, այլ հայերեն գրելու համար: Եվ որպես հիմնավորում, ներկայացնում է սահմանափակ համարվող արամեատառ արձանագրություններից մեկի վերծանությունը հայերենով³⁰⁴: Ավելին, Հ. Կարազոզյանը գտնում է, որ մաշտոցյան տատերից 21-ի անվանումները ծագում են արամեական համապատասխան տառանուններից, որոնք հնչյունափոխվել են «այնպիսի հնչյունական անցումներով, որոնք հատուկ են հայերենի հնագույն շրջանի հնչյունական օրինաչափություններին: Սա վկայում է նախամարտայան շրջանի գրավոր հայերենի գոյության մասին»³⁰⁵: Նրա կարծիքով՝ Դանիել եպիսկոպոսի մոտ արհապանված գիրը եղել է հայերենին հարմարեցված արամեական այբուրենը, որն էլ Մեսրոպ Մաշտոցն օգտագործել է իր գրահամակարգը ստեղծելիս:

Վահան Սարգսյանը, միանշանակ ընդունելով նախամաշտոցյան շրջանում հայալեզու դպրության գոյությունը, գտնում է, որ մեր նախնիներն այդ դարաշրջանում գրել են հենց այն գրահամակարգով, որն այսօր մեզ հայտնի է իբրև «մաշտոցյան»: Նա գտնում է, որ սկիզբ առնելով ժայռապատկերներից՝ զարգացման տարրեր մակարդակներում այդ գրահամակարգն ունենցել է գրանշանների տարրեր քանակություն, այդտեղից էլ՝ «Դանիելյան» գրանշանների թվի մասին տարրեր տեղեկությունները (17, 22, 24, 29): Իր տեսությունը հիմ-

³⁰¹ Մանրամասն տե՛ս այս աշխատանքի Օգոստոսընված գրականության զանկում: Առանձին հարցերի վերաբերյալ մեր կատարած ուսումնասիրությունները կներկայացնենք յուրաքանչյուրն իր բաժնում:

³⁰² Կարազոզյան, 1998, էջ 51-75: Վերծանության փորձի քննարկումը տե՛ս այս աշխատանքի Խանութատոմիան բաժնում:

³⁰³ Կարազոզյան, 1998, էջ 55:

³⁰⁴ Կարազոզյան, 2005, էջ 13-14, նույնի վերաբնութագրականությունը՝ Կարազոզյան, 2013, էջ 539-540: Վերծանության այս փորձը լուսին անարձագանք է մնացել գիտական շրջանակներում: Նույն կրթադարձման վերջում հեղինակը կարծիք է հայտնում, որ Ազատանկելոյի աշխատության «Էպոսագիտություն Սարգիս Գրիզոյի» բաժնից «ակուշտ գրիմ է Գրիզոյ Լուսավորիչ ձեռքով, ընդ որում, հենց հայերեն» (էջ 14):

³⁰⁵ Կարազոզյան, 2002, էջ 57-59:

նախորդելու նպատակով նա դիմում է իր առաջ քաշած ներքին վերականգնման լեզվաբանական մեթոդին (որն այլ լեզվաբանների կողմից գրեթե ընդունելության չի արժանացել): «Վ. Սարգսյանի կարծիքով՝ «Մաշտոցի առարելությունը նման է Կոմիտասի առարելությանը... Մաշտոցը հղկել, բարեփոխել ու հարստացրել է այն՝ հայ ժողովրդին պարզենելով բոլոր ժամանակների ամենակատարյալ այբուբենը: ... Հայոց այբուբենը հեղինակային այբուբեն չէ... հայոց գրերի հեղինակը հայ ժողովուրդն է և ամենից առաջ՝ նրա պատմական հիշողությունը»³⁰⁶:

Մեկ այլ մենագրությամբ Վ. Սարգսյանն անդրադարձել է ուրարտերեն-հայերեն հարաբերության խնդրին՝ այն դիտարկելով հայ-քասկյան ցեղակցության վարկածի տվյալների և նույն ներքին վերականգնման մեթոդի օգնությամբ: «Նեղինակի բնորոշմամբ՝ «վանյան բևեռագրերի և հայերենի միջև փոխհարաբերությունները կարելի է բնորոշել միմիայն *հաջողությամբ* և *հավաստությամբ*»³⁰⁷: Այլ կերպ ասած՝ հեղինակը Վանի թագավորության սեպագրի լեզու է համարում հնագույն (նախազորարարյան) հայերենը, ինչի պարագայում վանյան սեպագիրը պետք է համարել հայալեզու գրահամակարգ, հեղինակը, սակայն, գրահամակարգին չի անդրադառնում:

Նախամաշտոցյան հայ դպրության գոյությանը դեմ արտահայտված վերջին ուսումնասիրողը եղավ Լևոն Խաչերյանը, որը հայ դպրության պատմությանը նվիրված իր եռահատորյակի առաջին հատորն ամբողջությամբ նվիրել է նախաքրիստոնեական դարաշրջանին³⁰⁸: Նա չափազանց խստորեն քննադատում է նախամաշտոցյան գրի գոյությունն ընդունող գիտնականներին, սակայն ինքն իսկ ցուցաբերում է նյութի այնպիսի թերի իմացություն, որով չի կարելի կատարել գիտական ուսումնասիրություն:

Մասնավորապես, Լ. Խաչերյանն «Ատրեստանեան սեպագիր արձանագրությունները Հայաստան աշխարհում» բաժնում չի հիշատակում ոչ մի ասորական բնագիր (թեպետ դրանց թիվը Հայկական լեռնաշխարհում քիչ չէ): Այդ բաժնում նա հիշատակում է միայն Վանի թագավորության սեպագրերը, որոնք պիտակում է իբրև «ասուրա-ուրարտական» (էջ 25-26): Էջ 29-ում հեղինակը գրում է եռալեզու ուրարտական արձանագրության մասին՝ հղելով Գ. Ջահուկյանին, մինչդեռ ոչ Գ. Ջահուկյանի մոտ, ոչ էլ առհասարակ մինչ օրս Վանի թագավորությունից եռալեզու արձանագրություն հայտնի չէ: Էջ 35-ում խոսվում է Վանի թագավորությունից հայտնաբերված արամեերեն «վիմագրական առանձին նմուշների» մասին, Երվանդակյան շրջանի Հայաստանում հայրուրամյակներ շարունակ արամեերենի կիրառության մասին, որոնք, պարզապես, փաստական հիմքից զուրկ հորինվածքներ են: Էջ 41-ում նշում է, թե 1906 թ. Հայաստանում գտնվել է արամեերեն հինգ արձանագրություն, մինչդեռ այդ

³⁰⁶ Իր ամբողջ տեսությունը հեղինակը ներկայացրել է 336 էջանոց հասուկ մենագրությամբ (Սարգսյան, 1999, մտքերված անվտույն հատվածով՝ էջ 321):

³⁰⁷ Սարգսյան, 1998, էջ 140-142:

³⁰⁸ Խաչերյան, 2000:

թվականին Գավառի շրջանի Կարմիրգյուղից գտնվել է միայն մեկ գրակիր քա-
րակրթող³⁰⁹ ...

Վիմագրագետ Գրիգոր Գրիգորյանը, հղում կատարելով համապատաս-
խան ուսումնասիրություններին, ընդունում է նախամաշտոցյան հայալեզու
դպրության քաղմահագարամյա գոյությունը: Նա, իրավացիորեն, Հայաստանի
ինագույն վիմագրական մեծ ժառանգություն է համարում ժայթապատկերնե-
րը, Ք.ա. V հազարամյակից սկզբնավորված գաղափարագրությունը՝ իր դրսևո-
րումներով, և, հատկապես, Վանի թագավորության մեհենագրությունը:
Գր. Գրիգորյանը հանգամանալի հղումներով վկայակոչում է նախամաշտոց-
յան Հայաստանից հայտնաբերված սեպագիր, արամեատառ, հունարեն և լա-
տիներեն արձանագրությունները³¹⁰:

Նախամաշտոցյան դպրության գոյության համոզված կողմնակիցներից է
ժայթապատկերաբան Կարեն Թոխաթյանը: Հայաստանի ժայթապատկերնե-
րում մաշտոցյան տառերի նմանակներին նվիրված աշխատանքում նա հան-
գամանալի անդրադարձ է կատարում մինչմեսրոպյան Հայաստանի դպրու-
թյան հարցերին՝ վկայակոչելով ինչպես մատենագրական տեղեկությունները և
նոր ժամանակների ուսումնասիրողների կարծիքները, այնպես էլ հայտնաբեր-
ված նյութական վկայությունները: Հեղինակը միանշանակորեն կոդմ է արտա-
հայտվում նախամաշտոցյան Հայաստանում և՛ հայալեզու, և՛ օտարալեզու
դպրության գոյությանը³¹¹:

Վանի թագավորության սեպագրերի լեզվում զգալի քանակությամբ բնիկ
հայերեն բառերի առկայությունը, բնականաբար, պետք է մղեր դրանք կրկին
հայերենով կարդալու փորձերի: Հովսեփ Սանտալճյանից հետո եղան նման
անհաջող փորձեր, որոնք քննադատվեցին դրանց հեղինակների՝ լեզվաբանա-
կան պատրաստություն չունենալու պատճառով³¹²: 2003 թվականից Սարգիս
Ավագյանը հանդես եկավ մի քանի մենագրություններով, որոնցում նա նորից
փորձում է կարդալ այդ արձանագրությունները հայերեն³¹³: Վերջին աշխա-
տանքում նա Վանի թագավորության սեպագրի լեզուն բնորոշում է հայերեն՝
խուռիական ենթաշերտով³¹⁴:

³⁰⁹ Չարմանակ է երբ տիրապետող գիտնականի աշխատանքում տեղ են գտնում այնպիսի սխալներ ու
թյուրմեացություններ, որոնք հափտ չեն դառնալուս միջին դարաբանների գիտելիքներ ունեցողին:
Օրինակ, Լ. Նուպերյանը էջ 41-ում Արտաշես Ա-ի ծննդյան թվական է կոչում Ք.ա. 160-ը, մինչդեռ դա նրա
մահվան հարվանդական տարեթիվն է: Շատ ավելի արտաբերող է նրա «ինսագրություն» Տրդատ Ա-ի
մասին, որն քստ հեղինակի, իբրև թե, ծնվել է Ք.ա. 89-ին, իսկ Ք.ա. 65-ին իր շքանորով մեկնել է Հոմ
(Նուպերյան, 2000, էջ 52) ... Հայտնի է, որ Ք.ա. 88 և 65 թթ. ընթացքում Մեծ Հայքի արքան էր Տիգրան Բ
Մեծը, իսկ Տրդատ Ա Արշակունի՝ Հայաստանի հետ կապված գործունեությունը վերաբերում է
միջատուսի մուսուլիմից հետո առաջին դարի երկրորդ կեսին միայն ...

³¹⁰ Գրիգորյան, 2000, էջ 6-15:

³¹¹ Թոխաթյան, 2003, էջ 44-100:

³¹² Օրինակ, Մուրնի Արմազյանը Վանի թագավորության սեպագրի արձանագրությունները «լեքմանմ» էր
այսօրիս քննադատելու (Առնաու, 1963; Ավագյան, 1986, էջ 55-62), իսկ հանրամատչելի մամուլում
ուսնեցած հրատարակումներում էրվանդ Քաղունը դրանք փորձում էր ընթերցել XIX դարակերպի և XX
դարակերպի Վանի հայերեն ըստառով ...

³¹³ Ավագյան, 2003; Արմազյան, 2006; Ավագյան, 2008; Ayyazyan, 2011; Ավագյան, 2013:

³¹⁴ Ավագյան, 2013, էջ 11:

Մաշտոցյան տառանների ծագմանն է անդրադարձել Ռուբեն Հակոբյանը (Թառումյանը), որի կարծիքով մաշտոցյան այբուբենի 22 տառեր սեմական (մասնավորապես փյունիկյան) գրանշանների արագագրական ձևերն են, որոնք էլ, հավանաբար, հայտնի են եղել որպես «Դանիելյան նշանագրեր»: Ընդ որում, նա ենթադրում է, որ փյունիկյան գրանշանների փոխառումը հայերի կողմից պետք է տեղի ունեցած լինի Ք.ա. մոտ X դարում, որից հետո հայերից այն փոխառել են հույները, հույներից էլ՝ վրացիները Ք.ա. VI դարում: Հեղինակը փորձում է ցույց տալ նման անցումների տատակազմական հնարավորությունը³¹⁷: Տեսականորեն ուշագրավ լինելով հանդերձ՝ հեղինակի տեսությունն ունի փաստարկվածության լիակատար բացակայություն: Իրականություն լինելու դեպքում, ակնկալելի պետք է լիներ, որ մինչև V դարը մեկուկես հազարամյակ գործածված 22 տառանոց հայկական այբուբենը և մեկ հազարամյակ կիրառված վրացական այբուբենը (որի հեղինակն, ըստ հայկական աղբյուրների, Մաշտոցն է) թողած լինեին որևէ հետք, ինչն իսպառ բացակայում է: Ռ. Հակոբյանն անդրադառնում է նաև հայոց այբուբենի և եթովպական գրերի նմանությանը՝ դրանք համարելով պատահականության աղբյուրներ³¹⁸:

Հայ հրապարակախոսության պատմությանը նվիրված մենագրության մեջ Գառնիկ Անանյանը, հղելով համապատասխան մասնագետների աշխատանքներին, ոչ միայն ընդունում է ժայռապատկերներից ծագող հայկական մեհենագրության գոյությունը, այլև ուշագրավ դիտարկումներ է կատարում հայաստանյան սեպագիր արձանագրություններում առկա հրապարակախոսական շեշտադրումների մասին³¹⁹:

Արբերտ Մուշեղյանը 2005 թվականին մաշտոցյան այբուբենի 1600-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում, վկայակոչելով նախամաշտոցյան հայաեզու դպրության մասին վկայող մատենագրական տեղեկությունները և միանշանակ ընդունելով դրա գոյությունը, քննադատեց այն ուսումնասիրողներին, որոնք մաշտոցյան տառերը բխցնում են օտար այբուբեններից³²⁰: Սակայն դրանից հետո Ա. Մուշեղյանը, ելնելով միայն նշանների արտաքին նմանությունից, ինքն առաջ քաշեց անուպատելիորեն զարմանալի մի տեսակետ: Նա բերում է հնդկարակտրիական **խարուշի** գրով 38 թ. թվագրվող երեք տողանոց մի արձանագրություն, որոշ նշաններ նմանեցնում է մաշտոցյան տառաններին, ինչից ելնելով էլ եզրակացնում է. «Անտարակույս, դրանք հենց Դանիել եպիսկոպոսի գտած հին հայերեն նշանագրերն են, որ Մաշտոցը ներածել է իր ստեղծած կոր հայոց այբուբենի մեջ»³²¹: Չարմանալի է, քանի որ հենց ինքը՝ հեղինակը, նույն հոդվածի ավելի ընդարձակված ու լրացրած տարբերա-

³¹⁷ Օսկրոբան (Թառումյան), 2005, էջ 25–74, ամփոփումը՝ էջ 65–66:

³¹⁸ Օսկրոբան (Թառումյան), 2005, էջ 57–59, 66:

³¹⁹ Անանյան, 2005, էջ 23–46:

³²⁰ Մուշեղյան, 2006 (ա), էջ 79–95: Նա նույնիսկ անում է մնացորդական հարցադրում՝ «Մի՞չիս Մաշտոցը կարող էր իր իսկ մեջքով սքանալ այդ ննախիտու մեջքը ներկայացնել իրեն Աստծո թաքի գծագրություն և իրեն ստեղծածին տեղիքով շնորհված հայերեն տառեր» (էջ 95):

³²¹ Մուշեղյան, 2006 (ա), էջ 96–97:

կում²²⁹ բերում է խարոշի գրի՝ Դ. Գիրինգերի կազմած աղյուսակը (266 նշան, որից 14-ը թվանշաններ են), նշելով, որ այն վանկային գրահամակարգ է: Նրա իսկ կազմած համեմատական աղյուսակում այդ գրահամակարգի և մաշտոցյան տատանների հնչյունային արժեքները, ոչ միայն չեն համապատասխանում, այլև որոշ դեպքերում մաշտոցյան տառի դիմաց առկա է մի քանի երկնիչ, հռա-նիչ և, անգամ, քառանիչ վանկ²³¹...

Ա. Մուշեղյանի՝ Փիլոն էբրայեցու և նախամաշտոցյան դպրության մասին «հայտնագործությանն» արդեն անդրադարձել ենք, ուստի այլևս չենք կրկնի:

Նախամաշտոցյան հայալեզու դպրության համոզված կողմնակիցներից է Սարգիս Պետրոսյանը, որը հայկական մեհենագրության վերծանության ուղղությամբ հանդես եկավ մի քանի հոդվածներով²³²: Հեղինակն իր հոդվածներն ամփոփելով ու լրացնելով՝ 2008 թ. հրատարակեց մեկ գրքով²³³:

Սարգիս Պետրոսյանի վերծանության ուղղությամբ աշխատանքները կարելի է քաժանել երկու խմբի՝ ժայռապատկերների վերծանման և Վանի թագավորության մեհենագրերի վերծանության փորձեր: Վերջիններիս կանոնադա-վորության մեհենագրերի վերծանության փորձեր: Վերջիններիս կանոնադա-վորության մեհենագրության վերծանության վերծանության վերծանության քաժում: Ինչ վերաբերում է ժայռապատկերների վերծանությանը՝ դրանք իբրև հնչյունային գիր մեկնաբանման փորձերին, ապա և՛ Սարգիս Պետրոսյանի, և՛ Համլետ Մարտիրոսյանի²³⁴ ու այս ուղղությամբ այլոց կատարած աշխատանքներին մենք վերաբերում ենք մեծ վերապահությամբ հետևյալ պատճառներով

1. Չի կարելի վերծանել որևէ նշանագրային համակարգ, որով թողևած հուշարձանները դեռևս չեն հավաքվել, համակարգվել և համակողմանիորեն ուսումնասիրվել:

2. Դեռևս հստակված և հրատարակված չեն Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերները: Հայտնի չէ, թե՛ որ ժայռապատկերն ի՞նչ համախալանու-թյամբ է օգտագործվել, ինչպիսի՞ համատեքստերում, ի՞նչ զուգահեռ նյութերի ուղեկցությամբ:

3. Մինչև օրս ճշտված չէ ժայռապատկերների թվագրությունը: Ինչպե՛ս կարելի է, օրինակ, Ք.ա. XIII–VII հազարամյակներով թվագրվող ժայռապատ-կերները «ընթերցել» հայերեն, երբ հայերենը հնդեվրոպական մայր լեզվից ան-ջատվել և ինքնուրույն լեզու է դարձել, ըստ լեզվաբանների, Ք.ա. IV²³⁵, իսկ

²²⁹ Մուշեղյան, 2006 (b), էջ 210–236:

²³¹ Մուշեղյան, 2006 (b), էջ 231–234: Օրինակ՝ 2-ի դիմաց կելում են «na», «do», «da», «gra» վանկերը, 5-ի դիմաց՝ «kha», «ga», «gato», «kha», «kha», «ga», 4-ի դիմաց՝ «gha», «gho», «kta», «gha» և այլն: Ելնը, որ հեղինակը 93-րդ ծանոթագրության մեջ «Աշխարհի գրացին համարագրել» գրքի խարոշի բաժնի նեղիմակ է համարում հատուկ ընդհանուր խնդրակներ Պ. Թ. Դանիելովն և Վ. Քրաչոբի, այն դեպքում, երբ տվյալ բաժնի նեղիմակն է Ռ. Գ. Սոբոլով (սխալ է կելված նաև Դանիելովի անունը)...

²³² Պետրոսյան, 2005 (a), էջ 95–100: Պետրոսյան, 2005 (b), էջ 30–37: Պետրոսյան, 2007 (a), էջ 43–50; Պետրոսյան, 2007 (b), էջ 262–273:

²³³ Պետրոսյան, 2008:

²³⁴ Համլետ Մարտիրոսյանի այդ ուղղությամբ կատարած աշխատանքները տե՛ս Մարտիրոսյան, 2011 և Մարտիրոսյան, 2012 մեհենագրություններում:

²³⁵ Չառուկյան, 1987, էջ 76–78:

ամենահամարձակ հաշվարկների դեպքում՝ Ք.ա. VI հազարամյակում³²⁶։ Ինչպե՞ս կարող էին դեռևս գոյություն չունեցող լեզվով գրվել արձանագրություններ ³²⁷...

4. Մեր ժայռապատկերների «վերծանությունները» կատարվում են գերազանցապես արտաքին նմանություններից էլենելով. նշանները համեմատվում են Հայաստանի կամ հարևան երկրների հնավայրերից գտնված իրերի կամ պատկերների հետ։ Միևդեռ գրաբանության բնագավառում բավարար գիտելիքներ ունենալով պետք է հրաժարվել նման փորձերից. միայն արտաքին նմանությունը չափազանց անբավարար պայման է եզրահանգումներ կատարելու համար։

Հայ միջնադարյան գրականության պատմությանը նվիրված ձեռնարկում Հենրիկ Բախչինյանը նշում է, որ նախամաշտոցյան Հայաստանի գրավոր ավանդույթները սկզբնավորվում են Ք.ա. VI-V հազարամյակներից, երբ գաղտնարագրության հիմքի վրա ստեղծվեց հայկական մեհենագրությունը։ Նա այդ ավանդույթների կարևոր բաղադրամաս է համարում Վանի թագավորության սեպագրությունը, ապա դրան հաջորդած հայալեզու մեհենագիր և օտարալեզու դպրությունները³²⁸։ Հ. Բախչինյանը գտնում է, որ քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո հայալեզու դպրության արգելումից հետո IV դարում Հայաստանում ստեղծվեց միայն օտարալեզու՝ հունարեն և ասորերեն գրականություն, իսկ Դանիել Ասորու մոտ պահպանվածը «կամ հին մեհենագրերն էին, կամ այլ՝ Գրիգոր Լուսավորչի ժամանակ ստեղծուած և ինչ-ինչ պատճառներով չգործածուած տատեր»³²⁹։

2009 թվականին Վանի թագավորության մեհենագիր մի հուշարձանի վերծանության փորձ է հրատարակել Գագիկ Մարտոյանը³³⁰, որին ևս կանդրադառնանք համապատասխան բաժնում։ Այստեղ միայն նշենք, որ հեղինակը փորձում է վերծանությունը կատարել հնագույն հայերենով, այսինքն՝ ընդունում է նախամաշտոցյան հայալեզու դպրության գոյությունը։

Հայ հին և միջնադարյան գրականության պատմությանը նվիրված սովորածավալ ուսումնասիրության մեջ Դավիթ Գասպարյանը վկայակոչում է և մատենագրական հիմնական տեղեկությունները, և հայագիտության մեջ ծավալված բանավեճի գլխավոր հիմնադրույթները՝ միանշանակորեն ընդունելով նախամաշտոցյան ինչպես հայալեզու, այնպես էլ օտարալեզու

³²⁶ «Ներքին տարիներին գնեալիկ ինժիներիցի և իւզվաղիտուրյան բնագաղտնեում կատարված ուսումնասիրություններում հեղեղուպական ընդհանրությունեց հայերևի անբառվելու համար էլզում է ալիկի վաղ ժամանակաշրջան՝ Ք.ա. VI հազարամյակի երկրորդ կեսը (Gray, Atkinson, 2003, էջ 435-439; Atkinson, Gray, 2006, էջ 91-109)։

³²⁷ Օրինակ, Հ. Մաքսիբրույանը 2008 թ. տարալեզված ծավալուն հոդվածում Մյունխեն ժայռապատկերները թվագրում է Ք.ա. XVIII-XI հազարամյակներով (Մաքսիբրույան, 2008, էջ 198-247), իսկ 2011-ին գտնում է, որ այդ «ժայռապատկերները վանկա-գաղտնարագրի գրադն համազարգ է, որը ստեղծվել է վեճի բարձր դարում (40-12 հազար տարի առաջ)» (Մաքսիբրույան, 2011, էջ 106)...

³²⁸ Բախչինյան, 2006, էջ 24-26։

³²⁹ Բախչինյան, 2006, էջ 28-32։

³³⁰ Մարտոյան, 2009, էջ 138-150։

դպրության գոյությունը³³¹: Նա անում է ուշագրավ ընդհանրացնող դիտարկումներ: Մասնավորապես, Դ. Գասարյանն ընդունելով հայ գրականության համար ավանդական բաժանումը երկու մեծ շրջանների՝ նախագրային և գրային, առաջին շրջանը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Նախագրային շրջանն սկսում է անհիշելի ժամանակներից և հասնում մինչև գրերի գյուտից անմիջապես հետո սկիզբ առած գրապատմական մեծ շարժումը: *Նախագրային շրջանն իր հերթին կարող է բաժանվել երկու ինքնուրույն փուլերի՝ բուն նախագրային շրջան՝* բանասիրական ելույթով, և գրային նախամաշտոցյան շրջան, որ նշանակում է նկատի ունենալ այն գրականությունը, որ ստեղծվել է հեյուուեական գրից առաջ (սեպագիր արձանագրություններ) և այն գրականությունը, որ ստեղծվել է նախամաշտոցյան գրերով կամ օտար գրերով» (ընդգծումները հեղինակինն են – Ա. Մ.)³³²: Փաստորեն, հեղինակը Ք.ա. IX դարից մինչև մեր թվարկության IV դարը ներառյալ համարում է «նախագրային մեծ շրջանի» «գրային նախամաշտոցյան շրջան»: Իմաստային առումով, իհարկե, ավելի ճիշտ կլիներ, որ հեղինակը հարթահարթ ավանդական կարծրատիպը և նախագրային ու գրային մեծ դարաշրջանների սահմանագիծը համարեր ոչ թե մաշտոցյան գյուտը, այլ Հայաստանում կիրառված առաջին գրերի դարաշրջանը³³³:

Հայկական սրբախոսական գրականությանը նվիրված մեկագրության էջերում Քնարիկ Տեր-Դավթյանը IV դարում ստեղծված գործեր է համարում Գրիգոր Լուսավորչի վարքը, Հոփիսիմն և Գայանն կույսերի վկայարանությունը³³⁴:

Վերջին տարիներին հայոց նախամաշտոցյան դպրությանը նվիրված մեկագրություններից է Վանո Եղիազարյանի աշխատանքը, որում հեղինակը միանշանակորեն ընդունում է և՛ հայալեզու, և՛ օտարալեզու դպրության գոյությունը: Նա խնդրին մոտենում է ավելի գրականագիտական տեսանկյունից՝ աշխատանքում հատուկ բաժիններ նվիրելով նախամաշտոցյան գրականության առանձին ժանրերին՝ սրբախոսությանը, պատմագրությանը, կրոնական ճառագրությանը, բանաստեղծությանը, թատերգությանը և ճարտասանությանը³³⁵:

³³¹ Գասարյան, 2009, էջ 26–40:
³³² Գասարյան, 2009, էջ 7, 11:
³³³ Ի դեպ, պատեղ ևս գործ ունենք մեր բանասերների շրջանում աղբյուրված այն բոլոր պատեղագրան հետ, թե սեպագիրն ու մեկնագիրը եկեղևուղին գրատեսակներ չեն, ինչի մասին աղբյուրն ասեր ունեցել ենք խոսելու:
³³⁴ Տեր-Դավթյան, 2011, էջ 35, 38, 48 և այլն:
³³⁵ Եղիազարյան, 2011: Ավտանդուովված է կնք, որ ուշագրավ դիտարկումով կատարված աշխատանքում տեղ են գտել որոշ անճշտություններ, ինչպիսիք են Հեղուրտոսին, Քանուկին և Սուրբորենի հայոց նախամաշտոցյան գրի մասին վրդող հեղինակներ համարելը (էջ 10): Հեղինակը նախամաշտոցյան հայ ճարտասանության երկու ավանդուր ներկայացուցիչներ է համարում Տիրան «Հայկազին» և Դարույր «Հայկազին» (էջ 165): Առաջինի հաց քննելու մասին տեղեկությունների հոդվածում պատեն սրբին անդրադարձել ենք, իսկ Դարույր «Հայկազին» մյայն աղբյուրյաքը էր հայ, կրա գործունեությունը բողոքովին որն է կապ չի ունեցել Հայաստանի կամ հայ իրականության հետ (Դարույր «Հայկազին» մասին մանրամասն տե՛ս Մեքրոնյան, 1984, էջ 163–170):

«այ հին գրականության պատմությանը նվիրված հատորում Վանո Եղիազարյանը նախամաշտոցյան գրականության հարցում պաշտպանում է նույն սկզբունքային մոտեցումները: «Հայ գրականության նախամաշտոցյան շրջանի պատմությունը նա, իրավացիորեն, բաժանում է հետևյալ շրջանների»

ա) հայ հին բանավոր գրականություն. նախնական առասպելաբանական բանահյուսության շրջան,

բ) նախաքրիստոնեական շրջանի գրավոր գրականություն (ինագույն ժամանակներից մինչև 301 թ.),

գ) նախամաշտոցյան քրիստոնեական շրջանի գրավոր գրականություն (301–405 թթ.)³³⁶:

Նախամաշտոցյան հայ դպրության խնդրին նվիրված իր ուսումնասիրության առաջին հատորում Արսեն Սարգսյանը կարծիք է հայտնում, որ հիմնախնդիրը կարող է վերջնական լուծում ստանալ միայն թարգմանական (Էզրթերիկ) վերլուծության ենթարկվելուց հետո, որը հեղինակը մտադիր է անելու դեռևս լույս չտեսած երկրորդ հատորում: Իսկ առաջին հատորում նա միանշանակ կողմ է արտահայտվում նախամաշտոցյան հայագեղու մատենագրության գոյությանը (որը ոչնչացվել է քրիստոնեության ընդունման արդյունքում), իսկ Դանիելի մոտ պահպանված նշանագրերը համարում հայագեղու գրահամակարգ³³⁷:

Ինչպես նշել էինք սկզբում, այս բաժնում հիշատակվեցին այն հեղինակները, որոնք ուսումնասիրություններ են կատարել նախամաշտոցյան դպրության առկվող այս կամ այն խնդրի հետ կապված, ոչ թե պարզապես հիշատակել են այն ի միջի այլոց: Մի շարք ուսումնասիրողներ, վկայակոչելով մատենագրական տեղեկությունները, պարզապես շեշտում են նախամաշտոցյան «Հայաստանում սեփական դպրության գոյության փաստը» առանց կարևորելու, թե ինչ լեզուներով ու գրերով է այն ստեղծվել³³⁸: Որոշ ուսումնասիրողներ էլ բավարարվում են միայն արձանագրելով, թե ինչ հիշատակություններ կան նախամաշտոցյան ժամանակաշրջանում ստեղծված գրական հուշարձանների մասին՝ առանց կանգ առնելու լեզվական խնդիրների վրա³³⁹: Որոշ ընդհան-

³³⁶ Եղիազարյան, 2014, էջ 10: Նախամաշտոցյան շրջանին նվիրված են միանգույնության 11–171 էջերը: Այս աշխատանքում հեղինակը սրբագրել է «Չորոտոսյան, Քանոնիոսի և Սաղաթնիկ վերագրված փառ տեղեկությունները, սակայն անձովորչ են մնացել մոտեցումները Տիլան «Շախազի» և «Նարոյք Շախազի հարցում (էջ 61, 97–98):

³³⁷ Սարգսյան, 2013, էջ 40–42, 86–87: Նշենք, որ մեր գրիչ խնդիրները բնագրվել են թարգմանական (Էզրթերիկ) բնույթի այլ աշխատանքներում ևս (օրինակ՝ Ավետիսյան, 1995: Ծանոթաբան, 2011), որոնց վերլուծության սկզբունքները օժտվել են պատմաբանական գիտության սկզբունքներից, ուստի այստեղ դրանք չեն բնագրվել:

³³⁸ ՏՆՆ, օրինակ՝ Նազարյան, 1970, Բաժնեկան, 1986, էջ 14–18:

³³⁹ ՏՆՆ, օրինակ՝ Չաղոյան, 1975, էջ 26–39 (հեղինակը վկայակոչում է հեցնիստական շրջանի գրական երկերի մասին տեղեկությունները՝ արձանագրելով, որ Հայաստանում առկա էին փիլիսոփայական մտքի փառ դասերումներ, սակայն չի չղչալում նկատվող հայագեղու գրականության գոյության

րացնող աշխատանքներում էլ նշվում է միայն, որ խնդիրը բանավիճային է, և վկայակոչվում են բանավիճող կողմերի ակնառու ներկայացուցիչները³⁴⁰։ Հասկանալիորեն, մեր խնդրից դուրս է նման հրապարակումների լիակատար հիշատակությունը։

Ամփոփելով վերոշարադրյալ նյութը՝ կարող ենք արձանագրել հետևյալը.

1. Հայաստանում նախամաշտոցյան օտարալեզու գրականության փաստն ընդունում են բոլոր ուսումնասիրողները, քանի որ կան այդ մասին վկայող և՛ մատենագրական տեղեկություններ, և՛ քազմաթիվ հայտնաբերված արձանագրություններ։

2. Հայալեզու նախամեսրոպյան դպրության հարցում ուսումնասիրողները կիսվել են երկու հիմնական խմբի։ Ընդունողների հիմնական փաստարկներն են դպրության աստծո գոյությունը նախաքրիստոնեական հայկական դիցաբանում, հայտնաբերված արձանագրությունները, մատենագրական տեղեկությունները, որոնք վկայում են հայալեզու դպրության մասին, հայկական դարավոր նախաքրիստոնեական պետականությունը, որը չէր կարող գոյատևել առանց հայերեն դպրության և, ի վերջո, հինգերորդ դարում գրավոր հայերենի զարգացման խիստ կատարյալ վիճակը, ինչը հնարավոր չէր լինի առանց նախընթաց դարավոր դպրության։

3. Նախամաշտոցյան հայալեզու դպրության հնարավորությունը մերժողների գլխավոր փաստարկը արձանագրությունների բացակայությունն է։ Եթե այդ փաստարկը կարելի էր հասկանալ մինչև 1930-ական թվականները, երբ գտնված հատուկներ և հստակ չթվագրվող արձանագրությունների հիմամբ հնարավոր չէր վերջնականապես եզրակացնել հայալեզու դպրության գոյությունը, ապա այսօր այն լիովին մերժելի է, քանի որ XX դարավերջին և XXI դարասկզբին համակարգվեցին ու հրատարակվեցին հայկական մեհենագրության տարբեր փուլերին վերաբերող մի քանի հազար գրակիր նյութեր։ Ընդ որում, 1995 թ. ստացվեցին Վանի թագավորության մեհենագրության վերձանության առաջին արդյունքները, որոնք թույլ են տալիս խոսելու այդ գրահամակարգի՝ հայալեզու լինելու մասին (տե՛ս ստորև)։ Քանի որ արձանագրությունների բացակայության գլխավոր փաստարկը վաղուց վերացել է, և կան հակառակը վկայող հազարավոր նյութական ապացույցներ, այդ տեսակետի կողմնակիցների մյուս փաստարկների քննարկումը սրաբազալես անիմատո է։

4. Քննարկումների առարկա է եղել օտարազիր հայալեզու գրականության գոյության խնդիրը³⁴¹, հատկապես, 301–405 թվականների ընթացքում, երբ մե-

հարը)։ Մեղք-Փախչյան, 1987, էջ 5–13 (պատեղ միայն սրագ թվակրկում են հսցոնկ արձանագրությունները և գտնողված են մի քանիսի ներքնկող) և սցի։

³⁴⁰ The Heritage of Armenian Literature, 2000, p. 90–91; Մեղք-Փախչյան, Վարդյան, 1959, էջ 43–44; Մղոսյան, 1986, էջ 15–40 (ինդիկակը հանգամանորեն ներկայացում է էմմանուելիի նեո կազգած էմմանուելիի՝ առանց վերջնական սրատախանների հավակնության, թնպետ սց սշխտատներում ևս չի ընդունում նախամաշտոցյան հայալեզու դպրության գոյությունը)։

³⁴¹ Տե՛ս Անտոնյան, 1984, էջ 460–673 (որի հեղինակն անիմն է հանգում օտարազիր հայերեն դպրության մասին տեսակետները)։ Արցախյան, 1982, էջ 81–93 (ինդիկակը գտնում է որ նախամաշտոցյան

հենագրությունն արգելվեց, իսկ քրիստոնեության քարոզության երկու լեզուները հունարենն ու ասորերենն էին: Այստեղ չունենք նյութական վկայություններ, սակայն կան մատենագրական տեղեկություններ՝ հօգուտ օտարագիր հայալեզու գրականության: Այդ է վկայում նաև պարզ տրամաբանությունը. դրա վկայությունը եղավ նաև վերջին տարիներին համացանցում լատինատառ հայերենի կիրառումը (նախքան յունիկոդային հայերեն գրատեսակների ստեղծումը):

5. Առավել քննարկված խնդիրներից է «Դանիելյան» գրահամակարգը, որի մասին հայտնվել են ամենատարբեր կարծիքներ: Նշենք, որ հինգերորդ դարի հայ պատմիչներից ոչ մեկը չի նշում Դանիելի մոտ պահպանված գրանշանների թիվը և ստույգ ծագումը, իսկ հետագա դարերում, նաև նոր ժամանակների պատմագիտության մեջ դրանց վերագրվել են քանակություններ՝ 17, 22, 24, 29, որոնք կապվում են փյունիկյան, արամեական, ասորական, հունական այբուբենների հետ կամ՝ այն մտքի, որ Մաշտոցը ստեղծել է միայն ձայնավոր հնչյունների նշանները: Դատելով մատենագրական հաղորդումներից, հատկապես, Դազար Փարպեցու կարևոր մի հաղորդումից, մենք կարծում ենք, որ Դանիելի մոտ պահպանվածը ոչ թե այբուբեն էր 2–3 տասնյակ նշաններով, այլ՝ հայկական մեհենագրային համակարգը, որի գրանշանների թիվն անցնում էր երկու հարյուրից:

ՆԱԽԱՄԱՇՏՈՑՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՍԵՂԾՎԱԾ ԵՎ
ԿԻՐԱՌՎԱԾ ԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

1. ԳՐԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽՈՓՈՒԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐՀՈՒՄ

Ինչպես մարդկային քաղաքակրթության բազմաթիվ նվաճումների, այնպես էլ գրի ծագման ու զարգացման պատմության մասին խոսելիս Հայկական լեոնաշխարհը պետք է հիշատակել բնօրրանների շարքում: Գիրը Հայաստանում ծագեց ու զարգացավ յուրահատուկ դրսևորումներով, ունեցավ աստիճանական մի քանի փուլեր, որոնք, ցավոք, ամբողջության մեջ դեռևս համապարփակ ուսումնասիրության չեն ենթարկվել:

«Առարկայական գրի» դրսևորումները Հայկական լեոնաշխարհում: Գրերի զարգացման ընդհանուր օրինաչափությունից դատելով՝ զրային մտածողության սաղմնավորման սկզբնական շրջանում ի հայտ են գալիս «առարկայական գիրը» և վաղ պատկերագրությունը:

«Առարկայական գրի» դրսևորման հնագույն օրինակները Հայաստանում դեռևս չեն դարձել հատուկ ուսումնասիրության առարկա, թեպետ դրա համար կան հնագիտական պեղումներից ստացված բավականաչափ նյութեր: Խոսքը Թ.ա. X–III հազարամյակներով թվագրվող հուշարձաններից (Հարան Չեմի, Չայոնյու, Չաֆեր Հյույուկ, Շենգավիթ, Մոխրաբլուր, Բեշտաշեն, Կարազ, Բարա–դերվիշ, Գեոյ–թեփե, Ծոփի, Արուխլո, Բյուլ–թեփե, Հասիճ, Ջրահովիտ, Ամասիա, Ազարակ և այլն)³⁴² գտնված փորրիկ արձանիկների մասին է (մի քանիսը՝ նկ. 2–3), որոնց գծապատկերները կարող էին ծնունդ տալ վաղ պատկերագրության մեջ հանդիպող բազմաթիվ պատկերագրերի, այսպես գործել կայացած զրային համակարգեր (տե՛ս հավելվածում, աղ. 4): Դժվար է ասել, թե երբ է սկզբնավորվել «առարկայական գիրը» Հայաստանում. այն պետք է նախորդեր ժայռապատկերային կամ ունենար համաժամանակյա սկզբնավորում:

Հայաստանի ժայռապատկերները՝ վաղ պատկերագրության փուլի հուշարձաններ: Ժայռապատկերները ժայռերի ու քարերի մակերեսներին, քա-

³⁴² Rozenberg, 1999, էջ 25–33, աղ. 9–18; Özdoğan, 1999, էջ 35–63, աղ. 19–33; Cauvin, Aurenche, Cauvin, Balkan–Atlı, 1999, էջ 87–103, աղ. 57–77; Մարդաբան, 1967, էջ 200, աղ. LXX; Մարդաբան, 2004, էջ 157–158, 217, 233–234, 339, 461–462; Կլֆրուս, 1941, աղ. CXX; Kyawarova, Կլֆոտտասուս, 1970, էջ 28, 31, 69, 80, 88, 90, 162; Абушманов, 1959, էջ 444; Xawarpan, 1975, էջ 77–82; Եսայան, 1992, էջ 144, 147, 150, 154; Avetisyan, 2008, էջ 39–50, աղ. V և սլյի:

րանձավների պատերին, առաստաղներին արված հնագույն տեսարանների ու նշանների պատկերներ են³⁴³: Հայտնի են երկրագնդի գրեթե բոլոր մասերում և թվագրվում են հին քարի դարից մինչև միջնադար ընկած ժամանակաշրջաններով: Ժայռապատկերներին քննող են տվյալ վայրում ապրած մարդկանց ու կենդանիների պատկերները, որսի, ռազմի, ծիսական, պաշտամուկերային և այլ բնույթի տեսարանները:

«Կաղ պատկերագրության հնագույն այս արտահայտությունները Հայաստանում գտնում ենք լեռնային շրջաններում: Դրանք սև և սրճագույն քարերի ու ժայռերի վրա փորագրված ժայռապատկերներ են, որոնք ունեն թմամտիկ լայն ընդգրկում և պատկանում են ժամանակագրական տարրեր շրջաններին:

Հայաստանի ժայռապատկերները փորագրված են անդեզիտ–քազալտեների փայլուն մակերեսին՝ կարծր քարատեսակներից պատրաստված գործիքների (մուրճիկների) օգնությամբ՝ հարվածելու կամ ծեծելու եղանակով, ունեն ոչ մեծ խորություն (5–10 մմ), համեմատաբար փոքր չափեր (25–35 սմ)³⁴⁴:

Հայաստանի ժայռապատկերները, որոնցում հաճախ հանդիպող այժի գծանկարների առատության պատճառով ժողովուրդի կողմից ստացել են «իծագրեր» անվանումը, գիտական աշխարհին հայտնի դարձան դեռևս XIX դարում: Անցած դարասկզբից դրանք իրենց վրա բևեռեցին գիտնականների ուշադրությունը: Այս տերմինը մտել է նաև գիտական շրջանառության մեջ և հանդես է գալիս իրրև «ժայռապատկերի» հոմանիշ:

Ժայռապատկերների ուսումնասիրությունը համակարգված հետազոտության առարկա դարձավ երկրորդ աշխարհամարտին հաջորդած տարիներին, երբ մեկը մյուսի հետևից հրատարակվեցին Հայկական լեռնաշխարհի, ըստ էության, ողջ տարածքից³⁴⁵:

Ժայռապատկերների թվագրության խնդիրը: Մինչ օրս վերջնականորեն լուծված չէ ժայռապատկերների թվագրման հարցը: Խորհրդային պատմագիտության մեջ առավել ընդունված էր ժայռապատկերների թվագրումը նոր քարի դարից (Ք.ա. VIII/VII հզ. – V հզ. կեսեր) մինչև Ք.ա. I հազարամյակի սկիզբն ընկած ժամանակաշրջանով³⁴⁶: Սակայն նշվածից տարբերվում էին Ս. Սարդաբյանի և Բ. Բ. Պիտտովսկու կարծիքները: Ս. Սարդաբյանը մի քանի առավել հին ժայռապատկերներում նշմարում էր մամոնտի գծանկարներ, որոնք Հայաստանում վերացել էին հին քարի դարում: Դրանից ելնելով՝ Ս. Սարդաբյանը աննաևազ ժայռապատկերները թվագրում էր հին քարի դարի վերջին

³⁴³ Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերների վերաբերյալ կատարված կառավարականների և ուսումնասիրությունների մասին հանգամանակի նյութներով՝ տե՛ս Կարախանյան, Մաֆյան, 1970; Մարտիրոսյան, Իսրայելյան, 1971; Այտուկ, 1974; Թեփաթյան, 2003, էջ 81–90; Պետրոսյան, 2005; Օհանյան, Առաքելյան, 2007; Մարտիրոսյան, 2010; Տախիրյան, 2010:

³⁴⁴ Ժայռապատկերների կատարման տեխնիկայի մասին մանրամասն տե՛ս Կարախանյան, Մաֆյան, 1970, էջ 10; Մարտիրոսյան, Իսրայելյան, 1971, էջ 7; Մարտիրոսյան, 1981, էջ 7–13; Տախիրյան, 2010, էջ 16–19:

³⁴⁵ Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերների աշխարհագրության մասին հանգամանակներն տե՛ս Թեփաթյան, 2003, էջ 81–90, քաղվումը՝ էջ 90, նկ 33:

³⁴⁶ Կարախանյան, Մաֆյան, 1970, էջ 10–38; Մարտիրոսյան, Իսրայելյան, 1971, էջ 26; Կարախանյան, 1978, էջ 277; Մարտիրոսյան, 1981, էջ 14–25:

փուլով (վերին պալեոլիթ, Ք.ա. 40–12-րդ հազարամյակներ): Դրանք առավել պարզ գծապատկերներ են՝ բավական խոշոր չափի (ի տարբերություն նոր քարեդարյան փոքր գծանկարների), ներկայացնում են որսի տեսարաններ, որոնցում մարդը շների օգնությամբ հետապնդում է վայրի ոչխարների, քարայծերի: Կենդանիների ընտելացումը տեղի է ունեցել նոր քարի դարում, ուստի, ըստ Ս. Սարգսյանի, այս տեսարանները կարող են վկայել ժայռապատկերների տվյալ խմբի՝ ավելի վաղ կերտված լինելը³⁴⁷:

Բ. Բ. Պիտտրովսկին, ուշադրություն դարձնելով այն հանգամանքին, որ որոշ ժայռապատկերանման նշաններ հանդիպում են միջնադարյան հուշարձանների պատերին, ենթադրում էր ժայռապատկերների միջնադարյան ծագումը³⁴⁸:

Եթե կարծիքներից առաջինն այսօր էլ կարելի է քննարկել, ապա վերջին կարծիքը պարզապես ընդունելի չէ, քանի որ միջնադարյան հուշարձանների պատերին հանդիպող նշանները չի կարելի համարել ժայռապատկերներ: Ինչպես ճիշտ նկատում է Կ. Թոխաթյանը, դրանք իհն, «դասական» ժայռապատկերներ չեն, այլ վկայությունն են «միջնադարում ժայռապատկերման ավանդույթների հարատևման»³⁴⁹:

Արևմտյան Հայաստանի ժայռապատկերները թվագրվում են հիմնականում մեզոլիթյան և նեոլիթյան դարաշրջաններով, նշվում է, որ դրանցից հնագույնները կարող են թվագրվել Ք.ա. XIII հազարամյակով, իսկ առավել նորերը՝ վաղ բրոնզի դարով (Ք.ա. IV–III հազարամյակներ)³⁵⁰: Վերջին տարիներին նման թվագրումներ են առաջարկվել նաև Արևելյան Հայաստանի ժայռապատկերների համար³⁵¹:

*Ժայռապատկերների թեմատիկ ընդգրկումը*³⁵²: Հայաստանի ժայռապատկերների թեմատիկ ընդգրկումը բավականին մեծ է: Ժայռապատկերներում ներկայացված են տվյալ դարաշրջանի կյանքի հիմնական բնորոշ գծերը, ուստի պատահական չէ, որ մեզանում ժայռապատկերները հաճախ դրակում են իբրև «քարե հանրագիտարաններ» կամ «քարեղեն մատենադարաններ»:

Ժայռապատկերներում մեծ թիվ են կազմում վայրի և ընտանի կենդանիների գծանկարները: Ընդ որում, հստակորեն զանազանվում են ինչպես այսօր Հայաստանում զոոլոգիան ունեցող, այնպես էլ դեռևս նախնադարում ոչնչացած կենդանատեսակներ: Ըստ են հանդիպում թռչունների գծապատկերները, անհատա-

³⁴⁷ Շարաբո, 1971, էջ 63–74; Սարգսյան, 2010, էջ 6–13:

³⁴⁸ Пётровская, 1949, էջ 26–27:

³⁴⁹ Թոխաթյան, 2003, էջ 82, ձևք. 119:

³⁵⁰ Uyanik, 1974, էջ 16–17, 62–64; Belli, 2001, էջ 266–270 (և էջված աղբյուրները):

³⁵¹ Օրբեան, Հ. Մարտիրոսյանը Այուրիքի ժայռապատկերները թվագրում է Ք.ա. XVIII–XI հազարամյակներով (Մարտիրոսյան, 2008, էջ 198–247), իսկ մեկ այլ աշխատանքում կում է ավելի թափ ժամանակաշրջանը՝ ֆրիշ քարի դար (40–12 հազար տարի առաջ, տե՛ս Մարտիրոսյան, 2011, էջ 106), Ս. Շահինյանը դրանք ստիճից համարում է ավելի քան 13 500 տարի (այսինքն՝ Ք.ա. XII հազարամյակ է ավելի վաղ, տե՛ս Shakhinian, 2010, էջ 16):

³⁵² Հայկական խնամախոսիքի ժայռապատկերների թեմատիկ ընդգրկման մասին հանգամանադրյուն տե՛ս Մարտիրոսյան, 1981, էջ 26–80, համատեսակ՝ Թոխաթյան, 1991, էջ 20–21:

կան և խմբակային որսի տեսարանները: Առկա են վարժեցման և բուժման, ինչպես նաև մենամարտի տեսարաններ՝ մարդ-զագան կամ երկու զագաններ:

Ժայռապատկերներում կան ծածերի պատկերներ, երկրագործական աշխատանքի տեսարաններ, որոնք թույլ են տալիս ուսումնասիրելու տվյալ ժամանակաշրջանի բուսականությունը և գյուղատնտեսությունը:

Ժայռապատկերներում նկատվում են կացարանաշինության ու ճարտարապետության որոշ տարրեր, կան քարտեզ հիշեցնող պատկերներ, որոնցով երբեմն կարելի է գտնել ջրերի աղուերները (ի դեպ, ժողովրդի մեջ մինչև վերջերս պահպանվել են հալատալիքներ, որ քարտեզանման այդ քարերի վրա խազված են թաքնված գանձերի ճանապարհները):

Ժայռապատկերների մի այլ խմբում առկա են կատարման քարձր մակարդակով, ճշգրտությամբ, ռեալիզմամբ ու շարժունությամբ զարմացնող նկարներ, որոնց մեջ կարելի է տեսնել միջնադարի հայ մանրանկարչության և ժամանակակից արվեստի որոշ ճյուղերի արմատները:

Մեկ այլ շատ կարևոր խումբ են կազմում աստղագիտական բնույթի ժայռապատկերները, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի բնակիչները դեռևս նախնադարում ունեցել են քարձր մակարդակի աստղագիտական գիտելիքներ, կիրառել են լուսնային, լուսնա-արեգակնային և արեգակնային օրացույցներ:

Գիտական հաշվարկներից բացի (օրացույց և այլն) երկնային լուսատուների պատկերները հանդիպում են դիցաբանական պլուծե ունեցող ժայռապատկերներում:

Ժայռապատկերներում շատ մեծ տարածում ունեն գաղափարագրերը, որոնց մեջ որոշ ուսումնասիրողներ տեսնում են մաշտոցյան տառերի նախաձևերը³³²:

Ժայռապատկերներն իբրև գրի ուսումնասիրության առարկա: Գրի ուսումնասիրության պատմությունից հայտնի է, որ առարկաներից գրանյութի անցնելուց հետո ստեղծված առաջին գրատեսակը պարզ նկարային գիրն էր՝ վաղ պատկերագիրը: Համաշխարհային գրականության մեջ պատկերագրերի համար գործածվում է երկու տերմին՝ պետրոգլիֆ, եթե պատկերագիրը քանդակված է քարի վրա, և պիկտոգրամմա, եթե պատկերագիրը նկարված է ներկով: Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված վաղ պատկերագրության հուշարձանների ճեղղ մեծամասնությունը պատկանում է առաջին խմբին՝ պետրոգլիֆներին: Երկրորդ խմբի հուշարձաններ են հայտնաբերվել Վանի շրջանում³³⁴, վերջերս՝ նաև Քասախի կիրճի ձախ ստիին, Գեղամավան նորաստեղծ ավանի տարածքում³³⁵:

³³² Հարցի ամբողջական ներկայացումը տե՛ս Թոխաթյան, 2003, էջ 91-99:

³³⁴ Քաղաքնապի մասնագիտական գրականության մեջ հայտնի է «Եռյստի անձա՛» անվամբ: Դասկերները բովանդակում են Ք.ա. VIII-V հազարամյակներով (Belli, 2001, էջ 261-265; Թոխաթյան, 2003, էջ 86-87 և հիվան գրականություն):

³³⁵ Գառապարյան, Սարգսյան, 2003, էջ 5-12:

Վաղ շրջանի պատկերագրերում (նախագրային փուլում), երբ ամեն մի տեսարան կամ պատկեր հաղորդում էր որոշակի գաղափար՝ առանց հեյու-նային տարրերի առանձնացման, կարելի է տարրերակել մտքի հաղորդման երկու հնարք, որոնցով մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են պատկերագրի զարգացման փուլերը¹⁰⁶:

Առաջինը *նկարագրական-պատկերացին հնարքի* արտահայտություն-ներն են, երբ առկա են մարդու, կենդանու կամ առարկայի գծապատկերները, իսկ նրանց հետ կապված ինֆորմացիան ներկայացվում էր ցրացուցիչ գծերի պատկերների դիրքային փոփոխության և այլ միջոցներով: Այս հնարքը կիրառված է Հայաստանի գրեթե բոլոր ժամանակաշրջանների ժայռապատկերներում: Նշված հնարքով կատարված պատկերագիրը մասնագիտական գրականության մեջ ստացել է զանազան անվանումներ՝ մտքերի կամ գաղափարների զիր, պատկերացումների զիր, բովանդակային զիր և այլն: Մենք ընդունում ենք Ի. Է. Գելբի բնորոշումը՝ «նախագրի նկարագրական-պատկերային փուլ», որը ցույց է տալիս տվյալ փուլի կատարման տեխնիկայի կապը կերպարվեստի և գրի միջև:

Երկրորդը *նույնացնող-հիշողական հնարքով* ստեղծված հուշարձաններն են, որոնցում տվյալ օբյեկտը ներկայացվում էր իր ինքնությունը խորհրդանշող որևէ պայմանական նշանի միջոցով: Այս հնարքի միջոցով առաջացան արհեստագործ վարպետների նշանները (որոնք մեծ քանակությամբ հանդիպում են Հայաստանում), զինանշանները և այլ տարրերանշաններ: Այդ հնարքը թույլ է տալիս նշել պատկերվողի ինքնությունը նրա տոտեմի կամ այլ խորհրդանիշի միջոցով կամ ցույց տալ տվյալ առարկայի պատկանելությունը տվյալ անձին (սեփականության և այլ նշաններ): Պատկերի փոխարեն խորհրդանշանի կիրառումը տարածում է ստանում զարգացած պատկերագրության մեջ: Խորհրդանշանների կիրառումով դեռևս չստեղծվեց հեյունային զիրը, սակայն այն կարևոր նշանակություն ունեցավ գրի զարգացման ճանապարհին:

Հայաստանի ժայռապատկերները գրի զարգացման տեսանկյունից կարելի է բաժանել երկու հիմնական խմբի:

Առաջին խմբի ժայռապատկերներն ունեն զուտ նկարագրական-պատկերային բնույթ: Դրանք պարզ նկարներ են, որոնցում ամեն բան պատկերվում է իր արտաքին տեսքով (նկ. 4):

Երկրորդ խմբում (նկ. 5), որն ալեյի զարգացած աստիճան է, ի հայտ են գալիս խորհրդանշաններ (սիմվոլներ): Ընդ որում, երկրորդ խումբն իր հերթին բաժանելի է երկու ենթախմբերի, որոնցից առաջինում գերակշռում են պարզ նկարները, իսկ երկրորդում՝ խորհրդանշանները: Խորհրդանշանները Հայաստանի

¹⁰⁶ Դասակարգման այս սկզբունքը մակամասերին վերաբնդ է Ի. Է. Գելբը (Gelb, 1965, էջ 29-51; Դասմ, 1982, էջ 38-58):

ժայռապատկերներում հանդես են գալիս սկսած Ք.ա. մոտ V հազարամյակից և բազմաթիվ զուգահեռներ ունեն համաժամանակյա հնագիտական իրերի վրա³⁰⁷:

Ժամանակագրական առումով այս խմբերի միջև սահման դնելը ճիշտ չէ, քանի որ սկսած Ք.ա. V հազարամյակից՝ երկու խմբերը հանդես են գալիս զուգահեռաբար:

Նշանագրեր միջվաղորդակայության պեղածու իրերի վրա: Այսօր արդեն ունենք զգալի քանակությամբ նյութեր Ք.ա. V–IV հազարամյակների Հայկական լեռնաշխարհի հնագիտական հուշարձաններից, որոնք թույլ են տալիս եզրակացնելու վաղ պատկերագրության բարձր մակարդակի գոյությունը և գաղափարագրության սկզբնավորումը նշված ժամանակաշրջանում:

Առավել կարևորում ենք այն հանգամանքը, որ սկզբնական այս շրջանում ի հայտ եկող նշանագրության բնորոշ գծերը շարունակվում են հետագա հազարամյակներում. այսինքն՝ մենք գործ ունենք Հայկական լեռնաշխարհում գրային մտածողության ժառանգորդության հետ: Դա երևում է և՛ Թեղուտի գաղափարագիր-թվականներից (նկ. 7)³⁰⁸, քանի որ թվերի կետային նշումը Հայկական լեռնաշխարհի առանձնահատկությունն է Հին Առաջավոր Ասիայում³⁰⁹, և՛ այլ հնավայրերի խեցեղենի գաղափարանշաններից³¹⁰, և՛ կնքագործության մեջ ավանդույթների (այդ թվում՝ գաղափարագրության) շարունակականությունից³¹¹:

Այսպիսով տեսնում ենք, որ Ք.ա. V հազարամյակից Հայաստանում վաղ պատկերագրության ներսում ձևավորվում է զարգացած պատկերագրությունը՝ գաղափարագրությունը, որը լայն տարածում է ստանում Ք.ա. IV–III հազարամյակներում:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՅԱԾ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԳՐԱՄՓԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ). ԳՐԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՂ ԲՐՈՆԶԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Այս բաժնի շարադրանքը կապված է որոշակի բարդությունների հետ: Նախարիայեական Հայաստանի գրանշանային հուշարձանները դեռևս համակարգված ուսումնասիրության չեն ենթարկվել: Եթե մի կողմ թողնենք առանձին գաղափարանշանների հավանական մեկնարանությունները, որևէ արձանագրություն վերձանված չէ, ինչը բարդացնում է վերջնական եզրակացու-

³⁰⁷ Ժայռապատկերների և դրանց համաժամանակյա հնագիտական իրերի նշանների համեմատությունը, նաև համադրումը Վանի թագավորության և միջևտարի հայկական մատյաններում վերջած նշանագրերի հետ տե՛ս Մարմնագրային, 1973 (ամփոփումն ու եզրահանգումները՝ էջ 68–70, աղ. XXIII), գիտահանրամատչելի տարբերակով՝ Մարմնագրային, 1978, աշխատություններում:

³⁰⁸ Թորոպյան, 1976, տախտ. V–VII:

³⁰⁹ Ցի՛ս «Վանի թագավորության մեծնազրությունը» բաժնի «Թվականներ» ենթաբաժնում:

³¹⁰ Օրինակ՝ Շանիք-թեփեի պղնձբարեկարգության ժամանակաշրջանի խեցեղենի նշանները (նկ. 8, տե՛ս Կյուսուբա, 1993, էջ 48), որոնք թագմարիվ կրկնակները հանդես են գալիս հետագա դարաշրջաններում:

³¹¹ Այդ մասին հանգամանորեն տես՝ Փլեխալայան, 1998 աշխատության էջերում:

թյունների հանգեղը: Անգամ դժվար է այդ ժամանակաշրջանի համար «լիարժեք/իսկական իմաստով գիր» հասկացության կիրառումը: Ուսումնասիրողների մեծ մասը հավիված է այդպիսին համարել այն նշանային համակարգերը, որոնք հաղորդում են ոչ թե ընդհանուր հասկացություններ, տեսարաններ և պոեմներ, այլ լեզվական խոսքի միավորներ (բառեր և դրանք կապող քերականական մասնիկներ, իսկ ավելի զարգացած փուլերում՝ վանկեր և հնչյուններ)³⁶²: Անկախ այն բանից՝ հետագայում վերծանության շնորհիվ կարգվի դրանց՝ նախագրային փուլի պատկանելը, թե՛ զարգացած գրային համակարգ լինելը, պատկերն ամբողջացնելու նպատակով ստորև կներկայացնենք նախամաշտոցյան Հայաստանում տեղիված և տարածում գտած պատկերագրային (զադափարագրային) համակարգերը:

Դժվար է նաև որոշելը, թե Հայաստանի՝ ժամանակագրորեն իրար հաջորդող պատկերագրային համակարգերը (Ք.ա. V–III հազարամյակներում ձևավորված զարգացած պատկերագրությունը, Ք.ա. III–I հազարամյակների զծային գիրը և քիայնական մեխենագրությունը) պետք է դիտարկել որպես միևնույն գրահամակարգի՝ զարգացման շնորհիվ ձևափոխված տարբեր փուլեր, թե՛ միևնույն սկզբնականից ծագող տարբեր գրային համակարգեր³⁶³:

Ք.ա. V հազարամյակից, ինչպես նշվեց, Հայաստանում վաղ պատկերագրության ներսում ձևավորվում է զարգացած պատկերագրությունը՝ զադափարագրությունը, որը լայն տարածում է ստանում Ք.ա. IV–III հազարամյակներում: Այդ դարաշրջանի պատկերագրության արտահայտությունները հատկապես շատ են հանդիպում Հայկական լեռնաշխարհի վաղորոնգեղադարյան (շենգավիթյան, կուր–արաքսյան) խեցեղենի վրա, իսկ Ք.ա. III հազարամյակի կեսերին Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս այդ մշակույթի ներթափանցմանը զուգահեռ (հարավում մինչև Կիլիկիա, Սիրիա և Պաղեստին (Քիրքեթ–Կերակյան մշակույթ), հյուսիսում՝ Հյուսիսային Կովկաս) տարածում է գտնում նաև նշանագրված խեցեղենը:

Թեպետ Հայկական լեռնաշխարհի վաղորոնգեղադարյան մշակույթի (այդ թվում՝ նշանագրված խեցեղենի) վերաբերյալ հայտնաբերվել է հսկայական նյութ և առկա են բազմաթիվ հրապարակումներ, այդ ժամանակաշրջանի նշանագրերը դեռևս չեն հավաքվել ու համակարգվել: Եղել են նշանագրերի և պատկերամոտիվների մասնակի ի մի բերման առանձին փորձեր: Օրինակ՝

³⁶² Գրաբանության ստարածումը անմասնաբաժնի է կա «փարթեթ / իսկական գիր» համակարգության սահմանման նպատակով: Մասնավորապես վերաբերվում է, թե զարգացման որ մակարդակից կարելի է կիրառել այդ համակարգությունը՝ գրտ բառային (զարգացածագրային), բառականային (զարգացածանչյունազարգան), թե՛ միայն վանկա-նչյունական (ուղղի քննարկումը, տե՛ս, օրինակ, Մերքու, 1965, էջ 11–14): Մենք կողմ ենք աստիճանականության աստիճան այն մտածելու, որ «իսկական (կամ կարգավոր) գիր» համակարգության տակ պետք է ընդգրկել բոլոր այն նշանային համակարգերը, որոնցով նկարագրվել է արտահայտվել ց միայն ընդհանուր զարգացմանը, այն նկայանային խոսքը՝ որպեսզի քերականական հասկացություններով:

³⁶³ Մեր նախորդ աշխատանքներում լեռնային ենք աստիճան վերաբերել, ինչի հավիված ենք այն ևս: Կշեղք, ասկոյն, որ նկարագրում ուսումնասիրությունները (նախկանում վերծանության ուղղությանը աստիճան արդյունքներով) կարող են ընդ այն նաև կշեղքով նշագրագրությունը:

Տ. Չուրխինիչվիլին, հիմնականում օգտագործելով Ջավախքի տարածքից հայտնաբերված կյուրթը³⁶⁴, առանձնացնում է դրանցից 42-ը, Ա. Գ. Սազունան, առանց նշանների առանձնացման, կազմել է 324 միավորներից բաղկացած «Մուռիվների կորպուս»³⁶⁵ (նկ. 8), Կ. Մարրոն Եփրատի վերին ավազանի վաղորոնգեղարյան 256 իրերի վրա առանձնացնում է 108 նշաններ և նշանների տարբերակներ³⁶⁶, Պ. դը Միրոշեդժին առանձնացնում է վաղորոնգեղարյան ժամանակաշրջանի Քիբրեթ-Կերակյան խմբի խեցեղենի 21 մուռիվներ (նկ. 9)³⁶⁷ և այլն: Վաղորոնգեղարյան խեցեղենի նշանագրերի ամբողջական հավաքումն ու համակարգված ուսումնասիրությունը մնում է Հայաստանի հնագիտության չուժված խնդիրներից մեկը³⁶⁸:

Նշենք, որ վաղորոնգեղարյան խեցեղենի նշանագրերի կրկնակները մեծ քանակությամբ հանդիպում են նույն ժամանակաշրջանով թվագրվող ժայռապատկերներում և այլ հուշարձաններում: Դրանց համադրման և ուսումնասիրության ուղղությամբ զգալի աշխատանք է կատարել Հ. Ա. Մարտիրոսյանը³⁶⁹, ինչը, սակայն, նրանից հետո, ըստ էության, չի շարունակվել:

Անբավարար ուսումնասիրվածության պատճառով այստեղ չենք ներկայացնում վաղորոնգեղարյան (հատկապես՝ խեցեղենի) նշանագրության բնորոշ առանձնահատկությունները (նշանների թիվը, գրության ուղղություն(ներ)ը, արձանագրությունների քանակն ու տեսակները, ծավալը, կառուցվածքը և այլ հատկանիշներ), որոնք ևս մնում են հետագա ուսումնասիրության կյուրթ:

Վաղորոնգեղարյան նշանագրության հուշարձանների մեկնաբանությունների ու վերծանության ասպարեզում կատարված մեզ հայտնի աշխատանքները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջին խմբի հեղինակները փորձել են մեկնաբանել միայն առանձին նշաններ կամ ամբողջական համա-

³⁶⁴ Կլեոստատու, 1971, աղ. XXVII:

³⁶⁵ Sagona, 1984, մաս III, նկ. 115-124:

³⁶⁶ Maero, 1997, աղ. 86-92 (Նիդրլանդ դրանք համարում է 37 նշանների տարբերակներ, ինչն ընդունելի չէ, քանի որ մի շարք դեպքերում միևնույն նշանի տարբերակներ են համարվում իրարից քիչին տարբերվող նշանները, առաջ մենք այդ նշանները բլբոսում ենք առանց Կ. Մարրոյի համարարկման մեր համեմատի աղ. 5-ում):

³⁶⁷ de Miroschedji, 2000, էջ 275, նկ. 4:

³⁶⁸ Մինչ օրս կատարակվածներից ամենամոտրվածը Ա. Գ. Սազունայի «Մուռիվների կորպուս»-ն է (Sagona, 1984, Part III, նկ. 115-124): Հարկ է նշել, որ, չնայած ստանդլ ընդգրկուն փննքուն, կորպուսում արտաշոգրված չէ նաև մինչև 1984 թ. յույս տեսած ողջ կյուրթ (օրինակ՝ մարտիրոսյան Յանկո-քնիկ հնավայրի նշանագրված խեցեղենը, տե՛ս Burney, 1961, էջ 138-153; Burney, 1962, էջ 134-152, նաև քաղաքագրում են Հայաստանի հնավայրերից հայտնաբերված շատ կյուրթեր, որոնց մասին կրատաբար ավանդել երկն էին միայն հայերեն):

Ներկայումս Հայաստանի վաղորոնգեղարյան խեցեղենի նշանագրերի հավաքման և քննադատար դիման կազմելու ուղղությամբ աշխատում է հնագետ Աննա Ազիզյանը: Երա կատարած աշխատանքի նախնական հայտարարումներից մեկը տե՛ս Ազիզյան, 2014, էջ 223-233:

³⁶⁹ Հեղինակը, համարելով Հայաստանի ժայռապատկերներում և վաղորոնգեղարյան խեցեղենի վրա հանդիպող նմանատեսք պատկերավորելը չիպան-ուրարտական էկիբոլոգիկների ու նախնական միջնադարյան մայրաքաղաքներում վկայված նշանագրերի հետ, ցույց տվեց, որ դրանք հայաստանյան պատկերավորության ժառանգական զարգացման տարբեր փուլերն են (Մարտիրոսյան, 1973, եզրանակումները՝ էջ 68-70, աղ. XXIII):

պատկերներ (կոմպոզիցիաներ)³⁷⁶: Երկրորդ խումբը առայժմ ներկայացված է մեկ օրինակով, կատարվել է Օզնիի արձանագրության (նկ. 10) վերծանության մի փորձ, որը հեռու է համոզիչ լինելուց³⁷⁷:

Ավելացնենք, որ գրի (զարգացած պատկերագրության) առկայությունը Հայկական լեռնաշխարհում Ք.ա. III հազարամյակի սկզբին հավաստվում է ոչ միայն հնագիտական գտածոներով, այլև օտար աղբյուրների վկայությամբ: Շումերական քնագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ք.ա. III հազարամյակի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհում այսօր հայտնի առաջին՝ Արատուս պետությունն ունեցել է սեփական գիր³⁷⁸:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԾԱՅԻՆ ԳԻՐԸ

Վաղորոնգեղարդյան նշանագրության մեջ արդեն ակնհայտ է դառնում նկար-պատկերագրերի գծայնացումն ու իրենց նախօրինակների տեսքից հետացումը: Հայաստանյան նշանագրերը Ք.ա. III հազարամյակի առաջին կեսին ձևաբան թերում ավելի գծային, քան նկարային տեսք³⁷⁹: Ք.ա. III հազարամյակի երկրորդ կեսին, II հազարամյակում և I-ի սկզբին գծային գրերի այս համակարգն ավելի լայն կիրառություն է ստանում Հայաստանում: Գրային համակարգի կիրառությունը դադարում է լեռնաշխարհում Վանի թագավորության իշխանության տարածմամբ:

Միայն Արևելյան Հայաստանում անցյալ դարավերջից մինչ օրս հայտնաբերվել են 300-ից ավելի ծավալուն արձանագրություններ, որոնք դեռևս համապարփակ ուսումնասիրության չեն ենթարկվել³⁸⁰:

³⁷⁶ Այս ուղղությամբ կա ամենամեծ աշխատանքը կատարել է Հ. Ա. Մարտիրոսյանը (ամփոփված՝ Մարտիրոսյան, 1973 և Մարտիրոսյան, 1978): Տե՛ս նաև Դեմարքանտ, 1982, էջ 154-164; Փրոտոս, 1984, էջ 54-66; Ափրաքտո, Դեմարքանտ, 1985, էջ 66-84; Դեմարքանտ, Փրոտոս, 1985, էջ 68-86 և այլն: Օսիական քրիի և պոպալաուս մի աշխատանք է կատարել Լ. Շալեյալովիչին՝ ստանձնագրերով ընդամենը 33 նշան (ընդ որում, ևս միևնույն նշան է համարում իրարից բավականին տարբերվող նշաններ), որոնք համեմատության մեջ է դնում էֆևարեկյան այլ գրատեսակագրերի նմանատեսք նշանների հետ (Մանուսատուտ, 1999, էջ 3-66, վրացերեն և ռուսերեն):

³⁷⁷ Հայկական, նմանեցնելով Օզնիի արձանագրության նշանները ինքսա-ուփական էֆևարեկյանին, այն առարկելում է ընթերցել «Մեծ առանձն նանագրերի դեպի ստանք» (Մանուսատուտ, 1989, էջ 209-212): Նման տրամադրություն քայքայ պետք է վաղորոնգեղարդյան ինքնուրույն վիսա հանդիպող բոլոր գրություններն ընթերցվեն ինքսա-ուփական էֆևարեկյանի տեղանկերով, ինչ կապի չունի իրականության հետ:

³⁷⁸ Kramer, 1952, էջ 35; Kaucua, 1964, էջ 216; ETCSL, 1.8.2.3, ստղ 454-455; Vanistphout, 2003, էջ 83; հմմտ. Մովսիսյան, 1992, էջ 60-62; Մովսիսյան, 2005 (ա), էջ 102-103:

³⁷⁹ Գրերի զարգացման պատմության մասին հայտնի օրինակավորությունները ցույց են տալիս, որ պատկերագրերը նկարային ընդարձ կրթվում և գծային նշանների են վերածվում դարերի (երբեմն՝ հազարամյակների) ընթացքում: Եգիպտական էֆևարեկյանները, օրինակ, պատկերային տեսքով կիրառվում էին Ք.ա. XXXII դարից սկսած (արագագիթ տարբերակը՝ Ք.ա. XXX դարից), իսկ դրանց պարզեցման ձևերը՝ «դեմոտական գիրը», զործածության մեջ մտան միայն VIII դարում (Korocostian, 1961, էջ 7-8, 19-20): Սա անուղղակիորեն վկայում է, որ իրականում են այն հեղինակները, որոնք Հայկական լեռնաշխարհում գրի (զարգացնողության) մուտքը թվալուում են Ք.ա. V հազարամյակով:

³⁸⁰ Եվսում թվի մեջ չեն մտնում ստանձնի մեծանշանները կրող առարկաները: Այս արձանագրությունները ուսումնասիրության ուղղությամբ մեր կատարած նախնական աշխատանքը տե՛ս Մովսիսյան, 1999, էջ 202-210; Մովսիսյան, 2003 (ն), էջ 30-46, 173-188:

ԳՏԱՅԻՆ ԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: Ժամանակագրական հերթականությամբ ստորև ներկայացվող հնագիտական հայտնագործությունների համառոտ թվարկման ընթացքում մենք չենք իշխատակի այն առարկաները (զինատեսակներ, խեցեղեն գանազան ամանեղեն և այլն), որոնք հայտնաբերվել են միջին, ուշ բրոնզի ու վաղ երկաթի դարաշրջանների մշակութային շերտերից և կրում են առանձին նշաններ կամ մնանաշաններ: Հետագայում, երբ կազմվի Հայաստանի գծային գրերի արձանագրությունների լիակատար ժողովածու, նշված բոլոր հնագիտական իրերը պետք է ընդգրկվեն դրանում, իսկ առաջիկա տողերում կներկայացվեն միայն ծավալուն բնագրերը:

Հայտնաբերման սկզբնական շրջանում Հայաստանի գծային գրերը ստացան «առեղծվածային» որակումը: «Առեղծվածային» համարված հուշարձաններից առաջին երկուսը հրատարակվեցին 1910 թվին՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանի կողմից¹⁷⁷: Դրանք հայտնաբերվել էին Արաքս գետի աջ ափին գտնվող Յոլակերտի բերդի մոտակայքում (նկ. 11): Հաջորդն Արմավիրի արձանագրությունն էր (նկ. 12a–ում՝ արձանագրությունը, նկ. 12b–ում՝ կնետրոնում արձանագրությունն է, շուրջը՝ մերձակայքում եղած փոստրակներն ու այլ փորագրություններ)¹⁷⁸: Ի տարբերություն նախորդների, որոնց թվագրումն անորոշ էր, վերջինս ուներ ժամանակագրման մի կարևոր փաստարկ. արձանագրություն կրող քարը շրջվել էր, որի վրա փորագրվել էին, ըստ մասնագետների, Ք.ա. III–I դարերով թվագրվող հունարեն արձանագրություններ¹⁷⁹: Հետևաբար, նշանագրերի քանդակման ժամանակը պետք է նախորդեր նշված դարերին. ավելին ճշգրտելու համար տվյալներ չկային: Այս արձանագրությունների ուսումնասիրության գործում կարևոր ներդրում ունեցավ Ի. Ի. Մեչյանինովը¹⁷⁹, որի աշխատանքներում ի մի բերվեցին մինչ այդ հայտնի հուշարձանները, առաջին անգամ հրատարակվեցին Ելեննեդորֆի (Գանձակի մոտ) պեղումներից Ե. Ռյուպերի (1899–1901 թթ.) ու Յ. Գումմելի (1930–1931 թթ.) հայտնաբերած չորս առարկաների (որոնցից երեքի նշանները տե՛ս նկ. 13) և Տաննատափի (Խոջալուի) դամբարաններից մեկի երկու քարերի նշանները (նկ. 14): Երկու հնավայրի նյութերն էլ, ըստ Ի. Ի. Մեչյանինովի հնագիտական վերլուծության, թվագրվում են Ք.ա. I հազարամյակի սկզբով:

1960–ական թթ. հրատարակվեցին Ք.ա. II հազ. սկզբով թվագրվող մի շարք գրություններ Ջավախքից¹⁷⁹, որոնք վկայված էին ոչ թե առանձին իրերի վրա, այլ դամբարանների պատերին (մի քանիսը՝ նկ. 15):

¹⁷⁷ ՏՆՍՍՄԻՍԻԱՆ, 1910, էջ 574–576; Սմբատյան, 1913, էջ 52–68:

¹⁷⁸ Kalantar, 1929, էջ 44–45; Meunier, 1932, էջ 51–55; Meunier, 1933, էջ 34–65; Top–Auerbach, 1941, էջ 51–64:

¹⁷⁹ Արձանագրությունների և դրանց թվագրման վերաբերյալ հայտնված տեսակետների մասին տե՛ս Մովսիսյան, 2003 (ա), էջ 124–138 (և եղված գրավազանները):

¹⁷⁸ Meunier, 1932, էջ 51–55; Meunier, 1933, էջ 34–65:

¹⁷⁹ Дамбары, 1964, էջ 117–120:

Մեծամորի ժայռագիր արձանագրությունների 27 պահպանված բեկորներից (դրանցից հինգը տե՛ս նկ. 16), որոնց մասին մամուլում տեղեկություններ էին հայտնվել դեռևս 1913 թ., ամբողջությամբ հրատարակվեցին միայն 60 տարի անց³⁰⁰: Ժայռագիր նշանների վերաբերյալ Կ. Հ. Մկրտչյանը նշում է. «...հատկանշական է նրանց զգալի մասի նմանությունը, և շուրջ 17 նշանի նույնությունը հայկական միջնադարյան ձեռագրերում պահպանվող նշանագրերի և Վանի թագավորության շրջանում սեպագրի հետ զուգահեռ օգտագործված նշանագրերի հետ: Այս առումով Մեծամորի ժայռագրերը կարող են հատուկ ուսումնասիրության նյութ դառնալ»³⁰¹: Ցավոք, հիրավի մեծ կարևորություն ունեցող այս հուշարձանները մինչ օրս չեն դարձել հանգամանալի ուսումնասիրության առարկա³⁰²:

Շարունակելով և զարգացնելով Ա. Քալանթարի դիտարկումները՝ Մ. Խաչատրյանը Մեծամորի ժայռակերտ պաշտամունքային կառույցների չորրորդ խմբի³⁰³ փորագրությունները համարում է Արագածոտնի նախաուրարտական ջրաբաշխական համակարգի փորագիր քարտեզ, որի «հյուսիսային և հարավային մասում կա չընթերցված հիերոգլիֆ մակագրություն», այսպես ասելով, որ «նշանագրերից մեկը նման է փյունիկյան–եգիպտական «մյոմ» գաղափարագրին, որ ընթերցվում է «ջուր»³⁰⁴:

Ժայռագիր արձանագրություններից բացի, Մեծամորի Ք.ա. II–I հազարամյակների սահմանագծով թվագրվող մշակութային շերտից հայտնաբերվեց կալն նշանագրված մի տախտակ³⁰⁵ (նկ. 17), որը, հավանաբար, ծառայել է իբրև հմայիլ:

Մեծամորի նյութերի հետ Կ. Հ. Մկրտչյանն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց Թալինի ենթաշրջանի Վարավաձոր գյուղի տարածքում գտնվող ջրի պաշտամունքին նվիրված չափազանց ուշագրավ ժայռափոր մի հուշարձան (նկ. 18)՝ համեմատելով այն մեծամորյան համանման փորագրությունների հետ³⁰⁶: Դժբախտաբար այս կարևոր հուշարձանը ևս շարունակում է մնալ գրեթե անտեսված:

Հ. Ա. Մարտիրոսյանն ի մի է բերել Ջավախքի, Ուրմիտ լճի ավազանի, Յոլակերտի և Արմավիրի վերոհիշյալ արձանագրությունները, որոնցից վերջին

³⁰⁰ Խանդավազյան, Մկրտչյան, Պարսամյան, 1973, էջ 149–165, աղ. XXXI–XXXIV:

³⁰¹ Խանդավազյան, Մկրտչյան, Պարսամյան, 1973, էջ 163 (բաժնի եղելով) Կ. Հ. Մկրտչյան:

³⁰² Ժամանակին մեծամորյան նշանների վերծանության մասին մի շարք հրատարակումներ կատարեց Մ. Ալիշահյանը՝ ղրաքը համարելով «նախնական արձանագրություններ», ինքը տար քննադատության ենթարկելից Բ. Բ. Պիտոբոկոնու կողմից (Պետրոբոցեոն, 1971, էջ 302–303, որում եղելու են Ա. Այվազյանի 1960–ական թթ. հրատարակումները): Բ. Բ. Պիտոբոկոնին մատուցելով էլ, որ դրանցից շատերը արարական քուֆի գրե՛ն են: Այս հարցում որոշ պարզություն մտցնելու նպատակով փորձեցինք կազմել մեծամորյան ժայռագրերի նշանագրանց՝ ընդգրկելով միայն ամբողջական պահպանված նշանները և ստացված ավելի քան 60 նշան (մեք հավելվածում՝ աղ. 6), մինչդեռ ո՛չ քուֆին, ո՛չ էլ արարական որևէ այլ գրատեսակ այդ քանակի նշաններ կրելու չի ունեցել:

³⁰³ Խանդավազյան, Մկրտչյան, Պարսամյան, 1973, էջ 155, նկ. 154:

³⁰⁴ Խաչատրյան, 1971, էջ 130, 136–137:

³⁰⁵ Խանդավազյան, Մկրտչյան, Պարսամյան, 1973, էջ 131, աղ. XXIX:

³⁰⁶ Խանդավազյան, Մկրտչյան, Պարսամյան, 1973, էջ 151–153, նկ. 151:

երկուսը թվագրել է Ք.ա. II հազ. վերջով և I-ի սկզբով³⁹⁷: Նշված քնագրերը ժայռապատկերների հետ միասին նա միախորում է որպես մեկ ընդհանուր՝ «նախնադարյան նշանագրեր» անունը կրող խումբ, ինչը քննադատելի է, քանի որ ժայռապատկերները նախագրային փուլի հուշարձաններ են, իսկ վերոհիշյալ արձանագրությունները վերաբերում են զարգացած գրային ժամանակաշրջանի:

Չնայած այն բանին, որ վերջին տասնամյակներում հայտնաբերված նյութերը կարող էին նոր լույս սփռել քննարկվող արձանագրությունների հետազոտման հիմնախնդրի վրա, Հ. Ա. Մարտիրոսյանից հետո դրանց հավաքման ու համակարգված ուսումնասիրության փորձ չի կատարվել: Խոսքը, մասնավորապես, Ապարանի ջրամբարի ափին, Քուչակ գյուղի մոտ գտնվող Ք.ա. XVIII–XIV դդ. թվագրվող հուշարձանների մասին է, որոնց 1986–1987 թթ. պեղումներից գտնվեցին շուրջ հինգ տասնյակ արձանագրված քարեր, որոնցից մի մասի վրա նշաններ էին արված երկու կամ երեք կողմից (ընդհանուր առմամբ՝ շուրջ 80 երես գրություն)³⁹⁸: Առաջին իսկ հայացքից ակնառու է Քուչակի արձանագրությունների կապը Տանձատափի (Խոջալուի) և Չավախքի դամբարանքարերի հետ, ընդ որում, վերջիններն ունեն ավելի արխայիկ բնույթ: Քուչակի նշանները նկատելի ընդհանրություն ունեն նաև Ելենեեղորժի, Յուլակերտի, Արմավիրի, Ուրմիո լճի սվազանի և Մեծամորի վերոհիշյալ հուշարձանների նշանների հետ (աղ. 6): Դրանցից մի քանիսի հետ տիպաբանորեն կապվում է նաև Ք.ա. II–I հազարամյակների սահմանագծով թվագրվող Այգեշատի հնավայրից 1990 թ. գտնված կավամաններից մեկի հաստակին արված արձանագրությունը (նկ. 19)³⁹⁹:

Հետաքրքիր արձանագրություն կա Վերին Նավեր հնավայրի միջին բրոնզի դարով թվագրվող դամբարաններից մեկի ծածկատափի վրա (նկ. 20)⁴⁰⁰:

Ժամանակին Ախալցխայի շրջանի Ծուղղութ գյուղից երևան է տեղափոխվել գծային գրանշաններով, կամարածև վերնամասով մի կոթողի վերին բևեռը (լուսանկարը և գծանկարը՝ նկ. 21)⁴⁰¹:

Թվարկվածներով չի սահմանափակվում Ք.ա. III և I հազարամյակներով թվագրվող գծային գրանշաններ կրող հուշարձանների ցանկը: Չգալի թիվ են կազմում արդեն հայտնաբերված, բայց առայժմ չիրատարակված հուշարձանները:

Դրանց թվում պետք է նշել Քուչակի դամբարանադաշտի բազմաթիվ չպեղված դամբարանները, որոնց քարերին առկա են գծային գրանշաններ. դրանք

³⁹⁷ Мартirosian, 1964:

³⁹⁸ Մարտիրոսյան, 1987, էջ 20–21; Մարտիրոսյան, 1993, էջ 103–105, աղ. СIII–СХV; Մովսիսյան, 2003 (b), էջ 173–188:

³⁹⁹ Մովսիսյան, Ավետիսյան, 2006, էջ 14, 198, աղ. 2–6; Մովսիսյան, 2003 (b), էջ 35:

⁴⁰⁰ Մյնսկյան, 1982, էջ 17–18; Մովսիսյան, 2003 (b), էջ 36–37:

⁴⁰¹ Կոթողը նախ նրատարակվել է մեր կողմից ՀՀ ԳԱՀ «Գիտություն» թերթում (1998, ապրիլ, № 8–9), ապա՝ Մովսիսյան, 2003 (b), էջ 36–37:

մնացել են Ապարանի ջրամբարի հատակին և բացվում են միայն ամռանը՝ ջրի մակարդակի իջման ժամանակ³⁹²:

Դեռևս չեն հրատարակվել Երեջատափ գյուղից հայտնաբերված չափազանց ուշագրավ քարակոթողները³⁹³: Մասնագիտական գրականությանից հայտնի է, որ նշանագրված քարակոթողներ կան Սպիտակի ենթաշրջանի Գոգարան գյուղի նախաքիայնական հնավայրում³⁹⁴, որոնք ուսումնասիրելու հնարավորություն առայժմ չեն ունեցել:

1996–1997 թթ. հայ–խոսազական համատեղ արշավախումբն Արմավիրում հայտնաբերեց երկու քարեր, որոնք ենթադրաբար համարվում են երկար ժամանակ կորած համարվող մեհենագիր և հունարեն արձանագրություններով քարերի քեկորներ³⁹⁵: Քարերից մեկի քանդակների (այդ թվում՝ «աստվածության» պատկերի) կողքին կան նաև նշանագրեր (նկ. 22):

Հնագետ Բ. Գասպարյանի ընկերակցությամբ լինելով Ապարանի ենթաշրջանի Մուլքի–4 քարեղայրյան բնակատեղիում շրջակա տարածքներում նկատեցինք մեծ թվով եույնատն նշանագրված քարեր, որոնք տեղաշարժվել էին նախնական դիրքերից՝ մշակելի հողատարածքներ բացելու նպատակով:

Ժաթապատկերաբան Կ. Թոխաթյանի ընկերակցությամբ եղանք Կարավաճորում և վերոհիշյալ փորագրություններից բացի, ամրոցի արևելյան կողմում, ուր առկա էին պաշտամունքային կառույցների հետքեր, նկատեցինք համանման այլ փորագրություններ ևս: Վերջիններս մի կողմից ակներևաբար կապվում են Մեծամորի, մյուս կողմից՝ Կարմիր բերդի նախաքիայնական ժամանակաշրջանի նման փորագրությունների հետ³⁹⁶:

Հազվագյուտ հուշարձան է Ծամիրամի՝ իր տեսակի մեջ առայժմ եզակի նշանակիր մենհիրը (գծանկարը՝ նկ. 23)³⁹⁷: Մենհիրի նշաններն ակնառու նմանություն ունեն Վանից գտնված մի կարասի չվերձանված գրության հետ (նկ. 24), որը Կ. Ֆ. Լեհման–Հաուստը հրատարակել է 1931 թվին³⁹⁸:

Մեր հնագետների հետ բանավոր գրույցների ընթացքում տեղեկացել ենք, որ նշվածներից բացի կան համանման մի շարք հուշարձաններ, որոնց ուսում-

³⁹² Դրանց մասին կրում է Ֆ. Մուրադյանը (Մուրադյան, 1992, էջ 104): 2001 թ. ամռանը կրպակի պատմաբան ջրամբարի մակարդակի իջել էր անտեսառելի չափերով: Համեն Մարտիկոսյանի ընկերակցությամբ լինելով ջրամբարի տարածքում՝ նկատեցինք նշանագրված քարերով մեկ տասնյակից ավելի չափով զանազաններ:

³⁹³ Կոլոյի պիտոցի սրահատեղման համար շնորհակալություն ենք հայտնում հուշարձանախումբը հայտնաբերած Բորիս Գասպարյանին:

³⁹⁴ Տե՛ս, օրինակ, Մուրադյան, 1992, էջ 105, որում հերքումը կրում է դրանց և Քուսանի նշանագրերի՝ բնույթով տարբեր լինելու մասին:

³⁹⁵ Կարավաճորյան, Խոսաթաթյան, Կանեղյան, Կախաբաբայան, 1998, էջ 35–36:

³⁹⁶ Չիրատարակված այս փորագրություններին մեր ուշադրությունը հրավիրեց հնագետ Հուսիկ Մկրտչյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում:

³⁹⁷ Մրճիպյան, 2003 (b), էջ 38–39: Կրճիկից, որի կենտրոնում տեսնուցված է մեհնիրը, պեղված չէ, սակայն նկատի ունենալով անբոլոր զանազանաչափի ժամանակաշրջանից՝ այն կարելի է թվագրել 4-ու. II–I հազարամյակների սահմանագծով:

³⁹⁸ Lehmann-Haupt, 1931, էջ 467–468:

նասիրությունը և լիակատար հրատարակությունը առաջիկա տարիների գործ է:

Լշենք, որ համանման կոթողներ կան նաև Արևմտյան Հայաստանում: Վերջերս մեզ տրամադրվեցին Կարսի և Համշենի շրջաններում գտնվող մի քանի քարերի լուսանկարներ, որոնց վրայի նշաններն ակնհայտորեն հիշեցնում էին քննարկվող գծային գրերը: Դժբախտաբար, դրանց բոլորին սպառնում է ոչնչացման վտանգը: Թուրքական կառավարության կողմից հայկական հուշարձանների ծրագրված ոչնչացումից զատ, թուրքերի ու քրդերի շրջանում չափազանց տարածված է Մեծ Եղեռնի տարիներին հայերի թաքցրած գանձերի մասին առասպելը. ցանկացած նշանագրված քար նրանք ընկալում են իբրև գանձացույց, որին հաջորդած «գանձորոնումների» արդյունքում ոչնչանում են ինչպես այդ քարերը, այնպես էլ դրանց տակ երբեմն հանդիպող հուշարձանները: Այս տխուր իրականությունը Հայոց Յեղասպանության շարունակական դրսևորումն է, նաև՝ Մեծ Եղեռնի արձագանքը թուրքերի ու քրդերի ժողովրդական հիշողության մեջ, ինչն այնքան փութաջանորեն շարունակում են ուրանալ թուրք կեղծարարները...

ԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ: Որևէ անհայտ լեզվի ու նրա գրային համակարգի ուսումնասիրությունն սկսելու համար նախ անհրաժեշտ է պարզել այդ համակարգը բնութագրող մի շարք առանձնահատկություններ, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծում տվյալ գրի ու լեզվի վերծանության համար: Դրանք վերաբերում են խնդրո առարկա լեզվի ու գրի հայտնիությանը և այլ լեզուների ու գրերի հետ ունեցած կապերին (եթե կան այդպիսիք), արձանագրությունների ժամանակագրությանը, տարածմանն ու այլ բնութագրիչներին (ծավալ, տեսակներ, կառուցվածք և այլն), գրային համակարգի տեսակին (ըստ նշանների թվի), գրության ուղղությանը և ներքին առանձնահատկություններին (գրանշանների ոճական բնույթին, օժանդակ նշանների, դետերմինատիվների, թվանշանների, կցագրման և այլնի գործածմանը), բազմալեզու արձանագրություններում մեզ հետաքրքրող լեզվի ու գրի առկայությանը, համաժամանակյա և այլ սկզբնաղբյուրներում վերծանությանը նպաստող ցացուցիչ ուրիշ տվյալների գոյությանը¹⁰⁹:

1. Գրի և նրանով արձանագրված լեզվի ծանոթության աստիճանը: Հայաստանի գծային գրով արձանագրություններ աշխարհի որևէ այլ վայրում չեն հայտնաբերվել: Այս գրային համակարգով թողնված որևէ արձանագրություն դեռևս չի ընթերցվել, իսկ առանձին նշանների վերաբերյալ մեկնաբանությունները բավարար չեն այդ գրով արձանագրված լեզուն պարզելու համար:

2. Արձանագրությունների ժամանակագրությունն ու տարածումը: Նախորդ ենթաբաժնում համառոտակի ներկայացվեցին այն հնավայրերը,

¹⁰⁹ Անհայտ գրերի ու լեզուների վերծանության մեթոդների մասին տե՛ս Aalto, 1945, էջ 3–26; Գրագրոս, 1961, էջ 152–157; Gels, 1975, էջ 95–104; Даниелс, 1976, էջ 11–29; Daniels, 1996, էջ 141–159:

դրոնցից գտնվել են գրակիր առարկաներ: Տեղադրելով դրանք քարտեզին՝ տեսնում ենք, որ գրային համակարգի տարածման ասիմետր հյուսիսում ընդգրկել է Ջավախքը, հարավում՝ Ուրմիո լճի ավազանը, արևելքում՝ Մեծ Հայքի Ուտիք և Արցախ նահանգների տարածքը, իսկ արևմուտքում կյուրի սակավության պատճառով առայժմ հստակ ասիմետրացված չունենք:

Քննարկվող արձանագրություններից հնագույնները թվագրվում են Ջ.ա. III հազարամյակի երկրորդ կեսով: Գրային համակարգի կիրառությունը դադարեց լեռնաշխարհում Վանի թագավորության իշխանության տարածմամբ, որն, ինչպես հայտնի է, պաշտոնական դարձրեց երեք նոր գրային համակարգեր⁴⁰⁰:

3. Գրակիր հուշարձանների բնութագիրը: Նշանակիր իրերի և արձանագրությունների բնույթի, նշանակության, կիրառման, ինչպես նաև նշանագրման տեխնիկայի վերաբերյալ տեղեկությունները, որպես օրինաչափություն, օգտակար են լինում գրային համակարգի ուսումնասիրության, երբեմն նաև վերձանության աշխատանքներում: Ներկայացնենք նշանագրված առարկաների հիմնական խմբերը՝ իրենց առանձնահատկություններով:

ա) Արձանագրություններ մնեհիդանման և սղ տեսակի քարակոթողների վրա: Այս շարքի հուշարձաններից են Շամիրամի մնեհիդը, Շուղորթից և Երեջատափից գտնված կոթողները:

բ) Արձանագրություններ դամբարանաքարերի վրա: Այս խմբի մեջ են մտնում Տանձատափի, Ջուլախի, Քուչակի, Վերին Նավերի դամբարանաքարերը: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել դամբարանների ծածկասաղերին:

գ) Արձանագրություններ քարերի (ժայռերի) վրա: Այս շարքի մեջ են մտնում Յոլակերտի, Արձալիլի, Մեծամորի, Ագարակի, Կարավաձորի (նաև չիրառարակված մի քանի այլ) արձանագրությունները:

դ) Նշանագրեր խեցեղեն ամանների վրա: Այս խմբում կարելի է տարբերակել երկու ենթախումբ՝ ամբողջական արձանագրություններ և առանձին նշաններ (երբեմն՝ մեկանշաններ) կրող խեցամաններ: Առաջին ենթախմբի մեջ են մտնում Ելեննեղորֆից, Վանից և Այգեշատից գտնված գրակիր խեցամոթերը: Երկրորդ խումբը, որն ի մի բերելու փորձ դեռևս չի արվել, անհամաձայտ մեծ է (մի քանիսը տե՛ս նկ. 25, Ջարաշամրից գտնված խեցեղենի⁴⁰¹ պատկերները՝ նկ. 26):

ե) Նշանակիր զինատեսակներ: Բացառիկ հետաքրքրություն են ներկայացնող այս խմբում առկա են առանձին նշաններ կրող թրեր, կապարճներ, գոտիներ, մարտական կացիներ և այլն (մի քանիսը՝ նկ. 27):

զ) Կնիքներ: Ինչպես զինատեսակների, այնպես էլ միջին, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններից մեզ հասած կնիքների վրա հանդիպում են միայն առանձին նշաններ: Գձային գրերով ամբողջական գրություններ կրող կնիքներ դեռևս չեն հայտնաբերվել:

⁴⁰⁰ Մոմֆայան, 1999, էջ 207–208:

⁴⁰¹ Փիֆալցյան, Հոֆմաննայան, 2003, էջ 74, 81, աղ. 3:

է) Հճայիկներ: Առայժմ հայտնաբերվել է գրակիր մեկ հմայիկ Մեծամորից: Մակայն մեծ հավանականությամբ պետք է ենթադրել, որ հմայական նշանակություն ունեն նաև քննարկվող ժամանակաշրջանով թվագրվող քաղմարթիվ կախիկներ, որոնց վրա պատկերված են առանձին գաղափարագրեր (նկ. 28):

4. Արձանագրությունների քանակն ու տեսակները: Մեր ունեցած արձանագրությունները կարելի է դասակարգել ըստ ծավալի և բովանդակային բնույթի: Տեսակավորման համար կարևոր չափանիշ է նաև արձանագրությունների կառուցվածքը: Քանի դեռ արձանագրությունները վերծանված չեն, մենք այս չափանիշներից կարող ենք անդրադառնալ միայն ծավալայինին: Ըստ այդմ, այսօրվա մեր ունեցած գրակիր հուշարձանները կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ ծավալուն արձանագրություններ և առանձին նշաններ (երբեմն՝ մենանշաններ) կրող առարկաներ:

Առաջին խմբի արձանագրությունների թիվը մեր ոչ վերջնական հաշվարկով անցնում է 300-ից: Երկրորդ խմբի գրակիր առարկաների հաշվարկ դեռևս չի կատարվել, քանի որ չի կազմվել այս գրահամակարգի արձանագրությունների և մենանշանների լիակատար ժողովածու:

5. Բազմալեզու արձանագրությունների սովորության խնդիրը: Դեռևս Ֆ. Շամպոլեոնի կողմից եզիպտական հիերոգլիֆիկայի վերծանության աշխատանքները ցույց տվեցին նույն բովանդակությամբ բազմալեզու արձանագրությունների անգերազնահատելի նշանակությունը անհայտ գրերի և լեզուների վերծանության գործում:

Դժբախտաբար, Հայաստանի գմային գրերով ոչ մի հուշարձան չուզանիտ այլ գրությամբ դեռևս չի հայտնաբերվել, ինչն ավելացնում է այս գրահամակարգի վերծանության բարդությունները:

6. Գրության ուղղությունը: Գրային համակարգերի պատմության մեջ կարելի է հանդիպել գրության ամենատարբեր ուղղությունների՝ աջից ձախ, ձախից աջ, վերից վար, բուստրոֆեդոն (տողերը հորիզոնական՝ ամեն հաջորդը նախորդին հակառակ ուղղությամբ), շրջանաձև և այլն⁴⁰²: Ի՞նչ ուղղություն է կիրառվել քննարկվող գրահամակարգում:

Այս հարցում մենք լիակատար անորոշության մեջ ենք. թեպետ խնդրո առարկա գրային համակարգով մեզ են հասել հարյուրավոր արձանագրություններ, այնուամենայնիվ, անհասկանալի են մնում դրանց գրության ուղղություն(ներ)ը: Որոշ դեպքերում տպավորություն է ստացվում, որ գործ ունեն ոչ թե որոշակի ուղղությամբ դասավորված նշանների, այլ ամբողջական տեսարանների հետ, որոնցից պետք է ենթադրել ընդհանուր բովանդակությունը:

7. Նշանների թիվը և ըստ այդմ գրային համակարգի տեսակը: Գրային համակարգի կարևորագույն բնութագրիչներից մեկը նրանում գործածված նշանների թիվն է: Այն, որպես օրինաչափություն, ցույց է տալիս, թե գրային ինչ տեսակի համակարգ է մեր առջև: Մովորաբար, եթե նշանների թիվը չի անցնում

⁴⁰² Գրության ուղղությունը սովորաբար որոշում են՝ նկնելով անավարտ տողերի չզրկած մասերից:

40–50–ից, ապա մենք գործ ունենք այրուքների հետ: 50–ից ավելի, մի քանի հարյուր նշաններ ունեցող համակարգերը լինում են վանկային կամ բառավանկային: Իսկ հազարավոր նշաններ ունեցողները բառային (գաղափարագրային) համակարգեր են՝ առանց հնչյունային նշանների կամ դրանց հազվադեպ կիրառմամբ:

Խեթա–լուվիական հիերոգլիֆիկան, օրինակ, որը Ք.ա. XV–VIII դարերում կիրառվել է նաև Հայկական լեռնաշխարհի արևմուտքում, բաղկացած է շուրջ 500 նշաններից, որոնցից հնչյունային կիրառություն ունեն մոտ 70–ը:

Հայաստանի գծային գրերի դեպքում առայժմ հայտնի են շուրջ 400–500 նշաններ, սակայն դրանց վերծանված չլինելը դեռևս հնարավորություն չի տալիս որոշակիացնելու, թե դրանց մեջ կա՞ն հնչյունային կիրառություն ունեցողներ, և եթե այո՝ քանի՞սը:

Ինչ վերաբերում է գրահամակարգի բնութագրին, ապա առավել հավանական է, որ այստեղ գործ ունենք բառավանկային գրային համակարգի հետ (չի բացառվում, բայց քիչ հավանական է, որ այն լինի գուտ բառային):

8. Կցագրում: Ինչպես ժամանակակից որոշ լեզուներում, մի շարք հին գրային համակարգերում ևս որևէ գոյական բնորոշելու համար դրանից առաջ դրվել է մեկ ուրիշը, որը դարձել է իր հաջորդի որոշիչը: Մեկագրության մեջ նույն նպատակով լայնորեն կիրառվում են որոշարկիչ–գաղափարագրերը (ցուցիչները, դետերմինատիվները): Որոշարկիչ–գաղափարագրության դրսևորում է կցագրումը. եթե առաջինում որոշարկիչ ու որոշարկյալ նշանները գրվում են առանձին, երկրորդում կցագրվում և հանդես են գալիս որպես մեկ բաղադրյալ գրանիշ:

Հայաստանի գծային գրով թողնված արձանագրություններում առաջին իսկ հայացքից ակնհայտ են կցագրման բազմաթիվ դեպքեր⁴⁰⁰: Դրանց ուսումնասիրությունը, սակայն, պահանջում է ավելի զգուշություն. երբեմն դժվար է որոշելը՝ մե՞կ կատարմամբ արված բարդ նշան է դա, թե՞ երկու կամ ավելի նշանների կցագիր:

9. Այլ գրային համակարգերի հետ ունեցած առնչությունները և համաժամանակյա գրավոր աղբյուրներից առացվող տեղեկությունները: Մեր հավաքած նշանները համեմատության մեջ դնելով Հին աշխարհի մի շարք գրերի հետ՝ տեսնում ենք զգալի քնդհանրություններ, երբեմն՝ զարմանք հարուցող նմանություններ, որոնք կարող են համարվել նաև նույնություններ: Առայժմ ձեռնպահ ենք մնում մեր կազմած համադրական ցանկերը հրատարակելուց, քանի որ Հայաստանի գծային գրերը վերծանված չեն, իսկ առանց իմաստի պարզաբանման՝ միայն արտաքին տեսքից ելնելով, եզրահանգումներ անելը կարող է տանել ոչ ճիշտ ուղղությամբ:

⁴⁰⁰ Տե՛ս Մովսիսյան, 2003 (b), էջ 173–188:

Նկատենք, որ ծագելով ժայռագրությունից՝ այս գրանշանների մի մասը միջանկյալ դիրք է գրավում և կապող օղակ հանդիսանում ժայռագրության և րիայնա-ուրարտական մեհենագրության միջև (աղ. 8), ինչը կարող է թույլ տալ դիտարկելու նախաերվանդունյաց Հայաստանի գրավոր մշակույթի զարգացումը ժամանակագրական անընդհատության մեջ:

Ինչպես վաղորոնգեդարյան (խեցեդեհի) նշանագրության պարագայում, այստեղ ևս անբավարար ուսումնասիրվածության պատճառով չենք ներկայացնում համակարգի որոշ առանձնահատկությունները (խմբային դասակարգումը՝ ըստ արտաքին տեսքի, գրության ուղղություն(ներ)ը, արձանագրությունների տեսակները, ծավալը, կառուցվածքը, թվանշանների, օժանդակ նշանների կիրառությունը և այլ հատկանիշներ), որոնց ուսումնասիրությունը նույնպես ապագայի գործ է:

ՎԵՐԾԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ: Անհայտ լեզուների ու գրերի վերծանությանը մեծապես նպաստում են դրանք կիրառած երկրի և ժողովրդի հոգևոր ու նյութական արժեքների մասին տեղեկությունները: Գրերի ուսումնասիրության պատմությունը հարուստ է բազմաթիվ դեպքերով, երբ առանց տվյալ երկրի ու նրա ժողովրդի մասին ունեցած հանգամանակի տեղեկությունների, էլնելով միայն գրանշանների արտաքին տեսքի վերլուծությունից, կատարվել են միանգամայն սխալ եզրահանգումներ, և, ընդհակառակն, երբ այդ տեղեկությունները մեծապես նպաստել են վերծանության աշխատանքներին: Պետք է ասել, որ թեպետ Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքը (հատկապես Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանը) սխառնատիկ հետազոտության դեռևս չի ենթարկվել, բայց այսօր հայտնի հնագիտական նյութը թույլ է տալիս որոշակի պատկերացում կազմելու հնագույն այդ ժամանակաշրջանում լեռնաշխարհի ու նրա ժողովրդի, պետական իշխանության, կրոնի, սովորույթների, տնտեսության, մշակույթի ու կենցաղի և այլ հարցերի վերաբերյալ: Մյուսնց մասին կան մեծ թվով ուսումնասիրություններ, որոնք անհրաժեշտաբար պետք է օգտագործվեն վերծանության աշխատանքներում:

Հայաստանի գծային գիրը նախկինում չի դիտարկվել որպես առանձին գրային համակարգ, հետևաբար, չեն էլ կատարվել այդ համակարգի վերծանությանն ուղղված քայլեր: Փորձեր են արվել մեկնաբանելու միայն առանձին որոշ հուշարձաններ:

Ե՛վ վաղորոնգեդարյան նշանագրության, և՛ գծային գրի հուշարձանների մեկնաբանությունների ու վերծանության ասպարեզում կատարված մեզ հայտնի աշխատանքները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջին խմբի հեղինակները փորձել են մեկնաբանել միայն առանձին նշաններ, երկրոր-

դիցը՝ ամբողջական համապատկերներ (կոմպոզիցիաներ)⁴⁰⁴: Որևէ արձանագրություն դեռևս չի կարելի ընթերցված համարել⁴⁰⁵:

4. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԵՇՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախաքրիստոնեական Հայաստանի գրավոր մշակույթի պատմության մեջ առանձնանում է Վանի թագավորության (Բիայելիի, Ուրարտու, Արարատ) ժամանակաշրջանը, որի ընթացքում կիրառվել են երեք գրային համակարգեր. միջազգային սեպագիրը՝ ասուրերեն, տեղական ոճի սեպագիրը՝ բիայնական սեպագրության լեզվով⁴⁰⁶ և բնիկ հայաստանյան ծագում ունեցող մեհենագրերը (հիերոգլիֆները), որոնց վերձանությանն ու լեզվի խնդրին հանգամանորեն կանոնադաշտանք այս աշխատանքում: Ի տարբերություն առաջին երկուսի՝ Վանի թագավորության մեհենագրությունը քիչ է ուսումնասիրված⁴⁰⁷:

Մեր աշխատանքի այս բաժնի նպատակն է ի մի բերել խնդրո առարկա գրային համակարգին վերաբերող ուսումնասիրությունների արդյունքները, հավաքված նյութի հիման վրա, ըստ հնարավորին, տալ այդ համակարգի ամբողջական բնութագիրը, ներկայացնել վերձանության ուղղությամբ նախկինում և մեր կողմից կատարված աշխատանքը, ցույց տալ Վանի թագավորու-

⁴⁰⁴ Այս ուղղությամբ ես ամենամեծ աշխատանքը կատարել է Հ. Ա. Մարտիրոսյանը (ամփոփած՝ Մարտիրոսյան, 1973 և Մարտիրոսյան, 1978): Առանձին հավաքագրությունների պարզաբանման խնդիրներում զգալի ներդրում ունի Հ. Ռ. Բարսեղյանը (ամփոփած՝ Բարսեղյան, 1973 աշխատության էջերում):

⁴⁰⁵ Անեամոյի և Ա. Ալիազանի առաջարկները Մեծամորի արձանագրությունների ընթերցման վերաբերյալ (տե՛ս տարբեր հեղինակների հետ հրատարակված նրա հոդվածները «Գիտություններ երկրի մասին» (ՀՍՄՀ ԳԱ Տեղեկագիր) հունիսի 1964 թ. 2-րդ (էջ 69-74), 5-րդ (էջ 59-64) և 6-րդ (էջ 73-81) համարներում): Առանց ստույգ գրահամակարգի բնութագրեր (գրության ուղղության նշում և այլն), եզնելով միջնադարյան մատյաններում պահպանված կշռանագրերի բացառապատկերով՝ վերձանության փորձերը դատադարձված են անաչառության: Միջնադարյան մատյաններում պահպանված կշռանագրերը վերձանության ընթացքում կարելի է օգտագործել որպես վերապահություններից հետո միայն (տե՛ս հաջորդ բաժնի «Այլ գրային համակարգերի հետ ունեցած առնչությունները» ենթաբաժնում):

⁴⁰⁶ Մարտիրոսի Ա-ի (Ջ.Ա. մոտ 840-825 թթ.) օրոք կիրառվում է միայն միջազգային սեպագիրը՝ ասուրերեն լեզվով, որն այնուհետև հիմնականում հանդիպում է հաջորդ արքաների երկեզու արձանագրություններում: Բազալիճի (Ջ.Ա. մոտ 825-810 թթ.) ժամանակներից ի հայտ են գալիս տեղական ոճի սեպագրերը, որոնց լեզուն գիտական գրականության մեջ առանկապես հայտնի է «ուրարտերեն» անվամբ: Ժամի որ վերջինս չի բխում Վանի թագավորության ինքնանվանումից, մենք նախընտրել ենք համարում այն կրել «բիայնական սեպագրության լեզու»:

Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների մասին կա նախաձեռնված գրականություն: Դրանց մեջ օրս հայտնի առաջին ամբողջական ժողովածուները հրատարակել են Ֆ. Ա. Քոնինգը (König, 1955-57), Գ. Ա. Մեյրիլլիցին (Meunier, 1960; 1971), Կ. Ա. Հարությունյանը (Apytsoyan, 2001) և Մ. Սալվինին (Salvini, 2008):

⁴⁰⁷ Այս գրահամակարգի մասին մինչև 1998 թվականը յույս տեսած ամենամտերցական աշխատանքը Ռ. Գ. Բարնեթի 1974 թվականին հրատարակված ոչ ծագային հոդվածն էր (Barnett, 1974, էջ 43-55, սղ XI-XIII, XXIX): 1998 թ. յույս տեսավ մեր «Վանի թագավորության (Բիայելիի, Ուրարտու, Արարատ) մեհենագրությունը՝ աշխատանքը, որում ի մի էին բերված մինչ այդ յույս տեսած կտարներն ու ուսումնասիրությունների արդյունքները: Վանի թագավորության մեհենագրության վերաբերյալ մեր ուսումնասիրություններից առաջինները՝ լուսաբանվելով, արձանագրությունների և մեհենագրերի շարունակվող ուսումնասիրությունը՝ լուսաբանվելով, արձանագրությունների և մեհենագրերի դիֆֆերենցիալ ու կշռանագրերով համարձակ, հրատարակեցինք 2003 թվականին (Մովսիսյան, 2003 (ա), էջ 22-40, 261-271; Մովսիսյան, 2003 (բ), էջ 47-126, 189-269):

թյան մեհենազրության տեղը հայաստանյան պատկերագրության ընդհանուր համակարգում:

Վերջին տասնամյակների ընթացքում բուռն վեճեր ծավալվեցին Վանի թագավորության էթնիկ քննարկի հարցի շուրջ, որոնց ընթացքում այդ պետության ոչ հայկականությունն ու հայկականությունը ընդունողները, համապատասխանաբար, օգտագործում էին «Ուրարտու, Ուրարտական» և «Արարատ, Արարատյան» տերմինները՝ դրանք դնելով չիմնավորված հակադրության մեջ: Չընդունելով բանավիճող կողմերից և ոչ մեկի սկզբունքները և հաշվի առնելով, որ Վանի թագավորության արքաները սեփական արձանագրություններում իրենց երկիրը կոչում են «Քիայնիլի» (ասուրերեն բաժիններում «Նաիրի»)՝⁴⁰⁸, ժամանակակից ասորեստանյան աղբյուրներում այն հանդես է գալիս «Ուրարտու»՝⁴⁰⁹, իսկ Աստվածաշնչում «Արարատ»՝⁴¹⁰ անվանումներով, մեր աշխատանքում հավասարապես կօգտագործենք այս երեք (և նրանց հիմքով ստեղծված) տարբերակները՝ երբեմն նախապատվությունը տալով երկրի ինքնանվանը:

ՌՆԱՌՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1. Հնագիտական հայտնագործումներ: Ի տարբերություն սեպագիր արձանագրությունների, որոնց մի զգալի մասը գտնվել է հողի մակերևույթից, Վանի թագավորության մինչ օրս հայտնի հիերոգլիֆակիր իրերը առանց բացառությունների հայտնաբերվել են հողածածկույթի տակից՝ պեղումների, զանձորոնումների և հողագործական կամ շինարարական աշխատանքների ժամանակ: Դրանցից առաջինները հայտնի դարձան անցյալ դարի երկրորդ կեսին: 1859 թվականին նշանակիր երկու առարկա գտնվել և Էրմիտաժ է ուղարկվել քրդերի կողմից թալանված Ալիշարի դամբարանից⁴¹¹: 1892 թ. Նիկոդայոս Մառը Արմավիրի (քիայն. Արգիշթիխինիլի) պեղումների ժամանակ երկու կնիք է գնել տեղի քնակիչներից՝ գտնված նույն հուշարձանից⁴¹²:

Անհամեմատ ավելի մեծ ու բազմազան կյութ տվեցին Թուրքաք կալեի (Վանի մոտ, քիայնական Ռուսախինիլի) պեղումները: 1879–80 թթ. կատարվեցին առաջին համակարգված պեղումները, որոնց կյութերի մեծ մասը տեղափոխվեց Բրիտանական թանգարան (Լոնդոն) և հրատարակվեց ու գիտական

⁴⁰⁸ Երկեզու արձանագրությունների ասուրերեն բաժիններում ասորաբար Քիայնիլին փոխարինվում է Նաիրի երկրանվամբ, որը Հայկական լեռնաշխարհին տրված նախադիպանական շրջանի ընդհանրական աշխարհագրական անվանումներից է: Բացառություն է կազմում Ռուսու Ա–ի Թոփուզազն գտնի մոտ (Ուրմիա լճից հարավ–արևմուտք) թողած արձանագրությունը, որում Քիայնիլիի համարժեքն է Ուրարտուի (Meluṣu-aṣṣu, 1960, էջ 323–327; Boehmer, 1979, էջ 50–51, աղ. 12; André-Salvini, Salvini, 1999, էջ 21; Арутюнян, 2001, էջ 289–294; André-Salvini, Salvini, 2002, էջ 5–66 և եղված զանազանությունը):

⁴⁰⁹ Հայկական լեռնաշխարհի (մասնավորապես Վանի թագավորության) ֆրաբեթալ առեկտանական հարթորումների հավաքումը տե՛ս Մանուսյան, 1901 և Զառուստ, 1951:

⁴¹⁰ Դ Թագավորաց, 19, 37; Եսայի, 37, 38; Երեմիա, 51, 27; Տեղիք, 1, 24:

⁴¹¹ Пиротровский, 1962, էջ 5–6; Piotrovskii, 1967, էջ 82–83:

⁴¹² Кюфен, 1944, էջ 57, 59–60; Пиротровский, 1944, էջ 276, նկ. 8–11; КБ–1, էջ 72:

շրջանառության մեջ մտավ միայն 1950 թվականին՝ Ռ. Գ. Բարենթի շնորհիվ⁴¹³: 1880–ական թվականներին մի քանի գրակիր արձանիկներ գտնվեցին այս հնավայրից և տեղափոխվեցին Էրմիտաժ⁴¹⁴: Շատ արդյունավետ եղան 1898–99 թթ. գերմանական արշավախմբի (Կ. Ֆ. Լեհման–Հաուպտ և Վ. Բեյք) Թոփրաք կազմում իրականացրած, ըստ էության, առաջին լուրջ գիտական մակարդակով պեղումները, որոնց արդյունքները մեր դարասկզբին հրատարակվեցին Կ. Ֆ. Լեհման–Հաուպտի կողմից՝ հիմք դնելով քիայնա–ուրարտական մեհենագրության ուսումնասիրությանը⁴¹⁵:

Քիայնական առանձին հնավայրերից ոչ մեծաթիվ, սակայն ուշագրավ նյութեր գտնվեցին մեր դարի առաջին տասնամյակներում: Մասնավորապես, 1911–12 թթ. Հ. Ա. Օրբելին ուսումնասիրություններ կատարեց Վանի շրջանում, որի ընթացքում տեղացիներից ձեռք բերեց մի շարք հնություններ, որոնցից մեր խնդրի համար կարևորվում են Թոփրաք կալից և Հայկաբերդից (Չաուշ–թեփե) գտնված կնիքները⁴¹⁶: 1914 թ. Իզդիրի մոտակայքում գտնվեց մի դամբարան՝ երեք նշանակիր կնիքներով⁴¹⁷: 1915–ին հիերոգլիֆակիր կնիքներ գտնվեցին Լաս Ծովինարից (քիայնական «Թեյշերա աստծո քաղաքը» Սևանա լճի ավազանում)⁴¹⁸: Մի վնասված կնիք էլ 1935 թվականին հայտնաբերվեց Երևանի կայարանամերձ բլուրներից մեկի պեղումներից⁴¹⁹:

Քիայնական մեհենագրության ուսումնասիրության պատմության մեջ կարևոր նշանակություն ունեցան Կարմիր բլուրի (ուրարտական Թեյշերափե) 1939–41 և 1945–58 թվականների պեղումները⁴²⁰: Նշենք, որ մինչ օրս հայտնի քիայնական հուշարձաններից ամենաշատ և ամենաբազմազան հիերոգլիֆակիր նյութը (ավելի քան 400 առարկա) տվել է Կարմիր բլուրը:

⁴¹³ Baerent, 1950:

⁴¹⁴ Պետրոսեան, 1939, էջ 50–52:

⁴¹⁵ Lehmann-Haupt, 1907; 1910; 1926; 1931 (Կ. Ֆ. Լեհման–Հաուպտի կողմ տեղափոխված աշխատանքների հիերոգլիֆների վերաբերող էջերի նրբուց տե՛ս «Աշխատանքի քառասուրջության» Թոփրաք կալի նկարագրում): Թոփրաք կալին պնդվել է Լաս Խաուպտում: Այդ հնավայրից գտնված և Բեռլինի Մասնավորափական թանգարանում պահվող մնաստայա հիերոգլիֆակիր իրեր տե՛ս Waerke, 1990, էջ 71–74, 82–83, աղ. XVIII–I; XXII d:

⁴¹⁶ Օրբեռ, 1912, էջ 923; Կյփրոս, 1944, էջ 57, 60; Պետրոսեան, 1944, էջ 276–277: Նշվածներից քաղի Հայկաբերդից հնաօգյուտ գտնվել են հիերոգլիֆակիր այլ առարկաներ (Նաթան, Ֆիլիմյան, 1991), որոնք, մեղքի առկա չունենալով համապատասխան գրականություն (Սաթանյան, 1991), չեն ընդգրկվում մեր դիմացի մեջ: Հայկաբերդից գտնված նշանակիր խեցեղենի քաղմասթիվ քնդրոններ տե՛ս Dincol, 1977, էջ 110–111; Salvini, 1995, էջ 205:

⁴¹⁷ Կյփրոս, 1944, էջ 56–67, աղ. VI, IX; Baerent, 1963, էջ 189–192:

⁴¹⁸ Կյփրոս, 1944, էջ 56–67, աղ. VI, IX; Baerent, 1963, էջ 189–192:

⁴¹⁹ Բաբրույանյան, 1937, էջ 285; Պետրոսեան, 1940, էջ 33, նկ. 9: Մեր աշխատանքում այս հուշարձանը պայմանականորեն կրել էր երևան Ա: Երևանում գտնվող «Հաստեղծարար» գործարանի տարածքից գտնվել են մի քանի քիայնական իրեր (պահվում են «Էրեբունի» թանգարանում), այդ խումբը մենք կոչվել ենք մի քանի քիայնական իրեր (պահվում են «Էրեբունի» թանգարանում):

⁴²⁰ «Ներդրմանը կառավարել են ԽՍՀՄ ԳԱ Հայկական բաժանմունքի (1944–ից՝ ՀԽՍՀ ԳԱ), Հնությունների պալատական կոմիտեի և Էրմիտաժի արշավախմբերի կողմից (ընդհանուր դիմագրք՝ Բ. Բ. Պիտրովիկի):

Հիմնական արդյունքների ամփոփումը տե՛ս Պետրոսեան, 1944, էջ 157–188; ԿԵ–1; ԿԵ–2; ԿԵ–3; Հիմնական արդյունքների ամփոփումը տե՛ս Պետրոսեան, 1955, էջ 42–43; Մարտրոսյան, 1961; Մարտրոսյան, 1964, էջ 251–269; Ճառասոս, 1963, № 1–11; ԿԵ, 1970 և այլն:

1950 թվականից սկսվում է Արին բերդի (քիայն. Էրեբունի) ուսումնասիրությունը կարմիրբլուրյան արշավախմբի կողմից, իսկ 1952–ից հնավայրում համակարգված պեղումներ է կատարում ՀԽՍՀ ԳԱ, Հուշարձանների պահպանության կոմիտեի և Պուշկինի անվան կիրառական արվեստների թանգարանի (Մոսկվա) միացյալ արշավախումբը⁴²¹: Մինչ այդ, 1951 թվականին Թավի-նի շրջանի Հակոբ Վուդի մոտ բացված դամբարանից հայտնաբերվել էին հին-րոզլիֆակիր երկու կնիքներ⁴²²: Իսկ 1957 թ. Արին բերդից ոչ հեռու, Երևանի Նոր Արեշ թաղամասում բացվեց քիայնական դամբարանադաշտ⁴²³, որը մասնագետների կարծիքով եղել է Էրեբունիի գերեզմանատունը:

Վանի թագավորության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձանների ուսումնասիրությունն ավելի մեծ թափ ստացավ 1959 թվից, երբ ստեղծվեց ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը: Գավառ (նախկին Կամո) քաղաքից գտնվեց ուշագրավ մի կնքադրոշմ⁴²⁴: 1962–ից վերականգնվեցին և համակարգված բնույթ ստացան Արմավիրի (քիայն. Արզիշքիխինի) պեղումները, որոնց ընթացքում հայտնաբերվեցին մեծ թվով նշանակիր առարկաներ⁴²⁵:

1970–ական թվականներից մինչև հիմա հայտնաբերվել և պեղվել են բազմաթիվ քիայնական հնավայրեր (Օշական⁴²⁶, Կարճաղբյուր⁴²⁷, Գեղիովստ⁴²⁸, Երևանի քիայնական դամբարան⁴²⁹, Արագած⁴³⁰, Նորատուս⁴³¹, Դովրի⁴³², Եղեգնաձոր⁴³³, Սարուխան⁴³⁴, Արտաշատ⁴³⁵, Հոռոմ⁴³⁶ և այլն), որոնցից գտնվել են հիերոզլիֆակիր հուշարձաններ:

⁴²¹ Արին բերդից գտնված և հրատարակված հիերոզլիֆակիր առարկաների մասին տե՛ս Խոջառ, 1968; Демская, 1968; Իսրայելյան, 1971; Խոջառ, 1976; Զրեծյուր, 1979; Խոջառ, 1981 և Լրատվում եղված զրակատարությունը:

⁴²² ԿՏ–2, էջ 47, 53:

⁴²³ Մարտիրոսյան, Մնացականյան, 1958, էջ 63–84; Barnett, 1963, էջ 194–198:

⁴²⁴ Մյրայելյան, 1968, էջ 18–20, աղ. 14ա: Ամբողջ–հնավայրը նեղվազուն տեղացիները կոչում են Բերդի գլուխ: Դա քիայնական «նաղդի աստծո քարանձախ» է:

⁴²⁵ Տիրազյան, 1972; 1973; 1974a; 1974b; Մարտիրոսյան, 1974; Կարառ, 1978; Տիրազյան, Կարապետյան, 1979; 1981; 1982; 1983; 1985; 1988; 1989; 1991; Մարտիրոսյան, 1981; Մարտիրոսյան, Թորոսյան, 1986; Կարապետյան, Նեղիբաբյան, 1996:

⁴²⁶ Եսևո, Կառառար, 1988, էջ 68–81:

⁴²⁷ Կարճիկիսի շրջանի Կարճաղբյուր գյուղից գտնվել և Հ. Հ. Մնացականյանի կողմից 1971 թ. ՀՊՊՁ են նանմունք մի շարք քիայնա–ուրարտական խմբի, ըստից մեջ կա մի կնքանիք կնիք (ՀՊՊՁ 2565–248):

⁴²⁸ Փիլիպոսյան, Խոջառյան, 1995, էջ 83, աղ. 11–3; Փիլիպոսյան, Մկրտչյան, 2001, էջ 29–34, աղ. 30–4, 30–7:

⁴²⁹ Եսևո, Բուդյոն, Ամառյան, Կանեյան, 1991; Եսևոյան, Քիլազով, Հնայսյան, Կանեյան, 1995:

⁴³⁰ Ավանդյան, 2001, էջ 74, աղ. XVII–23, XIX–18, XXI–15, XXIX–9, LXXXVI–3:

⁴³¹ Նեղիբաբյան, 1991, էջ 66–69; Մովսիսյան, 2003 (b), էջ 52, 258: Հուշարձանից գտնված հիերոզլիֆակիր կուրքի տրամադրման համար շեղմանը պատկան ենք նախկին Նորա Նեղիբաբյանի և Ալյոնա Փիլիպոսյանի:

⁴³² Հնայսյան, 1991, էջ 58–60:

⁴³³ Եսևո, Խոջառյան, 1990, էջ 41:

⁴³⁴ Մովսիսյան, 2003 (b), էջ 52, 259:

⁴³⁵ Մանուկյան, 1981, էջ 25–26:

⁴³⁶ Badalyan, Kohl, Kroll, 1997, էջ 206–228:

Դրան հաջորդած հինգ տարիների ընթացքում հրատարակվեցին Հոռոմից⁴⁴⁵, Արագածից⁴⁴⁶, Գեղիովտից⁴⁴⁷, Այանիսից⁴⁴⁸, Քուչակից⁴⁴⁹, Շովակից⁴⁵⁰ և Էրեբունիից⁴⁵¹ հայտնաբերված հիերոգլիֆակիր նոր նյութեր, որոնք ի մի բերելով՝ 2003 թվականին հրատարակեցինք Վանի թագավորության մեհենագիր արձանագրությունների և մենանշանների ավելի քան 1500 միավոր ընդգրկող դիվանը⁴⁵²:

2003 թվականից հետո քիայնական մեհենագրերի հրատարակության ասպարեզում նշելի են հատկապես երկու աշխատանքներ, երկուսն էլ՝ կապված Արևմտյան Հայաստանի նյութերի հետ: Առաջինը հենց այդ թվականին Մտամբուլում հրատարակված «Ուրարտու. պատերազմ և էսթետիկա» խորագիրը կրող ցուցահանդեսի ծավալուն կատալոգն է, որում ներկայացված նյութերը հայտնաբերվել են Արևմտյան Հայաստանից՝ առանց ստույգ տեղի նշման⁴⁵³: Մյուսը 2005 թվականին Վանի թագավորությունում ընդունված ծավալաչափական միավորների քննությանը նվիրված Մարգարետ Փեյնիի ուսումնասիրությունն է, որի երկրորդ մասում հեղինակը հրատարակել է մեհենագիր արձանագրությունների և մենանշանների կատալոգ, որն ընդգրկում է շուրջ 1000 միավոր՝ հայտնաբերված 22 հնավայրերից⁴⁵⁴: Հրատարակությունն արժեքավոր է հատկապես այն նյութերով, որոնք նա հրատարակում և գիտական շրջանառության մեջ է դնում առաջին անգամ:

2003 թվականից հետո կարևոր հրապարակումներ եղան նաև Արևելյան Հայաստանի մի շարք հնավայրերից (Դովրի⁴⁵⁵, Էրեբունի⁴⁵⁶, Արգիշթիխինի⁴⁵⁷, Սողք⁴⁵⁸ և այլն) գտնված նյութերի մասին:

Ընդհանրացնող աշխատանքներից հատուկ հիշատակության է արժանի Ուրարտուի բրոնզագործությանը նվիրված Ուրսուլա Չայդի մենագրությունը, որում ներկայացվում են հիերոգլիֆակիր քազմաթիվ բրոնզե առարկաներ⁴⁵⁹:

⁴⁴⁵ Badalyan, Kobl, Kroll, 1997, էջ 191-228:

⁴⁴⁶ Ավտիսյան, 2001, էջ 74, սղ. XVII-23, XIX-18, XXI-15, XXIX-9, LXXVI-3:

⁴⁴⁷ Փինգուլյան, Մկրտչյան, 2001, էջ 29-34, սղ. 30-4, 30-7:

⁴⁴⁸ Այանիս հնավայրից հայտնաբերված շուրջ 150 հիերոգլիֆակիր սաարկանները տե՛ս Koobe, Saglamciuz, 2001, էջ 115-153; Derin, Çilingiroglu, 2001, էջ 163-165, նկ. 13 (59, 60); Salvini, 2001, էջ 279-319; Abay, 2001, էջ 321-353; Stone, Zimansky, 2001, էջ 359-361, 371:

⁴⁴⁹ Ենգիբաջյան, 2003, էջ 110-114, սղ. 1-6:

⁴⁵⁰ Biscione, Hmayakyan, Parmegiani, Sayadyan, 2002, էջ 114-115, սղ. 13-8; Hmayakyan, 2002, էջ 291, 300, սղ. 3-1:

⁴⁵¹ Տեր-Մարտիրոսով, 2002, էջ 54-57:

⁴⁵² Մովսիսյան, 2003 (b), էջ 189-269:

⁴⁵³ Urartu, Stambol, 2003, էջ 145-154: Կատալոգի հիերոգլիֆակիր նյութերի լուսանկարներից, սակայն, համախոս են հատկացվում նշանները:

⁴⁵⁴ Payne, 2005, կատալոգը՝ էջ 107-374:

⁴⁵⁵ Հմայակյան, 2005 (a), էջ 73-79 (հեղինակը մինև այդ տրամադրել էր հնավայրից գտնված նյութերը մեզ հրատարակելու իրավունքով Մովսիսյան, 2003 (b), էջ 52, 233:

⁴⁵⁶ Fichtel de Clairfontaine F., Deschamps, 2005, էջ 105-143; Ter-Matrosyan, 2009, էջ 127-145, սղ. I-IV:

⁴⁵⁷ Tiratsyan, 2013-2014, էջ 143-158:

⁴⁵⁸ Yengibaryan, 2012, էջ 80-85:

⁴⁵⁹ Seidl, 2004:

Թվարկված հուշարձաններով և նշված գրականությանը չի սահմանափակվում քիայնա-ուրարտական մեհենագրակիր հուշարձանների հնագիտական հայտնագործությունների պատմությունը: Աշխարհի շատ թանգարաններում և մասնավոր հավաքածուներում պահվում են դեռևս չիրապարակված քիայնական իրեր, որոնք մեծ հետաքրքրություն կադող են ներկայացնել Վանի թագավորության մեհենագրության ուսումնասիրության տեսանկյունից:

2. Գրային համակարգի ուսումնասիրության մասին: Վանի թագավորության մեհենագրության ուսումնասիրությունը, ինչպես ասվեց, սկզբնավորվեց Կ. Ֆ. Լեհման-Հաուպտի հրապարակումներով, որն այն կարծիքին էր, թե տեղության մեջ կիրառվել են սեպագրերը, իսկ հիերոգլիֆները գործածվել են քիայնական արքաների արևմտյան արշավանքների ժամանակ քերված ռազմագերիների կողմից: Հետևելով Կ. Ֆ. Լեհման-Հաուպտին՝ Լեոն, Ա. Քոուլին, Հ. Բոսերթը, Ա. Չիլինգիրոյուն քիայնական հիերոգլիֆներին վերագրել են իսթրական ծագում⁶⁰⁰, իսկ Թ. Բարթեն-Բրաունը դրանք համարում է Քնոսոսից (Կրետե կղզի) քերված և նմանեցնում կրետե-միքեների գծային B գրին⁶⁰¹:

Վեռևս 1930-40-ական թթ. արևմտյան ծագման տեսակետին դեմ արտահայտվեցին մի շարք գիտնականներ: Ի. Ի. Մեչանինովը ենթադրում էր, որ սեպագիրը եղել է միայն վերնախավի գիրը, իսկ հիերոգլիֆները գործածվել են ժողովրդի կողմից և ունեն տեղական ծագում⁶⁰²: Քննելով Կ. Ֆ. Լեհման-Հաուպտի, Ի. Ի. Մեչանինովի, Մտարույ արքայիսկոպու Սմբատյանի հրատարակած⁶⁰³ և Հայաստանի Հնությունների պաշտպանության կոմիտեի հավաքած նյութերը՝ Խ. Սամվելյանը նկել է այն եզրահանգման, որ Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել րեիկ և ինքնուրույն հիերոգլիֆ գրություն⁶⁰⁴: Բ. Բ. Պիոտրովսկին ևս այն համարում է տեղական ծագում ունեցող և «նեղ տեսնական ու պաշտամունքային կարիքների» համար գործածված⁶⁰⁵:

Քիայնա-արարտյան մեհենագրության ուսումնասիրության տեսանկյունից հատկապես արդյունավետ եղավ XX դարակեսին հաջորդած շրջանը: Առանձին հնավայրերի նյութերի հրապարակումից բացի արվեցին հիերոգլիֆների հավաքման և համակարգման փորձեր, որոնք նոր խթան հանդիսացան Վանի թագավորության մեհենագրության ուսումնասիրության համար: Նման առաջին փորձի հեղինակը Լ. Ա. Բարսեղյանն էր, որն ի մի քերելով Թովրաք կալեի և Կարմիր բլուրի նյութերը (բացի տարողության չափերի և կնիքների վրայի նշաններից), հրատարակեց 97 նշան (61-ը՝ Թովրաք կալեից, 36-ը՝ Կարմիր բլուրից)⁶⁰⁶, նշելով, որ իր հավաքած հիերոգլիֆների թիվը հասնում է

⁶⁰⁰ Լեո, 1915, էջ 335; Cowley, 1920, էջ 33; Bossert, 1942, էջ 92; Čilingiroğlu, 1997, էջ 152:

⁶⁰¹ Burton Brown, 1946, էջ 92 (յուն. L. Pappaluganli)՝ Барсертн, 1967, էջ 86):

⁶⁰² Мезанинов, 1932, էջ 55; Мезанинов, 1933, էջ 60-62:

⁶⁰³ Սմբատյան, 1910, էջ 574-576:

⁶⁰⁴ Սամվելյան, 1941, էջ 183-190:

⁶⁰⁵ Пиотровский, 1944, էջ 285-286:

⁶⁰⁶ Барсертн, 1967, էջ 86-87:

150-ի⁴⁶⁷: Երկրորդ փորձի հնդինակը Ռ. Դ. Բարնեթն էր, որը կատարել է ավելի մեծածավալ աշխատանք⁴⁶⁸: Նա հավաքել է շուրջ երեք տասնյակ արձանագրություն, կազմել 102 հիերոգլիֆից բաղկացած նշանացանկ, որը, ըստ նշանների արտաքին տեսքի, ենթարկել է թեմատիկ բաժանման: Հեղինակն անդրադարձել է գրային համակարգը բնորոշող մի շարք հարցերի, որոնց մասին կիսովի մեր հետագա շարադրանքի ընթացքում: Չնայած աշխատանքում տեղ գտած թերություններին (տե՛ս հաջորդ ենթաբաժնում), նյութի ոչ լիակատար լինելուն (ընդգրկված չեն մինչ այդ պեղված Արին քերդ, Արմավիր, Բաստամ և այլ հնավայրերի նյութերը, որոնք հրատարակվել էին 1974-ից առաջ) և այսօր արդեն հնացածությանը, Ռ. Դ. Բարնեթի աշխատանքը քիչանա-ուրարտական մեհենագրության վերաբերյալ մինչև 1998 թ. եղած հրապարակումներից ամենամարողականն էր:

Վանի թագավորության մեհենագրության ուսումնասիրության ոլորտում մեր կատարած աշխատանքին կանդրադառնանք քիչ հետո՝ առանձին ենթավերնագրով:

2005 թվականին, ինչպես վերը նշվեց, Մ. Փեյնին հրատարակել է մեհենագիր արձանագրությունների և մեհենանշանների կատալոգ, որն ընդգրկում է շուրջ 1000 միավոր՝ հայտնաբերված 22 հնավայրերից⁴⁶⁹: Հեղինակը չի կատարել վերծանության ուղղությամբ աշխատանքներ, սակայն նրա աշխատանքում հատկապես արժեքավոր են այն նյութերը, որոնք նա հրատարակել և գիտական շրջանառության մեջ է դրել առաջին անգամ: Դրանց թիվն անցնում է 200-ից:

Մեհենագրերի ուսումնասիրության ասպարեզում ուշագրավ աշխատանք է կատարել Հ. Ա. Մարտիրոսյանը⁴⁷⁰: Օգտվելով Լ. Ա. Բարսեղյանի կազմած նշանացանկից՝ նա համադրել է քիչանա-ուրարտական հիերոգլիֆները Հայաստանի ժայռապատկերներում հանդիպող նմանատեսք պատկերագրերի ու հայկական միջնադարյան մատյաններում վկայված նշանագրերի հետ, ցույց տալով, որ Վանի թագավորության մեհենագրությունը կապող մի օղակ է այդ երկուսի միջև և որ ժայռագրերը, ուրարտական հիերոգլիֆներն ու միջնադարյան նշանագրերը հայաստանյան պատկերագրության ժառանգական զարգացման փուլերն են⁴⁷¹:

XX դարակեսում հայտնաբերված նյութերն ու կատարված ուսումնասիրությունները վերջնականապես հաստատեցին մինչ այդ արդեն հայտնված

⁴⁶⁷ «Գիտություն և տեխնոլոգիա» ամսագրում յույս տեսած մի հոդվածում Լ. Ա. Բարսեղյանը հրատարակել է 134 նշաններից բաղկացած ցանկ (Բարսեղյան, 1964), որում, սակայն, որոշ մեհենագրերի տարբերակները ներկայացված են խորև առանձին նշաններ:

⁴⁶⁸ Barnett, 1974 (Ռ. Դ. Բարնեթի կազմած բնագրերի ժողովածուն և նշանացանկը տե՛ս հավելվածում, աղ. 9-10):

⁴⁶⁹ Payne, 2005, էջ 107-374:

⁴⁷⁰ Մարտիրոսյան, 1973; 1978:

⁴⁷¹ Ուսումնասիրության ամփոփումն ու եզրահանգումները տե՛ս Մարտիրոսյան, 1973, էջ 68-70, աղ. XXIII (ըստ Հ. Ա. Մարտիրոսյանի կազմել ենք մեր աղ. 3-ը):

տեսակետը Վանի թագավորության մեհենագրության բնիկ հայաստանյան ծագման վերաբերյալ, ինչը ներկայումս ստացել է համընդհանուր ընդունելություն⁴⁷²:

Բիայնա–ուրարտական հիերոգլիֆիկան տեղ է գտել աշխարհի գրային համակարգերի պատմությանը նվիրված որոշ աշխատանքներում որակվելով իբրև «նախապատմական Հայաստանի նկարային գիր»⁴⁷³, «նախահայկական արձանագրություններ», «հայկական պատկերագրություն»⁴⁷⁴ և այլն: Որպես օրինակափոխություն, այս աշխատանքներում ընդգծվում է գրային համակարգի անբավարար ուսումնասիրվածությունը:

Վկայակոչված աշխատանքներից բացի գրի հետազոտության ուղղությամբ հիշատակելի են վերձանության և ասանձին նշանների մեկնաբանման փորձերը, որոնց կանդրադատանքը «Վերձանության վիճակը» բաժնում:

3. Մեր կատարած աշխատանքը: Հաշվի առնելով Վանի թագավորության մեհենագրության մեծ կարևորությունը թե՛ Հայաստանի, թե՛ Առաջավոր Ասիայի պատմության ու մշակույթի և թե՛ աշխարհի գրային համակարգերի հետազոտության տեսանկյունից և, հակառակ դրան, վատ ուսումնասիրված լինելը, 1995 թ. սկսեցինք հրատարակված արձանագրությունների հավաքումը՝ բնագրերի լիակատար ժողովածու կազմելու նպատակով: Նույն տարեվերջին աշխատանքը տվեց առաջին մեծ արդյունքը. ստացվեց վերձանության մի քանակի, որի շնորհիվ ընթերցվեցին երեք վանկագիր անուններ ու մեկնաբանվեցին մի շարք գաղափարագրեր (տե՛ս «Մեր վերձանությունը» բաժնի «Փուլ առաջին» մասը): 1996 թ. սկսեցինք և 1997–ի սկզբին ավարտեցինք արձանագրությունների համահավաք ժողովածու կազմելու երկրորդ փուլը, որի ընթացքում ուսումնասիրեցինք Հայաստանի Հանրապետության մեծ թանգարաններում⁴⁷⁵ պահվող բիայնական հիերոգլիֆակիր իրերը, որոնց զգալի մասը (շուրջ 350 առարկա) առաջին անգամ հրատարակվեց մեր «Վանի թագավորության (Բիայնիյի, Ուրարտու, Արարատ) մեհենագրությունը» (Երևան, 1998 թ.) գրքի հավելվածում: Նույն ժամանակաշրջանում խնդրին վերաբերող մի շարք զեկուցումներով հանդես եկանք Երևանում և Մոսկվայում, հրատարակեցինք հոդվածներ⁴⁷⁶: Կատարված աշխատանքի ամփոփման շնորհիվ 1997–ի գարնանը վերձանության ուղղությամբ ստացվեցին նոր արդյունքներ, որը մենք պայմանականորեն համարեցինք վերձանման երկրորդ փուլ:

⁴⁷² Տե՛ս օրինակ Meunier, 1960, էջ 33; Դատարյան 1960, էջ 83; Барцков, 1967, էջ 86–87; Urueta, *Genet.* 1982–83, էջ 36 և այլն:

⁴⁷³ Friedrich, 1966, էջ 64; Փրոբարտ, 1979, էջ 85–86:

⁴⁷⁴ Gelb, 1965, էջ 60 (նույն գրի ծագման այդուհանդերձ էջ X–XI); Դեմ6, 1982, էջ 67 (այդուհանդերձ էջ 355):

⁴⁷⁵ Մեր կողմից ուսումնասիրվել են Հայաստանի պատմության պետական (Երևան), Հայաստանի ազգագրության պետական (Մարտիրոսյան), Երևանի ինժեներական «Էրբրուխի» քաղաքամտերի քիմիա–ուրարտական կուրսերը: Երևան քաղաքի պատմության թանգարանի նուազխական իրերի կատարյալը երեք զբոլով հրատարակվել է Ս. Ա. Նալբանդի կողմից (Երևան I, 1964; Երևան II, 1967; Երևան III, 1972):

⁴⁷⁶ 1996–1997 թթ. կադրաշնչի ենք յոթ զեկուցում, հրատարակել վեց հոդված ու զեկուցման թեզիս (Մոսկվայում, 1996 (a); 1996 (b); 1996 (c); 1996 (d), 1997 (a); 1997 (b)):

Կարմիր բլուրի սեպագիր և հիերոգլիֆ նշաններ կրող բրոնզե թասերի մեծ մասի վրա հանդիպում են առյուծի գլխի և աշտարակառեսք պատկերանշանները: Դրանց ուշադիր գննումը ցույց է տալիս, որ առյուծի գլուխը միշտ պատկերվել է սեպագիր արձանագրության սկզբնամասում, իսկ աշտարակառեսք նշանը՝ ուր պատահի, երբեմն նույնիսկ հակառակ դիրքով, ինչը ցույց է տալիս, որ վերջինս ավելացվել է հետո (նկ. 30): Սա նկատվել է մեզանից առաջ, քայց համապատասխան ուղղումների խնդիր չի դրվել: Դա նշանակում է, որ չի կարելի առյուծի գլուխը աշտարակառեսք նշանի հետ դիտել որպես մեկ արձանագրություն և այն համադրելով սեպագիր գրությունների հետ՝ եզրակացնել, որ քիպեական սեպագրերն ու մեհենագրերը չեն հանդիպում երկլեզու արձանագրություններում՝ թարգմանելով միմյանց: Բացի այդ, քանի որ աշտարակառեսք նշանով չի որոշվում արձանագրության դիրքը, մեզ թվում է, որ պետք է ուղղել թասերից մեկի հիերոգլիֆ գրության դիրքը (նկ. 30 ը)՝ այն ընթերցելով վերից վար: Նման ենթադրության համար ունենք երկու պատճառ. մեր առաջարկած դիրքում է, որ հիերոգլիֆները դասավորված են սեպագիր արձանագրության սկզբնամասում, և այդ դիրքով մեհենագիր արձանագրության կենտրոնական նշանը՝ ցլի գլուխը, առանում է իր ճիշտ տեսքը: Ի դեպ, իննսուն աստիճանի թեքությամբ հրատարակվելով՝ ցլի գլուխը չի ընկալվել որպես այդպիսին, և Ռ. Դ. Բարենթի նշանացանկում (թիվ 49) արձանագրությունն առանց ութ կետերի ներկայացվել է իբրև մեկ նշան, որը ևս պետք է ուղղել:

Եվ վերջին նկատողությունն-ուղղումը, որ պետք է անել՝ կապված բրոնզե թասերի հետ, վերաբերում է Ռուսայի անունը կրող թասերին: Քննությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն մյուսների, Ռուսայի թասերին պատկերվածը ոչ թե առյուծի, այլ ձիու գլխի պատկեր է (համեմատությունը տե՛ս նկ. 31) և, քացի այդ, եթե առյուծի գլուխը սովորաբար հանդիպում է սեպագիր արձանագրության սկզբում՝ սեպանշաններով կազմված շրջանի եզրային մասում, ապա ձիու գլուխը պատկերվում է սեպագիր շրջանակի կենտրոնում: Այս ուղղումը, ինչպես կտեսնենք, կարևոր նշանակություն ունի մեհենագրության ուսումնասիրության և, մասնավորապես, վերձանության գործում:

Ճշգրտման ենթակա արձանագրությունների մյուս խումբը հանդիպում է կնիքների վրա: Կարմիր բլուրից հայտնաբերված քառակող կնիքի հատակին (նկ. 32) փորագրված են երեք նշաններ, որոնք Բ. Բ. Պիտտրովսկու հրատարակության մեջ⁴⁴ արտանկարված են կնիքից, ոչ թե վերջինիս դրոշմից, և արդյունքում նշանները գիտական շրջանառության մեջ են մտել հայելային արտապատկերմամբ: Կարմիր բլուրի կնիքների մեջ մեծ թիվ են կազմում այնպիսիք, որոնց նշաններն ու պատկերները հրատարակվել են թերի: Որպեսզի դրանք մեկ առ մեկ այստեղ չքվարկենք, մեր ժողովածուի քաղաղագրերում,

⁴⁴ Пятровскнй, 1962, էջ 106, նկ 78; Piotrovskii, 1967, էջ 73, նկ 53; КВ-3, էջ 56-ում երեք կաններից երկուսը կզված չեն:

հիշատակելով նախկին հրատարակությունը, փակագծում էլել ենք, թե դրանում ինչ թերություն է առկա:

Կրկին անդրադառնալով Ռ. Դ. Բարենթի ժողովածուին՝ էլենք, որ արդեն հիշվածներից բացի թերի են հրատարակված նաև 9, 18, 26 և 27 համարները կրող արձանագրությունները, վիճելի են տեքստերից մի քանիսի համար նրա առաջարկված նշանների դասավորության ուղղությունները, որոնց կանդրադառնանք գրության ուղղության հարցը քննելիս:

Կարմիր բլուրի կարասների տարողության նշաններն ուսումնասիրելիս՝ նկատեցինք, որ ակարկի և տերուսի չափերի մեծ կետերով արված նշանների կողքին կան ավելի փոքր կետեր (նկ. 33), որոնք, ըստ դասավորության, պետք է ցույց տային տերուսից ավելի փոքր չափման միավոր: Այս առումով ուշագրավ է Ալբին թեփե հնավայրից (Երզնկայի մոտ) գտնված կարասների վրա բիսյանական տարողության չափերի նշումը խեթա-լուվիական հիերոգլիֆներով՝ ահարկու (ակարկի), տուրուզա (տերուսի) և արուզա⁴⁶⁵: Մինչ օրս համարվել է, որ Կարմիր բլուրի կարասների վրա առկա են միայն ակարկի և տերուսի չափերի նշումները, մինչդեռ այստեղ ունենք նաև երրորդ՝ ավելի փոքր միավորը: Ի՞ դեպ, չի բացատրվում, որ այս նշումներում ակարկից և տերուսից հետո մեկուսի փորագրված կետերը, որոնց Ռ. Բ. Պիտտորվակին ենթադրաբար վերագրում է «0,5 (տերուսի)» իմաստը⁴⁶⁶, նշանակեն «1 արուզա» (նկ. 33 c):

Մեր աշխատանքի համառոտակի ներկայացումն ավարտելուց առաջ էլենք, որ մեր հավաքած և 2003 թվականից հետո հրատարակված նյութերի (որոնց մեծ մասն առաջին անգամ հրատարակել է Մ. Փեյնին) ընդհանուր թիվն այսօր կազմում է շուրջ 1800 միավոր:

ԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ինչպես արդեն նշվել է, որևէ անհայտ լեզվի ու նրա գրային համակարգի ուսումնասիրությունն սկսելու համար նախ և առաջ անհրաժեշտ է սխարլել այդ համակարգը բնութագրող մի շարք առանձնահատկություններ, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծում տվյալ գրի ու լեզվի վերծանության համար:

Ստորև, այսօրվա ունեցած նյութի սահմաններում, հնարավորինս մանրամասն կներկայացնենք Վանի թագավորության մեհենագրության ընդհանուր բնութագիրը:

1. Գրի և կրակով արձանագրված լեզվի ծանոթության աստիճանը: Նախքան 1995 թ. բիսյանական հիերոգլիֆներով որևէ բնագիր (եթե հաշվի չառնենք տարողության պարզ նշումները և առանձին նշանների վերաբերյալ արված դիտողությունները) չի ընթերցվել: Այս գրային համակարգը հատուկ է մի-

⁴⁶⁵ Laroche, 1971, էջ 55-61, սղ. I-IV; Klein, 1974, էջ 77-94:

⁴⁶⁶ KE-2, էջ 66:

այն Վանի թագավորությանը և նրա ազդեցության սահմաններից դուրս որևէ տեղ առայժմ վկայված չէ:

Մինչև վերձանության առաջին արդյունքների ստացվելը միանգամայն անհայտ էր նաև մեհենագրության լեզուն: Այդ լեզվի համար հնարավոր է երկու թեկնածություն: Առաջինը՝ բիայնական սեպագիր արձանագրությունների լեզուն, երկրորդը՝ Վանի թագավորությունում առավել տարածված լեզուներից մեկը: Այս առթիվ նկատենք, որ ուրարտերենի բառապաշարի աղքատիկությունը (շուրջ 400 բառ ավելի քան 600 արձանագրության մեջ), քերականական միևնույն կառուցվածքը, տեքստերի կադավարային լինելը, շուրջ երեք դար գործածվելով փոփոխություն չկրելը, գրական ստեղծագործությունների (հիմներ, աղոթքներ, ողբեր, սիրային ու վիպական երգեր և այլ ժանրերի գործեր) բացակայությունը տավարություն են ստեղծում, որ այդ լեզուն՝ իր գրային համակարգով, գործածվել է արքունի պաշտոնական գրագրության նեղ սահմաններում և չի եղել ժողովրդախոսակցական ու հասարակության լայն խավերի կողմից կիրառելի⁴⁸⁷: Տրամաբանական այս դիտարկումներից բացի կան այլ փաստեր ևս, որոնք ցույց են տալիս, որ բիայնական սեպագրերի լեզուն (իր գրային համակարգով) չի եղել Վանի թագավորության ստեղծողների մայրենին: Մասնավորապես, հատուկ ուշադրության է արժանի Ի. Մ. Դյակոնովի ուսումնասիրությունը, որով հեղինակը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ բիայնական սեպագրությունը պետք է ստեղծված լինի դեռևս Ք.ա. XIV–XIII դարերում՝ ծագելով Միտանիի ու Խեթական տերության գրչության դպրոցներից, և հնարավոր համարում, որ «պեղումները մեզ դեռ կրերեն Ք.ա. XIII–X դդ. ուրարտա–խուրիական սեպագիր վավերագրեր»⁴⁸⁸: Եթե «բիայներենը» («ուրարտերենը») իր սեպագիր համակարգով լինել Վանի արքաների մայրենին՝ ունենալով շուրջ 500–ամյա գրային ավանդույթ, միանգամայն անհասկանալի է, թե արձանագրություններ կանգնեցրած առաջին արքան՝ Սարդուրի Ա–ն, ինչո՞ր էր իր մայրենին թողած՝ օգտագործում թշնամի երկրի լեզուն՝ վերջինիս սեպագիր համակարգով: Նշանակում է՝ չկար բիայնական արքաների մայրենի լեզվին հարմարեցված սեպագիր համակարգ, իսկ Սարդուրիի հաջորդ Իշալուինին, ելնելով Ասորեստանի հետ խորացող հակադրությունից, որդեգրեց խեթամիտանիական գրչության դպրոցներից մեկի ավանդույթները:

Այլ է խնդիրը Վանի թագավորության մեհենագրության պարագայում, որն, ի տարբերություն սեպագիր համակարգերի, ուներ քնիկ հայաստանյան ծագում և նրանով կարող էր հաղորդվել երկրի հիմնական խոսակցական լեզուն (կամ լեզուներից մեկը):

Բիայնական հիերոգլիֆիկայի վերձանության առաջին արդյունքները թույլ են տալիս որոշ պարզեցում մտցնելու լեզվի խնդրում, ինչին կանոնադառնանք այդ արդյունքները ներկայացնելուց հետո:

⁴⁸⁷ Հմմտ. Կառնոպան, 1986, էջ 279–280; Խասրոն, 1991, էջ 36–56:

⁴⁸⁸ Дьяконов, 1963, էջ 18–20:

2. Արձանագրությունների ժամանակագրությունն ու տարածումը:

Ռ. Դ. Բարնեթը, իր ուսումնասիրության մեջ վկայակոչելով Ռ. Մերհալի կողմից հիերոգլիֆակիր գահի թվագրումը Մենուա արքայի ժամանակաշրջանով (Ք.ա. մոտ 810–786 թթ.), նշում է, որ չկան ավելի վաղ թվագրվող արձանագրություններ: Այնուհետև նա մեծ վերապահությամբ առաջ է քաշում մի տեսակետ, համաձայն որի՝ ուրարտական մեհենագրության ծագումը կարելի է հետ տանել մինչև Ք.ա. XIV դար⁴⁹⁷:

Ռ. Դ. Բարնեթի կողմից հրատարակված Բուդինի թիթեղի արձանագրության մեր վերծանությամբ ընթերցվեցին երկու արքայանուններ, ինչից սլարգ դարձավ, որ այն վերաբերում է Իշպուինի արքայի գահակալության (Ք.ա. 825–810 թթ.) սկզբնական շրջանին, երբ Մենուան դեռևս մանկահասակ արքայազն էր (տե՛ս «Մեր վերծանությունը» բաժնում): Այսինքն՝ քիայնա-արարատյան մեհենագրությունը արդեն կայացած գրային համակարգ էր առկա իշպուինի օրոք:

Մեհենագրերը կիրառվել են մինչև Վանի թագավորության անկումը, ինչը փաստվում է Ք.ա. VII դարավերջով թվագրվող ուրարտական իրերի վրա հիերոգլիֆների առկայությամբ⁴⁹⁸: Այսպիսով տեսնում ենք, որ քիայնական մեհենագրությունը կիրառվել է Ք.ա. IX դարի վերջին քառորդից մինչև Ք.ա. VII դարի վերջը:

«Հնագիտական հայտնագործություններ» բաժնում ժամանակագրական կարգով համառոտակի ներկայացվեցին այն հնավայրերը, որոնցից գտնվել են գրակիր առարկաներ: Տեղադրելով դրանք քարտեզին (տե՛ս հավելվածում, քարտեզ 1)՝ տեսնում ենք, որ մեհենագրության տարածման սահմանը հյուսիսում հասել է մինչև Շիրակ և Սևանա լճի ավազան, հարավում ընդգրկել է Ուրմիո լճի ավազանը՝ ներառյալ Վանի թագավորության ազդեցության տակ գտնված և որոշ ժամանակ նրա մասը կազմած Մանա երկիրը (Չիվին): Արևմուտքում այդ սահմանը հասել է մինչև Նորշուն–թեփե և Տիգրանակերտ: Ավելի արևմուտք՝ Եփրատի հովտում, գործածվել են խեթա–լուվիական հիերոգլիֆները, որոնք այդ տարածքում հայտնի էին դեռևս Ք.ա. II հազարամյակի վերջերին⁴⁹⁹: Չափազանց ուշագրավ են Երզնկայի մոտ գտնվող Ալթին թեփե հնավայրից (Պատմական Հայաստանի Չոմես ամրոցը) հայտնաբերված իրերը, որոնց վրա խեթա–լուվիական հիերոգլիֆներով գրված են քիայնական չափի միավորների անվանումները⁵⁰⁰: Դա յուրօրինակ սահմանային խառնարան էր երկու գրավոր մշակույթների տարածման շրջանում:

⁴⁹⁷ Barnett, 1974, էջ 51–52:

⁴⁹⁸ Այդպիսի թվագրում ունեն, օրինակ, Օշականի ուշքիայնական շրջանի կյութերը (Ecaon, Kazanirapan, 1988, էջ 68–81):

⁴⁹⁹ Bossert, 1942, էջ 67–70, 181–190, նկ. 763–795; Güterbock, 1973, էջ 135–147, սղ. 3–5; Meriggi, 1975 (a) և 1975 (b), №№ 97–119, 124–131; Hawkins, 2000, էջ 282–329, 334–360:

⁵⁰⁰ Laroche, 1971, էջ 55–61, սղ. I–IV; Klein, 1974, էջ 77–94:

3. Գրակիր հուշարձանների բնութագիրը: Գրային համակարգի ուսումնասիրության տեսակետից կարևոր է ունենալ հնարավորին չափ մանրամասն տեղեկություն նշանակիր իրերի և արձանագրությունների բնույթի, նշանակության, կիրառման, ինչպես նաև արձանագրությունների կատարման տեխնիկայի վերաբերյալ:

Հարկ է նշել, որ նշանագրված առարկաներն ու արձանագրությունները վերաբերում են երկրի կյանքի, ըստ էության, բոլոր հիմնական ոլորտներին (արքայական իշխանությանը, հոգևոր աշխարհին, ռազմական գործին, տնտեսությանը, մշակույթին ու կենցաղին): Ներկայացնենք նշանագրված առարկաների հիմնական խմբերը՝ իրենց առանձնահատկություններով:

ա) Կնիքներ: Նշանագրված կնիքները վերաբերում են հիմնականում արքայական և հոգևոր իշխանությունների ոլորտներին: Նշանագրության տեսակետից դրանք բաժանվում են երկու հիմնական խմբի⁴⁹²: Առաջինն այն խմբի կնիքներն են, որոնց վրա (հիմնականում՝ հատակին) փորագրված են առանձին պատկերներ (կենդանիներ, գրիֆոններ և այլն): Վերջիններս, թերևս, կատարել են խորհրդանիշերի (սիմվոլների) դեր: Երկրորդ խմբում հանդես են գալիս հիերոգլիֆներ, որոնք հիմնականում ծառայում են իրրև որոշարկիչ-ցուցիչներ՝ ուղեկցելով դիցարանական էակներին կամ նմանաբնույթ պատկերներին ու տեսարաններին (նկ. 34): Երկրորդ խմբի կնիքների վրա (նկ. 35) մեհենագրերը որոշակի դասավորությամբ ներկայացնում են ինչ-որ տեսքով (մեծ մասամբ, հավանաբար, հատուկ անուններ): Այս խմբերն իրենց հերթին կարելի է բաժանել ենթախմբերի, սակայն, քանի որ այն որևէ էական նշանակություն չի ունենա վերծանության գործում, չենք անդրադառնա դրանց: Կնիքների պատրաստման համար որպես նյութ են ծառայում զանազան տեսակի քարերը (այդ թվում՝ լեռնային ապարները), կավը և կավանման խառնուրդները, մետաղներից՝ հիմնականում բրոնզը: Որպես օրինաչափություն, նշանները կնիքների վրա փորագրված են այնպես, որ կնքելուց հետո կնքված իրի վրա երևում են դուրս եկած ռելիեֆային մակերեսով: Նշանները հանդիպում են կնիքների և՛ կողային մակերևույթին, և՛ հատակին:

Մեծ թիվ են կազմում այն կնիքները, որոնք չեն հասել մեզ, սակայն պահպանվել են դրանց դրոշմները: Կնիքներ և կնքադրոշմներ են հայտնաբերվել գրեթե բոլոր մեծ հնավայրերից:

Կարմիր բլուրի պեղումներից, ի թիվս այլոց, գտնվել է հանքաձյուղից (քիտում) պատրաստված մի կնքադրոշմ, որի ներքին մակերեսը և երանում պահպանված թռիկի հետքերը ցույց են տալիս, որ այն դրված է եղել փաթեթի ձև ստացած փափուկ գրանցութի վրա: Բ. Բ. Պիտարովսկին այն համարում է պապիրուսն փաթեթ և գտնում, որ թեչեչեպախնիում գոյություն է ունեցել նաև պապիրուսների փաթեթների արխիվ, իսկ պապիրուսներին, հնարավոր է, որ զրած

⁴⁹² Մենք այստեղ չենք անդրադառնա շխայնական կնիքների բնութագրմանը և՛ հատկանշներին, որոնք վերաբերում են կնքագործության բնագավառին և գրեթե ոչինչ չեն տալիս մեր խոլիքների լուծմանը:

լինեին արամեերեն⁴⁹⁴։ Ընդունելով հեղինակի եզրահանգումը այլ (սեպագրից տարբեր) գրով արիսիվի գոյության խնդրում, մենք վերապահությամբ ենք մոտենում գրի և գրանյութի հարցերին։ Բանն այն է, որ Հայկական լեռնաշխարհում չկար պապիրոսի հումք և իբրև փափուկ գրանյութ պետք է ծառայեր մի այլ բան (օրինակ՝ մագաղաթը կամ այլ նյութ)։ Ինչ վերաբերում է արամեական գրին, ապա հիմքեր չկան րիայնական դարաշրջանում Հայաստանում ենթադրելու այդ գրի գործածությունը։ Փոխարենը Վանի թագավորությունում սեպագրին զուգահեռ կիրառվում են մեհենագրերը։ Նման իրավիճակ է նաև Խնթաթական տեղության մեջ, ուր մեհենագրերն օգտագործվում էին հիմնականում կոթողային (մոնումենտալ), իսկ սեպագիրը՝ առօրյա գրառումներում։ Բիայնական պետության մեջ, ընդհակառակն, սեպագիրն է հանդես գալիս կոթողային արձանագրություններում, և կարելի է ենթադրել, որ մեհենագիրն առավելապես գործածվել է առօրյա գրագրության մեջ, որի համար պահանջվել է փափուկ գրանյութ։ Վերջինս կարող էր երկարադիմացկուն չլինել, որով էլ պայմանավորված է մինչ օրս փաթեթային արիսիվների պահպանված չլինելը (ինչպես որ չի պահպանվել Կարմիր բլուրի կնքադրոշմը կրած փաթեթը)։

բ) *Մտառայա թասեր և սափորներ*։ Ուրարտական մտառայա հիերոգլիֆակիր իրերի մեջ մեծ թիվ են կազմում թասերը։ Դրանք բաժանվում են երկու խմբի. առաջիններն ունեն զուգահեռ սեպագիր գրություններ, իսկ երկրորդ խմբի թասերի վրա առկա են միայն մեհենագրեր։ Առաջին խումբն իր հերթին բաժանելի է երեք ենթախմբի.

- միայն առյուծի գլխի պատկերով ու սեպագրով թասեր⁴⁹⁵,
- առյուծի գլխի հետ հանդես է գալիս աշտարակատեսք նշանով կազմված կցագիրը⁴⁹⁶ (տե՛ս «Կցագրում» ենթաբաժնում),
- այլ նշաններով թասեր⁴⁹⁷։

Երկրորդ խումբն իր հերթին ենթակա է նման բաժանման՝ մեկ⁴⁹⁸ և մի քանի նշաններով թասերի⁴⁹⁹։

Մեր ունեցած հիերոգլիֆակիր բոլոր թասերը պատրաստված են բրոնզից։ Հիերոգլիֆներն արված են դրվագման եղանակով։ Նշանի գծագիրը թասի վրա նախ խազվել է ինչ-որ սուր գործիքով, ապա կատարվել է դրվագում (դա ակնհայտ է այն թասերից, որոնց վրա կցագիր նշանը մնացել է անավարտ՝ միայն խազված կամ կես-դրվագված, կես-խազված)։

⁴⁹⁴ КБ-1, էջ 76-77։

⁴⁹⁵ Նման թասեր են նայտվի միայն Ինուշգուտայի և Սարգուրծի սմուններով (Սարտ, *Gest*, 1982-83, էջ 142, № 45; КБ-2, էջ 56-57; ՀԳԳԳ 2010-32/40)։

⁴⁹⁶ Նման գրություններ թասեր մինչ օրս գտնվել են Կարմիր բլուրից (КБ-2, էջ 56-61; Մտփոխյան, 2003 (b), էջ 242-247) և մեկ օրինակ՝ քաջապված Փնակով Գազար (Կամո) քաղաքից (Գաչանդյան, 1984, էջ 101-102)։

⁴⁹⁷ КБ-2, էջ 55-57, 61։

⁴⁹⁸ Սարտ, *Gest*, 1982-83, էջ 189; Սարտ, Jerusalem, 1991, էջ 201; *Евраз. Хроника*, 1990, էջ 37; աղ. II-7։

⁴⁹⁹ Warkke, 1990, էջ 71-74; КБ-3, էջ 10, նկ. 3a և 6 (նկ. 3a-6 ստացված է զննիքից)։ ՀԳԳԳ 2010-55; Barnett, 1974, աղ. XIII։

Թասերից բացի մետաղյա ամանեղևնի մեջ հաստով ուշադրության է արժանի արծաթյա մի սափոր, որի վզին փորագրված է եռանիշ հիերոգլիֆ արծառագրություն⁵⁰⁰: Ի դեպ, նույն նշանախումբը (երկրորդ նշանի հայեչալյին շրջամամբ) պատկերված է բրոնզե թասերից մեկի վրա⁵⁰¹:

գ) *Արձանիկներ*: Բիսյանական արվեստի ուսումնասիրության առումով ուշագրավ այս խումբը կազմված է դիցարանական էակների, մարդատեսք և կենդանատեսք արձանիկներից, որոնք ունեցել են զանազան կիրառություն (կուռերեք, գահերի, պաշտամունքային ամանների, զարդերի մասեր և այլն): Հիերոգլիֆիկայի տեսանկյունից հուշարձանների այս ընտանիքը բաժանվում է երեք խմբի: Մտաջին խմբի արձանիկների վրա հանդիպում են մեկ կամ երկու նշաններ՝ նրանց աստվածայնությունը կամ գործառույթը (Ֆունկցիան) ցույց տվող⁵⁰²: Երկրորդ խմբի արձանիկների վրա հանդիպում են բազմանիշ գրություններ⁵⁰³, որոնցից ոչ մեկը դեռևս չի ընթերցվել: Երրորդ խումբը ներկայացված է արձանիկներով, որոնք կրում են և՛ սիմվոլիկ մեանաշան, և՛ բազմանիշ գրություն⁵⁰⁴:

Արձանիկները պատրաստված են զանազան նյութերից՝ ոսկի, արծաթ, բրոնզ, քար և այլն: Նշանները բոլոր դեպքերում փորագրված են:

դ) *Պաշտամունքային տեսարաններով թիթեղներ*: Վանի թագավորության հոգևոր ու նյութական մշակույթի ուսումնասիրության կարևոր աղբյուրներ են կրոնա-պաշտամունքային տեսարաններ ունեցող բրոնզե թիթեղները: Մեզ հայտնի թիթեղներից երկուսն են կրում մեհենագրեր⁵⁰⁵, և հենց դրանք էլ (նկ. 36 և 37) հիմք դարձան բիսյանական հիերոգլիֆիկայի վերծանության առաջին բանալին գտնելու համար:

ե) *Միտրայիտներ*⁵⁰⁶: Մեզ հասած մեդալիոնների վրա պահպանվել են սիմվոլիկ նշաններ, որոնք ուղեկցում են հիմնականում պաշտամունքային բնույթի տեսարաններին: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Կարմիր բլուրից գտնված երկու արծաթե մեդալիոնների վրա աստծո գլուխը փորագրված է արծաթի վրա գողված ոսկյա շրջանակի վրա⁵⁰⁷: Արդյո՞ք այստեղ մենք գործ չունենք լուսազսակի պատկերման հնագույն դեպքերի հետ:

զ) *Ռազմական հանդերձանքի մասեր*: Այսօրվա մեր ունեցած հիերոգլիֆակիր ռազմական հանդերձանքի մասերը, առանց բացառության, պատրաստված են բրոնզից: Այս հուշարձանախումբը ներկայացված է սաղա-

⁵⁰⁰ КБ-3, էջ 10, նկ. 3а; Piotrovsky, 1969, նկ. 71-73:

⁵⁰¹ КБ-3, էջ 10, նկ. 3а:

⁵⁰² Piotrovsky, 1962, էջ 82; Piotrovsky, 1967, էջ 51, նկ. 33, աղ. 12: Ոչոչ արձանների կոծրին նախնի կամ պատկեր կիսադասի պատկերը, մեր կարծիքով, ոչ թե բացառապես է կամ թեև տեսակի կոծրագրեր, այլ «տարիան» գաղափարախոսողը (տե՛ս «Արձանաբանության վիճակը» ենթաբաժնում):

⁵⁰³ Barnett, 1950, էջ 6-7, աղ. VII; Piotrovsky, 1939, էջ 51-52, աղ. IV-V:

⁵⁰⁴ Barnett, 1950, էջ 50-51, աղ. II-III:

⁵⁰⁵ Piotrovsky, 1939, էջ 50-51, աղ. XII; Talyurek, 1975, էջ 154-155, աղ. XXXVI-a:

⁵⁰⁶ Barnett, 1974, էջ 43-46, աղ. XI; Talyurek, 1975, էջ 154-155, աղ. XXXVI-a:

⁵⁰⁷ Վանի թագավորության մասիցներից գտնված ոսկյա և արծաթյա մեդալիոնների մասին տե՛ս Հմարտյան, 2005 (b), էջ 5-15:

⁵⁰⁸ Հմարտյան, 2005 (b), էջ 5-15:

⁵⁰⁹ КБ-2, էջ 11, 18; КБ, 1970, գ 85, 86; լուսանկարները՝ Piotrovsky, 1969, № 122, 123:

վարտներով, գրահարանկոնի մասերով, գոտիներով և ձիու սպառազինության մասերով: Նշված իրերը սովորաբար կրում են մեխանիզմներ՝ հիմնականում կրոնա-ժազմական իմաստավորում ունեցող (սայուձի, ցլի, արծվի գլուխներ և այլն): Նշանները, հիմնականում, փորագրված են:

Է) *Խեցեղեն ամսաներ*: Այս ընդհանրական անվան տակ մենք միավորել ենք խեցեղեն զանազան տեսակի անոթների խմբեր՝ կարասներ, սափորներ, քրեղաններ, թասեր և այլն, որոնցից յուրաքանչյուրը, ելնելով մի շարք առանձնահատկություններից, կարելի է բաժանել մի քանի ենթախմբի: Դա, սակայն, դուրս է մեր ուսումնասիրության առաջադրած խնդիրների շրջանակից (վերաբերում է խեցեղործությանը): Կենցաղային նշանակության իրերի այս մեծ խմբի համար բնորոշ է հիերոգլիֆ նշանների կիրառման չորս հիմնական դրսևորում.

1. որպես վարպետի նշան՝ ցույց տալու աշխատանքի հեղինակին (նկ. 38),

2. իբրև դաջվածք՝ վարպետի կողմից նախապես նշելու իրի նպատակը, պատկանելիությունը այս կամ այն շինությանը (նկ. 39),

3. տարողության չափի նշման միջոց,

4. առայժմ անհայտ նշանակությամբ կիրառման դեպքեր:

Փոքրածավալ անոթների վրա վապետների նշանները սովորաբար դրվել են իրանի ներքին մասում կամ հատակի վրա՝ մինչև թրծվելը: Մեծ ծավալ ունեցող կարասների վրա նշանները (թե՛ վարպետի և թե՛ այլ) արվել են իրանի վերին մասում կամ վզի ու շուրթի վրա: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ գիևու պահեստներում կարասները կիսով չափ թաղվում էին հողում և երևում էին միայն վերին մասերը:

Կարասների վրա դաջվածքներ չեն հանդիպում թերևս այն պատճառով, որ դրանց կիրառումը միանգամայն պարզ էր: Միջին և փոքր չափի անոթների դաջերը (բոլորն էլ՝ արված մինչև թրծումը), մեր կարծիքով, ցույց են տվել դրանց նպատակադրումը: Չի բացառվում, որ դաջվելուց հետո այդ իրերը (հատկապես հոգևոր նպատակների ծառայելու կոչվածները) անցած լինեն սրբագործման հատուկ ծեսերով:

Կարասների և սափորների վրա տարողության չափի նշումները արված են կետային թվանշանների և չափման միավոր-նշանների միջոցով: Վերջիններիս մեջ հաճախ են հանդիպում տիկի, սափորի, թասանման և այլ գծապատկերներով նշանագրերը (նկ. 40): Հիմնականում դրանք խազված են անոթների վրա՝ թրծումից հետո: Որպես օրինաչափություն, սափորների տարողության նշումները արված են կանթերի վրա:

Խեցեղենի նմանօրինակ նշանագրումը Հայկական լեռաշխարհում ունի հին ավանդույթներ և վկայված է դեռևս Ք.ա. IV հազարամյակում⁶⁰⁶:

Սովորաբար նշանները պատկերվում են խեցեղեն ամանների արտաքին մակերեսին: Այս կանոնից ուշագրավ բացառություն է Կարմիր բլուրից գտնված

⁶⁰⁶ Թորոպան, 1976, էջ 84, տախտ. V-VII:

ուրարտական մեհենագրության բնութագրումը մնում է ապագայի գործ: Ըստ ծավալի՝ արձանագրությունները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ միանիշ (հիմնականում վարպետի նշանով) և բազմանիշ: Բազմանիշ արձանագրությունները նույնպես բաժանելի են երկու խմբի՝ միատող և բազմատող: Մեծամասնություն են կազմում միատող արձանագրությունները, որոնց շարքն ենք դասում նաև խեցեղեն ամանների՝ վարպետի նշանից կամ դաջից և տարողության նշումներից բաղկացած նշանախմբերը: Ըստ տողերի քանակի, դասակարգման մեջ առանձնակի դժվարություն են ներկայացնում մի քանի կնիքներ՝ կապված գրության ուղղության խնդրի հետ (տե՛ս ստորև):

Քանի որ քնագրերի մեծ մասը վերձանված չէ և հնարավոր չէ դրանք դասակարգել ըստ բովանդակության, մենք այդ խնդրի ուղղությամբ անում ենք միայն նախնական քայլեր՝ դասակարգումը կատարելով ըստ քնագրի բնույթի՝ ելնելով նրա կոնտեքստից, ինչպես նաև այն կրող առարկայի նպատակադրումից: Ըստ նշված հատկանիշի, մեր ունեցած արձանագրությունները բաժանվում են հետևյալ խմբերի.

ա) արքայական իշխանության ոլորտին վերաբերող քնագրեր, որոնց մեջ են մտնում մի խումբ կնիքների (տե՛ս վերձանության բաժնում), ռազմական հանդերձանքի, արքաների անունով սեպագիր արձանագրություններ կրող և այլ իրերի գրությունները,

բ) արձանագրություններ պաշտամունքային նշանակություն ունեցող առարկաների (թրոնգե թիթեղներ, մեղալիտներ, կնիքների մի խումբ և այլն) վրա. ի դեպ, միշտ չէ, որ կարելի է հստակ սահման դնել այս երկու խմբերի միջև, քանի որ Վանի թագավորությունում հոգևոր քարձրագույն իշխանությունը ևս պատկանում էր արքային⁵¹⁸,

գ) տնտեսական և կենցաղային նշանակության առարկաների վրա հանդիպող գրություններ, որոնց մեջ մեծ թիվ են կազմում խեցեղեն ամանները,

դ) արձանագրություններ, որոնց բնույթն առայժմ անհայտ է մնում լրացուցիչ տեղեկությունների բացակայության պատճառով:

5. Բազմալեզու արձանագրությունների առկայության խնդիրը: Անհայտ գրերի և լեզուների վերձանության համար բացառիկ նշանակություն ունի նույն բովանդակությամբ բազմալեզու արձանագրությունների առկայությունը, մանավանդ եթե վերձանման ենթակա քնագիրն ունի զուգահեռ թարգմանություն մեկ ուրիշ, արդեն հայտնի գրով ու լեզվով: Հաճախ նորահայտ բազմալեզու արձանագրությունները դառնում են արդեն վերձանված գրի ու լեզվի ընթերցման ճշգրտությունը ստուգելու միջոց: Ուստի հատուկ կարևորություն ունի այն հարցը, թե ուրարտական մեհենագիր քնագրերը ունե՞ն զուգահեռ թարգմանություններ մեզ արդեն ծանոթ որևէ գրով ու լեզվով, հանդես գալի՞ս են բազմալեզու արձանագրություններում, թե՞ ոչ:

⁵¹⁸ Լեռ, 1915, էջ 131; Հմայսյան, 1990, էջ 73:

Առ այսօր հայտնի միակ գրային համակարգը, որով թողնված արձանագրությունները հանդիպում են ուրարտական հիերոգլիֆների կողքին, Վանի թագավորության սեպագրերն են: Դրանք հանդիպում են բրոնզե թասերի, կնիքների ու կնքադրոշմների, օազմական հանդերձանքի մասերի, կավե սալիկների և այլ իրերի վրա: Թարգմանո՞ւմ են այդ գրությունները մեկմեկու, թե՞ ոչ:

Քննելով այս հարցը՝ Ռ. Դ. Բարնեթը հանգում է բացասական պատասխանի, քանի որ առյուծի գլուխ է պատկերված թե՛ Սարգուրիի և թե՛ Ռուսայի անունները կրող թասերին, իսկ արծվի գլուխը հանդիպում է և՛ Արգիշթիի, և՛ Սարգուրիի անունների կողքին¹⁰⁹: Միանգամայն տրամաբանական այս տեսակետը մենք ընդունել և պաշտպանել ենք նախկինում: Սակայն քիայնական մեհենազիր արձանագրությունների ժողովածուն և նշանացանկը կազմելուց հետո մեզ հաջողվեց պարզել ուրարտական մեհենագրության գաղտնիքներից մեկը և ցույց տալ, որ վերը թվարկված գրակիր առարկաների մի մասի վրա առկա են երկկեզու արձանագրություններ: Այս ուշագրավ խնդրին կանդրադառնանք հետագա շարադրանքում՝ վերծանության ուղղությամբ մեր կատարած աշխատանքը ներկայացնելիս:

6. Գրության ուղղությունը: Հին աշխարհի գրային համակարգերում կիրառվել են գրության ամենատարբեր ուղղություններ՝ աջից ձախ, ձախից աջ, վերից վար, բուստրոֆեդոն (տողերը հորիզոնական՝ ամեն հաջորդը նախորդին հակառակ ուղղությամբ), շրջանաձև և այլն: Գրության ի՞նչ ուղղություն (կամ ուղղություններ) է ընդունված քիայնա-արարատյան հիերոգլիֆիկայում:

Գրության ուղղությունը սովորաբար որոշում են՝ ելնելով անավարտ տողերի չգրված մասերից: Թուփրաք կալեի տողագծած սալիկի (նկ. 42) առաջին տողի գրությունը ավարտվում է ձախ եզրին չհասած: Երկրորդ տողը գրված է ամբողջությամբ, իսկ երրորդն առաջինի պես սկսում է աջից և ավարտվում ձախ եզրին չհասած: WAs-1 թիֆեղի (նկ. 36) վերին մասում գրված է մի անուն՝ արևի թևավոր սկավառակ պատկերող որոշարկիչով, որ չափերով մեծ է մյուս նշաններից և դրված է աջում, ինչը ևս վկայում է հօգուտ աջից ձախ ուղղության: Նույն թիֆեղի ուշադիր զննումից ակնհայտ է դառնում, որ ուղղահայաց գրության դեպքում նշանները դասավորվել են վերից վար ուղղությամբ (երկրպագող անձներից երրորդի գլխավերևում): Վերից վար ուղղությամբ են դասավորված նշանները մի շարք բրոնզե թասերի, որոշ կնիքների, սափորների կանթերի վրայի տարողության և այլ նշումներում, այդ դասավորությամբ է կատարվել կցագրման մի տեսակը (տե՛ս ստորև):

Ռ. Դ. Բարնեթն իր արդեն բազմիցս հիշված հողվածում ուրարտական մեհենագրության համար հնարավոր է համարում բուստրոֆեդոն ուղղությունը և, ելնելով դրանից, որոշ բնագրեր առաջարկում է կարդալ շրջանաձև (ժամ

¹⁰⁹ <Edin. Barnett, 1974, էջ 51:

պարհին հակառակ) ուղղությամբ⁵²⁰, որի հետևանքով նրա կազմած կորպուսում առաջացել են հակասություններ⁵²¹: Մեր կարծիքով, բիայնական մեհենագրության մեջ շրջանաձև կամ բուստրոֆեդոն ուղղություն ենթադրելու համար որևէ հիմնավոր փաստարկ չկա: Պետք է ընդունել, որ Ուրարտու-Արարատում մեհենագրության մեջ կիրառվել է երկու ուղղություն՝ աչից ձախ (հորիզոնական գրության դեպքում) և վերից վար (ուղղահայաց դասավորության պարագայում):

7. Նշանների թիվը և ըստ այդմ գրային համակարգի տեսակը: Գրային համակարգի կարևորագույն բնութագրիչներից մեկը նրանում գործածված նշանների թիվն է: Այն, որպես օրինակափություն, ցույց է տալիս, թե գրային ինչ տեսակի համակարգ է մեր առջև: Եթե նշանների թիվը չի անցնում 40–50–ից, ապա մենք գործ ունենք այբուբենի հետ: Հիսունից ավելի, մի քանի հարյուր նշաններ ունեցող համակարգերը լինում են վանկային կամ բառավանկային: Իսկ հազարավոր նշաններ ունեցողները բառային (գաղափարագրային) համակարգեր են՝ առանց հնչյունային նշանների կամ դրանց հազվադեպ կիրառմամբ:

Բիայնական մեհենագրերը, մեր կատարած հաշվումներով, շուրջ 300 նշան են: Այդ թիվը հետագայում կարող է ոչ մեծ փոփոխություն կրել՝ կապված նոր բնագրերի հայտնաբերման հետ: Նշանների նման քանակը ցույց է տալիս, որ մեզ հետաքրքրող գրային համակարգը գաղափարագրերի կիրառմամբ վանկային՝ բառա-վանկային (գաղափարահնչյունագրային) է: Նշանների մոտավորապես նման քանակություն և գրային համակարգի նույնպիսի բնութագիր ունի Վանի թագավորության սեպագիրը:

8. Նշանների խմբային դասակարգումը՝ ըստ արտաքին տեսքի: Ուրարտական մեհենագրերի՝ ըստ արտաքին տեսքի խմբային դասակարգման առաջին և առաջամ փակ փորձը կատարել է Ռ. Դ. Բարնեթը: Նա տարբերակում է 8 խումբ՝ բուսական, երկնային, ճարտարապետական, մարդկային, կենդանական, առարկաների, թվերի և անորոշ տեսքով նշանների: Մեր կարծիքով այս խմբերին պետք է ավելացնել ևս երկուսը՝ դիցարանական էակների պատկերներ և օժանդակ նշաններ⁵²²:

9. Թվանշանները: Մեր ունեցած հիերոգլիֆայիք առարկաների մեջ մեծ թիվ են կազմում տարողության նշումներով խեցեղեն ամանները, որոնց վրա

⁵²⁰ Barnett, 1974, էջ 47:

⁵²¹ Միանգամայն անօրինակաբան է անհամոզի դասավորություն է առաջարկված թիվ 21–ում, որն առանց այդ կ'առաջարկում է երկու յուր յուր սխալով: Արևի թևավոր սկավառակ ունեցող կնիքների համար սպիտակ է ստացվում է սկավառակը կարգապ օրակն առաջին նշան, իսկ կրակից ենքքն Ռ. Դ. Բարնեթն առաջարկում է սկավառակը կարգապ օրակն առաջին նշան, իսկ կրակից ենքքն: Գրածանները՝ ձախից աջ ուղղությամբ (թիվ 15 և 18), որով և հակառակ է ինքն ինքն թիվ 28–ի սարսազայում: Գրածանները՝ ձախից աջ ուղղությամբ, ունեն աչից ձախ դասավորություն: Տվյալ կնիքը (Porada, հիերոգլիֆները, հավասար իր առաջարկում, ունեն աչից ձախ դասավորություն և կրակն և՛ Buchanan, 1948, աղ. CL XVIII, № 1103) միևնույն կրակից կնիքովը արձանաշարություն է կրակն և՛ կրակային մակերևույթի վերից վար դասավորությամբ, և՛ նրանակին՝ սկավառակառես նշանից ենքքն, կրակային մակերևույթի վերից վար դասավորությամբ (և շրջանաձև) ուղղությամբ կարգապ: Թեք ակնապառ է, որ սխալ է նման կնիքները բուստրոֆեդոն (և շրջանաձև) ուղղությամբ կարգապ:

⁵²² Մեր նշանայանները՝ ըստ այդ խմբային դասակարգման, տես Մտնկայան, 2003 (ա), էջ 261–271:

բազմաթիվ տարբերակներով հանդիպում են մեկից մինչև ինը թվերի նշումները՝ կետերով (տե՛ս հավելվածում, աղ. 11): Տարողության նշումներում կետերի կողքին հանդիպում են որոշ առարկաների (տիկ, սափոր, գավաթ, թաս և այլն) գծապատկերներ (նկ. 42), որոնք չափի միավորներ ցույց տվող հիերոգլիֆներ են: Կարասների վրա առարկաների պատկեր-նշաններից բացի հանդիպում են ևս չորս հիերոգլիֆներ (նկ. 45), որոնցից երկուսը (c, d), մեր կարծիքով, կարող էին նշանակել ակարկի, մյուս երկուսը՝ տերուսի (a, b): Կարասների վրա վկայված են հեղուկների տարողության երեք չափեր, որոնք, վերջին և առավել ճշգրիտ հաշվումների համաձայն⁵²³, ներկայանում են հետևյալ կերպ՝

ակարկի (սահարկու) – 300 լիտր,
տերուսի (տուրուզա) – 30 լիտր,
արուզա – 3 լիտր:

Երեք լիտրից փոքր միավորի կիրառումը հսկա կարասների համար անիմաստ կլիներ: Քանի որ նվազագույն միավոր է ընդունված արուզան, տերուսին հավասար է տասը արուզայի, իսկ ակարկին՝ հարյուրի, ապա մեզ թվում է, որ վերջին երկու չափման միավորների երկուական նշանները (կամ յուրաքանչյուրից մեկը) կարող էին նաև համապատասխանաբար ցույց տալ 10 և 100 թվերը⁵²⁴:

1–9 թվերի համար կետային նշումներից բացի ունենք նաև ուղղահայաց գծիկներով նշաններ, որոնք հանդիպում են միայն Թովրաք կալեում և Արին բերդում: Միայն երկու հուշարձաններում հանդիպելուց զատ՝ հատկանշական է նաև, որ այդ նշաններն արված են շատ անարվեստ, այսինքն՝ դրանք պատկանել են ստորին խավի: Մյուս կողմից, ակնհայտ է դրանց ընդհանրությունը խնթա-լուվիական հիերոգլիֆ-թվանշանների հետ: Ուստի մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ այդ նշանները գործածել են քիսյուական արքաների՝ Եփրատի ավազանից քերված ռազմագերիները, որոնց մասին կա գրավոր հիշատակություն⁵²⁵:

Թվերի կետային նշումը հին առաջավորասիական տարածաշրջանում քննորշ է միայն Հայաստանին: Ի տարբերություն Եգիպտոսի, Փոքր Ասիայի, սեպագիրը գործածող Միջագետքի և հարակից երկրների, Հայկական լեռնաշխարհում թվերի նշումները կատարել են ոչ թե գծիկներով, սեպերով կամ այլ սիմվոլիկ նշաններով, այլ կետ-շրջանակներով (տե՛ս աղ. 11): Թվերի կետային նշումը, լինելով հայաստանյան երևույթ, գալիս է դեռևս ժայռապատկերներից.

⁵²³ Барсаган, Азарян, 1980, էջ 166–178:

⁵²⁴ Ի դեպ, քնն խառի նմանվող նշանը, որի համար մենք ենթադրաբար առաջարկում ենք «100» նշանակությունը, տեսքով գրեթե նույննում է ինթա-լուվիական «100» թվանշանին (Laroche, 1960, էջ 213, № 399; Дьячкова, 1969, էջ 105; Il Geroglifico Anatolico, 1998, էջ 64, 115): Բ. Բ. Պիտրոպիլու կարծիքով՝ այն կարող էր նշանակել «5 ակարկի» (КБ–2, էջ 66):

Այսինքնից հայտնաբերված կտորի իման վրա Մ. Սալվինի նկարագրում է, որ ակարկից, տերուսից Այսինքնից հայտնաբերված կտորի իման վրա Մ. Սալվինի նկարագրում է, որ ակարկից, տերուսից և արուսից բացի գրություն է ունեցել ևս մեկ միավոր՝ «1/2 տերուսի», ընդ որում, արուսին պետք է և արուսից բացի գրություն է ունեցել ևս մեկ միավոր (Salvini, 2001, S. 293–295):

կազմած ինի վերջին 1/10 և տերուսի 1/20 մասը (Salvini, 2001, S. 293–295):

⁵²⁵ Sh' u Memnonianon, 1960, էջ 216; Կարազուզյան, 1981, էջ 60, 67; Арытован, 2001, էջ 161–162:

քիայնական մեհենագրության մեջ վերջինիս լայն կիրառումը այդ գրային համակարգի տեղական ծագման ապացույցներից մեկն է:

Ռ. Դ. Բարենբոի նշանագանկում ուղղահայաց գծիկներով բերված են 1-4 թվանշանները, կետերով՝ 3-8 թվերը, ապա կարասների վրա հանդիպող հիշյալ նշաններից երկուսը (նկ. 45 b, d):

10. Օժանդակ նշանների կիրառությունը: Այսօրվա մեր ունեցած գիտելիքները թույլ են տալիս խոսելու քիայնա-արարատյան մեհենագրության մեջ երեք օժանդակ նշանների կիրառության մասին: Դրանցից ամենատարածվածը դեպի վեր ուղղված անկյունաձև նշանն է, որը դրվում է այլ մեհենագրերի վրա: Այս օժանդակ նշանի ստույգ րովանդակությունն առայժմ հայտնի չէ: Ելնելով այն հանգամանքից, որ WAU-1 թիթեղի վրա (նկ. 36) նույն հիերոգլիֆը պատկերված է մեկուսի և առանց այլ նշանի, իսկ առաջին տողի անվան մեջ՝ անկյունաձև նշանով, կարելի է ենթադրել, որ վերջինիս դերը գաղափարագիրը ոչ թե միայն առաջին վանկով, այլ ամբողջությամբ հնչեցնելն է: Նշենք, որ այսօր հայտնի է տվյալ հիերոգլիֆի կիրառության մեկ տասնյակից ավելի դեպք:

Մյուս օժանդակ նշանը հանդիպում է Թոփրաք կալեի տողագծած սալիկի (նկ. 42) առաջին և երրորդ տողերի վերջում: Նման դիրքում հանդես գալը ցույց է տալիս, որ այն, հավանաբար, կիրառվել է իբրև ավարտանշան: Նման մի նշանով է ավարտվում Երևանի քիայնական դամբարանից հայտնաբերված երկտող արձանագրությունը (նկ. 41)²²⁶:

Երրորդ նշանը, որը մենք ենթադրաբար ենք համարում օժանդակ, քանի որ ունենք դրա կիրառման մեկ դեպք (եթե դա կցագրում չէ), նույնպես հանդիպում է WAU-1 թիթեղի վրա, երկրպագող չորրորդ անձի գլխավերևում: Այս հիերոգլիֆի նշանակությունը ևս մեզ անհայտ է մնում:

Մեր ունեցած տվյալներն օժանդակ նշանների մասին առայժմ սահմանափակվում են այսբանով: Ծավալուն բնագրերի բացակայությունը ներկայումս թույլ չի տալիս պարզելու՝ կիրառվե՞ն ևս արդյոք բառանշատիչներ և կետադրական այլ նշաններ, թե՞ ոչ:

11. Որոշարկիչներ (ցուցիչներ, դետերմինատիվներ): Հին գրային համակարգերում լայն տարածում ուներ մեկ բառը, երևույթը մեկ նշանով արտահայտելու, գաղափարագրելու սկզբունքը: Գրային մտածողության զարգացմանը զուգընթաց՝ նշանները, կապված իրենց իմաստային և գործառնության բազմանշանակության հետ, ձեռք էին բերում բազմիմաստություն: Դա բավական լայնացրեց գրային հաղորդակցության հնարավորությունները և որպեսզի ստեղծված բազմիմաստությունը առաջ չբերեր խառնաշփոթ, հին դպիրները սկսեցին կիրառել որոշարկիչներ (ցուցիչներ, դետերմինատիվներ):

Կիրառության սկզբունքը հետևյալն էր. բազմիմաստ նշանը գործածելիս ճշգրտության նպատակով նրանից առաջ դրվում էր մեկ այլ նշան, որը

²²⁶ Օր քաջավում, որ վերջինս լինի երեք ուղղահայաց գծիկներով կազմված «նու» վանկանշանը, թեպետ սալիկի հիշեցնում է բնաբովանդակ օժանդակ նշանը:

նշգրտում, որոշակիացնում էր այդ գրանշանի իմաստը: Նույն սկզբունքով հատուկ անուններից առաջ դրվող որոշարկիչը ցույց էր տալիս անվան տիրոջ ով կամ ինչ (աստված, տղամարդ, կին, թագավոր, երկիր, քաղաք և այլն) լինելը:

Վանի թագավորության մեհենագրության մեջ ևս լայն տարածում ունի որոշարկիչների գործածությունը: Ամենաշատը կիրառվել են «արբա» և «աստված» որոշարկիչները: Սրանց մասին հանգամանորեն կխոսենք վերծանության բաժնում:

12. Կցագրում: Որոշարկիչ-գաղափարագրության մի դրսևորում է կցագրումը: Տարբերությունն այն է, որ առաջին դեպքում որոշարկիչ և որոշարկյալ նշանները գրվում են առանձին, իսկ երկրորդի դեպքում կցագրվում և հանդես են գալիս որպես մեկ քաղաղրյալ գրանիչ:

Ուրարտական մեհենագրության մեջ ամենից շատ կցագրեր են կազմվել աշտարակատեսք հիերոգլիֆով: Վերջինս, թերևս, նշանակել է «մեծ կառույց, շինություն» և իմաստով համապատասխանել է սեպագրերի լ. GAL-ին («մեծ տուն / շինություն», նաև՝ «ամրոց, պալատ»): Այսօր հայտնի են այդ նշանով կազմված առնվազն հինգ կցագրեր (նկ. 44), որոնք ցույց են տվել կառույցների, շենքերի զանազան տեսակներ: Դրանցից երկուսի մասին կխոսվի վերծանության բաժնում, մյուս երեքի քացատրությունն առայժմ անհայտ է:

Կցագրման ուշագրավ մի օրինակ ունենք Թոփրաք կալեի արձանիկներից մեկի հնգանիշ արձանագրության մեջ⁵²⁷, որի նշաններից մեկը մարդու գլխի պրոֆիլային պատկեր է (հայտնի այլ քնագրերից ևս)⁵²⁸ վերևում ավելացված երեք գծիկներ:

Հնարավոր է, որ կցագիր լինի Վանի թանգարանում պահվող բրոնզե թիթեղի (նկ. 37) արձանագրության առաջին նշանը՝ պրոֆիլային պատկերմամբ մարդու գլուխ՝ վրան երկու քաղաղրիչներով, նթե այն սաղավարտով կամ ինչոր մի տեսակ գլխակապով (զուցե թագով) գլխի գծապատկեր չէ:

Չի քացատվում, որ կցագրեր լինեն Էրմիտաժում պահվող արձանիկներից երկուսի գրություններում⁵²⁹ (մեր կորպուսում՝ TK-31, 32), որոնց բնօրինակներին ծանոթ չլինելով՝ մենք ձեռնպահ ենք մնում դրանց մասին որոշակի կարծիք հայտնելուց: Նույնը կարելի է ասել Բրիտանական թանգարանում պահվող գահի մասերից մեկի վրա երկու անգամ կրկնվող նշանի վերաբերյալ⁵²⁹:

Որպես կցագիր կարելի է ընկալել նաև «առավոտ» գաղափարագիրը⁵³⁰, ներքին քաղաղրիչը՝ լեռների գծապատկեր, իսկ վերինը՝ արևի սկավառակ մեկ-և-կեսի պատկեր:

⁵²⁷ Barnett, 1950, էջ 6-7, աղ. VII, նկ. 4-1:

⁵²⁸ Поговорский, 1939, էջ 51-52: Հնարավոր է նաև, որ էրմիտաժի 16002 համարակիր արձանիկի (մեր դիվանում՝ TK-33) ետաքաղաղրիչ նշանակման վերին մասիկը (դեպի ներքև ուղղված անկյունագծի) լինի առանձին նշան, ընդ որում՝ օժանոթակ, այդ դեպքում օժանոթակ նշանների թիվը կդառնա 4:

⁵²⁹ Barnett, 1950, էջ 6, աղ. IV, նկ. 4-2:

⁵³⁰ Այս գաղափարագրի մասին մանրամասն կխոսվի մեր վերծանության երկրորդ վտուի շարադրանքում:

Կցագրերի մի հետաքրքիր խումբ է հանդիպում խեցեղեն անոթների վրա (նկ. 45): Այս նշանների առանձնահատկությունն այն է, որ կցագրի բաղադրիչները ոչ թե դասավորվում են մեկը մյուսի վրա, այլ «մտնում» են իրար մեջ:

Այսբանով ամփոփելով բիայնական մեհենագրության մեջ կցագրման երևույթի ներկայացումը՝ նշենք, որ առաջիկա հետազոտություններում պետք է սպասել կցագրերի թվի մեծացում:

13. Արժանությանը նպաստող օժանդակ տվյալների գոյությունը: Անհայտ լեզուների ու գրերի վերժանությանը մեծապես նպաստում են դրանք կիրառած երկրի և ժողովրդի հոգևոր ու նյութական արժեքների մասին տեղեկությունները: Գրերի ուսումնասիրության պատմությունը հարուստ է բազմաթիվ դեպքերով, երբ առանց տվյալ երկրի ու նրա ժողովրդի մասին ունեցած հանգամանալի տեղեկությունների, ելնելով միայն գրանշանների արտաքին տեսքի վերլուծությունից՝ կատարվել են լիովին սխալ եզրահանգումներ, և, ընդհակառակն, երբ այդ տեղեկությունները մեծապես նպաստել են վերժանության աշխատանքներին: Պետք է ասել, որ թեպետ «Լանի թագավորության ողջ տարածքը (հատկապես Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանը) սիստեմատիկ հետազոտության դեռևս չի ենթարկվել, բայց այսօր հայտնի հնագիտական նյութը թույլ է տալիս որոշակի պատկերացում կազմելու հնագույն այդ պետության ու նրա ժողովրդի, պետական իշխանության, կրոնի, սովորույթների, տնտեսության, մշակույթի ու կենցաղի և այլ հարցերի վերաբերյալ: Սրանց մասին կան մեծածավալ ուսումնասիրություններ, որոնք ըստ անհրաժեշտության կօգտագործվեն մեր հետագա շարադրանքում:

14. Համաժամանակյա գրավոր աղբյուրներից ստացվող տեղեկությունները: Նույն խնդրի լուծման համար առանձնակի կարևորություն ունեն «Լանի թագավորության ժամանակաշրջանից մեզ հասած գրավոր հուշարձանները: Այսօր մենք ունենք գրավոր աղբյուրների չորս խումբ.

ա) Բիայնական սեպագիր արձանագրությունները, որոնք կիրառվում են Իշպուխիի ժամանակաշրջանից (Ջ.ա. մոտ 825–810 թթ.),

բ) ասուրա–բաբելական սեպագիր արձանագրությունները, որոնք բաժանվում են երկու խմբի՝ Ասորեստանում և Բիայնիլիում կիրառված⁵²¹,

գ) խեթա–լուվիական հիերոգլիֆ արձանագրությունները, որոնք վերաբերում են մինչև Ջ.ա. VIII դարն ընկած ժամանակահատվածին⁵²²,

⁵²¹ Ասորեստանյան արձանագրությունների հաջորդումները «Լանի թագավորության մասին տե՛ս Մանուսյանս, 1901 և Дьяконов, 1951, իսկ բիայնական արձանների առաքերնն քննարկը՝ Мезенковичев, 1960, էջ 117–118, 125–131, 323–327; Boehmer, 1979, էջ 50–51; Salvini, 1982, էջ 327–332; Dinçol, Dinçol, 1986, էջ 351–358; André–Salvini, Salvini, 1999, էջ 21; Apyrsovan, 2001, էջ 9–11, 12, 25–30, 137–139; André–Salvini, Salvini, 2002, էջ 5–66:

⁵²² Bossert, 1942, էջ 67–70, 181–190, նկ. 763–795; Günerbock, 1973, էջ 135–147, աղ. 3–5; Meriggi, 1975 (a) և 1975 (b), №№ 97–119, 124–131; Hawkins, 2000, էջ 282–329, 334–360:

դ) Աստվածաշնչի Հին Կտակարանի գրքերը, որոնցում Արարատի թագավորությունը հիշատակվում է երեք անգամ՝ կապված Ք.ա. VII–VI դարերի իրադարձությունների հետ³³³:

Նման աղբյուրներից ստացվող տեղեկությունների արժեքը հատկապես կարևորվում է այն դեպքերում, երբ չկան բազմաթիվ արձանագրություններ: Մինչև 1997-ի ապրիլը բիայնա-ուրարտական հիերոգլիֆների հետ կազմված երկլեզու արձանագրություններ հայտնի չէին, և նրանց վերծանության առաջին քանաչին (1995 թ.) գտնվեց սեպագիր արձանագրություններից ստացված տեղեկությունների օգտագործման շնորհիվ: Բիայնական սեպագիր քնազրերից մեզ հայտնի են Վանի թագավորության բոլոր աստվածների ու արքաների, մեծ քաղաքների, երկրամասերի անվանումները, բազմաթիվ տեղեկություններ երկրի ներքին կյանքի վերաբերյալ, որոնք անզևահատելի արժեք են ներկայացնում արարատյան մեհենագրության ուսումնասիրության տեսանկյունից: Այս արձանագրությունների դերն ավելի կարևորվեց վերծանության երկրորդ փուլում, երբ հայտնի դարձավ, որ մի շարք գրակիր առարկաների վրա եղած սեպագիր և հիերոգլիֆ գրառումները թարգմանում են մեկնակու, այսինքն՝ երկլեզու արձանագրություններ են, ինչը նոր հեռանկարներ բացեց մեհենագրության վերծանության ասպարեզում:

15. Այլ գրային համակարգերի հետ ունեցած առեւտրայինները: Ուսումնասիրության պատմության բաժնում ասվեց այն մասին, որ հայտնաբերման և հետազոտության սկզբից ևեթ բիայնական մեհենագրերը համաժամանակյա գրային համակարգերի մեջ ամենից ավելի նմանեցվել են խեթա-լուվիականին, անգամ համարվել «կեղծ-խեթական»³³⁴: Հետազոտությունները ճշգրտեցին և, անգամ ավելի զրեցին այդ առաջադրված կարծիքները, սակայն երկու հարևան երկրներում կիրառված հիերոգլիֆային նշանների նմանությունը մնաց անհերքելի:

Խեթա-լուվիական հիերոգլիֆիկան Ք.ա. XV–VIII դարերում կիրառվում է Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Եփրատի հովտում³³⁵: Խեթական կայսրությունում այն հանդես է գալիս խեթական սեպագրի քուզահետ, ընդ որում, սեպագիրն օգտագործվում է առօրյա գրագրության մեջ, իսկ հիերոգլիֆները՝ կոթողային (մեմորիալ) արձանագրություններում: Խեթա-լուվիական հիերոգլիֆիկայի ծագման վերաբերյալ միասնական կարծիք չկա. ավանդիկ հավանական երկու տեսակետներից առաջինը այն առաջացած է համարում կրեոտական պատկերագրությունից, իսկ վերջինս՝ եգիպտական հիերոգլիֆիկայից³³⁶, երկրորդի համաձայն՝ այս գրային համակարգն ունի տեղա-

³³³ Դ. Թագավորաց, 19, 37; Եսայի, 37, 38; Եսեմ, 51, 27; Տրոյիթ, 1, 24:

³³⁴ Ši'u ophēnāš, Perada, Buchanan, 1948, էջ 156:

³³⁵ Bossert, 1942, էջ 67–70, 181–190, Abb. 763–795; Güterbock, 1973, էջ 135–147, աղ. 3–5; Meriggi, 1975 (a) und 1975 (b), №№ 97–119, 124–131; Kocak, 1994, էջ 13–14, 17–28; Hawkins, 2000, էջ 282–329, 334–360:

³³⁶ Ši'u, ophēnāš, Gelb, 1965, էջ 82–83, աղ. 355; Meriggi, 1966, էջ 9, Tem6, 1982, էջ 87, 355-ի աղյուսակը:

ՎԵՐՇԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Գրի ուսումնասիրության պատմության մեջ կարևոր տեղ են զբաղում վերժանության փորձերը: ԻՆչ վիճակում է ներկայումս քիայնա-արարատյան մեհենագրության վերժանությունը: ԻՆչ փորձեր են արվել այդ ուղղությամբ, և ո՞րն է մեր ներդրումն այդ խնդրի լուծման ասպարեզում: Նշված հարցերի պարզարանման նպատակով նախ կներկայացնենք մեզ հայտնի՝ նախկինում կատարված վերժանության և մեկնաբանությունների փորձերը, ապա մեր ընթերցումներն ու դրանցից բխող եզրակացությունները:

1. Վերժանության նախորդ փորձերը: Վերժանության ասպարեզում կատարված մեզ հայտնի աշխատանքները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջին խմբի հեղինակները փորձել են մեկնաբանել միայն առանձին նշաններ, երկրորդիցը՝ վերժանել ամբողջական բնագրեր:

I-ա) Լայն գիտական շրջանառության մեջ դնելով Վանի թագավորության հիերոգլիֆիկան՝ Կ. Ֆ. Լեհման-Հաուպտն առաջինը եղավ, որ փորձեց տալ որոշ նշանների մեկնաբանումը: Նա իբրև հեղուկի տարողության չափի նշաններ է մեկնում տիկի, սափորի և թասի գծապատկերները, ընդ որում, առաջին երկուսը, համապատասխանաբար, համարելով սեպագիր արձանագրություններից մեզ հայտնի ակարկի ու տերուսի (հեղինակի մոտ՝ խիրուսի), որը հին ընթերցումն էր) չափի միավորների նշումներ, որոնք ունեցել են մոտ 120-150 և 12-15 լիտր տարողություն⁵⁴³:

I-բ) Բ. Բ. Պիտորովսկին, անդրադառնալով Կարմիր բլուրում վկայված նշված երկու միավորներին, կարծում է, որ պետք է ճշտել դրանց տարողության չափերը. ակարկին՝ 240-250 լիտր, իսկ տերուսին՝ վերջինիս մեկ իններորդի կամ տասներորդի չափ: Կարմիր բլուրում ակարկին ու տերուսին ներկայացված են ոչ թե տիկի և սափորի գծանկարներով, այլ կետերով և երկու նշաններով, որոնցից մեկը նա համարում է տերուսիի, իսկ խաչը՝ «5 ակարկի» նշում: Կարասներից բացի Բ. Բ. Պիտորովսկին հիշատակում է մի երկայնածիղ կալն անոթի մասին, որի տարողությունը նշված է ավելի փոքր չափի միավորով (աջից ձախ պատկերված են հասկատեսք նշան, սափորանման իրի գծապատկեր՝ շուրթից լինող զիզզազ գծով, և յոթ կետ, նկ. 46) և եզրակացնում, որ այն նախատեսված է եղել հացահատիկի համար, իսկ զիզզազ գծով սափորի գծապատկերը (որը հանդիպում է նաև Թովրաթ կալնի նյութերում) ներկայացրել է ոչ թե հեղուկի, այլ հացահատիկի չափման միավոր⁵⁴⁴:

Բ. Բ. Պիտորովսկին անդրադարձել է նաև այլ նշանների: Մասնավորապես նա ենթադրում է, որ սաղավարտների վրա դուրս ճկվածք պատկերված քառաձանին խորհրդանշել է ամպրոսի և ոսգմի Թեյշերա աստծուն⁵⁴⁵:

⁵⁴³ Lehmann-Haupt, 1931, էջ 474, 587:

⁵⁴⁴ КВ-2, էջ 66-67:

⁵⁴⁵ КВ-3, էջ 25: Կարմիր բլուրից բացի այդ նշանով աղայվարտներ են հայտնաբերվել Չրկանիսի, Արևմտյան Հայաստանի անհայտ մի քանի վայրերից և անգամ Իրանի Իրուվա-արևելյան շրջանից ու

I-գ) Հատուկ մի հոդված նվիրելով նշված երկայնաձիգ կավանդի տարի-րառեսք նշանին՝ Կարմիր բլուրի պեղումների մասնակից Չ. Մ. Ղասաբյանը այն (հոդվածում «հոլանդ. անոթի նշանը») ընթերցում է՝ «գարեջուր» և ծագած համարում շումերական ու նրանից սերող ասուրա-բաբելյական նույնիմաստ հիերոգլիֆից⁵⁴⁶։ Մյայն արտաքին տեսքից նկենյով արված այս եզրահանգումը մեզ թվում է ոչ հավանական. նույն նշանի առթիվ ավելի համոզիչ է Բ. Բ. Պիտո-րովսկու վերոնշյալ կարծիքը, հօգուտ որի է վկայում նաև այդ նշանի հարևա-նությամբ հանդիպող հասկի գծապատկերը։

I-դ) Հրատարակելով Կայալի դերեի (Ներքին Խնձոր) խեցանոթների տա-րողության նշումները՝ Չ. Բարենյը չափի միավորների նշաններ է համարում տիկ և սավոր պատկերող նշանագրերը (առանց որոշակիացնելու դրանց ան-վանումն ու ծագվածը), կեսը մեկնարանում է որպես միավորի կամ տասնավորի, իսկ ներսում կես ունեցող շրջանակը՝ տասնավորի կամ հարյուրավորի նշան (այսինքն՝ երկրորդն առաջինի տասնապատիկն է)⁵⁴⁷։

I-ե) Նույնպիսի քննություն կատարելով Բաստունից և Լիվարից գտնված խեցեղենի վերաբերյալ՝ Ա. Ֆոն Շուլերը ևս տիկի գծապատկերը համարում է «ակարկի», իսկ սավորինը՝ «տերուսի» չափերի միավորներ⁵⁴⁸։ Նույն տեղում հեղինակը ներկայացնում է 26 հիերոգլիֆներից (և դրանց տարբերակներից) կազմված նշանացանկ, որոնցից վեցը 1-6 թվանշաններն են։ Տարողության չա-փերին և հիերոգլիֆ նշաններին անդրադարձել է նաև Ա. Ա. Վայմանը, որի մա-սին կխոսենք նրա վերժանության փորձի ընդհանուր արդյունքները ներկա-յացնելիս։ Նշվածներից բացի տարողության չափերի նշաններին անդրադար-ձել են քիայնական չափազիտությանը նվիրված կամ առեջվող այլ աշխա-տանքներում ևս, որոնցում արտահայտված են բավականին իրարամերձ կար-ծիքներ. միակ ընդհանուրը, թերևս, այն է, որ տիկի և սավորի գծանկարներով քիայնական հիերոգլիֆիկայում ներկայացվել են «ակարկի» և «տերուսի» չափ-ման միավորները։

I-զ) Հատուկ ուշադրության է արժանացել ժառի (կամ նիզակի) և աշտա-րակի տեսքով նշանների կցագիրը (նկ. 44a)։ Ռ. Դ. Բարենյոը նշված աշխա-տանքում նախ բացասական սքատասխան է տալիս այն ենթադրությանը, որ կցագիրը կարող է լինել Կարմիր բլուրի անվան ուրարտական հիերոգլիֆային նշումը, քանի որ նույն նշանն առկա է նաև Թովրուսը կաղևում, ապա հավանա-կան է համարում նրա «զինանոց» նշանակությունը՝ համադրելով սեպագրերի urišhi կառույցի հետ⁵⁴⁹։

I-է) Փ. Քալմայեքը, Խաղդի աստծո խորհրդանշանին նվիրված իր հե-տաքրքրական աշխատանքում անդրադառնալով նույն նշանին, նկատում է, որ

Հուսիսային Կովկասից (Eckart, 1986, էջ 29-32 և նշված գրականությունը)։

⁵⁴⁶ Ղասաբյան, 1960, էջ 83-86։

⁵⁴⁷ Burney, 1966, էջ 88-90։

⁵⁴⁸ von Schuler, 1972, էջ 125-134։

⁵⁴⁹ Barnett, 1974, էջ 51։

բրոնզե թասերի վրա առյուծի գլուխը միշտ պատկերված է սեպագիր տեքստի սկզբում, իսկ կցագիր–նշանը ավելացվել է հետո՝ առանց օրինաչափ դիրք ունենալու առյուծի գլխի նկատմամբ՝ որ մասում պատահի: Ելնելով այս հանգամանքից՝ հեղինակը ենթադրում է, որ առյուծի գլուխը ծառայել է իբրև ինչ–որ ճշգրտում սեպագիր արձանագրության համար, իսկ ավելացված կցագիրը ցույց է տվել տվյալ իրի նախատակադրումը. սավորների վրա նույն նշանով դաջերի առկայության հիման վրա նա եզրակացնում է, որ կցագիր–հիերոգլիֆը ցույց է տալիս արքայի կամ երա ներկայացուցչի կողմից տվյալ իրի ձևումը «տաճարին» կամ «Խաղդիի ծառին»⁵⁰:

I–ը Փ. Քալմայերի նշված աշխատանքի վերլուծությանը նվիրված ոչ ծավալուն մի հոդվածում Ի. Մ. Դյակոնովը հնարավոր է համարում, որ ծառի նշանը աշտարակատեսք զարգափարագրի համար ծառայած լինի իբրև վանկային (հնչյունային) ցուցիչ (դետերմինատիվ): Աշտարակատեսք նշանը, երա կարծիքով, հավանաբար, նշանակել է «տուն, տնային տնտեսություն», «պալատ» կամ «տաճար», իսկ երկու նշանների միացումը կարող էր նշանակել «ընդունված է պալատ» (սրան ավելացվում է, որ É.urishi նշանակում է ոչ թե «զենքի տուն», այլ «կահ–կարասիի տուն»)՝⁵¹: Այս կցագրի մեկնաբանմանը կանդրադառնանք մեր վերձանության մասին խոսելիս:

Նշված հիերոգլիֆներից բացի բազմաթիվ ուսումնասիրողներ անդրադարձել են կրոնա–պաշտամունքային նշանակություն ունեցող մի շարք աստրալ նշանների, որոնք ունեն ընդհանուր առաջավորասիական տարածում, դրանց այստեղ չենք անդրադառնա:

II–ա) Ամբողջական արձանագրությունների վերձանության հրատարակված փորձեր (որբան մեզ հայտնի է) կատարել են Լ. Ա. Բարսեղյանը, Ա. Ա. Այամանը, Հ. Հ. Կարապետյանը, Ս. Պետրոսյանը և Գ. Մարտոսյանը: Լ. Ա. Բարսեղյանը առաջարկել է Կարմիր բլուրի բրոնզե թասերից մեկի յոթանիշ (այն ժամանակ՝ ամենամեծ) արձանագրության վերձանությունը⁵²: Ցավոք այս փորձը անհաջող էր: Հենց առաջին նշանի մեկնաբանման մեջ հեղինակը թույլ է տալիս սկզբունքային սխալ՝ համարելով, որ այդ հիերոգլիֆի շրջմամբ և սեպի վերածմամբ ստեղծվել է սեպագրի «տարի» նշանը: Նման մեկնությունը խիստ անհամոզի է, քանի որ ուրարտական մեհենագրերից չէին կարող առաջանալ քիչանական սեպագրերը: Վերջիններս փոխառվել են Միջագետքից, որտեղ դրանք վկայված են Ք.ա. III հազարամյակում և առաջացել են շումերական հիերոգլիֆներից⁵³: Նույն վրիպումը կրկնվում է արձանագրության մեկ այլ հիերոգլիֆ

⁵⁰ Calmeyer, 1979, էջ 183–193; Калмашейер, 1983, էջ 179–189:

⁵¹ Дьяконов, 1983, էջ 194: Կցագրի մեկնաբանումը՝ «ընդունված է պալատ», ավանդուրդին կրում է Ա. Ա. Այամանի վերձանության փորձի ազդեցությունը (տե՛ս ստորև), թեպետ հեղինակն այն չի վկայակոչում:

⁵² Барсегян, 1961, էջ 238–244:

⁵³ Հանրահայտ է, որ սեպագրերը ստեղծվել են Միջագետքում (դրանց ծնունդը պայմանավորված էր կամի՝ հիմնական գրամուտք լինելով) և այնտեղից տարածվել Առաջավոր Ասիայի շատ երկրներում: Որպեսզի հիմնական գրամուտք լինելով և այնտեղից տարածվել Միջագետքում, սեպագրերը պետք է որ այդ հիերոգլիֆներից նախատեսական հիերոգլիֆներից ստեղծվեն բնական սեպակալաները, սխալ է որ այդ հիերոգլիֆներից

Ֆի կապակցությամբ: Մյուս նշանների վերաբերյալ, հիմնականում էլ նկելով դրանց արտաքին տեսքից, հեղինակն անում է մի շարք դիտողություններ: «Լերքին հաշվով, այս արձանագրության վերձանությունը չի կարող ճիշտ լինել, քանի որ Բ. Բ. Պիտոբովսկու կողմից այն հրատարակվել է գլխիվայր (նկ. 29)... Այդ մասին արդեն խոսել ենք մեր կատարած բնագրային ուսումնասիրությունը ներկայացնելիս:

II-բ) Ա. Ա. «Այմանը, որը մինչ այդ հայտնի էր շումերական հիերոգլիֆիկայի վերձանման ապարեղգում ունեցած մի շարք հաջող աշխատանքներով, փորձել է վերձանել մակ նշան, ինչը, ըստ հեղինակի, կարող էր բանալի դառնալ ու՞ք արձանագրությունների (որոնցից յոթը տարողության չափի նշումներ են) ընթերցման համար⁵⁴: Այն մեզ արդեն ծանոթ կցագիր-հիերոգլիֆի վերին բաղադրիչն է՝ ծառի (ճյուղի) կամ նիզակի գծապատկերը: Հեղինակի կարծիքով, տվյալ հիերոգլիֆը, հասկի և դեպի վեր ուղղված նիզակի գծապատկերները նշանակել են սեպագրի *ištinu* բառը՝ տարբեր հոլովածներում («նրանում», «այնտեղ», «համար», «այնտեղից») նշանակություններով: Նման մոտեցումը, մեր կարծիքով, լիովին անհիմն է, քանի որ կցագրի վերին բաղադրիչները Վանի թագավորության արվեստի հուշարձաններում բազմիցս հանդիպող կենաց ծառի կամ Խալդիին խորհրդանշող նիզակի⁵⁵ գծապատկերներն են և պարզեցված տարրերակներում (նաև Ա. Ա. «Այմանի» բերած օրինակներում) չեն վերածվում հասկի տեսք ունեցող հիերոգլիֆի: Իր հերթին հասկի տեսք ունեցող նշանը հանդիպում է կավե ամանների վրա և կարող էր ցույց տալ այդ ամանների նախատեսված լինելը հացահատիկ կամ նրանից պատրաստված որևէ մթերք (ասենք՝ գարեջուր) պահելու համար, այլ կերպ ասած՝ հասկատեսք հիերոգլիֆը պետք է նշանակած լիներ հացահատիկի որևէ տեսակ կամ նրանից ստացվող մթերք: Մեր կարծիքը հիմնավորվում է նաև Կարմիր բլուրի բրոնզե թասի հիշյալ յոթանիշ արձանագրության (նկ. 29) ճշգրտումով, որտեղ նույն բնագրում ասկա են փայլատակող նիզակի տեսքով մեհենագիրը և հասկատեսք նշանը՝ յուրաքանչյուրն իր նշանակությամբ:

Բացի բանալի հանդիսացող այդ նշանի անհաջող վերձանությունից, հեղինակը փորձում է մեկնարանել իր քննած բնագրերում հանդիպող ևս ու՞ք նշան: Առաջինը կցագիր-հիերոգլիֆի ստորին բաղադրիչն է՝ աշտարականման նշանը, որը մեկնարանում է իբրև «ամրոց, պալատ» և հնարավոր համարում դրանույնացումը սեպագրերի *É.GAL*-ի հետ: Մեզ քիչ հավանական է թվում «ամրոց, պալատ» թարգմանությունը, բայց միանգամայն հնարավոր ենք համարում հիերոգլիֆի համադրումը սեպագրերի *É.GAL*-ի հետ, միայն թե ավելի լայն՝ «մեծ տուն, մեծ շինություն» իմաստով: Հաջորդ չորս նշանները տարողու-

Ք.ա. IV հազարամյակում կիրառված Հայրական լանաշխարհում և փոխառված միջագետցյանից կողմից. Ք.ա. III հազարամյակում վերածված սեպականների, որից հետո միայն այդ տեսքով մուտք գործվեց Վանի թագավորություն: Նման նշանայք L. Ա. Չարոնյանը ցույց չի տալիս:

⁵⁴ Baddeley, 1978, էջ 100-103:

⁵⁵ Հենն, Riemschneider, 1966, էջ 46-48; Calmeyer, 1979, էջ 183-193; Kamašev, 1983, էջ 179-189:

նախկինում չէին ընկալվել և ընթերցվել որպես այդպիսիք: Մեր վերձանությունը կենրկայացնենք հաջորդ ենթաբաժնում:

II-դ) Վերձանության առաջին փուլի մասին մեր ընթերցած զեկուցումներից հետո սնպագրագետ Հ. Հ. Կարաչոզյանը մեզ հայտնեց, որ տարիներ առաջ նրան հաջողվել է գտնել վերձանման մի բանալի, որը մնացել է անտիպ մեկ նշանի չպարզարանման պատճառով: Այն, որպես առանձին գլուխ լույս տեսավ հեղինակի 1998 թ. հրատարակած մենագրության էջերում:

Ուշագրավ դիտարկումներ պարունակելով հանդերձ, վերձանության այս փորձն ամբողջության մեջ անհաջող է: Դրա ակներև վկայություններից է Կարմիր բլուրի բրոզե թասերից մեկի (մեր կազմած դիվանում՝ KB-177) յոթանիշ արձանագրության ընթերցումը՝ «Արգիշթե Սարգուրիխե», որի հիման վրա հեղինակը փորձել է Վանի արքայացանկում վերականգնել մինչ այդ անհայտ Արգիշթե Գ (Ջ.ա. 625–620 թթ.) անունով մի թագավորի, այն դեպքում, երբ ժամանակին Բ. Բ. Պիտտորովսկու կողմից, ինչպես վերը նշեցինք, այդ արձանագրությունը հրատարակվել է գլխիվայր՝ 180 աստիճան շրջված⁵⁹⁶: Որոշ դեպքերում հեղինակն իր ընթերցումները կատարում է աջից ձախ, որոշ դեպքերում՝ հակառակը. այսինքն՝ ճշգրտված չէ գրության ուղղությունը⁵⁹⁷:

II-ե) 1997 թ. հոկտեմբերին մեր «Վանի թագավորության (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) մեհենագրություն» աշխատանքն իբրև առենախտություն ներկայացվեց պաշտպանության: Աշխատանքի բնագրումների ժամանակ Ս. Գ. Հմայակյանը առաջարկեց մեր ընթերցած երեք վանկազիր անունների վերձանության մեկ այլ տարբերակ: Մեր խնդրանքով նա գրավոր տրամադրեց իր տեսակետը՝ արտոնելով այն հրատարակել մեր աշխատանքներում: Քանի որ Ս. Գ. Հմայակյանի վերձանության փորձը բխում է մեր առաջադրած սկզբունքներից, ապա այն և մեր կարծիքն այդ առաջարկի մասին կենրկայացնենք «Հատուկ անունները՝ վանկային գրությամբ» ենթաբաժնից հետո:

II-զ) 2005–2008 թվականներին ժայռապատկերների և հրատարակեց Սարգիս Պետրոսյան մեհենագրերի վերձանության փորձը հրատարակեց Սարգիս Պետրոսյանը, որն ամփոփելով ու լրացնելով դրանք 2008 թ. ներկայացրեց մեկ րոպյանը, որն ամփոփելով ու լրացնելով դրանք 2008 թ. ներկայացրեց մեկ րոպյանը, որն էլ մենք կհղենք⁵⁹⁸: Ժայռապատկերների «ընթերցման» առթիվ արգրքով, որն էլ մենք կհղենք⁵⁹⁹: Ժայռապատկերների «ընթերցման» առթիվ արգրքով, որն էլ մենք կհղենք⁵⁹⁹: Ժայռապատկերների «ընթերցման» առթիվ արգրքով, որն էլ մենք կհղենք⁵⁹⁹:

Ս. Պետրոսյանը նախ հատուկ կանգ է առնում Բուդինի հավաքածուի թիթեղի պատկերների մեկնաբանման խնդրի վրա: Նրա կարծիքով գահին նստած է Արևատավածը (Šivini), որը եղել է Վանի թագավորության սկզբնական գերագույն աստվածը, իսկ նրա դիմաց՝ Թեյշեբան (Teišeba, երկրորդ գեղարվեստական աստվածը) և Մարդիցուին (Uarubaini), որոնք, ըստ հեղինակի, կա-

⁵⁹⁶ Ծանոթություն ան՝ Մոմֆիսյան, 1998, էջ 13–14, նկ 1; Մոմֆիսյան, 2003 (b), էջ 60–61, նկ 29:

⁵⁹⁷ Կարաչոզյան, 1998, էջ 51–75:

⁵⁹⁸ Պետրոսյան, 2008: Գրքին նախորդած հոդվածներն ստղեն վկայություն էլք վերջ՝ հարցն պատմագրությանը նվիրված բաժնում:

մեկ են «վաղուրարտական դիցարանի գերագույն եռյակը»⁵⁶¹: Մեկնաբանության այս տարբերակը, որը նման է Ա. Ա. Վայմանի վերը հիշված առաջարկին, համոզիչ չէ, քանի որ համոզիչ չէ հենց «վաղուրարտական դիցարանի գերագույն եռյակի» նման վերականգնումը (որքան մեզ հայտնի է, հեղինակից բացի, ոչ մի ուսումնասիրող այն դեռևս չի ընդունել): Ս. Պետրոսյանը թնայեցայի խորհրդանիշ է համարում աչքի տեսք ունեցող մեծ նշանը («կայծակն աչք»), իսկ որպես Մայր դիցուհու անվան ընթերցում առաջարկում է ընթերցել նրա գլխավերևի երկու նշանները՝ հետևյալ կերպ: Առաջին նշանը հեղինակը նմանեցնում է Հր. Աճառյանի նշանագրերի ցանկի 358-րդ նշանին՝ «պարկեշտ» իմաստով, համարելով դիցուհու մակդիրը (հմմտ. Անահիտ դիցուհու «անրիժ, անարատ» մակդիրները): Երկրորդ նշանը հեղինակը համարում է լուսնի մահիկի պատկեր, որը պետք է ընթերցել «ամ», սակայն քանի որ այն շրջված է դեպի ներքև, առաջարկում է վերծանել «մա»⁵⁶²: Յավոք, այս դեպքում էլ ունենք համոզականության մեծ պակաս, քանի որ «պարկեշտ» նշանագիրը չափազանց հեռավոր նմանություն ունի թիթեղին պատկերված նշանի հետ, իսկ երկրորդ նշանը, պարզապես, լուսնի մահիկի պատկեր չէ:

Թիթեղին պատկերված կանգնած մյուս երկու կերպաներին Ս. Պետրոսյանը համարում է արքայազն Մենուա (ընդունելով մեր վերծանությունը) և Իշպուխի արքա: Իշպուխիի դեպքում ևս կան բացատրության կարոտ հարցեր: Ինչո՞ւ է արքայազն Մենուան պատկերվում աստվածային հազուստով, իսկ արքա Իշպուխին՝ սպիտակ թիկնոցով, ի՞նչ է նշանակում ենթադրյալ Իշպուխիի ձեռքի սալիկը... Վերջինիս գլխավերևում հեղինակն առաջարկում է ընթերցել «Ար-ամ-ազն Իսպ-ո-ին / *Էսպ-ո-ին»⁵⁶³:

Այստեղ ևս գործ ունենք նշանների արտաքին տեսքի մոտավոր նմանեցումների հետ, ինչի հիմամբ չի կարելի վերծանություն կատարել: Օրինակ՝ վերջին անձի գլխավերևի առաջին տողի առաջին նշանը համարվում է «արև», մինչդեռ հենց այս թիթեղի վրա «արև» նշանը առկա է երկու անգամ և նույն տեսքով՝ փոքրիկ կետաշրջանակ՝ մեծ շրջանակի ներսում (Մենուա անվան վերջին նշանը և արևի թևավոր սկավառակի կենտրոնում): Վերջին անձի գլխավերևի նշանը միայն մեկ մեծ շրջանակ է՝ ելուստներով, որոնք ալիքի շատ ճանկեր են հիշեցնում, ուստի չի կարելի այդ նշանը մեկնաբանել «արև»: Կամ, եթե դպիրը ցանկացել է գրել արքայի տոհմանունը՝ «Ար-ամ-ազն», դա կարող էր անել մեկ տողում, ոչ թե վերջին «ազն» մասնիկը տաներ հաջորդ տող, մասնավորապես որ առաջին տողում երրորդ նշանի համար բավականին տեղ կար (հասկապես, եթե նկատի ունենանք, որ Վանի թագավորության դպրության մեջ ընդունված չէր տողադարձումը): Ի վերջո, համոզիչ չէ նաև թիթեղի վերին տեղում արևի թևավոր սկավառակից հետո «զա-վառ Վի-այ-նա» (= «երկիր Բի-

⁵⁶¹ Պետրոսյան, 2008, էջ 33-43:

⁵⁶² Պետրոսյան, 2008, էջ 40-43:

⁵⁶³ Պետրոսյան, 2008, էջ 55-59:

այնա»՝ ընթերցումը (արևի թևավոր սկավառակի հետ՝ «Արևաստոծ զավառ (երկիր) «Վիայնա»»⁵⁶⁴;

Նույնպիսի մոտեցումով է Ս. Պետրոսյանն առաջարկում վերծանել Գյումրուց գտնված ուրարտական դարաշրջանի գոտու քեկորի նշանները՝ ընթերցելով դրանք՝ «Սինամ հավ(ք)»⁵⁶⁵...

II-է) 2009 թվականին Բուդինի հավաքածուի թիթեղի վերծանության նոր փորձ հրատարակեց Գագիկ Մարտոյանը, որում հեղինակը փորձում է թիթեղի առանձին գրությունները հնագույն հայերենով վերծանել իբրև միասնական առանձին հացարույսի աստուծուն ուղղված աղոթք-ավետիս⁵⁶⁶։ Հեղինակի վերծանած աղոթք-ավետիսը հնչում է այսպես՝ «Արուս խուրակնիան՝ զմե/իզ էւգնականան։ Աւետիս ի/շխաններին, չորքոտանիներին, շինականներին, Աստվածներին]։ Եղիշա (՝)»։

Ցավոք, պետք է նշել, որ վերծանության այս փորձը լիովին անհաջող է։ Հեղինակը նույնական մոտեցում չի ցուցաբերում վերծանության ընթացքում, ինչև ականակելի պետք է լիներ նույն գրահամակարգի պարագայում։ Օրինակ, այցի տեսք ունեցող մեհենագիրը, որը Գ. Մարտոյանը նույնացնում է Հր. Աճառյանի նշանագրերի ցանկի 450-րդ նշանին՝ «օգնական» իմաստով (որի նույնությունը թիթեղի նշանի հետ խիստ կասկածելի է), չափի մեծության պատճառով ընթերցում է ամբողջությամբ, այլ ոչ թե միայն սկզբնականը, ինչպես մյուս նշանների պարագայում։ Այդ դեպքում անհասկանալի է, թե ինչու չի ամբողջությունը ընթերցվում առաջին նշանը (արևի թևավոր սկավառակը), որը չափերով ամենամեծն է թիթեղի վրա։ Ավելին, հեղինակը չի նկատում անգամ, որ այդ նույն նշանը՝ անկուռածև օժանդակ նշանով (որն ըստ հեղինակի՝ բառի ամբողջական հնչումը ցույց տվող նշան է) առկա է առաջին տողում (աջից չորրորդում է դը), որը նա վերծանում է «ակն» (աչք). այսինքն՝ միևնույն նշանը վերծանվում է մի դեպքում՝ «ակն», մյուս դեպքում՝ «օգնական»... Կամ անհասկանալի է, թե մի դեպքում թիթեղի գրության հեղինակը «Արուս(յակ)ն» գրելու համար օգտագործել է երկու բարդ նշան, երբ կարելի էր դա անել հատուկ այդ իմաստն ունեցող մեկ պարզ՝ «Արուսյակ» նշանագրով (Հր. Աճառյանի նշանագրերի ցանկ, № 104 մեկ 191)։ Կամ ինչու ակրոֆոնիայի սկզբուների կիրառման մյուս դեպքերում ընթերցվում է տվյալ բառի միայն առաջին վանկը, իսկ Aueitini («բուրմ») բառի դեպքում՝ ամբողջ բառն՝ առանց վերջին վանկի («Aueiti»). հասկանալի է՝ որպեսզի արդյունքում ստանա «աւետիս» բառը, մի բան, որ արհեստական ու քոնազրոսիկ է և չի կարող գիտական քննության դիմանալ։ Ի վերջո, որևէ քոնազրոսիկ մեջ չի տեղավորվում ավետիսի հասցեագրման հերթակատարամարանության մեջ չի տեղավորվում ավետիսի հասցեագրման հերթակատարությունը՝ «իշխաններին, չորքոտանիներին, շինականներին, Աստվածներին»։

⁵⁶⁴ Պետրոսյան, 2008, էջ 44-55:

⁵⁶⁵ Պետրոսյան, 2008, էջ 93-100:

⁵⁶⁶ Մարտոյան, 2009, էջ 138-150:

միթոս՝ աստվածները կարող էին գրավել վերջին դիրքը՝ իշխաններից, շինականներից, և, անգամ, չորրորդանիներից հետո...

2. Մեր վերածանությունը: Ինչպես նշվեց, վերածանության ուղղությամբ մեր աշխատանքը կատարվել է երկու փուլով: Առաջինը՝ 1995 թ. վերջին, որի մասին մի շարք զեկուցումներով հանդես ենք եկել Երևանում և Մոսկվայում, հրատարակել մի քանի հոդված և զեկուցման թեզիս, իսկ երկրորդը՝ 1997 թ. զարևանը, երբ ավարտել էինք Վանի թագավորության մեհենազիր արձանագրությունների դիվանը (կորպուսը) և կազմում էինք նշանացանկ, որում արտահայտված է հիերոգլիֆների կիրառման հաճախականությունը: Ստորև մեր կատարած աշխատանքի փուլերը կներկայացնենք առանձին-առանձին և վերջում կամփոփենք ստացված արդյունքները:

Փուլ առաջին:

ա) Հատուկ անունները՝ վանկային գրությամբ: Ինչպես ասվեց վերը, անհայտ գրերի ու լեզուների վերածանության գործում մեծ նշանակություն ունի հատուկ անունների ընթերցումը: Այս առումով խիստ կարևորվում են երկու բրոնզե թիթեղները, որոնց վրա պատկերված անձանց գլխավերևներում հիերոգլիֆներով նշված են նրանց անունները: Երկու թիթեղներն էլ գտնվել են Վանա լճի ավազանից: Առաջինը ներկայումս պահվում է ժևելում՝ Բուդինի հավաքածուում (նկ. 36), իսկ երկրորդը՝ Վանի թանգարանում (նկ. 37):

Բուդինի հավաքածուի թիթեղին (WAn-1) պատկերված է ցույի մեջքին տեղավորված գահին բազմած Թեյշերան⁵⁶⁷ թիայնական դիցարանի երկրորդ աստվածը (Խաղիից հետո): Նրա դիմաց կանգնած են չորս անձինք, որոնցից երեքը կրում են աստվածային հագուստ, իսկ վերջինը՝ հասարակ թիկնոց, և ամեն մեկի գլխավերևում, ըստ երևույթին, հիերոգլիֆներով գրված է նրա անունը: Անուններից զատ, աստծո դիմաց մեկուսի պատկերված է մի նշան: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ չորս կանգնածներից երրորդն իր չափերով ամենափոքրն է, և, չնայած դրան, կանգնած է չորրորդից առաջ, որն իր հերթին փոքր է առաջին երկուսից և կրում է նրանցիկից տարբեր հագուստ: Առաջին կանգնածի անունը՝ գրված ամենավերևում, սկսվում է մյուս նշաններից չափերով մեծ արևի թևավոր սկավառակի պատկեր-գաղափարանշանով: Թիթեղի վրա պատկերված է ընդամենը 18 հիերոգլիֆ:

Երկրորդի վրա պատկերված է առյուծին կանգնած Խաղիի աստվածը, իսկ նրա դիմաց՝ ուղ երկարերտող⁵⁶⁸ ծնկած կին (դիցուհի): Դիցուհու՝ Խաղիին ար-

⁵⁶⁷ Վանի թագավորության ղեկավարի գլխավոր աստվածների ու նեն իրենց հատուկ պատկերազարդությունը: Թեյշերան պատկերվում է հիմնականում ցույի վրա (Հնարարյան, 1990, էջ 41-42), որից հասկանալի էր զատում նրա ինքնուրույնը, և կարիք չկար ցույցուցի (սեպագրով կամ հիերոգլիֆներով) Լեզու անունը: զատում նրա ինքնուրույնը, և կարիք չկար ցույցուցի (սեպագրով կամ հիերոգլիֆներով) Լեզու անունը: Թ. Բարնեթի կարծիքը, թե գահին բազմած է Խաղիին (Barnett, 1974, էջ 44), չի կարելի հիմնավոր մ. Գ. Բարնեթի կարծիքը, թե գահին բազմած է Խաղիին (Barnett, 1974, էջ 44), չի կարելի հիմնավոր համարել: Երկրորդ թիթեղի պատկերված է գերագույն աստված Խաղիին, քանի որ վերջինս թիայնական սարխառում էրկայանում է ապուծի վրա կանգնած (Հնարարյան, 1990, էջ 35):

⁵⁶⁸ Ուղի երկարերտող Լույսայան վկայում է, որ ապուծի վրա կանգնած աստվածը Խաղիին է, քանի որ Մեծի Դտան սրճանագրության համանունի (Mehmanyan, 1960, էջ 143-149; Կարապետյան, 1981,

Թեյշեբայի առաջ կանգնածները չեն պատկանում միևնույն դասին, ինչն ակնհայտ է նրանց չտիրից և հագուստից: Առաջին երեքը պատկանում են մեկ չորրորդը՝ այլ, ավելի ցածր դասի: Չորրորդի ձևերին պատկերված է աղյուս կամ մագաղաթ (համեմայնդեպս գրի հետ կապված իր), իսկ առաջինի գլխին կա թագ: Աստվածներից բացի աստվածային հանդերձանքով կարող էր պատկերվել նաև արքայական քնտանիքը (որը խորհրդանիշն էր թագավորական իշխանության երկնային ծագման հավատամքի): Ուստի ամենահավանական տարբերակը վերոնշյալ բոլոր պարագաներում այն է, որ Թեյշեբայի առաջ կանգնած առաջին երեքը արքայական քնտանիքի ներկայացուցիչներ են (թագավոր, թագուհի և արքայազն), իսկ վերջում կանգնածը՝ քառորդաստիճան պաշտոնյա, թերևս՝ քույր (քրմապետ), աստվածների պաշտամունքի ու գրի հետ գործ ունեցող: Նման մեկնաբանման դեպքում միանգամայն հասկանալի են դառնում և՛ առաջին կանգնածի թագ կրելը, և՛ թագավորի անունից առաջ արևի աստծո նշանի առկայությունը: Արևը համարվում էր թագավորական տան հովանավորը. մայրաքաղաք Տուշպան Վանի թագավորության արևի աստծո պաշտամունքի գլխավոր կենտրոնն էր³⁷⁶: Այստեղ արևը խորհրդանշում է արքայական իշխանությունը և կարող է նշանակել նաև «արև-արքա» կամ համարժեք մի տիտղոս (հմմտ. խեթական արքաների «արևային» տիտղոսն ու նման այլ դեպքեր): Բացատրելի է դառնում նաև երրորդ և չորրորդ անձերի դասավորությունը. երրորդը լինելով մանուկ արքայազն՝ պետք է աստծո դիմաց ավելի առաջ կանգներ, քան ենթադրյալ քույրը, որի ցածր լինելը թագավորից ու թագուհուց ընդգծում է նրանց դասային տարբերությունը:

Ի դեպ, Հայաստանում գտնված այլ դարաշրջանի, բայց բնույթով նման մի քանդակապատկերում զոհասեղան-պատվանդանին դրված ցլի գլխի առջև կանգնած են երկրպագող արքան, թագուհին և նրանց վեց երեխաները³⁷⁷: Հատկանշական է քանդակապատկերի և մեր առաջին թիթեղի տեսարանների նմանությունն ու բովանդակային ընդհանրությունը (երկու դեպքում էլ արքայական քնտանիքը երկրպագում է ցուլ-աստվածությանը):

Արդ, ինչ տվեց առաջին թիթեղի տեսարանի պարզարևումը խնդրի լուծմանը: Մենք ունեցանք թագավորի և արքայազնի (որն սպազա թագավոր է), այսինքն՝ իրար հաջորդած հայր ու որդի արքաների անուններ՝ գրված հիերո-

Ճանդարանագուց ինտո՝ ես ներկայացրեց իր տեսակետը WAs-1 թիթեղի մեկնաբանության վերաբերյալ, ըստ որի՝ գահին բազմածը իսպրի աստվածն է, նրա դիմաց կանգնած են Թեյշեբան, Եփլեմին, իսկ վերջում՝ արքան: Նման մեկնաբանումը Ա. Ա. Ասլանյանը հիմնավորում էր նրանով, որ իր «Վանի թագավորության պատմիկապատկերային մեջ նշյուրավոր թագով պատկերվում են միայն հույերի և թագավորության պատմիկապատկերային մեջ նշյուրավոր թագով պատկերվում են միայն հույերի և Թեյշեբան: Այս տեսակետը չի դիմանում քննադատության, քանի որ նշյուրավոր թագը ոչ միայն նշված թիթեղի աստվածների մեկնաբանող չէ, այլև հանդես է գալիս գահից մաս կտրող դիցարանական տարրեր երկու աստվածների մեկնաբանում: Եվ ի վերջո, նման մեկնաբանությանը հետագայում չ'ընթերցվել երկրպագողների անունները (ինչը խտրաբանում էր նեցե տեսակետի հերքմանը):

³⁷⁶ Հենտ. Հմայակյան, 1990, էջ 46:

³⁷⁷ Ա. Ա. Ասլանյան, 1941, էջ 69-71: Այս քանդակի սպառի թագը կրելը նման է Աքեմենյան դարաշրջանի Հայաստանի ստադավոր Օրոնտես-երիտողի ու Տիֆլիզի խուրբող պատկերված նրանց դրամներին (ՀժԳ, 1971, ստադավոր Օրոնտես-երիտողի ու Տիֆլիզի խուրբող պատկերված նրանց դրամներին (ՀժԳ, 1971, էջ 453-454), և չի բացառում, որ քանդակապատկերը ստեղծված լինի Ք.ա. VI-IV դարերում (նրե, ինչպե՛ս, այն նոր ժամանակների կեղծիք չէ):

գլխիներով, որոնցից առաջինը հնգավանկ է, երկրորդը՝ եռավանկ: Մեզ հայտնի են Վանի թագավորության բոլոր արքաների անուններն ըստ հերթականության, ընդ որում, յուրաքանչյուրը՝ վանկային փոխանցման մի քանի տարբերակներով: Թագուհու և չորրորդ անձի անունները վերծանման նախնական այս փուլում օգտակար չեն կարող լինել, քանի որ մեզ հայտնի չեն քիչանական թագուհիների ու քրմերի (քրմապետերի) անունները: Մեր խնդրի պահանջն է դառնում գտնել հայր ու որդի արքաների հնգավանկ և եռավանկ անունները, ընդ որում, որդի արքայի անվան երկրորդ վանկը պետք է համընկնի մյուս թիթեղի վրա նշված անվան երկրորդ վանկին: Սա՝ առաջին խնդիրը:

Մի փոքր կանգ առնենք Վանի թիթեղի վրա: Նախ պարզենք, թե ով էր պատկերված Խաղդիի առաջ՝ դիցուհի⁵⁷⁸, թե՞ թագուհի (ինչպես առաջին թիթեղում էր): Եթե պատկերված է թագուհի (իսկ այլ կարգի մահկանացուն հազիվ թե պատկերվեր Խաղդիի առաջ), ապա նա պետք է լիներ միայն իր ամուսին-թե արքայի հետ և նրանից հետո: Մենիշխան թագուհի Վանի թագավորությունից հայտնի չէ, նշանակում է՝ Խաղդիի դիմաց դիցուհի պետք է լինի: Բիայնական արվեստի հուշարձաններում այս տեսարանը հանդիպում է բազմիցս⁵⁷⁹: Ուշադրություն պետք է դարձնել նման տեսարաններում երկրպագող դիցուհու դիրքին. մի մասում դիցուհին կանգնած է, մյուսում՝ ծնկած: Վանի թագավորության դիցարանում աստվածներն ու աստվածուհիներն ըստ նշանակության բաժանվում են երեք խմբի⁵⁸⁰: Տրամարանորեն, ծնկած դիցուհիները (որոնց թվում նաև մեր թիթեղին պատկերվածը) պետք է պատկանեին վերջին խմբին: Այս հանգամանքը ևս վերջում կարող է դառնալ մեր եզրակացությունների իրավացիության առուգման միջոց:

Այս թիթեղի մեկնաբանմամբ մեր առջև ծառայում է երկրորդ խնդիրը. գտնել Վանի թագավորության դիցարանի այն աստվածուհուն, որի անունը կարող է զրվել քառավանկ, ընդ որում (սա էլ՝ երրորդ խնդիրը), դիցուհու անվան երկրորդ վանկը պետք է համընկներ որդի-արքայի անվան երկրորդ վանկին:

Վանի թագավորության դիցուհիները հիշատակվում են Մեծի Դոան արձանագրության մեջ: Դիցուհիների թիվը 35 է, բայց նրանք կրում են 16 դիցաձանագրության մեջ: Դիցուհիների թիվը 35 է, բայց նրանք կրում են 16 դիցաձանագրության մեջ: Դիցուհիները հիշվում են Այաինի (Աինի) անունով չորս և Ինուանի անվամբ տասնյոթ դիցուհիներ⁵⁸⁰: Գտնելու համար, թե նրանցից ում Ինուանի անվամբ տասնյոթ դիցուհիներով, քառավանկ գրությունում հիշվում են Ա-ru-ba-ni ցինք միայն քառավանկ գրությունում (Bar-si-i-a, A-di-i-a, A-a-i-ni և I-nu-a- (զրվում է նաև այլ տարբերակներով), Bar-si-i-a, A-di-i-a, A-a-i-ni և I-nu-a- (զրվում է նաև այլ տարբերակներով), Bar-si-i-a, A-di-i-a, A-a-i-ni և I-nu-a- (զրվում է նաև այլ տարբերակներով) անուններում կրկնվող վանկի համար ունեցանք ու: Դիցուհու և որդի-արքայի անուններում կրկնվող վանկի համար ունեցանք հինգ հնարավոր թեկնածու՝ ru, si, di, a, nu:

⁵⁷⁸ Տե՛ս օրինակ՝ KB-3, էջ 11, 18; Пашропцков, 1959, էջ 226; Ugarti, München, 1976, էջ 55, 64, 47, 49; Tašyurek, 1975, աղ. XXXVI-b; Tašyurek, 1978, 64, 1-5; Ugarti, Gené, 1982-83, էջ 172, 176 և այլն:

⁵⁷⁹ Հնայնական, 1990, էջ 26-27:

⁵⁸⁰ Նույն տեղում:

Մյուս կողմից հարկավոր է գտնել միմյանց հաջորդաձև երկու արքաների հնգավանկ և եռավանկ անունները: Մենք վերցրեցինք Բիայնիի-Ուրարտուի բոլոր հայր ու որդի արքաների անունները՝ գրության բոլոր հնարավոր տարբերակներով, և միակ դեպքը, որ բավարարեց մեր խնդրի պահանջներին, Իշ-պուինի (IS-pu-u-i-ni) և Մենուա (Me-nu-a) արքայանուններն էին³⁰¹:

Երրորդ խնդրի լուծման նպատակով դիցուհիների անուններից ստացված հինգ հավանական վանկերը համադրեցինք բոլոր արքայանունների երկրորդ վանկերի հետ³⁰² և այստեղ ևս ունեցանք համընկնող միայն մեկ տարբերակ, որդի-արքան՝ Մենուա, դիցուհին՝ Ինուանի: Ինուանի անվամբ հայտնի տասնյոթ դիցուհիները հիշվում են դիցարանի վերջում, ինչը ևս, իբրև մեր ստացած արդյունքների ստուգման միջոց (դիցուհու ծնկված լինելու հանգամանքը), մեկ անգամ ևս հավաստում է մեր եզրահանգումների իրավացիությունը:

Այսպիսով, առաջադրված երեք խնդիրների դեպքում էլ եղած բազմաթիվ հնարավոր տարբերակների քննությունից ստանում ենք միայն մեկ հնարավոր լուծում, ընդ որում, երեք խնդիրների միակ լուծումները համընկնում են միմյանց: Սա նշանակում է, որ քիայնական մեխենագրության ընթերցման առաջին քանակին գտնված է. արդյունքում ստացանք երեք հատուկ անվան (11 վանկանշանով, որոնցից մեկը կրկնվում է) և արքայական իշխանությունը խորհրդանշող մեկ գաղափարագրի վերձանություն:

Ս. Գ. Հնայակյանի վերծանության առաջարկը: *Ա. Մովսիսյանի վերծանության բանալին հետաքրքիր է, և այս ուղղությամբ աշխատանքը շարունակելու հետևակարներ է բացում: Ընդունելով ու բարձր գնահատելով ընթերցման և տեքստը հավանազու հեղինակի առաջարկված սկզբունքները, կարծում ենք, որ ընթերցման տարբերակների որոնմանը կարելի է շարունակել:*

Ինչպես հայտնի է, Թուրքիայում գտնված և վանադի հանված պաշտամունքային թիթեղների մեծ մասը ծագում են Հիրկանիսից (Գիլյանի) ոչ հեռու գտնվող տանադասարական արհեստանոցից, որը կործանվել է, թերևս, քիպանական պետականության գոյության վերջին շրջանում: Այսինքն, քիչ հավանական է, որ Ֆեևում պահվող թիթեղին պատկերված լինեն IX դարում թագավորած արքայական ընտանիքի անդամները: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ թերևս անխնայա՞տ չի լինի շարունակել վերաբուրքը և համապատասխանություն գտնել սակի ու զահակա-

³⁰¹ Մնացորդային մեք հնարավոր են վանկային գրանցման տարբեր ձևեր. շատ են հատկապես ծայրավորների կրկնության դեպքերը, որոնց նպատակը վերլուծականության պարզեցում չէ (ոչ կարող է լինել նախորդ վանկի ծայրավորը շեշտելու միտում կամ տողադարձի անբախտարեցիության պատճառով ազատ տարածությունը ցլնելու նմ): Մեր ընթերցած հատուկ անուններից գրված են սնայազերում ամենապահ տարածման ունեցող տարբերակներով (Mesrobian, 1960, էջ 415-447; Աբրահամ, 2001, էջ 447-492):

³⁰² Որպեսզի բացատրեք սխալվելու հնարավորությունը, համադրություններ կատարեցա՞նք հաշվի ենք առել ոչ միայն գրության հայտնի, այլև ոչ մի արձանագրությանը չկրթված, բայց ըստ քիպանական սնայազերության օրինաչափությունների՝ հնարավոր տարբերակները:

Նշվածներով հանդերձ, կարծում ենք, որ Ս. Գ. Հմայակյանի առաջարկած վերծանության տարրերակը արժանի է հատուկ ուշադրության:

բ) Մի քանի գաղափարագրերի մեկնություն: Որ արևի թևավոր սկավառակը «արև» նշանակելով ունեցել է նաև դրա հետ կապված «արբա» («արբայական իշխանություն») իմաստը, երևում է բազմաթիվ կնիքների առկայությունից, որոնց հատակի մակերեսի վերին և կենտրոնական մասում պատկերված է այդ նշանը³⁸³(նկ. 47): Վանի թագավորության պատմությունից հայտնի է, որ արբան տեղերում իշխանությունն իրականացնում էր մի շարք պաշտոնյաների միջոցով, որոնց մեջ կարևոր դեր էր խաղում «վնիթ ունեցող անձը»³⁸⁴: Թերևս արևի սկավառակով այդ կնիքներն են գործածվել արբայական իշխանության անունից որոշումներ, հրամաններ և այլ կարգի ակտեր հաստատելու համար:

Կնիքների վրա «արև–արբա» նշանից բացի հաճախ է հանդիպում նավակի կամ պատկած կիսալուսնի տեսքով հիերոգլիֆը, միշտ վերին մասում, մե’րթ իրրև երկրագագության առարկա, մե’րթ զանազան դիցաբանական, գերբնական էակների պատկերների վերևում (նկ. 52–54): Դա ենթադրել է տալիս, որ նշանն ունեցել է «աստված» (հասարակ գոյականի իմաստով) կամ «աստվածային, երկնային» նշանակությունը³⁸⁵:

«Աստված(ային, երկնային)» գաղափարագիրը կնիքներից և թասերից բացի հանդիպում է այլ իրերի վրա ևս³⁸⁶: Այդ նշանը գտնում ենք նաև WAu-1 թի-

³⁸³ Բիլզկիեի–Ուլաբուտում, Ալտրեստում և հարակից տարածքներում բնակվող ժամանակաշրջանում արևի թևավոր սկավառակի նշանի տարածվածության մասին տե՛ս Barnett, 1974, էջ 46–47 (և հղվող գրականությունը):

Ժամանակին ծանոթանալով մեր հոդվածներից մեկին՝ Գ. Խ. Մարգարե կարծիք հայտնեց, որ թևավոր սկավառակի պատկերը կառոյ է լինել ոչ թե գրական, այլ պարզապես արբայական իշխանության խորհրդանիշը (ինչպես որ, իբրև հնարավոր մի տարրերակ, մեկնված էր նաև հոգեվածում), ինչը, ըստ նրա, երևում է WAu-1 թիթերի վրա թագավորի և թագուհու գիտակերտում այդ նշանի հավանաբար տարածված լինելուց և անհամապատասխան խոշորությունից:

Ընդունելով նման մեկնության հնարավորությունը՝ մեր արձիկ հավանական ենք համարում, որ նշված խորհրդանիշը կրատակ է նաև որպես գրանշան, մասնավորապես, իբրև որոշարձիկ–գաղափարագիր (ցուցիչ, դեկորատիվ):

³⁸⁴ Առտոս, 1963, էջ 26, 33–35; հմմտ. ՀժՊ, 1971, էջ 346:

³⁸⁵ Նման տեսքով և իմաստով մոտ հիերոգլիֆների համընդուն են նաև այլ գրային համակարգերում: Նմանա–յուփայնվածում, օրինակ, Խոյանտեպ մի նշան ունի «եղևիկ» իմաստը (Laroche, 1960, էջ 96–97, Խեթա–յուփայնվածում, օրինակ, Խոյանտեպ մի նշան ունի «եղևիկ» իմաստը (Laroche, 1960, էջ 96–97, № 182; Առտոս, 1969, էջ 98; II Geroglifico Anatolico, 1998, էջ 49, 98): Ծանոթության նշան մի է կնիքագլիֆ (Labat, 1976, էջ 174–175, 178–179) նշանակում է «թա», «ծանախան», «պայուն», ընդ որում այդ նշանից է առաջացել նաև «արև» նշանակող սևազանգը (բնայնական և այլ կնիքագլիֆների համեմատությունը տե՛ս այդ 12):

³⁸⁶ Այդ գաղափարագրով և դիցաբանական էակների պատկերներով կնիքները, հավանաբար, գործածվել են տանտերներում տեղի աստվածության «թղթումները» հաստատելու համար: Այս ստույգ իմաստը իբրև Սարգոն Բ–ի խաղողագույն Մուսասիրի թաղանի մասին, դարևից ևս, ի թիվս այլոց, տարվ է «կնիքով Սարգոն Բ–ի խաղողագույն Մուսասիրի թաղանի մասին, որպեսզի նա, ի թիվս այլոց, տարվ է «կնիքով ուղև մաստակ» հաստատելու համար որոշումները Բազմաշտույ՝ խաղողի տիկնոջ» (Luckenbill, 1927, էջ 97; Առտոս, 1951, № 49 (367–405)):

Օրինակ՝ Կարմիր բլուրի բրոնզե կլամպեր կախի՞մ մի թևին, որի մյուս թևին ողբարև ատող է (ՔԵ–1, էջ 77), որը արձանիկների կրճիթն (Piotrovskii, 1967, էջ 24, աղ. 2–3, 12): Դեռև՞ք է կարծեք, որ նենց այս է նշանն է պատկերված որոշ լանդշապների վրա, ինչը, ըստ հավանա՞մի, թե՛նս ընկալվել է իբրև աստվածային նախախնամության նշան: Գր. Բազմաշտույն նաև, որ թանգարանների մի մասը ստանդարտակ է հատկապես «ստանդարտ» մոնետագլիֆ տեսքով (դրանցից մի քանիսը տե՛ս Մարտ, Jerusalem, 1991, էջ 108, 168–170):

թեղի վրա, ենթադրյալ քրմի գլխավերևի առաջին տողում (դա այն երկու նշաններից մեկն է, որոնք Ռ. Դ. Բարենթը թյուրիմացաբար կցել է թագուհու անվան սկզբին): Երկրորդ տողում, անկասկած, քրմի անունն է, իսկ ի՛նչ է գրված դրանից առաջ: Թագավորի անունից առաջ դրված է արքայական իշխանությունը խորհրդանշող արևի թևավոր սկավառակի պատկերը, որը բնորոշում է թագավորական ընտանիքին, ուստի քրմի անունից առաջ ակնկալելի է նրա դասային բնութագիրը: Երկրորդ նշանը մեզ ծանոթ «աստված(ային)» գաղտնիարագիրն է: Առաջին նշանի նմանակը մենք ունենք հայկական նշանագրերի ցանկերում (ընդ որում, նաև Երզնկայի խմբում), որի քաղադարությունն է «կտապաշտ»³⁸⁷: Քրիստոնեական միջավայրում «կտապաշտ» կարող էր կոչվել նախաքրիստոնեական կրոնը դավանող քուրմը: Ըստ այդմ, յորրորդ անձի անունից առաջ բնորոշումը կարելի է կարդալ «քուրմ (երկրպագող) աստծո», որը ճիշտ և ճիշտ համընկնում է պատկերի ընդհանուր համատեքստին³⁸⁸:

Վերադառնանք նախորդ վերծանություններին: Ինչպես նշվել էր, միայն արտաքին տեսքը կարող է խարուսիկ լինել, ուստի գաղափարագրերի իմաստը հասկանալու համար պետք է հաշվի առնել բոլոր հարակից տվյալները, մասնավորապես, տվյալ գրությունը կրող իրի նշանակությունը: Կարմիր բլուրի բրոնզե զրակիր թասերը, հասկանալի է, չեն եղել ասորյա գործածության առարկաներ, այլ նվիրաբերվել են աստվածներին ու նրանց պաշտամունքի տաճարներին: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ անդրադառնանք ծառի և աշտարակի պատկերներից կազմված կցագրին: Կցագրի վերին մասը կարելի է մեկնել երկու կերպ. այն պատկերում է ծառ (ճյուղ) կամ (Խալդիին խորհրդանշող) նիզակի պատկերն է (սուր ծայրն ուղղված վեր):

Ծառի կամ ճյուղի տեսք ունեցող նշանը բիսայնական արվեստում մեծ տարածում ունեցող կենաց ծառի գծապատկերն է, որը խորհրդանշել է կյանքն ու անմահությունը և եղել պաշտամունքի առարկա: Այն հիշեցնում է մի կողմից խնթա-լուվիական «կենաց ծառ» հիերոգլիֆը, մյուս կողմից՝ հայկական մատյանների «անթառամ» նշանագիրը (աղ. 12): Ուստի մեծ հավանականությամբ կարելի է եզրակացնել, որ բիսայնական մեծենագիրը նշանակել է «կենաց թյամբ կարելի է եզրակացնել, որ բիսայնական մեծենագիրը նշանակել է «կենաց թյամբ (անմահություն)»: Աշտարակի գծապատկեր ներկայացնող հիեմա, կյանք (անմահություն)»: Աշտարակի գծապատկեր ներկայացնող հիեմա, կյանք (անմահություն)»: Աշտարակի գծապատկեր ներկայացնող հիեմա, կյանք (անմահություն)»: Աշտարակի գծապատկեր ներկայացնող հիեմա, կյանք (անմահություն)»:

³⁸⁷ Աճառյան, 1984, հավելված-ցուցակ, № 224; Արտառայան, 1989, էջ 170:

³⁸⁸ ՀՊԳՄ ֆոնդերում աշտարակի մեր ուղարկությունը գրանցելուց՝ Կարմիր բլուրի չեղարանված էր կենտրոնից մեկը (2784-79, մեր գծվածում՝ KB-18), որի կողային մակերևույթի արտեղծված էր կենտրոնից մեկը երկրպագող ծառը, երկու կողմերում գծապատկեր կենցաղակերպ էին, իսկ մարդու և կենաց ծառի միջև վերևում կապված գաղափարագիրը: Կենտրոնի հատակին «քուրմ (երկրպագող)» միջև վերևում կապված էր «աստված» գաղափարագիրը: Այսպիսով կարելի էր մեկնել, որը կապվելու կարգին մակերևույթի ընդհանուր տեսարանին գաղափարագիրը կիցեղող մի նշան է, որը կապվելու կարգին մակերևույթի ընդհանուր տեսարանին կարող է հաստատել մեր կարծիքը:

³⁸⁹ Հենտ. Beissner, 1978, էջ 103:

թյան) տուն»՝ ընկալվելով իբրև «աստծո տուն», «տաճար»: Խերթա-լուվիական հիերոգլիֆիկայում, օրինակ, «տուն» գաղափարագրի վրա «աստված» նշանի ավելացմամբ ստեղծվում է «տաճար», իսկ «մեծ» նշանի հավելմամբ՝ «արքունիք» հիերոգլիֆը³⁹⁰: «Տաճար» կցագիրը Խաղթի խորհրդանիշ առյուծի գլխի հետ կարող է կարդացվել «Խաղթյան տաճար»: Սեպագիր և մեհենագիր նշանների փոխադարձ լրացումով թասերի մի մասի վրա կարելի է ստանալ հետևյալ բանաձևով նվիրատվական արձանագրություն՝ «(արքա) Սարդուրիի (նվիրաբերումը, ընծան) Խաղթյան տաճարին» կամ «Սարդուրիից՝ Խաղթյան տաճարին»:

Եթե կցագրի վերին մասը դիտարկենք իբրև Խաղթի խորհրդանիշ նիզակի պատկեր, ապա դրանից սկզբունքորեն շատ բան չի փոխվի: Այն կարող է մեկնաբանվել իբրև «Խաղթի տուն» կամ, լայն իմաստով, «աստծո տուն», որը կնշանակեր «Խաղթյան տաճար» կամ ուղղակի «տաճար» (ընդհանրապես):

Բացի պաշտամունքային նշանակության թասերից, այս կցագիրը էլիպսաձև շրջանակի մեջ հանդիպում է Թուփրաք կալեից, Կարմիր բլուրից, Արմավիրից, Հոռոմից³⁹¹ գտնված կավե ամանների վրա: Կենցաղային կիրառության իրերի վրա էլիպսի մեջ «(Խաղթյան) տաճար» նշանի դաջվածքը (որը թողնում է տար պատրաստման պահից սկսած այդ իրի նախատեսումը տաճարի համար, քանի որ պաշտամունքային սպասքը հարկ է, որ անցնեք սրբագործման հատուկ արարողություններով (մի երևույթ, որն ամկա է նաև մերօրյա ծեսերում):

Ինչպես Խաղթի խորհրդանիշ առյուծի պատկերն է հանդես գալիս իբրև նրա հիերոգլիֆ, այնպես էլ, մեր կարծիքով, ցլի գլուխը ցույց է տվել Թեյշեբա աստծուն կամ նրա գործառույթը (Ֆունկցիան): Նման եզրակացությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ ցլի գլուխ-հիերոգլիֆները հատկապես շատ են ռազմական հանդերձանքի մասերի վրա, ինչը կապվում է Թեյշեբայի՝ ամպրոպի, նաև ռազմի աստված լինելու հետ: Ուշագրավ է, որ շումերական ցլի գլուխ պատկերող հիերոգլիֆը և նրանից առաջացած սեպանշանը ունեցել են «հերոս» նշանակությունը³⁹²: Թեյշեբա-ցուլի հիերոգլիֆը հանդիպում է երկու տարբերակով, ընդ որում, երկրորդը՝ պարզեցվածը, «ցուլ» նշանակությամբ և նման տեսքով հանդիպում է մեր միջնադարյան մատյաններում³⁹³ (աղ. 12):

Այսքանով սահմանափակվում են վերծանության առաջին փուլում ստացված արդյունքները: Վերծանված վանկանշանների մեջ հանդիպում են *a*, *i*, *ni* վանկերը հաղորդող երկուական մեհենագրեր, ինչը չի հավաստում հիերոգլիֆիկայի սկզբունքներին³⁹⁴: Նույն վանկը կարող էր արտահայտվել տարբեր, քայց

³⁹⁰ Laroche, 1960, էջ 133-134, № 249, 250; Дуневская, 1969, էջ 100; II Geroglifico Anatolico, 1998, էջ 54, 103:

³⁹¹ Lehmann-Haupt, 1931, էջ 587; Baibian, 1978, էջ 101; Мартусов, 1974, էջ 124, 126, 130; նաև մեր դիվանի Horom-1-ը:

³⁹² Labat, 1976, էջ 208-209:

³⁹³ Անասյան, 1984, հավելված-ցուցակ, № 430; Արթուրյան, 1989, էջ 173:

³⁹⁴ Խերթա-լուվիական հիերոգլիֆիկայում, օրինակ, էջված նրևույթի ցուլերման մասին տես Laroche, 1960, էջ 265-268:

Մենեակզիր արձանագրությունների ժողովածուն կազմելիս նկատեցինք, որ բրոնզե թասերից մեկի (նկ. 48) երեք հիերոգլիֆներից առաջին երկուսը կրկնվում են Թուփրաք կալեից գտնված կնիքի վրա⁵⁹⁶ (նկ. 49): Թասը կրում է «Ru-sa-a-ni URU.TUR-gi «Ռուսայի քաղաք փոքր» սեպագիր արձանագրությունը և նվիրվել է հիշյալ քաղաքին⁵⁹⁷ (թերևս՝ հիմնադրման կապակցությամբ), որը գտնվել է Խոյի մոտ, ներկայումս հայտնի Բաստամ հնավայրի տեղում (1960-ականներից այն պեղել են գերմանացի հնագետները): Թուփրաք կալե հնավայրը (որտեղից գտնվել է կնիքը) Վանի թագավորության գլխավոր քաղաքներից Ռուսախինիլին է, որի անունը քառացի նշանակում է «Ռուսայի քաղաք»: Կնիքի կողային մակերեսին պատկերված է մեծ աշտարակ, ամրոց, անորոշ մի առարկա, գավազանով մարդ (թերևս՝ արքա) և երեք նշանով հիերոգլիֆ արձանագրություն: Վերջինս կրկնվում է նաև կնիքի հատակի մակերեսին: Երեք հիերոգլիֆներից առաջինն այսօր հայտնի ամենատարածված օժանդակ նշանն է, որը չի ընթերցվում առանձին: Մյուս երկու նշանները նույնա-նում են բրոնզե թասի արձանագրության առաջին երկու հիերոգլիֆների հետ: Թասի սեպագիր և հիերոգլիֆ արձանագրությունների համադրության դեպքում (ի դեպ երկուսն էլ կազմված են երեք բառերից) կնիքի և թասի կրկնվող նշանների համար կստանանք «Ռուսայի քաղաք» արտահայտությունը: Այսինքն՝ կնիքը կրում է այն քաղաքի (Ռուսախինիլի) անվանումը, որից գտնվել է հօգուտ մեծ քաղաքի կնիք լինելու են խոսում նաև վերջինիս կողային պատկերները և մետաղից պատրաստված լինելը: Նույն տրամաբանությամբ թասի երրորդ նշանը պետք է ունենա «փոքր» իմաստը: Թասի սեպագիր և հիերոգլիֆ արձանագրությունները նույնիմաստ են, թարգմանում են միմյանց՝ ցույց տալով տվյալ իրի նվիրաբերված լինելը «Ռուսայի փոքր քաղաքին»: Այսպիսով քահայտվեց առաջին բիլինգվան:

Վերծանության առաջին փուլում ընթերցված հատուկ անունները ունենի վանկային (հնչյունային) գրություն: Այս փուլում թասի և կնիքի արձանագրությունների վերծանումը մեր առաջ բացեց նոր պատկեր: Երկու դեպքում էլ Ռուսա անվան համար ստացանք մի հիերոգլիֆ, որը ձիու գլխի գծապատկերն է: Առաջին հայացքից սա անհասկանալի է թվում: Սակայն այդ տպավորությունը ցրելու է գալիս Ռուսայի անունը կրող մյուս հինգ թասերի զննումը, ինչի մասին խոսվել է այս գլխի սկզբում: Բանն այն է, որ, ի տարբերություն մյուսների, Ռուսայի թասերին պատկերվածը ոչ թե առյուծի, այլ ձիու գլուխ է (նկ. 31), և եթե առյուծի գլուխը դրվում է սեպագիր արձանագրության սկզբում (ցույց տալու դրանց նվիրաբերումը Խալդիի պաշտամունքին), սեպանշանների կազմած շրջանակի ոչ կենտրոնական մասում, ապա ձիու գլուխը միշտ հանդիպում է սեպաշրջանի կենտրոնում: Այս հանգամանքը ավելի համոզիչ է դարձնում մեր վերծանությունը և հաստատում Ռուսայի անվան՝ ձիու գլխի

⁵⁹⁶ Wardle, 1990, էջ 82-83:

⁵⁹⁷ КС-2, էջ 61, 63; Плинтоская, 1951, էջ 112, նկ. 8:

գերմ. Ross «ձի», անգլ.–սարս. hors «ձի», պարսկ. res(a) «հասնել», հուն. Ρόσος «արշավել, սուրբ», ռուս. рысак «վարգամի», рысать «վարգել»⁶⁰⁷:

Հ. Հ. Կարազոյզյանն առաջարկեց մի տեսակետ, ըստ որի՝ հին հայերենում ձին պետք է կոչված լինի «(h)որս» համադրելով այն անգլերենի horse «ձի» բառի հետ: Դրա հնարավոր վկայությունը, ըստ հեղինակի, կարելի է համարել Գողթան երգերից հայտնի «Եթե դու յորս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս...» հատվածը: «Հորս» բառը հեղինակն առաջարկում է թարգմանել «ձի»: Միաժամանակ Հ. Հ. Կարազոյզյանն առաջարկում է մի քանի հայերեն բառեր ևս մեկնաբանել՝ ելնելով նշված հնարավոր բացատրությունից⁶⁰⁸:

Եթե հաստատվի այդ տեսակետը⁶⁰⁷, կարելի է եզրակացնել, որ քննարկվող արքայանունը հնչել է «Հորս(ա)» և նշանակել «ձի, նծույգ»՝ կապված պացիկ և արևի պաշտամունքին նվիրված սրբազան կենդանու հետ: Հարցի նման լուծումը միանգամայն բացատրելի կարող է դարձնել նաև ասուրական և Վանի թագավորության սեպագիր արձանագրություններում արքայանվան բազմազան գրությունը, ինչն իսկապես կապվում է նշված սեպագիր համակարգերի անկատարության հետ: Դրանցում բացակայում էին «h» և «o» հնչյունները, որոնցից առաջինը սովորաբար քաց էր թողնվում կամ հաղորդվում «խ»-ով, իսկ երկրորդը, որպես օրինակաչություն, ներկայացվում էր «ու»-ով⁶⁰⁸:

Անկախ նշված տեսակետի հաստատումից, մեծ հավանականությամբ կարելի է ասել, որ քննարկվող անունը նշանակել է «ձի, նծույգ» և կապվել է արևի պաշտամունքի հետ առնչվող, ռազմական գործում առաջնային դեր ունեցող կենդանու հետ⁶⁰⁹, ինչում կարող էին արտահայտվել նաև տոտեմական պատկերացումները:

Վանի թագավորության կրոնի և արվեստի ուսումնասիրությունից մեզ հայտնի է, որ գլխավոր աստվածներն ունեին իրենց սրբազան կենդանիները, որոնց պատկերները, ինչպես վերը նշվեց, հիերոգլիֆիկայում խորհրդանշել են իրենց: Չին կամ ձիու գլուխը (արտահայտելով «մասը խորհրդանշում է ամբողջին» սկզբունքը) նույն կերպ կապվում էր արևի աստծո հետ (նիշերը արևին ձիեր նվիրաբերելու սովորույթը հին հայոց մեջ՝ ըստ Քսենոփոնի)⁶¹⁰:

Կարմիր բլուրից գտնված զրակիր թասերի հիմնական մասը կրում է Սարդուրիի անունը: Դրանց ճնշող մեծամասնությունն ունի առյուծի գլխի և աշ-

⁶⁰⁷ Նշված բառերի հետ կարող է առնչվել նաև հայերեն «լզոսան» բառը, որը Հր. Ամարյանը չի ստուգարանում (Ամարյան, 1977, էջ 136–137):

⁶⁰⁸ Կարազոյզյան, 1998, էջ 60–62:

⁶⁰⁹ Այս հարցում վերջնական խոսքը պատկանում է չեզվարանու քյանը: Տեսակետը կարող է վերջնականապես հաստատված ու քննուկնքի համարվել, եթե գույց սրվի, որ հեղինակության մասը չեզվի այն ամբողջ, որից առաջացել են դուստր լեզուների վերոնշյալ բառերը, նախազգից հայերենին անցման սրբուկում կարող է հնչել «(h)որս»:

⁶¹⁰ Մենք փորձեցինք ընդհանրական սեպագիր բոլոր արձանագրություններում «ուս» ֆունկցիան քննարկել «(h)որս» և որևէ հավաստություն չգտանք:

⁶¹¹ Չնքն քաջատում նաև, որ ձիու գլխի պատկերի սակ կարող էր թաղանթ լինել ոչ թե հնչյ «ձի, նծույգ» նշանակող, այլ վերջինին հետ իմաստով սերտորեն առնչվող որևէ բառ:

⁶¹² Քսենոփոն, Անաստասի, զիր IV, գլ. 5, 35 (Քսենոփոն, 1970, էջ 98; հմմտ. Մանանդյան, 1977, էջ 380; ՀԺԳԲ, 2007, էջ:

Ուղղակի կապ կարելի է տեսնել Սարգի դիցուհու անվան, գործառույթի (Ֆունկցիայի) և պատկերագրության միջև: Դիցանունը, ըստ երևույթին, բաժանելի է երկու մասի՝ Սար-դի⁶¹⁶, որի երկրորդ բաղադրիչը, ամենայն հավանականությամբ, հայերեն դի (< *dhes «աստված») բառն է (հմմտ. Խապ-դի, Արծիրի-դի(նի) և այլն): Առաջին մասը՝ սար, թերևս, ծագում է հնդեվրոպական *ker նախածնից, և ունի «գազաթ, քարձուևը, վերնամաս» նշանակությունը⁶¹⁷: «Քարձուևը(ներ)ի (գազաթների) աստված» նշանակությամբ դիցանունը կապվում է դիցուհու և՛ արծվատեսք պատկերագրությանը, և՛ երկնքի հետ առնչությանը, և՛ պատերազմական գործառույթին:

«Աստված» գաղափարագրով և արծվի պատկերով (որը երբեմն հանդես է գալիս օձի հետ մարտնչելիս կամ ճյուղը կտցած) բազմաթիվ կնիքներ են հայտնաբերվել մի շարք հնավայրերից (նկ. 52), որոնք կարող են կապվել թե՛ Սարգիի պաշտամունքի և թե՛ Սարգուրի անվան հետ: Սարգիի հետ կապվող կնիքներից հատկապես ուշագրավ է Կարմիր բլուրից հայտնաբերվածներից մեկը⁶¹⁸: Սարգիին (Ինաննա-Իշթարին) խորհրդանշող մոլորակը Լուսաբերն (Արուսյակ, Վեներա) է⁶¹⁹, որը հնագույն քնագրերում հայտնի է իբրև «աստղն արևածագի»⁶²⁰: Տվյալ կնիքի կողային մակերեսին ձախից պատկերված է արծվի գլուխ՝ վերևում «աստված» նշանով, իսկ կենտրոնում՝ ութաթև աստղ, որը հսկվում է աստվածայնության նշան կրող երկու առասպելական էակների կողմից: Հասակի մակերեսին պատկերված է արծիվ, որի դիմաց նույն հատողն է, իսկ գլխավերևում մի նշան՝ պատկած կիսալուսնի և նրանից վեր կետի (կամ շրջանակի) տեսքով: Վերջինս նույնությամբ հանդիպում է հայկական նշանագրերի ցանկերում՝ «աստվոտ» բացատրությամբ⁶²¹, որն աստղի հետ միասին ներկայացնում է Սարգիի քնորոշում-մակդիրը՝ «արևածագի աստղ»: Արծվի գլուխը, որը («մասը խորհրդանշում է ամբողջին» սկզբունքի համաձայն) Սար-

⁶¹⁶ Կա կարծիք, որ անվան մեջ պետք է առանձնացնել –արդի բաղադրիչը (հմմտ. Օմուսարդի, Մեթարդի, Արդի), որն ըստ Գ. Ա. Մելիքիչյանի (Մեթուսաուտ, 1954, էջ 36; հմմտ. Հնայական, 1990, էջ 37) կարող էր ունենալ «աստղ» նշանակությունը, իսկ Գ. Բ. Տախուկյանի կարծիքով այն ծագել է հնդեվրոպական *ar-, *r- ինիցից և նշանակել է «աստված» (Ջեյսոու, 1963, էջ 36, 1987, էջ 434): Մեզ քիչ հավանական է թվում Ս–արդի տարանջատումը: Կան նաև Սարդի անվան աստից մտնող աստղագրության աստղաբաններ: Մասնավորապես, Ա. Սեյթ և, նրան հետևելով, Գր. Դափանջյանը Սարդի դիցուհուն վերագրում են հնդեվրոպական ծագում, նրա անունը համարելով կոնիական Սարդի (արև) աստղի և մայրագարսի անունը, որը նշանակել է նաև «սարդի» և իրանական սարը («սարդի») բառից հետ (Soyse, 1882, էջ 487; Դափանջյան 1940, էջ 49): ՀՀ ԳԱԱ Մերևելագիտության ինստիտուտում մեր կարդացած գեղարվեստներից մեկի (6.05.1997) քննարկման ժամանակ Արմեն Պետրոսյանը կարծիք հայտնեց, որ դիցանունը կարող է կապվել հայերեն «գարդ» բառի հետ:

⁶¹⁷ Տախուկյան, 1987, էջ 54, 132, 258:

⁶¹⁸ ՀՊՊԸ 2784–147; մեր կրթագրում՝ KB–12 (նկ. 52 c):

⁶¹⁹ Խոսելով Սարդի-Իշթար համաարտասիանության մասին Բ. Բ. Պիտրոսյանին Սարդի մոլորակն է և համարում Լուսաբերը (Վեներան), իսկ խորհրդանշանը՝ ութաթև աստղը (ինչպեսզի որ Իշթարին է) է համարում է, որ նրա պաշտամունքի հետ է կապվում Կարմիր բլուրի պաշտամունք բրոնզի կնիքից, որի մի զտնուն է, որ նրա պաշտամունքի հետ է կապվում Կարմիր բլուրի պաշտամունք բրոնզի կնիքից, որի մի զտնուն է, որ նրա պաշտամունքի հետ է կապվում Կարմիր բլուրի պաշտամունքի պատկերով կիսալուսնի (Ուտրոբեռն, 1959, էջ 226):

⁶²⁰ ՀԱՊ, 1982, էջ 69:

⁶²¹ Անասյան, 1984, հավելված–ցուցակ, № 81; Աբրահամյան, 1989, էջ 168: Նշանի նախորդակները Հայկական լեռնաշխարհի արևի փայլ հուշարաններում տեսնվող Մարտիրոսյան 1993, էջ 18, սղ. II:

Հատուկ անունների գաղափարագրման մի ուշագրավ օրինակ է տալիս Կարմիր բլուրի կոթաբարանն կնիքներից մեկը⁶²⁶ (նկ. 56): Հատակի մակերեսի հիմնական մասը զբաղեցնում է ցլի պատկերը, որն, ինչպես ասվեց, Թեյշերայի խորհրդանիշն է: Պատկերից վերև կա երկու նշան, որոնցից մեկը հնգանկյուն է և գրեթե նույնությամբ կրկնում է խեթա-յուվիական հիերոգլիֆիկայի Թեշուր (նույնանուն է Թեյշերային) աստծո գաղափարագիրը⁶²⁷ (աղ. 12): Երկրորդը նման է «աստված» գաղափարանշանին՝ փոքր-ինչ թեքված դիրքով: Այս կնիքն իր գրությանը զուգահեռվում է Մարդի դիցուհուն առնչվող այն կնիքների հետ, որոնց վրա արձվատեսք պատկերի և «աստված» գաղափարանշանի կողքին առկա է ութաթև աստղը, ըստ երևույթին, իբրև այդ աստվածուհու խորհրդանիշ-պատկերագիր:

Վերադառնալով ձիու՝ արևի աստծո խորհրդանշանը լինելու հարցին, ավելացնենք, որ թևավոր ձիու պատկերը արևի թևավոր սկավառակի նման եղել է արքայական իշխանության սիմվոլը. դա ակնհայտ է նաև կավե սաղիկների վրա դրոշմված թագավորական կնիքների կենտրոնում թևավոր ձիու պատկերված լինելուց: Նշանների ուշագրավ մի խումբ (թվով 3 հատ) կարող է կապվել աստվածության գաղափարի հետ: Դրանցից առաջինը Բաստամի և Թոփրաք կալեի թագավորական կնիքների կողային մակերեսներին քազմիցս հանդիպող վեր ուղղված եռաժանին է, որը միշտ երկրպագության առարկա է: Ուշագրավ է, որ այդ տեսարաններում դեպի եռաժանին քայլում են առյուծը (Խաղդիի սրբազան կենդանին), ապա արքան, որի հետևից քայլում է նրա հովանոցը պահող սպասավորը: Եվ, որպես օրինաչափություն, նշված կնիքների հատակին պատկերված է լինում առյուծ (նկ. 57): Այդ ամենը թույլ է տալիս ենթադրելու, որ վեր ուղղված եռաժանին եղել է Խաղդիի խորհրդանիշներից. չի բացառվում, որ այդ նշանը հաղորդեր եռամիասնության գաղափար՝ Խաղդիին ներկայացնելով իբրև աստվածային գերագույն նշանի սկզբնավորող և հայր⁶²⁸:

Արդեն խտավ է այն մասին, որ վեր ուղղված նիզակի պատկերը եղել է Խաղդիի խորհրդանիշներից: Այդ հիերոգլիֆը՝ վերևում անկյունատեսք օժանդակ նշանով հանդիպում է Թոփրաք կալեից հայտնաբերված արձանիկներից մեկի վրա (TK-31)⁶²⁹: Վերջինս պատկած ցուլի արձանիկ է, որի վրա կանգնած աստվածության մարմնի վերին մասը կտրտված է: Հայտնի է, որ ցուլը եղել է Թեյշերայի՝ երկրորդ գլխավոր աստծո սրբազան կենդանին, ուստի կարելի է

⁶²⁶ ՀՊԳԹ 2010-127 (մեր դիվանում՝ KB-74):

⁶²⁷ Laroche, 1960, էջ 163, № 318; Дьяконов, 1969, էջ 102; II Geroglifico Anatolico, 1998, էջ 59, 108:

⁶²⁸ Այս առթիվ արևի երկու մեծից Դեան արձանագրության սկզբը, կր լաֆի հատուկ գրաբարություն է անձնակում Խաղդիին, ապա դիցաբանի գերագույն երեք աստվածներին՝ Խաղդիին (երկրորդ անգամ), Թեյշերային և Շեյնիին (չնչ որում, առաջին անգամ Խաղդիին գեղարքում են ուշը, ինչը չի հանդիպում ուրիշ և ոչ մի աստծու դեպքում): Աման ծիսակարգը խորիկ է առնա, որ առաջին դեպքում Խաղդիին քննարկել է իբրև առաջնաթև, ամենի արտի, բայց աստվածներից հար, երկրորդում՝ որպես գերագույն նշանի և ուղե դիցաբանի առաջնորդ: Եռաժանի՝ Խաղդիի խորհրդանիշը լինելը վերջում նաև Armavir-3, Bastam-19-21, 37-95, 127-129, TK-1-2, 4, KB-2 գրանցի արտեղանները (տե՛ս դիվանում):

⁶²⁹ Поговоркам, 1939, էջ 51, աղ. IV:

ենթադրել, որ այդ արձանը ներկայացրել է Թեյշեբային: Արձանիկի մակագրության մեջ նիզակատեսք նշանին նախորդում են երկու ուղղահայաց գծիկներ: Արդյո՞ք չի՞ կարելի եզրակացնել, որ ուղղահայաց գծիկները քիայնական մեհենագրության մեջ (ի տարբերություն խեթա-լուվիականի) նշանակել են ոչ թե քանակական, այլ դասական թվականներ. այդ դեպքում արձանիկի գրությունը հնարավոր կլինի ընթերցել «երկրորդ խալդի» կամ «երկրորդ աստված», ինչը միանգամայն համապատասխանում է Թեյշեբայի՝ քիայնական դիցարանում ունեցած դիրքին:

Երրորդը Կարմիր բլուրի և Բատումի արքայական կնիքների հատակին թևավոր ձիուց վեր պատկերվող տիկի նշանի մասին է, որը կարծես թե կատարում է որոշարկիչի դեր: Այդ մեհենագրին կանոնադառնանք հնչյունային փոխարինագրման երևույթի առկայությամբ:

Եվ մեր վերջին դիտողությունը, որը բխում է Հնագույն Հայաստանում և հարևան երկրներում անմահություն որոնող հերոսի մասին այուժն(ներ)ի լայն տարածման փաստից⁶⁰⁹, նույնպես վկայում է քիայնական մեհենագրերի և հայկական միջնադարյան մատյանների նշանագրերի ժառանգական կապի մասին:

Հին Միջագետքի ամենահայտնի էպոսում պատմվում է, որ Գիլգամեշը ուղևորվում է դեպի Հայկական լեռնաշխարհ, ուր գտնվում էր անմահության ծաղիկը, և որի սահմանային Մաշու (հմմտ. Հայաստանի հարավային Մասիուս / Մասիոն) լեռները հսկում էին ահարկու մարդակարիճները, որոնք պահպանում էին նաև արևածագն ու մայրամուտը: Գիլգամեշը ձեռք է բերում անմահության ծաղիկը, որը սակայն երանից գողանում է օձը⁶¹¹: Աստվածաշնչի Շննդոց գրքում (2, 8-14; 3, 22-24) անմահության խորհուրդը կրում է կենսաց ծառը, որը գտնվում էր դրախտում (Հայկական լեռնաշխարհ): Նույն տեղում նշվում է, որ դեպի կենաց ծառը տանող ճանապարհը հսկվում էր քերուվքների կողմից (ընդ որում, այստեղ ևս մարդիկ գրկվել էին անմահությունից՝ օձի միջամտության պատճառով):

Կարմիր բլուրից և Արմավիրից գտնված քիայնական մի քանի սևամեջ գլանաձև կնիքների կողային մակերեսին պատկերված է նույն տեսարանը. աղեղնավորը նետահարում է վիշապ հիշեցնող առասպելական մի կենդանու, որի վերևում նշված է «աստված(ային)» կամ «աստվոտ» հիերոգլիֆը: Նրանց միջև շողարձակող բույս է, որը հիշեցնում է միջագետքյան անմահության ծաղիկը կամ կենաց ծառը, իսկ առասպելական կենդանին՝ մարդակարիճներին կամ քերուվքներին (նկ. 58a)⁶¹²: Եվ ամենաուշագրավն այն է, որ այդ կենդանու

⁶⁰⁹ Մանգամասն տե՛ս Մրժվության, 2006 (ա), էջ 43-47 (և հղված գրականությունը):

⁶¹⁰ Lehmann-Haupt, 1927, էջ 797-798; ANET, էջ 88-89; Lipinski, 1971, էջ 49-50; 119; ՀԱՊ, 1982, էջ 143, 163-164; MM, էջ 96:

⁶¹² Տե՛ս մեր ղիվանի Armavir-6, KB-24, 28 (ևսև KB-26, 27, 30, 31, 34) կնիքները:

պարզ գծաստիկերը գտնում ենք հայկական միջնադարյան մատյաններում «քերովքե» բացատրությամբ (նկ. 58b)⁴¹²:

Ի մի բերելով վերձանության երկրորդ փուլի ձեռքբերումները՝ տեսնում ենք, որ քիայնա-արարատյան մեհենագրերը սեպագրերի հետ որոշ դեպքերում հանդես են գալիս երկկեզու արձանագրություններում՝ թարգմանելով մեկմեկու: Առայժմ ունենք երեք երկկեզու արձանագրություն, սակայն հարկավոր է հաշվի առնել, որ մի շարք բնագրեր (որոնք ունեն հարակից գրություններ երկու համակարգերով) մնում են չվերձանված, և դրանց հետագա ուսումնասիրության շնորհիվ կարող են բացահայտվել նոր քիլինգվաներ: Բացի այդ, պարզվում է, որ Վանի թագավորության մեհենագրության մեջ գոյություն է ունեցել հատուկ անունների գրության ոչ միայն վանկագիր (հնչյունային), այլև գաղափարագրային սկզբունք, որն ունեցել է հետևյալ կառուցվածքային դրսևորումները.

ա) առանց որոշարկիչի (դետերմինատիվի)՝ մեկ պատկերանշանով,

բ) որոշարկիչի և որևէ աստծո պատկերանշանի զուգահրմամբ,

գ) որոշարկիչի, տվյալ աստծո խորհրդանշանի և պատկեր-գաղափարագրի համադրմամբ,

դ) «հնչյունային ռեբուսի» սկզբունքով նույնահունչ գաղափարագրերի փոխարինագրմամբ:

Այս փուլում առաջված արդյունքները մեկ անգամ ևս հավաստում են քիայնա-ուրարտական մեհենագրության կարևոր տեղը հայաստանյան պատկերագրության պատմության մեջ և օտար գրային համակարգերից ամենից ավելի խեթա-լուվիական հիերոգլիֆիկային առնչվելը:

Այսբանով առայժմ սահմանափակվում են վերձանության ուղղությամբ մեր կատարած աշխատանքները, որի ընթացքում ընթերցվեցին և մեկնաբանվեցին շուրջ հինգ տասնյակ մեհենագրեր, այդ թվում՝ բառային և վանկային գործածություն ունեցող հիերոգլիֆներ, թվանշաններ և մեկ օժանդակ նշան: Ընթերցվեցին երեք հատուկ անուններ (Իշպուլինի, Մենուա, Ինուանի), որոնց գրության մեջ գործածված էին 11 վանկեր: Եվս վեց հատուկ անուններ (Խալդի, Թեյշերա, Շիվինի, Մարդի, Ռուսա, Մարդուրի) գրված են գաղափարագրերով: Գաղափարագիր գրությամբ վերձանված է երկու քաղաքանուն՝ «Ռուսախինիլի» և «Ռուսայի փոքր քաղաք»: Ընթերցված գրություններն ու նշանները իրենց բնույթով յոթ տեսակի են.

ա) ցույց են տալիս պատկանելությունն իրի, որի վրա նշված են,

բ) մատնանշում են պատկերվողի ինքնությունը,

գ) ունեն նախատվական բովանդակություն («Խալդյան տաճարին», «Մարդուրիի (նվերը) Խալդիին» և այլն),

⁴¹² Արտիստյան, 1959, էջ 173 (նշանի որոշ տարբերակներ Հր. Անաթոսի և Ա. Գ. Արտիստյանի կողմից նմանեցվել են հայերեն «Թ» տառին. այդ տարբերակը մեր կարծիքով նեպազայն է և ծագում է ամֆիպոլի քիլինգական շրջանից):

- դ) իբրև վարպետի նշան՝ ցույց են տալիս իրը պատրաստողին,
- ե) քնորոշում են նշանակիր առարկայի որակական տվյալները (տարրողության նշաններ և այլն),
- զ) կապվում են տվյալ իրի նպատակադրման հետ,
- է) դեռևս պարզաբանված չեն:

Վերծանության հետագա աշխատանքներին նպատակելու նպատակով զետեղում ենք վերծանված ու մեկնաբանելի մեհենագրերի ցանկը (հավելված, աղ. 13), որում մեր վերծանածներից բացի տեղ են գտել նաև մնզնից առաջ մեկնաբանված նշանները:

ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՀԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵՋՎԻ ԽԼԴԻՐԸ

Գրային համակարգի ընդհանուր բնութագիրը ներկայացնելիս նշեցինք, որ Վանի թագավորության մեհենագրության լեզվի համար կա երկու թեկնածու՝ քիայնական սեպագրության լեզուն կամ երկրում առավել տարածված խոսակցական լեզուներից մեկը: Մեր վերծանության արդյունքները դեռ թույլ չեն տալիս վերջնական եզրահանգումների գալ լեզվի հարցում, սակայն որոշակի պարզություն են մտցնում այդ խնդրում:

1) Հիերոգլիֆիկայում լայնորեն կիրառվող ակրոֆոնիայի (սկզբնահնչուկային) կանոնի համաձայն՝ որևէ բառանշան վանկային գրության դեպքում ցույց է տալիս այդ բառի առաջին վանկը (սկզբնամասը): Հետևաբար, եթե հայտնի է տվյալ նշանի իմաստն ու նրա վանկային արժեքը, հետադարձ տրամաբանությամբ, կարելի է գտնել, թե ո՞ր լեզվում է այդ բառը սկսվել տվյալ վանկով (հնչյունով) և պարզել գրային համակարգը ստեղծող ժողովրդին ու նրա լեզուն:

Մեր վերծանած մեհենագրերից այս իմաստով ամենահուսալին «արև» մեհենագիրն է, որը գտնում ենք արևի թևավոր սկավառակի կենտրոնում: Նույն տեսքով ու իմաստով այդ նշանը առկա է և՛ եգիպտական հիերոգլիֆիկայում⁶³⁴, և՛ հայկական նշանագրերում⁶³⁵: Մենուս անվան մեջ այն ներկայանում է իբրև «ա» վանկ: Այսինքն՝ Վանի թագավորության մեհենագրությունը ստեղծող ժողովրդի լեզվում արևի անվանումը պետք է սկսեր «ա» վանկով: Ո՞րն է այդ լեզուն: Բիայնական սեպագրության լեզվի թեկնածությունն այս դեպքում դուրս է գալիս, քանի որ նրանում արևը և՛ որպես դիցանուն, և՛ որպես հասարակ գոյական կոչվում է *Siaini*⁶³⁶: Խուռիերենում (որը համարվում է քիայնական սեպագրերի լեզվին ազգակից) արևը կոչվում է *Simige*⁶³⁷: Քանի որ Վանի թագավորության գրային համակարգերը կառված են եղել Ասորեստանի և խեթա-լուվիական աշխարհի հետ և հնարավոր էին փոխառության դեպքեր,

⁶³⁴ Коростовица, 1961, էջ 95, № 5; Wallis Budge, 1978, էջ CXXIV (№ 8):

⁶³⁵ Արամյան, 1959, էջ 169; Մարտիրոսյան, 1973, էջ 13–16:

⁶³⁶ Melkonian, 1960, էջ 195, 306–307; Арутюнян, 2001, էջ 124–125, 319–321:

⁶³⁷ Хачатур, 1985, էջ 48:

մենք ստուգեցինք նաև այդ լեզուների տվյալները: Ասուրա-բաբելոնյան, ինչպես հայտնի է, արևը կոչվել է Šamaš, խեթերենում *Ištanu* (որը ծագում է խեթերեն *Estan-hg*), իսկ ավելի վաղ փուլերում *Siuni*, լուվիերենում *Tiwat*, պալայերենում *Tiat*⁶³⁸:

Վանի թագավորությունում մեծ թիվ են կազմել հնդեվրոպացիները՝ հայերը, իրանական ու թրակյան ցեղախմբերը⁶³⁹: Բիայնիլի-Արարատում ու հարակից շրջաններում խոսված հնդեվրոպական հայտնի լեզուներից միակը, որում «արև» բառը սկսվում է «ա» հնչյունով (վանկով), հայերենն է⁶⁴⁰, որի «արև» բառը առաջացել է **reu*-(**reu-*) նախածնից⁶⁴¹ և բիայնական ժամանակաշրջանում պետք է ունենար *arev* տեսքը⁶⁴²: Այսինքն, մեր ունեցած ամենահուսալի մեհենագրի (եթե վերջինս չի նշանակել արևի հետ իմաստաբանորեն կապված այլ հասկացություն՝ «օր», «ցերեկ», «ժամանակ» և այլն) իմաստային ու հնչյունային վերլուծությունն ակրոֆոնիայի սկզբունքի և լեզվաբանական գիտելիքների լույսի ներքո, ցույց է տալիս, որ Վանի թագավորության մեհենագրության լեզվի հավանական թեկնածուն հնագույն հայերենն է:

Ակրոֆոնիայի սկզբունքի կիրառման այլ դեպքերի կանոնադաշտնաք քիչ հետո:

2) Մյուս սկզբունքը, որ նույնպես լայն գործածություն է ունեցել հիերոգլիֆ համակարգերում, ինչպես նշվեց, հնչյունային փոխարինագրումն է («հնչյունային փոխարինագրություն»): Այդ սկզբունքի կիրառման դեպքերից մեկի վերլուծությունը ևս նպաստում է Վանի թագավորության մեհենագրության լեզվի պարզաբանման ոչ դյուրին խնդրի լուծմանը: Խոսքը վերաբերում է «քաղաք» հիերոգլիֆին, որն իր տեսքով հիշեցնում է գլխի կամ դեմքի պրոֆիլային պարզեցված գծապատկեր (դրա հիման վրա էլ Ռ. Գ. Բարնեթի նշանացանկում այն մտցված է մարդակերպ նշանների խմբի մեջ): Ի՛նչ կապ կարող է ունենալ քաղաքը նման մի գծապատկերի հետ: Այս հարցում ևս մեզ օգնելու եկան լեզվաբանության և խեթա-լուվիական հիերոգլիֆիկայի տվյալները:

«Քաղաք» բառը հայերենում փոխառնված է աուրերենից (<Ր. Աճառյան այն կապում է Ասորեստանի՝ Ք.ա. XIII դարում հիմնված մայրաքաղաք Kalak-ի անվան հետ, որն ի սկզբանե եղել է «քաղաք» իմաստով հասարակ գոյական՝ «քարձուռք կամ ամրոց» նշանակությամբ)⁶⁴³: Այսինքն՝ Վանի թագավորության

⁶³⁸ Hrosová, 1980, էջ 136:

⁶³⁹ Չախուկյան, 1988, էջ 161–162:

⁶⁴⁰ Buck, 1949, էջ 43 (այսն հարցում խեթերոպոլիտիկայի և գրականության տրամադրման համար չեթերոպոլիտիկայի ենթ հայտնում Գ. Ռ. Չախուկյանին):

⁶⁴¹ Չախուկյան, 1987, էջ 145, 207, 258:

⁶⁴² Որ բիայնական ժամանակաշրջանում հայերենում բառը չէր կարող սկսվել «ր» հնչյունով, ցույց են տալիս նաև սեղավոր արձանագրությունների տվյալները (միակ բացառությունը Ուեստ անունն է, որի բնութագրումը կառվածն է. նույն անունը առարարան ապրուրենուսն հիշվում է «Ռոսաս» նունով): Բառակերպի թ-ից առաջ նախածայն ա-ի հաջորդական օգինակներից կարելի է համարել Արամ (**re-mo* նախածնից) անձնանունը (տես՝ Պետրոսյան, 1997, էջ 33–35, 167–168; Petrosian, 2002, էջ 44–45):

⁶⁴³ Աճառյան, 1979, էջ 542–543:

ժամանակաշրջանում հնագույն հայերենն ունեցել է այդ քառը՝ «քաղաք» հնչյունային տեսքով: Խեթա-լուվիական հիերոգլիֆները և նրանց պարզեցված տարբերակները դիտարկելիս՝ մեր ուշադրությունը գրավեց «այծ» գաղափարագրի պարզեցված մի տարբերակ⁶⁶⁴, որը հար և նման էր մեր «քաղաք» նշանին (նկ. 59 a): Այժ պատկերող թիայնական նշանը (որ շատ նման է նույնիմաստ խեթա-լուվիականին) պարզեցմամբ կտար նույն հիերոգլիֆը (նկ. 59 b): Հնագույն հայերենում արու այծի համար ունենք «քաղ» անվանումը, որը ծագում է հնդեվրոպական *kag-*lo* նախածնից⁶⁶⁵: Երկու անունների նմանությունը թույլ է տալիս մեզ եզրակացնելու, որ այստեղ ևս գործ ունենք «հնչյունային ռերուսի», հանելուկային փոխարինագրության հետ, որի պարագայում «քաղաք» քառը փոխարինվել է «քաղ»-ով: Հնչյունային փոխարինագրման այս դեպքը ևս հնարավոր էր միայն հնագույն հայերենի պարագայում:

Հնարավոր է, որ նույն սկզբունքի կիրառման հետ գործ ունենք արքայական կնիքների հատակին թևավոր ձիուց վեր պատկերվող «տիկ» նշանի պարագայում: «Տիկ» քառը քնիկ հայերեն է և ծագում է հնդեվրոպական *diga-*na*խածնից⁶⁶⁶: Նշանը պատկերվել է արևի աստծուն խորհրդանշող թևավոր ձիու վերևում և, թերևս, ծառայել է իբրև վերջինիս որոշարկիչ: Մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ նշանի հնչյունային սկզբնամասը (ակրոֆոնիայի կանոնի համաձայն) փոխարինել է արևի աստծո հետ կապված տիկ<*di- «օր», տիւ<*diu- «օր, ցերեկ, լույս» կամ գուցե տիկ<*dei- «մեծ», դի<*dhes- «աստված» բառերին⁶⁶⁷:

3) Հայերենի թեկնածությունը Վանի թագավորության մեհենագրության (և ամենատարածված խոսակցական) լեզվի համար հավանական է նաև ըստ տեղանունների և դիցանունների ստուգաբանության արդյունքների: Բավական է էշել, որ արքունի ոստան Արմարիլի (Արամայի) երկրի մեզ հասած տասնմեկ տեղանուններից յոթը (Արմարիլի, Ծինիշպալա, Ծինուռակ, Այալի, Առնա, Շառնի, Ուրիանդա), ըստ Գ. Բ. Չախուկյանի, ստուգաբանվում են հայերեն⁶⁶⁸: Հայերեն են ստուգաբանվում նաև Արմարիլիին հարևան երկրամասերի ու ողջ թագավորության մեծ թվով տեղանուններ⁶⁶⁹ և դիցանուններ⁶⁷⁰:

4) Նկատի ունենալով հայերենի՝ Վանի թագավորության մեհենագրության լեզվի թեկնածության մեծ հավանականությունը և ելնելով ակրոֆոնիայի սկզբունքի օրինաչափություններից՝ կարելի է վերծանված նշաններից մի քանիսի համար առաջարկել ենթադրելի, բայց հավանական մեկնաբանություններ, որոնք հետագա ուսումնասիրությունների ընթացքում կիմնավորվեն կամ կմերժվեն:

⁶⁶⁴ Laroche, 1960, էջ 65–66, № 104; Дьяченко, 1969, էջ 95; II Geroglifico Anstolico, 1998, էջ 44, 92:

⁶⁶⁵ Չախուկյան, 1987, էջ 130, 208:

⁶⁶⁶ Չախուկյան, 1987, էջ 118, 210:

⁶⁶⁷ Չախուկյան, 1988, էջ 72, 84, 117, 120, 216, 217, 222:

⁶⁶⁸ Չախուկյան, 1988, էջ 151–167:

⁶⁶⁹ Նույն տեղում:

⁶⁷⁰ Չախուկյան, 1986, էջ 43–58:

Իշպուխի անվան առաջին և երրորդ նշանները, որոնք Ռ. Դ. Բարենթի կողմից իրավամբ դասվել են մարդու մարմնի մասերի գծանկար-հիերոգլիֆների շարքը (թիվ 17 և 18), պատկերում են ականջ⁶⁵¹ և աչք: Ականջ իմաստով հնագույն հայերենն ունի «ուսկն» բառը, որն առաջացել է հնդեվրոպական նախալեզվի **us-ous-* արմատի կրկնակի ամանցմամբ՝ **us-on-ko-m* / **us-on-kon*⁶⁵²: Պետք է ենթադրել, որ վաղնջահայերենն ու հնագույն հայերենը նախ ունեցել են առանց կրկնակի ամանցման *us* կամ նույն արմատից և ո ռեզակահից կազմված *usn* ձևը⁶⁵³, որը հետագայում չի պահպանվել: Ի դեպ, հայերենում պահպանվել է նույն արմատից ծագող «ուշ» («միտք, խելք, մտադրություն, բանականություն», որից՝ ուշ դնել, ուշի ուշով, ապուշ, ուշադիր, ուշիմ, ուշք և այլն) բառը, որի համար ենթադրվում է փոխառություն իրանական *us* ձևից⁶⁵⁴: Իշպուխի անվան առաջին՝ ականջ պատկերող նշանի համար հնագույն հայերենի պարագայում ունենում ենք *us/us* վանկը, որի բաղաձայնը համընկնում է անվան սեպագիր գրության (*iš*) հետ, իսկ ձայնավորը՝ տարբերվում: Հագիվ թե այս տարբերությունը լինի մեր սխալ եզրահանգման արդյունքը, քանի որ արքայանունն ասուրական աղբյուրներում վկայված է Ուշպինա տարբերակով⁶⁵⁵: Մեր ստուգաբանության համընկնումը անվան ասուրական գրության հետ, համենայնդեպ, մտորելու տեղիք է տալիս:

Բիայնական սեպագրության մեջ անորոշություն կա՝ կապված «o» հնչյունի գրության հետ: Բանն այն է, որ միջագետքյան սեպագիրն ունի միայն չորս ձայնավոր՝ ա, ի, է, ու (յուրաքանչյուրը մի քանի նշանով), արտահայտված չէ «o» հնչյունը, որը գրության մեջ հաճախ փոխարինվում է «ու» ձայնավորով: Իշպուխի անվան երկրորդ վանկն է «պու», որը կարող էր ընթերցվել նաև «պո»: Վերջինս ավելի հավանական է թվում, քանի որ նշանը պոչի գծապատկեր է (վերին մասում գոտեկապով), իսկ «պոչ, պոչուկ» բառը ունի հնդեվրոպական ծագում և առկա է եղել հնագույն հայերենում⁶⁵⁶: Պոչի գծանկարի առկայությունը մեհենագրության մեջ առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, սակայն այս երևույթը ունի շատ համոզիչ և հիմնավոր բացատրություն: Դեռևս վաղ հնադարից պահպանվել և Ք.ա. I հազարամյակում առկա էր հմայական մի սովորույթ, որի համաձայն՝ ուժեղ կենդանիների գորությունը ստանալու հավատամքով իշխանավորներն ու զորականները կրում էին այդ կենդանիների եղջյուրը, մորթին կամ պոչը: Ուստի միանգամայն բնական է թե՛ եղջյու-

⁶⁵¹ Փամեսակնե ներառել էմքը, որ դա կենդանու գլխի պատկերման է և փորձել էին մեկնաբանել այն (Մտփոխանք, 1996 (4), էջ 392): Լուսանկարի ուշադիր զննումը հնարավորություն տվեց մեզ նշանու, որ նշանը մարդու ականջի պատկեր է, և դա նկատ մեզմեջու մեր նախնի մեկնաբանությունը: Ի դեպ, նմանատեսք մի նշան էլ եզիպտական հիերոգլիֆիկայում է հանդես գալիս «ականջ» նշանակությամբ (մեր հաղելվածի աղ. 12, տն/ս Դևոտուս, 1961, էջ 85, № 18; Wallis Budge, 1978, էջ CVI (№ 25): Արքայանուն, 1959, էջ 168):

⁶⁵² Անտայան, 1977, էջ 603-604; Չահուկյան, 1988, էջ 51, 142, 238:

⁶⁵³ Լույն տեղում:

⁶⁵⁴ Անտայան, 1977, էջ 605-606:

⁶⁵⁵ Դևոտուս, 1951, № 34:

⁶⁵⁶ Չահուկյան, 1987, էջ 115, 209:

րի, թե՛ մորթու և թե՛ պոչի առանձին գծանկարների հանդես գալը մեծնագրության մեջ:

Այս ճշգրտումը քաջատրեյի է դարձնում րիայնական սեպագրերում Իշպուխիի անվան Իշպու-ու-ի-նի հնգավանկ ընդունված գրությունը: Մինչ այդ անհասկանալի էր մնում, թե ինչու է «պու» վանկին հաջորդում «ու»՝ առաջացնելով ձայնավորի անհարկի կրկնություն: Մեր առաջարկված հնարավոր ճշգրտումը ցույց է տալիս, որ ձայնավորի անհարկի կրկնություն, ըստ երևույթին, չի եղել, քանի որ «ու»-ն հաջորդել է «պո» վանկին⁶⁹⁷:

Իշպուխիի անվան գրության երրորդ նշանը, ինչպես ասվեց, աչքի զնայատվերն է, որն արտահայտում է *š* («ու» երկրորդ) հնչյունը: Այն կարող էր նշանակել ինչպես «աչք», այնպես էլ «տեսնել», «դիտել» և գործառության նման այլ բառեր: Հնդեվրոպական նախալեզվում «տեսնել, իմանալ, գիտենալ» արմատն է **ueid-* կամ **uoid-*, որից հին հայերենում (գրաբարում) ունենք «գետ» (գիտ-նմ, գիտ-ուն) բառը⁶⁹⁸: Նախալեզվի բառասկզբի **u-*-ն օրինակափորեն հին հայերենում տալիս է «գ» (**uedeno-* > գետին, **ued-* > գետ, **uel-* > գեղ, **uol-* > գող, **uero-* > գիր և այլն)⁶⁹⁹, սակայն րիայնական շրջանում հնագույն հայերենի **u-*-ն դեռևս չէր վերածվել *q*-ի, որը վկայվում է սեպագիր արձանագրությունների տվյալներով: Բերենք երկու օրինակ: Գեղարքունի գավառանունը, որի «գեղ» արմատը ծագում է **uel-* նախածնից, վկայված է Uelikuni/Uelikuni տարբերակներով⁶⁹⁹, իսկ Էթիունի երկրի Մևանա լճի ավազանում տարածվող հատվածը կոչվում է Ueduri Etiuni⁶⁹⁶, որի առաջին բաղադրիչը իրավամբ մեկնարկվում է իբրև «գետային, ջրային» (գետ-**uedo(r)-*)⁶⁹⁷: Նախալեզվի **ueid-* կամ **uoid-* «տեսնել, իմանալ, գիտենալ» արմատը րիայնական շրջանում պետք է հնչեր *ued* կամ *uoid*, իսկ աչք պատկերող նշանը, ըստ ակնոֆոնիայի սկզբունքի, պետք է ցույց տար այդ արմատի առաջին վանկը՝ *u* (*v*), ինչպես որ է: Ի դեպ, մենք հնարավոր ենք համարում, որ Ռուսա Ա-ի Ուեդիսարի մականվան առաջին մասնիկը լինի ոչ թե *uediani* «կին» բառը, այլ *ued* «տեսնել, իմանալ, գիտենալ» արմատը (իսկ մականունը կարող էր նշանակել «տեսանող, գիտուն, իմաստուն»):

Աչքի տեսք ունեցող նշանը նույն թիթեղի վրա հանդիպում է նաև առանձին՝ աստծո և արքայի միջև, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ արքայի հայցածը ու աստծո շնորհածը «գիտություն, իմաստություն» է: Նման մեկնու-

⁶⁹⁷ Երկրորդ և երրորդ վանկերում «ու»-ի կրկնության պատճառով անվան համար առաջարկվել է նաև ընթերցման Իշպուխիի տարբերակը (տե՛ս օրինակ Լառտառ, 1963, էջ 48; Լառտառ, 1988, էջ 161 և այլն):

⁶⁹⁸ Անադյան, 1971, էջ 556; Չառուկյան, 1987, էջ 155, 220, 222:

⁶⁹⁹ Չառուկյան, 1987, էջ 114, 155, 156:

⁶⁹⁹ Karasoyun, 1931, էջ 9; Meakontsyan, 1960, էջ 286-287, 293-294, 328-329; Կարապետյան, 1978, էջ 57, 62-63; Արդուստ, 2001, էջ 243-245, 254-255, 295-296:

⁶⁹⁷ Meakontsyan, 1960, էջ 210-212, 280-282, 309; Արդուստ, 2001, էջ 156-157, 238-239, 264:

⁶⁹⁷ Տեղանվան առաջին մասը Մ. Ս. Երեմյանը թարգմանում է «գամերթ (ծովամերթ)» (Երեմյան, 1968, էջ 81), իսկ Հ. Հ. Կարապետյանը՝ «նշանակող անդամուն ընթերցում է «Տրազին Էթիունի» (Karapetian, 1988, էջ 65-66):

թյունն ավելի հավանական կդառնա, եթե հաշվի առնենք, որ թիթեղին պատկերված արքայազնի հետևում կանգնած է դպրության հետ կապ ունեցող անձ (հավանաբար արքայազնի դաստիարակ-քուրմը): Ուստի ակնատեսը նշանը կարելի է թարգմանել ինչպես «տեսնել, դիտել, գիտնալ», այնպես էլ «տեսանդություն (քրմական իմաստով), գիտություն, իմաստություն»:

Չորրորդ նշանը կենդանու գլխի գծապատկեր է Ռ. Դ. Քարնեթի հրապարակումից այնքան էլ հստակ չէ, թե դա ինչ կենդանի է: Եվ վերջապես, Իշպուխի անվան վերջին նշանը, որն ընդգծված կեն կտուցով, թերևս, անգլի գլուխ է, արտահայտում է սեպագրի «նի» վանկին համարժեք վանկ: Հիմք ընդունելով խնդր առարկա մեհենագրության լեզվի՝ հայերենը լինելու կանխավարկածը և նույնպես հնդեվրոպական ծագում ունեցող⁶⁶³ «անգղ» բառի առաջին վանկը տեղադրելով արքայանվան մեջ՝ կունենանք արքայի անվան նոր, կերպարանափոխված տեսք՝ Ուա/շ-պո-ու-ի-ան (Ուա/շպուվիան): «Իշպուխի» նշանակում է «երջանիկ»⁶⁶⁴ և, Գ. Բ. Տահուկյանի համոզիչ ստուգարանության համաձայն, առաջացել է հնդեվրոպական **sp(h)ot-* հիմքնախաձևից. նույն արմատից են ծագում հին հնդկերեն *sphiti* «ժաջողություն», լատիներեն *pro-sper(us)* «բարեհաջող, հաջողակ», հին անգլերեն *spowan* «քարզավանել, ծաղկել, հաջողվել», ռուսերեն *y-cnex, y-cnesam* և այլ բառերը⁶⁶⁵:

Ինչ կարելի է ասել մյուս վանկանշանների վերաբերյալ:

Մենուա անվան առաջին նշանը նույնպես կենդանու գլխի պատկեր է, բայց անհասկանալի: Երկրորդ հիերոգլիֆը կրկնվում է երկու թիթեղների վրա (Մե-նու-ա և Ի-նու-ա-նի), կազմված է երեք ուղղահայաց հավասարաչափ գծիկներից և արտահայտում է «նու» վանկը: Առաջին տպավորությունը, որ այն կարող է լինել «երեք» թվի նշումը, խարուսիկ է. ո՛չ հայերենում, ո՛չ բիայնական սեպագրերի լեզվում, ո՛չ էլ խեթա-ուրվիական լեզուներում «երեք» թվի անվանումը չի սկսվում «նու» վանկով: Խեթա-ուրվիական հիերոգլիֆիկայում «նու» վանկն արտահայտվում է երկու նշանների միջոցով: Դրանցից մեկը (աղ. 12) երեք շարքով ինը հորիզոնական գծիկների պատկերն է՝ «ինը» թվի նշանը⁶⁶⁶: Խեթերենում «ինը» բառը թարգմանվել է *nuwa*, որի առաջին վանկն էլ հաղորդվել է հնչյունային գրության դեպքում: Կարելի է ենթադրել, որ Վանի թագավորության դպիրները փոխառել են այս նշանը՝ պարզեցնելով և վերածելով երեք ուղղահայաց գծիկի, որն այլևս կապ չի ունեցել նրա նախկին «ինը» իմաստի հետ:

«Արև» իմաստով («ա» վանկի) նշանի մասին արդեն խոսվել է:

Ինուանի անվան երրորդ և չորրորդ նշանների իմաստները դեռևս անհայտ են: Առաջին նշանը, որ հաղորդում է «ի», մարդու դեմքի պրոֆիլային պատկերն է՝ վերևից երկու քաղաղրիչների հավելմամբ: Սա կարող է լինել և՛

⁶⁶³ Տահուկյան, 1987, էջ 412:

⁶⁶⁴ Իրավե «Երբանկություն բառից (Մեջնառատ), 1960, էջ 69):

⁶⁶⁵ Дьяченко, 1963, էջ 100:

⁶⁶⁶ Laroche, 1960, էջ 212, № 395; Дьяченко, 1969, էջ 31, 105; II Geroglifico Anatolico, 1998, էջ 115:

կցազիր, և՛ սաղավարտակիր (կամ այլ գլխակապով) մարդու գլխի պատկեր: Քանի որ այստեղ ևս որոշակիություն չունենք, ձեռնպահ ենք մնում որևէ մեկ-նարանություն առաջարկելուց:

Ամփոփելով մեր վերձանության արդյունքների մեկնաբանության փորձը՝ ստանում ենք հետևյալ պատկերը: Տասնմեկ վանկանշաններից հինգը մնում են չմեկնաբանված: Մեկ նշան («արև») համոզիկ կերպով քացատրվում է հայերեն: Հինգ նշանի համար կարելի է առաջարկել ենթադրելի, քայքայ հաղթանական քացատրություններ, ընդ որում, մեկը համարելով փոխասություն խեթա-լուվիական սկզբնաղբյուրից, չորսը մեկնելով բնիկ հայկական, հնդեվրոպական հիմքի վրա: Նույն հիմքով կարելի է ստուգաբանել վերձանված գաղափարագրերից երեքը: Հօգուտ բիայնա-ուրարտական մեհենագրության հայալեզու լինելու են վկայում նաև թագավորության կենտրոնական շրջանների (հատկապես արքունի ոստանի) տեղանունների ու դիցանունների ստուգաբանության արդյունքները, դիցարանի կառուցվածքի հնդեվրոպական բնութագիրը⁶⁰⁷ և այլ փաստեր: Մեկ անգամ ևս շեշտենք, որ լեզվի հարցը վերջնական ու սպառիչ լուծում կստանա մեծածավալ քննարկի հայտնաբերումից և ընթերցումից հետո: Սակայն այսօր հայտնի տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բիայնա-ուրարտական մեհենագրության լեզվի ամենահավանական թեկնածուն հայերենն է: Ավելացնենք, որ մեհենագրային այս համակարգը կազմում է հայաստանյան պատկերագրության երրորդ փուլը և գործածվել է Ք.ա. IX դարից (եթե ոչ ավելի վաղ): Իսկ սա նշանակում է, որ այսօր մեծ հավանականությամբ կարելի է խոսել Մաշտոցի հանձնարել գյուտից տասնչորս դար առաջ հայերենի գրավոր լեզու լինելու մասին...

Առկա նյութերի հավաքումն ու հետազոտությունը ցույց են տալիս, որ Վանի թագավորության մեհենագրությունը տարածված է եղել տերության և նրա ազդեցության սահմաններում, որից դուրս այն որևէ այլ տեղում վկայված չէ: Ներկայումս հայտնի արձանագրությունները թվագրվում են Ք.ա. IX-VII դարերով, չի քացատրվում, որ նշված գրային համակարգը ստեղծված լինի նախաբիայնական շրջանում: Մեզ հասած նշանակիր առարկաներն ու արձանագրությունները վերաբերում են երկրի կյանքի, ըստ էության, քոլոր հիմնական ոլորտներին (արքայական իշխանություն, հոգևոր աշխարհ, ռազմական գործ, տնտեսություն, մշակույթ, կենցաղ և այլն): Դրանց թիվը, ըստ մեր ունեցած նյութերի, անցնում է 1800-ից: Արձանագրությունները խիստ փոքրածավալ են, ինչը դժվարացնում է վերձանության խնդրի լուծումը: Հիմքեր կան ենթադրելու, որ ավելի ծավալուն քննարկները գրվել են մագաղաթի կամ պապիրոսի նման փափուկ նյութերի վրա, որոնք առայժմ չեն հայտնաբերվել: Բիայնա-ուրարտական մեհենագրության մեջ ընդունված են եղել գրության աջից ձախ և վն-

⁶⁰⁷ Petrosyan, 1988, էջ 56-63; Petrosian, 2002, էջ 125-127; *Պետրոսյան, 2002, էջ 243-268:

րից վար ուղղությունները: Գործածվել են շուրջ 300 մեհենագրեր. դա նշանակում է, որ մեզ հետաքրքրող գրային համակարգը եղել է բառա-վանկային (գաղափարահնչյունագրային): Մեհենագրերը, ըստ արտաքին տեսքի, կարելի է բաժանել իմաստային տասը խմբերի: Առկա են թվանշաններ և օժանդակ նշաններ: Լայնորեն կիրառվել են կցագրերն ու որոշարկիչները (դետերմինատիվները):

Մինչև 1995 թ. կատարված վերծանության փորձերը շոշափելի արդյունք չէին տվել: Մեկնաբանված էին միայն մի քանի նշաններ: Մեր վերծանության առաջին փուլում (1995 թ.) ընթերցվեցին երեք վանկազիր անուններ, մեկնաբանվեցին գաղափարազիր և օժանդակ նշաններ: Երկրորդ փուլում (1997 թ.), որն իրականացավ այս աշխատանքի հավելվածում բերված արձանագրությունների ժողովածուն կազմելու ընթացքում, քացահայտվեցին երկվեզու արձանագրություններ, և վերծանված ու մեկնաբանելի նշանների ընդհանուր թիվը հասավ հինգ տասնյակի:

Առանձնակի ուշադրության են արժանի Վանի թագավորության մեհենագրության ծագման և լեզվի խնդիրների լուծման ուղղությամբ ստացված արդյունքները: Բոլոր հիմքերը կան եզրակացնելու, որ այն ծագել է Ք.ա. V-IV հազարամյակներում ձևավորված տեղական պատկերագրությունից (որը Ք.ա. III-II հազարամյակներում վերածվում է գծային գրերի համակարգի) կրելով Ք.ա. XII-VIII դարերում Հայկական լեռնաշխարհի արևմուտքում գործածված խեթա-լուվիական հիերոգլիֆիկայի ազդեցությունը: Վերջինս, թերևս, պայմանավորված էր նախարիայնական Հայաստանում Թորգոմա տան (Թե/ոզարամա երկրի, որում կիրառվում էր նշված գրային համակարգը) Հայկանների իշխանության տարածման գործոնով: Ակնհայտ է նաև Վանի տերության հիերոգլիֆների և հայկական մեհենագրության բրիտանական շրջանում ունեցած դրսևորումների կապը (տե՛ս ստորև), որը խոսում է այդ բոլորի ընդհանուր ծագման և ժառանգական կապվածության մասին:

Բիայնա-ուրարտական մեհենագրության լեզվի հարցը վերջնական և սպառիչ լուծում կստանա առավել մեծածավալ քննարկների հայտնաբերումից ու վերծանությունից հետո: Սակայն այսօրվա ուսումնասիրության մակարդակը թույլ է տալիս մեծ հավանականությամբ խոսնելու այդ լեզվի՝ հնագույն հայերենը լինելու մասին (եզրահանգումներն արվում են սկզբնահնչյունության (ակրոֆոնիայի) և հնչյունային փոխարինագրման սկզբունքների կիրառման դեպքերի վերլուծության հիման վրա): Հօգուտ խնդրի նման լուծման են վկայում նաև երկրի տեղանունների մեծ մասի (հատկապես ուստանիկ տարածքի) ու քաղաքային դիցանունների հայերենով ստուգաբանվելը, դիցարանի կառուցվածքի հնդեվրոպական բնութագիրը և այլ փաստեր:

Նշված փաստարկների հետ միասին Վանի թագավորությունում կիրառված գրային համակարգերի ուսումնասիրությունը կարող է նոր լույս սփռել տե-

րության ազգային բնութագրի պարզաբանման հիմնախնդրի վրա: Վերջինիս լուծման համար հիմնական կոմանդ եղել է քիայնական սեպագրության լեզվի վերձանությունը: Հարկ ենք համարում նշել, սակայն, որ այն չէր կարող լինել թագավորությունը ստեղծողների մայրենի լեզուն՝ երկու պատճառով: Նախ, դատելով եղած ողջ գրավոր նյութից, այն եղել է պաշտոնական գրագրության և ոչ թե ժողովրդայնասակցական լեզու: Եվ հետո, քիայնական սեպագրությունը պետք է ստեղծված լիներ Ք.ա. XIV–XIII դարերում՝ ծագելով Միտանիի և Խեթական տերության գրչության դպրոցներից: Եթե կար մայրենի լեզվով սեպագիր, ինչու՞ պետք է Մարդուրի Ա–ն կիրառեր թշնամի երկրի լեզուն՝ վերջինիս սեպագիր համակարգով (քիայնական սեպագիրն իր լեզվով առաջին անգամ գործածվում է նրա որդի Իշպուլիկի արքայի օրոք): Նշանակում է՝ դա քիայնական արքաների մայրենին չէր: Սեպագիր երկու համակարգերն էլ ներմուծված էին. բնիկ տեղականն ուրարտա–արարատյան մեհենագրությունն էր, որի լեզուն, ամենայն հավանականությամբ, եղել է հնագույն հայերենը: Կիրառված երեք գրային համակարգերից միայն մեկի տեղական ծագումը և հենց նրա հայկերու լինելու հավանականությունը, կարծես թե, մեր առջև բացում են մի շարք կնճռոտ խնդիրների լուծման նոր ճանապարհներ:

5. ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՀԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՄԾՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԻՑ ՄԻՆԶԵՎ ԲՐԻՍԱՆՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀՈՉՄԿՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայկական մեհենագրության քիայնա–ուրարտական փուլը վերաբերում է Վանի թագավորության ժամանակաշրջանին: Դեռևս գրեթե չուսումնասիրված է մնում Ք.ա. VI դարից մինչև քրիստոնեության պետականացումն ընկած ժամանակամիջոցում մեր մեհենագրության ճակատագրի հարցը: Ըստ Հ. Ա. Մարտիրոսյանի, «այն չի բավարարում զարգացող երիտասարդ պետականության և համապատասխան գաղափարաբանության պահանջները: Այդ պատճառով հեթանոսական Հայաստանում լայնորեն օգտագործվում են օտարազգի հնչյունային գրեր... Գաղափարագրությունը շարունակում է հարատևել մասնավորապես մեհյաններում՝ իրեն կրոնական–հմայական գրչության ձև»⁶⁶⁸:

Նշենք, սակայն, որ հայտնաբերվել են թեպետ ոչ մեծաթիվ, սակայն ուշագրավ հնագիտական նյութեր, որոնք կարող են փաստել մեհենագրության կիրառությունը Հայաստանում երվանդական և Արտաշեսյան դարաշրջաններում, ինչպես նաև I–III դարերի ընթացքում: Խոսքը վերաբերում է Արմավիրից բացառելով մասնավորապես մեհյաններում իրեն կրոնական–հմայական գրչության ձև»⁶⁶⁹ և, հատկապես, Արտաշատ մայրաքաղաքի հայտնաբերված նյութերին⁶⁷⁰ և, հատկապես, Արտաշատ մայրաքաղաքի

⁶⁶⁸ Մարտիրոսյան, 1973, էջ 69:

⁶⁶⁹ Դրանք դեռևս նրախոսված չեն: Ընդհանրապես կշեռք, որ այդ նյութերին մեզ ծանոթացրեց հնագետ Իվնես Կարապետյանը:

կնքադրոշմների արխիվներին, որոնցում բավականին մեծ թիվ են կազմում գաղափարագիր-նշաններով (սիմվոլներով) կնքադրոշմները⁶⁷⁶:

Մեկ այլ, գրեթե չուսումնասիրված ոլորտ ունենք՝ կապված Արտաշեսյան դրամների մենանշանների հետ: Դրանց վրայի մենագրերը բաժանվում են երեք խմբի՝ հունական տառեր, դրանց հիմամբ ստեղծված կցագրեր և որևէ այբուբենի հետ չկապվող նշաններ, որոնք մնում են անկնարարակա՝: Վերջիններս մեծ հավանականությամբ կարող են կապվել հայկական մեհենագրերի հետ⁶⁷⁷:

Դատելով արդեն վկայակոչված մատենագրական տեղեկություններից, կարելի է եզրակացնել, որ հայալեզու նշանագրերը նախաքրիստոնեական Հայաստանում ունեցել են ավելի լայն կիրառություն: Այդ են վկայում Հիպպոլիտոսի՝ 234-235 թթ. գրված «ժամանակագրության» մեջ հայերի նշվելը սեփական դպրություն ունեցող ժողովուրդների շարքում, Ագաթանգեղոսի հաղորդումները նախաքրիստոնեական Հայաստանում դպրության աստժո՝ Տիրի պաշտամունքի և կիրառված նշանագրության մասին, Մովսես Խորենացու տեղեկությունը II-III դարերում Դարսնադասց Անի ամրոցում մեհենական պատմագրության արխիվի մասին, որից Բարդաժանը թարգմանություններ է կատարել սատրերենի ու հունարենի և այլն:

Մատենագրական տեղեկություններից գառ, կարելի է ցույց տալ նաև նյութական վկայություններ նշված ժամանակաշրջանում մեհենագրության կիրառության մասին: Դրանցից է Բաղաբերդի պեղումներից հայտնաբերված III-IV դարերով թվագրվող նշանագրված քարը (նկ. 60)⁶⁷⁸: Կան մեծ թվով հստակ չթվագրվող գրակիր հուշարձաններ, որոնց մի մասը կարող է վերաբերել քննարկվող դարաշրջանին:

Մատենագրական տեղեկությունների և առկա այլ փաստերի քննությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Վանի թագավորության անկումից մինչև քրիստոնեության պետական կրոն հռչակումը Հայաստանում շարունակել է կիրառվել հայկական մեհենագրությունը՝ հայալեզու բնիկ գրահամակարգը: Օտար այբուբենների կիրառումով այն դուրս չի մղվել գործածությունից, այլ սրբազան ավանդույթի ուժով շարունակել է գործածվել մեհյաններում, ինչը, թերևս, ավելի է նպաստել, որ քրիստոնեական շրջանում մեհենագրերն ընկալվեն իբրև հմայագրեր՝ օժտված գեղարվեստական հատկություններով:

⁶⁷⁶ Պատրոս, *Հեթոթ*, 2008, էջ 209-221, լուսանկարները՝ վերջում, իբրև հավելված:

⁶⁷⁷ Արտաշեսյան դրամների մենանշանները տե՛ս Necessian, 2006, էջ 119-125, 155-156, 160-161; հմտ. Մոխրեան, 2003 (ա), էջ 162:

⁶⁷⁸ Գրիգորյան, Հախվերդյան, 2001, էջ 42:

ատկա է նաև մեր օրերում⁶⁷⁶: Հմայագրերը համապարփակ ուսումնասիրության դեռևս չեն ենթարկվել: Լ. Խաչիկյանի կողմից հրատարակված հմայական նշանագրերի ցանկի (որը կազմել է ընդամենը ութ ձեռագրերից և հմայիկներից բաղկել, իսկ դրանց թիվն անհամեմատ մեծ է) ուսումնասիրությունը ցույց է տալիս դրանց կապը հայկական մեհենագրության հետ⁶⁷⁷ (հմայագրերի համադրումը հայկական մեհենագրության մյուս փուլերի նշանների հետ տն ս աղ. 14): Հմայագրերը վերծանված չեն, սակայն դրանց մեկնաբանմանն օգնում են մեքրոպատառ հայերենով գուգահեռ գրված աղոթքներն ու բացատրագրերը, որոնցից իմացվում է տվյալ հմայիկի բովանդակությունը: Ըստ այդմ, հմայագրերի իմաստային մեկնաբանման փորձ, որքան մեզ հայտնի է, դեռևս չի կատարվել:

Ախտարական գրականության հետ են առնչվում «Վեցհազարեակ» կամ «Յոթնագրեանք» կոչվող մատյանները⁶⁷⁸, որոնք գիտական ուսումնասիրության, ըստ էության, դեռևս չեն ենթարկվել, թեպետ դրանց թիվը տասնյակներով է հաշվվում⁶⁷⁹:

Հայկական ախտարական գրականության առաջիկա ուսումնասիրությունը կարող է նպաստել հայագիտության մի շարք ճյուղերի, այդ թվում՝ հայոց իլին հավատքի, տիեզերագիտական, տոմարագիտական ու մաթեմատիկական

հայտնի մատենագիր եղիշի վերաբերմունքը հմայագիր-նշանագրեր վերատրոհների նկատմամբ «Լասն երգոց մարդկանս անընծագործության մեջ. «Նկար թե որ սցանդակազու ընդ այս մտածութիւնս անգանձ՝ աստք խորեղորդը նշանագիրս գծել, կամ մարգարեանայ առ յարայան և կրօնականց քննել, ցեղել մոլորութեան կրօնական ստորեան... այն արտաքոլ է յթիտանութեան» (Եղիշ, է. 1859, էջ 376): XIX–XX դարերում Հայաստանում հմայագրության սովորաբար վերաբերյալ կա մեծաքանակ ազգագրական գրականություն: Դրանում համազօրյա նպատակով մեկը անմամբ այլեղեկներ հմայագրերով «վարարդություն» կատարող անձնավորությունների և արձանատու եղանք, թե ինչպես են պարտ կա (2015 թ.) հավատում հմայագրերի գերբնական գործընթացը, որոնք տարբեր նպատակների համար արտագրվում էին մեծ վաճառությամբ, թեպետ այդ նշանների իմաստը արտագրողներին և ոչ մեկը չէր հասկանում:

⁶⁷⁷ Խաչիկյան, 1963, էջ 149–157; Խաչիկյան, 1995 (ա), էջ 22–27 (Լ. Խաչիկյանի քերած կյուրերի իման վրա կազմել ենք մեր աղ. 16–ը): Արև Խաչիկյանը հատուկ շնորհով է հմայիկների ժառանգմանն փառսբերելի համար ունենալը (մոտ 10 մլ բալետայանք և, երբեմն, 10 մետրից ավելի երկարությամբ), կելով, որ հմայիկներն «իրենց պատարին ձևով զգի ամփի ինչ տխիկ ներկայացուցիչներ են»:

⁶⁷⁸ Դրանք հայտնի են նաև «Դուռն ֆրեմագրեիկի», «Բոլորակ», «Արժույթական ուսումներ», «Գլխո մանուշակ», «Քիչակներսիկ», «Մանակի քերականութեան», «Շնորհքան քերականութեան» անվանումներով (Պողոսյան, 1980, էջ 140–141): Ինչպես իրագործություններն էլ Պ. Պողոսյանը, այս ֆրեմագրեանք «քերականութեան» բառը պետք է հասկանալ ոչ թե ներկայիս, այլ ամփի լայն ընկալմամբ, որն իր մեջ ներառում է գրություն նեա կարգիված ամփի ընդարձակ որդուներ (գրականություն, պատմություն և այլն), այդ թվում՝ անչայի ու ապագայի գուշակություն: «Քերական, քերականություն, քերպող, քերպողական պարհուն» համապատասխանները նախապարհունական իմաստով կազմել են զրբ հասկացության նեա՝ շատ լայն իմաստով, ներառյալ՝ հմայագրությունը:

⁶⁷⁹ Բազատություն են կազմում Պ. Պողոսյանի կրօնագրականները (Պողոսյան, 1980, էջ 143–210; Պողոսյան, 1987, էջ 88–92), որոնք կուրթի մասին տալիս են ընդհանուր տեղեկական պատկերացում: Բազմաթիվ իմաստներով չէ դրանցում հեղինակի պնդումն այն մասին, թե «Շնորհքայանք» նախը պարհունի յոթ նախապարհունիկի հարմարեցված «Վեցհազարական» է, իսկ այդ հարմարեցման ներկայումս «Մայիք Աննարցն է, ընդ որում, այն գրվել է ոչ թե Աննարցի, այլ կա պարհունների կողմից (Պողոսյան, 1980, էջ 150–162, 209–210; Պողոսյան, 1987, էջ 89–90): Փմայագրված չէ նաև մեկ այլ ուսումնասիրող՝ Վ. Միրզայանի կարծիքը, որը, քննելով կելված մեագրեանքում աղևա թխարանական գիտելիքները, եղանակացում է, թե այդ մեագրեանք «ոչ թե սխալաբար են, այլ արժեքավոր գործեր են և կարելի ունեն բազմակրթության յուր ուսումնասիրության ու արձանագրման» (Միրզայան, 2010, էջ 215–233):

գիտելիքների, մեհենագրության, «ժողովրդական» քրիստոնեության և ազգագրական զանազան հարցերի հետազոտությանը:

բ) «Նշանագիրք իմաստոնց»: Քրիստոնեական դարաշրջանում հայկական մեհենագրության դրսևորման կարևոր արտահայտություններից մեկը միջնադարյան հայկական մատյաններում «Նշանագիրք իմաստոնց» անվամբ հայտնի ցանկերի առկայությունն է, որոնցում ամեն էշանի համար տրվում է քաջատրություն: Այստեղ ևս ցավով էշենք, որ հայագիտության համար կարևոր այդ սկզբնաղբյուրները դեռևս չեն հավաքվել և դարձել համակարգված ու ամփոփ ուսումնասիրության էշյութ: Եղել են առանձին հրատարակումներ և մասնակի ամփոփման փորձեր, որոնք կներկայացնենք ստորև:

Առաջինը Մխիթար Սեբաստացու կողմից 1730 թվականին 46 էշանից բաղկացած մի ցանկի հրատարակումն էր (աղ. 20), որում դրանք ներկայացվում են իբրև հայ մատենագրության մեջ կիրառվող համառոտագրության միջոցներից մեկը⁶⁶⁰: Հաջորդը եղավ Մկրտիչ Էմինը, որը Լազարյան ճեմարանի թիվ 141 ձեռագրի 332 նշանագրերից առանձնացնելով՝ հրատարակեց 84 նշանից բաղկացած մի ցանկ (աղ. 1)⁶⁶¹: 1876 թ. Փարիզի Ազգային գրադարանի հայկական ձեռագրերից մեկի 257 նշան պարունակող, 4 էշում ամփոփված մի նշանացանկ հրատարակեց Պոլին Մարտինը⁶⁶²: Այնուհետև, քաղելով Տիգրանակերտի ձեռագրերից, 120 նշանագրերից բաղկացած մի ցանկ հրատարակեց Գարեգին Մրվանձտյանցը⁶⁶³:

1898 թ. առանձին գրքույկով 511 նշանագրերի մի ցանկ հրատարակեց Կեսարիայի հայոց առաջնորդ Տրդատ Պայանը⁶⁶⁴: Շատ ավելի փոքր ցանկ՝ բաղկացած 25 նշանագրերից, 1902 թ. հրատարակեց Իսահակ Մրապյանը⁶⁶⁵:

Ֆրեդերիկ Մուրատը հրատարակեց մի նոր «Նշանագիրք իմաստոնց» ցանկ, որը տեղ է գտել Բեռլինի թագավորական մատենադարանում պահվող թիվ 805 ձեռագրում⁶⁶⁶: Այս ցանկի նշանագրերի մեծ մասը, սակայն, մաշտոցյան տառաններից ստեղծված կցագրեր ու համառոտագրության նշաններ են:

«Նշանագիրք իմաստոնց» ցանկերում ներկայացվող նշանագրերի ամենամեծ ժողովածուն կազմել է Հր. Աճառյանը: Նա ի մի է թերել վերոնշյալ հրատարակումները, դրանց ավելացրել էշմիաձևի ձեռագրատան ութ ձեռագրերում (որոնք ներկայումս պահվում են Երևանի Մատենադարանում) և Թավրիզի Առաջնորդարանի թիվ 14 ձեռագրում առկա նշանագրերի ցանկերը, ինչպես նաև Սեբաստիայի «Նշտակ» իմորատիպ թերթում հրատարակված 389 նշա-

⁶⁶⁰ Մխիթար Սեբաստացի, 1730, էշ 481:

⁶⁶¹ Չատուր, 1896, էշ 223-230: Հնուագույձմ Իսահակ Հաբուսյանյանն այդ ցանկը հրատարակեց ամբողջությամբ:

⁶⁶² Martin, 1876, էշ 456-462 (ձեռագրի էշեղից մեկը տե՛ս հավելվածում, նկ. 81):

⁶⁶³ Մրվանձտյանց, 1879, էշ 337-340: Մրվանձտյանց, 1982, էշ 320-323 (տե՛ս հավելվածում, նկ. 82):

⁶⁶⁴ Պայան, 1898, էշ 5-13, առաջտակ Ա-Ը: Նշանագրերի ներկայացված ժողովածուն զերազանցապես կազմված է մի ձեռագրում տեղ գտած «Նշանագիրք և համառոտագրությունը» ցանկից, որը կազմվել է երկու այլ ձեռագրերում գտնվող նշանագրերով:

⁶⁶⁵ Մրապյան, 1902, էշ 201-202:

⁶⁶⁶ Մուրատ, 1903, էշ 5-9, 144-146, 333-335:

նագրերը՝ քաղված երկու ձեռագրերից, և կազմել 509 նշանագրերից կազմված իր ցանկը: Հր. Աճառյանը քննարկում է միջնադարյան մատյաններում պահպանված նշանագրերի նախամաշտոցյան ծագում ունենալու խնդիրը. վերլուծում իր հավաքած 509 նշանագրերը (որոնցից 332-ը համարում է ստեղծված մաշտոցյան տառաձևերից, 124-ը՝ անհայտ ծագման, 21-ը օտար ծագումով, իսկ բուն պատկերագիրը՝ 32) և եզրակացնում, որ դրանք ստեղծվել են հետմեսրոպյան շրջանում⁶⁸⁷: Նա իր հավաքած 509 նշանագրերից 332-ը համարում է մաշտոցյան տառերից առաջացած, ուստի գտնում է, որ դրանք կապ չունեն նախամաշտոցյան դարույթյան հետ⁶⁸⁸:

Հր. Աճառյանից հետո «Նշանագիրք իմաստեղ» ցանկերի ուսումնասիրության գործում կարևոր ներդրում ունեցավ Ա. Գ. Աբրահամյանը⁶⁸⁹: Նրա կատարած քննությունը ցույց տվեց, որ նշանագրերի ցուցակներ ունեցող ձեռագրերը հստակորեն բաժանվում են երկու խմբի, որոնք պայմանականորեն կոչում է «կիլիկյան» և «Երզնկայի»: Առաջին խմբի նշանագրերի հիմնական մասը ստեղծված է մաշտոցյան տառերից, մինչդեռ երկրորդի գերակշիռ մասը (ավելի քան 180 գաղափարագիր) կապ չունի մեսրոպյան այբուբենի հետ և քաղվաթիվ զուգահեռներ ունի հին աշխարհի մի շարք գրային համակարգերում⁶⁹⁰:

Նշեմք, որ այսօր առկա են չիրատարակված ու չուսումնասիրված ձեռագրեր, որոնցում կան նշանագրերի ցանկեր: Դրանց բոլորի համակարգված ու քաղվակողմանի⁶⁹¹ ուսումնասիրությունը ևս մնում է ապագայի խնդիր:

Նշանագանկերը կարելի է օգտագործել հայկական մեհենագրության վերածանության ընթացքում որպես օժանդակ աղբյուր, սակայն հարկավոր է դրանց նկատմամբ ունենալ խիստ զգուշավոր մոտեցում՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ: Նախ, դրանց մեջ մեծ թիվ են կազմում մաշտոցյան այբուբենի հիմամբ ստեղծված պարզ ու փակագիր համատոտագրություն-նշանները, որոնք կապ չունեն մեհենագրության հետ: Երկրորդ՝ պետք է հաշվի առնել, որ դրանց իմաստները կարող էին փոփոխություն կրել՝ հարմարվելով նոր, քրիստոնեական միջավայրի մտածողությանը: Երրորդ՝ պահպանելով իմաստը՝

⁶⁸⁷ Աճառյան, 1984, էջ 408-430, ցանկը գեներալում է գրքի վերջում իբրև հավելված:

⁶⁸⁸ Աճառյան, 1984, էջ 425:

⁶⁸⁹ Հեղինակի կատարած աշխատանքը հանգամանորեն տն/ս Աբրահամյան, 1959, էջ 139-173; Աբրահամյան, 1973, էջ 201-243: Երև Հր. Աճառյանն ուսումնասիրել էր տառը ձեռագրերում ամփոփված նշանագրերի ցանկեր, սակայն Ա. Գ. Աբրահամյանը հետազոտության կուրս դարձրեց այդպիսի 49 նշագիր մատյաններ՝ հանգամանորեն տաղով դրանց անձնագրային տվյալները:

⁶⁹⁰ Աբրահամյան, 1959, էջ 144-165:

⁶⁹¹ Բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը թելադրված է նախնաստ նշանագրերի քաղվանատույթամբ: Օրինակ, երկնային յուստուհների նշանների ստաղգիտական քննարկում ցույց են տալիս հենց տվյալ յուստուհ, ժամանակը կեղծու համար՝ շարպոխ այն օրը, քոջ համազատաբանում է աղ յուստուհին, իսկ աղբիմահան ձեռագրերում՝ աղ յուստուհին համազատաբանող մտառը (օրինակ՝ Արեզակ - կիրակի - ունի, Հրատ - երեքշաբթի - երկուս, Լուսնույալ - ինձշաբթի - անալ և այլն, տն/ս՝ Լավաղայրյան, 1940, էջ 24-25): Աստղագրականության արևելիք քննարկում, տրամաբանական է, որ Լուսին նշանագիրը ցույց կտա այն գեղամեր հասկանալիքերով օժտում է տվյալ յուստուհին իր ազդեցության ոլորտում ձեռնդին...

նշանը կարող էր կոչվել նոր, օտար լեզվից փոխառյալ բառով, իսկ հնում գործածված տերմինը մոռացվեր: Այս հանգամանքը կարևոր է հատկապես վանկագրության (ինչուևագրության) բացահայտման տեսանկյունից, քանի որ սկզբնահեյուստության (ակրոֆոնիայի) կանոնի համաձայն, որևէ բառ արտահայտող նշանը վանկային գրության մեջ ցույց է տալիս այդ բառի առաջին վանկը (մասը), ուստի կարևոր է իմանալ ամեն մի բառ-գաղափարագրի ճշգրիտ հնչողությունը: Եվ վերջապես, դարեր շարունակ արտագրվելու հետևանքով նշանների տեսքը կարող էր զգալի փոփոխության ենթարկվել: Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելու պարագայում միայն՝ նշանագրերի ցանկերը կարելի է օգտագործել իրրև վերծանության օժանդակ աղբյուր:

գ) Արհեստագործ վարպետների նշաններ: *Պատկերագրության զարգացած փուլի՝ գաղափարագրության դրսևորումներից մեկը դրոշմների կամ տոհմական նշանների ի հայտ գալն էր: Դրանք ներկվում, խազվում կամ փորագրվում էին տների պատերին, իսկ այդ նշանների առկայությունը որևէ իրի, սպրանքի վրա ցույց էր տալիս վերջինիս պատկանելությունը տվյալ տան կամ տոհմի անդամին: Այդպես ծագեցին արհեստագործ վարպետների նշանները, որոնք դարեր շարունակ անփոփոխ կրում էին նույն տոհմի ներկայացուցիչները (հին և միջին դարերում արհեստները, սվոթաբար, ժառանգական էին): Միջնադարի հայկական շինությունների պատերին պահպանվել են մեծ թվով վարպետանշաններ⁶⁹², որոնց մի մասը նույնությամբ առկա է նաև Վանի թագավորության ժամանակաշրջանում (աղ. 14):*

Արհեստագործ վարպետների նշանների լիակատար ու համակարգված ուսումնասիրությունը ևս մնում է ապագայի գործ: Այն կնպաստի ոչ միայն հայկական շինարարական արվեստի պատմության բազմաթիվ հարցերի, այլև հայկական մեհենագրության ուսումնասիրությանը:

Նշենք, որ ուշագրություն է դարձվել նաև հայկական ճարտարապետության մեջ կիրառված խորհրդանշաններին և խորհրդանշանային հորինվածքներին, որոնք նույնպես ծագումնաբանորեն կապվում են վաղնշական ժամանակների հետ⁶⁹³:

դ) Նշանագրեր քրիստոնեական տաճարների պատերին: Քրիստոնեական դարաշրջանում նախաքրիստոնեական նշանագրերի ճակատագրում նկատվում է ուշագրավ մի երևույթ ևս: Այդ նշանագրերը հայտնվում են քրիստոնեական տաճարների պատերին: Դրանց ուսումնասիրությունից ակնհայտ է, որ եկեղեցիների կառուցման ընթացքում ոչ թե օգտագործվել են նախապես նշանագրեր կող թարեր, այլ նշանագրերը քանդակվել են կառուցումից հետո: Այսինքն՝ մենք գործ ունենք քրիստոնեական դարաշրջանում նախաքրիստոնեական նշանագրերի կիրառության փաստերի հետ:

⁶⁹² Արևմտյան Հայաստանի հուշարձանների նշանները քաղվ են Դեռճ, 1982, էջ 45, իսկ Արևելյան Հայաստանից՝ Մնացականյան, 1958, էջ 101, 104-ից:

⁶⁹³ Տե՛ս, օրինակ, Հայկազուն (Կրիգորյան), 2005 աշխատությունը:

Մեր ոչ վերջնական տվյալներով միայն Հայաստանի Հանրապետության տարածքում այդ երևույթը նկատվում է Երեբունյի (V դ.)⁶⁶⁴, Պտղնավանքի (VI դ.)⁶⁶⁵, Սբ. Հովհաննես (VII դ.), Սբ. Գայանե (VII դ.)⁶⁶⁶, Արուճի (VII դ.)⁶⁶⁷, Ծենիկի Սբ. Աստվածածին (VII դ.)⁶⁶⁸, Բջնիի Սբ. Աստվածածին (XI դ.)⁶⁶⁹ տաճարների, Սելիմի քարավանատան և Դիլիջանի եկեղեցիներից մեկի⁷⁰⁰ պատերին⁷⁰¹: Նման նշաններ կան նաև Անիի Կաթողիկե մայր տաճարի պատերին (XI դ.)⁷⁰²:

Այս երևույթն, անհասկանալիորեն, գրեթե անուշադրության է մատնվել: Այն կարող էր չգրավել նաև մեր ուշադրությունը, եթե տարբեր եկեղեցիների պատերին հանդիպող նշանները չլրկնվեին և նախապես ծանոթ չլինեին նախաքրիստոնեական շրջանից:

Հայաստանի ժայռապատկերներում հանդիպող մաշտոցյան տառանների նմանակներին նվիրված հոդվածում Ռ. Իշխանյանը Ս. Պետրոսյանի օգնությամբ վկայակոչում է Պտղնավանքի և 1332 թ. կառուցված Սելիմի քարավանատան սրբատաշ պատերին արված ժայռապատկերանման նշանները և եզրակացնում. «Ժայռապատկերման մշակույթը հնագույն ժամանակներից գալով հասել է մինչև առնվազն XIV դար... Նշանակում է այդ մշակույթը հնուց ի վեր հայերի մեջ է սերնդն սերունդ փոխանցվել, հերթանսական երկարատև

⁶⁶⁴ Հինգերորդ դարի տաճարի արևմտյան պատին փորագրված է քարայծի պատկեր (Սիմոնյան, 1972, էջ 56):

⁶⁶⁵ Պտղնավանքի պատերի նշաններն սեղանն ակնառու են, որ նկատվել են շատ-շատերի կողմից (յուսակողմ գոտայնեղում դրանք հասնախ որակվում են իբրև «արևախաններ»), սակայն չեն դարձել հասուն ընկույթյան առարկա: Քննարկվող հուշարձանների մեջ այն ամենամոծ թվով նշաններ ունեցող տաճարն է (ստաջին անգամ գիտական շրջանառության մեջ ենք դրել մենք՝ Մովսիսյան, 2003 (b), էջ 134-138):

⁶⁶⁶ Զարմանքով պետք է արձանագրել, որ Սբ. Հովհաննես և Սբ. Գայանե տաճարների՝ մեր նաբարաբաղնույթյան առաջի ուսումնասիրված հուշարձանների պատերին առկա նշանները նա անուշադրության են մատնվել: Դրանք նա ստաջին անգամ նկատել և գիտական շրջանառության մեջ ենք դրել մենք (Մովսիսյան, 2003 (b), էջ 134-138):

⁶⁶⁷ Արուճի նշաննեցը մեր ուշադրությանը նկատվեց Քրիստա Գառաբարյանը, որի կիմնած ինտերնետային կայքում (www.virtuallarmenia.am) գիտերված են դրանցից երկուսի լուսանկարները: Հնդհամուք ամանք, Արուճում կա նման հինգ նշան (Մովսիսյան, 2003 (b), էջ 138, նկ. 69):

⁶⁶⁸ Եկեղեցու պատին կա մի մոծ նշան, որի մասին տեղիկաշատը Կարեն Ռոխտարյանից (նկ. 83):

⁶⁶⁹ Գրիգոր Մազիսաղոսի պատմքերով 1031 թ. կառուցված Սբ. Աստվածածին տաճարն ակնի ուշ շրջանում անդի քարերով պարսպապատվում է, ինչի արդուքում շատ էին մշակված քարեր նայունի են պարսպի մեջ (սպ թվում՝ նաև մի գերեզմանաքար): Եկեղեցու մուտքի աջ և ձախ պատերին առկա են էին փորագրություններ, որոնք նա միջնադարում ժայռապատկերման ակնադույթների շարանակարություն կարել է համարել (տե՛ս Մովսիսյան, 2003 (b), էջ 134, նկ. 64):

⁷⁰⁰ Վերին երկուսի մասին տեղիկությունը տե՛ս Ուորտոուսան, 1949, էջ 26-27:

⁷⁰¹ Նշվածնեցին, որչափի վերաբանությունը, կարելի է ավելացնել նաև ներկայումս Գերաբաղանքի (Արիճանքի) կամարաղաղ մուտքի ձախ կողմում տեղադրված անդիվածային պատկերով (կամ, գուցե, կրագրված պատկերներով) քարը (Մովսիսյան, 2003 (b), էջ 134, նկ. 65): Այն մեք ուշադրությանը կուսվեց Կարեն Ռոխտարյան, որն իր նկրթին քարի մասին տեղիկացել էր երկրորդ Հակոբ Տոնակալանցից (նկատել է 1991 թ.): Զննույն համար քարի ծագումը՝ մեք դիմեցինք Ռեդարյանի կողմից գնանալը Եղիշի քահանա Մարգարյանին, որից տեղիկացանք, որ այն կերելուց քակում նայունի է 1980-ական թթ. անդի տեղանց մի երկուարտից նուստ՝ զանախիթով թունակայծի ժայռակտը և կից կառույցները: Քանի որ տաճարի մերձակայքում կան նախաքրիստոնեական ընդակտեղիներ, հնարավոր է նաև, որ քարի փորագրությունը կառուցված լինի նշված շրջանում:

⁷⁰² Դրանք ստաջին անգամ նկատելիք ու լուսանկարելիք 2007 թ. մեր սցիլուրյան ժամանակ (նկ. 84):

շրջանում էլ հայկական է եղել և պահպանվել է նաև քրիստոնեական ժամանակաշրջանում»⁷⁰²:

Երեբունյքի, Պտղնավանքի և Բջնիի տաճարների կապակցությամբ, անդրադառնալով ժայռապատկերներ հիշեցնող նշաններին, ժայռապատկերաբան Կարեն Թոխաթյանը կարծիք է հայտնում, որ «սրանք հին, «դասական» ժայռապատկերներ չեն, սակայն վկայություն են վաղ միջնադարում ժայռապատկերման ախանդույթների հարատևման»⁷⁰³:

Մենք ուսումնասիրեցինք Պտղնիի, Սբ. Հովհաննես, Սբ. Գայանե, Արուհի, Շենիկի Սբ. Աստվածածին, Անիի Կաթողիկե տաճարների նշանները: Պտղնավանքում, որը մեզ հայտնի ամենամեծաթիվ նշաններ ունեցող տաճարն է, նշաններով է պատված հյուսիսային պատի արտաքին կողմը (նկ. 66 a և b): Առանձին նշաններ կան հարավային պատի երկու կողմերում (նկ. 66 c):

Սբ. Հովհաննես տաճարի բոլոր նշանները պահպանվել են ներսի կողմում (դրսի պատերին պահպանված ցինեղ գույն հետևանքն է վերանորոգումների ընթացքում ոչնչանալու): Ուշադիր զննման արդյունքում գտանք տասնմեկ նշան (նկ. 67):

Ինչպես վերոնշյալ երկու տաճարների, այնպես էլ Սբ. Գայանեի նշանները պահպանվել են ամենահին քարերի վրա: Վերջինիս հյուսիսային պատի դրսի կողմի աջ մասում պահպանված քարերի նշանները հիերոգլիֆ արձանագրության տպավորություն են թողնում (նկ. 68 a): Բացի դրանից, առանձին նշաններ կան նույն պատի կենտրոնում և ձախ մասում, ինչպես նաև արևելյան պատի դրսի երեսին (նկ. 68 b և c): Ակնհայտ է, որ նշանների զգալի մասը չի պահպանվել:

Չորս պատկերանշան է պահպանվել Արուհի տաճարի (նկ. 69 a-d) և մեկ նշան («խոր») տաճարից ոչ հեռու գտնվող պալատի պատին⁷⁰⁴ (նկ. 69 e):

Անիի Կաթողիկե մայր տաճարի պատերին նկատեցինք վեց նշան, որոնցից հինգը՝ դեպի վեր ուղղված նետաղեղ հիշեցնող, մեկը՝ արևանշան (նկ. 84):

Պտղնիի, Սբ. Հովհաննես, Սբ. Գայանե, Արուհի և Անիի Կաթողիկե տաճարների նշանների դասակարգումը և համադրումը ցույց են տալիս, որ ամենից շատ գործածվել են «արևանշանները» (ընդ որում մի քանի տարբերակներով), այժապատկերները և դեպի վեր ուղղված նետաղեղ հիշեցնող նշանը: Այս նշանների նախաքրիստոնեական բնույթը, ինչպես նաև դրանց քանդակման «ժայռապատկերային» եղանակը կասկած չեն թողնում, որ դրանց հեղինակները նախաքրիստոնեական ժամանակներից շարունակվող աշխարհայացքի կրողներ են եղել:

Ինչո՞վ կարող է բացատրվել այս երևույթը:

⁷⁰² Իշխանյան, 1987, էջ 21–22:

⁷⁰³ Թոխաթյան, 2003, էջ 82:

⁷⁰⁴ «Պալատի պատի նշանը» Մարտիրոս, 1987, էջ 72, բոլոր հինգ նշանները՝ Մուխիբյան, 2003 (b), էջ 138, նկ. 69:

Հայտնի է, որ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուն մեծ դիմադրություն ցույց տվեցին նախաքրիստոնեական հավատքի կրողները, և տեղի ունեցած քաղաքացիական պատերազմում զոհվեց «ժույժ քաջամարտիկ Արման քրմապետը»⁷⁰⁶: Քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո էլ նախկին հավատքի կողմնակիցները ժամանակ առ ժամանակ գլուխ էին բարձրացնում. այդ մասին բազմաթիվ վկայություններ կան մեր մատենագրության մեջ⁷⁰⁷: Նախկին կրոնի զգալի տարածում ունեցող զաղափարախոսական հիմնադրույթներն արտահայտվում էին նաև աղանդավորական շարժումների տեսքով: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է արևորդիների և բոնդրական շարժումներին⁷⁰⁸: Եվ չի բացառվում, որ այս նշանների քանդակողները լինեին հենց նրանք կամ հայոց նախաքրիստոնեական հավատքի այլ կրողներ:

2003 թ. լույս տեսած մեր «Հայկական մեհենագրություն» գրքում, անդրադառնալով հայկական քրիստոնեական տաճարների պատերին նախաքրիստոնեական նշանագրերի խնդրին, այն դիտարկել էինք միայն իբրև հայաստանյան երևույթ: Հետագա ուսումնասիրություններով, սակայն, պարզեցինք, որ այդ երևույթն առկա է Հայաստանի սահմաններից շատ հեռու: Մասնավորապես, տարբեր հնավայրեր մեր այցելությունների ընթացքում արևանշաններ և հարակից նշաններ հանդիպեցինք Իրանում (Փասարգաղում, Կյուրուս Մեծի դամբարանի հարևանությամբ, տե՛ս նկ. 85, Կանգավարի Անսահիտ դիցուհու տաճարի ավերակներում⁷⁰⁹, նկ. 86), Սիրիայի հյուսիս-արևմտյան հնավայրերում, մեծ թվով նշաններ են հիշատակվում Դերբենդի շրջանում, որոնց հրատարակիչը դրանք համարում է «զրադաշտական նշաններ»⁷¹⁰:

Արդյո՞ք նշված տարածքների բոլոր նշանները պետք է կապել զրադաշտականության հետ, թե՞ դրանք կարող են ունենալ այլ մեկնաբանություն(ներ). հարցի պատասխանը կարող են տալ միայն հետագա համակողմանի ուսումնասիրությունները:

և) Նշաններ դրամների վրա: Մաշտոցի գյուտից առաջ Հայաստանում սևիական գրի ու դպրության մասին տեղեկություններից մեկը պատկանում է Վարդան Արևելցուն (XII–XIII դդ.), ըստ որի Լևոն Մեծ արքայի օրոք (1187–1219 թթ.) Կիլիկյան Հայաստանում գտնվել է դրամ՝ հեթանոս հայ ար-

⁷⁰⁶ Շուֆան Մամիկոնյան, 1941, էջ 102–103; Հովհան Մամիկոնյան, 1989, էջ 44:

⁷⁰⁷ «Չլատակված նման դեպքերից առաջինի՝ Տիրան արքայի օրոք (338–350 թթ.) նախաքրիստոնեական հավատքի ու բարբերի վերականգնման մասին հաղորդում է Փափառու Ռոզանդը (դպր. 9, գ. ԺԳ): Հնապարհը գործածող հնադարյանների մասին մատենագրական տեղեկությունները տե՛ս Խաչիկյան, 1995 (ա), էջ 16–19 (և հրվող աղբյուրները):

⁷⁰⁸ Արևորդիների մասին տե՛ս Բարտուռ, 1967, էջ 102–112: Հատկապես է. որ բոնդրականների քննադատը Գրիգոր Մազաբերու Պանգոլունին գրում է «Եւ անս յայտնի է զի որդեաքը ևն է անճեղճութեանս և անքանապա չորին է սոնն յակիք, հոս մէք Արամնան գնչն ևնք և աստատվ ասմանս ևնք» (Գրիգոր Մազաբերու Պանգոլունի, թուրք ԿԷ, 1910, էջ 159):

⁷⁰⁹ Կանգավարի Անսահիտ դիցուհու տաճարի նշաններին, նաև դրանց զուգանշաններին նառուկ ուշադրություն է դարձնում Ford, 1996 աշխատության էջերում:

⁷¹⁰ Գալուստ, 2010, էջ 104–110 (նշանների մի մասը տե՛ս նկ. 87):

քաների հայերն գրությանը⁷¹¹: Կիլիկյան դրամների ուսումնասիրությանը պարզվում է ուշագրավ մի երևույթ. հենց Առև Մեծի ժամանակներից սկսած կիլիկիահայ դրամների վրա հայտնվում են նշաններ, որոնք կապ չունեն ոչ հայկական, ոչ եվրոպական, ոչ՝ Առաջավոր Ասիայում այդ ժամանակաշրջանում գործածված այբուբենների հետ: Մենք հավաքեցինք մինչ օրս հայտնի դրամների նշանները (որոնց թիվը հասնում է չորս տասնյակի) և համադրեցինք հայկական մեհենագրության բոլոր փուլերի ու դրսևորումների գրային միավորների հետ⁷¹²: Համադրության արդյունքը (աղ. 14) բավական համոզիչ կերպով ցույց է տալիս հայկական մեհենագրության և Կիլիկյան Հայաստանի դրամների ժառանգական կապը, որի բացատրման համար խիստ կարևորվում է Վարդան Արևելցու վերոհիշյալ հաղորդումը: Նախաքրիստոնեական շրջանից դրամները կամ դրամանման իրերը (երկկողմ կնիքներ, մեդալիոններ և այլն) մինչև XII–XIII դարերը կարող էին հասնել Հայաստանում պահպանված նախաքրիստոնեական հավատքին ու ավանդույթներին հավատարիմ մնացած համայնքների միջոցով⁷¹³, իսկ նրանց նշանները պետք է որ տեղափոխված լինեն կիլիկյան դրամների վրա՝ առաջին հայ արքաների («վռապաշտ հայկազանց») և Կիլիկիո հայ տիրակալների ժառանգական կապն ընդգծելու միտումով:

զ) Մարմնին դաջված մոզական նշաններ: Ըստ հայտնի բանահավաքազգագրագետ Գարեգին Մրվաննայանցի հաղորդման՝ մինչև XIX դարի վերջերը Հայաստանի հարավ–արևմուտքում (Տիգրանակերտի շրջանում) պահպանվել էին նախաքրիստոնեական շրջանից եկող շատ ավանդույթներ, որոնցից մեկը մարմնի տարրեր մասերին մոզական համարվող նշանների դաջումն էր⁷¹⁴ (նկ. 70): Ակնհայտ է սրանց կապը մեհենագրության հետ: Մեհենական նշանների՝ մինչև մեր ժամանակները հասնող կիրառության այս ասպարեզը կարելի է համարել հնայական գրության դրսևորման մի ձև:

է) Նախաքրիստոնեական նշանագրության հարստումը հայոց զարգարվեստում: Չարդանախշերը, սկզբնավորվելով վաղնջական ժամանակներում, գեղագիտականից բացի՝ ունեին նաև իմաստային, գաղափարաբանական նշանակություն: Հին ու միջին դարերում արհեստները, որպես օրինաչափություն, փոխանցվում էին ժառանգաբար. նույնպիսի ճանապարհով զոյառուում էին նաև իմաստակիր–զարդանախշերը: Եվ պատահական չէ, որ մի

⁷¹¹ Վարդան Արևելցի, գլ. ԻԾ, 1861, էջ 70:

⁷¹² Միջոցով Չամչյանը, ընկնելով Վարդան Արևելցու այս տեղեկությանը, ենթադրում է, որ այդ գրեթե կարող էին լինել ըստ ցույց տվող նշանագրեր, որոնք կաշին էին մեռագրերում և գործածական էին նաև իր ժամանակ՝ XVIII դարում (Չամչյան, 1985, էջ 760):

⁷¹³ Մովսիսյան, 1996 (b), էջ 68–71; Մովսիսյան, 2003 (b), էջ 133, 139: Կիլիկիո հայկական դրամների նշանները քաջի ենք դասել ամենախնամար ժողովածուից (Bedukian, 1979):

⁷¹⁴ Նման ենթադրության փոխառյալն օրինակ է Աբրահ Ենդրեյաու կարոնիկության շրջանում Հայաստանի հարավ–արևմտյան Սամուստ քաղաքում պահպանված արևորյինների համայնքը, որում կենտունակ էին մնացել նախաքրիստոնեական նախաժամեր ու ավանդույթները (ճակատնառ տ/ս Եզրուտ, 1967, էջ 102–112):

⁷¹⁵ Մրվաննայանց, 1982, էջ 438–439:

չարք խորհրդանշաններ, որոնք կիրառվել են մեհենագրության մեջ, գոյատևում են հայոց զարդարվեստում:

Հայոց զարդարվեստում գործածված զաղափարանշանների իմաստի, ծագումնաբանության և այլ խնդիրների ուսումնասիրությունը, անշուշտ, կարող է դասնալ բազմաթիվ հատորների կյուֆ⁷¹⁵: Հատուկ ուսումնասիրության առարկա պետք է դառնա իմաստակիր-զարդանախշերի և հայկական մեհենագրերի կապը: Այս ուղղությամբ կատարվել են միայն նախնական քայլեր:

Վերջին տարիներին ուշադրություն դարձվեց հայկական գորգարվեստում կիրառված իմաստակիր-զարդանախշերին, ինչի արդյունքում ակնհայտ դարձավ դրանց ծագումնաբանական կապը Հայաստանի ժայռապատկերների, պեղված հնագիտական իրերի (որոնցից հնագույնները թվագրվում են Ք.ա. IV հազարամյակով) և միջնադարյան կիրառական արվեստի հուշարձանների նշանների հետ⁷¹⁶:

Անդրադարձ է եղել նաև կարպետների⁷¹⁷, գուլպաների ու սոնապանների զարդանախշերին, որում ընդգծվել է դրանց ընդհանրությունը Ք.ա. III հազարամյակի խեցեղենի նշանների հետ⁷¹⁸:

Անշուշտ, նշվածներով չի սահմանափակվում հայոց կիրառական արվեստում իմաստակիր-զարդանախշերի և հայկական մեհենագրերի կապը, ինչը, կարծում ենք, առաջիկայում կդառնա լուրջ ուսումնասիրության առարկա:

Այսբանով առայժմ սահմանափակվում են հայկական մեհենագրության քրիստոնեական դարաշրջանում ունեցած մեզ հայտնի դրսևորումները, սակայն չի բացառվում, որ առաջիկայում հայտնի դառնան նորերը⁷¹⁹:

⁷¹⁵ Այս առումով կիսանախի ուսումնասիրություն է Ա. Շ. Մանգալբախյանի «Հայկական զարդարվեստ. կիսանախի մոտիվների ծագումն ու զաղափարական բովանդակությունը» (Ե., 1955) կրթության նախարարությունից կազմակերպված կուրսն ու երկրագծված ուղղությունների մեծ հետազոտությունը են բացում հետագա ուսումնասիրությունների համար:

⁷¹⁶ Սվանեայան, 2003, էջ 12-14; Ստեփանյան, 2003, էջ 302-308; Ohanianian, Awanesian, 2007, հասկազան, էջ 103-189:

⁷¹⁷ Հայկական կարպետների զարդանախշերի մասին տե՛ս Դավթյան, 1975 աշխատությունը:

⁷¹⁸ Սվանեայան, 1967, էջ 250-257:

⁷¹⁹ 1987 թ. Առնապին Դարսարազի Մարտակերտի շրջանի գտնվել կին երկաթե սեր ու դաշույններ, որոնցից երկրի վրա կալին բազմաթիվ նշաններ: Իրերը գտնուող պետք է դրանք համեմատ Հայաստանի պատմության պետական թանգարան: Ներկայումս մեզ հայտնի չէ դրանց գտնվելու վայրը: Նման գտածոներ կարող են հայտնի դառնալ հետագայում ևս:

ՆԱԽԱՄԱՇՏՈՑՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ
ՀՍԱԿ ՉԹՎԱԳՐՎՈՂ ԵՎ ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ
ՆՇԱՆԱԳՐԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

1. ՀՍԱԿ ՉԹՎԱԳՐՎՈՂ ՆՇԱՆԱԳՐԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Հուշարձանների այս խումբը բավականին բազմազան է: Դրանց մեջ պայմանականորեն մտցրել ենք և՛ նշանակիր վիշապաքարերը, որոնց թվագրման ստորին սահմանը Վանի թագավորության ժամանակաշրջանն է, և՛ օձապատկեր գերեզմանաքարերը, որոնք, թերևս, միջնադարի գործեր են, սակայն իրենց պատկերագրության մտածողությամբ ունեն ակնհայտ նախաքրիստոնեական բնույթ:

Նշանագրեր վիշապաքարերի վրա: Վիշապաքարերը սովորաբար թվագրվում են նախաքրիստոնեական դարաշրջանով՝ Ք.ա. III–II հազարամյակներով, ուստի հստակորեն չի կարելի ասել՝ դրանց նշանները պետք է դասվեն վաղորոնգնդարյան նշանագրության՝ թե՛ գծային գրերի մեջ:

Մեզ հասած վիշապաքարերի մեծամասնության վրա առկա են միայն պատկերաքանդակներ: Մակայն կան նաև նշանագրված վիշապ–կոթողներ: Դրանցից հատուկ հիշատակելի են Ջավախքում գտնվող Գանձայի (նկ. 71 ա)⁷²⁰ Դրանցից հատուկ հիշատակելի են Ջավախքում գտնվող Գանձայի (նկ. 71 ա)⁷²⁰ և Գեղամա լեռներից Երևան տեղափոխված ու ներկայումս Ճարտարապետության ազգային թանգարան–ինստիտուտի բակում գտնվող (նկ. 71 b)⁷²¹ վիշապաքարերը:

Վիշապաքարերի, Ք.ա. III–II հազարամյակների հնագիտական իրերի նշանների և միջնադարյան մատյաններում պահպանված նշանների ընդհանրությանը ուշադրություն է դարձրել Հ. Ա. Մարտիրոսյանն իր վերոնշյալ աշխատություններում: Վիշապաքարերի պատկերների և նշանագրերի լիակախատություններում: Վիշապաքարերի պատկերների և նշանագրերի լիակախատությանը ուշադրություն է դարձրել Հ. Ա. Մարտիրոսյանն իր վերոնշյալ աշխատություններում: Վիշապաքարերի պատկերների և նշանագրերի լիակախատությանը ուշադրություն է դարձրել Հ. Ա. Մարտիրոսյանն իր վերոնշյալ աշխատություններում: Վիշապաքարերի պատկերների և նշանագրերի լիակախատությանը ուշադրություն է դարձրել Հ. Ա. Մարտիրոսյանն իր վերոնշյալ աշխատություններում:

Օձապատկեր գերեզմանաքարեր: Առանձնահատուկ ուշադրության արժանի այս հուշարձանների հայտնաբերման պատիվը պատկանում է Ճարտա-

⁷²⁰ Ստեփան, 2001, էջ 159–163 (և երկված գրականությունը):

⁷²¹ Վիշապ–կոթողը, ըստ Ճարտարապետության ազգային թանգարան–ինստիտուտի տեղերն Ա. Գրիգորյանի հաղորդման, պատկեր է փոխառվել Գեղամա լեռներից (Մեմուարյան, 2003 (b), էջ 143–145):

րապետության ազգային թանգարան-ինստիտուտի տնօրեն Աշոտ Գրիգորյանին: 1990 թ. նա հրատարակեց Արովյանի ենթաշրջանի Բալահովիտ գյուղում հայտնաբերված երկու նշանակիչ շիրմաքարերը (նկ. 75)²²², իսկ ավելի ուշ մեզ տեղեկացրեց, որ Ավանի գերեզմանոցում, Երկրորդ աշխարհամարտի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողի հարևանությամբ կան համանման գերեզմանաքարեր՝ տրամադրելով մի լուսանկար (նկ. 76): Ժայռապատկերաբան Կ. Թոխաթյանի ընկերակցությամբ լինելով նշված տեղում՝ գտանք յոթ օձապատկեր գերեզմանաքարեր: Այսպիսով՝ մեզ հայտնի դարձան ինը նման հուշարձաններ:

Այս հուշարձանների առանձնահատկությունը, ինչպես նշվեց, կայանում է նրանում, որ միջնադարյան հուշարձաններ լինելով՝ դրանք պատկերագրության մտածողությամբ ակնհայտ նախաքրիստոնեական բնույթի են: Անգն աչքով էլ նկատելի է այս քարակոթողների պատկերների և նշանների ընդհանրությունը Մեծամորի, Կաքավաձորի, Կարմիր բերդի նախաքրիստոնեական ժայռապատկեր հուշարձաններին:

Ում են պատկանել այս շիրմաքարերը. նախաքրիստոնեական քրմական տների շատավիղների՞ն, միջնադարյան աղանդավորների՞ն, թե՞ բոլորովին անհայտ այլոց: Դժբախտաբար, գերեզմանաքարերից շատերը տեղաշարժվել են մոտակայքում շինարարական աշխատանքներ կատարելու արդյունքում, այլպես դրանց պեղումները կարող էին մի շարք լուսարանումներ բերել մեզ անհայտ մի շարք հարցերում:

Այսքանով չի ավարտվում հստակ թվագրություն չունեցող հուշարձանների ցանկը: Այդ շարքում կարելի է հիշատակել, օրինակ, «Կարմիր քարանձավից» դեպի Գեղամավան քարձրացող ճանապարհին մեծ քարաքերտի վրա պատկերված մենանշանը (նկ. 77)²²³: Որոշակիություն չունենք նաև Ագարակի ժայռափորագիր նշանների (նկ. 78)²²⁴ թվագրության հարցում: Բացի այդ, թեպետ մենք գծային զրով արված արձանագրությունների շարքում հիշատակել ենք նաև Մեծամորի, Կաքավաձորի և Կարմիր բերդի բացօթյա ժայռաքերտերի փորագրությունները, որոշ անհստակություն ունենք դրանք նշանների թվագրության հարցում:

Հայկական մեհենագրության հետագա համակողմանի ուսումնասիրությունը, կարծում ենք, այլ հարցերի թվում վերջնական լուծում կտա նաև ժամանակագրության խնդիրներին:

²²² Գրիգորյան, 1990, էջ 99:

²²³ Մավախյան, 2003 (b), էջ 149: Այն մեր ուշադրության է հրավիրել Բորիս Կասաբեյանը:

²²⁴ Հովհաննիսյան, 1990, էջ 70-77:

2. ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ԼՇԱՆԱԳՐԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՉԱՍՆԵՐ

Հայկական լեռնաշխարհի առեղծվածային ծագումով և անհայտ նշանակությամբ գրային հուշարձանները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խումբը բազմաթիվ օրինակներով հայտնի և որևէ համակարգ կազմող նշանագրային հուշարձաններն են: Այս խմբին է պատկանում Հայաստանի երկրորդ սեպագիրը, որը, դատելով նշանների թվից, հավանաբար, եղել է այբուբեն: Մեկ համակարգ են կազմում նաև առեղծվածային հսկայանշանները, որոնք հայտնի են Հայկական լեռնաշխարհի շուրջ երկու տասնյակ կետերից:

Երկրորդ խմբի մեջ կարելի է մտցնել եզակի նշանագրամբ հուշարձանները, որոնք զուգահեռներ չունեն, թեպետ չի բացատվում, որ հետագա ուսումնասիրություններով պարզվի դրանց՝ որևէ համակարգի սրատկանելը:

ա) ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԵՊԱԳԻՐ ՀԱՄԱԿԱՐԳԸ (ՆՈՐ ՄԵՊԱԳԻՐ ԱՅՐՈՒԲԵՆ): Հայաստանը, կազմելով համաշխարհային քաղաքակրթության գլխավոր բնօրրաններից մեկի՝ Առաջավոր Ասիայի մասը, արդեն տվել և դեռևս կարող է տալ բազմաթիվ անակնկալներ՝ կապված հնագույն քաղաքակրթությունների ուսումնասիրության հետ: Այդպիսի մի իրադարձություն կարող է դառնալ Հայաստանից հայտնաբերված առեղծվածային սեպագիր նոր համակարգի վերձանությունը, որն իր հետ կրեթի փոփոխություններ Հին Աշխարհի պատմությանը վերաբերող մեր գիտելիքներում:

*Կարմիր բերդի առեղծվածային սեպագիր արձանագրությունը*⁷²⁵: Երևանից Եղվարդ տանող ճանապարհին, Չովունի գյուղի հարևանությամբ, Հրազդան գետի աջ ափին պահպանվել են կիկլոպյան ամրոցի մնացորդներ՝ մի քանի հարյուր դամբարաններից քաղկացած դամբարանադաշտով, որից ներքև, Հրազդանի կիրճին հակված հրվանդանի վրա պահպանվել է վաղ միջնադարյան կիսավեր ամրոց, ինչը ցույց է տալիս, որ հնավայրում կյանքը հարատևել է նաև այդ ժամանակաշրջանում: Հնավայրի ուսումնասիրությամբ զբաղվել են Գ. Չարկովսկին, Մ. Չաբարյանը, Է. Այոսերը, Բ. Պիտոբովսկին, Հ. Մարտիրոսյանը, Ս. Եսայանը, Կ. Քուշնարյովան և ուրիշներ: Հնավայրի մի քանի հարյուր դամբարաններից հայտնաբերված նյութերը (խեցեղեն, մետաղյա զենքեր, պերճանքի առարկաներ և այլն) թվագրվում են միջին, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններով (Ք.ա. XXIV–IX/VIII դարեր): Կիկլոպյան ամրոցը թվագրվում է վաղ երկաթի դարով (Ք.ա. XII–IX/VIII դդ.)⁷²⁶:

Ամրոցի պատմական անունը, ցավոք, չի պահպանվել: Ժողովրդի մեջ այն հայտնի է «Կարմիր բերդ» անվամբ: Հնագիտական գրականության մեջ դամ-

⁷²⁵ Հաշվի առնելով նյութի կարևորությունը՝ այս արձանագրությունը ժամանակին տեղադրվել ենք հասուն կողմածով (տե՛ս Մոզիսյան, 2001, էջ 221–226):

⁷²⁶ Հնավայրի և կիկլոպյան ամրոցի ուսումնասիրության մասին մանրամասն տե՛ս Kyumayeva, 1960, էջ 137–147; Мартirosian, 1964, էջ 47–56; Փիլիպոսյան, 1979, էջ 331; Եսայան, 1992, էջ 173–174; Kyumayeva, 1993, էջ 134–151 (նաև դրանում եղծած գրականությունը):

քարանդակները հայտնի է նաև մոտակա Թազաքենի գյուղի անունով, որը ևս որևէ կապ չունի ամրոցի պատմական անվան հետ:

Հնավայրում առկա առեղծվածային սեպագիր արձանագրության մասին գիտական գրականության մեջ առաջին հրատարակումը եղել է 1976 թվականին «Պատմա-քանակագրական հանդեսում»: Երկրաբան Հայկ Ազիզյանը, ներկայացնելով համառոտ մի հաղորդում, համապատասխան մասնագետների ուշադրությունը հրավիրեց սեպագիր հուշարձանին՝ որոշելու արձանագրության լեզուն և ժամանակագրությունը՝ հատուկ նշելով, որ այն կրող «քարը դրված է ոչ թե վաղ միջնադարում կառուցված կրաշաղախով պատի, այլ ավելի հին՝ կիկլոպյան անշաղախ պատի շարվածքում»⁷²⁷:

Վերախտարար, հետագա տարիներին այս արձանագրությունը ուշադրության չարժանացավ: Առանց որևէ հիմնավորման՝ այն բանավոր գրույցներում պիտակվում էր «կեղծ», թերևս, միայն այն պատճառով, որ սեպագրի նման տեսակ աշխարհի ոչ մի տեղում հայտնի չէր: Թե որքան անհիմն ու չարդարացված է նման մոտեցումը, կարծում ենք, կարիք էլ չկա հանգամանորեն բացատրելու. այդպիսի տրամաբանությամբ «կեղծ» պետք է համարվեին աշխարհի բոլոր գրային համակարգերի նորահայտ առաջին հուշարձանները:

Արձանագրությունն ուսումնասիրելու նպատակով եղանք հնավայրում: Ինչպես նկարագրված էր Հ. Ազիզյանի 1976 թվի հաղորդման մեջ, արձանագրված քարը (լուսանկարը և գծանկարը տե՛ս նկ. 88) գտնվում է կիկլոպյան ամրոցի մուտքի շարվածքում՝ ոչնչով չտարբերվելով մյուս քարերից (բացի արձանագրված լինելուց):

Արձանագրությունը փորագրված է գորշ տուֆե քարի վրա, որն ունի 155 սմ լայնություն, 79 սմ բարձրություն, իսկ հաստությունը տատանվում է 75–88 սմ միջև: Բաղկացած է երեք հորիզոնական տողերից, որոնցից առաջին երկուսը գրված են քարի գրեթե ողջ լայնությամբ: Երրորդ կարճ տողը (10 սեպանիշ) մեկ երկար հորիզոնական սեպագծով անջատված է վերին երկուսից՝ զբաղեցնելով քարի միայն կենտրոնական շրջանը: Առաջին տողի երկարությունը 122 սմ է, երկրորդը՝ 131 սմ, երրորդը՝ 30 սմ: Երեք տողերի ընդհանուր բարձրությունը 37 սմ է:

Սեպանշանները չափերով շատ ավելի մեծ են Հայաստանում լայն տարածում ունեցող քիայնական (ուրարտական) սեպագիր նշաններից: Գեթակշում են ուղղահայաց, դեպի վար ուղղված սեպանշանները: Ընդ որում, արտաքին տեսքով դրանք նման են ոչ թե միջագետքյան մեխանման նշաններին, այլ քիայնական սուրանկուն-եռանկունու տեսք ունեցող սեպագրերին, որպիսիք առաջին անգամ հայտնի են Վանի թագավորությունում, իսկ վերջինիս անկումից հետո՝ Արեմնեյան աշխարհակալությունում:

Քարին փորագրված է ընդհանուր առմամբ 90 մեծ ու փոքր սեպանիշ: Արձանագրության ուշադիր զննումը և նշանացանկի կազմումը ցույց են տալիս,

⁷²⁷ Ազիզյան, 1976, էջ 276:

որ արձանագրված են շուրջ երկու տասնյակ նշաններ, որոնցից մի քանիսը կրկնվում են մինչև վեց անգամ (նշանացանկը տե՛ս աղ. 21): Ստույգ չենք նշում նշանների թիվը, քանի որ կան նշանների հնարավոր համակցություններ, որոնք կրկնվում են մի քանի անգամ և դժվար է ասել՝ գործ ունենք մեկ բաղադրյալ նշանի, թե մի քանի պարզ նշանների հետ (տե՛ս նշանացանկի երկրորդ մասը):

Նշանների կազմության սկզբունքը բավականին պարզ է. այդ տրամաբանությամբ էլ կազմել ենք ներկայացվող նշանացանկը: Ամենաբարդ նշանը քառաբաղադրիչ է:

Արձանագրությունը փորագրելուց առաջ նախօրոք տողագծում չի կատարվել, փոքր նշանները զետեղված են տողի ինչպես վերին, այնպես էլ միջին ու ստորին մասերում, իսկ որոշ նշաններ՝ տողից վեր:

Գրության ուղղությունը, դատելով հորիզոնական դիրք ունեցող երկար սեպանշանների դիրքից, ուղղված է եղել ձախից աջ, այսինքն՝ ունեցել է նույն ուղղությունը, ինչ սեպագրի բոլոր հայտնի տեսակները (այդ թվում՝ Հայկական լեռնաշխարհում կիրառված ասուրա-բարելոնյան և քիայնական (ուրարտական) սեպագրերը):

Արձանագրության գրաբանական վերլուծությունը (գրության ուղղության, նշանների կրկնության համախառնության, դրանց մտաավոր թվի, դիրքի, կազմության սկզբունքի և այլնի պարզաբանումը) ցույց է տալիս, որ այն լիովին համապատասխանում է գրային մտածողության համընդհանուր, այդ թվում՝ Հին Աշխարհի սեպագիր համակարգերում ընդունված օրինաչափություններին: Այսինքն՝ չկա որևէ հիմք արձանագրությունը «կեղծ» որակելու համար:

Եռատող արձանագրության մեջ շուրջ երկու տասնյակ նշանների կիրառությունը թույլ է տալիս ենթադրելու, որ գործ ունենք սեպագիր այբուբենի հետ: Մինչ օրս հայտնի են երկու սեպագիր այբուբեններ, որոնք ստացվել են բառավանկային սեպագրության պարզեցման շնորհիվ՝ ուգարիթյանը (Ք.ա. XIV–XIII դարեր)⁷²⁸ և արեմենյանը (Ք.ա. VI–IV դդ.)⁷²⁹: Վանի թագավորության սեպագիր համակարգը ևս ստացվել է միջագետքյան սեպագրության (շուրջ 600 նշանից բաղկացած բառա-վանկային համակարգի) պարզեցման արդյունքում, սակայն չի հանգել այբուբենի՝ մնալով բառա-վանկային համակարգ: Թե ինչու Հայաստանում հայտնաբերված սեպագիր այբուբենը չի ստացել լայն կիրառություն, դժվար է ասել:

Ո՞ր ժամանակաշրջանով կարելի է թվագրել արձանագրությունը:

Ինչպես նշվեց, դեռ մեզանից առաջ ուշադրության էր արժանացել արձանագրության՝ կիկլոպյան ամրոցի շարվածքում գտնվելը, ինչը կողմնորոշում է մեզ դեպի Ք.ա. XII–IX/VIII դարերը: Վաղ միջնադարով թվագրումը քիչ հավա-

⁷²⁸ Jensen, 1958, էջ 106–110; Дарингер, 1963, էջ 243–245, նկ. 124; Фрицман, 1979, էջ 121–123, նկ. 174;

⁷²⁹ Kent, 1950; Jensen, 1958, էջ 95–106, նկ. 76, 81; Оранский, 1960, էջ 100–103; Дарингер, 1962, էջ 111–112, Дарингер, 1963, էջ 223–227, նկ. 112; Фрицман, 1979, էջ 123–126, նկ. 176:

նական է, քանի որ Հայաստանում սեպագիրը դադարում է կիրառվելուց Ք.ա. VII դարից, իսկ Ք.ա. III դարից գործածվում են հունական ու արամեական, Ք.հ. V դ. սկզբից՝ հայկական այբուբենները: Մեպագիր այբուբենի ստեղծման ժամանակաշրջանի առավել հավանական թեկնածուն կիլկուպյան ամրոցի թվագրումն է: Հօգուտ այդ կարծիքի կարող է խոսել արձանագրության՝ ամրոցի մուտքի պատի մեջ դրված լինելը, ինչից կարելի է ենթադրել նաև վերջինիս՝ ամրոցի հիմնադրման վկայագիր լինելը: Այդ դեպքում քննվող սեպագիր այբուբենը ժամանակագրորեն կրնկնի ուզարիթյանի և քեմենյանի միջև:

Եթե հաստատվի մեր եզրակացությունը՝ կապված ամրոցի հիմնադրման հետ, կարելի է անել դրանից բխող այլ ենթադրություններ, որոնք հետագայում կարող են թե՛ հաստատվել, թե՛ մերժվել: Երկու տողերը երրորդից առանձնացված են մի երկար սեպագծով, որի տակ առկա է համատուտ մի գրություն: Կարելի է ենթադրել, որ առանձնացվածն ամրոցի անունն է: Յավոթ, մեզ հասած սկզբնաղբյուրներում (որքան մեզ հայտնի է) չի պահպանվել Կարմիր բերդի պատմական անվանումը, ինչը օգտակար կլիներ վերձանության ընթացքում: Նշենք ուշագրավ մի պահ, որը գուցեև օգնի հետագայում քացահայտումներ կատարելու: Նշանացանկի վերջում բերված հնարավոր համակցությունը կրկնվում է և՛ առաջին, և՛ երրորդ տողերում: Եթե ենթադրենք, որ վերջինս ամրոցի անունն է, որը կարող էր կազմվել իր հիմնադիր արքայի անունով, ապա առաջին և երրորդ տողերում կրկնվողը կարող է լինել հենց նրա անունը:

Հրազդանի և Նախիջևանի նույնատեսակ արձանագրությունները:

Կարմիր բերդի արձանագրության «կեղծ» լինելու ենթադրյալ միտքն իր ուժն ավելի կորցրեց, երբ սեպագրագետ Հովհաննես Կարապոզյանից տեղեկացանք, որ ներկայումս Հրազդան քաղաքի սահմաններում գտնվող Մարթավանքի հուշարձանախմբի տարածքից գտնվել է նույնատեսակ սեպագիր արձանագրության մի քնկոր (նկ. 89), որը ժամանակին հայտնաբերել էր հանգուցյալ արձակագիր Սուրեն Շտիկյանը: Հ. Հ. Կարապոզյանը մեզ տրամադրեց արձանագրության նույն չափերով պատճենը (արված Սուրեն Շտիկյանի ձեռքով), որն ուղղակիորեն հիշեցնում էր Կարմիր բերդի արձանագրությունը (հատկապես նշանների չափերի ու տեսքի առումով):

Նույնատեսակ առայժմ մեզ հայտնի երրորդ սեպագիր արձանագրությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության սահմանին մոտ գտնվող Ֆերիաթ Էլվի («Ուրախության տուն») կոչվող վայրում (տե՛ս քարտեզ 3): Այն փորագրված է գետնից վեր խոյանոց ժայռի վրա, որի մեկ այլ կողմից քացվում է ուրարտական ժամանակաշրջանին բնորոշ ժայռափոր դամբարան: Այս արձանագրությունը ևս իր չափերով և նշանների տեսքով լիովին տարբերվում է քիայնականներից: Եռատող արձանագրության երկարությունը 3,4 մետր, քարձրությունը՝ 60 սանտիմետր է: Տողերի լայնությունը 15 սմ է, միջտողային հեռավորությունը՝ 5 սմ: Նշանների երկարությունը 11–11,5 սմ է: Դատելով լուսանկարից՝ այստեղ ևս

տարված ուսումնասիրությունների արդյունքում համանման ժայռավոր նշաններ հայտնաբերվեցին Հայկական լեռնաշխարհի մեկ ու կես տասնյակ հնավայրերից՝ Աթաքինդի գյուղի մոտակայքից (նկ. 72)⁷²⁴, Անձալից (թուրքերեն աղավաղմամբ՝ Անզաֆ, նկ. 73), Արտամնտից, Արփաչայից, Բագատիճից (թուրքերեն աղավաղմամբ՝ Փեկեռիչ), Բահչեջիքից, Բաստամից (քիայն. «Ռուսայի փոքր քաղաք»), Դեխչայից, Խարթերդից (թուրքերեն աղավաղմամբ՝ Հարփութ), Քուհ-է Չամբիլից, Հայկաբերդից (քիայն. Սարդուրիխինիլի, ներկայումս՝ Չավուշ թեփե հնավայր), Հոռոմից (նկ. 74), Մաղաբա թեփեից, Չեկերիբադիից և Վանա քերդից (քիայն. Տուշպա)⁷²⁵:

Ժայռավոր հսկայանշանների հավաքման և ուսումնասիրության ասպարեզում ամենամեծ աշխատանքը կատարել է Օ. Բելլին, որը հավաքելով տասներեք հնավայրերի նյութերը (բացի Հոռոմից և Արփաչայից, վերջինս նշվում է նրա կողմից՝ առանց նշանների վկայակոչման), 93 նշանները բաժանում է ութ խմբի՝ շրջանակներ (28 հատ), առկակներ կամ ակոսներ (7 հատ), մանգաղի (4 հատ), ձեռնափայտի (3 հատ), «V»-ի (16 հատ), «U»-ի (11 հատ), հայելաձև շրջված «C»-ի (3 հատ) և անորոշ (21 հատ) տեսքով նշաններ: Տպավորիչ են նշանների չափերը: Դրանք քարերի մեջ փորված են 4–30 սմ խորությամբ, ունեն 6–30 սմ լայնություն, իսկ նշանների երկարությունը տատանվում է 0,7–ից մինչև 3 մետր: Օ. Բելլին դրանք թվագրում է Վանի թագավորության ժամանակաշրջանով, ենթադրելով այդ հուշարձանների կապը ջրի, հնարավոր է նաև անորշիբիմյան աշխարհի պաշտամունքի հետ⁷²⁶:

Նշենք, որ դեռևս չի կարելի լուծված համարել դրանց թվագրման հարցը՝ ելնելով միայն քիայնական ամրոցների մոտիկությունից: Բացի այդ, նշանների ուսումնասիրության և դրանց իմաստի ըմբռնման համար անհրաժեշտ է (առանձնացումից ու խմբավորումից բացի) դրանց խմբային տեսարանների ուսումնասիրությունը՝ որոշակի հետախորհությունից և քարձրությունից կատարված դիտարկումներով, ինչպիսիք, որքան մեզ հայտնի է, դեռևս չեն կատարվել⁷²⁷:

Ավելացնենք, որ նման ժայռագիր հսկայանշանները ընդրոշ են միմիայն Հայկական լեռնաշխարհին, և դրանց հետագա ուսումնասիրությունն, ան-

1931, էջ 203, էջ 206-ում՝ նկարը, որը հեղինակը նամարում է ֆայցաի սրտվեր; *Թերսամյան*, 1942, էջ 18–19):

⁷²⁴ Հնդկաստաններով մեկ օրը նպատի ամենաուցուտ (30-ից ավելի նշաններ) այս հուշարձանը գտնվում է Արածանի ակունքների շրջանում (Belli, 1989, էջ 92–93, աղ. II–IV; Baggeien, 1990, էջ 24–26, նկ. 1–12):

⁷²⁵ Բացի Հոռոմից, եղված քոքր հնավայրերից հայտնի ժայռանշանների մասին տե՛ս Belli, 1989, էջ 89–105, աղ. I–XVI: Բահչեջիքի նյութը՝ նաև Sevin, 1989, էջ 50–51, աղ. IV–2, V–1: Հոռոմում Թ. Թերսամյանի հիշատակածից բացի կան նեան այլ նշաններ ևս, որոնց մասին տեղեկանայով հնավայրը պետք պետք է հնային Ռուբեն Բաղդասյանից՝ սցենդեթի և տեղում կատարեցինը նախնական դիտարկումներ):

⁷²⁶ Belli, 1989, էջ 100–103:

⁷²⁷ Ի վերջո, չի կարելի բացառել նաև մի տեսակետ, ըստ որի ժայռերի մեջ կատարված այդ փորվածքները ոչ թե գաղափարաբեր են, այլ ունեն զուտ տնտեսական նշանակություն: Ըստ այդ բացատրության՝ փորվածքները ծառայել են հատա փայտը կտելու և ցանկալի տեսքի քերելու նպատակով (Kocoye, 2006, էջ 113–126):

ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԱՏԵՂԾՎԱԾ ԵՎ ԼԱՍԱՄԱՆՇՏՈՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Այլ երկրներում ստեղծված և նախամաշտոցյան Հայաստանում կիրառված գրային համակարգերը բաժանվում են երկու խմբի՝ գաղափարա-հնչունագրային (բառա-վանկային) և այբբենական (տառային): Առաջին խմբին են պատկանում խեթա-լուվիական³⁴¹ մեհենագրությունը, ասուրա-քարեխոյան և բիայնական (ուրարտական) սեպագիր համակարգերը, իսկ երկրորդ խումբը կազմում են հունական, արամեական և վերջինից ծագող պահլավական (միջին պարսկական) ու ասորական այբուբենները:

1. ԽԵԹԱ-ԼՈՒՎԻԱԿԱՆ ՀԻԵՐՈԳԼԻՖԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ³⁴²

Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Եփրատի հովտում, Ք.ա. II-I հազարամյակներում կիրառվել է խեթա-լուվիական մեհենագրությունը (հիե-րոգլիֆիկան): Այդ գրով առաջին արձանագրությունները նոր ժամանակներում հայտնի են դարձել XIX դարի երկրորդ կեսին՝ սկիզբ դնելով գրային համակարգի ուսումնասիրությանը³⁴³: Սկզբնական շրջանում հայտնվել էր կարծիք, որ խեթա-լուվիական հիեռոգլիֆների լեզուն կարող է լինել հնագույն հայերենը (գերմանացի գիտնական Հ. Ենսենը անգամ դրանք փորձեց ընթերցել հայերեն)³⁴⁴: Սակայն տարիներ անց պարզ դարձավ, որ դրանք գրված են ոչ թե հայերենով, այլ հայերենին մոտ ազգակից հնդեվրոպական լեզուներից մեկով՝ լուվիերենով: Թեպետ ներկայումս կատարված է զգալի աշխատանք վեր-

³⁴¹ Մինչև 1970-ական թթ. գիտական գրականության մեջ այս գրամամուլային առաջին հայտնի էր «խեթական» անվամբ: 1970-ականներից սկսած տարածվեց ու հետագայում գերիշխող դարձավ «լուվիական» անվանումը: Չորժ մնալու համար անվանական շփոթից՝ մեզ գործածում ենք «խեթա-լուվիական» բարդադրյալ անվանումը:

³⁴² Խեթա-լուվիական հիեռոգլիֆիկայի ֆրաբեթյալ խոցորդություն և գրականության տրամադրման համար չնդհանրացություն են նախնում պատմական գիտ. դոկտոր Արամ Քոչարյանին:

³⁴³ Գրային համակարգի և դրա ուսումնասիրության պատմության մասին՝ համադաստախոսն գրականության երկրմեծով տն՝ J. J. Janssen, 1958, էջ 133-141; Diringer, 1962, էջ 66-69; Девриер, 1963, էջ 118-123; Դեմո, 1982, էջ 86-88; Փրոպսա, 1979, էջ 83-85; Косач, 1994, էջ 6-7, 106-107; Melchert, 1996, էջ 120-124; Payne, 2010 (ևսև հրկան գրականությունը):

³⁴⁴ Տն՝ J. Janssen, 1898 աշխատությունը, որում ի մի են բերված այդ ժամանակ հայտնի ընդամենը 92 հիեռոգլիֆներ: Թեպետ հետագայում հարցը տառավ ալ լուծում, կարծում ենք ավելորդ չի լինի մեկ անգամ և սակամալոր գիտնականի տեսակետին անդադարանալը:

ժանության ուղղությամբ, դեռևս մնում են մեծ քանակությամբ չուսարանված հարցեր, որոնք կարող են նորություններ բերել նաև հայագիտությանը:

Գրային համակարգի ծագումը: Խեթա-յուվիական հիերոգլիֆների ծագման վերաբերյալ ընդհանուր ճանաչում գտած կարծիք դեռևս չկա: Առավել տարածված մի տեսակետի համաձայն՝ խեթա-յուվիական հիերոգլիֆները առաջացել են կրետական պատկերային գրից, որն իր հերթին մեծ ազդեցություն է կրել եգիպտական հիերոգլիֆիկայից⁷⁴: Ըստ մեկ այլ տեսակետի, խեթա-յուվիական հիերոգլիֆները ստեղծվել են ինքնուրույնաբար՝ տեղական փոքրասիական պատկերագրության հիման վրա⁷⁵: Գրային համակարգի առաջացումը ենթադրաբար թվագրվում է Ջ.ա. III հազարամյակով կամ II-ի սկզբով:

Այլ գրային համակարգերի հետ ունեցած առեւտրայինները: Եթե մի կողմ թողնելու լինենք բոլոր պատկերագրային համակարգերում առկա ընդհանրությունները, խեթա-յուվիական հիերոգլիֆիկան ամենից ավելի համադրելի է կրետական պատկերային գրի և Վանի թագավորության մեհենագրության հետ: Մեր շարադրանքի ընթացքում արդեն նշել ենք խեթա-յուվիական և փայնական հիերոգլիֆային համակարգերի կապի մասին (նշանների համեմատությունը տե՛ս աղ. 12):

Գրության ուղղությունը: Սա միակ գրային համակարգն է, որում բոլոր բնագրերը գրված են պարուրաձև (քուսորոֆեդոն) ուղղությամբ: Որպես օրինակափոխություն, բնագրերը սկսվում են աջից և ամեն հաջորդ տողը գրվում է նախորդի հակառակ ուղղությամբ:

Նշանների թիվը, գրային համակարգի բնույթը և որոշ սկզբունքներ: Խեթա-յուվիական նշանների թիվը շուրջ 500 է⁷⁶: Նշաններից շուրջ 70-ը հնչյունային արժեքով գրեր են, մյուսները գաղափարագրեր են կամ դեռևս վերժանված չեն: Այսինքն՝ խեթա-յուվիական մեհենագրությունը բառա-վանկային գրային համակարգ է:

Հիերոգլիֆները նկարային բնույթի են, մի մասն ունի նաև պարզեցված տարրերակներ: Հայտնի են կրեթ ձայնավորներ՝ a, i, u: Առավել տարածված են քաջ վանկերը՝ բաղաձայն-ձայնավոր կառուցվածքով, հանդիպում են նաև եռահնչյուն փակ վանկեր: Ի տարրերություն սեպագրի, հնչյունային նշաններն ունեն միայն մեկ նշանակություն:

Լայնորեն կիրառված է ակրոֆոնիայի (սկզբնահնչյունության) սկզբունքը, որի համաձայն գաղափարագրերը հնչյունային գրությամբ գրվելիս արտահայտում էին բառի սկզբնամասը: Շատ տարածված է նաև «հնչյունային կոմպլի-

⁷⁴ Տե՛ս, օրինակ, Դեռձ, 1982, էջ 87, 355-ի աղյուսակը; Meriggi, 1966, էջ 9:

⁷⁵ Փրուսթ, 1979, էջ 85; Hancock, 1980, էջ 137:

⁷⁶ Է. Լարոշի նշանագանկն ընդգրկում է 497 հիերոգլիֆ (Laroche, 1960): Գրանցից մի քանից հետագայում համարվեցին այլ նշանների տարբերակներ, ավելացվեցին 24 նոր նշաններ (II Géroglyphico Anatolico, 1998, էջ 15-124): Նշանագանկն ամբողջությամբ և հայերեն տե՛ս (Իմֆիդյան, 2003 (ա), էջ 282-321):

մեկտեղ» երևույթը, որը կոչված է ճշգրտելու, թե տվյալ նշանը հատկապես իր որ իմաստով է գործածված:

Արձանագրություններում տարբերակվում են գրության երկու ոճեր՝ կոթողային (մոնումենտալ) և արագազիր (զծային կամ պարզեցված), ընդ որում, առաջինի նշանները պահպանում են զգալի նմանություն նախնական պատկերանշաններին:

Գրահամակարգի հայաստանյան կիրառությունը (տարածման աշխարհագրությունն ու ժամանակագրությունը): Խեթա-լուվիական հիերոգլիֆիկան գործածվել է Ք.ա. XVI–VIII դդ. Փոքր Ասիայում, Հայկական լեռնաշխարհում և Սիրիայի հյուսիսում: Նորխեթական թագավորությունում (Ք.ա. XV–XII դդ.) այն հանդես է գալիս խեթական սեպագրին զուգահեռ, ընդ որում, վերջինս օգտագործվում է առօրյա գրագրության մեջ, իսկ հիերոգլիֆները՝ կոթողային (մոնումենտալ) արձանագրություններում⁷⁰⁰: Այդ ժամանակաշրջանով են թվագրվում Ծոփքի (սեպագիր աղբյուրներում՝ Ծուփա(նի), Իսուվա) տարածքից հայտնաբերված կնիքները⁷⁰¹: Ք.ա. XII–VIII դարերում խեթա-լուվիական հիերոգլիֆները լայն տարածում են ստանում, այսպես կոչված, հետխեթական կամ լուվիական պետություններում (այդ թվում՝ Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Եփրատի հովտում գտնվող Մելիդ-Թեգարամյաում և Կումմուխում)⁷⁰²:

Խեթա-լուվիական հիերոգլիֆներով արձանագրություններ են հայտնաբերվել Հայկական լեռնաշխարհի շուրջ երկու տասնյակ հնավայրերից (տե՛ս քարտեզ 1): Դրանք հիմնականում պատկանում են արքայական իշխանության ոլորտին: Մարաթիայում, Ապանթաշում, Ծիրզիում, Գյուրյունում, Դարեռդեում, Փայանգայում, Իշփեքչուրում, Քյոթյուկալեում, Իզզինում, Կարահյույում, Սամնաստում, Բոյրեյփինարիում, Անջոզում, Կարակույում և Ադիյամանում գտնվել են արձանագրություններ հարթաբանդակների և այլ կոթողների վրա: Քողուջու թեփեից, Նորչուն թեփեից և Թեփեջիքից հայտնաբերվել են արքայական կնիքներ (դրանցից մի քանիսը տե՛ս նկ. 92):

Չափազանց ուշագրավ են երզնկայի մոտ գտնվող Ալթին թեփե հնավայրից (պատմական Հայաստանի Չրմես ամրոցը) հայտնաբերված իբրը, որոնց վրա խեթա-լուվիական հիերոգլիֆներով գրված են րիայնական չափի միավորների անվանումները (նկ. 93)⁷⁰³: Դա յուրօրինակ սահմանային խառնարան էր խեթա-լուվիական և րիայնական գրավոր մշակույթների տարածման շրջանում:

⁷⁰⁰ Kocou, 1994, էջ 8 (տե՛ս նաև հղված գրականությունը):

⁷⁰¹ Դրանք հայտնաբերվել են Ծոփքի հնավայրերից՝ Թեփեջիքից, Նորչուն թեփեից և Քողուջու թեփեից (Güterbock, 1973, էջ 135–147, աղ. 3–5):

⁷⁰² Մելիդ-Թեգարամյայի տարածքից գտնված արձանագրությունները տե՛ս Bossert, 1942, էջ 67–70, 181–190, նկ. 763–795; Meriggi, 1975 (a) և (b), №№ 97–119; Hawkins, 2000, էջ 282–329, աղ. 133–164;

⁷⁰³ Կումմուխից հայտնաբերված քնագրերը՝ Meriggi, 1975 (a) և (b), №№ 124–131; Hawkins, 2000, էջ 334–360;

⁷⁰⁴ Leocche, 1971, էջ 55–61, աղ. 1–IV; Klein, 1974, էջ 77–95: Հնարագրիչ է նաև այն, որ թիվը նշված են եղ թե խեթա-լուվիական գծիկ-նշաններով, այլ հայաստանյան կետանշաններով:

Եփրատի հովտից քաղաքանին հեռու՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան Կալաբենդ հնավայրից գտնվել է արքայական մի գայիսոն, որի վերին մասում կան երկու հիերոգլիֆներ՝ «տեր / տիրակալ» և «քաղաք» (տե՛ս նկ. 94)³²²: Եթե գայիսոնը հետագա դարերում չի հասել նշված հնավայրի տարածք, այն կարելի է համարել խեթա-լուվիական հիերոգլիֆիկայի՝ Հայկական լեռնաշխարհում տարածման արևելյան սահմանը:

Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված խեթա-լուվիական հիերոգլիֆ արձանագրությունները ժամանակագրորեն բաժանվում են երեք խմբի.

ա) Ք.ա. XV–XII դդ. արձանագրված կնիքներ (Քորուջու թևիկից, Նորչուն թևիկից և Թեվեշիքից),

բ) Ք.ա. XII–XI դդ. արձանագրություններ (որոնք փոքր խումբ են կազմում և գտնվել են Մելիդի տարածքից),

գ) Ք.ա. X–VIII դդ. արձանագրություններ (Մելիդի և Կումմուխի տարածքից, Ալթին թևիկ (Չրմես) հնավայրից):

Արձանագրությունների խմբերն ըստ բովանդակության և կառուցվածքի: Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված արձանագրություններն ըստ բովանդակության և կառուցվածքի կարելի է բաժանել չորս խմբի.

1) միայն արքայի (կառավարչի) անունով կնիքներ,

2) նվիրատվական արձանագրություններ՝ կապված շինությունների կառուցման և աստվածներին նվիրաբերման հետ,

3) հակիրճ գրություններ բարձրաբանդակների վրա, որոնցում նշվում են միայն արքայի անունն ու որոշ տիտղոսներ,

4) այս դեպքում ևս մեկուսի է ընկած Կալաբենդի գայիսոնը, որը կրում է միայն «քաղաքի տեր/տիրակալ» տիտղոսը:

Կառուցվածքի մասին խոսելիս քննության առարկա կարելի է դարձնել միայն վերոնշյալ երկրորդ խմբի բնագրերը, որոնք ունեն եռամաս կառուցվածք.

ա) նախարան, որում հնդինակ-արքան ներկայանում է անունով, տիտղոս(աշար)ով և իր ծագումնաբանության ներկայացմամբ,

բ) հաղորդման բուն նյութը,

գ) անեծքի բանաձևը՝ ուղղված շինությունը կամ կոթողը ավերողներին ու պղծողներին:

Վերծանության ներկա միտակցություն: Կատարված զգալի աշխատանքով հանդերձ, խեթա-լուվիական հիերոգլիֆիկայի վերծանության բազմաթիվ հարցեր սպասում են իրենց բացահայտմանը: Դեռևս զգալի թիվ են կազմում անհայտ իմաստով մնեհագրերը (նշանացանկը տե՛ս Հավելվածում): Արձանագրությունների առավել դժվարընկալելի խումբը Մելիդ-Թեգարամայի Ք.ա. XII–XI դդ. բնագրերն են, որոնց բնորոշ է նշանների արխայիկությունը՝ զաղափաբանչանների գերակշռմամբ: Որպեսզի պարզ լինի արձանագրությունների ընթերցման այսօրվա աստիճանը, քերենք երկու համառոտ և երկու համեմատա-

³²² Lehmann-Haupt, 1931, էջ 593:

քար ընդարձակ օրինակ (քննագրերը թերում ենք ըստ ժամանակագրական հերթականության, չվերձանված նշանների փոխարեն նշվում են դրանց համարներն՝ ըստ Է. Լալոշի նշանացանկի):

Կարսիայույր (Փոքր Հայք, նկ. 95)⁷⁵³.

(Դիմացի երես)

«Գաւխթ»⁷⁵⁴ երկրի Անպրոպ–աստծուն (սցս) կրթողը նվիրեց Արմանանիսը՝
օկարասաների մարդկանց» տերը, այն ժամանակ,
կիր Իր–Թեշուրը՝ Մեծ արքան⁷⁵⁵, կրավ «Գաւխթ» երկիր:

Նա գտավ քաղաքը դատարկ,

և նա նստեց տեղում,

(կամ և նա նստաւայր հաստատեց)

...

...

... նա վերցրեց:

... նա հիմնեց(?),

նա(?) քարեղավեց «Գաւխթ» երկրի տներն (ու) քաղաքները:

Ես սիրելի(?) էի «Գաւխթ» երկրի Անպրոպ–աստծուն և ինքս ինձ աստծուն նա
... (?) նցի:

Իմ կողմից «Գաւխթ» երկրի Անպրոպ–աստվածը պաշտվում էր սաննուր ... (?)
հետ,

և իմ երկրներում նա(?) հասնենցի քաղաքները «Գաւխթ» երկրի Անպրոպ–
աստծուն,

(և) նա(?) հիմնեցի ...:

... աստվածը ... (?) իմ տնից

նա(?) տնեցի ...:

(Աջ երես)

«Գաւխթ» երկրում կրեք քաղաքներ՝ Լու/իկարասան⁷⁵⁶,

Հանթ–... փիյան (և) Չու(փա)նական

տրվեց ինձ տիրոջ կողմից:

Ես պատրաստեցի (234) մի տուն (263)–TANA–ի

⁷⁵³ Morizzi, 1975 (a) և (b), № 101; Hawkins, 2000, էջ 288–295, աղ. 133–134:

⁷⁵⁴ Երկրանունը գրվում է «Գաւխթ», թառ՝ գաւրախազրով և հայտնի չէ, թե որ տեղանունն է ծածկագրված այդ գաղափարաբանը:

⁷⁵⁵ Աջցայի անունը գիտական գրականության մեջ ընթերցվել է մի քանի տարբերակով՝ Արի–Թարխուտաս, Թարխիթարխուտաս, Իր–Թեշուր (Թարխուտաս և Թեշուր դիցանունները գրվում էին միևնույն՝ անվանայն է, որ նա ոչ թե տեղական կառավարիչ էր, այլ մեծ երեք տիրակալ, որի մեջ էր ընդգրկված նաև Մեծիցը: Այդ իսկ պատճառով մեզ հասկանալիս է թվում նրա նույնանունը Ք.ա. XII դարի կեսերին իշխանակալ Սուրբատուի արքա Արի–Թեշուրի հետ (Millard, 1970, էջ 172):

⁷⁵⁶ Կարծիք կա, որ Լու/իկարասան նույն խնթաբան արքայրների Թա/եպարասանն է (Kocou, 1994, էջ 22–23):

... ևս ... (?) նցի,
 ևս վերցրեցի ... :
 Պնտք է չիկնի որևէ վնճ իմ դեմ,

(Չախ երես)

դարպասաների դեմ (?) թո՛ղ չիկնի (293) (469):

Ով էլ որ լինի ... իմ տանը կամ քաղաքում
 կամ տեղավորվի (293) (469),

թո՛ղ երևան մեղադրի Անպրոպ-աստվածը «Գափաթ» երկրի:

Գյուլյուն (Փոքր Հայք, նկ. 96)⁷³⁷.

Մեծն Անպրոպ-աստվածը, Հեփաթուն մեծ դիցուհին, Մատուհան աստվածը մեծ.
 Ռունթիցաս (?) թողը Թուզի-Թեղուբի՝ Մեծ Արքայի՝ Կարկամիչի Հելուսի, որ-
 դին «Քոունցք»-միլիի⁷³⁸, Մալիզի⁷³⁹ քաղաքի երկրի տիրակալը:

Թափթա (?) քաղաքից Չինասիի (?) լեռները, Նախարասա (և) Նամա... Ես ան-
 քատեցի (ատանձնացրեցի),

և ...

և ... քաղաքը Ես հիմնեցի.

Ինձ աստվածները մեծացրեցին (դարձրեցին մեծ),

և այս փայրերը ... Ես հիմնեցի.

Ով վնասի սցս արձանագրությունը.

երևան թո՛ղ Մեծն Անպրոպ-աստվածը, մեծն Հեփաթուն և մեծն Մատուհան
 դատեն:

Մալաթիա I (նկ. 97)⁷⁴⁰.

Մրանք նևտաձգություններն (են) Հափաստուլուխիսի՝ Թարսափ (?) թոտան, ևե-
 թուսի, Մալազի քաղաքի տիրակալի, Հասու(?)-ռունթիցասի(?) որդու՝ արքայի(?):

Մալաթիա III ⁷⁴¹ (նկ. 98).

Մրանք նևտաձգություններն (են) Մազիտիսի՝ Սուվարամիսի որդու,(?):

⁷³⁷ Meriggi, 1975 (a) և (b), № 97; Hawkins, 2000, էջ 295–299, աղ. 135–138:

⁷³⁸ Մեկուշի քաղաքի որդի թեման նշանավոր տիրակալներից է, որի անունը գրված է «Քոունցք» գաղտնիարարով

և «-միլի» հնչյունազնվան վերջավորությամբ. անվան լիարժեք վերականգնումն անստորի չի հայտնվի:

⁷³⁹ Մալիզի-Մալաթիա քաղաքի անվանումներից մեկն է:

⁷⁴⁰ Meriggi, 1975 (a) և (b), № 105; Hawkins, 2000, էջ 318–319, աղ. 155:

⁷⁴¹ Meriggi, 1975 (a) և (b), № 107; Hawkins, 2000, էջ 321–322, աղ. 156:

Խեթա-լուվիական հիերոգլիֆ արձանագրությունները հայագիտության համար ունեն նշանակալի կարևորություն: Նախ՝ լինելով հայերենին մոտ ազգակից լեզվի հուշարձաններ՝ կարևոր սկզբնաղբյուրներ են վաղնջահայերենի ուսումնասիրության համար, ապա՝ արժեքավոր վկայագրեր են Հայաստանի (հատկապես արևմտյան շրջանների) Ք.ա. II-I հազարամյակների պատմության վերականգնման տեսանկյունից, և ի վերջո՝ կիրառվելով նաև Հայկական լեռնաշխարհում՝ նպաստել են նախամաշտոցյան Հայաստանում գրային մտածողության զարգացմանը:

2. ԱՍՈՒՐԱ-ՔԱԲԵԼՈՆՅԱՆ ՍԵՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇՆԱՐՀՈՒՄ

Գրային համակարգի ծագումը⁹²: Ասուրա-քաբելոնյան սեպագրությունը, ինչպես միջագետքյան ծագում ունեցող մյուս սեպագիր համակարգերը, ակունքներով կապվում է Ք.ա. III հազարամյակի շումերական իրականության հետ: Շումերները նախապես ստեղծել էին պատկերագրեր և գրում էին վերից վար ուղղությամբ: Շումերական պատկերագրության հիման վրա Ք.ա. III հազարամյակի առաջին կեսին ստեղծվում է սեպագիրը, որի ծնունդը պայմանավորված էր Միջագետքում որպես հիմնական գրանյութ հանդես եկող կավի օգտագործմամբ: Միջագետքյան դպիրները թաց կավի վրա եղեգևա ձողերով կատարում էին իրենց նշումները, որից հետո դրանք չորացնում ու թրծում էին: Թրծման շնորհիվ կավն սալիկները հազարամյակներով պահպանեցին իրենց վրա դրոշմված գրերը, որոնք ընթերցվում են մեր օրերում: Թաց կավի վրա շրջանակներ, կոր և երկար գծեր քաշելը ավելի դժվար ու անհարմար էր, քան կարճ, ուղիղ գծիկներ դաշելը: Դրանից ելնելով, միջագետքյան դպիրները հետզհետե պատկերագիրը փոխարինեցին զմային նշաններով:

Գծային նշաններից անցումը սեպանշանների նույնպես պայմանավորված էր գրի և գրչության միջագետքյան առանձնահատկություններով: Բանն այն է, որ նրք հում կավի վրա գծիկները դաջում էին ուղղանկյուն եղեգևա ձողերով, ձողը սեղմում էին կավին՝ անկյուններից որևէ մեկով և քաշում գիծը: Արդյունքում՝ գծի սկիզբը դառնում էր սեպան, իսկ գիծը ստանում էր մեխի տեսք (այստեղից էլ արարական գրականության մեջ սեպագրի՝ «մեխան» անվանումը, հայկական որոշ աղբյուրներում այդ նշանների համար գործածվում է նաև «բևեռագիր» տերմինը): Ք.ա. III հազարամյակում տեղի ունեցավ նաև

⁹² Մտադրի ծագման ու զարգացման մասին կա երկարատև գրականություն: Համալսարանին նշանակության այդ երևույթին անդրադարձել են և՛ գրերի մասին ընդհանրացնող աշխատություններում, և՛ նմիջով են նախուկ ուսումնասիրություններ. տե՛ս, օրինակ, Barton, 1913; Martin, 1942; Laroche, 1955, էջ 38-57; Chiera, 1939, էջ 1-233; Jensen, 1958, էջ 74-88; Gelb, 1958; Merce, 1959; Diringor, 1962, էջ 35-46; Duraneger, 1963, էջ 59-77; Heger, 1965, էջ 187-198; von Soden, 1965; Rozenkrantz, 1975; Labat, 1976; Фрагилос, 1979, էջ 83-85; Omencaim, 1990, էջ 181-228; Rogers, 2005, էջ 79-96; Katsura, 2009, էջ 73-85 և դրանցում երկամ գրականությունը:

գրության ուղղության փոփոխություն, ինչն անդրադարձավ գրանշանների արտաքին տեսքին: Սկզբնական վերից վար ուղղությունը երբ փոխարինվեց ձախից աջով, հին սալիկները գործածում էին 90 աստիճանով շրջված դիրքով, ուստի նշանները ևս շրջվեցին 90 աստիճանով (տե՛ս պատկերագրից սեպագրի ատաճացման աղյուսակը՝ աղ. 17):

Սեպագիրը շումերներից անցավ աքադացիներին, որոնք այն հարմարեցրեցին սեմական լեզվանյութին: Աքադական սեպագրությունը Միջագետքում զարգացավ երկու ուղղությամբ. հյուսիսում՝ ասուրական, հարավում՝ բաբելոնյան (այդ պատճառով էլ արադական սեպագրությունը հայտնի է նաև «ասուրա-բաբելոնյան» անվամբ): Այն Միջագետքից տարածվեց Առաջավոր Ասիայի շատ երկրներում, այդ թվում նաև Հայկական լեռնաշխարհում: Դառնալով միջազգային հաղորդակցության միջոց, ասուրա-բաբելոնյան սեպագրությունը մուտք է գործում հինարևելյան մի շարք երկրներ: Գրահամակարգի նշաններից յուրաքանչյուրն ուներ մի քանի, երբեմն մինչև 20 տարբեր ընթերցում: Ընդհանուր առմամբ, այն արտահայտում էր շուրջ 3000 վանկ և բառ:

Որոշիչների (դետերմինատիվների), թվանշանների և օժանդակ նշանների կիրառությանը կանոնադատանք Վանի թագավորության սեպագրերի բաժնում, քանի որ դրանց սկզբունքները նույնն են երկու համակարգերում:

Նշանների թիվն ու գրային համակարգի տեսակն ըստ այդմ: Ասուրա-բաբելոնյան սեպագրությունը բաղկացած էր շուրջ 600 նշանից³⁵³, սակայն բոլորը չէ, որ գործածվել են Հայկական լեռնաշխարհում³⁵⁴: Գրային համակարգը բառափանկային է: Առանձին նշաններով արտահայտվել են ձայնալիորները (հայտնի են չորսը՝ a, e, i, u), վանկերը, գաղափարագրերը և որոշիչները (ցուցիչները, դետերմինատիվները):

Գրային համակարգի հայաստանյան կիրառությունը: Ասուրա-բաբելոնյան սեպագրության հուշարձանները Հայաստանում բաժանվում են երկու խմբի՝ օտարների թողած և տեղացիների հեղինակած: Առաջին խմբին կանոնադատանք հաջորդ գլխում: Երկրորդ խմբի հուշարձանները վերաբերում են բացառապես Վանի թագավորության ժամանակաշրջանին:

Մարդուրի Ա արքայի օրոք (Ք.ա. մոտ 835–825 թթ.) Ուրարտում սկսեց կիրառվել ասրեստանյան սեպագիրը՝ ասուրերեն լեզվով, որով էլ գրի են առնվել մայրաքաղաք Տուշաթի (Վանի) հիմնադրման մասին վկայող մեզ հասած վեց արձանագրությունները (որոնցից երեքը տե՛ս նկ. 99): Դրանք ունեն հետևյալ բովանդակությունը.

«Մարդուրիի արձանագրությունը՝ Լուծիսիի որդու, մեծ արքայի, հզոր արքայի, տինգերի արքայի, Նախիի արքայի, արքայի, որին հաճառարը չկա, գար-

³⁵³ S. v. Labat, 1976, էջ 29–32, 248–281; Borger, 1978, էջ 5–35, 55–208; հմմտ. Մովսիսյան, 2003 (ա), էջ 322–368:
³⁵⁴ Ուշադրություն է արժանի այն եանգամանքը, որ հայաստանյան սեպագրիների թույլատրված արձանագրություններում կիրառված են որպեսզի թվով կանոններ, որոնք եղբն չեն հանդիպում տեղական (շխալական) գրավոր հուշարձաններում: Այդ կանոնները (ստանձնագրված հասուկ պայմանակալում) տե՛ս V. Monod, 1960, էջ 36–44:

մանահայաշ հովիվ, որ) չի վստահում կովից, արքայի, որ ենթարկում է անհեղափոխություն: Սարգսյանին որդին Լուսինայրի, արքան (է) արքաների, որը յուր արքաներից հարկ վերցրեց: Սարգսյանին որդին Լուսինայրի, ասում է այսպես.— Ես քարերն այս Անիտունու (քաղաքի) միջից բերեցի, ևս պարիսպն սցս կատուցեցի»⁷⁶⁵:

Ասուրերեն արձանագրություն է պահպանվել արձաթե մի կաթսայի վրա, ինչից իմանում ենք, որ այն Իշպուինի արքան նվիրել է իր թոռ Ինուշպուային. «Մշարուինին որդին Սարգսյանի, տվեց Ինուշպուային, քանի որ (ևս) քարենամ է իր ծնունուն նկատմամբ»⁷⁶⁶: Ասուրերենով բնագրեր են հանդիպում «Անի արքաների երկնեզու կոթողներում գրված ուրարտական տեքստերից հետո, թարգմանելով վերջիններին: Այդպիսի արձանագրություն են կանգնեցրել Իշպուինի արքան և արքայազն Մենուան Քելիշինում (Ուրմիո լճից հարավ-արևմուտք, Ռևանդուզ քաղաքի մոտ, նկ. 100), որը պատմում է Խալդի աստծո պաշտամունքի գլխավոր կենտրոն Արդինի—Մուսասիրում կատարված շինարարական աշխատանքների և պաշտամունքային արարողությունների մասին»⁷⁶⁷:

Մենուայի՝ Շուշանցում («Անի մոտ) թողած կոթողներից մեկի վրա կողք կողքի առկա են ասուրերեն և բիայներեն արձանագրություններ, որոնք, սակայն, չեն թարգմանում մեկմեկու: Բիայներեն բնագրում Խալդի աստծուց և Խալդյան դարպասներից մեծություն ու իշխանություն է ակնկալվում Իշպուինի և Մենուայի համար, իսկ ասուրերենում պատմվում է Արծունիունու քաղաքում Խալդիի պաշտամունքին նվիրված պաշտամունքային շինությունների հիմնադրման մասին՝ կատարված միայն Մենուայի կողմից»⁷⁶⁸:

Տուշպա—Անի միջնաբերդից գտնվել է ասուրերեն խիստ վնասված մի արձանագրություն, որը, ելնելով պահպանված բառերից մի քանիսի ընթերցումից, Կ. Ֆ. Լևինան—Հաուպտը համարել էր զոհաբերությունների մասին բնագիր: 1982 թ. հրատարակելով բնագրի պահպանված հատվածները՝ Մ. Սալվինին կարծիք հայտնեց, որ այն կարող էր գրվել Սարգուրի Ա—ից մինչև Մենուայի կառավարման վերջն ընկած ժամանակաշրջանում (Ք.ա. IX դարի երկրորդ կեսից մինչև VIII դ. 80—ական թթ.)⁷⁶⁹: Անդրադասուալով բնագրի պահպանված մասերի ուսումնասիրությանը Ի. Մ. Դյակունովն այն մեկնարանեց որպես արձանագրված օրենսդրության հատված, որում մի հանցանքի համար սահմանվում է պատիժ՝ փոխհատուցել 10 ցուլ և 5 կով, մեկ ուրիշի համար՝ ցմահ աշխատանքային ծառայություն»⁷⁷⁰:

Ռուսա Ա—ի Թովուգավայի (Ուրմիո լճից հարավ-արևմուտք, Ռևանդուզից Ուշնու տանող ճանապարհին) երկնեզու արձանագրությունը (նկ. 101) ևս

⁷⁶⁵ Мелликшиян, 1960, էջ 117—118; Կարապետյան, 1981, էջ 39—40; Арутюнян, 2001, էջ 9—11:

⁷⁶⁶ Арутюнян, 2001, էջ 12, աղ. III-2 (տե՛ս նաև Մ. Սալվինիի առաջին հրատարակումների եզրամերը):

⁷⁶⁷ Мелликшиян, 1960, էջ 125—131; Арутюнян, 2001, էջ 25—30 (և նրանով գրավանդությունը):

⁷⁶⁸ Арутюнян, 2001, էջ 137—139 (և նրանով գրավանդությունը):

⁷⁶⁹ Lehtonen—Hajari, 1907, էջ 63; Salvini, 1982, էջ 327—332 (Գ. Ա. Մելիքիշվիլու և Ն. Վ. Հաուպտյանի կազմած ժողովածուներում այս կրթողը չի նշվում): Հուշարձանի մասին տե՛ս նաև Dierker, Dierker, 1986, էջ 351—358:

⁷⁷⁰ Diakonoff, 1989, էջ 93:

հաղորդում է Արդինի–Մուսասիրում կատարված պետական–սալտանաժուրային արարողությունների ու շինարարական աշխատանքների մասին: Ուշագրավ է, որ այս բնագրում Վանի տիրակալն իրեն անվանում է «*Մաղդի աստծո ծառա, ժողովրդի հավատարիմ հովիվ*»...⁷⁷¹

Եշենք նաև, որ Հայաստանի տարածքից գտնվել են Թուրքավայի բիլինգվայի երկու կրկնօրինակները (Մերզեի Քարվանսից և Մովանայից)⁷⁷²:

Բիսյանական երկլեզու արձանագրությունների բնորոշ կողմերից մեկն այն է, որ դրանց բիայներն և ասուրերն հատվածները բառացի, ստույգ չեն թարգմանում մեկմեկու:

Մեզ է հասել Արդինի–Մուսասիրի արքա Ուրգանայի կնիքը՝ ասուրերեն գրությամբ (տե՛ս նկ. 102)⁷⁷³: Պահպանվել են նաև նույն արքայի ասուրերենով գրված նամակները, որոնք գտնվել են Ասորեստանից⁷⁷⁴:

3. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԵՊԱԳԻՐԸ

Գրային համակարգի և երանով արտահայտված լեզվի ուսումնասիրության պատմությունը: Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների ուսումնասիրության սկիզբը կարելի է համարել 1827 թ., երբ Ֆրանսիայի Ասիական ընկերության հանձնարարությամբ, Հայաստանում եղած բազմաթիվ սեպագիր արձանագրությունների մասին Մովսես Խորենացու տեղեկության⁷⁷⁵ հետքերով, Արևմտյան Հայաստան գործուղվեց Ֆ. Է. Շուլցը: 1829 թ. երիտասարդ հետազոտողը սպանվեց Ջուլամերկի լեռների կիսափայրենի բրդերի կողմից, իսկ սեպագրերի՝ նրա կատարած ընդօրինակությունները հրատարակվեցին 1840–ին, որից հետո սկսվեցին վերձանության փորձերը⁷⁷⁶: Մինչև 1880 թ. փորձեր եղան ասուրական սեպագրությունից հայտնի գիտելիքների օգնությամբ ընթերցված արձանագրությունները մեկնաբանել հայերեն (Ա. Դ. Մորդյանը 1872 թ.), վրացերեն (Ֆ. Լընորման) և ասուրերենին

⁷⁷¹ Мелконянц, 1960, էջ 323–327; Аргутинск, 2001, էջ 289–294 (և եղված գրականությունը):

⁷⁷² Boecher, 1979, էջ 50–51, աղ. 12; André-Salvini, Salvini, 1999, էջ 21; André-Salvini, Salvini, 2002, էջ 5–66:

⁷⁷³ Կնիքի մակագրությունը մասնագիտական գրականության մեջ թարգմանվել է երկու տարբերակով՝ «Կնիքը Ուրգանայի՝ արքայի Մուսասիրի, արքայի (Շ) թագայի, որն օձի նման թաղել է իր կրակոչ թշնամի լեռներում» (տե՛ս Thureau-Dangin, 1912, էջ XII; ԸԹԼԼԱ, № 48; Urartu, Gesz, 1982–1983, էջ 223) և «Կնիքը Ուրգանայի՝ արքայի Մուսասիրի, ուրարտական (Շ) թագայի, որը միշտակ օձի նման թաղել է կրակոչ թշնամի լեռներում» (տե՛ս Colson, 1987, էջ 86–87, նկ. 405; Փիլիսոփայան, 1998, էջ 56, աղ. 50–5; եղվում է նաև Zadoks–Josephus Jims A., Catalogue sommaire de cylindres orientaux au Cabinet Royal des Medailles à la Haye, Hague, 1952, նկ. 148):

⁷⁷⁴ ABHBY, № 50–2, 50–7:

Հայտնվել է կարծիք, որ Գիտություն Սիկիցյանը ինչպեսևս Հայաստանի արքա Բարզանուչ, որն Ասորեստանի հետ ղալանկյաժ հարձակվել է Մեդիայի (Մարաստանի) վրա (տե՛ս Գիտություն Սիկիցյանի, 1985, էջ 16), Մուսասիրի օգրա Ուրգանան է (Թալման, 1950, էջ 65; Тер–Мартirosos, 2000, էջ 185–198):

⁷⁷⁵ Մովսես Խորենացի, գիրք Ա, գլ. ԺԶ; Մ–Ը–Բ, էջ 1300:

⁷⁷⁶ Վանի թագավորության սեպագրերի ուսումնասիրության ելմանով կարելի է համարել սեպագրագիտության հայրերից Էդմոնդ Չերսին, որը 1848 թ. կատարված ծագյալի մի գեղարվեստ–տեղագրական լեզվաբանական հայտնակով, որ այդ արձանագրությունները գրված են հնդկերազական լեզվով (Hincks, 1847, էջ 387–449):

մոտ ազգակից սեմական մի լեզվով (Լ. դե Ռոբեր), որոնք, սակայն, չընդունվեցին: 1880 թ. Ս. Գյուարն առաջարկեց որպես վերձանության բանալի օգտագործել արձանագրությունների վերջնամասերում կրկնվող անեմքի բանաձևերը և, համադրելով դրանք ասորական համարժեքների հետ, վերականգնեց ու մեկնարանեց մինչ այդ անձանոթ լեզվի մի⁷⁷⁷ քանի բառեր և քերականական մասնիկներ: Օգտագործելով Ս. Գյուարի վերձանության բանալին, երկու տարի անց Ա. Հ. Մեյսը՝ ընթերցելով ամբողջական բնագրեր՝ հրատարակեց Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների առաջին ժողովածուն:

Լեզվի հարցում որոնումները դրանով չավարտվեցին: 1900 թվին Հ. Սանտալյանը հրատարակեց քիայնական սեպագրերի երկրորդ ժողովածուն, որում արձանագրություններն ընթերցվում ու մեկնաբանվում էին հայերեն (այս փորձը քննադատվեց մի շարք լեզվաբանների, այդ թվում՝ Հր. Աճառյանի կողմից, քանի որ դրանում առկա էին հնագույն հայերենի քերականության հետ անհամապատասխանություններ, սակայն հարկ է նշել, որ Հ. Սանտալյանին հաջողվեց ցույց տալ բազմաթիվ ընդհանրություններ և նույնություններ հայերենի ու սեպագրերի լեզվի միջև): XX դարում նոր փորձեր եղան քիայներենը մեկնաբանելու վրացերեն (Մ. Գ. Չանաշվիլի), կովկասյան լեզվախոսով (Ա. Կ. Գիլեյ), ուղիներն (Ա. Պայազաու), հայերեն (Ա. Սաֆրաստյան, Ս. Այվազյան, Ե. Բաղդևց), որոնք չլիմացան գիտական քննադատության:

Համընդհանուր ճանաչում գտավ քիայներենի՝ ինքնուրույն լեզու լինելու Գյուար-Մեյսի տեսությունը, ցույց տրվեց այդ լեզվի ազգակցությունը խուռիերենին: Բիայներենի ուսումնասիրության մեջ մեծ ավանդ ունեցան Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը, Ն. Յ. Մառը, Ի. Ի. Մեչչանինովը, Մ. Շերեթելին, Գ. Ա. Ղափանցյանը, Յ. Ֆրիդրիխը, Ա. Գյոթցեն, Գ. Վ. Շերեթելին, Ֆ. Վ. Բյոնիգը, Գ. Բ. Ջահուկյանը, Գ. Ա. Մելիքիշվիլին, Ի. Մ. Դյակոնովը, Մ. Իսրայելյանը, Վ. Բենեդիկտը, Թ. Վ. Գամկրելիձեն, Ն. Վ. Հարությունյանը, Ա. Մ. Դիկոյը, Վ. Ա. Գվախարիան, Հ. Հ. Կարապոզյանը, Մ. Սալվինին, Ֆ. Հաազը, Վ. Սևիկը, Գ. Վիլեմը, Մ. Լ. Խաչիկյանը և ուրիշներ⁷⁷⁸:

Վերջին տասնամյակներում եղան խուռի-ուրարտական լեզուները արևելակովկասյան համարելու փորձեր⁷⁷⁹: Չընդունելով այդ տեսակետը՝ Գ. Բ. Ջահուկյանը գտնում է, որ խուռի-ուրարտական և նախյան-դադատանյան լեզու-

⁷⁷⁷ Այն գիտության մեջ տաքավ պայմանական «խաղերեն», «ուրարտերեն», «քիայներեն» անվանումները, որոնցից վերջին երկուսն օգտագործում ենք այս աշխատանքում ևս նույնպիսի պայմանականությամբ:

⁷⁷⁸ Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների ուսումնասիրության պատմությունը՝ քերականության հանգամանակի վկայություններով, տե՛ս Բուրոսոսյան, 1959, էջ 7-26; Ջահուկյան, 1987, էջ 417-445; Կառուս, 1985, էջ 10-14, 135-137; Salvini, 1995, էջ 5-14, մասնագիտական գանձը՝ էջ 211-238; Կարապոզյան, 1998, էջ 7-10 և, հատկապես, արձանագրությունների երատարակված մտքովանություն՝ Sayce, 1882 (լրացումները յոսյ ևն տեսև «Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland» հանդիս էլեզուս 1888-1932 թթիքի ընթացքում); Sandaljar, 1900 (լրացումներ՝ Սանտալյան, 1913, 393-409); CICB, 1928-1935 (որը Կ. Ֆ. Լեհման-Հաուպտի մահվան պատճառով մնաց անավարտ); Kölsig, 1955-1957; Мелконьян, 1960 (լրացումներ՝ Мелконьян, 1971); Арутюнян, 2001; Salvini, 2008:

⁷⁷⁹ Diakonoff, 1971, էջ 161-171; Дьяконов, 1978, էջ 25-38; Diakonoff, Starostin, 1986 (և նրան զգույնությունը ևն):

ների հետավոր ազգակցությունը հնարավոր է ցույց տալ միայն նոստրատիկ ընդհանրության շրջանակում, էթե հաջողվի հիմնավորել արևելակովկասյան լեզուների՝ նոստրատիկ ընդհանրությանը պատկանելը⁷⁰⁰:

Բիայներենի՝ հնդեվրոպական լեզուների (հատկապես հայերենի) հետ ունեցած բազմաթիվ կապերին անդրադարձել են Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը, Հ. Սանտադեյանը, Գ. Ա. Ղափանցյանը, Պ. Կրեյմերը, Ռ. Այսլերը և ուրիշներ: Այդ խնդրին վերաբերող առավել ամփոփ ուսումնասիրությունը կատարել է Գ. Բ. Ջահուկյանը⁷⁰¹:

Վերջերս փորձ եղավ Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների ներածական բանաձևերից երեքը հայերենով ընթերցելու⁷⁰²: Ի տարբերություն նման նախորդ փորձերի, այն բավականին համոզիչ է ոչ միայն լեզվաբանական, այլև սեպագրության տեսակետից, ուստի այդօրինակ աշխատանքի շարունակությունը լեզվաբանների և սեպագրագետների համատեղ ջանքերով կարող է քերել նոր, անգամ անսպասելի արդյունքների⁷⁰³:

Արձանագրությունների ժամանակագրությունն ու տարածումը: Բիայնական սեպագրերը գործածվել են Իշպուինի արքայի կառավարման ժամանակաշրջանից (Ք.ա. մոտ 825–810 թթ.) մինչև տերության կործանումը: Այսօր հայտնի ավելի քան 600 արձանագրությունները հայտնաբերվել են շուրջ 130 կետերից (տե՛ս քարտեզ 2), ընդ որում, կան զգալի թվով քնագրեր, որոնք պահվում են տարբեր թանգարաններում, սակայն դրանց հայտնաբերման առույգ վայրը հայտնի չէ:

Գրային համակարգի ծագումը: Վանի թագավորության սեպագիր արձանագրություններում տարբերակվում են նշանների գրության երեք ոճեր՝

- ա) նոր ասուրական,
- բ) բիայնական կոթողային (մոնումենտալ),
- գ) բիայնական արագագիր:

Սարգուրի Ա–ի ասուրերեն (և նոր ասուրական ոճով գրված) արձանագրություններից հետո ասուրական ոճն աստիճանաբար իր տեղը զիջեց բիայնականին, որը գերիշխող դարձավ միայն Մենուայի օրոք, թեպետ հետագայում ևս բազմաթիվ բիայներեն արձանագրություններ գրվել են միջազնուշյան ոճի սեպանշաններով:

Իշպուինի արքայի օրոք միջազնուշյան սեպագրության բարեփոխմամբ ստեղծվեց տեղական (բիայնական կամ ուրարտական) սեպագրությունը: Կատարվեց իր ընդգրկմամբ և որակով հայաստանյան մինչմաշտոցյան իրակախության մեծագույն գրային բարեփոխումը, որի էությունը հետևյալն է: Անու-

⁷⁰⁰ Ջահուկյան, 1987, էջ 419–422:
⁷⁰¹ Дзякун, 1963; Дзякун, 1967; Ջահուկյան, 1986; Ջահուկյան, 1987, էջ 417–445; Ջահուկյան, 1988, էջ 127–168:
⁷⁰² Ջահուկյան, 2000, էջ 124–129:
⁷⁰³ Այդ ուղղությամբ որոշակի հայտնություններ են արձանագրվել Սարգևի Այվազանի աշխատանքներում (Այվազյան, 2003; Այվազյան, 2006; Այվազյան, 2008; Агвазян, 2011; Այվազյան, 2013):

րա-բարեկրոնյան սեպագրությունը բաղկացած էր շուրջ 600 նշանից, որոնցից յուրաքանչյուրն ուներ մի քանի, երբեմն 10-ից ավելի տարբեր ընթերցում: Ընդհանուր առմամբ, այն արտահայտում էր շուրջ 3000 վանկ և քառ: Բիայնական սեպագրությունը վերցրեց ընդամենը շուրջ 200 նշան, որոնք հիմնականում ունեին մեկ ընթերցում և հազվադեպ էին հանդիպում երկու կամ երեք նշանակությամբ: Բիայնական կրթողային ոճի սեպանշանները կառուցվածքով գրեթե նույնանում են նոր ասուրական նշաններին, ինչի հիման վրա էլ ընդունված է կարծել, թե այդ ոճը փոխառվել է Միջագետքից նոր ասուրական ժամանակաշրջանում: Տարբերությունը, հիմնականում, նշանների արտաքին տեսքի մեջ է: Մեպանշաններն ասուրական ոճում հիշեցնում են մնխեր, միեղդոտ բիայնական կրթողայինում եռանկյունիներ էին, և եթե միջագետքյանում նշաններն ունեին հատուկներ, ապա մեզանում հատվող գծիկը փոխարինվում էր երկու նոր սեպերով (տե՛ս աղ. 18): Որոշ դեպքերում թեք սեպիկները վերածվում են հորիզոնականի և ընդհակառակը: Մի քանի նշաններ հանդես են գալիս ասուրա-բարեկրոնյան սեպագրության մեջ չվկայված նշանակությամբ:

Բիայնական արագագիր ոճը կիրառվել է կավե սալիկների (նաև քուլաների) արձանագրություններում, որոնց այսօր հայտնի օրինակները թվագրվում են Ք.ա. VIII դարի երկրորդ կեսից մինչև Ք.ա. VII դարի վերջն ընկած ժամանակահատվածով (առաջին օրինակներն ի հայտ են գալիս Ռուսա Ա-ի օրոք)⁷⁸⁴: Սալիկների հնագրական ուսումնասիրությամբ հատուկ զբաղվել է Ի. Մ. Դյակոնովը՝ ցույց տալով, որ մի քանի նշաններ իրենց արխայիկ ձևերով առկա են հին արադական (Ք.ա. III հազարամյակ) սեպագրում, սակայն անհետանում են արդեն հին բարեկրոնյանում (Ք.ա. II հազարամյակի սկիզբ): Ուստի դրանց ներկայությունը բիայնական արագագիր ոճում կարելի է քացատրել հին արադական կամ վերջինից ծագող միտանիական ու խեթական գրության դպրոցների (այն էլ վաղ շրջանի) միջնորդությամբ: Հնագրական դիտարկումների հիմամբ նա եզրակացրեց, որ բիայնական արագագիր ոճը սկսոք է ստեղծված լինի Ք.ա. XIV-XIII դարերից ոչ ուշ՝ ծագելով Միտանիի ու խեթական տերության ուղղության կենտրոններից⁷⁸⁵:

⁷⁸⁴ Միևն 1963 թ. Թեոֆոս կարեի (Գիսյա «Ռուսափնիկ») և Կարմիր քյոթից (Գիսյա «Ռեչեքափնի») գտնված կավե սալիկներն ի մի են ընդմեջ Ա. Մոստոև, 1963 աշխատության էջերում (Պամագրատության գրականության կոմիտեի): Գրանից հետո Բաառամ ենալոցից (Գիսյա «Ռուսափ ֆոքր քարոք») հայտնաբերված կավե սալիկները հրատարակեց Մ. Սալվինին (Salvini, 1979 (a); Salvini, 1979 (b)): Միևն 2000 թ. հրատարակված բոլոր սալիկները՝ գրականության կոմիտեի, տե՛ս Արչուտան, 2001, էջ 305-309, 330-334, 360-369, 373-381, 390, 393-401: Էրիննաչին փայլամբ փորագրվող կավե սալիկ էր 205-309, 330-334, 360-369, 373-381, 390, 393-401: Էրիննաչին փայլամբ փորագրվող կավե սալիկ էր 202-207, աղ. IX: 2001 թ. առկայությամբ տե՛ս Մոլոխոս, 2000 (b), էջ 133-139 և Movsisyan, 2006 (b), էջ 202-207, աղ. IX: 2001 թ. հրատարակվեցին Այանիցից (Գիսյա «Ռուսափնիկի» էջերում) առկա «Վանի քյոթի փորագրված կավե սալիկները, որոնցից մեկն, ըստ Մ. Սալվինիի, դպրոցական (ուսումնական) բնագիր է (տե՛ս Salvini, 2001, էջ 312-315): Նույն թվականին հրատարակվեցին ևս երկու սեպագիր սալիկներ՝ Հալպարեթից (Dizdol, Dizdol, Salvini, 2001): 2014 թ. նոր սեպագիր սալիկ հայտնաբերվեց «Կանի քյոթի փորագրված սալիկներից (Լիկ, 2014, 173-183): Այսպիսով, մյուս օրս սեպագիր սալիկներ են հայտնաբերվել «Կանի քյոթի փորագրության վեց հեռավորքից»:

⁷⁸⁵ Հեթանոս սեպակ հոյս է հայտնում, որ «սեպակների դեռևս մեկ կտրեին Ք.ա. XIII-X դդ. ուրարտա-խաչուրական սեպագիր փափրագներ» (Առաուտ, 1963, էջ 19-20):

Այսպիսով ստացվում է հետաքրքրի պատկեր. երեք ոճերից նոր ասուրականը փոխառված է Ասորեստանի Ք.ա. X–IX դդ. դպրության կենտրոններից, քիայնական կոթողայինը, ունենալով միևնույն ժազումը, Հայաստանում ենթարկվել է ընդգրկուն բարեփոխման և ունեցել տեղական առանձնահատկություններ, իսկ արագազիրը կապվում է Ք.ա. XIV–XIII դարերի միտանիական ու խեթական դպրության կենտրոնների հետ: Այս իրավիճակը թույլ է տալիս կատարելու որոշ հետևություններ, ինչը կապվում է նաև քիայնական սեպագրության լեզվի խնդրի, հատկապես, վերջին տարիների րուտն քննարկումների առարկա դարձած հարցադրման հետ, թե եղե՞լ է այն արդյոք ժողովրդի խոսակցական և երկրի տիրակալների մայրենի լեզուն:

Ինչպես նշվեց, քիայնական սեպագրության արագազիր ոճը ստեղծված պետք է լինի դեռևս Ք.ա. XIV–XIII դարերում: Եթե սեպագրին հարմարեցված քիայներենը (ուրարտերենը) լիներ Վանի արքաների մայրենի լեզուն՝ ունենալով շուրջ 500–ամյա գրային ավանդույթ, միանգամայն անհասկանալի է, թե ինչու էր Սարգուրի Ա–ն, իր մայրենին թողած, օգտագործում թշնամի երկրի լեզուն՝ վերջինիս սեպագիր համակարգով: Նշանակում է՝ չկար քիայնական արքաների մայրենի լեզվին հարմարեցված սեպագիր համակարգ, այսինքն՝ քիայներենը Վանի տիրակալների մայրենի լեզուն չէր: Սարգուրի Ա–ի հաջորդ Իշպուինին, ելնելով Ասորեստանի հետ խորացող հակադրությունից, որդեգրեց տարածաշրջանի գրության դարձվածից մեկի ավանդույթները: Այս առթիվ նկատենք, որ ուրարտերենի բառապաշարի աղբյուրությունը (շուրջ 500 բառ ավելի քան 600 արձանագրության մեջ), քերականական միևնույն կառուցվածքը, տեքստերի կաղապարային լինելը, շուրջ երեք դար գործածվելով փոփոխություն չկրելը, գրական ստեղծագործությունների (հիմներ, աղոթքներ, ոգրեր, սիրային ու վիպական երգեր և այլ ժանրի գործեր) բացակայությունը տպավորություն են ստեղծում, որ այդ լեզուն՝ իր գրային համակարգով, գործածվել է արքունի պաշտոնական գրագրության նեղ սահմաններում և չի եղել ժողովրդախոսակցական ու հասարակության լայն խավերի կողմից կիրառելի⁷⁶⁶:

Վանի տիրակալների մայրենի և երկրի ժողովրդախոսակցականի առավել հավանական թեկնածուն քիայնական մեհենագրության լեզուն է, որի վերջնական առաջին արդյունքներն, ինչպես նշել ենք, խոսում են հօգուտ վերջինիս՝ հնագույն հայերենը լինելու⁷⁶⁷...

Գրակիր հուշարձանների քանակն ու տեսակները: Մեզ հասած ավելի քան 600 սեպագիր արձանագրությունների մեծագույն մասը գրված է քարի վրա: Ամենամեծ խումբը կազմում են արձանագրված ժայթերն ու քարե կոթողները: Հանդիպում են նաև գրություններ կավե, մետաղյա և ոսկրե իրերի վրա (կավե սալիկներ, ռազմական հանդերձանքի մասեր (վահաններ, սաղա-

⁷⁶⁶ Հմմտ. Կատվոցյան, 1986, էջ 279–280; Խաչատրյան, 1991, էջ 36–56:

⁷⁶⁷ Մանգրամյան տե՛ս Մուվինյան, 1998, էջ 31–51; Մուվինյան, 2003 (b), էջ 92–124:

վարտներ, զրահաշապիկի մասեր, նետասլաքներ, ձիու սպառազինության մասեր և այլն), մետաղյա ամաններ (թասեր, կաթսաներ), կնիքներ ու կնքադրոշմներ, խեցեղեն ամաններ, կահույքի մասեր, պերճանքի առարկաներ և այլ իրեր):

Ենթադրվում է, որ գոյություն է ունեցել մագաղաթի (կամ այլ տեսակ փափուկ զրանյութի) վրա գրություն, ինչը երևում է Կարմիր բլուրից գտնված փաթեթի կնիքի առկայությունից (տե՛ս Վանի թագավորության մեհենագրության բաժնում):

Արձանագրությունների ծավալը և կառուցվածքը: Ըստ ծավալի՝ քննարկելիս խիստ բազմազան են: Ամենաձավալուն արձանագրությունը Արգիշթի Ա-ի գահակալության մասին պատմող Խորխոռայան տարեգրությունն է՝ փորագրված Վանի ժայռի հարավ-արևմտյան կողմում, որի ոչ լրիվ պահպանված մասերը՝ գրված ութ սյունակով, կազմում են 380 տող²⁰⁶: Ծավալով ամենափոքր քնագրերը միատող են (տարողության, պատկանելության և այլ նշումներ):

Արձանագրությունները, հիմնականում, ունեն կաղապարային կառուցվածք: Մեծ քնագրերին բնորոշ է եռամաս կառուցվածք՝ ներածություն, հաղորդման բուն կյութ և վերջաբան: Երեք մասերն էլ կառուցված են բնորոշ կաղապար-արտահայտություններով, ընդ որում, դրանք տարբեր են՝ կապված քնագրերի բովանդակության հետ: Արձանագրությունների սկզբնամասերը, սովորաբար, նվիրվում են Խաղդի գերագույն աստծուն, որի հետ են այս կամ այն կերպ կապվում ներկայացվելիք իրադարձությունները: Միջնամասում նկարագրվում է իրադարձությունների ընթացքը (հիմնադրում, կառուցում, նվիրաբերում, զոհաբերություններ, զորահավաք, արշավանք, հաղթանակներ, ավարառություն, հարկահավաքում և այլն): Արձանագրություններն ավարտվում են հաղթող-արքայի հզորությունը ներկայացնող տիտղոսաշարով, կառուցող-արքայի փառաբանությամբ կամ օրհնությամբ, կոթողը փչացնողին ուղղված անեծքով...

Հանդիպում են արձանագրություններ, որոնցում համառոտակի տրվում է բուն հաղորդումն՝ առանց ներածականի կամ վերջաբանի:

Փոքրածավալ քնագրերին ևս բնորոշ է կաղապարային կառուցվածք («...-ի սեփականությունը», «...-ի զորանոցի», «...-ի՝ որդու ...-ի» և այլն): Տարողության նշումներին բնորոշ է «... aqarqi, ... tirusi» կառուցվածքը (aqarqi-ն tirusi-ից մեծ է տասն անգամ):

Բիայնական արձանագրությունների կառուցվածքի և բնորոշ արտահայտությունների ընդհանրությունները կարող են վկայել խեթական և ասուրա-

²⁰⁶ Խորխոռայան տարեգրության կրկնօրինակի Վանի Մուրր Մասակ եկեղեցուց գտնված երկու հատվածները պարունակում են 138 տողեր, որոնք չեն պահպանվել ժայռի վրա: Դասի տարեգրության սկզբնական քնագիր պետք է անցնել 500 տողի: Տարեգրության վերականգնումը կրկնօրինակների օգնությամբ՝ կատարված Վ. Մեքի, Գ. Ա. Մեփրիշվիլու, Ն. Վ. Հարությունյանի և այլոց բաներով տե՛ս Ա. Մետառաճան, 1960, էջ 210-256; Արչունու, 2001, էջ 155-199 (ուղիմ զրգվանությամբ հանդերձ):

կան դպրությունների՝ ուրարտականի վրա ունեցած, ինչպես նաև վերջինիս՝ հին պարսկականի վրա թողած ազդեցությունների մասին:

Կառուցվածքի առումով քիայնական արձանագրությունների ամենաբնորոշ գծերն են կաղապարայնությունը և համառոտությունը (լակոնիզմը):

Արձանագրությունների խմբային դասակարգումն ըստ բովանդակության: Արձանագրությունները հիմնականում նվիրված են արչականքների պատմությանը, նորակառույցներին՝ քաղաքների, ամրոցների, տաճարների, ջրանցքների և այլնի շինարարությանը, երկրի կյանքի հոգևոր-պաշտամունքային և վարչա-տնտեսական ոլորտներին, ցույց են տալիս գրակիր առարկաների պատկանելությունը, պարունակությունը և այլն:

Բերենք մի քանի բնորոշ օրինակներ:

Ուազմական արչավանքի արձանագրում, որը տեղեկացնում է Ուլուանի երկրի և նրա կենտրոն Դարանի քաղաքի (ներկայիս Արովյան քաղաքի տարածքում) նվաճման մասին.

«Խաղդին արչավնց, սեփական գեներին (?) ներթարկեց Էթիտևի (երկիրը): Խաղդին իմ գորեղ է, Խաղդյան գեներն (?) իմ գորեղ (է): Խաղդյան զորությանը արչավնց Արգիշթի Մենուայորդին (և) գրավեց Ուլուանի երկիրը՝ Դարանի (քաղաքի) երկիրը: Խաղդյան մեծությանը Արգիշթի Մենուայորդին արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բիացնիկի երկրի, տեղը Տուշպա քաղաքի»⁷⁰⁶:

Վկայագիր Արգիշթիխինիի ամրոցի կառուցման մասին.

«Խաղդյան մեծությանը Արգիշթի Մենուայորդին ասում է.— Հոյակապ ակրոց կառուցեցի, հաստատեցի Արգիշթիխինիի ակունքը: Հողը յոր (?) էր, ոչ (մի) քան այնտեղ կառուցված (չէր): Գետից յորս ջրանցք անց կացրեցի, խաղողատ (և) անտատ հիմնեցի, կատարեցի մեծագործություններ այնտեղ: Արգիշթի Մենուայորդին արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բիացնիկի երկրի, տեղը Տուշպա քաղաքի»⁷⁰⁷:

Վանի թագավորության աստվածներին զոհաբերություններ կատարելու կարգի սահմանում.

«Խաղդիին տիրոջը, Բշպուխի Մարտարդդին (և) Մենուա Բշպուխորդին այս դարպասները կառուցեցին, և սահմանեցին կարգ. Արևի (Գիլիկի աստծո) ասիև տոնախմբություն (?) կատարեղ (?) Խաղդիին, Թեղեբասին, Գիլիկիին (և) աստվածներին բոլոր»... (խաղդյուն է աստվածների ներկայացումը՝ նրանց պաշտամունքի համար նախատեսված զոհերի յոխարկմամբ)⁷⁰⁸:

«Մենուայի ջրանցքի» անցկացման մասին արձանագրություններից մեկը.

«Խաղդյան զորությանը Մենուա Բշպուխորդին այս ջրանցքը անցկացրեց: «Մենուայի ջրանցք» (է) ակունք: Խաղդյան մեծությանը Մենուան արքա (է) հզոր,

⁷⁰⁶ Мелконянович, 1960, էջ 259–260; Կարապետյան, 1981, էջ 54–55; Арутюнян, 2001, էջ 202; Salvini, 2008, I, էջ 348–349:
⁷⁰⁷ Мелконянович, 1960, էջ 262–263; Կարապետյան, 1981, էջ 56–57; Арутюнян, 2001, էջ 207–208; Salvini, 2008, I, էջ 354:
⁷⁰⁸ Мелконянович, 1960, էջ 143–149; Կարապետյան, 1981, էջ 44–47; Арутюнян, 2001, էջ 44–52; Հնայական, 1990, էջ 10–12, 92–97 (ուրչա գրքում՝ բնայնական պետական կրթի հանգամանակի ուսումնասիրությունը); Salvini, 2008, I, էջ 125–129:

արքա մեծ, արքա Քիսկեղիկ երկրի, տեղը Տուշպա քաղաքի: Մեծուան սատմ է.— Ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջարդի, ով որևէ մեկին ստիպի դրանք անել, ով սաի՛ «Ես եմ այս ջրանցքն սանցկացրեք», թո՛ղ Խաղիին, Թեղեբան, Ծիվիկին, (չոչոյ) աստվածները ոչնչացնեն նրան արևի տակ...»⁷⁹²:

Մարզական իրադարձության արձանագրում.

«Վաղարյան գրությունը Մեծուա Իշպոխնորդին սատմ է.— Հնեց այս տեղից Արծիբրեի անունով նծույզը, Մեծուացի տակ ցատկեց քաններկու կանգուն»⁷⁹³: Մեծուան սատմ է.— Ով այս արձանագրությունը տեղսիսանի, թո՛ղ ոչնչացնեն Խաղիին, Թեղեբան, Ծիվիկին նրա ընտանիքն (ու) ժառանգությունն արևի տակ»⁷⁹⁴:

Վաղա-տնտեսական բնույթի բնագրերից մեկը կավե սալիկի վրա.

(Դիմացի կողմում) — «Արքան սատմ է.— Ասա՛ Խաղիբրուսացին՝ օշոքամների մարդուն», Արանկի՛ խոհարարի մասին, հիրավի հանելի լինի կանքը (ըո?) սատոմու: Մի կնո՛ջ՝ Մուխդացին՝ խոհարարին, տվեցի (նրան) լինելու կին: Հինա (?) արքան արքունիքից վեղադարձրեղ է (նրան) Արանկիին՝ խոհարարին: ...»: (Հախառակ կողմում) — «Աղադարձրու՛ ...»: (Վեիքին) — «[Ռուսացի] Էշիմենացի որդու] ...»⁷⁹⁵ ...

Բազմալեզու արձանագրություններում մեզ հետաքրքրող գրային համակարգը հանդիպում է միայն Վանի թագավորության մեհենագրերի և ասուրական սեպագրերի հետ, որոնց մասին արդեն խոսվել է համապատասխան բաժիններում:

Գրության ուղղությունը և որոշ սկզբունքներ: Արձանագրությունների գրության ուղղությունը եղել է ձախից աջ: Բառանջատիչներ կիրառվել են միայն սեպագիր սալիկներում: Արձանագրություններում չի թույլատրվել տողադարձը. բառը, թերևս, ընկալվում էր իբրև սրբազան հասկացություն և չէր կարելի այն մասնատել: Եթե տողը կարող էր կիսատ մնալ, կիրառվում էր հավելյալ ձայնավորների գրության սկզբունքը, օրինակ՝ Մեծուա անունը կարող էր գրվել Mi-նu-O-a, Mi-i-նu-a (ինարավոր է նաև, որ կրկնությունը ցույց է տվել տվյալ ձայնավորի երկար արտասանությունը): Եթե տեղը սուղ էր, վանկային գրության փոխարեն կիրառվում էր գաղափարագիր, օրինակ՝ «քաղաք» բառը ուրարտերեն հեղում է pa-ta-ri (հիմքում հայերեն «պատ» բառն է). եռավանկ գրությունը փոխարինվում է միավանկ գաղափարագրով՝ URU, որը նույնպես նշանակում է «քաղաք»:

⁷⁹² «Մեծուացի ջրանցի» (որը ժողովրդի հիշողության մեջ մնաց «Շամիրամի առու (չոչոյ)» անվամբ) անջնարձան մասին մեզ են հասել տասնչորս արձանագրություններ, որոնց մի մասում չեն ելվում արքայի տիտղոսազարն ու անեծքի բանանը (Melissosian, 1960, էջ 168-173; Կարապետյան, 1981, էջ 49-50; Արչունտ, 2001, էջ 90-96; Salvini, 2008, I, էջ 203-215):

⁷⁹³ Ժառանգելու կանգունը համապար է 11,39 մետրի. համաշխարհային այդ սեկորը գեղազանցվել է միայն 1975 թվականին (Կարապետյան, 1981, էջ 52):

⁷⁹⁴ Melissosian, 1960, էջ 204-205; Կարապետյան, 1981, էջ 52; Արչունտ, 2001, էջ 134-135; Salvini, 2008, I, էջ 264:

⁷⁹⁵ Дьяконов, 1963, էջ 33-34, 51-57; Արչունտ, 2001, էջ 368-369: «Վեիքի գրության նշագրումը՝ Մոխիսյան, 2000 (b), էջ 133-139; Movsisyan, 2006 (b), էջ 202-207, աղ. IX:

Բիայնական սեպագրության մեջ հանդիպում են բառի գրության կրճատման դեպքեր (օր.՝ *¹⁰⁶taršuanı «մարդ» բառի գրությունը *ta կամ *ta ս տարբերակներով, կարասների վրայի տարողության գրառումներում aqarqi և tirusı չափերի նշումը սկզբնատառերով՝ a և ti):

Նշանների թիվն ու գրային համակարգի տեսակն ըստ այդմ: Ուրարտական սեպագրության համակարգը բառա-վանկային է: Առանձին նշաններով արտահայտվել են ձայնավորները, վանկերը, գաղափարագրերը և որոշիչները (ցուցիչները, դետերմինատիվները): Չայնավորներից հայտնի են չորսը՝ a, e, i, u, վկայված են ia և ue երկհնչյունները: Բաղաձայններ գրելու համար կիրառվում էր տվյալ բաղաձայնը պարունակող վանկերից մեկը (օրինակ՝ «a» բաղաձայնի համար՝ la, li/e, lu, al, il, el, ul): Մեծամասնություն են կազմում ըստ վանկերը, կան նաև եռահնչյուն փակ վանկեր (bar, din, hal, kur, man, sar և այլն):

Ինչպես նշվել է, բիայնական սեպագրությանը բնորոշ է նշանների մեկ իմաստ ունենալը, սակայն հանդիպում են նաև մեկ նշանի երկու, երբեմն՝ երեք նշանակությամբ կիրառման դեպքեր (օրինակ՝ is = giš, ri = sar, dē = ne = tē, hi = ti = di և այլն): Առկա է նաև հակասակ երևույթը, երբ նույն վանկը գրվում է տարբեր նշաններով (u և ú, ar և nr, di և di, sar և sar, և այլն):

Լայնորեն կիրառված է ակրոֆոնիայի (սկզբնահնչյունության) սկզբուկերը, որի համաձայն գաղափարագրերը հնչյունային գրությամբ գրվելիս արտահայտում էին բառի սկզբնամասը: Շատ տարածված է նաև «հնչյունային լրացման» երևույթը (գիտական գրականության մեջ հայտնի է առաջնային «ֆոնետիկ կոմպլիմենտ» անվամբ). բազմիմաստ գաղափարագրից հետո լրացուցիչ գրվում էր նրա վերջին վանկը, որը կոչված է ճշգրտելու, թե տվյալ նշանը հատկապես իր որ իմաստով է գործածված:

Թվանշանները: Բիայնական սեպագրության մեջ թվերը նշվել են երկու կերպ՝ հատուկ սեպագիր-թվանշաններով և վանկանշաններով դրանց անունները գրելով: Առավել տարածված է առաջին տարբերակը, որը համընդհանուր տարածում ունի սեպագրության աշխարհում: Սեպագիր թվանշանները ներկայացված են ադ. 19–ում¹⁰⁶: Ամենավորը նիշը նախատեսված էր կեսի (0,5), իսկ ամենամեծը 1000–ի համար: Համակարգը հնարավորություն էր տալիս գրելու անասանամորեն մեծ թվեր. օրինակ՝ երկու «1000» նշանակող սեպանշանները իրար կողք դնելով՝ առաջվում է մեկ միլիոն (1000 x 1000 = 1 000 000)¹⁰⁷...

¹⁰⁶ Ճյուղմագությունից խտասվելու նպատակով անընթաց ենք համարում սույ մի մեկնաբանություն: Բիայնական թվարանության կիցում ընկած է Լոզի հաշվարկի տասնորդական համակարգը (տն/ս Պետրոսյան, 1945, էջ 55–72; Нерсисян, 1976, էջ. 115–117; Барсахан, Асартян, 1980, էջ 166–178), ինչը երևում է նաև քերական արդյունքից, բացառությամբ մեկ դեպքի: Դա «60» թիվն է, որը տասնյակի շարքը երևում է նաև քերական արդյունքից, բացառությամբ մեկ դեպքի: «60 + 10» բանաձևով (փոխանակ չափորոշված՝ ունենում է նոր կշար, և «70»-ը ներկայացվում է «60 + 10» բանաձևով (փոխանակ չափորոշված՝ ինչը միջազանցյան միջավայրում տարածում ունեցած հաշվարկի 6–ական համակարգի հետավոր մի արձագանքն է:

¹⁰⁷ Բիայնական սեպագիր թվանշանները և դրանց առաջադրմունքը գիտական գրականության մեջ անս Մոսկովյան, 2003 (b), էջ 379–380:

Որոշիչներ (ցուցիչներ, դեմոնստրատիվներ): Բառ-գաղափարանշաններից մի քանիսը կիրառվում են նաև որպես որոշիչներ (դեմոնստրատիվներ), որոնք դրվելով այլ բառերից առաջ՝ ընդդռնել են դրանց, ցույց տվել ով կամ ինչ լինելը, տեսակը, բնույթը և այլ հատկանիշներ (տե՛ս Հավելվածի նշանացանկում):

Համաժամանակյա գրավոր աղբյուրներից ստացվող տեղեկությունները: Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների ընկալմանը, ինչպես նաև երկրի պատմության բազմաթիվ հարցերի լուսաբանմանը մեծապես օգնում են համաժամանակյա հետևյալ գրավոր աղբյուրները.

ա) ասուրա-բաբելական սեպագիր արձանագրությունները, որոնք բաժանվում են երկու խմբի՝ Ասորեստանում և Բիայնիիում կիրառված,

բ) քիայնական մեհենագիր արձանագրությունները, որոնք կիրառվում են առնվազն Իշպուինիի ժամանակաշրջանից (Ք.ա. 825–810 թթ.),

գ) խեթա-լուվիական հիեթոգլիֆ արձանագրությունները, որոնք վերաբերվում են մինչև Ք.ա. VIII դարն ընկած ժամանակահատվածին,

դ) Աստվածաշնչի Հին Կտակարանի գրքերը, որոնցում Աբարատի թագավորությունը հիշատակվում է՝ կապված Ք.ա. VII–VI դարերի իրադարձությունների հետ:

Այլ գրային համակարգերի հետ ունեցած առկությունները: Վանի թագավորության սեպագրության ամենասերտ կապը միջագետքյան ծագում ունեցող մյուս սեպագիր համակարգերի հետ է, ինչը, հասկանալիորեն, կապվում է ծագումնաբանական ընդհանրության հետ: Իր հերթին քիայնական գրահամակարգը ազդել է հին պարսկական սեպագրի վրա⁷⁹⁸:

Վերձանության ներկա վիճակը և հետագա խնդիրները: Թեպետ քիայնական սեպագիր արձանագրություններն ուսումնասիրվում են ավելի քան մեկ ու կես դար, վերձանության ուղղությամբ աշխատանքները դեռևս չի կարելի ավարտված համարել:

Տակավին շատ են կապակցված վերձանության չեմբարկվող բնագրերը (հատկապես, ոչ կաղապարային բնագրերը)⁷⁹⁹:

Վերջնական ճշտման կարիք ունի քիայնական սեպագրերի վերձանության հնչյունային կողմը. մինչ օրս արձանագրություններն ընթերցվում են սեպանշանների՝ ասուրերենում ունեցած հնչյունային արժեքներով, ինչը նման կլիներ, ասենք, այսօր անգլերենը թաոիներենի տառային արժեքներով կարդալուն: Արդեն նշել ենք Հայաստանում կատարված գրային ընդգրկուն բարեփոխման մասին, ինչի արդյունքում, տրամաբանական է, որ գրային համա-

⁷⁹⁸ Հմմտ. Melikyan, 1960, էջ 114: Ճարտարապետության և շինարարական տեխնիկայի, մետաղագործության, խեցեգործության, կտուս-պալատմունկային պատկերազրույցային բնագրաձևերում քիայնական բաղադրարարության՝ Արեմեյան Կոստի վրա ունեցած ազդեցության մասին տե՛ս Ghirshman, 1962: հայերեն համատարած բաղաձանությունը՝ Գիլլման, 1993, էջ 16–17; Տիգրացյան, 1964, էջ 149–163 (նույն ժամանակությամբ հանդերձ):

⁷⁹⁹ Տե՛ս, օրինակ, Argyros, 2001, էջ 299–305, 338–339, 418–419 և այլն:

կարգը հարմարեցվե՞ր տեղի լեզվանյութին: Մի քանի նշանների պարզաբանված իմաստներն արդեն տարբերվում են Ասորեստանում ունեցածներից: Մյուս կողմից ակներև է, որ պետք է շարունակել ճշգրտման աշխատանքները: Բերենը մի օրինակ: Բիայնական սեպագրերում, ըստ այսօրվա ընթերցումների, բացակայում են «օ» և «վ» հնչյունները, որոնք հաճախ փոխարինվում են «ու»-ով (բացի այդ, «վ»-ն հանդես է գալիս նաև «ք»-ի տեսքով): «Ու»-ն, իբրև առանձին հնչյուն, ունի երկու սեպանշան և հանդես է գալիս նաև բազմաթիվ այլ վանկանշաններում. ո՞ր վանկի դեպքում «ու»-ն պետք է կարդալ «օ», որի՞ դեպքում «վ» կամ «ու», հստակեցված չէ: Նման օրինակները շատ են...

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՄԵԱՏԱՌ⁵⁰⁰ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արամեական գրի ծագումը: Արամեացիներն իրենց բնօրրանից՝ Արարական թերակղզուց տարածվել են դեպի Միդիա և Միջագետքի հյուսիս Զ.ա. II հազարամյակի երկրորդ կեսին, այսպես կոչված, երրորդ սեմական գաղթի ժամանակ: Զ.ա. II հազարամյակի վերջին և I-ի սկզբին նշված տարածքներում ստեղծվում են արամեական իշխանություններ: Զ.ա. I հազարամյակի սկզբին փյունիկյան այրուքները ենթարկելով որոշ փոփոխությունների՝ արամեացիները ստեղծում են իրենց այրուքները: Արամեական իշխանությունների նվաճումից հետո Ասորեստանի արքաներն արամեացիներին մեծ զանգվածներով տեղահանեցին և քնակեցրին իրենց տերության տարբեր շրջաններում: Կապված նրանց՝ Հին Առաջավոր Ասիայում լայն տարածման և, հիմնականում, առևտրի ոլորտում ներգրավված լինելու հետ, արամեերենը և արամեական գիրը սկսած Զ.ա. VIII դարից Ասորեստանում վերածվում են միջազգային հաղորդակցության լեզվի ու գրի: Զ.ա. VI-IV դարերում արամեերենն իր գրային համակարգով դառնում է Արեւմեկյան Պարսկաստանի պաշտոնական լեզուներից մեկը, ինչպես նաև Փոքր Ասիայից ու Եգիպտոսից մինչև Հնդկաստան ձգվող տարածքի հիմնական առևտրական լեզուն:

Արամեական արձանագրությունների պատմության ու շագրավ առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանք տարածում են գտնում արամեական իշխանությունների անկումից հետո, որոնց տարածքում խիստ փոքրաթիվ են, փոխարենը մեծ քանակությամբ հանդիպում են նրանց քնակության տարածքներից բավականին մեծ հեռավորության վրա (Ասորեստան, Պարսկաստան, Փոքր Ասիա, Եգիպտոս, Հյուս. Արաբիա, Աֆղանստան, Հնդկաստան, Հունաստան, Հայաստան և այլուր):

⁵⁰⁰ Այս բաժնում շեմաղվեվոր արձանագրությունները մասնագիտական գրականության մեջ հայտնի են «արամեական», «արամեերեն» և «արամեստան» («արամեացի») որակումներով: Մենք նախընտրում ենք կրճարը, քանի որ մինչ օրս հայտնի և մեկնարակված արձանագրություններից ոչ մեկը չի բյուրեղն ազդեցությամբ արամեացի անձանց կողմից, ուստի չի կարող կոչվել «արամեական», իսկ դրանց (զանե մի մասի) ընթերցումն արամեերեն չի կարելի վերբնական համարել:

Արամեական գիրը բնույթով բաղաձայնային է՝ բաղկացած 22 տառից: Պարզության և գործնականության շնորհիվ լայն տարածում է ստացել Առաջավոր Ասիայում՝ հիմք դառնալով մի շարք նոր (երբայական, ևարաթեական, պալմիրական, պահլավական, ասորական, մանիքեական և այլ) գրատեսակների⁶⁰¹:

Հայաստանում արամեաուտ արձանագրությունների հայտնագործումների և ուսումնասիրության պատմությունը⁶⁰²: Արամեաուտ գրությամբ առաջին ասարկան՝ երկկողմանի ասորիոնե մի կնիք, որը գտնվել էր Արևմտյան Հայաստանից (թերևս Էրզրումի շրջանից), գիտական աշխարհին հայտնի դարձավ 1864 թվին: Իրը պահվում է Էրմիտաժում (Սանկտ-Պետերբուրգ)՝ կրելով 6434 գույքահամարը: Մի կողմին պատկերված են այժ և այժու, մյուսին՝ սլացող վարագ, որից վեր և վար առկա է երկտող գրություն⁶⁰³ (տե՛ս նկ. 111):

1864, 1883 և 1889 թվականներին կատարվեցին կնիքի մակագրության ընթերցման փորձեր, ընդ որում, միևնույն գրությունը երեք դեպքերում տառադարձվեց և ընթերցվեց իրարից զանազանվող երեք տարբերակներով՝

MTRS / TTW // ŠMR / ZNKZ (1864 թ.)
 MTRSTW / *? // ŠŠRZNH / SM (1883 թ.)
 MTRSTD // HMD. / NH. (1889 թ.)⁶⁰⁴:

Ընթերցման մեզ հայտնի վերջին փորձը, որն այսօր համարվում է առավել ընդունելի, կատարվել է 1965 թվին. արդյունքում ստացված ընթերցումն է՝

MTRSTR Միթրիչիթր(այ)ին (Միթրիչիիր(այ)ին)
 HMR ZNH ZY այս կնիքը պատկանում է⁶⁰⁵:

Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված արամեերեն բաժին ունեցող միակ երկլեզու արձանագրությունը հայտնաբերվել է 1900 թվին, Փոքր Հայքի

⁶⁰¹ Արամեերենի, արամեական գրի և դրա տարածման մասին կա մեծածախ գրականություն. տե՛ս օրինակ Schiffer, 1911; Dupont-Sommer, 1949; O’Callaghan, 1948, էջ 93-144; Jensen, 1958, էջ 281-285; Diringer, 1962, էջ 133-140; Ameritan, 1997; Լեռնալուսա, 1955, էջ 114-130; Ծերսուբ, 1963, էջ 302-354; Lipinski, 1975; Փրսարս, 1979, էջ 105-108; Lipinski, 2000 և դրանցում հղված գրականությունը:

⁶⁰² Նկատի ունենալով, որ Հայաստանի արամեաուտ արձանագրությունների մասին ներկայումս չկա ամփոփ աշխատություն, մեր այս բաժնում կներկայացնենք դրանց ուսումնասիրության պատմությունն ու առկա նրապարտությունները հնարավորինս մակրամասն՝ հուսալով, որ այն կհաստի գրաին հաշարմանների կարևոր այս խմբի ճանաչար դիվանի կազմելու ու հետագա հետազոտությունների (ընթացիկ աշխարհագրությունը տե՛ս բարտեղ 4):

⁶⁰³ Բուտտա, 1965, էջ 18-19, նկ. 1-2; Կրսարս, 1988, էջ 66, աղ. XVI-9.

⁶⁰⁴ Բուտտա, 1965, էջ 18-19 (և հղված գրականությունը):

⁶⁰⁵ Բուտտա, 1965, էջ 19: Ենթյով առաջին նրասարալից Օ. Պլատի՝ ընթացի և փորաշխարհ ստրապակների դրամների տառանների նմանության մասնակցումից, Գ. Ա. Տիրացյանը հնարավոր է համարում կնիքի տիրոջ նույնացումը Ք.ա. IV դարի Փոքր Հայքի ասորավ Միքսատատեի հետ (Կրսարս, 1957, էջ 82):

տարածքի Աղջակալի կամ Աղաչա կալի (բառացի՝ «Անտառի ամբողջ») հնավայրից⁶⁰⁶: Արձանագրության երկրորդ լեզուն հունարենն է: Բնագրի հունարեն և արամեերեն հատվածները բառացիորեն չեն կրկնում մեկմեկու. այստեղ բերում ենք արամեերեն մասի թարգմանությունը, իսկ մյուսը կներկայացնենք հունարեն արձանագրությունների բաժնում.

1. BGNT' [D' QM G]M[H]'
2. DY RMN B[R' DY HRYW]
3. K' L[DKRN TB] BR' H
4. HRY[WK'] BR' DY RMN
5. HŠT[RPN' DY 'L HR]MN

1. (Այս) արքիալների մեջ հիմնվեց դամբարանը
2. Օրոմանայի՝ որդու Արխաու-
3. կայի: Ռապեա [մնայուն հիշատակ] կառուցեց այն
4. Արիյ[աուկան]՝ որդին Օրոմանայի՝
5. սատրպապը Ար]մենիայի⁶⁰⁷:

Արձանագրության հնագրական հետազոտությունն ու հայտնաձև տվյալների համադրումը այլ աղբյուրների հաղորդումների հետ ցույց են տալիս, որ այն կանգնեցվել է Ք.ա. III դարի կեսերին⁶⁰⁸:

Հայաստանից գտնված արամեատառ արձանագրությունների մեջ մեծ թիվ են կազմում սահմանաքարեր համարվածները, որոնք, ընդունված տեսակետի համաձայն, վերաբերում են Արտաշես I-ինի (Ք.ա. 189-160 թթ.) ժամանակաշրջանին⁶⁰⁹:

Առաջին սահմանաքար համարվող կոթողը գտնվել է 1906 թվին ներկայիս Գավառի շրջանի Կարմիրգյուղում (յուսանկարն ու զմանկարը՝ նկ. 112 a): Արձանագրությունը հայտնաբերող և հրատարակող Ե. Լալայանի հաղորդման համաձայն՝ այն գտնվել է շինարարական աշխատանքների ժամանակ քրտահարք բացված դամբարանից⁶¹⁰: Ե. Լալայանի կողմից արձանագրության

⁶⁰⁶ Արձանագրությունը գտել է Սիպակ Ֆրանգիական կուսուրտու Մ. Գրեմարը Տեղիկից 41 կմ հարավ-արևմուտք գտնվող Աղջակալի հնավայրից: Արձանագրության ուսումնասիրության մանրամասն պատմությունը՝ համալրատուական գրականության ժամանակվանք, բնագրի տատարարմունքներն ու անգլերեն թարգմանությունը տե՛ս Lippinski, 1975, էջ 197-208:

⁶⁰⁷ Lippinski, 1975, էջ 199-200:

⁶⁰⁸ Արձանագրությունը կանգնեցնող Արիուկեայ թղին է Փոքր Հայքի առաջադ Օրոմանեի և թող՝ Գավառմեայի ճակատամարտին (Ք.ա. 331 թ.) մասնակցած կապադոկիացիների զորքի սատարող Արիուկայ: «Արիուկա» անձնանունը կենտրոնական աղբյուրներում հայտնի է դեռևս Ք.ա. XVIII դարից և բաղկացած է առյա- սարխա(չե)կան» էթնիցի և -ուկ մասերից (Lippinski, 1975, էջ 202-208; տե՛ս նաև հունարեն արձանագրությունների բաժնում):

⁶⁰⁹ Թե ինչու ենք դրանք անխառն «սահմանաքար համարվածներ», ոչ թե հաստատուապես սահմանաքարեր, տե՛ս առաջին՝ «Ինտարկու մներ հետազոտ ուսումնասիրությունների համար» ներառմանում:

⁶¹⁰ Լալայան, 1931, էջ 97-98:

պատճեններն ուղարկվել են Եվրոպա, սակայն որոշակի պատասխան, ըստ երևույթին, չի ստացվել:

1932 թ. Մարտունու շրջանի Կզնուտ գյուղի մի տան պատի շարվածքում գտնվեց նույնանման արձանագրություն (լուսանկարն ու գծանկարը՝ նկ. 112 Ե), որի ծագումն այդպես էլ անհայտ մնաց¹¹¹: Չնայած, որ նշված երկու արձանագրություններն էլ վնասված ու թերի էին, ակնհայտ էր, որ երկուսում էլ կրկնվում էր միևնույն գրությունը: Ս. Բարխուդարյանը արձանագրությունների պատճեններն ուղարկեց նախ Լենինգրադ՝ ակադեմիկոս, արամեագետ Պ. Կ. Կոկովցևին, ապա Հր. Անառյանի միջոցով Հ. Պերպերյանին (Փարիզ): Երկուսից ստացված պատասխաններում էլ նշվում էր, որ տառերն արամեական են, լեզուն՝ ոչ: Հ. Պերպերյանը նշում էր նաև, որ առաջին տողում կարելի է ենթադրաբար ընթերցել «Արուսեսերսես» անունը¹¹²:

1935 թ. Ա. Պայազաուն առաջարկեց բնագրերն ընթերցել ուղիներեն¹¹³, ինչը, սակայն, չընդունվեց ուսումնասիրողների շրջանում:

1941 թ. Ա. Բորիսովն առաջարկեց արձանագրությունների առաջին մասն ընթերցել՝ «Արտաշես՝ արքա, որդի Չարիաթրի (Չարեհի)...»: Ուշադրություն հրավիրելով հայրանունից հետո «արքա» տիտղոսի բացակայությանը՝ նա եզրակացրեց, որ հիշատակվող Արտաշեսը պետք է լինի դինաստիայի առաջին, հիմնադիր արքան, որպիսին Հայաստանում եղել է Արտաշես 1-ինը (Ջ.ա. 189–160 թթ.): Ծարունակությունն, ըստ նրա, արամեերեն չի թարգմանվում, իսկ ընթերցված արամեերեն բառերը գաղափարագրեր են, որոնք փոխարինում են արձանագրության ոչ-սեմական, հավանաբար, հայերեն, պարսկերեն կամ այլ լեզվի բառերին: Առաջին արձանագրության վերջին տողում Ա. Բորիսովն առանձնացրեց երկու բառ՝ RWNDKN և HLT, և առաջին բառը ենթադրաբար մեկնաբանելով պահլավերեն՝ «զնացողներ», «անցնողներ», կարծիք հայտնեց, որ այդ բառերը կարող են լինել ճանապարհացույց սյուներ, սահմանաբար կամ ի նշանավորումն որևէ իրադարձության կանգնեցված կոթողներ: Նա նախապես ենթադրել էր, որ RWND-ն կարող է լինել Երվանդ արքայի անունը (որին տասպալել էր Արտաշեսը), սակայն դա համարել թիչ հավանական, քանի որ «սուլյալ անունը պետք է սկսվեր մի ձայնավորով, որն արամեական գրության մեջ նշանակվում է հազագի (այնֆի) միջոցով»¹¹⁴:

¹¹¹ Բարխուդարյան, 1935, էջ 205–214:

¹¹² Բարխուդարյան, 1935, էջ 213: Ըստ Ա. Բորիսովի տեղեկության՝ անվան ընթերցումն առաջարկել է ակադեմիկոս սեպագրագետ Ֆ. Յուրո-Նանենը (Երևան, 1946, էջ 98):

¹¹³ Ա. Պայազաուն առաջարկը ներուշայի էր:

ուղիներեն

Արտաշես թագ թագ

Միանի վիշու-աս զու

Թեղ զին թագն թագ

Թեղ ինքն ինքն թագ...

Ա. Պայազաուն տալիս է նաև բնագրի համեմատ մեկնություն, վերականգնելով այն՝ «Ար ինացածից վեր, դու առեցիս կուտարյան, պարտել է քո գլխիցը – միան նա չեմ, որ հախտուցած եկել եմ պարտե: Նա սարպես նշարտության հասնելով...» (Պայազաուն, 1935, էջ 215–219):

¹¹⁴ Բորիսով, 1941: Երևան, 1946, էջ 97–107:

Հ. Օրբելին, մեկնաբանելով Ա. Բորիսովի վերծանությունը և հիմք ընդունելով Մովսես Խորենացու մոտ վկայված Արտաշես արքայի սահմանաքարերի նկարագրությունը⁸¹⁵, «Իզվեստիա» թերթին տված հարցազրույցում կարծիք հայտնեց, որ գրակիր կոթողները սահմանաքարեր են, որոնց վրայի սեմական գրերով արձանագրությունները պետք է ընթերցվեն հայերեն⁸¹⁶:

1946 թ. Ֆրանսիացի սեմագետ-հնագրագետ Ա. Գյուպոն-Մոմերն առաջարկեց արձանագրությունների լրիվ ընթերցում⁸¹⁷

(1906 թ. գտնված բնագիրը)

- | | |
|----------------|--------------------------------|
| 1. 'RTHSSY | Արտախառայր՝ |
| 2. MLK BR ZY | արքան, որդին |
| 3. [ZR]YTR | Չարիաթրի, |
| 4. NWN' KN HLS | ձուկ էր այստեղ ձգում (որսում): |

(1932 թ. գտնված բնագիրը)

- | | |
|------------------|-----------------------------|
| 1. ['R]JTHSSY | Արտախառայր՝ |
| 2. [ML]K BR ZY | արքան, որդին |
| 3. [ZR]YTR HL[S] | Չարիաթրի, ձգում (որսում) էր |
| 4. [K]N BYN[Y] | այստեղ ծա- |
| 5. [T]Y | ժաններ ⁸¹⁷ : |

Անդրադառնալով վերծանության այս փորձին՝ Կ. Վ. Տրները քիչ հավանական համարեց այն, գտնելով, որ հազիվ թե Հայաստանում գործածվեր հայերենից խիստ տարբերվող արամեերենը, պաշտպանելով իրենից առաջ հայտնված տեսակետը արամեագիր հայերենի վերաբերյալ⁸¹⁸:

1950 թ. կրկին Սևանի ավազանից (Մարտունու շրջանի Չորագյուղ գյուղի եկեղեցու մերձակայքից) գտնվեց նոր արամեատառ արձանագրություն, որը նախորդներից շատ ավելի վատ էր պահպանված: Ի. Մ. Գյակոնովն ու Կ. Բ. Ստարկովան, ուսումնասիրելով այն, ձեռնպահ մնացին թարգմանելուց, նշելով միայն, որ կոթողի հնագրական հետազոտությունից կարելի է եզրակացնել նախորդ երկուսից ժամանակագրորեն ավելի ուշ շրջանի պատկանելը⁸¹⁹:

⁸¹⁵ «...Արտաշեսը երանայում է գուղերի և ագարակների սահմաններ որսել, որովհետև նա մեր աշխարհը բազմամարդաբնեց շատ ազգեր (ուրիշ երկրներից) բերելով, որոնց բնակիչները բռնություն, նախանկրում ու դաշտերում: Սահմանների համար նա հյաններ սահմանեց պապևս, երանայեց տաշել քառակուսի ձևով քարեր, մեկերը պնակի նման փոսքեղ և քաղեց հողի մեջ, իսկ երանց փա կանգնեցնել քառակուսի կոթողներ՝ գետնից քիչ բարձր» (Խորենացի Թ, ԾԶ):

⁸¹⁶ Растворцова древнейших надписей, "Известия", 31. 01. 1941.

⁸¹⁷ Dupont-Soames, 1946-1948, էջ 53-66:

⁸¹⁸ Тренер, 1953, էջ 162-174:

⁸¹⁹ Дьяконов, Старова, 1955, էջ 163-174:

Նույն հրապարակումով հիշյալ հեղինակները, մերժելով Ա. Դյուպոն-Մոմերի վերծանության վերջնամասերը, լիովին անհիմն համարեցին դրանք ձկան որսի հետ կապվելը: Ընդունելով Հ. Օրբելու կարծիքը սահմանաքարերի մասին, նրանք 1906 և 1932 թվերին գտնված բնագրերն ընթերցեցին լիովին արամեներեն՝ տալով հնարավոր երկուական մեկնաբանություններ՝

(1906 թ. գտնված բնագիրը)

- (ա)
1. Արտաքսիյը՝
 2. արքան, որդին
 3. Չարիաթրի
 4. (հողամասը) RWNDKN բաժանեց
(սահմանազատեց):

- (բ)
- Արտաքսիյը՝
արքան, որդին
Չարիաթրի:
RWNDKN հողամաս
(կամ՝ RWND-ական հողամաս):

(1932 թ. գտնված բնագիրը)

- (ա)
1. Արտաքսիյը՝
 2. արքան, որդին
 3. Չարիաթրի, բաժանեց
 4. [...] ... միջև [...]
 5.

- (բ)
- Արտաքսիյը՝
արքան, որդին
Չարիաթրի: Հողամասը
[...] ... միջև [...]
.....⁸²⁰

Այստեղ նրանք փորձեցին Ա. Բորիսովի կողմից առանձնացված և ենթադրարար պահպանված «գնացողներ», «անցնողներ» թարգմանված RWNDKN բառում տեսնել Երվանդ-Օրոնտաս արքայանունը, սակայն իրենք էլ առարկեցին, քանի որ, ըստ նրանց, պարսկական ծագում ունեցող այդ անունը տվյալ ժամանակաշրջանում պետք է ունենար Arvant(a) ձևը և գրվեր d-ով, ոչ թե t-ով: Ի վերջո եզրակացվեց, որ RWNDKN-ն հողամասի անվանումն է⁸²¹:

Ա. Դյուպոն-Մոմերի և Ի. Մ. Դյակոնովի ու Կ. Բ. Ստարկովայի ընթերցումների «հաշտեցման» յուրօրինակ փորձ արեց Ա. Մ. Դանիելյանը՝ Սևանի սկիզբանից գտնված արձանագրությունները մեկնաբանելով իբրև արքայական ձկնորսարանի սահմանները ցույց տվող վկայագրեր: Լինելով իրավագետ և նկատի ունենալով այլ երկրներում (հատկապես Բարեղունում) սահմանաքարերի գործածման փորձը, նա իրավացիորեն գտնում է, որ սահմանաքարերի բնագրերը պետք է միմյանցից տարբերվեն՝ զոնն բաժանված հողերի սեփականատերերի անունների նշումներով⁸²²:

1957 թ. Մաքտունու շրջանի Շակցար գյուղի մոտակայքից հայտնաբերվեց սահմանաքար համարվող ևս մի կոթող, որն, ի տարբերություն նախորդների,

⁸²⁰ Дьяконов, Старова, 1955, էջ 163-174:

⁸²¹ Дьяконов, Старова, 1955, էջ 168-169:

⁸²² Դանիելյան, 1977, էջ 235-244:

շատ լավ էր պահպանված (նկ. 113): Բնագրի վերձանությունը հրատարակեց Գ. Ա. Տիրացյանը, որը RWNDKN-ն համարեց Արտաշես արքայի տոհմանունը.

- | | |
|----------------|-------------------------------------|
| 1. 'RTHŠSY MLK | Արտաշես արքան, |
| 2. BR ZY ZRYTR | Չարեհի որդին |
| 3. RWNDKN HLQ | Երվանդական բաժանեց |
| 4. 'RQ BYN | հողը (միջև) |
| 5. QRS [YN] | մասերի (րաժինների) ⁸²³ : |

1961 թ. Գառնիի ամրոցի պեղումների ժամանակ ուշ միջնադարյան պատի շարվածքում գտնվեց քարե արամեատառ արձանագրություն ևս (նկ. 114), որի վերին մասն ու ձախ եզրը վնասված էին: Հրատարակելով բնագրի վերձանությունը՝ Ա. Գ. Փերիխանյանը կարծիք հայտնեց, որ դրա հեղինակը երկրորդ դարավերջին և երրորդ դարի սկզբին իշխած Վաղարշի (Վուրգեսի) որդի Խոսրով I հայոց արքան է: Արձանագրության պահպանված մասը վերձանվում է՝

- | | |
|----------------------|-------------------------|
| 1. | |
| 2. MLK RB ZY 'RM[YN] | արքա մեծ Հայ[աստա |
| 3. BRN ZY WLGS | որդի Վուրգես |
| 4. MLK | արքայի ⁸²⁴ : |

1964 թ. Չանգեզուրի Իշխանասար լեռան ստորոտին, Սիսիանից Գորիս տանող ճանապարհի մոտակայքից գտնվեց ինը տողանոց արամեատառ արձանագրություն (նկ. 115), որի վերձանությունը հաջորդ տարի ներկայացրեց Ա. Գ. Փերիխանյանը.

- | | |
|----------------------|-------------------------------|
| 1.]QH[| |
| 2. QRY' [ZY] | գյուղը [] |
| 3. [']RTHŠ[SY] | Արտաշեսը՝ |
| 4. MLK 'RWND[QN (?)] | արքան, Երվանդական, |
| 5. TB BR | Բարին՝ որդին |
| 6. ZRYHR | Չարեհի, |
| 7. WNQPR | և Նեկվասը՝ |
| 8. QTR BR | թագադիր, որդին |
| 9. 'HŠTRSRT | Աիշահրասարտի ⁸²⁵ : |

⁸²³ Տիրացյան, 1957, էջ 105–109; Կրտսե, 1959, էջ 88–90: Այստեղ ստալ թաշվեց և ծնագրում ցայն տարածում գտավ այն կարծիքը, որ Արտաշես իրեն «երվանդական» է հռչակել իր իշխանության իրավական հիմնավորում տալու, երվանդանիներին և, թերևս, նրանց միջոցով, նաև Արեւմտեաններին կապվելու նպատակով:

⁸²⁴ Սերսառու, 1964, էջ 123–137:

⁸²⁵ Սերսառու, 1965, էջ 107–128; Perikhanian, 1966, էջ 17–29:

դրոշմներ, որոնց մեջ կային նույն կնիքի բազմակի դրոշմվածքներ: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք 1036 ինքնուրույն կնիքների դրոշմվածքներ են⁸³²: Դրանց թվում կան արամեաառաջ գրություններով կնքադրոշմներ⁸³³:

2001 թ. ամռանը, հայ-իտալական միացյալ արշավախումբը Գավառ քաղաքից հարավ գտնվող Մարուխան գյուղից հայտնաբերեց թվով իններորդ⁸³⁴ «սահմանաքարը»՝ հետևյալ գրությամբ.

- | | |
|--------------|------------------|
| 1. 'RTHŠ SY | Արտաշես |
| 2. MLK BR ZY | արքան, որդին |
| 3. ZRYTR HLG | Չարեհի բաժանեց |
| 4. 'RQ BYN | հողը |
| 5. QRY (') | գյուղ(երի) միջև: |

Ուշագրավ է, որ նշված էինց տողերից վերև և ներքև, քարի կենտրոնական մասերում ասոկա են երկու կամ երեք նշաններ (նկ. 120), որոնք, ըստ երևույթին, արամեական տառեր չեն⁸³⁵:

Նույն թվականին Գեղարքունիքի մարզի պատմական միջավայրի պահպանության ծառայության պետ Ն. Հազեյանը հայտնաբերեց ևս երկու նման արամեաառաջ քարակոթողներ, որոնք պահպանվել էին «Կարդենիկ գյուղի եկեղեցու պատի մեջ: Արժանագրություններից մեկը հնգատող էր, մյուսը՝ վեցատող.

- | | |
|--------------|---------------------------|
| ա. | |
| 1. 'RTHŠ SY | Արտաշես |
| 2. MLK BR ZY | արքան, որդին |
| 3. ZRYTR HLG | Չարեհի բաժանեց |
| 4. 'RQ BYN | հողը միջև |
| 5. QRY | գյուղերի ⁸³⁶ : |

- | | |
|--------------|--------------|
| բ. | |
| 1. 'RTHŠ SY | Արտաշես |
| 2. MLK BR ZY | արքան, որդին |

⁸³² Մեջբերական հատրցումներ՝ Մառնեյան, 1981, էջ 19–20; Խաչատրյան, 1981, էջ 20–22, կնքադրոշմների աբիդակների ժառանգար Խաչատրյանը պատկերակցում էր՝ Պատրիարք, Խաչատր, 2008:

⁸³³ Արամեաառաջ կնիքների 14-ն են և կրում են 1017–1018, 1020–1031 համարները (Պատրիարք, Խաչատր, 2008, էջ 222–223, յուսակարգից)՝ վերջում, իբրև հավելված):

⁸³⁴ Հրատարակման մեջ այն համարվում է տասներորդը, քանի որ դրանից առաջ Մևանա լճի ափամերձ գոտեկ էր մի կրող, որը, դատելով պահպանված վիճակից, ենթադրվում էր, որ այն սկզբնապես եղել է «սահմանաքար»: «Արդենիս վրա որևէ գրանշան չի պահպանվել, այն վերածչանված է «միջնադարյան բերդի պատկերազարդման» (Հակոբյան, Հնայանյան, Կարապետյան, 2001, էջ 18): Մենք այն չենք դասում արամեաառաջ բնույթի կրողների շարքը՝ նկատի ունենալով նայտնի այն դեպքերը, երբ կրողը պատրաստվել, սակայն չի արձանագրվել:

⁸³⁵ Բիշինև, Հակոբյան, Հնայանյան, Կարապետյան, 2001, էջ 79–82: Հնդկականից հետագործ են համարում, որ այդ նշանները փոստազգիված իննսն ամից ուշ շրջանում:

⁸³⁶ Հակոբյան, Հակոբյան, Հնայանյան, 2002, էջ 76–77:

3. ZRYTR	Չարեհի
4. 'RWNDKN HLQ	Երվանդական բաժանեց
5. 'RQ BYN	հողը միջև
6. QRY	գյուղ(եր)ի ⁸³⁷ :

Ի մի բերելով և դասավարդելով մինչև 2002 թվականը հայտնաբերված արամեատառ քարակոթողների առանձնահատկությունները, Մ. Հմայակյանը արեց մի շարք ուշագրավ դիտարկումներ: Հիմք ընդունելով Ս. Գ. Պետրոսյանի և Ս. Բ. Հարությունյանի փաստարկները «Երուանդ»-ի՝ հնդեվրոպական ամպլոալի ասածո հետ կապված դիցանուն լինելու վերաբերյալ, նա հնարավոր է համարում «Երվանդական» բառի «աստվածային», «աստվածազարմ» թարգմանությունը, որի դեպքում արքայի տիտղոսաշարը կտառնա հետևյալ տեսքը. «Արտաշես արքան, Չարեհի որդին աստվածային»⁸³⁸...

2008 թ. Հ. Հակոբյանը և Ս. Հմայակյանը հրատարակեցին 2001–2007 թթ. հայ-խտավական արշավախմբի ջանքերով հայտնաբերված և ուսումնասիրված քարակոթողները, այդ թվում՝ նաև դեռևս 1980–ականներից հայտնի, բայց չհրատարակված արամեագիր կոթողը Ներքին Գետաշենից: Հեղինակները դրանով արձանագրեցին, որ մինչ այդ թվականը Հայաստանից հայտնաբերվել է սահմանաքար համարվող 15 կոթող, որոնցից երեքի գրությունները հետազայում ջնջվել են, իսկ կոթողները վերածվել են խաչքարերի, ինչև ականհայտ է դրանց պահպանված վերնամասերից⁸³⁹:

Մեզ հետաքրքրող տարածաշրջանի մերձակայքի արամեերեն արձանագրություններից հատուկ հիշատակության են արժանի Վրաստանից հայտնաբերված քնագրերը, որոնցից մեկը երկեզու է (հունարեն–արամեերեն)⁸⁴⁰:

Հայկական լեռնաշխարհին մերձակա և պատմականորեն ստավել կապված շրջաններից հայտնաբերված հնագույն արամեերեն արձանագրությունը գտնվել է 1985 թ. Ուրմիո լճից դեպի հարավ–արևելք ընկած Բուկան հնավայրից (յուսանկարն ու գծանկարը տե՛ս նկ. 121): Այն պաշտամունքային նշանակություն ունեցող քնագիր է, անեծքի բանաձև, որում հիշատակվում են աստվածներ Խաղդին և Հաղաղը (իմա՝ Աղաղ–Թելչերան, որը Վանի թագավորության դիցարանի երկրորդ զվաավոր աստվածն էր): Ելնելով հայագիտության համար ունեցած կարևորությունից և նկատի ունենալով, որ մեզանում այդ ուշագրավ արձանագրությունը դեռևս մնում է գրեթե անճանոթ, ստորև բերում ենք քնագրի ամբողջական տառադարձումն ու թարգմանությունը.

⁸³⁷ Հազիյան, Հակոբյան, Հմայակյան, 2002, էջ 77:

⁸³⁸ Հմայակյան, 2002, էջ 72–76:

⁸³⁹ Hakobyan, Hmayakyan, 2008, p. 181–191.

⁸⁴⁰ Ըստ հրատարակիչների՝ դրանք բոլորն էլ թվագրվում են I–III դարերով: Այդ քնագրերի հնարավոր մեկնաբանություններում չմի չեն արկությունները Հայաստանի հետ (Hleperova, 1941, էջ 1–72 մեկնաբանություններում չմի չեն արկությունները Հայաստանի հետ (Hleperova, 1941, էջ 1–72 մեկնաբանություններում չմի չեն արկությունները Հայաստանի հետ (Hleperova, 1990, էջ 3–76, վերջում նկարները) (նկարները՝ վերջում): Hleperova, 1948, էջ 49–57; Hleperova, 1990, էջ 3–76, վերջում նկարները):

1. ZY.YHNS.'YT.NSB[']ZNH[.....?]
2. BLHMN.'W.B\$LM.[K]L.MN.MWTN'.[...?]
3. ZY.HWH.BKL.'RQ'.Y\$MWH.'LHN.B[Y]
4. T.MLK'.HW'WLS.H'.L'LHN.WLS.
5. H'.LHLDY.ZY.BZ'TR.\$B'.\$WRH.
6. YHYNQN.'GL.HD.W'L.Y\$B'.W\$B
7. '.N\$N.Y'PW.BTNR.HD[.]W'L.YML'
8. WHY.WY'BD.MN.MTH.TNN.'\$H.WQL.
9. RHYN.W'RQH.THWY.MMLH[H?]MYT MR
10. 'H.PR'.R'\$WMLK'.H'.ZY.[...]D/R/B.
11. 'L.NSB'ZNH.KRS'H.YHPKN.HD[D.]
12. WHLDY.W\$B'.\$NN.'L.YTN.HDD.QLH[.]
13. BMTH.WYMH'HY.KL.LWS.NS[B]'ZNH.

1. Ով որ շրջի այս կոթողը, [թե՛]
2. պատերազմի ժամանակ, թե՛ խաղաղության, ամեն տեսակ համաճարակ, այնքան
3. շատ, որքան եղել է ողջ աշխարհում, թո՛ղ աստվածները տարածեն երկրում
4. այդ արքայի: Եվ նա ատելի է աստվածներին, և նա ատելի է
5. Խաղդիին, որը Z'TR-ում է: Թո՛ղ յոթը կով
6. կերակրեն մեկ հորթի, և այն թող չկշտանա: Թո՛ղ յոթը
7. կին [հաց] թխեն մի վառարանում և չցնեն
8. այն: Թո՛ղ ծուխը (եփող) կրակի և աղմուկը
9. ջրաղացի անհետանան նրա երկրից: Թո՛ղ նրա հողն աղակալվի, և
10. թո՛ղ այն մղախտերից դատնանա թունալոր: Եվ այն արքան, որ [կզրի Օ]
11. այս կոթողին, թո՛ղ Հադադն ու Խաղդին կործանեն նրա գահը:
12. Եվ թո՛ղ Հադադը չամպրոպի
13. նրա երկրում, և թո՛ղ ողջ անեծքն այս կոթողի հարվածի (չախջախի) նրան⁸⁴¹:

Հայաստանից հայրենաբերված արամեաառ դրամները: 1990–ական թթ. գիտական շրջանառության մեջ դրվեց Վանա լճի շրջանից գտնված մի դրամ (նկ. 122, աջմ պահելում է անզվիական մի մասնավոր հավաքածուում), որի աշամեաառ գրությունը առաջարկվեց ընթերցել «*Միիրդաստ' արքա Տուսլիտ*»⁸⁴²:

⁸⁴¹ Lemaire, 1998, էջ 15–30; Sokoloff, 1999, էջ 105–121: Ի դեպ, սա աստիճան և աստիճան մյակ դեպքն է, երբ ունենք «խաղդի» անվան աբղորենական (տաստիճան) գրություն, ինչ կարևոր է հասկանալու դիտարկման մակարդակն տեսակետից (տե՛ս Մովսիսյան, 2000 (ա), էջ 33–35): Արմատագրության թարգմանու թյունը՝ կատարված Կոստյո Տիրացյանի կողմից՝ տե՛ս Տիրացյան, 2001, էջ 6:

⁸⁴² Khurshudian, 1998, էջ 8; Կիրաչյան, 1998, էջ 167–174: Ես այն տեղում ելվում են այլ ժամանակների կողմից առաջարկվող տարբեր մակարդակներ: Հեղինակի բանավոր հարցրթյան համաձայն՝ այս

Այնուհետև Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտական հավաքածուն համալրվեց Արտաշատի պեղումներից հայտնաբերված և անհայտ ծագմամբ արամեատառ նոր դրամներով⁸⁴³:

2005 թ. հրատարակվեցին արամեատառ դրամների նոր օրինակներ⁸⁴⁴: Դրամագետ Ռուբեն Վարդանյանն ուսումնասիրության նյութ դարձրեց այդպիսի 65 դրամներ՝ արամեական գրատեսակները համադրելով Հայաստանից հայտնաբերված այլ արամեագիր կոթողների և Առաջավոր Ասիայում տարածված այլ արամեատառ դրամների գրանշանների հետ: Ըստ հեղինակի՝ դրամները պատկանում են Արտաշեսյան արքաներ Արտաշես Բ-ին և Տիգրան Դ-ին: Ռ. Վարդանյանը ուշադրություն հրավիրեց այն հանգամանքին, որ «դրամների վրայ ունենք ժամանակի ընթացքում փոփոխություններ կրած եւ, այսպէս ասած, «հայկականացած» արամեերեն գրեր»⁸⁴⁵:

Դիտարկումներ հետագա ուսումնասիրությունների համար: Վերոշարադրյալ նյութից ակնհայտ է, որ թեպետ ցայսօր Հայաստանից հայտնաբերվել են զգալի թվով արամեատառ արձանագրություններ⁸⁴⁶, դրանց ընթերցումը չի կարելի լիովին ճշգրիտ համարել և պետք է շարունակել ուսումնասիրությունները այդ կարևոր խնդրում: Չլինելով արամեագետ, սակայն որոշ գիտելիքներ ունենալով հնագույն գրերի վերծանության և ուսումնասիրության ասպարեզում, հարկ ենք համարում մի քանի դիտարկումներ հայտնել արժարժիղ խնդրի վերաբերյալ:

1. «Սահմանաքար» համարվող քարակոթողների վերծանության փորձերը կատարվել են նախապես որոշված կադապարով, ինչն անընդունելի է զուտ գիտական տեսակետից: Ա. Դյուպոն-Մոնրը, Սևանի ափագանից գտնվելու պատճառով, դրանք ընթերցեց՝ կապելով ձկան որսի հետ, իսկ Հ. Օրբելու կողմից կոթողների համեմատությունը Մովսես Խորենացու նկարագրած արտաշեսյան սահմանաքարերի հետ հիմք ընդունելով՝ Ի. Մ. Դյակոնովը և Կ. Բ. Ստարկովան (հետագայում նաև ուրիշները) մեկնարանել են որպես հոդաբաժան սահմանաքարեր: Վերծանության երկու տարբերակներում էլ առկա է կանխակալ մոտեցումը...

Ինչ վերաբերում է Պատմահոր տեղեկության հիմամբ դրանք սահմանաքար համարելուն և համապատասխան բովանդակությամբ ընթերցելուն,

հրապարակումներից ենուր նա տեղեկացել է, որ նույնատեսակ մի դրամ էլ պահվում է անգլիական մեկ այլ հավաքածուում, որը ևս գտնվել է Վանա լճի ափագանից:

⁸⁴³ 2003 թ. մեր աշխատանքներից մեկի հրատարակման պահին ընդհանուր առմամբ հաշվում էր արամեատառ գրություններով տասնմեկ դրամ, որոնց մի մասի վերաբերյալ մեզ բառափոխ տեղեկություններ էին տրամադրել Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտության բաժնի վարիչ Ռուբեն Վարդանյանը և աշխատակից Արմինե Շոխադյանը: Ուշագրավ էր գիտության բաժնի վարիչ Ռուբեն Վարդանյանը հայտնաբերված անհայտ արքայի սրճեն մի դրամ՝ 1998-1999 թթ. Արտաշատի պեղումներից հայտնաբերված անհայտ արքայի սրճեն մի դրամ՝ արամեատառ քառատող կամ եղբայրող գրությամբ, որի մասին հայտնություն տևեց Նախապետական պալատի, Վարդանյան, Վարդանյան, Կանեցյան, 2002, էջ 51-54:

⁸⁴⁴ Վարդանյան, Վարդանյան, 2005, էջ 75-120:

⁸⁴⁵ Վարդանյան, Վարդանյան, 2005, էջ 97:

⁸⁴⁶ Լչենց, որ արամեատառ ևս մեկ արձանագրություն կարող է լինել Փոքր Հայքի Կիկելայում քարայրի շրջանում (Трещер, 1953, էջ 174):

պետք է ասել, որ մեր ուսումնասիրողները փոքր-ինչ շտապել են. Խորենացին սահմանաքարեր է համարում նաև մեր երկրում տարածված Վանի թագավորության սեպագիր արձանագրությունները³⁴⁷, մինչդեռ դրանցից և ոչ մեկը (որոնց թիվն անցնում է 600-ից) սահմանաքար չէ...

Ուշագրավ երկու հանգամանք ևս: Նախ, Մովսես Խորենացին, որ ամենուրեք խիստ բծախնդրորեն մատնանշում է առկա գրերը, հանգամանորեն նկարագրելով արտաշեսյան սահմանաքարերը՝ դրանց վրա գրեր չի հիշատակում... Եվ երկրորդ. եթե անգամ ընդունենք, որ քննարկվող քարակոթողները Պատմահոր հիշատակած սահմանաքարերն են, ապա դրանց վրա պետք է լինեն տարբեր բնակավայրերի հիշատակումներ, ինչպիսիք ներկայումս ընդունված ընթերցումներում նույնպես չկան: Չկան նաև բաժանված հողերի սեփականատերերի անունների նշումները, որոնցով, ինչպես ժամանակին նկատել է Ա. Մ. Դանիելյանը՝ ելնելով այլ երկրներում սահմանաքարերի գործածման փորձից, սահմանաքարերի բնագրերը պետք է տարբերվեին միմյանցից...

2. Քիչ ուշադրություն է դարձվել սահմանաքար համարված քարակոթողների՝ մեկ գծի վրա դասավորված լինելուն (տե՛ս քարտեզ 4) և դրանից դուրս հայտնի չլինելուն: Եթե դրանք հողային բարեփոխման արտահայտիչներ են, ապա ինչով բացատրել, որ այդ բարեփոխումը տարածվել է Հայաստանի միայն հյուսիս-արևելքում, այն էլ միայն մեկ գծով... Այդ գիծը հյուսիս-արևմուտքում սկսում է Սպիտակի շրջանից, Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային ստորոտով հասնում Թեղուտ, այնտեղից Սևանա լճի արևմտյան և հարավային ափերով ձգվում հարավ ամենախարավային կետում հասնելով մինչև Չանգեզուրի Իշխանասար լեռը: Գայթակոյ՝ և նշված գծի համընկնումը հին քարավանային ճանապարհների հետ: Ուստի և անիմատ չէր լինի կրկին հնարավոր այլ մեկնաբանությունների ևս անդրադառնալը (ճանապարհացույց սյուներ, ի նշանավորումն որևէ իրադարձության կանգնեցված կոթողներ և այլն):

3. Հայտնի է, որ արամեական այբուբենում R և D տառերն ունեն միևնույն տեսքը: Ա. Բորիսովն առաջարկելով Չարիաթը (Չարեհ) անվան ընթերցումը, ինքն էլ մատնանշել էր դրա թեակաևությունը, քանի որ այն կարելի էր ընթերցել չորս տարբերակով՝ 1) ZDYTD, 2) ZDYTR, 3) ZRYTD և վերջապես 4) ZRYTR: Վերջին տարբերակի ընտրությունը պայմանավորված էր միայն Չարիադրես անվանը նման լինելով³⁴⁸: Հետագայում, չգիտես ինչու, այդ պայմանականությունը մոռացվեց, և Արտաշես Ա-ին ամրագրվեց որևէ տեղ չվկայված Չարեհ հայրանունն ու արվեցին դրանից բխող եզրակացություններ (Չարեհավան, Չարիշատ և այլ բնակավայրերի հիմնադրման ու անվանակոչման մասին, անգամ կարծիք հայտնվեց, թե Արտաշեսը Ծոփքում իշխած Չարեհի որդին է)...

4. Արտառոց է Արտաշես արքայի անվան գրության բազմազանությունը (երեք տարբերակ՝ *RTHSS; *RTSRKSS; *RTRKSRKSS), ընդ որում, Թեղուտի

³⁴⁷ Մովսես Խորենացի, գիրք Ա, գլ. ԺԶ, ԲՀ-Բ, էջ 1800:

³⁴⁸ Borison, 1946, էջ 102:

արձանագրություններից մեկում արքայանունը հանդիպում է երկու տարբեր գրությամբ...

5. Կան նշաններ, որոնք բացակայում են արամեական այբուրենում (Միսիանի թասի առաջին, Սարուխանի կոթողի վերին ու ներքին նշանները): Արամեաստ դրամների գրություններում ակնհայտ են տեղական, «հայկականացած» առանձնահատկություններ: Այս ամենը մեզ մղում է մտածելու, որ ներմուծելով արամեական այբուրենը՝ Հայկական լեռնաշխարհում այն կարող էին հարմարեցնել տեղի լեզվակնություն, ըստ այդմ, ավելացնել նոր նշաններ կամ փոխել որոշ տառերի նախկին նշանակությունը: Ուստի անհրաժեշտ է կազմել նոր նշանացանկ՝ պարզելով տառերի կրկնության հաճախականությունը, ինչը կարող է նոր բացահայտումների բերել:

Հաշվի առնելով ողջ ասվածը, կարծում ենք, ճիշտ կլիներ մի կողմ թողնելով բոլոր կանխակալ մոտեցումները՝ վերանայել Հայաստանից հայտնաբերված բոլոր արամեաստ արձանագրությունների վերծանության փորձերը, եթե անգամ դրանք այսօր համարվում են ընդունված...

5. ՀՈՒՆԱՐԵՆԻ ԵՎ ՀՈՒՆԱԿԱՆ ԳՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԼՆԽԱՄԱՇՏՈՅՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հունական այբուրենը և նրա ծագման հարցը: Հունական գիրը համաշխարհային պատմության ընթացքում ստեղծված մեզ հայտնի առաջին այբուրենն է, որն օժտված էր ճայնավորներով: Հուևա-հռոմեական արքայուրենում պահպանված ավանդագրություններն այդ գրային համակարգի ստեղծումը կասում են մի շարք առասպելական (Պալամեդես, Պրոմեթեոս, Օրիոնոս, Մուսեոս, Լինոս, Կեկրոպս, Կադմոս) և պատմական (կատակերգու Էպիխարմես, բանաստեղծ Միմոնիդաս) դեմքերի հետ: Նրանց մեջ հատկապես ընդգծվում է Թեբեի առասպելական հիմնադիր, փյունիկյան Ազենոր (Փենիկս) արքայի որդի Կադմոսը, որը համարվել է փյունիկյան այբուրենը Հուևաստան ներմուծողը: Գրաբանության ասպարեզում կատարված ուսումնասիրությունների զգալի մասում եզրակացվել է, որ նշված ավանդությունը սրահպանել է պատմական իրականության հիշողությունը: Հետազոտողների մեծ մասի կարծիքով հուևները այբուրենը փոխառել են փյունիկացիներից, ինչի օգտին (նշանների արտաքին նմանությունից բացի) վկայաբերում են նաև փյունիկյան և հունական տառերի անվանումները, որոնք իմաստ չարտահայտելով հունարենում՝ թարգմանվում են հին սեմական լեզուներով, որոնց շարքին է դասվում նաև փյունիկերենը (օր.՝ ալեֆ – «ցուլ», բետ – «տուն», գիմել – «ուղտ», դալետ – «դուռ» և այլն)⁸⁶⁹:

⁸⁶⁹ Տե՛ս, օրինակ, Լուդուկոս, 1955, էջ 167–169; Јенсен, 1958, էջ 422–425; Дигунов, 1963, էջ 523–525; Иерсон, 1965, էջ 332–340; Гезен, 1982, էջ 171–174; Фролиц, 1979, էջ 127–128 և այլն:

Ավանդաբար հաղորդված և առավել ընդունված այս տեսակետից բացի առաջ են քաշվել հունական այբուբենի ծագման մասին այլ վարկածներ⁶⁰⁰:

Կատարելագործելով փյունիկյան այբուբենը, հույները առանձին տառեր նշանակեցին ծայնավորների համար, փոխեցին բաղաձայնային կազմը, ավելացրեցին «ֆի», «փի», «փա» բաղաձայնները: Որոշ փոփոխության ենթարկվեցին տառերի անվանումները (օր.՝ ալֆ - ալֆա, բետ - բետա, գիմել - գամմա, դալետ - դետա և այլն):

Ակզբնապես հունական գիրն ուներ աջից ձախ ուղղություն, որը ժամանակի ընթացքում վերածվեց պարուրածնի (Յուստորֆեդոնի), իսկ Ք.ա. IV դարում հաստատվեց ձախից աջ ուղղությունը, որն առ այսօր մնում է անփոփոխ:

Հունական այբուբենի տառերն օգտագործվել են նաև թվային նշանակությամբ⁶⁰¹:

Նախամաշտոցյան Հայաստանում հունարենի կիրառության ուսումնասիրության պատմությունը: Հունարեն առաջին քննադրերը Հայաստանում հանդես են գալիս Ք.ա. III դարից սկսած՝ իբրև հետևանք Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո Արևելքում հեղինակաւ մշակույթի տարածման: Դրանց ուսումնասիրությունը գիտության համար առնվազն երկակի կարևորություն ունի. նախ Հայաստանի պատմության ու մշակույթի, ապա՝ հելլենիզմի դրսևորման օջախներից մեկի առանձնահատկությունների լուսարանման առումով:

Քանի որ մեզ հետաքրքրող դարաշրջանում (Ալ. Մակեդոնացու արշավանքներից մինչև Մեսրոպ Մաշտոցի գյուտը) Հայաստանը բաժանված էր մի քանի հայկական պետական կազմավորումների (Մեծ Հայք, Փոքր Հայք, Ծոփք և Կոմմագենե), նպատակահարմար ենք գտնում հունարենի կիրառությունը ներկայացնել ըստ թագավորությունների (քարտեզ 4):

Մեծ Հայքի թագավորություն: Նոր ժամանակներում գիտությանը հայտնի դարձած առաջին հունարեն քննադիրը Մեծ Հայքի արքա Բակուրի (161-163 թթ.) արձանագրությունն էր Հռոմում, գրված մարմարյա զոհասեղանին՝ ի հիշատակ իր եղբորը (տՄՆ նկ. 123, առաջին անգամ հրատարակվել է

⁶⁰⁰ Դրանցից հատուկ ուշադրության է արժանի տեսակետը, որի համաձայն փյունիկյան, հունական և Եգիպտական այբուբեններն իրարից անկախ կարող էին առաջանալ միմյանցից փոխանցման (Դեորուս, 1952, էջ 51-65, հունական այբուբենը՝ միմյանցից փոխանցման փոխանցման մասին մինչ այդ լույս տեսած գրականության հղումները՝ էջ 51): Ըստ մեկ այլ կարծիքի, այն սերում է կրեոլ-միջնակյան գծային գրից: Մեկ ուրիշ վարկածի համաձայն, հունական այբուբենը կարող էր ստեղծվել տեղական «միջնակյան» ուսուցիչների կնիքի վրա, ինչի կնիքավորման համար, սակայն, չկան բավարար նախնական ապացույցներ (Փրաքս, 1979, էջ 127):

⁶⁰¹ Հունական այբուբենի ծագման ու զարգացման մասին կա հսկայածախ գրականություն. տՄՆ, օրինակ, Լուսկոյու, 1955, էջ 167-175; Jensen, 1958, էջ 422-442; Diringer, 1962, էջ 149-164; Զարսրեց, 1963, էջ 522-536; Կերուս, 1965, էջ 332-351; Դեռոճ, 1982, էջ 171-177; Փրաքս, 1979, էջ 127-133; Theodor, 1996, էջ 271-280, 293-294 (նաև դրանցում հայտնի գրականությունը):

1602 թ.): Դատելով սկզբնաղբյուրների հաղորդումներից՝ Բակուրը Հռոմում պետք է եղած լինի 163 թ. վերջին կամ 164-ին⁶⁵²: Արձանագրված է հետևյալը.

«Ա[ստվածներին] Ա[ղոթաշխարհի]».

Անկելոս Դակուրը (Բակուրը)՝ արքան Մեծ Հայքի, գնեց սարկոֆագ Անի[եյի-
նա] Մերիթատին քաղցրագույն ելքորը, ինձ հետ ապրած հիսունվեց տարի, երկու
ամիս»⁶⁵³:

Մեզ է հասել նույն արքայի ևս մի արձանագրություն՝ արված արձաթն թա-
սի վրա, որը գտնվել է Հյուսիսային Կովկասում, Մայկոպի մոտ գտնվող Դու-
խովսկայա կայարանից: Բարձր արվեստով պատրաստված թասը պատված է
տոնախմբությունների ու թատերական խաղերի տեսարաններով և կրում է
հունարեն հակիրճ գրություն՝ «Դակուր (Բակուր) արքայից» (նկ. 124)⁶⁵⁴: Թե ե՞րբ
և ինչպե՞ս է հասել թասը Հյուսիսային Կովկաս, ո՞ւմ է ուղղված եղել այն,
հայտնի չէ. այդ մասին այսօր կարելի է միայն ենթադրություններ անել...

Հայոց արքաների՝ Հայաստանից դուրս հայտնաբերված արձանագրու-
թյունների մեջ հիշատակության է արժանի Կապադովկիայից՝ Կեսարիայի
շրջանից, 1891 թ. գտնված սաղավարտաձև դիմակը՝ հունարեն արձանագրու-
թյամբ⁶⁵⁵:

Արձանագրությունը բաղկացած է երկու մասից, որի առաջին մասում ըն-
թերցվում է՝ «Տիգրան(ի) թագավոր(ի) Հայաստանի»: Գրակիր հուշարձանը
ուղարկվել է Կոստանդնուպոլիս, որից հետո դրա մասին որևէ տեղեկություն
հայտնի չէ:

Արձանագրության առաջին (և, հավանաբար, միակ) հրապարակումը
եղել է 1908 թվականին, սակայն այն չի մտել հայագիտության շրջանառության
մեջ: Որքան էլ տարօրինակ է, այս ուշագրավ տեղեկությունը վրիպել է հայա-
գետների ուշադրությունից, որի պատճառը, թերևս, տեղեկության հրապարա-
կումն է ոչ շատ հայտնի մի ժողովածուի էջերում⁶⁵⁶:

Արձանագրության երկու հատվածներն ունեն հետևյալ տեսքը.

(ա)

TEK

PAN BA

ΣΕΛΕΑ

⁶⁵² Իրսեթ, 1953, էջ 237-242:

⁶⁵³ Արձանագրության հրապարակումների պատմությունը, գտնվածության մասնակետն և հարակից
հարցերի մասին հանգամանորեն տե՛ս Իրսեթ, 1953, էջ 224-242: Հռոմում աղյժն գտնվելից արքա
Բակուրը և կոս եղբայր Միդիասը (քնազում՝ Միդիթոս) ընդունվել էին կայսերական Անիքեոս
ազգանկության մեջ, այդ պատճառով էլ այս արձանագրության մեջ կրում են «Անիքեոս» պատվանունը
(ԸԺՊ, 1971, էջ 786-787):

⁶⁵⁴ Պլյուս, 1939, էջ 220-223; Դոս, 1952, էջ 377-388; Իրսեթ, 1953, էջ 242-245:

⁶⁵⁵ Jerphanian, Jalabert, 1908, էջ 470 (№ 59):

⁶⁵⁶ Ալուշա, պատմվ չի կարելի արդարացիկ հայագետների անուշադրությունը, մանավանդ, որ ինչո՞ր
տարակա հրապարակումը (նաստօրի 437-478 էջերը՝ նույն տեսքով) թույլ է տեսել նաև 42 էջանոց
ատաննատիպով:

ΣΑΡΜΑΝ

(p)

ΑΠΟΚΤΗΣΕΟΣ.ΚΟΣΜΟΥ.ΕΦΘΑΣΑΕΟΥΤΕΣΑΡΑΙΣ.ΧΙΛΙΑΔΑΙΣ.

PENTAK

ΟΣΙΑΣ ΑΡΑΝΤΑΡΙΟ

Արձանագրության հատվածները գրված են ոչ գրագետ հունարենով և, չնայած փորձաձևվալ լինելուն, բավականին բարդություններ են առաջացնում ընթերցման ժամանակ: Այս հատվածները, համապատասխան ուղղումներ կատարելով, հունարենից թարգմանեց ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանը, որը շնորհակալությամբ ներկայացնում ենք ստորև⁸⁵⁷.

(ա)

ΤΙΓΡΑΝΟΥ

Տիգրան(ի)

ΒΑΣΙΛΕΩΣ

թագավոր(ի)

ΑΡΜΕΝΙΑΣ

Հայաստանի

(բ)

ΑΠΟΚΤΙΣΕΩΣ.

Արարչագործությունից

ΚΟΣΜΟΥ.

աշխարհի

„ΕΦΘΑ“

5571 (կամ 5509)⁸⁵⁸

ΣΑΕΟΥ (?)

(?)

ΤΕΣΣΑΡΕΣ.

չորս

ΧΙΛΙΑΔΕΣ.

հազար

PENTAKΟΣΙΑ

հինգհարյուր

ΣΑΡΑΝΤΑ

քառասուն

ΔΥΟ

երկու⁸⁵⁹...

Մասիվան դիմակների կիրառությունը բավական տարածված է Հին Աշխարհում և կապվել է անդրաշխարհի հետ առնչվող հավատալիքներին⁸⁶⁰:

Տառասխավների առկայությունից, ոչ գրագետ հունարենից կարելի է ենթադրել, որ գրության կազմողը չի եղել ո՛չ հույն, ո՛չ էլ հայ (հավատակ դեպքում

⁸⁵⁷ Մուսլին նրասարակությունը՝ Մոզեզյան, 2003 (ա), էջ 113–117; տե՛ս նաև Մոզեզյան, 2011, էջ 104–109:

⁸⁵⁸ ΕΦΘΑ (~5571) ուղղումը Հր. Բարթիկյանինն է, որը Θ–ն (~9) սրբագրել է Ο–ի (~70), հաշվի ասնելով, որ վերջինիս հաջորդող Α–ն (~1) միակող է և կարող է հաջորդել տասնավորի: Բնագրում, սակայն, առկա է ΕΦΘΑ. Գլուխն հնարավոր է, որ վերջին Α–ն կապ չունենա թվի հետ: Այդ դեպքում հաջորդող անտասնանյի բառը կլինի ΑΣΑΕΟΥ, իսկ ΕΦΘ–ի թվային սթմերը, այսինքն՝ բնագրում նշվող արարչագործության թվականը կլինի 5509:

⁸⁵⁹ ΔΥΟ («երկու») ուղղումը ևս Հր. Բարթիկյանինն է: Բնագրում ΡΙΟ է: Քանի որ բնագիրն անախարտ է չի բացատրվում, որ վերջին ներք առաջից քննեն մեզ յիստամ հաստիսի սկզբնամասը և կապ չունենան «երկու» թվի հետ:

⁸⁶⁰ Այդ միասնաբան ամբողջ է եղել նաև Հին Հայաստանում (Հակոբյան, 2005, էջ 68–69):

արքայանունը ճիշտ կգրվեր): Ելնելով երկրանվան Arman գրեթեմնից հնարավոր է ենթադրել, որ գրության կազմողը ունենցել է սեմական ծագում:

Ո՛վ կարող էր լինել արձանագրության մեջ նշվող Հայոց արքա Տիգրանը:

Մեր պատմությունից հայտնի այդ անունը կրող առաջին արքան Ք.ա. VI դարում իշխած Տիգրան Երվանդյանն է: Նրա թեկնածությունը բացատվում է այն պարզ պատճառով, որ նրա օրոք այդ ժամանակըջանում հունարենը չի կիրառվել մեր տարածաշրջանում:

Տիգրան Բ-ի հոր՝ Տիրան-Տիգրան Ա-ի Կապադովկիայում լինելու մասին որևէ տեղեկություն չունենք:

Հունագիր հուշարձանը կարող էր վերաբերել Տիգրան Բ-ի իշխանության ժամանակաշրջանին, ավելի որոշակի՝ Միհրդատ Եվպատորի դաշնակցությամբ նրա կապադովկական արշավանքների (Ք.ա. 93 և 91 թթ.) տարիներին⁶⁶²: Եթե այս կարծիքը հաստատվի, հունագիր հուշարձանը կարող է համարվել նշված արշավանքների մասին առայժմ հայտնի միակ նյութական վկայությունը:

Չի բացառվում, սակայն, որ հունագիր հուշարձանը կապված լինի Տիգրան Գ-ի, որը Ք.ա. 20 թվականին Հռոմի կողմից ուղարկվեց Հայաստան⁶⁶³, կամ Հայոց գահին հավակնող հռոմեական դրածոներ Տիգրան Ե-ի (մոտ 6 թ.)⁶⁶⁴ և Տիգրան Չ-ի (60-61 թթ.) հետ⁶⁶⁵, որոնք անցել են Կապադովկիայով:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի արձանագրության երկրորդ հատվածը, որում հիշատակվում է թվական՝ հաշված «աշխարհի արարչագործությունից»: Բանն այն է, որ «աշխարհի արարչագործությունից» հաշվարկվող մինչ օրս մեզ հայտնի տոմարները ի հայտ են եկել միջնադարում⁶⁶⁶: Այսինքն՝ այս դեպքում պետք է ենթադրել, որ հունարեն արձանագրության երկրորդ հատվածը ավելացվել է միջնադարում, կամ էլ՝ Ք.ա. I - I դարերում մեր իրականության մեջ գոյություն է ունեցել «աշխարհի արարչագործությունից» հաշվարկվող տոմար: Նշենք նաև, որ փաստերի բացակայության պատճառով նշված և հնարավոր ենթադրություններից որևէ մեկն այսօր չի կարելի հաստատել կամ իսպառ մերժել...

Տիգրան Բ Մեծի պատկերաքանդակով և մեծածավալ հունարեն արձանագրությամբ կոթող է հայտնաբերվել Արևմտյան Հայաստանում, որը 1869 թ. Տրապիզոնի անգլիական հյուպատոսի կողմից ուղարկվել է Բրիտանական թանգարան: Հասել է այն Լոնդոն, թե ոչ, մեզ հայտնի չէ. համնայն դեպք, այն

⁶⁶² Տիգրան Բ-ի կապադովկական արշավանքների մասին կա մեծածավալ գրականություն. տե՛ս, օրինակ, Մանանդյան, 1977, էջ 145-146, 430-436; ՀժԳ, 1971, էջ 558-561 (բաժնի հեղինակ՝ Գ. Խ. Սարգսյան) և այլն:

⁶⁶³ Մանանդյան, էջ 285-287; ՀժԳ, 1971, էջ 630-632 (բաժնի հեղինակ՝ Գ. Խ. Սարգսյան); Խոսեռո, 1999, ժ., 1999, էջ 24-27:

⁶⁶⁴ Մանանդյան, 1977, էջ 295-297; ՀժԳ, 1971, էջ 709-710 (բաժնի հեղինակ՝ Ա. Տ. Երեմյան); Խոսեռո, 1999, էջ 46-49:

⁶⁶⁵ Մանանդյան, 1977, էջ 332-336; ՀժԳ, 1971, հ. I, էջ 740-749 (բաժնի հեղինակ՝ Ա. Տ. Երեմյան):

⁶⁶⁶ Դրանց մասին տե՛ս, օրինակ, Զեքեթյան, 1976, էջ 65-72; Пирсонарѣн, Косеռո, 1981, էջ 78-82 և այլն:

մինչ օրս չի հրատարակվել և դարձել Տիգրան Բ-ի ժամանակաշրջանի պատմության սկզբնաղբյուր⁸⁶⁶...

Ուշագրավ հունարեն մի արձանագրություն է հայտնաբերվել 1819 թ. Ուրմիո լճից հարավ, Չագատու գետի միջին հոսանքի շրջանում գտնվող Քարաֆտու լեռան⁸⁶⁷ վրա գտնվող ժայռափոր շինության մեջ: Դատելով կառույցի ասանձնահատկություններից և երկտող հունարեն արձանագրությունից (նկ. 125), այն եղել է Վահագն-Հերակեսին (որի անունը կելում է բնագրում) նվիրված պաշտամունքային ամրացված կենտրոն⁸⁶⁸:

1898–1899 թթ. Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը ուսումնասիրություններ կատարեց Ֆարկին հնավայրի բերդի՝ իր կարծիքով Տիգրանակերտի⁸⁶⁹ ավերակներում, հատուկ ուշադրություն դարձնելով ամրոցի մուտքի մոտ պարսպի շարվածքի հունարեն արձանագրության քննորենին (նկ. 126–127)⁸⁷⁰, որն իրենից ասոջ նկատել են Բ. Թեյլորը 1865 թ. և պորտուգալացի ճանապարհորդ Ա. Թենրեյրոն դեռևս 1560 թվին: Արձանագրության պահպանված ութ քարերով (որոնք Կ. Ֆ. Լեհման-Հաուպտի կարծիքով սկզբնապես դասավորված են եղել հինգ շարքով, ընդ որում, ասոջինը, որում պետք է լիներ արքայի անունը, չի պահպանվել), դժբախտարար, հնարավոր չէ վերականգնել այն: Կ. Ֆ. Լեհման-Հաուպտի հետ բնագրի ընթերցման ուղղությամբ ջանքեր են գործադրել ժամանակի հայտնի հնագրագետներ Ֆ. Հ. Ֆոն Գանթթրինգենը, Թ. Նյոլդեկեն, Ու. Ֆոն Վիլլամովից-Մյոլլենդորֆը և Վ. Դիտտենբերգերը, սակայն չի հաջողվել վերականգնել ամբողջական և կապակցված մի բնագիր: Արձանագրության հնագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ այն պետք է գրված լինի III–IV դարերում, ինչի մասին են վկայում այդ ժամանակաշրջանին բնորոշ կցագրումների մեծ քանակությունը (միաձուլված են երկուսից մինչև չորս տառեր) և հա-

⁸⁶⁶ Տեղեկությունը հրատարակվել է «Առագործքան թերթում», որից ան արտատպվել է «Իրիժնվին վերջնառոտի» թերթի 1869 թ. ապրիլի 25-ի համարում: Հարողագրության մեջ կելում է, որ ի պատասխան Կ. Դոբի ռուս դեսպան գնեղաղ Իգնատևի հարցումին, թե ինչո՞ւ է թուրքական կառավարությունը երկար ժամանակ խոչընդոտել կարողի տեղափոխմանը, մեծ վեճեր պատասխանել է «Նա արվում է ոչ ամենին հնույթագետների մասին կոր օրենքի ուժով, այլ ըստվիտուս կառավարությունը նախատեսում էր ոչկայանել այն, որպեսզի չբրբորեի հայերի մեջ կնքեղ ազգայնականության զգացումը: Նշվում է նաև, որ դասից դեռևս տարիներ ասոջ Արևմտյան Հայաստանի տեղափոխ կառավարիները հրոսանել կն ասոջը՝ ոչկայանելու բրբոր հուշարձանները, որոնք կարող կն կնքեղն հայերին իրեն փաստարկ սնոցը: Հրոսանելի իտանական մարդուցում, ըստ թերթի, ոչկայանել են բազմաթիվ դեռևս չքերեղված և աղյալս էլ գիտությանը անհայտ մնոցած տնոցր արձանագրություններ (տն՝ Ներսիսյան, 2002, էջ 402–403): Տեղեկությունը բաղկած է Մատենադարանում պահեղ Մտեր Մանթրանի արվեղից (թրք. 193, վավ. 196): Այս չափաբոջ ուշագրավ հարողագրությունը մեր ուշադրությանը հրավերեց պատմ. գիտ. դեղորդ Դարույր Մուրադյանը:

⁸⁶⁷ Կ. Վ. Տրեները հնարավոր է համոզում, որ այս անունը լինի կն հայկական «Քարափոտու» տեղանիան արավեղված տարբրանոց (Տրեքեր, 1953, էջ 156, մրք. 1):

⁸⁶⁸ Հուշարձանի մանրամասն նկարագրությունը և դրա վերաբերյալ եղած գրականությունը տն՝ Տրեքեր, 1953, էջ 156–162:

⁸⁶⁹ Տիգրանակերտի տեղադրությունը վերերս կրեին դարձով հառուկ քննության ասոջնա, ըստ որի արդուներեղի Ֆարկին հնավայրի ամրոցը եղել է ոչ թե Տիգրանակերտը, այլ Լեփիկերտ (Հարությունյան, 2001, էջ 177–199, որտեղ քննվում են Տիգրանակերտի տեղադրության կաղաղ տեղանիաները ևս):

⁸⁷⁰ Արձանագրության պահպանված հատվածները տն՝ Lehmann-Hausp, 1908, էջ 497–520; Lehmann-Hausp, 1910, էջ 410–421; Տրեքեր, 1953, էջ 283–288, աղ. 88–90; Caracacian, 1960, էջ 76–86; Մարտիրոսյան, 1975, էջ 192 (հունարեն բնագրից բաղգմանությունը Հ. Բաբբելյանի):

մատուցողությունները: Պահպանված հատվածների քննությունից կարելի է հասկանալ, որ այն պարունակում է հայոց արքայի դիմումը⁸⁷¹ քաղաքի բնակչությանը: Արքան, ինչպես նշում է Կ. Ֆ. Լեհման—Հաուպտը (և նրա հետ համաձայն են մյուս ուսումնասիրողները), հայոց թագավորն է, քանզի բնագրում պարսից արքան և հռոմեացիները հիշատակվում են երրորդ դեմքով: Արքան քաղաքի բնակչությանը դիմում է «ձեր համայնքը», «դուք» արտահայտություններով, ինչը Հին Հայաստանում քաղաքային ինքնավարության գոյությունը վկայող փաստերից է: Արքան հանդիմանում է քաղաքի համայնքին ապստամբելու համար, որին հետևել է իր ռազմական միջամտությունը.

«Ձեր համայնքն ապստամբեց և պայքար սկսեց [...] հետ... Միս թե ինչու մենք քաղաքը հանձնեցինք մեր զորքին, որպեսզի կանխենք հետագա հանցեղությունը և որպեսզի ինչ-որ մասը [սպաստանի կրկին] մեր դեմ: Իսկ այն չարիքը, որը դուք կրեցիք, թե ո՞վ էր դրա մեղավորը, ինքնեղբ գիտեք»:

Մեկ այլ հատվածում արքան հաղորդում է.

«...Ես հրամայեցի ամրացնել սա ... դարպասների մոտ, և ինչպես որ զոհած է հրամանում, այնպես էլ փորագրել և ամրացնել: Ես հրամայեցի նույնպես, որ դարպասների մոտ բոլոր մյուս քաղաքների, որոնց մենք իշխում ենք աստվածների նախահամոթյանը և բարեհամոթյանը, նույնպես քանդակեն [մասն արձանագրություններ]»:

Արձանագրության մեջ պահպանված մի քանի արտահայտություններից («նախնիների բախտ», «բշևամիների տապալում», «աստվածների բարեհամոթյուն», «արքայի բախտ») Կ. Ֆ. Լեհման—Հաուպտը եզրակացնում է, որ հեղինակ—արքան պետք է վտարանդիությունից և ինչ-որ խռովություններից հետո նոր վերադարձած ու հաստատված լինի գահին: Նրա կարծիքով՝ արձանագրության հեղինակը Պապ թագավորն է, որն այն կանգնեցրել է Չիրավի ճակատամարտից հետո:

Այս կարծիքը չեն կիսում Յ. Մարկվարտը, նրան հետևելով՝ Հ. Մանանդյանը, Գ. Խ. Մարգսյանը, Ա. Մարտիրոսյանը: Բանն այն է, որ արձանագրության մեջ հայոց արքան վկայակոչում է ոչ թե մեկ ատոժո, այլ «աստվածների», իսկ պարսից արքային մեծարում է «աստված, արքայից արքա» պատվատիտղոսներով, որից ելնելով՝ իիշյալ հեղինակները բացառում են Պապի կամ որևէ քրիստոնյա արքայի թեկնածությունը⁸⁷²: Պապի թեկնածությունը մերժվում է նաև այն պատճառով, որ Տիգրանակերտը ավերվել էր նրա հոր՝ Արշակ Բ-ի օրոք, իսկ վերջինիս գահընկեցությունից հետո Աղձնիք նահանգը՝ Տիգրանակերտ քաղաքով, գտնվում էր պարսիկների ձեռքում: Յ. Մարկվարտն ու նրա

⁸⁷¹ Գ. Խ. Մարգսյանն ուշագրավ գրգռան է անցկացնում Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» հունարեն ապրիբրակում պահպանված Տրդատ Գ-ի (քրիստոնեության պետականացումից առաջ գրած) հրովարտակ—ուղերժի և Տիգրանակերտի արձանագրության սեջենամանտերի միջև (Մարգսյան, 1969 (ձ), էջ 112—113):

⁸⁷² Յ. Մարկվարտը նկատում է, որ Պապի ժամանակ կարող էր լինել նախաջ քրիստոնեությունից, ինչի պատճառով նաջ եկեղեցին նրան վերագրել է դիվային հատկանիշներ, սակայն վերաբարձ քաղնաստվածությանը չի կատարվել (Markwart, 1930, էջ 150):

կարծիքի հետևորդները արձանագրության հեղինակ են համարում Տրդատ Գ-ին, բնագրի ստեղծման ժամանակը համարելով նրա իշխանության առաջին մինչև քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու ժամանակաշրջանը⁸⁷³:

Արձանագրության հեղինակի հարցն, այդուհանդերձ, չի կարելի վերջնականապես լուծված համարել⁸⁷⁴:

2007 թ. լինելով Տիգրանակերտի ավերակներում, փորձեցինք գտնել արձանագրության քարերը: Ցավոք, այստեղ ևս թուրքական կառավարությունն արել էր իր սև գործը: Տեղացի մի բուրդ լրագրող պատմեց, որ տարիներ առաջ արձանագրությունը ջնջվել է, այն կրող պատը երեսապատվել՝ վերածվելով Աթաթուրքի թանգարանի...

Թագավորական պարզևագրի արձանագրում է 1908 թ. Ապարանից գտնված Մեծ Հայքի Տրդատ արքայի հունագիր կոթողը (նկ. 128)⁸⁷⁵, որը հարողում է հետևյալը.

1. Տիրիդատես
2. Մեծը, Մեծ
3. Հայքի թագա-
4. վորը տվեց
5. Գնթունու (տոհմից)
6. Հողոմիթրի⁸⁷⁶
7. որդուն հուտեստ ()
8. Նիգ նորաքաղաքը
9. ... փետրվարի ...⁸⁷⁷

⁸⁷³ Markwart, 1930, էջ 133-135; Մանանյան, 1978, էջ 124-126; Շարուն, 1960, էջ 85-86; Մարտիրոսյան, 1975, էջ 160-169:

⁸⁷⁴ Կ. Վ. Տրևերը, հիմնականում, պաշտպանում է Կ. Ֆ. Լինման-Հաուստի մեկնարկները՝ արձանագրությունը համարելով չորրորդ դարի վիչապոլե (Тревсер, 1953, էջ 283-288): Ավիի ուշ Կ. Ֆ. Լինման-Հաուստի բնագրման պաշտպանությանը հակոխ նկատվել է Ա. Ելմիցինին (Елмичинин, 1961, էջ 207-211), որին սուր քննադատության ենթարկեց Գ. Ռ. Մարգարյանը (Շարուն, 1960, էջ 226-231): 1960-ական թթ. կեսերին նշված հեղինակները շարունակեցին բանավեճն՝ հիմնականում կրկնելով իրենց նախորդ փաստարկներն ու եզրամանկումները (Մարգարյան, 1966, էջ 66, ուր քննադատված է Լ. Ա. Ելմիցյու 1965 թ. լույս տեսած երկվածը): Այս խնդրին վերջին անգամ անդադարեցնել է Ա. Մեխչյանը՝ եզրակացնելով, որ այն ստեղծվել է 290-ական թվականներին (Մեխչյան, 2008, էջ 132-144):

⁸⁷⁵ Արձանագրությունը հայտնաբերել է հայագետ Գ. Հովսեփյանը: Այն նախապես գտնվել է մոտավոր ամրոցի ավերակներում: Առաջին անգամ հրատարակել է Մ. Բ. Ռուստոմյանը՝ Վ. Վ. Լատիշևի, Ն. Յ. Մառի, Յ. Բ. Մմբրևուի և Վ. Վ. Բարսողի աջակցությամբ (Ростомов, 1911, էջ 1-32, հավելվածում բուսանկարը): Արձանագրության ուսումնասիրությանը զբաղվել են Հ. Հ. Մանանյանը, Կ. Վ. Տրևերը, Բ. Մաքիլյանը, Լ. Ա. Ելմիցինին, Ա. Գ. Կրկաչադյանը և ուրիշներ: Թնայվորը թերում ենք Ա. Գ. Կրկաչադյանի թարգմանությանը (ՀԺԳՔ, 1981, էջ 362-363):

⁸⁷⁶ Ա. Գ. Կրկաչադյանի կարծիքով սա հայերին Վարդ-Միթր անվան հունարեն թարգմանությունն է (ՀԺԳՔ, 1981, էջ 363):

⁸⁷⁷ Ամանուկեց առաջ պետք է փնթ տարերթնը, ինչը, սակայն, հողմախարխուր պատճառով չի արձանագրվել: Մ. Բ. Ռուստոմյանը, հիմք ընդունելով Վ. Վ. Լատիշևի գիտաբերումը, ըստ որի հողմախարված մասում փառ պանագրված էջաների հետքերը պետք է կարդալ K (20) կամ I (10) և X (600), ստանալով 620 կամ 610 թ., որը Մեգևկան տոմարում համապատասխանում է Ք.հ. 298 կամ 308 թ., եզրակացնում է, որ արձանագրության հեղինակը Տրդատ III-ն է (Ростомов, 1911, էջ 14-15):

Ուսումնասիրողների շրջանում բուռն բանավեճ է ծավալվել արձանագրության հեղինակի ինքնության վերաբերյալ. ո՞ր Տրդատն է նա՞ Ա-ն, Բ-ն, թե Գ-ն⁸⁷⁶: Բանավեճն այսօր էլ չի կարելի ավարտված համարել:

1911 թ. Արմավիրի քրի հարավային լանջին գտնվեց մի մեծ քար՝ երեք հունարեն արձանագրություններով⁸⁷⁷ (նկ. 129–131), որոնց վերծանության ուղղությամբ առաջին քայլերը կատարվեցին Յ. Ի. Սմիթնոլի կողմից: Հեղինակի մահվան պատճառով ուսումնասիրությունը կիսատ մնաց, իսկ նրա գրատուները տրվեցին Ա. Ի. Բոլտունովային՝ այն շարունակելու հանձնառությամբ⁸⁷⁸:

1927 թ. (1911 թ. հայտնաբերվածից 10–12 մետր հեռավորության վրա) Արմավիրում գտնվեց նոր քար՝ չորս հունարեն արձանագրություններով (նկ. 132–134): Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ բոլոր յոթ արձանագրություններն էլ գրված են ոչ թե վիմագիր կոթողային, այլ մագաղաթի և խեցեղենի գրատուներում տարածված ոճով: Չորս արձանագրություններից երկուսի մեկնաբանումն առաջին անգամ կատարեց Ս. Տեր-Հակոբյանը⁸⁷⁹: Ըստ նրա՝ առաջին հատվածը «մի բարեկամական ողջունագրում է Միթրա և Օրոնտ թագավորների»⁸⁸⁰: Երկրորդ հատվածում ընթերցելով սելևկյան ամսանունները՝ նա կարծում է, որ այն Հայաստանում սելևկյան տոմարի անցման պաշտոնական որոշման արձանագրումն է: Եվ արձանագրության երկրորդ տողի տառերը («գ» և «ա») համարելով թվական՝ 31, հաշվելով սելևկյան թվարկության սկզբից (Ջ.ա. 313–31 = Ջ.ա. 282 թ.), ստացավ իր կարծիքով, քնագրերի և սիշատակվող դեպքերի ու անձանց ժամանակաշրջանը⁸⁸¹: Գայթակղիչ այս քաղաքային հետազայում մերժվեց Կ. Վ. Տրևերի կողմից, քանի որ այդ տառերը պարզապես քաջ են թողնվել երկրորդ ամսանունից, սաբա լրացվել («Ապելլաիոս»-ի փոխարեն գրված է Ապելիոս)⁸⁸²: Նույն այս արձանագրության մեջ քաջ է թողնված երրորդ ամսանունը, որն ավելացվել է լուսանցքի համապատասխան տողի դիմաց (նկ. 133). դա կարող է վկայել գրագրի ոչ այնքան լավ իմացության մասին:

1927 թ. Արմավիրի պեղումների արդյունքների մասին ընդհանրացնող հրապարակումով հանդես եկավ Ս. Վ. Տեր-Ավետիսյանը, որում նա արձա-

⁸⁷⁶ Հ. Հ. Մանանդյան և Լ. Ա. Ենիգեյնի, հետևելով Մ. Ի. Ռոտովին, բնագրի հեղինակ են համարում Տրդատ Գ-ին (Մանանդյան, 1978, էջ 126; Емануилов, 1958, էջ 148–150), Կ. Վ. Տրևերը՝ 217–252 թթ. իշխած Տրդատ Բ-ին (Тревэр, 1953, էջ 271–283), Ս. Գ. Կրկաչապյանը, Գ. Ս. Մարաղազյանը՝ Տրդատ Ա-ին (Կրկաչապյան, 1971, էջ 202; Мырзакан, 1981, էջ 84), իսկ Բ. Ն. Առաքելյանի կարծիքով՝ բնագրի հեղինակ նախնաս փրպով կարող է ծննդ և՛ Տրդատ Ա-ն, և՛ Տրդատ Գ-ն (Առաքելյան, 1940, էջ 78)...

⁸⁷⁷ Արձանագրությունները կրող քարը նայտնի է եղել դեռևս 1908 թ., քաջ քանի որ այն հետազոտության առարկա է դարձել 1911-ից, գիտական շրջանառության մեջ է մտել վերջին թվականը (Тер-Аветисов, 1941, էջ 61; Емануилов, 1942, էջ 35–37; Тревэр, 1953, էջ 114–117):

⁸⁷⁸ Յ. Ի. Սմիթնոլի գրատուները շուրջ չորս տասնամյակ անց հրատարակեց Կ. Վ. Տրևերը (Тревэр, 1953, էջ 148–156):

⁸⁷⁹ Տեր-Հակոբյան, 1935, էջ 143–150:

⁸⁸⁰ Տեր-Հակոբյան, 1935, էջ 148:

⁸⁸¹ Տեր-Հակոբյան, 1935, էջ 148–149: Նշենք, որ էջ 149-ում հեղինակի կատարած նկատվելի ընդօրինակություններից թերի երեք:

⁸⁸² Тревэр, 1953, էջ 137:

նագրությունների չափազրության հետ ներկայացրեց նաև չորս քնագրերի համառոտ բովանդակություններն՝ ըստ Ա. Ի. Բոլտունովայի (Ամիրանիշվիլի) նախնական հաղորդման: Հաղորդման համաձայն՝ արձանագրությունները վերաբերում են Ք.ա. II դարին: Դրանցից առաջինը հայոց արքաներից մեկի նամակն է մյուսին, երկրորդը բարեմադրություն է Պոնտոսի արքա Փառնակեսին տարվա բոլոր 12 ամիսների ընթացքում, որը, հավանաբար, գրել է հայոց Արտաշես արքան (ենթադրության պատճառով հայոց արքայի անվան պահպանված առաջին երկու տառերն են՝ «Ար»), երրորդը՝ ողջունագրում է Նումենիոսին, չորրորդը Սելևկյան արքաներից մեկի դեպի Հայաստան կատարած արշավանքը նկարագրող քանատեղծական հատված է⁸⁹⁵:

Շարունակելով Յ. Ի. Սմիրնովի աշխատանքները՝ Ա. Ի. Բոլտունովան 1942 թ. ներկայացրեց Արմավիրից հայտնաբերված բոլոր յոթ քնագրերի նախնական ընթերցումը⁸⁹⁶, որի վերաբերյալ իրենց դիտարկումները հայտնեցին Բ. Գրակովը⁸⁹⁷, Հ. Հ. Մանանդյանը⁸⁹⁸, Գ. Ի. Գոյսանը⁸⁹⁹, Կ. Վ. Տրևերը⁹⁰⁰ և ուրիշներ: Արձանագրությունների վնասվածությունը տարակարծությունների առիթ է դարձել ուսումնասիրողների շրջանում՝ կապված ոչ միայն առանձին բառերի ու հատվածների, այլև ամբողջական արձանագրությունների մեկնաբանման հետ:

Առաջին քնագիրը 8 տողանոց չափածո մի հատված է (նկ. 129), որի առաջին տողում Յ. Ի. Սմիրնովը Ա. Ա. Ժերեյովի օգնությամբ ընթերցում է «Գործեր և օրեր» խրատական պոեմի հեղինակ Հեսիոդոսի, իսկ երկրորդում՝ նրա եղբայր Պերսեսի անունները: Բնագիրը բավականին վնասված է, չնայած դրան, ակնհայտ է, որ այն չափածո ստեղծագործություն է՝ գրված վեցոտյա տաղաչափությամբ⁹⁰¹: Ըստ Ա. Ի. Բոլտունովայի՝ արձանագրության ընդհանուր իմաստը բարոյախրատական է, որում դրսևորվում է հեի ու նորի հակադրությունը⁹⁰²: Ընդունելով Ա. Ի. Բոլտունովայի ընթերցումն ու իմաստի բարոյախրատական վիճակը՝ Հ. Հ. Մանանդյանը, վկայակոչելով Հեսիոդոսի և նրա եղբոր մասին իրեն աղբյուրներում պահպանված կենսագրական տեղեկությունները, գտնում է, որ այն «դատապարտում է ժառանգական գույքի անարդար բաժանումը և խրատում է մոտիկ ազգականներին ապրել խաղաղ ու համբարաշխ և աջակցել ու օգնել միմյանց»⁹⁰³: Կ. Վ. Տրևերը ևս, նշելով, որ սա բարոյա-խրատական բովանդակությամբ գրական ստեղծագործության հատված է, մատնանշում է Հեսիոդոսին վերագրված գույակությունների շնորհի մասին

⁸⁹⁵ Тер-Аветисян, 1941, էջ 61–62:

⁸⁹⁶ Болтунова, 1942, էջ 35–61:

⁸⁹⁷ Граков, 1946, էջ 166–168. Հեղինակը հիմնականում ընդունում է Ա. Ի. Բոլտունովայի ընթերցումները՝ կատարելով մի քանի ցուցումներ և նշադրումներ:

⁸⁹⁸ Մանանդյան, 1946 (ա), էջ 3–56 (նայել են և ուսուրիշն); Վերաբերում.՝ Մանանդյան, 2010, էջ 435–463:

⁸⁹⁹ Говт, 1952, էջ 138–161:

⁹⁰⁰ Тревер, 1953, էջ 104–147:

⁹⁰¹ Тревер, 1953, էջ 149–151:

⁹⁰² Болтунова, 1942, էջ 37–38:

⁹⁰³ Մանանդյան, 1946 (ա), էջ 5–6; Մանանդյան, 2010, էջ 437–438:

տեղեկությունները, դրանով իսկ բացատրելով նրա անվան առկայությունը մի տեղում, որն, ըստ իր տեսության, եղել է Արամանյակին նվիրված գուշակությունների Սոսյաց անտառը⁸⁹⁴...

Երկրորդ հատվածը (քանդակված է առաջինի աջ կողմում) նույնպես չափածո է՝ գրված յամբական չափով: Այն բաղկացած է 12 տողերից (նկ. 130), որոնցից առաջինը (սխտ վատ պահպանված), թերևս, վերնագիրն է: Վերնագրին հաջորդող առաջին տողն ընթերցվում է. «Օվա որևէ տեղ սավիղի ռազմատևնչ աստվածուհի»: Վերջինս նույնացվում է հայոց Անահիտ դիցուհու հետ⁸⁹⁵: Հաջորդ տողերն ասվում են դիցուհու անունից, որում նա սպասնում է իսկապես պատժել մարդկանց վատ արարքները: Այստեղ ևս Ա. Ի. Բոլտունովան և Հ. Մանանդյանը տարակարծիք են. Ա. Ի. Բոլտունովան դիցուհու խոսքում տեսնում է սպասուսիք ընդդեմ «անարդարացի և վատ սկզբունքների»⁸⁹⁶, իսկ Հ. Մանանդյանը՝ կաղվածքների անարդարացի բաժանման⁸⁹⁷: Կ. Վ. Տրևերը այս հատվածի վերջում և հաջորդում ընթերցում է «[գուշակություն], առաքված քամու փչելով (շեղով)» արտահայտությունը՝ համարելով իր տեսության հաստատում: Բացի այդ, նա առաջին վնասված տողում (որը պետք է լիներ վերնագիր) պահպանված 7 տառերից վերջին երեքը (ΔΗΩ) համարում է երկրի և պտղաբերության, նաև օրենսդիր աստվածուհի Գեմետրայի անվան տարբերակներից մեկը⁸⁹⁸:

Երկու հատվածների տաղաչափության, բովանդակության և դարձվածքների վերլուծությունից Յ. Ա. Սմիրնովը և Ա. Ի. Բոլտունովան եզրակացնում են, որ սրանք ինչ-որ անհայտ ողբերգության հատվածներ են, որի հեղինակը քաջամանթ է եղել Հեսիոդոսի, Սոֆոկլեսի, Եվրիպիդեսի և Մենանդրոսի ստեղծագործություններին: Նրանք հավանական են համարում, որ սա տեղական պոետի ստեղծագործություն է և գտնում են, որ նա, ըստ երևույթին, հայոց Արտավազդ Բ արքան է: Նման եզրակացության համար հիմք են տալիս Արտավազդ Բ-ի արքունիքում Եվրիպիդեսի «Բաքտուսիներ»-ի բեմականացումը և Պլուտարքոսի տեղեկությունը նույն արքայի հունարենով գրած ողբերգությունների ու այլ ստեղծագործությունների մասին, որոնցից մի քանիսը պահպանվել և հայտնի էին նրա ժամանակներում, Հայաստանի սահմաններից դուրս⁸⁹⁹:

1911 թ. հայտնաբերված քարի երրորդ քնագիրը (նկ. 131) հնգատող նվիրատվական մի արձանագրություն է, որը Ա. Ի. Բոլտունովան վերծանում է. «չորս մի, մեկ կառք՝ նվիրարելված Եվտիխարմիդասի, և մի փոքր նկար՝ Պելամի-

⁸⁹⁴ Тревэр, 1953, էջ 120–122:

⁸⁹⁵ Болтунова, 1942, էջ 38–41; Մանանդյան, 1946 (ա), էջ 6–8; Մանանդյան, 2010, էջ 438–440:

⁸⁹⁶ Болтунова, 1942, էջ 40:

⁸⁹⁷ Մանանդյան, 1946 (ա), էջ 7–8; Մանանդյան, 2010, էջ 439–440: Այդ կարծիքը երմանալուում է բնագրի 9–10-րդ տողերի իր ստաբարված բարզամետոթյանը՝ «այն տուեց, որ վատ ու անարարք կերպով է ասեմանաուդում՝ ինքն ինքն փայտում է գերծգանս»:

⁸⁹⁸ Тревэр, 1953, էջ 122–128:

⁸⁹⁹ Болтунова, 1942, էջ 40–42; Тревэр, 1953, էջ 127–128:

դևսի կողմից»: Հետևելով Ս. Դ. Լիսիցյանի ցուցումին՝ Ա. Ի. Բոլտունովան հակված է ուղիղ կապ տեսնելու չորս ձի և մի կաթը նվիրաբերելու (ինչը, թերևս, առնչվում է Արևի պաշտամունքին) և Արտավազ Բ-ի դրամներին պատկերված քառաձի կաթի միջև⁹⁶⁶: Նրա ընթերցման հետ համաձայնելով՝ Հ. Հ. Մանանդյանը ենթադրում է Արմավիրում Ք.ա. III–II դարերում հունական գաղութի և տաճարի գոյություն⁹⁶⁷, ինչն, իրավացիորեն, սուր քննադատության է ենթարկում Կ. Վ. Տրևերը⁹⁶⁸: Յ. Ի. Սմիրնովը ընթերցման առաջին փորձի ժամանակ հնարավոր էր համարում առաջին անվան մասնատումը և քնազրի երրորդ տողի երկրորդ կետում «Մարմի» անվան ընթերցումը՝ այն համարելով Հարմա նահապետի անունը⁹⁶⁹: Կ. Վ. Տրևերը համաձայնելով Յ. Ի. Սմիրնովի հետ, խիստ տրամաբանական է համարում այստեղ Հարմայի հիշատակությունը (որին, ըստ հայոց ազգային ավանդության, Գեղամ նահապետը ծնելով Արմավիրում թողել է այնտեղ, և ինքը հետագեղ հյուսիս–արևելք), մասնավորապես որ Արմավիրում, ըստ Մովսես Խորենացու, Արևի և Լուսնի աստվածների կողքին պաշտվել են հայոց արքաների նախնիները⁹⁷⁰: Ուստի առաջարկում է քնազրի հետևյալ ընթերցումը. «Չորս ձի [և] կաթ» (նվիրաբերված) Հարմային. Պղտամի-դևսի պնակխոն [է]»: Բացի այդ, Կ. Վ. Տրևերը հատուկ ուշադրություն է դարձնում քնազրից աջ, երրորդ տողի ուղղությամբ պահպանված «գուշակություն», առաջված քանու փչելով (չնչուլ)» արտահայտությանը, որն առկա է նաև երկրորդ քնազրում⁹⁷¹:

Առաջին երկու քնազրերի՝ Արտավազ Բ-ի հեղինակած ողբերգության հատվածները լինելու հարցում համամիտ լինելով Յ. Ի. Սմիրնովի և Ա. Ի. Բոլտունովայի կարծիքներին, Գ. Ի. Գոյանը փորձում է ավելի հիմնավորել այդ տեսակետն՝ ուշադրաբար թատերագիտական քննությամբ: Նա միանգամայն հավանական է համարում, որ նման մի հատված է նաև երրորդ քնազրը, որը ոչ թե առանձին նվիրատվական արձանագրություն է, այլ՝ մինևույն ստեղծագործության կտորներից մեկը, որը նա պայմանականորեն, ըստ առաջին հատվածի սկզբնատողի, կոչում է «Ռազմատենչ աստվածուհին»⁹⁷²:

Չորրորդ՝ 1927 թ. գտնված առաջին՝ 11 տողանոց քնազրը (նկ. 132), որն, ըստ Ս. Տեր–Հակոբյանի, «մի բարեկամական ողջունագրում է Միթրա և Օրոնո թագավորների»⁹⁷³, Ա. Ի. Բոլտունովան համարում է Արտաշես Ա արքայի դիմումը Երրոնո արքային՝ թարգմանելով հետևյալ կերպ. «Արքա Արտաշես] Մադոնիսն Միթրասը ողջուն է հղում Երրոնո արքային: Երև դու ողջ–ստող

⁹⁶⁶ Бодрынов, 1942, էջ 42–43:

⁹⁶⁷ Մանանդյան, 1946 (a), էջ 8–10; Մանանդյան, 2010, էջ 440–443:

⁹⁶⁸ Тревэр, 1953, էջ 130:

⁹⁶⁹ Тревэр, 1953, էջ 154–155:

⁹⁷⁰ Մովսես Խորենացի, զիյր Ա, գլ. ԺԲ և զիյր Բ, գլ. ՀԷ:

⁹⁷¹ Тревэр, 1953, էջ 128–133: «Արքին արտահայտությունը չկա Ա. Ի. Բոլտունովայի մոտ. Կ. Վ. Տրևերը փոխարկում է 1911 թ. արչավիճակի մասնակիցների արժիսիսին փաստաթղթերը:

⁹⁷² Гом, 1952, էջ 138–161:

⁹⁷³ Տեր–Հակոբյան, 1935, էջ 148:

ասարում նա, ապա բավ կլիներ, որ ողջ-ատոլջ ասարներ նաև երա սերունդը: Ողջ-ատոլջ լինելով դու կրողորես թագավորությունը...»: «Արտաշես» անունը նա վերականգնում է՝ կարծելով, որ առաջին տողի վերջին երկու տառերը՝ «ա» և «ր», արքայանվան կրճատումն են: Հաջորդ երկու բառերը նա համարում է տխրողներ⁹⁰⁸: Հ. Հ. Մանանդյանը չընդունելով նման մեկնաբանությունը՝ առաջարկում է բնագրի առաջին տողի վերջին երկու տառերը միացնել երկրորդ տողին և, կատարելով մի տասի փոփոխություն՝ չորս տողերը կարդալ. «Արմավիրցիների թագավոր Միթրասը բարև է ուղարկում Երվանդ թագավորին»: Միթրասին նա նույնացնում է Մովսես Խորենացու հիշատակած Երվանդ արքայի եղբայր Երվազ թրմապետի հետ⁹⁰⁹: Կ. Վ. Տրևերը հիմնականում համաձայնելով Ա. Ի. Բոլտունովայի ընթերցման և Հ. Հ. Մանանդյանի ուղղումների հետ՝ բարեհաջող թագավորության գուշակություն ու ատոլջության մաղթանք պարունակող այս բնագրի նպատակադրումը ևս կապում է թրմական գուշակության հետ⁹¹⁰:

1927 թ. գտնված երկրորդ բնագիրը (ընդհանուր թվով՝ հինգերորդը, 13 տող, նկ. 133) Ս. Տեր-Հակոբյանը իրավացիորեն համարել էր սելևկյան օրացույցի ամիսներ, սակայն չէր նկատել վերջին տողում «Փառնակ» անվանը հետևող շարունակությունը, որն, ըստ Ա. Ի. Բոլտունովայի, ողջուն-մաղթանք է՝ ուղղված Պոնտոսի Փառնակ արքային (Ք.ա. 190–169 թթ.)⁹¹¹: Մրան ևս առարկում է Հ. Հ. Մանանդյանը՝ գտնելով, որ 13-րդ տողի սկզբում նշված է ոչ թե արքայանունը, այլ 13-րդ հավելյալ ամիսը (epagomenia), որը կոչվել է լուսնի «Փառնակ» մականունով, իսկ ատոլջության մաղթանքն ուղղված է Արմավիրի թրմապետ Միթրասից Երվանդ արքային⁹¹²: Կ. Վ. Տրևերը մերժելով թե՛ Ա. Ի. Բոլտունովայի և թե՛ Հ. Հ. Մանանդյանի մեկնաբանությունները, շեշտում է Փառնակի՝ Լուսնի աստծո անվանումներից մեկը լինելը և այն համարում ամիսների հովանավոր աստվածություն՝ կրկին դիտարկելով իր տեսության համատեքստում (թեպետ չի բացառում նաև անձնանուն լինելը)⁹¹³:

Օրացույց-արձանագրության տակ փորագրված է վեցերորդը (1927 թ. երրորդը, նկ. 134), որից նշմարելի են միայն հինգ վատ պահպանված տողեր: Դրանցում հիշատակվում է «եկլեն Նումենիոսը», որին Ա. Ի. Բոլտունովան հակված է նույնացնելու Ք.ա. II դարի համանուն պատմական մի գործի հետ⁹¹⁴: Հ. Հ. Մանանդյանը և Կ. Վ. Տրևերը ձեռնպահ են մնում եզրակացություններ կատարելուց⁹¹⁵:

⁹⁰⁸ Боттунова, 1942, էջ 43–44:

⁹⁰⁹ Մանանդյան, 1946 (ա), էջ 18–22; Մանանդյան, 2010, էջ 449–454:

⁹¹⁰ Тревэр, 1953, էջ 134–137:

⁹¹¹ Боттунова, 1942, էջ 44–45:

⁹¹² Մանանդյան, 1946 (ա), էջ 22–24; Մանանդյան, 2010, էջ 454–456:

⁹¹³ Тревэр, 1953, էջ 137–140:

⁹¹⁴ Боттунова, 1942, էջ 45–46:

⁹¹⁵ Մանանդյան, 1946 (ա), էջ 24–25; Մանանդյան, 2010, էջ 456–457; Тревэр, 1953, էջ 140–142:

Յոթերորդը (1927 թ. գտնված չորրորդ քնագիրը՝ քաղկացած 11 տողից) գտնվում է վեցերորդի տակ և չափածո է: Ա. Ի. Բոլտունովայի մոտ բերված է այս քնագրի միայն տասնադարձումը (առանց լուսանկարի և գրչանկարի) և հետագա ուսումնասիրողները, ղժգոհությամբ այդ փաստը նշելով հանդերձ, չեն փորձել լրացնել այդ բացը: Պահպանված մասերից, ըստ Ա. Ի. Բոլտունովայի, կարելի է հասկանալ, որ նկարագրվող դեպքերը տեղի են ունեցել Ջ.ա. 160-ական թթ., որոնց մասին նախորդ քնագրից արդեն հայտնի Նումենիոսը պատմում է Մելևկյան Անտիոքոս Դ Եպիփանես արքայի քույր Լաոդիկային, որը քնագրում հանդես է գալիս ոչ թե անունով, այլ թագուհիներին տրվող «փիլադելֆոս» պատվանունով: Նա հաղորդում է տխուր լուրը, նշելով, որ դրանում չկա «անփառունակ ոչինչ», և հայտնում, թե նրա ամուսինը, որ տիրացել էր «զեղեցիկ Հայաստան երկրին», սպանվել է իր զինվորներից՝ «շունչը փչելով զենքը ձեռքին»: Իր այս մեկնաբանությունը Ա. Ի. Բոլտունովան փորձում է հիմնավորել ժամանակաշրջանի պատմական դեպքերի քննությամբ⁹¹:

Հ. Հ. Մանանդյանն այս դեպքում ևս, ընդունելով Ա. Ի. Բոլտունովայի ընթերցումը, չի համաձայնում նրա մեկնության հետ: Նա իրավացիորեն նշում է, որ նախ Անտիոքոս Դ-ի մահվան պատմությունը, ըստ տրամաբանության, պետք է արձանագրվեր ոչ թե Արմավիրում, այլ Մելևկյանների կենտրոնական որևէ նստավայրում, քացի այդ, սկզբնաղբյուրներից հայտնի է, որ այդ արքան ոչ թե սպանվել, այլ ծանր հիվանդացել ու մահացել է Էլամում: Նա կարծում է, որ այստեղ խոսքը վերաբերում է Ջ.ա. III դարավերջի իրադարձություններին. զենքը ձեռքին, իր զինվորներից սպանված արքան, Մեծ Հայքի Երվանդ Վերջին արքան է, որը, համաձայն Մովսես Խորենացու հաղորդումների, սպանվել է Երվանդաշատում Արտաշեսի զորքերի հարձակման ժամանակ իր զինվորներից մեկից: Այնուհետև Արտաշեսը հրամայել է նրան թաղել և մահարձան կանգնեցնել: Հ. Հ. Մանանդյանը ենթադրում է, որ Նումենիոսը Երվանդ արքայի մահվան գույժը հայտնում է նրա քույր-թագուհուն, որը հիշվում է միայն «փիլադելֆոս» պատվանունով, իսկ Երվանդ արքայի դին փոխադրվել է Արմավիր, և 1927 թ. գտնված քարը, հավանաբար, եղել է նրա մահարձանի մի մասը⁹²: Կ. Վ. Տրևերը ընդունելով Հ. Հ. Մանանդյանի կողմից Ա. Ի. Բոլտունովայի մեկնության քննադատությունը՝ իր հերթին քննադատում է Հ. Հ. Մանանդյանին (հատկապես չորս արձանագրություններով քարը Երվանդ արքայի մահարձան համարելը): Նա ենթադրում է, որ քնագիրը կարող է լինել գրական մի երկի հատված, որը պատմում է ոչ թե Անտիոքոս Դ-ի կամ Երվանդ Վերջինի, այլ Արտաշես Տիգրեբակայի ողբերգական մահվան մասին, որը սպանվեց իր զինվորների կողմից (Խորենացի, գիրք Բ, գլ. ԺԲ): Հնարավոր համարելով ընթերցման մեջ թույլ տրված որոշ սխալները, Կ. Վ. Տրևերը խիստ բարձր է գնահատում քնագրի պատմագիտական և գրական արժեքը, նշելով, որ այն

⁹¹ Боргунова, 1942, էջ 46–54:

⁹² Մանանդյան, 1946 (ա), էջ 25–30; Մանանդյան, 2010, էջ 457–458:

պատմական բովանդակությամբ Ք.ա. II–I դարերի պոեմի կամ ողբերգության հատված է, մինչդեռ Հռոմում պատմական կերպարները գրական ստեղծագործություններում հայտնվում են միայն Քրիստոսի ծննդյան I դարում⁹¹⁸...

Մենք այստեղ կանգ առանք հիմնականում Յ. Ի. Սմիրնովի, Ս. Տեր–Հակոբյանի, Ա. Ի. Բոլտունովայի, Բ. Ն. Գրակովի, Հ. Հ. Մանանդյանի, Գ. Ի. Գոյանի, Կ. Վ. Տրևերի աշխատանքներին: Նշենք, որ Արմավիրի հունարեն արձանագրություններին անդրադարձել են բազմաթիվ այլ ուսումնասիրողներ (Գ. Խ. Սարգսյան⁹¹⁹, Ս. Մ. Կրկյաշայան⁹²⁰, Գ. Ա. Տիրազյան⁹²¹, Ժ. Գ. Էշիբեկյան⁹²² և ուրիշներ), սակայն նրանց բոլորի աշխատանքներին անդրադառնալը դուրս է մեր խնդրից: Մեկ անգամ ևս ցանկանում ենք շեշտել մեր ժողովրդի քաղաքական ու մշակութային պատմության ուսումնասիրության համար արմավիրյան արձանագրությունների կարևորությունը, որոնք վերջին տասնամյակներում հանիրավի անուշադրության են մատնվել⁹²³...

Հին Հայաստանի պատմության և մշակույթի ուսումնասիրության առումով արժեքավոր է 1945 թ. Գառնիից գտնված Տրդատ արքայի հունարեն արձանագրությունը (նկ. 135), և պատահական չէ, որ այն դարձել է մեծ թվով ուսումնասիրությունների առարկա⁹²⁴: Արձանագրությունը հաղորդում է.

1. Հելիոս Տիրիդատես՝ թագավոր
2. Մեծ Հայքի, թագավորելով
3. իբրև դեսպոտ (վեհապետ), կառուցեց պայծառախալ
4. թագուհու համար անհաղթահարելի ամրոցը
5. II–րդ տարում իր թագավորության...
6. Մենենասը տիրոջ արտոնությամբ [իբրև]
7. լիտուրգոս մեծ սպահաետի,
8. ի նշան շնորհակալության,
9. Մատն վկայի ներկայությամբ [գնեց]⁹²⁵:

⁹¹⁸ Թրեբեր, 1953, էջ 142–147:

⁹¹⁹ Տարսուս, 1960, էջ 33–41:

⁹²⁰ Կրկյաշայան, 1970, էջ 134–139, 145–148:

⁹²¹ Գ. Ա. Տիրազյանը, վկայակոչելով Յ. Ա. Սմիրնովի, Խ. Հաբիբովի (Habicht, 1953, էջ 251–256) և Յ. Լ. Ռոբերտի (Robert, 1954, էջ 179–180) ուսումնասիրությունները, համաձայնում է Խ. Հաբիբովի կարծիքի հետ, ըստ որի՝ Արմավիրում տաղերը (հիմնականում Եզրիպոդիսի) ողբերգությունների ստեղծիչը կազմվել է «մի ժողովածու, անթողվա, ինչը կարող էր ուսուցողական նպատակ ունենալ և կերպովը դադարում» (ՀԺՊ, 1971, 912–913):

⁹²² Էշիբեկյան, 1979, էջ 52, 63:

⁹²³ Այդ անուշադրության հետևանքը պետք է համարել մեկ մեծնակարի և երեք հունարեն արձանագրությունների անմետաղամբ Արմավիրից, ինչպես նաև պատմաբանների ոչ մեթոդաբանական վիճակը...

⁹²⁴ Արձանագրության մասին առաջին հաղորդումները՝ քննադի ընթերցմամբ, հրատարակել է Ստ. Լիպյանը (Լիպյան, 1945; այդ մասին՝ Замечательная находка. «Коммунист», 30. 09. 1945): Այնուհետև սկսվեց քննության կոչոք է դարձել հունարեն աշխատանքներում: Մանանդյան, 1946 (b), էջ 3–57 (վերջերս՝ Արանդյան, 2010, էջ 465–500); Արանդյան, 1947, էջ 61–72; Թրեբեր, 1949; Мананян, 1951, էջ 9–35; Аракелян, 1951, էջ 59–68; Թրեբեր, 1953, էջ 174–211; Moren, 1955, էջ 46–47; Սարգսյան, 1956, էջ 45–56; Արանդյան, 1958, էջ 146–148; Բազմբեկյան, 1965, էջ 229–234; Կրկյաշայան, 1965, էջ 234–238; Feyzid, Епанчанин, 1958, էջ 146–148; Բազմբեկյան, 1965, էջ 229–234; Կրկյաշայան, 1981, էջ 81–94 և այլն: 1969, էջ 184–189; Կրկյաշայան, 1981, էջ 359–362; Կրկյաշայան, 1981, էջ 359–362):

⁹²⁵ Զարգանուսությունը քննադից՝ Ս. Գ. Կրկյաշայանի (Կրկյաշայան, 1981, էջ 359–362):

Արձանագրության առանձին բառերի, անունների և հասկացությունների շուրջ հայտնվել են զանազան կարծիքներ ու մեկնություններ, որոնց այստեղ չենք անդրադառնա: Նշենք, որ տարակարծություններ կան նաև այն հարցում, թե ո՞ր Տրդատն է ամբողջի և կոթողի հեղինակը (ինչպես Ապարանի արձանագրության պարագայում)...

Առանձնակի ուշադրության են արժանի 1953 թ. հայտնաբերված Գառնիի բաղնիքի հանդերձարանի առասպելա-դիցաբանական բովանդակությամբ խճանկարի հունարեն գրությունները (նկ. 136): Խճանկարում պատկերված են ծովային աստվածություններ, ջրահարսեր (ներեուհիներ), իխթիոկենտավորսներ (տղամարդու տեսքով, ձիու իրանով և ձկան վերջավորությամբ առասպելական էակներ), ձկնորսներ, ձկներ և այլն: Խճանկարի կենտրոնում եղջյուրավոր տղամարդու և կնոջ տեսքով պատկերված են *Օվկիանոսը* (ըստ հոմերոսյան շրջանի պատկերացումների՝ բոլոր աստվածների նախահայրը, ըստ Հեսիդիոսի՝ Ուրանոսի և Գեայի որդին, Քրոնոսի եղբայրը, երեք հազար գետային որդի-աստվածությունների և նույնքան օվկիանոսի դուստրերի. ավելի ուշ շրջանի պատկերացումներում ետ է մղվել Պոսեյդոնի կողմից. Օվկիանոսը համարվել է նաև երկիրը շրջապատող գետ, որից սկիզբ էին առնում բոլոր ջրերը) և *Ծովը* (որից ծնվել է սիրո դիցուհի Աֆրոդիտեն): Կենտրոնական մասում Օվկիանոս և Ծովի գլխավերևում արձանագրված է. «Աշխատեցի՞ր՝ չստանալով ոչինչ»: Եռոտնյա տաղաչափական յամբով գրված այս հիանալի հատվածը (որը հայտնի չէ որևէ հունական ստեղծագործությունից) ասվում է խճանկարի վերոնշյալ երկու գլխավոր կերպարների անունից՝ խորհրդանշելով նրանց հավերժական, անհոգնում և անշահախնդիր աշխատանքը հանուն երկրի վրա կյանքի լինելության⁹²⁶:

Խճանկարի վերին եզրաշերտով (հյուսիսային պատի երկայնքով) ձախից աջ համապատասխան պատկերների կողքին (պահպանված հատվածներում) կան հետևյալ գրությունները. «*Ծովի խորք*», «*Ծովի անդորր*», *Գլխավոս* (ձկնորսներին և ծովագնացներին հովանավորող աստվածություն), *Պեկս և Թեախս* (Աբիլլեսի հայրն ու մայրը), «*Ծովի սփ*»: Աջ եզրագծի սկզբին, թևավոր ձկնորսի գլխավերևում մակագրված է՝ «*Գեղեցկություն*», իսկ շարունակության վրա պահպանվել են միայն որոշ տառեր, ապա մեկ այլ անվան թերի սկզբնամաս: Ստորին եզրաշերտը խիստ վնասված է, աջ կողմում հնարավոր է վերականգնել միայն Ապոլոնին և Դիոնիսոսին տրված մականուններից մեկը (որը տվյալ դեպքում, թերևս, վերաբերում է Դիոնիսոսին) և «*Ցանկություն*» բառերը: Արևմտյան պատի երկայնքով ձգվող եզրաշերտում պահպանված գրության ու պատկերների բեկորների վերլուծությունից հնարավոր է վերականգնել, որ այնտեղ եղել են սիրո աստված *Էրոսի*, սիրո համոզ-

⁹²⁶ Խորհրդային պատմագրության մեջ եղեմն այս հատվածը միանգամայն անձինն կերպով վնասակարծ էր խլել «վերայություն» դասակարգչային հավատությունների ու նշան...

թյամբ: Ստորև բերում ենք տապանազրի տողացի (ոչ չափածո) թարգմանությունը.

1. Այստեղ հանգչում է տիրուհի Աթննախաղ, որի հետ ես ժամանակսկին
2. փոխադարձ ձգտմամբ ամուսնացա:
3. Երան, ով անցնելով կնկիրի [կրան] վարդ կրան այլ
4. ծաղիկ, թող բարեհաս լինեն բոլոր երկնաբնակները:
5. Եթե որևէ մեկը գա՝ վատը խորհելով,
6. կրան թող պատժեն բոլոր ստորերկրյա սատուածները:
7. Սա գրեց Աննարիտը (Քննարիտը⁹⁵¹)՝ [ոչոյին] նույնատուն հոր,
8. որի համար ես իր կարն կյանքում եղել էր սիրելի կին / ամուսին:
9. Հայրը կրա նույնատուն էր իմ հորը,
10. մայրը կրա՝ Անտոնիան, դուստրն էր Լուկիոսի⁹⁵²:

Եղբերգի բանաստեղծական չափով գրված հունարեն այս ժայռափոր արձանագրությունը ոչ միայն կարևոր գրական հուշարձան է, այլ պատմական ուշագրավ սկզբնաղբյուր II դարի հայ ազնվականության վերաբերյալ⁹⁵³:

Հունարեն չափածո մեկ այլ տապանագիր է գտնվել Փոքր Հայքի Նիկուպոլիս քաղաքի մերձակայքից⁹⁵⁴:

1900 թ. Փոքր Հայքի տարածքի Աղջակալն (Աղաչա կալն) հնավայրից հայտնաբերված հունա-արամեական երկլեզու արձանագրության մասին խոսվել է նախորդ գլխում, ուր բերվել է արամեերեն մասի թարգմանությունը: Քանի որ բնագրի հունարեն և արամեերեն հատվածները քառացիորեն չեն կրկնում մեկմեկու, այստեղ ներկայացնում ենք հունարեն բաժինը.

«Օրինափոր սասոյապների մեջ աննահի հիշատակ կրիևի Օրոնանուսին (ոչոյուն) Արիտուկուսի, և Արիտուկուսին (կրա) սիրելի ոչոյուն, Արաուսայի (Ալոյունի) հանար, որ (ևս) կատուցեց գեղեցիկ բնակավայրի շքեղ պարիսպներն անայի տեղերում»⁹⁵⁵:

Փոքր Հայքի տարածքից գտնվել են նաև Դոնուսական թագավորության ժամանակաշրջանի (Ք.ա. 302/1–64 թթ.) հունարեն արձանագրություններ (Տրապիզոն և Մեքաստիա քաղաքներից), որոնք ևս որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հայագիտության համար⁹⁵⁶:

⁹⁵¹ Կ. Ֆ. Լեմման–Հաուսթոն անունն ընթերցում է «Աննարիտ»՝ եղծով, որ այն չի հանդիպում այլ աղբյուրներում (Lehmann–Haust, 1910, էջ 493): Կ. Վ. Տրևերն առաջարկում է կարդալ «Քննարիտ»՝ մտնումովով Հուլիան Մամիլոնյանի «Տարոնի պատմության» էջերում հանդիպող, VI–VII դարերի սահմանում ապրած մի հայ հռչակաբանի համանուն անունը (Trepser, 1953, էջ 248–249):

⁹⁵² Lehmann–Haust, 1910, էջ 488–493; հմմտ. Trepser, 1953, էջ 245–250:

⁹⁵³ Քննելով արձանագրության հաղորդումները և համադրելով հայտնի հարակից տվյալները՝ Կ. Ֆ. Լեմման–Հաուսթոնը նկատվոր է համարում, որ Արենուսը լինել ֓ոքր Հայքում իշխած Կոստիսի ծոցը (Lehmann–Haust, 1910, էջ 492–493); այդ ամբողջամբ տե՛ս նաև. Trepser, 1953, էջ 248–250):

⁹⁵⁴ Trepser, 1953, էջ 248 (նույնպես է Cumont Fr. et Cumont E., Studia Pontica, t. II, Bruxelles, 1906, № 363, էջ 307):

⁹⁵⁵ Lipsinski, 1975, էջ 197–208:

⁹⁵⁶ Olschansky, Biller, 1984, էջ 98, 101 (տե՛ս նույնպես գրականությունը): Խոսելով Արիտուս եվպատոսի մասին, մեր համայն հիշատակում ենք միայն կրա դաշինը Տիգրան Մեծի հետ՝ ժողովուրդը հայ իրականության հետ կրա ստաբիլ կարևոր կապի մասին. Ք.ա. 112 թ. Դոնուսայի գաղութատի դիմած

Վիմագրերից բացի, Փոքր Հայքում հունարենը գործածվել է նաև դրամահատության բնագավառում, որին կանդրադասանք դրամների մասին խոսելիս:

Կոմնագենեի թագավորություն: XIX դարի երկրորդ կեսին գիտական աշխարհին հայտնի դարձավ հայոց նախաքրիստոնեական մշակույթի ամենափառահեղ հուշարձանախմբերից մեկը (նկ. 138), որը պահպանվել է Եփրատի աջ ափին գտնվող Նեմրուք լեռան վրա (չշփոթել Վանա լճից հյուսիս քարձրացող Նեմրուքի հետ): Հուշարձանախումբը կառուցել է հայոց Երվանդունյաց տոհմի շատավիղ, Կոմնագենեի արքա Անտիոքոս Ա-ն (Ք.ա. 70–34 թթ.), թողնելով մեծ թվով հունարեն արձանագրություններ, որոնք մեր պատմության և, հատկապես, հոգևոր ու նյութական մշակույթի ուսումնասիրության համար անզնահատելի սկզբնաղբյուրներ են: Նեմրուքի սրբավայրը համակարգված ուսումնասիրության է ենթարկվել XIX դարի երկրորդ կեսին գերմանացի հետազոտողների և 1950–ական թվականներին՝ գերմանական և ամերիկյան արշավախմբերի կողմից: Կոմնագենեի տարածքում Նեմրուք լեռան սրբավայրի բնագրերից բացի հունարեն արձանագրություններ են գտնվել մայրաքաղաք Սամոսատից, «Եփրատի (վրա գտնվող) Արսամեայից» (ներկայումս՝ Գերգեր կամ Գյառգյատ), «Նիմֆայոսի (վրա գտնվող) Արսամեայից» (այժմ՝ Քյաիթա), Ադիյաման, Սեմսիդիա, Կարակուշ, Սեյիկ, Անջոզ, Չապուտլու, Ադալ Բյուլյուք, Դոլիխե, Դիրեք կալե, Հասանոզլու հնավայրերից⁹⁷:

Նշված արձանագրությունների ճշշող մեծամասնության հեղինակը Անտիոքոս Ա-ն է, որը, սովորաբար, հանդես է գալիս «*Մեծն արքա Անտիոքոս՝ Աստված, Արքայադատ, Հայրնական (աստված), Հոմնասանք և Հեղինասանք, տոհմից արքա Միջորդատես Կալիսիկոսի և թագուհի Լադիկեի՝ հղբայրասան աստվածուհու...*» տիտղոսաշարով⁹⁸:

Արձանագրություններում տիտղոսաշարին հաջորդում են բուն հաղորդումները, որոնք վերաբերում են աստվածների պաշտամունքին, թագավորական նախնիներին, նրանց և արքայի անձի աստվածացմանը, քաղաքների ու շինությունների (հատկապես՝ սրբավայրերի) հիմնադրմանն ու քարեկարգմանը, նոր օրենքների ու կարգերի սահմանմանը և այլ հարցերի:

Միջրդատ Եվրատոզին որդեգրել էր Փոքր Հայքի արքա Անտիպատրոսը և ժամանակ նրան իր թագավորությունը: Միջրդատ Եվրատոզի կրում էր «թագավոր Դոնատոսի և Հայոց» տիտղոսը (Մարտոն, XII 3, 28–29, b., 1940, էջ 75; Հարությունյան, 2003, էջ 131–152), ինչը մեզ կհիմն է տալիս նրան դիտարկելու նաև իբրև Փոքր Հայքի արքա:

⁹⁷ Կոմնագենեի սրբավայրերի և հունարեն արձանագրությունների մասին տե՛ս Humann, Puchstein, 1890, էջ 97–406; Jalabert, Mousterd, 1929, էջ 9–60 (պշտով հավաքված են վերոհիշյալ հնավայրերից գտնված 46 հունարեն արձանագրություններ՝ №№ 1–37, 45–52, 54, 56); Goell, 1961, էջ 390–405; Dörner, Goell, 1963; Turanov, 1956, էջ 69–74; Մարգարյան, 1966, էջ 28–33; Մարտոն, 1992 (նաև դրանցում հիմքով գրավորություններ):

⁹⁸ Տարօրինակ է, որ նման տիտղոսաշարով ներկայացող այբայի դրամները կրում են անհամեմատ համեստ՝ «արքայի Անտիոքոսի» մակագրությունը (տե՛ս ստորև):

Անտիոքոս Ա-ի հաղորդումների մի զգալի մասը վերաբերում է իր նախնիների: Նխնայոսի Արսամնայի 256 տողանոց արձանագրության մեջ, օրինակ, տեղեկացվում է, որ այդ քաղաքը հիմնադրել է Արսամնեը (Արշամը, Ք.ա. III դ.), որում սրբավայր է կառուցել իր հայր Միթրադատես (Միհրդատ) Կալլինիկոսը, իսկ ինքը բարեկարգել է և շքեղացրել է քաղաքը⁹⁰⁹: Նեմրուծի սրբավայրի արձանագրություններից⁹¹⁰ իմանում ենք, որ նա հայրական գծով սերում էր Երվանդունիներից: Հայրական նախնիների ոչ լրիվ պահպանված շարքում հիշատակվում են Հայաստանի սատրապ Արոանդեսը (Երվանդ, Քսենոփոնի «Անարասիում»՝ Օրոնտաս, Ք.ա. V-IV դդ.), որը Աբեմնեյան տիրակալ Արտաքսերքսես Մենմնի (Ք.ա. 405-359 թթ.) փեսան էր, մեկ այլ Արոանդես (Երվանդ), որն, ի տարբերություն նախորդի, կրում է «արքա» տիտղոսը⁹¹¹, Ծոփքի և Կոմմագենեի միացյալ թագավորության առաջին արքաներ Սամեսն ու Արսամնեը (Արշամը), որոնք իշխել են Ք.ա. III դարում⁹¹²: Սրան ավելացնենք, որ Անտիոքոս Ա-ն կրում է Հայկական (Տիգրանյան) թագ, որը մինչև թագավորության անկումը (Քրիստոսի ծննդյան 72 թ.) կոմմագենյան դրամների վրա խորհրդանշում է հայկական պետականությունը (տե՛ս դրամների բաժնում): Ավամը, կարծում ենք, բավական է պատկերացնելու կոմմագենյան հուշարձանների ուսումնասիրության կարևորությունը հայագիտության համար⁹¹³...

Հունարեն գրությամբ հայկական դրամներին անցնելուց առաջ կարևոր ենք համարում էջմիածնի Մայր տաճարի հյուսիսային պատի շարվածքում պահ-

⁹⁰⁹ Այս արձանագրության հիմնական հաղորդումը վերաբերում է արքայի և նրա հոր պաշտամունքի նախատմանը, դրա հետ կապված կարգերի ու օրենքների հաստատմանը, և քաղաքի զուգահեռներ ունի Կոմմագենեի այլ սրբավայրերից գտնված նմանարժանյակ բնագրերի հետ (արձանագրության համեմատական հրատարակությունը Ֆ. Կ. Դյոբների կողմից տե՛ս Dörner, Goell, 1963, էջ 36-59):

⁹¹⁰ Աճերուք թեան գագաթամերձ շրջանի արևելյան ու արևմտյան կողմերում վեր են խոյանում նույնատեսակ երկու պաշտամունքային համալիրներ: Երկուսում էլ գլխավոր մասը կազմում են հինգ մարտանոց արձանները (նստած վիճակում), որոնցից կենտրոնականը պատկերում է գեթազայն առաջին Օրոմազդես-Չնա-Արամազդիս (9 մասը բարձրությամբ), նրա երկու կողմերում՝ Մայր դիցուհուն, Արտազնես-Շեռալիս-Լանազիլին, Միիր-Ապրես-Շեռնա-Շերմային և Անտիոքոս Ա-ին (8-ական մասը բարձրությամբ): Արձանների թիվուրեքն քանդակված է նախ մի արձանագրություն՝ երկրված արջի և նրա հոր պաշտամունքի հաստատմանը, երանք ծննդյան ու գահակազման օրեր տոնական սահմաններս, մի շարք երկ կարգերի ու օրենքների հաստատմանը: Շուրջաքանդուր կազմում եղել են 30-ական բարձր սալեր (2 շարքով, 3 մասը բարձրությամբ), որոնց վրա պատկերված են եղել արջից նախնիները՝ 15-ը հայրական, նույնքան էլ մայրական գծով (դրանց մի մասը ողնաչեղ է ժամանակի քերտազրույմ, մյուսները պահպանվել են մասամբ կամ ամբողջությամբ): Շուրջարևոյր քարաքանդի հետևում առկա է պատկերված նախնու ներկայացված արձանագրություն, որը սկզբում է ֆրոնիշյալ տիտղոսաչափով: Հետաքրքրական է, որ սրբավայրի սալերից մեկին արձանագրված է արքայի բաժանազայնից երկնային քառասունների դիքքի պատկերմամբ...

⁹¹¹ Մա, ամենայն հավանականությամբ, Գազգամնայի նախադամարտից հետո Հայաստանի անկախությունը վերականգնված Երվանդ արքան է (ՀԺՊ, 1971, էջ 504-505, բաժնի նեղիմակ՝ Գ. Ա. Տիգրաչյան):

⁹¹² Hamann, Paschstein, 1890, էջ 308-309; Tիրազյան, 1956, էջ 70-74; Մարգարյան, 1966, էջ 30-32:

⁹¹³ Հայաստանի դրամ, կոմմագենյան բնագրերից մինչ օրս միայն ստանդին պատասխաններ են քարզմանվի հայերեն, դեռևս չի գտնվել Կոմմագենեի հայոց թագավորության ամբողջական պատմությունը որևէ հայագետի մեջով...

Մեզ էլ հասել Աբեմնեյան ժամանակաշրջանի Հայաստանի սատրապներ Օրոնտաս-Երվանդի հուևտաս ու Տիգրեզայնի հուևտաս ու արամնատաս դրամները, որոնք, սակայն, հասնել են ոչ թե Հայաստանում, այլ (ժամանակաշրջանաբար) Մյուսփայտն և Կիլիկիայում երանք իշխանության տարիներին, ուստի և չեն կարող դիտարկվել որպես հայկական կամ հայաստանյան դրամներ (տե՛ս Մուշեղյան, 1983, էջ 16-25):

Արշամ⁹⁴⁷ (Ք.ա. մոտ 240–220 թթ.).

ΒΑΣ ΙΛΕΩΣ / ΑΡΣΑΜΟΥ – «արքայի Արշամի»

Շոփրի թագավորություն.

Չարեն (Չարիադրես, Ք.ա. 189 – մոտ 175 թթ.)⁹⁴⁸.

ΔΣΑΡΙ // ΑΝΙΣΑ / ΔΩ – «Չարի[ադրեսի] (որդու) Անիսասադ[րեսի] (?)»

Մորֆիլիկ.

ΜΟΡΙ[ΦΙΛΙΟΣ] // ΔΣΑΡΙ[ΑΔΡΙΟΣ] – «Մորի[ֆիլիկի] (որդու) Չարի[ադրեսի]»

Քսերքսես (Ք.ա. մինչև 164 թթ.).

ΒΑΣ ΙΛΕΩΣ // ΧΕΡΧΟΥ – «արքայի Քսերքսեսի»

Արդիսարես.

ΒΑΣ ΙΛΕΩΣ // ΑΒΔΙΣΣΑΡΟΥ «արքայի Արդիսարեսի»

Կոմմագենեի թագավորություն⁹⁴⁹.

Միթրադատես (Միհրդատ) Ա Կալլինիկոս (Ք.ա. 96–70 թթ.).

ΒΑΣΙΛΕΩΣ // ΜΙΘΡΑΔΑΤΟΥ / ΚΑΛΛΙΝΙΚΟΥ – «արքայի Միթրադատեսի
Կալլինիկոսի»

Անտիոքոս Ա Թեսոս (Ք.ա. 69–34 թթ.).

ΒΑΣΙΛΕΩΣ / ΑΝΤΙΟΧΟΥ – «արքայի Անտիոքոսի»

Անտիոքոս Ա–ին հաջորդում են Միթրադատես Բ–ն, նրա եղբայր Անտիոքոս Բ–ն, Միթրադատես Գ–ն, Անտիոքոս Գ–ն, որոնցից դրամներ մեզ չեն հասել: Անտիոքոս Գ–ի մահից հետո տիրած անիշխանությունից հետո Հռոմի

⁹⁴⁷ Հատած դրամների տարատեսակությունից երևելով դրամագետներն առաջարկում են Ք.ա. 240–230–ական թթ. տեսնել Արշամ անունով երկու գահակալների (Bedoukian, 1985, էջ 10–12, 23–24, 32–33), ինչը, սակայն, չի հաստատվում զբաղիր ապրդոնների տվյալներով: Փորձ է արվել անգամ կրանց վերջ գահակալած համարել Քարատայես անունով այս արքային (Nercessian, 1995, էջ 48–49), որի մասին նրա անունը կողմնակ դրամից բացի մեզ ոչինչ հայտնի չէ:

⁹⁴⁸ Կարծիք կա, որ Չարենին և Մորֆիլիկին (վերջինս որևէ այլ աղբյուրից հայտնի չէ) վերազգվող դրամները ոչ թե հայնական են, այլ հասովյն են Կապադովկիայի Անիսաս և Մորիմա քաղաքներում, որոնց անունները փորձում են տեսնել պահպանված մարագրություններում (տե՛ս Մուշեղյան, 1983, էջ 42–43, Կ. Ռեզինզի տեսակետն է, որև ընդունում է հերիմակը): Այդուհանդերձ դրանք վերազգված է Չարենին և Մորֆիլիկին (տե՛ս Bedoukian, 1985, էջ 13–15, 26–28, 35; Nercessian, 1995, էջ 52–53 և հոլիս գրավախոսքունը):

⁹⁴⁹ Անիշխանների կայմից եկամտիցուց հետո Կոմմագենեի Պտղոմեոս սասրեսացի գեաախորոթյանը անկախություն ձևոր ընդեց Ք.ա. 163 թվականին: Թագավորության մեզ հասած ասաչին դրամները պատկանում են Միթրադատես Ա Կալլինիկոսին, իսկ վերջինների վերաբերում են Ք.հ. 72 թթ. ն, կրք Հռոմը վերադրեց Կոմմագենեի թագավորությունը (Bedoukian, 1985, էջ 15–18, 29–31, 36–37; Nercessian, 1995, էջ 89–101):

Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորություն⁹⁵⁵.

Արտաշես Ա (Ք.ա. 189–160 թթ.).

ΒΑΣΙΛΕΩΣ / ΜΕΓΑΛΟΥ // ΑΡΤΑ(ΞΙΟΥ)– «արքայի Մեծի Արտաշեսի»⁹⁵⁶

Տիգրան Ա (Ք.ա. մոտ 115–95 թթ.).

ΒΑΣΙΛΕΥC / ΜΕΓΑΛΟΥ // ΤΙΓΡΑΝΟΥ – «արքայի Մեծի Տիգրանի»

ΒΑΣΙΛΕΥC / ΜΕΓΑΛΟΥ // ΤΙΓΡΑΝΟΥ / ΦΙΛΕΛΗΝΟC – «արքայի Մեծի Տիգրանի հելլենաստի»

Տիգրան Բ (Ք.ա. 95–55 թթ.).

ΒΑΣΙΛΕΩΣ // ΤΙΓΡΑΝΟΥ – «արքայի Տիգրանի»

ΒΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ // ΤΙΓΡΑΝΟΥ – «արքայից արքայի Տիգրանի»

Զարեհ (Ք.ա. 72 թ.).

ΒΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ // ΖΑΔΡΙ–ΑΔΟΥ – «արքայից արքայի Զարեհի»⁹⁵⁷

Արտալազդ Բ (Ք.ա. 95–55 թթ.).

ΒΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ // ΑΡΤΑΥΑΖΔΟΥ – «արքայից արքայի Արտալազդի»

ΒΑΣΙΛΕΩΣ / ΒΑΣΙΛΕΩΝ // ΑΡΤΑΥΑΖΔΕΩ / ΘΕΙΟΥ – «արքայից արքայի Արտալազդի՝ սատրապի»⁹⁵⁸

Արտաշես Բ (Ք.ա. 34/30–20 թթ.).

ΒΑΣΙΛΕΥC / ΜΕΓ «արքայի Մեծի...»

⁹⁵⁵ Ինչպես վերը նշվեց, բոլոր էինքերն ունեցր Միևրդատ 2 եվպատորին դիտարկելու նաև իբրև Փոքր Հայքի արքա (Հարությունյան, 2003, էջ 131–152): Նշենք, որ մեզ են հասել նրա թողարկած բազմաթիվ դրամները (այդ թվում՝ գտնված Հայաստանից), որոնք կրում են հունարեն Β ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΘΡΑΔΑΤΟΥ ΕΥΠΑΤΟΡΟΣ – «արքայի Միևրդատի Եվպատորի»՝ մանրագրությունը և դրամի թողարկման թվականի հունաստան նշումը (Մուշեղյան, 1973, էջ 34):

Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորության դրամների մակագրությունների մասին ան՝ս ՀԺՊ (ակադ. հրատ.), հ. I, էջ 692–698 (բաժնի հեղինակ՝ Խ. Ա. Մուշեղյան); Bedoukian, 1978 (հատկապես էջ 42–43–ում); Մուշեղյան, 1973, էջ 78–81; Մուշեղյան, 1983, էջ 43–67; Պետրևիան, 1983; Nercessian, 1995, էջ 55–88; Nercessian, 2000, էջ 1–206; Nercessian, 2000 (a), էջ 43–108 և այլն:

⁹⁵⁶ Այս մանրագրությամբ ստացված եզակի դրամը վերագրվում է Արտաշես Ա-ին (Տոնասպետյան, 1971, էջ 135–143; Bedoukian, 1978, էջ 7–8; Մուշեղյան, 1983, էջ 69–70):

⁹⁵⁷ Մա Տիգրան Բ-ի աճաղ որդին է, որն ապստամբեց իր դեմ Ք.ա. 72 թ. և հասոնց դրամ: Նախնկում այն համարվում էր կեղծ կամ Շուրիի արքա Զարեհի (որը, սակայն, չի կրել «արքայից արքա» տիտղոսը) թողարկածը (Bedoukian, 1978, էջ 46; Պետրևիան, 1983, էջ 7; Մուշեղյան, 1983, էջ 69; Nercessian, 1995, էջ 54): Դրամի պատկանելության ճշգրտումը ան՝ս Համբարձումյան, 1998, էջ 18–20:

⁹⁵⁸ Արտալազդ Բ-ի դրամների մակագրություններում կրա անունը՝ դրամ անունայն հոլովով, հանդիպում է երկու տարբերակով՝ ΑΡΤΑΥΑΖΔΕΩ – ΑΡΤΑΥΑΖΔΟΥ, որոնցից ստառիկը դասական հունարենի (Ք.ա. VIII–IV դդ.) ձևն է և կազմվում է արքայի՝ այդ բնագավառում բարձրագույն թագին:

Տիգրան Գ (Ք.ա. 20–8 թթ.).

ΒΑΣΙΛΕΩΣ / ΜΕΓΑΛΟΥ // ΤΙΓΡΑΝΟΥ – «արքայի Մեծի Տիգրանի»

ΒΑΣΙΛΕΩΣ / ΜΕΓΑΛΟΥ // ΤΙΓΡΑΝΟΥ / ΦΙΛΟΠΑΤΟΡΟΣ /

ΚΑΙΦΙΛΕΛΛΗΝΟΣ – «արքայի Մեծի Տիգրանի՝ հայրասերի և հելլենասերի»

ΒΑΣΙΛΕΩΣ / ΜΕΓΑΛΟΥ // ΤΙΓΡΑΝΟΥ / ΘΕΟΥ – «արքայի Մեծի Տիգրանի՝
աստծո»

Տիգրան Դ և Էրատո (Ք.ա. 8–5 և 2–1 թթ.)³⁹⁹.

ΒΑΣΙΛΕΩΣ կամ ΒΑΣΙΛΕΩΣ / ΤΙΓΡΑΝΟΥ // ΜΕΓΑΛΟΥ – «արքայի Մեծի
Տիգրանի»

ΒΑΣΙΛΕΥΣ / ΒΑΣΙΛΕΩΝ / ΤΙΓΡΑΝΗΣ // ΕΡΑΤΩΣ / ΒΑΣΙΛΕΩΣ /
ΤΙΓΡΑΝΟΥ / ΑΔΕΛΦΗ – «արքայից արքայի Տիգրանի // Էրատո՝ քույրը արքայի
Տիգրանի»

ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΣ ΝΕΟΣ ΤΙΓΡΑΝΗΣ // ΕΡΑΤΩΣ / ΒΑΣΙΛΕΩΣ /
ΤΙΓΡΑΝΟΥ / ΑΔΕΛΦΗ – «արքայի Մեծի, նորի Տիգրանի // Էրատո՝ քույրը ար-
քայի Տիգրանի»

ΒΑΣΙΛΕΥΣ / ΜΕΓΑΣ / ΝΕΟΣ / ΤΙΓΡΑΝΗΣ // ΚΑΙΣΑΡ / ΘΕΟΣ / ΘΕΟΥ /
ΥΙΟΣ / ΣΕΒΑΚΤΟΣ – «արքայի Մեծի, նորի Տիգրանի // աստվածային Օգոս-
տոս կայսեր՝ աստծո որդու»

Արտավազդ Գ (Ք.ա. 5–2 թթ.).

ΒΑΣΙΛΕΩΣ / ΜΕΓΑΛΟΥ // ΑΡΤΑΥΑΖΔΟΥ – «արքայի Մեծի Արտավազդի»:

Հնարարաշխարհային շրջանում մասամբ շարունակվում են Արտաշեսյանների
դրամատիկության ավանդույթները, ինչի արդյունք կարելի է համարել հռոմե-
ական դրածո Արտավազդ Դ-ի (Ք.հ. 4–6 թթ.) և Օգոստոս կայսեր համատեղ
դրամները՝ նրանց պատկերներով ու ΒΑΣΙΛΕΩΣ / ΜΕΓΑΛΟΥ / ΑΡΤΑΥΑΖΔΟΥ
// ΘΕΟΥ / ΚΑΙΣΑΡΟΣ / ΕΥΕΡΓΕΤΟΥ («արքայի մեծի Արտավազդի // աստծո,
կայսեր, բարեգործի») մակագրությամբ, մեկ այլ հռոմեական դրածո Տիգրան
Ե-ի (Ք.հ. 6 թ., հրեից արքա Հերովդես Մեծի թոռը) դրամները՝ ΒΑΣΙΛΕΩΣ /
ΜΕΓΑΛΟΥ / ΤΙΓΡΑΝΟΥ («արքայի մեծի Տիգրանի») գրությամբ⁴⁰⁰։ Իրենց բնույ-
թով զգալիորեն տարբեր են Վտնոն Արշակունու դրամները, որը Պարթևստա-
նում զահագրվելուց հետո մի քանի տարի (11–16 թթ.) իշխել է Մեծ Հայքում:
Նրա դրամների մի մասը թողարկվել է Հայաստանում, հատկանաբար, հենց այդ

³⁹⁹ Դրամագիտական գրականության մեջ Տիգրանի և Էրատոյի անուններով հատված դրամների մի մասի
պատկերմանը վերաբերում է Տիգրան Դ-ին, վրայի՝ Տիգրան Ե-ին, սակայն սկզբնաղբյուրներում
պատկերման համատեղ կատարման մասին, ուստի
չկան հաղորդումներ, որոնք վկայեն Տիգրան Ե-ի և Էրատոյի համատեղ կատարման մասին, ուստի
Տիգրանի և Էրատոյի անուններով հատված բոլոր դրամների հույնական գրությունները ներկայացվում են
Տիգրանի և Էրատոյի անուններով (միմու. Մոսկով, 1999, էջ 33–35):

⁴⁰⁰ Տիգրան Դ-ի և Էրատոյի անունների մեջ (միմու. Մոսկով, 1999, էջ 33–35):

⁴⁰¹ ՀժԳ, 1971, էջ 813–814 (չամֆի նեյման)՝ Խ. Ա. Մուչևյան; Beldoukian, 1978, էջ 37–40, 43, 76–77:

տարիներին, ինչի վկայությունն է դրանց վրա Տիգրանակերտ անվան հապավում-կցագրի ասկայությունը՝ կազմված TTP հունական տառերով⁶⁶¹:

Նշվածներից բացի, հայոց թագավորների անուններ են հիշատակվում մի շարք հռոմեական դրամների վրա⁶⁶², որոնք կարևոր պատմական անցքերի վկայություններ լինելով հանդերձ՝ դուրս են տույն աշխատանքի խնդիրների շրջանակից:

Առանձնակի ուշադրության են արժանի Արտաշատ մայրաքաղաքի դրամները, որոնք II դարի վերջից հաստվել են ոչ թե հայոց արքայի կամ հռոմեական կայսեր անունից, այլ հենց մայրաքաղաքի (նման իրավունք նվաճել էին միջագային ասուտրի, մշակույթի և վարչական խիստ սակավաթիվ կենտրոններ): Հետաքրքրական է և այն հանգամանքը, որ այդ դրամների գրությունները հունարեն էին, թեպետ Հայաստանը վաղուց գտնվում էր հռոմեական ազդեցության ներքո, իսկ կայսերական դրամները լատինատառ էին: Սա կարող է վկայել նաև ներմուծված գրերի հարցում տեղական կայուն ավանդույթների գոյության մասին: Արտաշատյան դրամի մի երեսին պատկերված է աստվածամայր Անահիտը՝ մայրաքաղաքի հովանավորը, մյուսին՝ դափնեապսակ պարզած Հաղթանակի թևավոր դիցուհին: Նրա դիմաց նշված են I, թիվուների մոտ՝ ΖΞ տառերին նմանվող նշաններ, իսկ շրջագծով ΑΡΤΑΞΙΣΑΤΩΝ ΜΗΤΡΟΠΟΛΕΩΝ – «Արտաշատ մայրաքաղաքի» մակագրությունն է (նկ. 153)⁶⁶³:

* * *

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում հայկական դրամների թվագրումը ևս կատարվել է հունական այբուբենով, տառերի թվային արժեքների միջոցով: Ընդ որում, այսօր հայտնի դրամների գրություններում կարելի է ցույց տալ անվազն թվագրման երեք սկզբունք.

ա) ժամանակի հաշվարկը սելևկյան տոմարով, որի սկիզբը հաշվվում է Ք.ա. 312 թվից (Տիգրան Բ–ի՝ Դամասկոսում հաստված արծաթե դրամները կրում են AMZ=241, BMZ=242, ΓMZ=243 թվագրումները, որոնք համապատասխանում են Ք.ա. 71–69 թվականներին, երբ հայոց տիրակալն իշխում էր նաև Սելևկյանների տիրույթներին)⁶⁶⁴. հիշենք, որ սելևկյան օրացույցի ամիսներն արձանագրված են եղել Արձավիրում;

բ) տարիների նշումը փյունիկյան օրացույցի միջոցով, որի թվագրության սկիզբը Ք.ա. 111 թվականն էր (Տիգրան Բ–ի դրամների մի խումբ թվագրված է

⁶⁶¹ ՀԺԳ, 1971, էջ 821–822 (բամնի հեղինակ՝ Խ. Ա. Մուշեղյան):

⁶⁶² Դրանցից են, օրինակ, Չենոն–Արտաշեսի (18–34 թթ.) և Սոնեոսի թագադրությունների ափսոսելիքով քոչարկված լատինատառ գրությամբ դրամները (ՀԺԳ, 1971, էջ 816–817, 820–821 (բամնի հեղինակ՝ Խ. Ա. Մուշեղյան); Bedoukian, 1978, էջ 40–41, 77):

⁶⁶³ ՀԺԳ (սկզբ, կրտս.), Խ. Ա. 1, էջ 821–822 (բամնի հեղինակ՝ Խ. Ա. Մուշեղյան); Arakelian, 1976, էջ 87, աղ. CVII: Ընդունված այս թվագրումից գառ, կարծիքներ են հայտնվել, որ Արտաշատ մայրաքաղաքի դրամները հաստվել են ոչ թե Ք.հ. 183 թ., այլ Ք.ա. 80–ական կամ Ք.հ. 1–4 թթ. (Bakhtanov, 1987, էջ 195–207):

⁶⁶⁴ Մուշեղյան, 1983, էջ 50–51; Nercessian, 2000, էջ 24, 47; Nercessian, 2000 (a), էջ 100 և սղջ:

34-ից (ՃԱ) մինչև 39 (ԹԱ) թվականները, որոնք Ք.ա. 111-ից հաշվելով ստանում ենք Ք.ա. 77-72 թթ.)⁹⁵,

զ) արքայի թագավորության սկիզբը թվագրման հիմք ընդունելը (օրինակ՝ Արտավազդ Բ-ի դրամների S (6) և Z (7) տարեթվերը)⁹⁶;

Կա կարծիք, որ դրամների վրա որպես մենանշաններ հանդիպող հունական այբուբենի առաջին տասը տառերը դրամների թողարկման ամիսների նշումներն են, ինչի հետ ոչ բոլոր ուսումնասիրողներն են համաձայն⁹⁷:

Հայկական դրամների վրա առկա մենանշանները (նկ. 154) կարելի է բաժանել երեք խմբի.

ա) հունական այբուբենի տառեր (որոնց մի մասն, ինչպես նշվեց, ժամանակագրության նշումներ են),

բ) հունական տառերի հիմամբ ստեղծված կցագրեր (օրինակ՝ Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքների նշումը PTΞ և TTP հունական տառերով կազմված կցագրերով, տե՛ս նկ. 154, «բ» շարքի առաջին երկու նշանները), որոնց ոչ բոլորի իմաստ է մեկնաբանված,

գ) որևէ այբուբենի հետ չկապվող սխառեբանշաններ (նկ. 154 գ), որոնք մնում են չմեկնաբանված:

Բացի մինչ այսօր գտնված արձանագրություններից, մենք ունենք մի շարք մատենագրական տեղեկություններ նախամաշտոցյան Հայաստանում հունական գրի ու գրականության լայն տարածման մասին, որոնց անդրադարձանք համապատասխան բաժնում:

Ի մի բերելով նախամաշտոցյան Հայաստանից հայտնաբերված հունարեն արձանագրությունները՝ փորձենք սալ դրանց խմբային դասակարգումը.

1) արքայական արձանագրություններ՝ նվիրված աստվածների պաշտամունքին,

2) թագավորական նախնիներին ձոնված արձանագրություններ,

3) թագավորական իշխանության և արքայի անձի աստվածացմանը վերաբերող արձանագրություններ,

4) արքայական արձանագրություններ քաղաքների ու շինությունների (հատկապես՝ սրբավայրերի) հիմնադրման ու բարեկարգման մասին,

5) նոր օրենքներ ու կարգեր սահմանող արձանագրություններ,

6) արքայական նվիրատվական արձանագրություններ,

7) թագավորական դրամների մակագրություններ,

8) արքայական նամակագրության արձանագրումներ,

⁹⁵ Մուշեղյան, 1978, էջ 105-124; Nercessian, 2000 (a), էջ 101-102; Nercessian, 2000, էջ 25, 48-49 (և հղված գրականությունը):

⁹⁶ Bedoukian, 1978, էջ 26; Մուշեղյան, 1983, էջ 56:

⁹⁷ Մուշեղյան, 1983, էջ 46; Մուշեղյան, 1978, էջ 105-124; Nercessian, 2000 (a), էջ 102; Nercessian, 2000, էջ 25, 48-49:

- 9) հոգևոր-պաշտամունքային բնույթի քննազեր,
- 10) ժամանակագրական-օրացուցային արձանագրություններ,
- 11) ընծայագրեր,
- 12) բարոյա-խրատական բովանդակությամբ չափածո ստեղծագործության (ողբերգությամբ) հատվածներ,
- 13) պատմական բովանդակությամբ չափածո ստեղծագործության (ողբերգությամբ) հատվածներ,
- 14) տապանագրեր (այդ թվում՝ չափածո եղերերգեր),
- 15) մենանշաններ:

6. ԱՍՈՐԵՐՆԷԻ ԵՎ ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԱՇՏՈՑՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ասորերենը արևելաարամեական բարբառներից է, որը Ք.ա. II դարից վերածվում է գրական լեզվի: Ասորական սկզբնական գիրը («Նտորանգեղա» կամ «Նտորանգեղո») արամեական այբուբենի ճյուղավորումներից է, որով մեզ հասած վաղագույն արձանագրությունները թվագրվում են Ք.հ. I դարով: Ինչպես արամեական այբուբենը, այն բաղկացած է 22 բաղաձայնից (ձայնավորների կիրառությունը սկսվում է միայն VII դարից), որոնք ունենցել են նաև թվական արժեք: Տառանունները քիչ են տարբերվում արամեականներից (ալեֆ-ալաֆ, գիմել-գամալ, դալեթ-դալատ/դ, լամեթ-լամադ, մեմ-միմ և այլն): Գրության ուղղությունը եղել է աջից ձախ:

V դարում, կապված Հիսուս Քրիստոսի բնույթի հարցի հետ, ասորական եկեղեցին կիսվեց, որի հետևանքով առաջ եկան ասորական գրի երկու տարբերակներ՝ նեստորական (արևելյան) և յակոբյան (արևմտյան): Ասորերեն և ասորագիր գրականությունը, որն առավելապես քրիստոնեական է, ծաղկման հասավ III-VII դարերում⁶⁶:

Եղնիսան (ներկայիս Ուրֆան), որ Ք.ա. II դարից մինչև Ք.հ. III դարը առաջապահական բնակչությամբ Օսրոյենն թագավորության (որի արքաները կրում էին Աբգար («հզոր») պատվանունը) մայրաքաղաքն էր, սկսած I դարից դառնում է քրիստոնեության կարևորագույն համաշխարհային կենտրոններից մեկը, ասորական քրիստոնեության գլխավոր կենտրոնը: I-II դարերում ասորերեն են թարգմանվում մի շարք գրքեր (այդ թվում՝ Աստվածաշնչի, որի հին ասորական թարգմանությունը հայտնի է «Պեշիտտա» անվամբ), ստեղծվում ինքնուրույն ստեղծագործություններ, գրի առնվում պարականոն և խրատաուսուցողական բնույթի ստեղծագործություններ: III-IV դարերում

⁶⁶ Ասորեների և ասորական գրի մասին տե՛ս Լուսկոմսա, 1955, էջ 155-157; Jensen, 1958, էջ 295-301; Brockelmann, 1962 (գիրք՝ էջ 4-12, եզրոց գրականությունը՝ էջ 150-184, քննադրից մի քանիսն ասորերենով՝ հավելվածի էջ 3-145); Златовреп, 1963, էջ 336-346; Илперван, 1979, էջ 10-19; Daniels, 1996, էջ 499-504, 513-514 և վերջապահած գրականությունը՝ էջ 155-157:

ստեղծվում է հարուստ ատրական գրականություն, որի աչքի ընկնող գործիչներից էին հայազգի Բար-Ղայսանը (II–III դարեր, հոբրենացու մոտ՝ Բարդաճանը, որը Հայաստանում անհաջող քրիստոնեություն է քարոզել, ապա Արամազդի պաշտամունքի գլխավոր կենտրոն Անիում ասորերենի և հունարենի է թարգմանել հայոց մեհենական պատմությունը), Եփրեմ Ասորին (IV դ.) և ուրիշներ:

Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո արգելվեց հայկական մեհենազրությունը, որից հետո Տրդատ Գ–ի հրամանով Մեծ Հայքի պետական գրագրության, հոգևոր քարոզչության և ուսուցման երկու լեզուները դարձան հունարենն ու ասորերենն՝ իրենց զրային համակարգերով: Այս ժամանակաշրջանում ասորերենը լայն տարածում է տեսնում Հայաստանում, ինչի մասին են վկայում թե՛ հայ մատենագիրները⁶⁶⁹, թե՛ հայ-ասորական պատմա-մշակութային և գրական հարաբերությունների ուսումնասիրությունը⁶⁷⁰, թե՛ ասորերենից հայերենին անցած բառապաշարը⁶⁷¹: Եղեսիան դառնում է նաև հայերի կարևորագույն կրթօջախներից մեկը:

Մեզ հասած վաղագույն ասորերեն և ասորագիր բնագրերը գտնվել են Եղեսիայից ու նրա շրջակայքից (Արգարների հարստության արքա Մանուի ընտանիքի անդամներից մեկի շիրմաքարը՝ արձանագրված 73 թ., արքայի դստեր պատվին կանգնեցված քարակոթողը, մոտավորապես նույն ժամանակներով թվագրվող Ամաշ–Շամշա թագուհու՝ նույն դինաստիայի տիրակալ Շարդուի կնոջ շիրմաքարը, 243 թ. թվագրվող մագաղաթագիր առևտրական պայմանագիրը) և Մամոսատից (Մար Բար–Մերապիոնի նամակը, որն ասորական նախաքրիստոնեական գրականության կարևոր հուշարձան է)⁶⁷²:

Չնայած մատենագրական տեղեկությունների առատությանը, պետք է նշել, որ ցայսօր նախամաշտոցյան շրջանի ասորերեն և ասորագիր բնագրեր են հայտնաբերվել միայն Հայկական լեռնաշխարհի հարավ–արևմտյան ծայրամասերից և հարակից տարածքներից (Մամոսատ, Եղեսիա և շրջակայք), որոնք տվյալ բնագրերի ստեղծման ժամանակաշրջաններում չեն կազմել հայկական որևէ պետության մաս:

7. ՊՐՄԱԿԵՐԵՆԻ ԵՎ ՊՐՄԱԿԱԿԱՆ ԳՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՍԻՄԱՏՈՑՈՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պարսկերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական խմբի հարավ–արևմտյան ճյուղին: Այն անցել է զարգացման երեք շրջաններ, որոնցից յուրաքանչյուրում ունեցել է տարրեր զրային համակարգեր.

⁶⁶⁹ Տե՛ս այս աշխատանքի ստաբիլ գլխում:

⁶⁷⁰ Մեյրոնյան, 1970, էջ 72–197:

⁶⁷¹ Չանուկյան, 1987, էջ 474–485:

⁶⁷² Дорноев, 1963, էջ 336–337; Мелорезов, 1979, էջ 10–11 (և էջ 155–157-ում հղված գրականությունը):

ա) հին պարսկերեն (Ք.ա. VI-IV դդ.), որը գրի է առնվել արեմենյան կամ հին պարսկական սեպագրով⁹⁷³,

բ) միջին պարսկերեն կամ պահլավերեն (Ք.ա. IV - Ք.հ. X դարեր), որի համար հարմարացվել էր պարսկական այբուբենը (պահլավական գիրը)⁹⁷⁴,

գ) նոր պարսկերեն (X դարից), որով ստեղծված գրականությունն արաբատառ է:

Թեպետ հնարավոր է ենթադրել, որ Արեմենյան աշխարհակառույցյան ժամանակաշրջանում Հայաստանում կարող էր գործածվել արեմենյան կամ հին պարսկական սեպագիրը (հատկապես պետական գրագրության ասպարեզում), սակայն մեր նախնիների կողմից այդ գրահամակարգի կիրառության մասին որևէ փաստ չունենք: Ոչ Արեմենյան Քսերքսես արքայի եռակգու արձանագրությունը⁹⁷⁵, ո՛չ էլ Դիոդորոս Սիկլիիացու վերոհիշյալ տեղեկությունը նման եզրահանգման հիմք չեն տալիս:

Հայաստանում միջին պարսկերենի կամ պահլավերենի և պահլավական գրի կիրառության մասին նյութական վկայություններ չունենք⁹⁷⁶: Հակառակ դրան, մատենագրական տեղեկությունները վկայում են IV-V դարերում, Մաշտոցի գյուտից առաջ պարսկերենի գործածության մասին, ինչը վերաբերում է Հայաստանի բաժանումից հետո ընկած ժամանակամիջոցին⁹⁷⁷:

Արամեական այբուբենի հիմքով է առաջացել նաև մանիքեական գիրը (III դարում), որի՝ Հայաստանում գործածվելու վերաբերյալ ո՛չ մատենագրական, ո՛չ էլ հնագիտական որևէ փաստարկ չունենք: Ուստի լիովին անհիմն է Հայաստանում մանիքեական գրի կիրառման մասին տեսակետը⁹⁷⁸, առավել ևս, այն որպես «Դանիելյան» գրեր ներկայացնելն ու դրանցից մաշտոցյան որոշ տառաձևեր մակարերելը:

* * *

Ի մի բերելով այս գլխում շարադրված ողջ նյութը՝ տեսնում ենք, որ նախամաշտոցյան Հայաստանում շուրջ երկու հազար տարվա ընթացքում (Ք.ա. XV դարից մինչև Ք.հ. V դարը) ներմուծվել և տեղական մեհենագրության կողքին

⁹⁷³ Հանգամանքն տն'ս Kent, 1950; Օրասքում, 1960, էջ 95-135, 406-408; նաև Լուևկուկա, 1955, էջ 54-57; Յենսեն, 1958, էջ 95-106; Dieringer, 1962, էջ 111-112; Դեթաուեր, 1963, էջ 223-227; Փրաքս, 1979, էջ 123-126; Testen, 1996, էջ 134-137 (և երկամ զանախությունը):

⁹⁷⁴ Յենսեն, 1958, էջ 405-411; Օրասքում, 1960, էջ 154-211, 412-416; Skjerve, 1996, էջ 515-535 (և երկամ զանախությունը):

⁹⁷⁵ Տն'ս հայերգ գիտում:

⁹⁷⁶ Հայաստանի հեն կազմի նախամաշտոցյան շրջանի միակ պարսկագիր ստորկան պարթևական մի կնիք է, որը ժամանակին երևանից ուղարկվել է Էրմիտաժ (ուր պահվում է մինչ օրս), սակայն հայտնի չէ, թե որտեղից է գտնվել այն (Մուսաու, Կրաչաու, 1988, էջ 61-81):

⁹⁷⁷ Մինչև 360-ական թվականները Հայաստանում պարսկերենի կիրառության մասին ո՛չ հնագիտական, ո՛չ վճարահանգրվան որևէ վկայություն չկա: Մտնեն Խորենացու տեղեկությունն այդ ժամանակաշրջանում Արտաշատ Արծրունու կողմից իտալական սպորտյան արվեստի և պարսկերենի պարսադրման մասին (վերջ 9, գ. 12) մղում է մտածելու, որ պարսկերենը Հայաստանում գործածվել է 387 թ. բաժանումից հետո, այն էլ միայն արևելյան հատվածում, ուր հաստատվեց պարսկական գերիշխանությունը:

⁹⁷⁸ Russel, 1994, էջ 320-333:

գործածվել են յոթ օտար լեզուներ՝ իրենց գրային համակարգերով: Սա ավելի քան խոսուն վկայությունն է մեր նախնիների՝ գրի ու գրականության նկատմամբ տաճած հարգանքի ու սիրո (որի պերճախոս ապացույցն է դպրության երկու աստվածների պաշտամունքը), ինչպես նաև մաշտոցյան դպրության սկզբնավորման ժամանակ զարգացած գրային մտածողության ասկայության քայքայություններից մեկը:

ՕՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԹՈՂՎԱԾ ԳՐԱՎՈՐ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհում Ք.ա. III հազարամյակից սկսած հանդիպում են օտար գրերով և լեզուներով գրառված զանազան խրեր և հուշարձաններ, որոնց հեղինակները տեղացիները չեն⁹⁷⁹։ Մրանք, հասկանալիորեն, չեն կազմում հայաստանյան դպրության բաղկացուցիչ մասը, սակայն նախամաշտոցյան Հայաստանում առկա գրային հուշարձանների որչափ թափաքանությունը ներկայացնելու նպատակով այս աշխատանքում ներկայացնում ենք դրանք՝ առանց մանրամասների և արժևորման։ Ստորև կներկայացնենք ինչպես եզակի օրինակներով հանդիպող բնագրերը, այնպես էլ մինևույն գրերով և լեզուներով կանգնեցված արձանագրությունների խմբերը։

Տեղեկություններ Մեծ Մասիսի լանջին ստեղծ պատկերագիր, շումերական և հին բաբելոնյան սեպագիր արձանագրությունների մասին։ 1915 թ. ռազմական գործողությունների ընթացքում ռուս զինպատ Ալեքսանդր Կոռը Մեծ Մասիսի լանջի ժայռերից մնկի վրա (Փոքր Մասիսի կողմում) տեսել և արտագրել է փորագրված պատկերագիր (սիկտոգրաֆիկ), շումերական և հինբաբելոնյան սեպագիր արձանագրություններ։ Ա. Կոռն Առաջին աշխարհամարտից առաջ ստացել էր նաև լեզվաբանական պատրաստություն և քաջամտությամբ էր հնագույն միջազգային քաղաքակրթություններին։ Պատերազմից հետո, հալածվելով բոլշևիկների կողմից, նա ի վերջո հանգրվանում է ԱՄՆ-ում։ Իր գրառումները՝ մեկնաբանություններով ու թարգմանություններով, նա հանձնում է «Աստվածաշնչական ուսումնասիրությունների ըլուրդի» տնօրեն Ֆ. Վ. Քիննամանին, որն էլ հրատարակում է դրանք 1946 թվականին իր խմբագրած «Bible Archaeological Digest» հանդեսում⁹⁸⁰։

Հրապարակման մեջ, դժբախտաբար, չի բերվում արձանագրություններից որևէ մեկի լուսանկարը կամ գծանկարը։ Ֆ. Վ. Քիննամանի տպավորությամբ՝

⁹⁷⁹ Դրանց տարածման աշխարհագրությունը տե՛ս բարեկ 5-ում։ Այս գլխում ներկայացվեցր կոթերին հիմնականում անդրադարձել ենք մեր աշխատանքներից մեկում՝ Մոնիթյան, 2003 (ա), էջ 171-199։

⁹⁸⁰ Kinross, 1946, էջ 46-49։ Ընդամալագրությամբ կշեմը, այ տեղեկությունը մեր ուշադրության է հրավիրել կուրդիկ խաչադրանց, իսկ եզլիլ եղվածը (որը չկար Հայաստանի գրադարաններում) մեր ինդեքսերով կյու-Շարքի հանրային գրադարանից պատճենել և մեզ է ուղարկել սփյուռքահայ հայագետ Կարոյան Մատթեոսյանը։

ցություններ անել, քանի որ նման նշաններ առկա են նաև Հայաստանի ժայռապատկերներում...

Նարամ-Մուենի կտորը Դիարբեքրի շրջանում: Օտարների կողմից Հայկական լեռնաշխարհում թողած հնագույն հստակ թվագրվող ու թարգմանվող արձանագրությունը վերաբերում է Հայաստանի Ք.ա. XXIII դարի պատմության կարևոր մի իրադարձության՝ Աքադի տիրակալ Նարամ-Մուենի (Նարամ-Մինի) դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքներից մեկին: Միջագետքից և Փոքր Ասիայից հայտնաբերված մի շարք քնագրեր վկայում են Արման(ի)ում երկրի դեմ նրա ձեռնարկած պատերազմի մասին⁹⁸⁶, և Նարամ-Մուենի արձանագրությամբ Դիարբեքրի մոտակա Փիր Հունսին հնավայրից գտնված ու Ստամբուլի Հին Արևելքի թանգարան տեղափոխված քարակոթողը (նկ. 157), միանգամայն իրավացիորեն, համարվում է վերջինիս իրեն ձև ապացույցը: Արձանագրության ոչ լիովին պահպանված չորս սյունակներում ընթերցվում է.

I, 1-2) Նարամ-Մուենը, հզորը ...

(Վնասվածք)

II, 1-6) Էնլի (Հայա, Էա) աստվածը [նրան չո]լեց մրցակից (աշխարհի) չորս կողմերում:

(Վնասվածք)

II, 1' - III, 4) Նա բնա[աջնջեց ...] և բարձրացրեց գերեզմանակոյտ:

III, 5-12) Ով այս արձանագրությունը ջնջնի, թո՛ղ Ինաննա դիցուիին [և ... ու ... աստվածները]

(Վնասվածք)

III, 1' - IV, 4) պատառոտի [նրա հիմքերը] և ոչնչացնի նրա սերունդը:

IV, 5-8) [Թո՛ղ նրանք չպարզ]անեն [նրան] ար[ու] (ժառանգ) կամ սերունդ:

IV, 9-11) [Թո՛ղ նա չքայի իր աստծո առաջ]:

(Վնասվածք) ...⁹⁸⁷:

Հնագույն խուռիերեն արձանագրություններ Ուրբեշից: Մինչ օրս հայտնի հնագույն խուռիերեն արձանագրությունը՝ գրված արադական սե-

⁹⁸⁶ Արման(ի)ում երկրի ճշգրիտ՝ նայաստանյան տեղադրության առաջին հիմնավորումների տե՛ս Գալանֆիեան, 1929, էջ 287-288; Rigg, 1937, էջ 416-418: Այդ ուղղությամբ կատարված հետագա աշխատանքների մասին (գրականության հիմամբ) տե՛ս Մովսիսյան, 1993, էջ 113-128, Մատթեան, 1994, էջ 255-268; Մովսիսյան, 2005 (ա), էջ 32-43, 48-55:

⁹⁸⁷ Barton, 1929, էջ 140-141 (քննադի աստղին իրազարգացումների եղանակը); կտորից գտնվող հանգամանքների և քննադարձական մանրամասնոր տե՛ս Naab, Ungor, 1934, էջ 5-48, աղ. 1-IV: Արձանագրությունն ունենել է բազմաթիվ վերամշտասարկումներ՝ Գալուքեան, 1973, էջ 17; Մատթեան, 1994, էջ 256; RIM-SGP, էջ 128-129; Մովսիսյան, 2005 (ա), էջ 155-156; ՎՊԳԲ, 2007, էջ 58-59 և սղն:

պագրով (կանգնեցված Ք.ա. XXIII–XXI դարերի միջև) կապվում է Ուրբիշ քաղաքի հետ (Հայոց Միջագետքում), որը գտնվել է Մասիուս/Մասիոն լեռների հարավային լանջերին, ներկայիս թուրք-սիրիական սահմանի մոտ, Մարդին քաղաքից հարավ (Մոզան հնավայր): Այն վերաբերում է անդրաշխարհի Ներգալ աստծո պաշտամունքին նվիրված տաճարի կառուցմանը և, ինչպես համանման այլ արձանագրությունները, ավարտվում է կառույցը ոչնչացնողներին ուղղված, աստվածներից ակնկալվող անեծքի քանաձևով:

«Թիշարին»⁹⁸⁸ արքան է Ուրբիշի: Տանալը Ներգալի (ևս) կառուցեց, տանարն սրդ Լուբադազան թո՛ղ պահպանի: Նա, ով այն իրոք ոչնչացնի, նրան Լուբադազան թո՛ղ ոչնչացնի, Անը թո՛ղ չսի աղոթքը նրա, ով այն իրոք ոչնչացնի, նրան թո՛ղ ⁹⁸⁹NIN.NA.GAR» Ծիմիզե և Թեշուր աստվածները անթիվ–անհամար անգամ նզովին»⁹⁸⁹:

Արձանագրությունը Հայաստանի պատմության ուսումնասիրության տեսանկյունից ունի կրկնակի կարևորություն: Նախ, այն կարևոր վկայագիր է Ք.ա. III հազարամյակի վերջին դարերում մեր երկրի հարավ–արևմտյան շրջանների հոգևոր–պաշտամունքային իրավիճակի մասին, ապա, ըստ Ի. Մ. Դյակոնովի, «այս արձանագրության լեզուն նույնքան մոտ է ուրարտերենին, որքան խուռիերենին, և, ըստ էության, կարող է դիտարկվել ոչ միայն որպես հին խուռիերեն, այլ նաև՝ հին ուրարտերեն»⁹⁹⁰:

Վերջին տարիների ընթացքում հայտնաբերվեցին արձանագրության երեք կրկնօրինակներ (երկուսը ներկայումս պահվում են Լուվրում, մեկը՝ Նյու–Յորքի Մետրոպոլիտան թանգարանում)⁹⁹¹:

Նույն հնավայրի պեղումներից գտնվել են նաև կնիքներ՝ մեկ այլ արքայի մակագրությամբ. *«Թույիքիշ՝ արքա Ուրբիշի»⁹⁹²*:

Վերոհիշյալ արձանագրությունները ցայսօր հայտնի հնագույն խուռիական քնագրերն են:

Հին ասուրերեն գրությամբ թուրք Դիարբեքիից: Դիարբեքիի շրջանից գտնվել և ներկայումս Եվրոպայի մասնավոր հավաքածուներից մեկում պահվում է 1,09 մետր երկարությամբ բրոնզե թուր, որի կենտրոնում առկա է Ք.ա. XIX–XVIII դդ. թվագրվող հին ասուրերեն սեպագիր արձանագրություն (նկ. 158). «ժուրշալումի»⁹⁹³ տիտղակային. նրա տեր Լուլուանումը՝ որդին Ազի-

⁹⁸⁸ Մեռնը նախապես ընթերցվում էր Թիշարի, վերջինս վերանայվեց և աստվել ընդունեցի համարվեց «Թիշարսար» տարբերակը (Wilhelm, 1998, էջ 120–121):

⁹⁸⁹ Diakonov, 1967, էջ 443–445; Diakonoff, 1971, էջ 110; Wilhelm, 1982, էջ 15–16; Wilhelm, 1998, էջ 119–120; Մովսիսյան, 2005 (ա), էջ 89–91; ՀԺԳԺ, 2007, էջ 66–67:

⁹⁹⁰ Diakonov, 1967, էջ 444:

⁹⁹¹ Ivanov, 2002, էջ 92 (և ծան. 1–ում նրված գրականությունը):

⁹⁹² Ivanov, 2002, էջ 92 (և նրված գրականությունը):

⁹⁹³ Հնագավոր է երկրամասն «խուրիշալումի» ընթերցումը: Ըստ հրատարակիչ՝ Խուրիշալումի տիտղակը (կամ Քեղը) պետք է նույնօրվա՝ Ալուրբանասարից գրադարանից հայտնի Ներգալ–Խուրիշալի հետ, որը համարվել է անդրաշխարհի աստվածություն (Güterbock, 1965, էջ 197–198):

գումի, իր կյանքի և իր որդու կյանքի համար 12 մինա (քաշով)⁹⁹⁴ թուր նվիրեց (քերեց)»⁹⁹⁵:

Սեպագիր արձանագրությամբ այս բրոնզե թուրը, որն իր ժամանակաշրջանի հազվագյուտ գտածո է Հայկական լեռնաշխարհից, կարող է լույս ախոռել մեր երկրի (հատկապես հարավ-արևմտյան շրջանների) Ք.ա. XIX–XVIII դարերի պատմության որոշ անհայտ հարցերի վրա⁹⁹⁶:

Սեպագիր արձանագրությամբ հին բարեկույս կնիքներ: Հրատարակելով 1981 թ. Մեծամորի պեղումներից հայտնաբերված եգիպտական հիերոգլիֆներով սարդիոնե գլանաձև կնիքի արձանագրությունը՝ Բ. Բ. Պիտոբովսկին գիտական շրջանառության մեջ մտցրեց Նախիջևանի շրջանից գտնված հին բարեկույս մի կնիք (Ք.ա. XVIII–XVII դդ.), որի լուսանկարը նրան է տրամադրել հայտնի հնագետ Ա. Ա. Իսսանը (նկ. 159): Կնիքին պատկերված է աստվածությանը ուլ գոհարերով մարդ, որի կողքին առկա է խիստ վնասված սեպագիր արձանագրություն⁹⁹⁷:

Սեպագիր արձանագրությամբ մեկ այլ կնիք է վերջերս գտնվել Հայաստանի Հանրապետության տարածքից, որը դատելով բավականին լավ պահպանված նշաններից՝ պետք է թվագրել հին բարեկույս ժամանակաշրջանով (ըստ հնագետ Ֆ. Տեր-Մարտիրոսովի բանավոր հաղորդման):

Մեծամորից գտնված գորտ-կշռաքարը: Ք.ա. II հազարամյակի առաջին կեսով թվագրվող հնագիտական իրերի մեջ առանձնապես հիշատակելի է Մեծամորից գտնված գորտ-կշռաքարը (լուսանկարը և գրության գրչանկարը՝ նկ. 160), որը կրում է Բարելոնի քասիթական (քասեցիական) արքաների անունները: Այն պատրաստված է եղել ագաթից և սեպագրերով կրել է համառոտ արձանագրություն. «1 սիկդ. Ուլամ–Բուրիաշի՝ որդու Բուռնա–Բուրիաշի»⁹⁹⁸:

Քասիթական դինատիան Բարելոնում իշխել է Ք.ա. XVI–XII դարերում: Մինչ այդ՝ Ք.ա. XVIII դարում Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններից քասիթները արշավանք էին ձեռնարկել դեպի Բարելոն. մի շարք փաստեր ցույց են տալիս, որ քասիթների բնօրրանը եղել է Հայկական լեռնաշ-

⁹⁹⁴ 12 մինան նախապես է 6 կիլոգրամի. դարերի ընթացքում քայքայման ենթարկվելով այն ներդառում էր լուծում է մոտ 5 կիլոգրամ (Güterbock, 1965, էջ 197):

⁹⁹⁵ Güterbock, 1965, էջ 197–198, աղ. XIII–XV:

⁹⁹⁶ Մասնագիտագետ, ուշագրավ տվյալներ կարելի է ստանալ հատուկ անունների վերլուծությունից: Խոշորագույնում կամ Խոտրեշագույնում երկրանունը, ինչպես նշում է Խոտրաբակիցը (Güterbock, 1965, էջ 197), իր կազմությանը ակնհայտորեն հիշեցնում է Ապիշագույնում երկրանունը, իսկ վերջինս գտնվում է Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջաններում (Ապիշագի մասին տեղեկությունները՝ գրավառության հրումներով, տե՛ս Geld, 1938, էջ 70–72): Ի վերջո, եթե հնարավոր լինի ցույց տալ, որ Լուրանունով տեղանուն է, արևմտագրված թուրք կարելի է դասել Հայաստանի բնիկների կողմից օտար լեզուներով ու գրերով թողած բնագրերի շարք:

⁹⁹⁷ Хитован, Плотровский, 1984, էջ 65; Фельдман, 1998, էջ 54, աղ. 50–1:

⁹⁹⁸ Хитован, Сафросов, Дьяченко, 1983, էջ 113–122:

խարհի հարավը (կամ հարավ-արևմուտքը), որտեղից էլ ծավալվել է նրանց տիրապետությունը⁹⁹⁹: Թերևս դրանով են պայմանավորված Հայկական լեռնաշխարհի և քասիթական Բարեկոնի ջերմ հարաբերությունները Ք.ա. XVI–XIII դարերում, որի առանձին դրսևորումներ գտնում ենք հնագիտական հուշարձաններում¹⁰⁰⁰...

Եգիպտական հիերոգլիֆներով իրերը: Հայաստանից գտնված օտարագիր առարկաների մեջ հետաքրքիր խումբ են կազմում եգիպտական մեհենագրերով իրերը: Մինչ օրս Հայաստանից հայտնաբերվել են եգիպտական հիերոգլիֆներ կրող հինգ կնիքներ և երկու ուլունքահատիկներ:

Դրանցից հնագույնը 1981 թ. Մեծամորի պեղումներից հայտնաբերված եգիպտական հիերոգլիֆ արձանագրությամբ սարդիոն գլանաձև կնիքն է: Այն կրում էր Ք.ա. XV դարում իշխած Բարեկոնի քասիթական հարստության տիրակալ Կուրիզազու Ա–ի անունը: Բարեկոնը քասիթական ժամանակաշրջանում կրում էր նաև «Մեծ Սանգար» անունը, որն էլ առկա է կնիքի գրության մեջ. «Կուրիզազու՝ Մեծ Սանգար երկրի առաջնորդ»¹⁰⁰¹:

Մյուս չորս կնիքները (գտնված Վանից, Անիից, Արմավիրից և Լոռի բերդից) բզեզատեսք են: Վանից և Արմավիրից հայտնաբերված բզեզատեսք կնիքները կրում են եգիպտոսի XVIII հարստության փարավոն Թութմոս Գ–ի (Ք.ա. XVI–XV դդ.) գահանունը՝ «Մենհեպերրա»: Այդ գահանունով կնիքները, որ, թերևս, ունեցել են խորհրդանշական ինչ–որ իմաստ, լայն տարածում են գտել և գործածվել մինչև XXV և XXVI դիմաստիաների իշխանության ժամանակաշրջանը (Ք.ա. VIII–VI դդ.)¹⁰⁰²: Ե՛վ բզեզատեսք երեք կնիքները (նկ. 161, բազմալուսնի Լոռի բերդից հայտնաբերվածից), և՛ երկու ուլունքահատիկները (գտնված Կարմիր բլուրից), ըստ Բ. Բ. Պիտոբովսկու, պետք է թվագրել Վանի թագավորության ժամանակաշրջանով¹⁰⁰³: Լոռի բերդից հայտնաբերված երեք բզեզատեսք կնիքներից մեկն, ըստ Ս. Հ. Դևեջյանի հաղորդման, կրում է եգիպտական հիերոգլիֆ մեկ նշան (սակայն չի նշվում, թե ինչ հիերոգլիֆ է դա)¹⁰⁰⁴:

Մտրեստանի արքաների՝ Հայաստանից գտնված արձանագրությունները: Օտարների կողմից նախամաշտոցյան Հայաստանում թողնված քնագրերի շարքում նշանակալի տեղ են գրավում Մտրեստանի արքաների գրավոր հուշարձանները, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են Հայկական լեռնաշխարհի Ք.ա. II հազարամյակի երկրորդ և I հազարամյակի առաջին կեսերի պատմության վերաբերյալ:

⁹⁹⁹ Այդ մասին մեր նախնական դիտարկումները տե՛ս Մովսիսյան, 1995: Մովսիսյան, 2008, էջ 17–23:

¹⁰⁰⁰ Հմմտ. Փիքիպոսյան, 1998, էջ 101–102:

¹⁰⁰¹ Ավերջը հայտնաբերել է Է. Վ. Խանգալյանը, արձանագրությունը Օ. Դ. Քերկի օգնությամբ ընթերցել է Բ. Բ. Պիտոբովսկին (Хангалян, Питобовский, 1984, էջ 59–65: Փիքիպոսյան, 1998, էջ 54–56, տպ. 50–2):

¹⁰⁰² Питобовский, 1958, էջ 20–22:

¹⁰⁰³ Питобовский, 1958, էջ 20–22: КВ–1, էջ 84: КВ–3, էջ 54:

¹⁰⁰⁴ Դևեջյան, 1998, էջ 3:

Խոջալուի դամբարաններից մեկում գտնված ազաթն մի ուլունքահատիկ կրում է ատուրերեն արձանագրություն՝ «Պալատ Աղադ-Ներարիի՝ տիեզերքի սորբայի» (նկ. 162): Ատրեստանն ունեցել է Աղադ-Ներարի անունով մի քանի արքաներ: Խոջալուի տվյալ դամբարանից գտնված նյութերը թվագրվում են Ք.ա. I հազարամյակի սկզբով, սակայն սեպագիր արձանագրության հնագրական առանձնահատկությունները ցույց են տալիս, որ այն Ք.ա. XIII դարի գործ է, ուստի պետք է վերագրել այդ դարում իշխած Աղադ-Ներարի Ա արքային: Թն երբ և ինչպես է այն հասել Արցախ, հայտնի չէ. դամբարանը, համնանայն դեպս, թվագրվում է Ք.ա. I հազարամյակի սկզբով¹⁰⁰⁵:

Թիզլաթպալասար Ա-ի (Ք.ա. 1115-1077 թթ.) Ատրեստանի տարածքից գտնված արձանագրությունները բազմիցս հիշատակում են նրա արշավանքները դեպի Հայկական լեռնաշխարհ¹⁰⁰⁶: Դրանց մասին վկայություններ են պահպանվել նաև տեղում «Տիզրիսի թունելի»¹⁰⁰⁷ և Մանազկերտի շրջաններում: «Տիզրիսի թունելի» արձանագրությունը հետևյալն է.

«Աշուրի, Շանաշի և Աղադի՝ մեծ աստվածների, իմ տիրակալների օգնությամբ ես՝ Թուկուլթիսապալ-Էշարրա արքան Ատրեստանի, որդին Ատրեստանի արքա Աշուրինշիի՝ որդու Մուրասիդի-Նուարուի՝ արքայի Ատրեստանի, նվաճողն Արևմտսորի Մեծ ծովից և ծովից Նաիրիի, երրորդ անգամ արշավեցի դեպի Նաիրի»¹⁰⁰⁸:

Մանազկերտի մերձակայքում (Յունջալու) գտնվող արձանագրությունը ևս վերաբերում է նրա հյուսիսային արշավանքին. «Թուկուլթիսապալ-Էշարրա՝ արքա հզոր, արքա տիեզերքի, արքա Ատրեստանի, արքա աշխարհի յոթս կողմերի, նվաճողը Նաիրիի երկրների՝ Թունմիից մինչև Դայանի, նվաճողը Խարխի երկրի՝ մինչև Աերին ծովը»¹⁰⁰⁹:

¹⁰⁰⁵ Melikianov, Weidner, 1931-1932, էջ 266-268; Мелikianov, 1933, էջ 52-53; Kyriakova, 1970, էջ 114-115; АВЕИУ, № 36: Ատրեստանի արքաներից ոչ մեկի արշավանքները չեն հասել Արցախի տարածք, հենակարգ գտնիք առարկան այնտեղ պետք է հայտնված քննի այլ ուղիով:

¹⁰⁰⁶ Թիզրիսարասար Ա-ի դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքների մասին տե՛ս Ադոնց, 1972, էջ 54-66; Плотников, 1959, էջ 44-46; Аргутин, 1970, էջ 29-52:

¹⁰⁰⁷ Տիզրիսի վերջն հուսանի ձախալողոցյան փոսի Ատրեսող (նեղկայուն՝ Չերենետ) որոշակի մի տարածք հուսում է ժայռի ստորին մասով, որի՝ ժայռից արտահոսող փայր՝ «Տիզրիսի թունել», սիջազերքի հեռանկները համարում էին Տիզրիս արքան գետի ակունք, ուստի այնտեղ հասնելը միջազերքյան եկամտների համար պաշտամունքային կախակցության ունեցող մեծագործություն էր: «Տիզրիսի թունել» եղի ժայռի փորագրված են ատրեստանյան արքաներ Թիզրիսարասար Ա-ի և Սալմանասար Գ-ի ինչև արձանագրությունները (երկուսի գծանկարները՝ նկ. 163): Դրանցից երկու փոս պահպանվածները սկզբնապես վերագրվել են Թուկուլթի-Աշուրրա Բ-ին և Աշուրնափրատալ Բ-ին, սակայն հետագայում ճշգրտվել է դրանց ենթինակի ինքնությունը (Schraeder, 1885, էջ 3-31; Մանուգենան, 1901, էջ 106-108, 131, 151-152; ճշգրտումը՝ Lehmann-Haupt, 1907, էջ 16-18, 31-44; Lehmann-Haupt, 1910, էջ 430-462 (իզոված պաշտամունքներում Սալմանասար Գ-ն (Թունմանի) գլխադրյալ տվյալների համաձայն) համարվում է Սալմանասար Բ): АВЕИУ, №№ 16, 32, 33):

¹⁰⁰⁸ Schraeder, 1885, էջ 7-8, 27; Մանուգենան, 1901, էջ 106-107; Lehmann-Haupt, 1907, էջ 16-18; АВЕИУ, № 16:

¹⁰⁰⁹ Մանուգենան, 1901, էջ 106 (Մանազկերտի մտատկայքում արձանագրության գտնվելու վայրն սրտով կոչվում է «Կունանու», այլ տեղերում՝ Յունջալու): Lehmann-Haupt, 1907, էջ 15-16; Ադոնց, 1972, էջ 59-60; АВЕИУ, № 17:

Հայկական լեռնաշխարհում Մալմանասար Գ-ի ևս մեկ արձանագրություն է հայտնաբերվել Քենքից: Այն պատմում է ասորեստանյան արքայի՝ իր թագավորության երկրորդից չորրորդ տարիներին դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքների մասին՝ պարունակելով տվյալներ, որոնք հայտնի չեն նույն արքայի այլ արձանագրություններից¹⁰¹⁷:

Նախամաշտոցյան Հայաստանում հիշատակություն թողած ասորեստանյան վերջին արքան Ք.ա. 705–681 թթ. իշխած Սինախներին (Սեննքերիմն) է, որի արձանագրությունը գտնվում է Ջուդի լեռան¹⁰¹⁸ վրա: Այն վերաբերում է արքայի գահակալության հինգերորդ տարուն (Ք.ա. 701 թ.)¹⁰¹⁹: Հաղորդման համաձայն՝ Ասորեստանի արքան արշավում է Կուտմուխու (Կադմեա տուն) մարզի սահմանին գտնվող Թումուրբա, Շարիմ, Խալբուդա, Կիպաշա, Էգամա, Կուա և Կանա բնակավայրերը, որոնք «արժվարի նման տեղադրված են Նիբուր լեռան բարձունքներում» և հնում նրա նախնի արքաների օրոք, «ժողով էին ու հպարտ, չէին ճանաչում սարսափը տիրապետության»: Դժվարին արշավից հետո (որն, ըստ արձանագրության, ավարտվել է ասորեստանցիների հաղթանակով) արքայի զորքն ուղղություն է վերցնում դեպի հարևան Դայես երկրի Ուկկու բնակավայրը, գրավում այն շրջակա 33 այլ բնակավայրերի հետ միասին, հրդեհում, ավերածությունների և թալանի ենթարկում դրանք: Այնուհետև նշվում է արքայի կողմից տվյալ արձանագրությունը կանգնեցնելու մասին, որն ավարտվում է այն ոչնչացնողներին ուղղված անեծքի քանաձևով¹⁰²⁰:

Ասորեստանյան արձանագրություններ Մանայի թագավորության տարածքից¹⁰²¹: Այս խմբի յոթ արձանագրություններից վեցը հայտնաբերվել են Ուրմիո լճից հարավ–արևմուտք ընկած Հասանլու հնավայրից¹⁰²²: Դրանցից մեկը 1964 թ. գտնված քարե սկավառակաձև աման է (սկիի կամ սկուտեղ, տե՛ս նկ. 165), որը պարունակում է ասուրերեն գրված արձանագրություն: Վերջինիս տառադարձման ու թարգմանության հարցերում մասնագետների կարծիքները տարամիտվում են: Առաջարկվել են հետևյալ ընթերցումները.

¹⁰¹⁷ Քենք (ճենք Չոք կամ Քենք Փոչոզի) գտնվում է Եփրատի արևմտյան սփին, Այնթապից (Գազիանթեպից) շուրջ 60 կմ հյուսիս–արևելք: Արքայի պատկերն ու արձանագրությունը (նկ. 164) քանդակված են ժայռի վրա, գետի մակարդակից մոտ 50 մ բարձրության վրա (Tayyarek, 1979, էջ 47–53, աղ. XV–XVI, նկ. 1):

¹⁰¹⁸ Ջուդի լեռ գտնվում է Կողբոզայ լեռների շրջանում և սեպագրերում հայտնի է Նիբուր անվանը (տե՛ս Հնագիտական, 1992, էջ 125–131 և հղված գրականությունը): Որպես հին սպանդագրությունում, որտեղ տեղ են գտել նաև Դուրանում (11, 38–46), այն համարվում է բրեյտերից հետո փրկության խառ:

¹⁰¹⁹ Այդ մասին իմանում ենք Սինախներինի ժամանակագրությունից՝ քանդակված «ճեղքի վեցանիստ սրիզմայթ» վրա (ABHMY, № 57):

¹⁰²⁰ ABHMY, № 58.

¹⁰²¹ Այս ենթարձակի կուրթերի տրամադրման համար շեղմանկալություն ենք հայտնում պատմական գիտությունների դոկտոր Երվանդ Գրեկյանին:

¹⁰²² Dyson, 1968, էջ 49, նկ. 8–9:

«Քատրիի պալատը Իդի երկրի, Շանաշ-ուշիշի»¹⁰²³,

«Քատրիի՝ Իդի երկրի արքայի պալատը՝ ձոնված արևի աստված Ուշիշիին»¹⁰²⁴,

«Պալատը Քահուրիի, Ուշի-շիի լեռնային օթևանի»¹⁰²⁵;

«[Պատկանում է] Քատրիի՝ Իդի երկրի արքայի պալատին, ձոնված արևի աստծուն»¹⁰²⁶։

Արձանագրությունը, բոլոր դեպքերում, թվագրվում է միջին ասորեստանյան դարաշրջանի սկզբից մինչև Ք.ա. 800 թ. ընկած ժամանակահատվածով¹⁰²⁷։ Ուշագրավ է, որ Ք.ա. 855 թ. Սալմանասար Գ-ն Չամուա երկրի դեմ կատարված արշավանքի առնչությամբ հիշատակում է Իդի անունով երկիր և քաղաք¹⁰²⁸, որի առնչությունն այս արձանագրության հետ դժվար է որոշել։

Հաջորդ երկու արձանագրությունները պահպանվել են քարե սկահակի և քարե մականի կամ գուրգի վրա, որոնցից առաջինը պարունակում է Քասիթական Բարեկոնի թագավոր Կադաշմին-Էնլիլի (I-ի՝ Ք.ա. XIV դար, կամ II-ի՝ Ք.ա. XIII դարի առաջին կես) անունը, իսկ երկրորդում ասկա է «Աշուր-Ռազալիթի պալատը» արտահայտությունը¹⁰²⁹։ Խոսքն, ամենայն հավանականությամբ, վերաբերել է Ասորեստանի նույնանուն արքային, որը կատարել է Ք.ա. 1365/3–1330/1328 թվականներին։

Նույն հնավայրից հայտնաբերված իրերի մեկ այլ խմբում 15 քարե գայիտներից (կամ մականներից) երեքը արձանագրված են։ Առաջին երկուսը կրում են էլամական տիրակալ Թանրուխուրաթերի (իշխել է Ք.ա. 2036–1850 թթ. ընթացքում) անունը, երրորդի վրա պահպանվել է միայն անվան սկզբնամասը՝ Sin...¹⁰³⁰։

Մերձուրմյան ափագանից հայտնաբերված և ենթադրաբար Ասորեստանի Արրալի քաղաքից ծագող յոթերորդ արձանագրությունը փորագրված է բրոնզե արձանիկի վրա։ Տասներկու տողանոց արձանագրությունը բարեմաղթանք է՝ ձոնված Արրալի Իշտար աստվածուհուն՝ հանուն ասորեստանյան Աշուր-դան I (Ք.ա. XII դ.) արքայի. քնագրի հեղինակը Արրալի քաղաքի դպիր Շամ-շի-Քլևն է՝ Ներգալ-նադին-ախսեի որդին¹⁰³¹։

Ինչ վերաբերում է արձանագրված այս իրերի ծագմանը, ապա դրանք, ամենայն հավանականությամբ, ներմուծվել են դրսից, ինչը կարող է վկայել Էլամի, Ասորեստանի և Բաբելոնի հետ տարածաշրջանի ունեցած ակտիվ փոխհարաբերությունների մասին։

¹⁰²³ Medvedskaya, 1988, էջ 1։

¹⁰²⁴ Muscarella, 1971, էջ 263–266, աղ. 63։

¹⁰²⁵ Dyson, 1977, էջ 548–552։

¹⁰²⁶ Salvini, Pecorella, 1984, էջ 55։

¹⁰²⁷ Dyson, 1965, էջ 202; Dyson, Muscarella, 1989, էջ 1–26; Medvedskaya, 1988, էջ 12։

¹⁰²⁸ Grayson, 1996, էջ 65, 75, 104։

¹⁰²⁹ Dyson, Muscarella, 1989, էջ 23։

¹⁰³⁰ Medvedskaya, 2000, էջ 436։

¹⁰³¹ Grayson, 1987, էջ 308։

Արամյիցի գտնված սեպագիր երեք սալիկները: Օտարագիր արձանագրություններից են նաև 1980-ական թթ. սկզբին Արամյիցի գտնված սեպագիր սալիկների երեք քեկորները (նկ. 166): Դրանք կապե սալիկների մասեր էին, որոնցից ամենամեծը և լավ պահպանվածը երկու երեսին ուներ ընդամենը 28, երկրորդը՝ 16 (նույնպես երկու երեսին), իսկ երրորդի մի կողմում պահպանվել է 9 տող: Առաջինը Ի. Մ. Դյակոնովը և Ն. Բ. Յանկովսկայան վերծանեցին որպես «Գիլգամեշ» էպոսի թատերականացված մի հատված՝ գրված էամերեն լեզվով, փորձելով նույն համատեքստում դիտարկել մյուս երկու քեկորներից ընթերցված առանձին բառերը (ենթադրաբար, դրանք կարող էին պատկանել թատերախմբի անդամներին): Բնագրերը թվագրվեցին Ք.ա. VIII դարով, իսկ «Գիլգամեշ» էպոսի մի հատվածի սցենարի առկայությունը Արգիշտիիսինիյի-Արամյիում ենթադրաբար կապվեց էամա-ուրարտական հակաստրեստանյան դաշինքի հետ, որը կարող էր ամրապնդված լինել Սարգուրի Բ-ի (Ք.ա. 764-735 թթ.) և էլամի արքայադստեր ամուսնությամբ, ինչն էլ զուգահեյված լիներ արքայի գահակալման հանդեսին, որի ժամանակ էլ հնարավոր է, որ տեղի ունեցած լիներ էլամական թատերախմբի քեմականացումը¹⁰²²:

Կարճ ժամանակ անց նրանց վերծանությունը կասկածի ենթարկվեց, վերանայվեց, և առաջարկվեց արմավիդյան երեք բնագրերն ընթերցել էլամերեն, սակայն մեկնաբանել որպես տևտեսական քոլանդակության նամակների հատվածներ, որոնք պետք է թվագրվեն Ք.ա. VI դարի երկրորդ կամ V դարի առաջին կեսով¹⁰²³... Եթե վերջնականապես հաստատվի սալիկների էլամերեն ընթերցումը, նախամաշտոցյան Հայաստանում (Քսերքեսեսի արձանագրության էլամերեն բաժնի հետ միասին) կունենանք էլամերեն չորս արձանագրություն:

Քսերքեսեսի եռալեզու արձանագրությունը Վանում: Արեմնյան Դարեն Ա-ի որդի և հաջորդ Քսերքեսես արքան հայտնի դարձավ Ահուրամազդայի պաշտամունքին նվիրված կրոնական բարեփոխումով: Իր գործունեությանը նվիրված բազմաթիվ արձանագրություններից մեկը (նկ. 167) նա թողել է Վանի ժայռի հարավային կողմում (գետնից շուրջ 18 մ բարձրության վրա)՝ գրված երեք լեզուներով (պարսկերեն, բաբելոներեն և էլամերեն): Երեք բաժինների միջև լական տարբերություններ չկան. տարբերվում են հատուկ անունների գրությունները: Պարսկերեն, բաբելոներեն և էլամերեն բաժիններում, համապատասխանաբար, Ահուրամազդան կոչվում է Աուրամազդա, Ախուրամազդա, Օրամազդա, Քսերքեսեսը՝ Խշայարշա, Խիշի՝արշա, Իկսերիսաս, Դարենը՝ Դարայավաուշ, Դարի՝ամուշ, Դարիյավաուս¹⁰²⁴: Բերում ենք գլխավոր պարսկե-

¹⁰²² Дьяконов, Янковская, 1989, էջ 55-62; Diskonoff, Jankowska, 1990, էջ 102-123:

¹⁰²³ Koch, 1993, էջ 219-236; Vallat, 1997, p. 258-270:

¹⁰²⁴ Երեք լեզուներով բաժինների համեմատական հրատարակությունը՝ համագտակության երգմանքով տե՛ս Ստանայան, 1901, էջ 224-226 (ինդիանի մուտ էլամերեն բաժնից կոչվում է «մարսակ»):

րեն բաժնի թարգմանությունը (գիտության մեջ տարածված անվանաձևերով)¹⁰²⁵։

«Մեծ աստված է Ահուրամազդան՝ մեծագույնն աստվածներից, որ արաբեց այս աշխարհը, որ արարեց այն երկինքը, որ ստեղծեց մարդուն, որ մարդկանց համար հաճույքներ ստեղծեց, որ Քսերքեսին դարձրեց թագավոր՝ միակ թագավոր բոլորին, միակ հրամանատար բոլորին։

Ես Քսերքեսն եմ արքա մեծ, արքա արքաների, արքա բազում ժողովուրդների երկրների, արքա այս մեծ աշխարհի և որդին Դարեհ արքայի, Աքեմենյան։ Քսերքես արքան ասում է.— Դարեհ արքան, որն իմ հայրն էր, շնորհիվ Ահուրամազդայի բազում վայելչություններ կատարեց և այստեղ հրամայեց բանդակել, սակայն արձանագրություն գրել չովեց. սպա ես հրամայեցի այս արձանագրությունը գրել։

Թժ՛ո՛ղ Ահուրամազդան (մյուս) աստվածների հետ պաշտպանի ինձ և թագավորությունն իմ և ինչ հիմնել եմ ես¹⁰²⁶»։

Արձանագրությունը կարևոր վկայագիր է Հայաստանի Ք.ա. VI-V դարերի պատմության վերաբերյալ. այն անուղղակիորեն կարող է վկայել Ահուրամազդայի պաշտամունքին նվիրված կրոնական բարեփոխման ոլորտում նաև Հայաստանի ընդգրկվելու մասին։ Պատմական նշանակությունից գատ՝ ոչնեք, որ սա նախամաշտոցյան Հայաստանից հայտնաբերված միակ եռալեզու արձանագրությունն է։

Նախամաշտոցյան Հայաստանի լատիներեն արձանագրությունները:

Հայաստանի միջմաշտոցյան ժամանակաշրջանի գրավոր հուշարձանների շարքում կարևոր տեղ գրավող լատիներեն արձանագրությունները վերաբերում են հռոմեական բանակների՝ Հայաստան կատարած արշավանքներին և կանգնեցված են բացառապես օտարների կողմից։ Ուստի պետք է հրաժարվել հայագիտության մեջ տարածում գտած այն մտեցումից, ըստ որի՝ լատիական գիրը հունականի ու արամեականի կողքին համարվում է նախամաշտոցյան Հայաստանում կիրառված այբուբեններից մեկը։

Նախամաշտոցյան Հայաստանի լատիներեն արձանագրությունները կապվում են Հռոմեական կայսրության արևելյան քաղաքականության հետ և հայտնաբերվել են հայկական երեք թագավորությունների (Մեծ Հայք, Փոքր Հայք և Կոմմագենե) տարածքներից։

Մեծ Հայքի լատիներեն արձանագրությունները հայտնաբերվել են երեք՝ Վաղարշապատի (Էջմիածնի), Արտաշատի և Խարբերդի շրջաններից։ Դրանցից առաջինը 1863 թ. հայտնաբերված Վաղարշապատի (Էջմիածնի) լատիներեն

խմբագրություն)»։

¹⁰²⁵ Պարսկերեն բաժնի թարգմանությունը տպուկ ենք ըստ Հ. Սամապրանի և Ռ. Գ. Ջեյքի (Սամապրանի, 1901, էջ 224-226; Kent, 1950, էջ 152-153)։

¹⁰²⁶ Արձանագրության վերջը ընդուն ենք ըստ Ռ. Գ. Ջեյքի։ Հ. Սամապրանի մոտ վերջում կա հավելում «... և իմ գործերը»։

րեն արձանագրությունն է (նկ. 168), որը կանգնեցվել է 185 թվականին՝ Կոմոդոս կայսեր օրոք, հռոմեական XV Ապոլինարիս (Ապոլոնյան) լեզեոնի հրամանատարների կողմից¹⁰⁰⁷:

Արձանագրությունից ջնջվել է Կոմոդոսի անունը: Դա, ըստ երևույթին, կապվում է 193 թվականին հռոմեական սենատի կողմից նրա, որպես անարժան կայսեր, անունը մոռացության մատնելու որոշման հետ, որի ընդունումից հետո հիշատակարաններից սկսեցին հանել, ոչնչացնել Կոմոդոսի անունը: Իսկ դա նշանակում է, որ հռոմեական լեզեոնները մինչև այդ թվականը գտնվել են Հայաստանում¹⁰⁰⁸:

Վաղարշապատից (Լշմիածնից) գտնված մյուս լատիներեն արձանագրությունը, որը հայտնի դարձավ 1907 թվականին, վերաբերում է Մարկոս Ավրելիոս կայսեր իշխանության ժամանակաշրջանին (նկ. 169): Դատելով արձանագրության մեջ կայսեր տիտղոսաշարից՝ այն պետք է կանգնեցված լինի 173–176 թվականների միջև, երբ Հայաստանում Հռոմի շահերն էին պաշտպանում հռոմեական զորաբանակներից երկուսը՝ XV Ապոլինարիս (Ապոլոնյան) և XII Ֆուլվիանոս լեզեոնները¹⁰⁰⁹:

1967 թ. Վաղարշապատի (Լշմիածնի) պեղումների ընթացքում քաջված դամբարաններից մեկում, կարասային թաղման կալի կափարիչի վրա գտնվեց *զեզեոն չորրորդ սմոլթալական* լատիներեն մակագրությունը¹⁰¹⁰: Դա կապվում է նույն թվականին Արտաշատից գտնված Տրայանոս կայսեր արձանագրության հետ (տե՛ս ստորև). երկու արձանագրություններն էլ վերաբերում են 114–116 թթ. պատմական իրադարձություններին:

Խարբերդի շրջանից լատիներեն երեք արձանագրություններ են գտնվել 1879 և 1883 թվականներին. երեքն էլ՝ նույն բովանդակությամբ (սակայն բառացի չկրկնելով մեկմեկու), երեքն էլ՝ հայկական գյուղերի եկեղեցական շինությունների շարվածքում: Առաջին երկուսը (գտնված 1879 թ.) հայտնաբերվել են Խարբերդից 2–3 կմ հարավ–արևելք ընկած Կեզրիկ գյուղից և պահպանվել են բավականին լավ¹⁰¹¹: Երրորդը գտնվել է 1883 թ. Կովանք գյուղից (Կեզրիկից դեպի հարավ–արևելք). հետագա դարերում այս արձանագրության վրա փո-

¹⁰⁰⁷ Արձանագրությունն ունեցել է բազմաթիվ հրատարակումներ: Օտիսզական տվյալները, քաղցմանությունը, հնագրական և նարակից պատմա-բանասիրական հարցերի քննությունը տե՛ս Ծրեք, 1953, էջ 267–270 (էջ 268-ի ծանոթ. 1-ում՝ առաջին հրատարակումների հղումները, դրանցից մեկը՝ Անիյան, 1880, էջ 206):

¹⁰⁰⁸ Ծրեք, 1953, էջ 269–270: Կա կարծիք, որ արձանագրության մեջ հիշվող կայսեր ոչ թե Կոմոդոսն է, այլ նրա նաղ Մարկոս Ավրելիոսը, իսկ ջնջված բառը եղել է «Հալկական» տիտղոսը, որը մատնանշել է կրա կողմից՝ Հայաստանի նկատմամբ, ուստի և ոչնչացվել է հայ նայրեմատիկների կողմից (տե՛ս օր.՝ Արշահանյան, 1959, էջ 31–32; Արշահանյան, 1973, էջ 38): Վերջին կարծիքը թիվ հավանական է, քանի որ երևի դա արվել էր հայ նայրեմատիկների կողմից, կոչվածքի քչեամական գործերի մասին վկայող արձանագրություն ամբողջությամբ, ոչ թե միայն կայսեր մեկ տիտղոսը:

¹⁰⁰⁹ Արձանագրության լավագույնը, քաղցմանություն, ժամանակաշրջանի հարստական իրադրություններից և նարակից հարցերի մասին տե՛ս Ծրեք, 1953, էջ 262–267:

¹⁰¹⁰ Մորտյան, Կրկնաշարյան, 1971, էջ 287–290:

¹⁰¹¹ Դրանցից մեկն Եստամբուլի՝ սրբավճ Կ. Ֆ. Լինման–Հաուպտի կողմից, տե՛ս նկ. 105 (Lehmann-Haupt, 1910, էջ 478):

րագրվել է մեծ խաչ, որի հետևանքով լատիներեն բնագիրը մեծապես տուժել է, սակայն պահպանված հատվածները ցույց են տալիս, որ այն նախորդ երկուսի կրկնօրինակներից է: Բնագրերի համընկնող թարգմանությունը հետևյալն է. «Ներոն Կլավդիոս, Կեսար, Օգոստոս, Գերմանիկոս, Ինպերատոր, Գերագույն քուրմ, իր տրիբունական իշխանության տասնամեկերորդ տարին, իր չորրորդ կոնսուլությանը, իննեկորդ անգամ [իշխակված] ինպերատոր, հայրենիքի հայր: Գնեոս Դոմիտիոս Կոչքուլոնի՝ Օգոստոսի լեզատի, պրոպրետորի, և Տրաոս Ալվինդոս Ֆուլվիոս՝ Օգոստոսի լեզատի օրոք, III Գալլիական լեզեոն»¹⁰⁴²:

Արձանագրությունները կանգնեցվել են 64 թվականին: Դրանք վերաբերում են այն ժամանակաշրջանին, երբ Մեծ Հայքի գահի համար 52 թվականից սկսված ռազմական գործողություններն ավարտվեցին հռոմեական զորքերի՝ հայ-պարթևական ուժերից Հռոմեայում կրած խայտառակ պարտությամբ (62 թ.), որից հետո նույն վայրում 64 թ. կնքվեց հաշտություն, որով Արշակունյաց արքայատոհմը հաստատվեց Մեծ Հայքում:

Քարե սալերի վրա արձանագրություններն անվամբ են քատակուսի շրջանակների մեջ. դրանք, հավանաբար, դրվել են այն շինության (կամուրջ կամ ամրոց) պատի մեջ, որը կառուցվել է քանակցություններում Հռոմը ներկայացնող, Արևելքի զորքերի հրամանատար նշանակված Գնեոս Դոմիտիոս Կոչքուլոնի կողմից¹⁰⁴³:

1884 թ. Կ. Պոլսում լույս տեսած «Համով հոտով» աշխատության էջերում Գարեգին Սրվանձույանը Բաղեշի շրջանում, Կամախ և Ծվար գյուղերի միջև հիշատակում է լատիներեն մի արձանագրություն¹⁰⁴⁴ (նկ. 172), որը հետագա ուսումնասիրողների կողմից անուշադրության է մատուցել: Ընթերցվում են «Եզեոն» և «սկութական» բառերը, ինչից հնարավոր է ենթադրել, որ այս արձանագրությունը կարող է կապված լինել 114–116 թթ. իրադարձությունների հետ, որոնց անշուշտամբ Հայաստանում հայտնաբերվել են մի քանի լատիներեն արձանագրություններ՝ սկութական լեզեոնի հիշատակությամբ (տե՛ս ստորև):

Արտաշատի շրջանից և ս հայտնի են երեք լատիներեն արձանագրություններ՝ գտնված Ալեթու և Փոքր Վեղի գյուղերից: Ալեթուից հայտնաբերվել է սպիտակ քարից պատրաստված սյան թեկոր (նկ. 171), որի վրա ընթերցվում են միայն «իմպերատոր», «կեսար», «աստվածային» բառերը (հսպալումներով): Ալեթույն գտնվում է Հին Արտաշատի (ներկայիս Խոր Վիրապի) դիմաց, Արաքսի հանդիպակաց ափին, ուստի և արձանագրության թեկորը պետք է համարել Հռոմի կայսրերից մեկի՝ հայոց մայրաքաղաքի հետ կապված ինչ-որ ձեռնարկի իրեղեն վկայություն¹⁰⁴⁵:

¹⁰⁴² Lehtonen-Haupt, 1910, էջ 477–478: Արձանագրությունների ստապին կապալուսումների հյուսնեթը, չարիպուական տվածները, թարգմանությունը, հնագրական և հարակից պատմա-բանասիրական հարցերի քննությունը տե՛ս Ծրեթ, 1953, էջ 212–223, մեր հավելվածում՝ նկ. 170:

¹⁰⁴³ Հմմտ. Ծրեթ, 1953, էջ 222–223:

¹⁰⁴⁴ Սրվանձույան, 1978, էջ 414:

¹⁰⁴⁵ Ծրեթ, 1953, էջ 223–224 (տե՛ս նաև հյուսնեթը):

1967 թ. պատմական Արտաշատ մայրաքաղաքի հյուսիս-արևելյան սահմաններում գտնվող ներկայիս Փոքր Վեդի գյուղի հարավ-արևելյան եզրին կատարված շինարարական աշխատանքների ժամանակ 1,4 մ խորության վրա հայտնաբերվեցին երկու լատիներեն արձանագրություններ¹⁰⁶⁶։ Դրանցից առաջինը (նկ. 173) եռատող է, ունի շատ խոշոր չափեր (8,5 մ երկարություն և 0,8 մ բարձրություն, առաջին տողի տառերի բարձրությունը 20 սմ է, երկրորդին ու երրորդինը՝ 16 սմ) և կրում է Հոմի Տրայանոս կայսեր անունը, իսկ երկրորդը համեմատաբար մանր տառերով գրված զինվորականի տապանաքար է։

Բնագրերը վերաբերում են 116 թվականի երկրորդ կեսին Տրայանոս կայսեր՝ դեպի Հայաստան կատարած արշավանքին։ Խոշոր արձանագրության վնասված մասերը հաջողվում է վերականգնել և ընթերցել. «*Իմպերատոր Կեսար սաստիանային, Ներվայի որդի Ներվա Տրագանոս, Օպտիմոս (լավագույն), Օգոստոս (վեհափառ), Գերմանիկոս (Գերմանական), Դակիկոս (Դակիական), Պարթևիկոս (Պարթևական), Գերագույն բյուր, Մարսինոս (մեծագույն), տիրուհի իշխանությանը (օժտված) 20 անգամ, կայսր (հռչակված) 13 անգամ, հյուպատոս 6 անգամ, [հայրենիքի հայր?]. սկյութական լեզուներ կատարեց (կանգնեցրեց)*»։

Տապանաքարի տասը տողերից պահպանվել են առաջին չորսը, իսկ մյուսներից՝ միայն առանձին տառեր։ Գրությունը հետևյալն է. «*Մտորներկյսս սաստիաներին (մաներին). Կարոս Կալ(երիոս) Կրե... զինվոր խոսայիկների I լեզունի գորաբուկատի, ծառայեց ... հռչարձանը (?) դրվեց*»։

Արտաշատի պեղումներից հայտնաբերվել են նաև լատիներեն արձանագրությամբ դրոշմված կոմիսիոներ և աղյուսակներ, որոնց վերձանությունը ցույց է տալիս դրանց կապը նույն ժամանակաշրջանի հետ¹⁰⁶⁷։

Ի մի բերելով նշենք, որ Մեծ Հայքից հայտնաբերված լատիներեն արձանագրությունները Հայաստանի I-II դարերի պատմության երեք շրջանների (60-ական թվեր, երբ Արշակունյաց արքայատոհմը հաստատվում էր Մեծ Հայքի գահին, 114-116 և 160-190-ական թթ.) կաթուր սկզբնաղբյուրներ են և լրացնում են դարաշրջանի մասին մատենագրական հաղորդումներից մեր ստացած գիտելիքները։

Ինչպես Մեծ Հայքից, այնպես էլ Փոքր Հայքից և Կոմմագենեից հայտնաբերված լատիներեն արձանագրությունները հիմնականում վերաբերում են հռոմեական բանակների արևելյան արշավանքներին։ Դրանցում հստակ առանձնանում է երկու խումբ՝ հռոմեական զորամասերի տեղակայման մասին վկայող արձանագրություններ, որոնցում տեղեկություններ են հաղորդվում

¹⁰⁶⁶ Արձանագրությունների առաջին հրատարակությունը՝ լուսանկարներով, զմանկարներով թարգմանությամբ և ժամանակաշրջանի պատմա-քաղաքական դեպքերի մանրամասն վերլուծությամբ տև՛ս Առաքելյան, 1964, էջ 302-311։

¹⁰⁶⁷ Խաչատրյան, 2006, էջ 230-235։

հռոմեական կայսրերի ու զորավարների վերաբերյալ, և զինվորների տապա-
նագրեր¹⁰⁰⁶։

Օտարների թողած հունարեն արձանագրությունները։ Հունագիր հու-
շարձանները Հայկական լեռնաշխարհում բաժանվում են երկու խմբի՝ տեղա-
ցիների հեղինակած և օտարների կողմից թողնված։ Առաջիններին արդեն
անդրադարձել ենք համապատասխան բաժնում, իսկ երկրորդ խմբի բնագրերը
(ինչպես լատիներեն արձանագրությունները) կապվում են Հռոմի արևելյան
քաղաքականության հետ։

Հռոմեական զորականների կողմից Հայաստանում թողած արձանագրու-
թյունների մեջ կան նաև հունարեն տապանագրեր։ Դրանցից մեկը (նկ. 174)
հայտնաբերվել է 1914 թ. Վաղարշապատից։ Դամբանական արձանագրու-
թյունը կանգնեցվել է II դարի երկրորդ կեսին։ Հեղինակը զինվորական տրի-
բունն էր XV Ապոլոնյան լեգեոնի, որի մասին արդեն զիտենք Վաղարշապա-
տում 173–176 և 185 թվականներին թողնված լատիներեն արձանագրություն-
ներից։ Տապանագիրը հետևյալն է.

*«Ի հիշատակ Էլլիի Մարսիմի՝ ամուսու, որն սպրեց 35 տարի, և Էլլիի Վալեն-
տինի՝ դստեր, որն սպրեց 13 տարի, Էլլիի Վալենտի՝ XV Ապոլոնյան լեգեոնի զին-
վորական տրիբունը, կրանց ամուսինն ու հայրը, նվիրեց (ատուվածներին)»¹⁰⁰⁶։*

Մի քանի հունարեն տապանագրեր են հայտնաբերվել Քենքից (Եփրատի
արևմտյան ափին, Այնթապից (Գազիանթեպից) շուրջ 60 կմ հյուսիս–արևելք),
Սպվանասար Գ–ի վերոհիշյալ արձանագրությունից ոչ հեռու¹⁰⁰⁷։

Գտնիի պեղումներից հայտնաբերվել է վեցանիստ մանուշակագույն
ապակյա սրվակ, որի հատակին հունարենով մակագրված է՝ ΓΕΡΜΑΝΙΚΟΣ։
Ենթադրվում է, որ սրվակն ունի եգիպտական ծագում և թվագրվում է III դա-
րով¹⁰⁰⁷։

1978 թ. Եղեգնաձորի շրջանի Արենի գյուղի մոտ կատարված ճանապար-
հաշինական աշխատանքների ժամանակ հայտնաբերվեց ոչ մեծ քարե մի զո-
հասեղան՝ «Լավիդու Վազու. Մարը Երկրին՝ Օլյուսրի աստվածուհիի տիրուհու»
արձանագրությամբ։ Արձանագրության առանձնահատկությունների և ժա-
մանակաշրջանի պատմա–քաղաքական իրադարձությունների ըննությունը
թույլ է տալիս այն թվագրելու 163–164 թվերով¹⁰⁰⁷։

¹⁰⁰⁶ Կոմազևներից հայտնաբերված արձանագրությունները տե՛ս Jansert, Meesterde, 1929, էջ 42–46, 59–61։
Փոքր Հայքի արձանագրությունները՝ Olschanson, Biller, 1984, էջ 101։ Ավելացնենք, որ կշմաներով քի-
տահանաֆանվում Փոքր Հայքի և Կոմազևների յաթիներեն արձանագրությունների ցանկը։

¹⁰⁰⁷ Փերեյով, 1935, էջ 75–83 (նախերև և օտուկին)։

¹⁰⁰⁸ T. Tsayirek, 1979, էջ 47։ Այս տապանագրերի բնագրերը մեջ հայտնի չեն։ Դրանք պահանջաբաններն ենք
գնահդել այս բաժնում, քանի որ հայրերման մեջ հիշված են հունական դամբանների նկատ

¹⁰⁰⁹ Apawean, 1957, էջ 63–64, աղ. XVI։ Առաքելյան, Տիրազյան, Տիրազյան, 1969, էջ 62–63, № 136։

¹⁰¹⁰ PMSAAA, էջ 216։

¹⁰¹¹ Տեր–Մարտիրոսով, 1989, էջ 177–189։ Արձանագրության ընթերցման գործում հեղինակն աջակցել է
Յ. Վիտգորսկովը։ Հոգնաձագիրը նկարագրել է համարում, որ այս արձանագրության նեղնակցը նա
Յ. Վիտգորսկովը։ Հոգնաձագիրը նկարագրել է համարում, որ այս արձանագրության նեղնակցը նա
Յ. Վիտգորսկովը։

Նշենք, որ սրանցով չեն սահմանափակվում օտարների կողմից նախամաշտոցյան Հայաստանում թողնված հունարեն արձանագրությունները. մենք տեղյակ ենք մի քանի արձանագրությունների մասին (հատկապես Փոքր Հայքի և Կոմմագենեի տարածքներում), որոնց այստեղ չենք անդրադառնում չունենալով ձեռքի տակ համապատասխան գրականություն:

Հայաստանից հայտնաբերված օտար ծագումով դրամները: Հավատարիմ մեր սկզբունքին՝ արձանագրություններից հետո այստեղ կենրկայացնենք նույն ծագումն ունեցող գրակիր դրամները: Թեպետ ո՛չ առաջինները, ո՛չ էլ վերջինները չեն կարող դիտարկվել իբրև հայաստանյան դպրության բաղկացուցիչ մասեր, քայց մենք ժամանակագրական հերթականությամբ այստեղ կհիշատակենք Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված օտար ծագումով դրամների խմբերը:

Հայաստանից հայտնաբերված վաղագույն դրամները (Ք.ա. VI–V դդ.) գրակիր չեն. դրանք, այսպես կոչված, «միլեթյան» տեսակի արծաթե դրամներն են, որոնց մի երեսին առյուծի գլուխ է պատկերված, մյուսին՝ բուսական նախշ (կամ ռմավորված հավասարաթև խաչ): Երկու այդպիսի դրամներ գտնվել են Էրբրունիի պալատական տամարի ներսում, նվիրատվության սեղանի մոտ¹⁰⁵³: Ք.ա. VI–V դարերով են թվագրվում նաև Հայաստանից գտնված արենական և արեմնեյան դրամները¹⁰⁵⁴:

Ք.ա. IV դարում Հայաստանում տարածում են գտնում մակեդոնական (Ալեքսանդր Մեծի, նրա որդի Փիլիպ III–ի անուններով մակագրված) դրամները, նույն դարավերջի հռոդոսյան դրամ է գտնվել Արմավիրից¹⁰⁵⁵:

Ք.ա. III–I դարերում օտար դրամական միավորներից Հայաստանում լայնորեն կիրառվում են սելևկյան, փյունիկյան, պարթևական (Ք.ա. II–I դարեր), կապադովկիական, պոնտական (Ք.ա. II–I դդ.), փոքրասիական Պերգամոն և Եփեսոս քաղաքների հունագիր դրամները¹⁰⁵⁶:

Ք.ա. I–ից Ք.հ. III դարի կեսերին հայաստանյան դրամաշրջանառության մեջ մեծ տարածում են ստանում հռոմեական լատինագիր դրամները, որոնց կիրառությունը հետագայում նվազում է¹⁰⁵⁷:

Ք.հ. III դարի կեսերից մինչև V դարի սկիզբը հայաստանյան առևտրում գերակշռում են սասանյան պահլավագիր դրամները¹⁰⁵⁸:

Ահա այսպիսին է նախամաշտոցյան Հայաստանի դրամաշրջանառության ընդհանուր պատկերը. տարածված դրամների հիմնական խմբերը կրում են

¹⁰⁵³ Իսրայելյան, 1971, էջ 104–105, աղ. XI: Ի. Ա. Մուշեղյանը կարծիք է հայտնում, որ դրանք կարող են լինել ոչ թե Միլեթում ծառայած դրամներ, այլ «տեղական դրամագրծության արգասիք. ինչպես Ռոմեոսում Ք.ա. V դարում միլեթյան դրամների լեռնաշխարհային թողարկումն էին տեղական կերտվածքի դրամներ» (Մուշեղյան, 1983, էջ 12–14):

¹⁰⁵⁴ Մուշեղյան, 1983, էջ 11–12, 14–15:

¹⁰⁵⁵ Մուշեղյան, 1983, էջ 29–30:

¹⁰⁵⁶ Մուշեղյան, 1973, էջ 22–27, 33–35, 63–78, 82–84; Մուշեղյան, 1983, էջ 31–35:

¹⁰⁵⁷ Մուշեղյան, 1973, էջ 35–46, 84–123; Մուշեղյան, 1983, էջ 35–38, 82–89, 113–114:

¹⁰⁵⁸ Մուշեղյան, 1983, էջ 110–115; Khushudjan, Zohrabian, 2002, էջ 39–56, աղ. 1–XV:

հունարեն, լատիներեն և պահլավերեն գրություններ: Հասկանալիորեն, օտար ծագումով դրամները չի կարելի կապել տեղական դպրության հետ, սակայն այդ դրամների լայն կիրառությունը երկրում կարող է ցույց տալ ժողովրդի որոշակի խավերի (թեկուզև մասնակի) ծանոթությունը դրանց մակագրությունների գրերին և լեզուներին: Բացի այդ, Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված օտար ծագումով դրամների խմբերը մեկ անգամ ևս ընդգծում են Հայաստանի խաղաղացած կարևոր դերը Հին Աշխարհի քաղաքակրթության խաչմերուկներում:

ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ՎԻՊԱՄԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԳՐԻՆ
ՓՈՒՄՐԻՆՈՂ ՄԻՋՈՑ

Նախաքրիստոնեական Հայաստանում ստեղծված հայալեզու և այլալեզու գրավոր հուշարձանները բնույթով շատ բազմազան են: Ըստ բովանդակության դրանք կարելի է բաժանել քսան խմբի (տե՛ս վերջաբանում): Չնայած թեմատիկ խմբերի բազմազանությանը՝ զարմանալի է, որ դրանցում պակասում են մի քանի տեսակի ստեղծագործություններ, որոնք սպասելի էին սեփական գիր և դպրության ունեցող ժողովուրդների գրականության մեջ: Մասնավորապես, գրեթե բացակայում են գրական ստեղծագործությունները. չունենք գրի առնված ռազմի, աշխատանքային, կենցաղային, հարսանեկան, սգո, սիրային և այլ երգեր, վիպասեր, պատմական և դիցարանական վեպեր, հիմներ և այլն: Մա այն դեպքում, երբ «Հայկ և Բեր», «Արամ և Բարշամ», «Արամ և Նյուբար Մաղես», «Արամ և Պայապիս Քաաղես», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Տիգրան և Աժդահակ», «Երվանդ և Արտաշես», «Արտաշես և Սաթենիկ», «Արտաշես և Արտավազդ» և այլ վիպասերը կենսունակ էին մնում նաև Մովսես Խորենացու և Գրիգոր Մագիստրոս Պահլավունու ժամանակներում¹⁰⁹⁹:

Ո՞րն է այս երևույթի բացատրությունը:

Առանց հարցադրմանը վերջնական պատասխան տալու հավակնության՝ փորձենք տալ երկու հնարավոր պատասխան: Նախ, կար «գրով հիշատակության արժանի» լինելու հասկացությունը¹⁰⁰⁰: Այսինքն՝ ամեն րան չէր կարելի գրի առնել, քանի որ գիրը սրբազան հասկացություն էր: Մրանից կարելի է հետևություն անել, որ կենցաղային կիրառություն ունեցող ստեղծագործու-

¹⁰⁹⁹ Արտաշեսի մասին «Ո՞ւ տայ ինձ զմուսի ծխանի...» հատվածը XI դարում գրառել է Գրիգոր Մագիստրոս «Գեղամունին» (Գրիգոր Մագիստրոս, քույր 1,9, 1910, էջ 87):

¹⁰⁰⁰ Որպես ազնվածի շահագույն վրայաքրյան կարելի է մտաբերել Պատմաժողովուրդի խոսք դարձած հայրենի արտաստեղծությունը. «... քնախտ և մեղք փոքր անու նեց և թվով շատ անմեղամեղակ և շատ անբավ օտար թագավորությունների տակ նեղանված, տակոս մեք աշխարհում էլ քաղաքային բազում գործեր կան գործված՝ արժանի գրով նկատարություն...» (զմբր Ա, գլ. 9): Մա. Մախոտյանցի բազմիցս կրատարված աշխարհագրորդ թագավորության մեջ «... արժանի գրոք թշատանի» արտաստեղծությունը ներկայացված է «... գրելու և նկատարելու արժանի», «նկարիտ ամբի նկար է «... արժանի գրի նկատարություն» կամ «... արժանի գրով նկատարություն»:

թյունները (հարսանեկան, ռազմի, աշխատանքային, սզո երգեր և այլն) գրի չեն առնվել «գրով հիշատակության արժանի» չլինելու պատճառով: Սակայն այդ դեպքում անհասկանալի է մնում, թե ինչու չեն գրի առնվել դիցապատմական բնույթի ստեղծագործությունները, որոնց մի մասը Գողթան վիպասացներից լսել և իր կոթողային աշխատանքում գրանցել է Պատմահայրը: «Կարելի էր ենթադրել, որ դրանք գրառվել, բայց ոչնչացվել են քրիստոնեությունը պետական կրոն հռչակելիս, ինչը, սակայն, բիշ հավանական է: Հակառակ դեպքում դրանք տեղ չէին գտնի մեր մատենագիրների երկերում:

Հարցի պատասխանը գտնելուն մեզ կադող է օգնել մեկ այլ հարցադրում. ինչո՞ւ հինգերորդ դարից մինչև Գարեգին Սրվանձոյանը որևէ հայ հեղինակ գրի չառավ «Սասնա ծռեր» դյուցազնավեպը կամ գոնև հատվածներ այդ հսկայածավալ ստեղծագործությունից, որում արտացոլված են և՛ նախապատմական ժամանակներից ծագող դիցաբանական պատկերացումները, և՛ մինչև հին ու միջին դարերում տեղի ունեցած պատմական իրադարձությունները: Չէ՞ որ կարելի էր դրանք գրի առնել մաշտոցյան այբուբենով:

Վիպասացների մասին պահպանված տեղեկությունների համաձայն՝ ժամանակին էպոսը եղել է շատ ավելի մեծածավալ¹⁰⁶¹: Հատկանշական է այն, որ հաճախ, երբ մեր բանաստեղծները դիմել են սովորական գյուղացիների՝ էպոսից դրվագներ պատմելու խնդրանքով, վերջիններս հրաժարվել են՝ մատնացույց անելով հատուկ վիպասացներին: Այսինքն, մեր ժողովրդի մեջ առանձնացված էր հատուկ մի դաս՝ վիպասացները, որոնց մտնաշնորհն ու պարտականությունն էր վիպական ավանդույթների պահպանումն ու հաջորդ սերունդներին փոխանցելը:

Դեռևս նախաքրիստոնեական ժամանակներում վիպասանական ախնդույթի գոյությունը փաստվում է մի շարք տեղեկություններով: Դրանցից հատուկ ուշադրության է արժանի Փավստոս Բյուզանդի հաղորդումը Տիրան Արշակունու օրոք (338–350 թթ.) նախաքրիստոնեական հավատքի ու բարքերի վերականգնման մասին. «Երանք սիրում էին իրենց երգերը, արտասույցները, վիպասանությունները, կրանց հանդես պիտոնանց էին, կրանց հավատում էին, կրանց մեջ հայտատուն»¹⁰⁶²: Այսինքն՝ վիպասացները պատմում էին ոչ թե սովորական, այլ սրբազան պատմություններ իրենց աստվածների ու նախնիների մասին, որոնց «հավատում էին, կրանց մեջ հարստուն»: Դրանում կասկած չի մնում, երբ ծանոթանում ենք Պատմահոր շնորհիվ պահպանված պատասիկներին:

«Աերդանաղով գրի սահմանմանը, վերջինիս ծագումը բացատրելով որպես հիշողության և կայուն հաղորդակցության միջոց՝ տեսնում ենք, որ **նախաքրիստոնեական Հայաստանում վիպասանական ախնդույթը ծառայել է**

¹⁰⁶¹ Տե՛ս, օրինակ, Սրվանձոյանց, 1978, էջ 84–85:

¹⁰⁶² «Եւ զիրեանց երգս արտասուցնց զվիպասանութեանն սիրելեաց ի փոք կրօնքեանցն, եւ նոնն հատուցեաց, եւ ի նոնն հաւատարկութեանց»... (Փավստոս Բյուզանդ, զարարություն 9, գլ. ԺԳ: ՄՀ-Ա, էջ 294):

որպես գրին փոխարինող միջոց: Ընդ որում, այդ միջոցով փոխանցվել են սրբազան պատմությունները:

Ինչո՞ւ են նախընտրել վերջիններս փոխանցել բանավոր, ոչ թե արձանագրել: Քանի որ այդ մասին չունենք ստույգ բացատրություններ հին և միջնադարյան աղբյուրներում, մենք ձեռնալսել ենք մնում ենթադրություններ անելուց:

2. ԹՎԵՐԻ ԵՇՄԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՄՆԱՄՆՏՈՑՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՇՏՈՑՑԱՆ ԱՅՐՈՒՐԵՆԻ ԹՎԱՀԱՄԱԿԱՐԳԸ

Հայկական լեռնաշխարհում գրի ծագման ու զարգացման պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մաշտոցյան և նախամաշտոցյան դպրությունների միջև առկա են բազմաթիվ ընդհանրություններ և առնչություններ: Դրանց թվին են պատկանում նաև թվերի նշման սկզբունքները:

Հին ու միջին դարերում աշխարհում կիրառված թվանշման համակարգերը կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ հատուկ թվերի նշման համար նախատեսված պայմանական նշաններով (թվանշաններով) և զրանշաններով (տառերով) արտահայտվող: Վերջիններս գիտության մեջ առավել հայտնի են «այբբենական համակարգեր» անունով¹⁰⁶³: Դրանցից հնագույնն այսօր համարվում է հռինականը, որն, ըստ ընդունված տեսակետի, առաջացել է Ջ.ա. V դարում¹⁰⁶⁴: Որպես այբբենական համակարգեր օգտագործվել են հին արաբական, փյունիկյան, ասորական, եբրայական և այլ այբուրենները:

Մերոպ Մաշտոցի տեղիքում այբուրենը ևս, ինչպես հայտնի է, ծառայել է որպես թվանշանային համակարգ: Երեսունվեց տառերը բաժանելով չորս սյունակների՝ Մերոպ Մաշտոցն առաջին սյունակի ինը տառերին տվեց միավորների, երկրորդին՝ տասնավորների, երրորդին՝ հարյուրավորների, չորրորդին՝ հազարավորների արժեք¹⁰⁶⁵:

Ա – 1	Ժ – 10	Ճ – 100	Դ – 1000
Բ – 2	Ի – 20	Լ – 200	Ս – 2000
Գ – 3	Լ – 30	Ե – 300	Վ – 3000
Դ – 4	Խ – 40	Ն – 400	Տ – 4000
Ե – 5	Շ – 50	Շ – 500	Ր – 5000
Չ – 6	Կ – 60	Ո – 600	Յ – 6000
Է – 7	Հ – 70	Չ – 700	Ի – 7000
Ը – 8	Չ – 80	Պ – 800	Փ – 8000
Թ – 9	Ղ – 90	Ջ – 900	Ք – 9000

¹⁰⁶³ Այբբենական համակարգերի մասին կա բավականին մեծածախ գրականություն, տե՛ս. օրինակ՝ Բարոսեան, 1967, էջ 245–259; Маликгерон, 1974, էջ 39–49 (նաև հղված գրականությունը):

¹⁰⁶⁴ Ծագման հարցի ընտարվումների մասին տե՛ս Բարոսեան, 1967, էջ 250–259:

¹⁰⁶⁵ Տարբերակելու համար, որ տվյալ դեպքում տասն ունի թվային արժեք, վերևում դրվում էր հորիզոնական գծիկ կամ սկզբում ու վերջում դրվում էր կետ կամ երկու կետ (նման սյուրսիս փերթակաղն): Կեսը ունի հատուկ նշան՝ նման Ե տառին:

մինչև «բյուր» հասնող քառաստիճան համակարգ, եթե նախաբրիստոնեական Հայաստանում չունենայինք հազարամյակների մանապարի անցած թվաբանական համակարգ, որի հիմքում ընկած է հաշվարկի տասնորդական սկզբունքը: Ընդ որում, այն այնքան խորն արմատներ ուներ, որ անգամ հաշվարկի վաթսուհանգուցյա համակարգ ունեցող միջագետքյան սեպագրի բարեփոխմամբ ստեղծված Վանի թագավորության սեպագրում ևս կիրառվում է տասնորդական համակարգը (տե՛ս ստորև):

Հին Արևելքի թվանշան համակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր նախնիները դեռևս նախնադարում ստեղծել են յուրօրինակ թվանշանային համակարգ, որի սկզբունքները ժառանգաբար հասել են մինչև միջնադար:

Ի տարբերություն Եգիպտոսի, Փոքր Ասիայի, սեպագիրը գործածող Միջագետքի և առաջավորասիական երկրների, Հայկական լեռնաշխարհում թվերի նշումները կատարել են ոչ թե գծիկներով, սեպերով կամ այլ սիմվոլիկ նշաններով, այլ կետ-շրջանակներով (տե՛ս աղ. 11): Թվերի կետային նշումը, լինելով հայաստանյան երևույթ, գալիս է դեռևս ժայռապատկերներից, արտահայտվում է մինչքրոնզեդարյան (օրինակ, Թեղուտից գտնված Ք.ա. V-IV հազարամյակներով թվագրվող խեցեղենի քեկորները, տե՛ս նկ. 7), բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների իրերի վրա¹⁰⁷⁶: Այն իր կատարելությանն է հասնում Վանի թագավորության մեհենագրության մեջ, միաժամանակ դառնալով վերջինիս տեղական ծագման ապացույցներից մեկը (տե՛ս վերը):

Վանի թագավորության հիերոգլիֆակիր առարկաների մեջ մեծ թիվ են կազմում տարողության նշումներով խեցեղեն ամանները, որոնց վրա բազմաթիվ տարբերակներով հանդիպում են մեկից մինչև ինը թվերի նշումները՝ կետերով (աղ. 13): Տարողության նշումներում կետերի կողքին հանդիպում են որոշ առարկաների գծապատկերներ (տիկ, սպիտր, գավաթ, թաս և այլն), որոնք չափի միավորներ ցույց տվող հիերոգլիֆներ են: Կարասների վրա առարկաների պատկեր-նշաններից բացի հանդիպում են ևս չորս հիերոգլիֆներ, որոնցից երկուսը, ամենայն հավանականությամբ, համապատասխանաբար, ցույց են տվել նաև 10 և 100 թվերը¹⁰⁷⁷ (տե՛ս աղ. 11, 13):

Հատկանշական է, որ հաշվարկի տասնորդական համակարգ են ունեցել նախամաշտոցյան Հայաստանում կիրառված օտար ծագում ունեցող գրասի-

¹⁰⁷⁶ Մեկ անոթի մտայն պատկերացումներ չունեց Վանի թագավորությունից առաջ Հայաստանում գործածված թվանշանների համակարգ(եր)ի մասին: Մտայն տեսնելով թվերի կետանշան հայաստանյան առանձնահատկությունը, որը գալիս է նախազգային ժամանակներից (ժայռապատկերներ, գանձազան նեոլիթական իրերի վրա կատարված նշումներ), և որը ժառանգել է Վանի թագավորության մեհենագրությունը, կարելի է ենթադրել, որ վերջինս ժառանգություն է առաջել դեպի թվանշանների արտաքին տեսքը, այն հաշվանախնարի սկզբունքներից:

¹⁰⁷⁷ Ի դեպ, թեք խաչի նմանօր կշար, որի համար մեր նկարագրաբար ստաբիլում ենք «100» նշանակությունը, տեսքով գեղեթ նույնանուն է խեթա-յուվանուն «100» թվանշանի (Laroche, 1960, էջ 213, № 399; Зырянская, 1969, էջ 105; Il Geroglifico Anatolico, 1998, էջ 64, 115):

մակարգերի մեծ մասը: Հայկական լեռնաշխարհի արևմուտքում Եփրատի հովտում, Ք.ա. XV–VIII դարերում կիրառվել է խեթա–յուվիական մեհենագրությունը (հիերոգլիֆիկան), որում 1–9 թվերը նշվում էին ուղղահայաց գծիկներով, իսկ 10–ը, 100–ը և 1000–ը՝ հատուկ նշաններով¹⁰⁷²: Այսինքն՝ այստեղ ևս գործ ունենք հաշվարկի տասնորդական համակարգի հետ:

Ասուրա–բաբելական սեպագրությունը կիրառել է հաշվարկի վաթսուհանգուցյա համակարգը¹⁰⁷³, որը Հայաստանում լայն գործածություն չի ունեցել:

Քիայնական սեպագրության մեջ թվերը նշվել են երկու կերպ՝ հատուկ սեպագիր–թվանշաններով և վանկանշաններով դրանց անունները գրելով: Մտավել տարածված է առաջին տարբերակը: Մտավգրով թվեր նշելու սկզբունքը ներկայացված է աղ. 19–ում: Ամենափոքր նիշը նախատեսված էր կեսի (0,5), իսկ ամենամեծը 1000–ի համար: Համակարգը հնարավորություն էր տալիս գրելու անսահմանորեն մեծ թվեր. օրինակ՝ երկու «1000» նշանակող սեպանշանները իրար կողքի դնելով՝ ստացվում է մեկ միլիոն (1000 x 1000 = 1 000 000)¹⁰⁷⁴...

Հետաքրքիր է, որ անգամ հաշվարկի վաթսուհանգուցյա համակարգ ունեցող միջագետքյան սեպագրի բաբելոնիումյան տեղիծված Վանի թագավորության սեպագրում ևս կիրառվում է տասնորդական համակարգը, ինչի հետքերը պահպանվել են «60»–ից մինչև «100» թվերի գրության մեջ¹⁰⁷⁵: Իսկ դա նշանակում է, որ Վանի թագավորությունից շատ առաջ հաշվարկի տասնորդական համակարգը խոր արմատներ ուներ Հայաստանում:

Հունական այբուբենը Հայաստանում լայնորեն օգտագործվել է նաև թվանշման նպատակով: Մասնավորապես, տառերի թվային արժեքով գործածվելը հաճախ է հանդիպում Արտաշեսյանների դրամների վրա. տառերով նշվել է ժամանակի հաշվարկը սելևկյան¹⁰⁷⁶ և փյունիկյան¹⁰⁷⁷ տոմարներով, եր-

¹⁰⁷² Թվանշանները խեթա–յուվիական մեհենագրության նշանաբաններում (Laroche, 1960; II Geroglifico Anatolico, 1998, էջ 15–124; Խաչերեն թագավանված՝ Մովսիսյան, 2003 (ա), էջ 282–321), սովորաբար գեղեղվում են 380–400 համարներում:

¹⁰⁷³ Այս բաշխմանին բարդ համակարգի բացատրությունը կարելի է գտնել բաբելոնյան թվաբանությանը նվիրված բազմաթիվ աշխատանքներում, տե՛ս, օրինակ, Beissner, 1961; Бесснер, 1967, էջ 76–233, միայն համակարգի մասին՝ էջ 89–95; Heibrodner, 1968, էջ 44–82 (իդիական գրականությանը հանդիպել):

¹⁰⁷⁴ Քիայնական թվանշանները և դրանց ստանդարտումը գիտական գրականության մեջ տե՛ս Մովսիսյան, 2003 (ա), էջ 379–380:

¹⁰⁷⁵ Վանի թագավորության սեպագրի թվանշանագրի տասնորդական է (տե՛ս «Ներքուսյան, 1945, թիվ 3–4, էջ 55–72; «Ներքուսյան, 1959, էջ 10–29; Исраелян, 1976, էջ 115–117; Beissner, Асарян, 1980, էջ 166–178): Համակարգում առկա է մեկ բացառություն: Դա «60»–ից մինչև «100» թվերի գրությունն է: Տասնաթյուրների շարքը չարժարո՞ւմ «60» թիվն ունենում է նոր նշան, և «70»–ը ներկայացվում է «60 + 10», «80»–ը՝ շարքը չարժարո՞ւմ՝ «60 + 30» բանաձևով (փոխանակ «7 x 10», «8 x 10», «9 x 10»–ի), ինչը միջագետքյան «60 + 20», «90»–ը՝ «60 + 30» բանաձևով (փոխանակ «7 x 10», «8 x 10», «9 x 10»–ի) ինչը միջագետքյան միջագրում ստացանում ունեցած հաշվարկի 60–ական համակարգի պատրաստված մնացուկ է: միջագրում է նոր նշան, որից հետո ևս չարտևակվում է տասնորդական սկզբունքը (տե՛ս «100»–ը ունենում է նոր նշան, որից հետո ևս չարտևակվում է տասնորդական սկզբունքը (տե՛ս հարկիստում, աղ. 19):

¹⁰⁷⁶ Մուշեղյան, 1983, էջ 50–51; Nercessian, 2000, էջ 24, 47; Nercessian, 2000 (ա), էջ 100 և այլն:

¹⁰⁷⁷ Մուշեղյան, 1983, էջ 105–124; Nercessian, 2000 (ա), էջ 101–102; Nercessian, 2000, էջ 25, 48–49 (և նրանց գրականությունը):

բեան՝ թվագրման հիմք ընդունելով արքայի գահակալության սկիզբը¹⁰⁷⁸: Նույն երևույթն ասկա է նաև վիճազիր արձանագրություններում¹⁰⁷⁹:

Մենք ձեռնալսի ենք մնում Հայաստանից հայտնաբերված արամեալուտ արձանագրություններում թվանշանների կիրառումը բնաբարկելուց, քանի որ, ինչպես վերը նշվեց, դրանց այսօր հրատարակված վերծանությունները խիստ կասկածելի են:

Քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո Հայաստանում լայն կիրառություն է ստանում նաև ասորերենը՝ իր այբուբենով (22 տառ, աջից ձախ գրությամբ), որով կարելի էր գրել մինչև 499-ը ներառյալ (9 միավոր, 9 տասնավոր, 4 հարյուրավոր)¹⁰⁸⁰:

Պահպակական (միջին պարսկական) այբուբենը, որը կիրառվել է Արևելյան Հայաստանում 387 թ. Հայաստանի բաժանումից հետո, թվային արժեքով չի կիրառվել:

Ամփոփելով նախամաշտոցյան Հայաստանում կիրառված թվանշանն համակարգերի այս համառոտ տեսությունը՝ տեսնում ենք, որ Մեսրոպ Մաշտոցի այբուբենի թվահամակարգի հիմքում ընկած տասնորդական սկզբունքն արդեն հազարամյակների ուղի էր անցել Հայաստանի և՛ տեղական ծագում ունեցող, և՛ ներմուծված գրահամակարգերում:

Վերադառնալով մաշտոցյան տառերով թվերի նշման երկրորդ՝ ընդունվածից շեղվող սկզբունքին, որն ավելի անկատար է, նկատենք, որ այդ սկզբունքը ոչ թե պատահական է, այլ ճշգրտորեն կրկնում է միևնաչափական ժամանակաշրջանի գրահամակարգերում (և՛ տեղական մեհենագրության մեջ, և՛ ներմուծված ու Հայաստանում քարեփոխված սեպագրում) ընդունված թվանշանն սկզբունքը: Նույն 3900 թիվը նշված համակարգերում արտահայտվել է «3x1000 + 9x100» (.ԳՌԹԾ.) բանաձևով, միևնաչափ մաշտոցյան այբուբենի սկզբունքով այն պետք է հաղորդվեր «3000 + 900» (.ՎՋ.): Ավելի կատարյալ համակարգ ունենալու պարագայում անկատարն օգտագործելը կարելի է բացատրել միայն սովորույթի ուժով, այսինքն՝ այն հանգամանքով, որ պահպանվում է գրելու հին ավանդական եղանակը: Իսկ սա նշանակում է, որ նախաքրիստոնեական ժամանակաշրջանի թվաբանական ավանդույթները շարունակվել են նաև քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո: Քրիստոնեության պետական կրոն հռչակումով Հայաստանում արգելվեց մեհենագրությունը, բայց չէր կարող վերացվել թվաբանությունը (հաշվահամակարգը), որն ընկած էր կենսական բոլոր պահանջների կատարման հիմքում: Քրիստոնեական եկեղեցին չէր կարող այն վերացնել առավել ևս այն պատճառով, որ Հայաստանում կիրառված թվահաշվարկման համակարգը շատ

¹⁰⁷⁸ Bedoukian, 1978, էջ 26; Մուշեղյան, 1983, էջ 56:

¹⁰⁷⁹ Օրբիակ՝ Տրդատ արքայի Գառնիից գտնված հունագիր արձանագրության մեջ նշվում է, որ ամբողջ կատուցվել է նրա թագավորության 11-րդ տարում. «11» թվանշանը արտահայտված է ԱԼ տառերով:

¹⁰⁸⁰ Ասորական այբուբենը՝ իր թվահամակարգով, տես՝ Լուուկոսկյա, 1955, էջ 155-157; Jensen, 1958, էջ 295-301; Brockelmann, 1962, էջ 4-12; Չեքոսթեբ, 1963, էջ 336-346; Մուխոբյան, 2003 (ա), էջ 390-391:

ը, թե ինչ իրադրություն էր տիրում Հայաստանի գրավոր մշակույթի ոլորտում քրիստոնեության պետական կրոն հռչակման նախօրյակին¹⁰⁸⁴։ Դատելով պահպանված մատենագրական տեղեկություններից՝ Հայաստանի տաճարներում շարունակում էին կիրառվել հայալեզու մեհենագրերը, իսկ թագավորական գրագրության մեջ քաղաքացիություն էր ստացել հունական այբուբենը¹⁰⁸⁵։

Քրիստոնեության պետականացումից հետո փոխվեց նաև Հայաստանի գրային իրավիճակը։ Հայկական մեհենագրությունը, որպես նախորդ կրոնի գրահամակարգ, արգելվեց և դուրս մղվեց կիրառությունից, իսկ առանձին մեհենանշանները շարունակեցին կիրառվել հայ իրականության մեջ հնայագրերի, վարպետների նշանների և այլ գաղափարակիր-նշանների տեսքով («նշանագիրք իմաստոնոց» ցանկերը միջնադարյան մատյաններում, իմաստակիր նշանները կիրառական արվեստում)։

Տրդատ Գ-ի հրամանով արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում հաստատվեցին հունարենն ու ասորերենը¹⁰⁸⁶։ Հունարենն ու ասորերենն դպրության կենտրոններ հիմնվեցին նաև Արշակ Բ-ի օրոք՝ Ներսես Մեծի կողմից¹⁰⁸⁷։

360-ական թվականներին, Մովսես Խորենացու հաղորդման համաձայն (գիրք Գ, գլ. Լ2), Մերուժան Արծրունու կողմից հունարեն դպրության արգելման և պարսկերենի պարտադրման փորձ է արվում, ինչը, սակայն, հաջողությամբ չի պսակվում։

Ղազար Փարպեցին հայտնում է, որ Վտամշապուհից առաջ՝ Խոսրով արքայի օրոք շարունակում էին տիրապետող դիրք ունենալ հունարենն ու ասորերենը¹⁰⁸⁸։

Մովսես Խորենացին վկայում է նաև, որ Պարսկաստանի գերիշխանության տակ անցած Արևելյան Հայաստանի արքունիքում Վտամշապուհ արքայի օրոք կիրառվել է պարսկական գիրը¹⁰⁸⁹։ Իսկ իր ապրամ ժամանակի մասին Մովսես Խորենացին տեղեկացնում է. «... կային պարսից և հունաց գրեր, որոնցով գրված այժմ գտնվում են մեզ մոտ անթիվ քանակությամբ գրություններ, գրողների ու գավառների, յուրաքանչյուր տների սեփականության, ընդհանուր վճանքի

¹⁰⁸⁴ Մյակ բացատրությունը Տիգրանակերտի հունարեն արձանագրությունն է՝ գրված III դարի վերջին, քրիստոնեության պետական կրոն հռչակման նախօրին, որին անդրադարձանք վերևում։

¹⁰⁸⁵ Հայկական թագավորությունների արշտանակական գրագրության ոլորտում հունարենի և հունական այբուբենի կիրառման մասին խոսեցինք վերջ, տե՛ս նաև Մովսիսյան, 2003 (ս), էջ 111-163։

¹⁰⁸⁶ Ազգրանգեղոսի հաղորդման համաձայն, Տրդատ Գ-ն «Հայոց կնիքի տապալիք իտյմբին հրաման տվեց՝ իր Արտանույսան նահանգներից, գավառներից ուսման համար մատայ մատյանների բացարձայն բերել և կրանց վրա հունա ու պարսից գրել... Երանց կի՛տ մասի բաժանեցին, ուսման տեղին մասից ցայտայան և ուսման՝ Արշակունյան» (Ազգրանգեղոս, ՃԻ, 840; ԱՀ-Բ, էջ 1704)։

¹⁰⁸⁷ Իսկ որ մատենագրական տեղեկությունները գրադարով և աշխարհաբար թարգմանություններով վերադրվել են առաջին գլխում, այս ենթաբաժնում դրանք համառոտակի կիշխատակնք աշխարհաբարով կամ կրաճարարմնք միայն եղումներով։

Ներսես Մեծ կարողեցիտի նախանձնությունը կատարված թարնևորգումների շարքում իշխատակում է «Շարաստանի թղթը գայտանկրում հունարեն և ասորերեն թղթներով ցայտեմբ»՝ ինձնեղ (Փավստոս Բուզանդ, դպրություն Դ, գլ. Դ; ԱՀ-Ա, էջ 317)։

¹⁰⁸⁸ Ղազար Փարպեցի, դրվագ Ա, գլ. Ժ; ԱՀ-Բ, էջ 2211-2212։

¹⁰⁸⁹ Մովսես Խորենացի, գիրք Գ, գլ. ԾԲ; ԱՀ-Բ, էջ 2080։

հունարեն դպրությանը դրոշմված, որը եւ, Միջագետքում կրա աշակերտների մոտ գտնելով, կամենում եմ ձեզ պատմել, քանզի սա ունեւ սրայիսի վերնագիր՝ «Եւ Ազգայնագեղոս գրիչս, քաջն Տրդատի հրամանով արշուկի դիվանից տանելով այս արձանի վրա իմ ձեռքով գրեցի Հայոց առաջին թագավորների տարիները»: Մրս պատմներ մի փոքր հետո կտանես իր տեղուն»¹⁰⁹⁴:

Գրային հուշարձանների մյուս խումբը, որ գոյություն է ունեցել IV դարում, կազմում են այն գործերը, որոնք ստեղծվել (կամ թարգմանվել) են նախաքրիստոնեական ժամանակաշրջանում, սակայն չեն արգելվել նոր կրոնի քարոզիչների կողմից և հասել են մինչև V դար: Դրանցից, մասնավորապես, հիշատակելի են Մովսես Խորենացու օգտագործած սկզբնաղբյուրներից Մար Աբաս Կատինայի, Օղյունյ պրմի և Բարդաճանի աշխատությունները:

Հայագիտական ուսումնասիրություններում երկար քննարկումների առարկա է եղել (և շարունակում է մնալ) չորրորդ դարի օտարալեզու հայ գրականության խնդիրը, մատենաշվել են մի շարք աշխատություններ, որոնք, մեծազույն հավանականությամբ, պետք է ստեղծված լինեն IV դարում: Դրանք հիմնականում կրոնական, վկայաբանական-պատմողական բովանդակություն ունեցող գրական հուշարձաններ են, որոնց ստեղծման անհրաժեշտությունը թելադրված էր նոր կրոնի քարոզական-գաղափարախոսական պահանջներով: Մենք այստեղ կանգ չենք առնի այս հիմնահարցին, քանի որ վերջինս դեռ պետք է դառնա հատուկ ուսումնասիրության առարկա, և կրավարարվենք միայն այն աշխատանքների թվարկումով, որոնց IV դարում ստեղծված լինելը, մեր կարծիքով, կասկած չի հարուցում: Մասնավորապես, լուրջ հիմքեր կան եզրակացնելու, որ Ազգաթանգեղոսի «Հայոց պատմության» մի քանի հատվածներ (Գրիգոր Պարթևի վարքը, Խոսրովի և Տրդատի պատմությունը, Հոփիսիմյաց վկայաբանությունը) IV դարում գրվել են հունարեն, իսկ V-ում թարգմանվել և խմբագրվել են Կորյունի ու Եզնիկ Կողբացու կողմից, IV դարում ասորերենով պետք է գրված լինեին Չենոբ Գալի երկի մի քանի հատվածներ, նույն դարում հունարեն պետք է գրված լինեն հետագայում «Կանոնագիրք Հայոց» ներմուծված մի քանի հատվածներ («Կանոնք սրբոյն Գրիգորի Պարթևի... յաւելումն ի Նիկիական կանոնս», «Կանոն Լուսաւորչին», «Մահմանաղբյուրին կարգաց»)-ի վաղ շերտերը, «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթևի, դարձեալ հարցումն եւ պատասխանիք նորս», Վրթանես կարողիկոսի և Երուսաղեմի Մակար հայրապետի թղթերը և այլն), Արտիթես եպիսկոպոսի պատասխան թուղթը Մարկոս միայնակցային, որն օգտագործում է Մովսես Խորենացին իր երկրորդ գրքի Ձ գլխում, «Հարցումն տեսն Ներսէսի Հայոց կաթողիկոսի առ Եպիփան միայնակցաց» բնագիրը, Աշտիշատի ժողովի կանոնները և այլն¹⁰⁹⁵:

¹⁰⁹⁴ Արգայան, 1965, էջ 31–33; Սեփեռ, 1979, էջ 47; Սեփեռ, 2004, էջ 4–5; ՄՀ-Պ, էջ 453:

¹⁰⁹⁵ Տն՛ս Զարթուստյան, 1897, էջ 181–265; Խոսիկյան, 1973, էջ 27–51; Խոսիկյան, 1995, էջ 28–44; Եղիաթարյան, 2014, էջ 81–171 և հոփած գրականությունը:

Չորրորդ դարի Հայաստանում ստեղծված գրային իրավիճակի մասին ուշագրավ երկու վարկած է առաջ բաշել Գ. Խ Սարգսյանը: Նա ընդունում է նախաքրիստոնեական Հայաստանում հայտնվելու դպրության հնարավորությունը, նաև շուրջ 500–ամյա պատմագրական անընդհատ տվանդույթի գոյությունը¹⁰⁹⁶ և կարծում, որ չորրորդ դարում ևս հայտնվելու դպրությունը չի ընդհատվել, այլ արտահայտվել է հետերիոգրաֆիայի («այլալեզվագրության») եղանակով: «Վերջինիս համաձայն՝ օտարներից փոխառված գիրը կիրառվում էր քառերի նույն գծագրությամբ, սակայն կիրառողներն այն ընթերցում էին ոչ թե տվյալ գիրը ստեղծող ժողովրդի լեզվով, այլ իրենց լեզվի նույնիմաստ բառով¹⁰⁹⁷: Տարիներ անց նա հանդես եկավ նոր տեսակետով: Ընդունելով քարոզչության ընթացքում սինքրոն թարգմանության կարևոր դերը՝ նա առաջ բաշել IV դարի Հայաստանում նաև հետերոլեզվիայի («այլալեզվախոսության») առկայության հարցը, ինչը մասնակիորեն որոշ ժամանակ կարող էր բավարարել գրի պահանջը: Ընդ որում, հունարան և ասորարան դպրոցների ծնունդը, Գ. Խ. Սարգսյանի կարծիքով, հայ իրականության մեջ կարող է կապվել IV դարի հետերոլեզվի ավանդույթի հետ¹⁰⁹⁸:

Հայագիտության մեջ շատ է արձարծվել օտար (արամեական, հունական, ասորական, պարսկական) գրերով հայտնվելու դպրության գոյության խնդիրը: Առանց խորամուխ լինելու հարցի մեջ և վկայակոչելու այդ մասին եղած տվյալներն ու հայտնված կարծիքները¹⁰⁹⁹, այստեղ բավարարվեն միայն նշելով, որ տեսականորեն լիովին հնարավոր է նախամաշտոցյան Հայաստանում օտարազգի հայերեն գրության գոյությունը, թեպետ ներկայումս այդ մասին վկայող որևէ նյութական վկայություն չունենք (ինչպես որ չունենք նաև IV դարի հունարեն և ասորերեն ձեռագրեր կամ պատասիկներ, կոթողներ, հետերիոգրաֆիայի նմուշներ)...

Չորրորդ դարի վերջին հանրահայտ էր, որ գոյություն են ունեցել հայկական գրեր, և Մեսրոպ Մաշտոցն իր այրուքների գլուխից առաջ ջանացել է գտնել ու կիրառել դրանք: Ի՞նչ գրեր էին դրանք, որոնք առավել հայտնի են «Դանիելյան» անվանումով:

Ինչպես նշվեց առաջին գլխում, մատենագրական տեղեկությունների քննությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ խոսքը վերաբերում է հայկական մեհենագրության մասին պահպանված հիշողությանը: Մակայն այն փաստը, որ մատենագիրները գործածում են «այգիագետների *լեզուագրերը*», «ստաների

¹⁰⁹⁶ Սարգսյան, 1969, էջ 122–126:

¹⁰⁹⁷ Сагсаган, 1978, էջ 1–10 (նույնը՝ նաև ֆրանսերեն); Сагсаган, 1980, էջ 15–20: Ուշագրավ այս փարկածը, սակայն, քայքայ չի կատարում չորրորդ դարով թվագրվող որևէ հնագիտական փաստով:

¹⁰⁹⁸ Սարգսյան, 1990, էջ 22–30:

¹⁰⁹⁹ Դրանց մասին տե՛ս, օրինակ, Անադոս, 1984, էջ 460–673 (ուր ներկայումս անձինն է համարում օտարազգի հայերեն դպրության մասին տեսակետները): Արքատեան, 1982, էջ 81–93 (ներկայումս օտարազգի հայերեն դպրության Հայաստանում արտաքին աշխարհի հետ հարաբերվելու գրել են օտար գրեմուն է, որ նախամաշտոցյան Հայաստանում արտաքին աշխարհի հետ հարաբերվելու գրել են օտար գրեմուն լեզու ներով իսկ ներքին կարգիների համար՝ հայերեն, բայց վերջերս մ գործածվելով օտար տեսակի ներջ) և այլն:

*Լեւոնագրերը*¹⁰⁰ եզրերը, մղում է մտածելու, որ տեղեկությունները կարող էին վերաբերել ոչ թե կամ ոչ միայն քառա-վանկային մեխենագրական համակարգին, այլ՝ այբուբենին: Այս դեպքում պետք է պատասխանել մեկ այլ հարցի՝ հնարավոր է, որ IV դարում գոյություն ունեցած լիներ հայկական այբուբեն:

Նյութական գտածոների բացակայության պատճառով հարցին հնարավոր չէ վերջնական պատասխան տալ՝ ոչ դրական, ոչ էլ բացասական: Սակայն արժե այստեղ կրկին հիշատակել եթովպական ավանդազրույցը, որի համաձայն՝ Տրդատ Գ-ի օրոք երկու սրբակցաց հայեր՝ Թադեոսն ու Մարտիրոսը, ստեղծել են 22 տառանոց այբուբեն հայոց լեզվի համար¹⁰⁰: Ինչպես նշել ենք առաջին գլխում, նման տեղեկության գոյությունը թույլ է տալիս ենթադրելու, որ Տրդատ Գ-ի օրոք կարող էր ստեղծվել այբուբեն հայերենի համար, իսկ թե ինչու դա չի պահպանվել, այդ մասին կարելի է անել միայն ենթադրություններ:

Ավելացնենք, որ հինգերորդ դարում գրական հայերենի մշակվածության բարձր մակարդակը և գրաբարի բառապաշարը ևս վկայում են հօգուտ հայերենի՝ նախամաշտոցյան դարաշրջանում (ինչպես նախաքրիստոնեական շրջանում, այնպես էլ IV դարում) երկարատև գրավոր մշակման ենթարկված լինելու իրողության:

Ամփոփելով՝ տեսնում ենք, որ Հայաստանի IV դարի գրային իրավիճակն ուրվագծվում է հետևյալ կերպ.

1. Տրդատ Գ-ի հրամանով քրիստոնեության պետականացումից հետո արգելվում է հայալեզու մեխենագրությունը:

2. Տրդատ Գ-ի հրամանով արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում գործածվում են հունարենն ու ասորերենը՝ իրենց այբուբեններով:

3. Տրդատ Գ-ի սահմանած կարգը փոփոխվել է Խոսրով արքայի գահընկեցությունից (389 թ.) հետո. նշված երկու լեզուներով դպրություններին Արևելյան Հայաստանի պաշտոնական գրագրության համակարգում ավելացել է պահլավերենի (միջին պարսկերենի) կիրառությունը:

4. Արքունի գրագրության գոյությունը ենթադրում է արքունական դիվանների գոյություն, որտեղ պետք է պահվեին արտաքին հարաբերություններին, պետական-իրավական ակտերին վերաբերող և հասարակական կարևորություն ունեցող փաստաթղթեր:

5. Հոգևոր քարոզչության և կրթական ասպարեզների առկայությունն ինքնին ենթադրում է ուսումնական, գիտա-կրթական ձեռնարկների գոյությունը նշված լեզուներով:

6. Շարունակվում են շրջանառության մեջ գտնվել այն գործերը, որոնք ստեղծվել (կամ թարգմանվել) են նախաքրիստոնեական ժամանակաշրջանում և չեն արգելվել նոր կրոնի քարոզիչների կողմից (նաև հասել են V դար):

¹⁰⁰ Տարսիսյան, 1895, էջ 37; Դատունցյան Տրդատյ, 1895, էջ 75-76; Դատունցյան Հայոց արքայ Տրդատի (Թեթրազի) մասին, 2011, էջ 58-60:

7. IV դ. Հայաստանում առկա է կոթողային արձանագրությունների մշակույթը:

8. Նոր կրոնի քարոզական-գաղափարախոսական պահանջներով պայմանավորված՝ ստեղծվում են հիմնականում կրոնական, վկայարանական-պատմողական բովանդակություն ունեցող գրական հուշարձաններ:

9. Լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ IV դարի Հայաստանում կիրառվել են հետերիոգրաֆիայի («այլալեզվագրության») և հետերոէպիլիպի («այլալեզվախոսության») միջոցները:

10. Մեծագույն հավանականությամբ պետք է ընդունել օտար (հունական, ասորական, պարսկական) գրերով հայալեզու դպրության գոյությունը IV դարում:

11. Հիմք ընդունելով եթովպական ավանդազրույցի հաղորդումը՝ կարելի է ենթադրել, որ Տրդատ Գ-ի օրոք փորձ է արվել ստեղծելու այբուբեն հայերենի համար:

ՎԵՐՋԱՐԱՆ

(ՆԱԽԱՄԱՇՏՈՑՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ)

Հայաստանի նախամաշտոցյան դպրության մասին հնագիտական պեղումների և պահպանված մատենագրական բազմաթիվ հաղորդումների շնորհիվ այսօր ունենք հսկայական փաստական նյութ: Այն ներկայանում է հետևյալ պատկերով:

Հայկական լեռնաշխարհում գրի զարգացման նախափուլում («առարկայական գիր», ժայռապատկերներ, նշաններ զանազան իրերի վրա) առկա են մտքերի հաղորդման պարզուևակ և վաղազույն ձևեր: Այն սկզբնավորվում է քարի դարի վերջին փուլում:

Ք.ա. V հազարամյակից Հայաստանում վաղ պատկերագրության ներքում ձևավորվում է զարգացած պատկերագրությունը՝ գաղափարագրությունը, որը լայն տարածում է ստանում Ք.ա. IV–III հազարամյակներում: Ք.ա. III հազարամյակի կեսերին Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս վաղորդն-գեղաբան մշակույթի տարածմանը զուգահեռ հայաստանյան նշանագրված խեցեղենը տարածվում է շրջակա երկրներում (հարավում մինչև Կիլիկիա, Սիրիա և Պաղեստին, հյուսիսում՝ Հյուսիսային Կովկաս):

Ք.ա. III հազարամյակում պատկերագրերի զարգացմամբ և պարզեցմամբ ստեղծվում է գծային գրերի մի համակարգ (բաղկացած 400–500 նշաններից), որը կիրառվում է մինչև Ք.ա. I հազարամյակի սկիզբը: Այս համակարգի շուրջ 300 արձանագրություններ են գտնվել Հայաստանի տասից ավելի հնավայրերից, որոնք դեռևս վերծանված չեն:

Ք.ա. XV–VIII դարերում Հայկական լեռնաշխարհի արևմուտքում Եփրատի հովտում, ներմուծվում և կիրառվում են խեթա–ուրարտական հիերոգլիֆները՝ գրված լուփերենով: Գրային համակարգը բաղկացած է եղել շուրջ 500 հիերոգլիֆներից, ունեցել է գրության բուստրոֆեդեն (ամեն հաջորդ տողը նախորդին հակառակ) ուղղություն:

Վանի թագավորությունում (Բիաինիի, Ուրարտու, Արարատ) գործավել են երեք գրային համակարգեր: Տեղական ծագում ունեցող վանյան (բիաինա–ուրարտական) մեհենագրությունը բաղկացած է շուրջ 300 մեհենանշաններից (հիերոգլիֆներից), որոնք գրվել են աջից ձախ և վերից վար ուղղություներով: Ներկայումս վերծանված ու մեկնաբանված են շուրջ 60 մեհենագրեր, որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս ներադրելու, որ վանյան մեհենագրության լեզուն հնագույն հայերենն է:

Վանի թագավորությունում լայն կիրառություն են ունեցել սեպագիր համակարգերը: Սարգուրի Ա արքայի օրոք (Ք.ա. մոտ 840–825 թթ.) կանգնեցվել են ասորեստանյան սեպագրերով (չուրջ 600 նշան՝ ձախից աջ գրությամբ) ասուրերեն գրված արձանագրություններ: Այդ արքայից հետո ասուրերենով քնագրերը հանդիպում են ուրարտական արքաների երկնզու կոթողներում՝ գրված ուրարտական տեքստերից հետո, թարգմանելով վերջիններին:

Իշպուլինի արքայի օրոք (Ք.ա. մոտ 825–810 թթ.) ստեղծվեց տեղական սեպագրային համակարգը (չուրջ 200 նշան՝ ձախից աջ գրությամբ), որով մեզ են հասել ավելի քան 600 մեծ ու փոքր արձանագրություններ:

Վանի թագավորության անկումից մինչև քրիստոնեության ընդունումը Հայաստանում գործածվում են այբբենական գրային համակարգեր (ի տարբերություն նախկինում գործածված քառային ու վանկային համակարգերի): Քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո հայկական մեհենագրության գործածությունն արգելվեց, իսկ մեհենանշանները տարբեր դրսևորումներով (հմայագրեր, վարպետների նշաններ, «Նշանագիրք իմաստոց» ցանկեր՝ համառոտագրության նշաններ, մոզական դազվածքներ և այլն) շարունակեցին կիրառվել:

Ք.ա. III դարից սկսած գործածվում է հունարենն՝ իր գրով (ձախից աջ գրություն, 24 տառ), որը քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո լայն կիրառություն է ստանում Հայաստանում, հատկապես, կրոնական քարոզչության նպատակով:

Ք.ա. II – Ք.հ. II դարերից մեզ են հասել արամեատառ արձանագրություններ (աջից ձախ գրությամբ), որոնց վերձանությունը և լեզվի խնդիրը չի կարելի համարել վերջնականապես պարզված:

Քրիստոնեության պետականացումից հետո արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում Տրդատ Գ-ի հրամանով կիրառվում են հունարենն ու ասորերենը: Նրա ասհմանած կարգը իսխտովել է խոսքով արքայի գահընկեցությունից (389 թ.) հետո, երբ Արևելյան Հայաստանում արքունի գրագրության մեջ գործածվում է պահլավերենը (միջին պարսկերենը): Թե՛ ասորական և թե՛ պահլավական գրերի հիմքում ընկած է արամեական այբուբենը (22 տառ՝ աջից ձախ գրությամբ):

Հայկական լեռնաշխարհի տարբեր հնավայրերից գտնվել են բազմաթիվ գրակիր առարկաներ, որոնք այստեղ են հայտնվել ռազմական, առևտրատնտեսական, մշակութային ու այլաբնույթ հարաբերությունների արդյունքում: Մյուսը թեպետ չեն կազմում հայաստանյան դպրության մասը, սակայն մտնում են նախամաշտոցյան Հայաստանի գրային հուշարձանախմբի մեջ:

Տակավին զգալի թիվ են կազմում անհայտ ծագումով և առեղծվածային նշանակությամբ գրային հուշարձանները, որոնցում հստակ ընդգծվում է երկու կողմի գրահամակարգը: Թե՛ այդ գրահամակարգերը, թե՛ եզակի օրինակներով կողմի գրահամակարգը:

հայտնի առեղծվածային հուշարձանները սպասում են իրենց վերձանողնե-
րին...

Նախամաշտոցյան Հայաստանից հայտնաբերված գրավոր մշակույթի
հուշարձանները կարելի է խմբավորել ըստ մի քանի բնութագրական հատկա-
նիշների:

Ըստ ծագման և պատկանելության՝

1. Հայաստանում ստեղծված ու զարգացած պատկերագրային համա-
կարգեր, որոնք բաժանվում են երկու հիմնական խմբի՝

ա) հայկական մեհենագրությունը՝ իր փուլերով,

բ) հստակ չթվագրվող, առեղծվածային արձանագրություններ, որոնք
ունեն զուտ հայաստանյան ծագում,

2. օտար ծագում ունեցող, բայց Հայաստանի բնիկների կողմից կիրառ-
ված գրային համակարգեր,

3. Հայաստանի տարածքում հայտնաբերված, սակայն օտարների կողմից
ստեղծված գրակիր հուշարձաններ:

Ըստ գրային համակարգի բնույթի՝

1. բառային,

2. բառ-վանկային,

3. այբբենական:

Ըստ գրանշանների պոստարին տեսքի՝

1. պատկերանշանային (այդ թվում՝ հիերոգլիֆ),

2. գծանշանային,

3. սեպանշանային,

4. տառային:

Ըստ արձանագրությունների բովանդակության¹⁰⁰.

1. արքայական արձանագրություններ՝ նվիրված աստվածների պաշտա-
մունքին,

2. ռազմական արշավանքների նկարագրություններ,

3. թագավորական նախնիներին ձուլված գրակիր կոթողներ,

4. թագավորական իշխանության և արքայի անձի աստվածացմանը վե-
րաբերող արձանագրություններ,

5. արքայական հիշատակարաններ քաղաքների ու շինությունների
(հատկապես՝ սրբավայրերի) հիմնադրման ու թարեկարգման մասին,

¹⁰⁰ Այս դասակարգումը ստացել ենք այսօր վերձանված, հիմնականում օտարաբնիկ արձանագրությունների
հաջորդական սրբուխում (տե՛ս Մովսիսյան, 2003 (ա), էջ 229–230): Հայալեզու արձանագրությունների
հետագա վերձանությունը կարող է որչափի փոփոխություններ մտցնել այս գտնվում:

6. արձանագրություններ զանազան ծեսերի, արարողությունների (այդ թվում՝ մրցույթների) մասին,
7. նոր օրենքներ ու կարգեր սահմանող րևագրեր,
8. արքայական նվիրատվական արձանագրություններ,
9. թագավորական դրամների մակագրություններ,
10. արքայական նամակագրության արձանագրումներ,
11. հոգևոր-պաշտամունքային բազմաբնույթ րևագրեր,
12. ժամանակագրական-օրացուցային արձանագրություններ,
13. ընծայագրեր,
14. քաղոյա-խրատական բովանդակությամբ չափածո ստեղծագործության (ողերգությամբ) հատվածներ,
15. պատմական բովանդակությամբ չափածո ստեղծագործության (ողերգությամբ) հատվածներ,
16. տապանագրեր (այդ թվում՝ չափածո եղերերգեր),
17. պատկանելություն ցույց տվող արձանագրություններ,
18. տարողության նշաններ,
19. մենանշաններ,
20. դեռևս անհայտ բովանդակությամբ գրակիր հուշարձաններ:

Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթի հուշարձանները կարելի է խմբավորել նաև ըստ գրանյութի, գրության ուղղության և այլ հատկանիշների:

Ավարտելուց առաջ անհրաժեշտ ենք համարում մեկ անգամ ևս շեշտել, որ հազարամյակների ընթացքում Հայկական լեռնաշխարհում ստեղծված գրավոր մշակույթը չէր կարող անհետևանք կորչել, և մաշտոցյան դպրության կատարելությունը սլայմանավորված էր նաև նախամաշտոցյան շրջանում արմատավորված գրային մտածողությամբ:

Ամփոփելով շարադրված ողջ նյութը՝ տեսնում ենք, որ նախամաշտոցյան Հայաստանում կիրառվել են տասներկու գրային համակարգեր, կանգնեցվել են բազմահազար արձանագրություններ մայրենի և օտար լեզուներով: Դա ավելի քան խոսուև վկայությունն է մեր նախնիների՝ գրի ու գրականության նկատմամբ տածած հարգանքի և սիրտ, որի սերնախոս ապացույցն է դպրության Տիր աստծո պաշտամունքը նախաքրիստոնեական դարաշրջադպրության Տիր աստծո պաշտամունքը շարունակվեց նաև հետագայում՝ Մեսրոպ Մաշտոցի ու նրա հանճարեղ ժառանգների սրբացմամբ, ինչի ականատեսն ու վկան ենք այսօր մենք...

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԲԵՀ – «Բաները Երևանի համալսարանի»:
ԳԳՄԻ – Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտ:
ԴՀԱՄՆԳՆ – Դաշտային հետախուզական աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջան:
ԵԱՀ ... ԳՆ – Երիտասարդ արևելագետների հանրապետական ...-րդ գիտական նստաշրջան:
ԵԲԴ – Երևանի բիայնական դամբարան:
ԵԶՊԹ – Երևան քաղաքի պատմության թանգարան:
ԶԹ – Զեկուցումների թեզիսներ:
ԷԹ – «Էրեբունի» թանգարան:
ԼՀԳ – «Լրաբեր հասարակական գիտությունների»:
ՀԱ – «Հանդես Ամսօրեայ»:
ՀԱԴ – Հին Արևելքի պոեզիա, ԵՊՀ հրատ., Ե., 1982, 616 էջ:
ՀԱԴԹ – Հայաստանի ազգագրության պետական թանգարան:
ՀԺԴ – Հայ ժողովրդի պատմություն, ՀՄԱՀ ԳԱ հրատ., հ. 1, Ե., 1971, 992 էջ:
ՀԺԴԶ, 1981 – Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, ԵՊՀ հրատ., հ. 1, Ե., 1981, 944 էջ:
ՀԺԴԶ, 2007 – Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, ԵՊՀ հրատ., հ. 1, Ե., 2007, 576 էջ:
ՀԺԴԶ, 2011 – Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, ԵՊՀ հրատ., հ. 2, Ե., 2011, 696 էջ:
ՀՀԱՆԳՆ – Հնագիտական հետախուզական աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջան:
ՀՊԴԹ – Հայաստանի պատմության պետական թանգարան:
ՀՍՀ – Հայկական սովետական հանրագիտարան:
ՄՀ-Ա – Մատենագիրք Հայոց, Ա հատոր, Ե դար, Անթիլիաս, 2003, 1288 էջ:
ՄՀ-Բ – Մատենագիրք Հայոց, Բ հատոր, Ե դար, Անթիլիաս, 2003, էջ 1289–2601:
ՄՀ-Դ – Մատենագիրք Հայոց, Դ հատոր, Է դար, Անթիլիաս, 2005, 452 էջ:
ՄՀ-Ե – Մատենագիրք Հայոց, Ե հատոր, Է դար, Անթիլիաս, 2005, 1403 էջ:
ՄՀ-ԺԵ – Մատենագիրք Հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, գիրք Բ, Անթիլիաս, 2011, 894 էջ:
ՊԲՀ – «Պատմա-քանոսիրական հանդես»:
ՏՀԳ – «Տեղեկագիր հասարակական գիտությունների»:

ВДИ – "Вестник древней истории."

ГАНМК – Гос. Академия истории материальной культуры.

ГМИИ – Гос. музей изобразительных искусств им. А. С. Пушкина.

ДВ – "Древний Восток".

ДВМК – "Древний Восток и мировая культура", М., 1981.

КВ – "Культура Востока".

КБ-1 – Плотровский Б. Б., Кармир-Блур, I, Изд-во АН Арм. ССР, Е., 1950, 100 с, 8 л. табл.

КБ-2 – Плотровский Б. Б., Кармир-Блур, II, Изд-во АН Арм. ССР, Е., 1952, 78 с, 1 л. рис.

КБ-3 – Плотровский Б. Б., Кармир-Блур, III, Изд-во АН Арм. ССР, Е., 1955, 74 с.

ՀԱՅԵՐԵՆ

1. Աբգարյան Գ., Սերեռոսի պատմությունը և Անանուհի անեղծվածը, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Ե., 1965, 252 էջ:
2. Աբրեղյան Մ., Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը, «Մովսեսական գրականություն», 1941, թիվ 1, էջ 47-51; թիվ 2, էջ 41-51:
3. Աբրեղյան Մ., Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը, ՄՄՀԺ, 1962, էջ 242-305:
4. Աբրեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, Երկեր 8 հատորով, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 3, Ե., 1968, 693 էջ:
5. Աբրահամյան Ա. Ա., Գառնիի հուշարձան արձանագրությունը, «Էջմիածին», 1947, մարտ-ապրիլ, էջ 61-72:
6. Աբրահամյան Ա. Գ., Նախամեսրոպյան հայ գրականության հարցը, «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», հ. Ա, Ե., 1941, էջ 41-52:
7. Աբրահամյան Ա. Գ., Հայկական պաշտօնագրաֆիա, ԵՊՀ հրատ., Երևան, 1948, 186 էջ:
8. Աբրահամյան Ա. Գ., Հայ գրի և գրչության պատմություն, Հայպետհրատ, Ե., 1959, 416 էջ:
9. Աբրահամյան Ա. Գ., Նախամաշտոցյան հայ մատենագրությունը և դանիելյան գրեթե-ՊԲՀ, 1963, թիվ 4, էջ 131-144:
10. Աբրահամյան Ա. Գ., Նախարրիստոնեական հայ գրի և գրականության հարցի շուրջը, «Գիտություն և տեխնիկա», 1969, թիվ 1, էջ 27-36:
11. Աբրահամյան Ա. Գ., Հայ գիր և գրչություն, ԵՊՀ հրատ., Ե., 1973, 374 էջ:
12. Աբրահամյան Ա. Գ., Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն, «Հայաստան» հրատ., Ե., 1982, 152 էջ:
13. Ագաբանգեղոս, Հայոց պատմություն (ընև. քննազիղ Գ. Տեր-Սևդոյանի և Ս. Կանայան-ցի, աշխ. թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի), ԵՊՀ հրատ., Ե., 1983, 700 էջ:
14. Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, «Հայաստան» հրատ., Ե., 1972, 430 էջ:
15. Աղոնց Ն., Երկեր, հ. Ա, ԵՊՀ հրատ., Ե., 2006, 652 էջ + 1 էջ ներդիր:
16. Ազիզյան Ա., Կուր-արաբսյան խեցեղենի զարգացման էիմոնական նշանակների շուրջ (ըստ Շիրազականի հնագիտի նյութերի), «Հարիտուս» մարդաբանական և հնագիտական ուսումնասիրություններ, I, Հայաստանի և հարակից երկրների ազգաբանություն և հնագիտություն (25-27 հոկտեմբեր, 2010, միջազգային գիտամոզովի նյութեր), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2014, էջ 223-233:
17. Ազիզյան Հ., Նամակ խմբագրությանը, ՊԲՀ, 1976, № 3, էջ 276:
18. Ալիյան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1880, 590 էջ:
19. Ալիյան Ղ., Հայաստանում, Պատմիչը և պատմությունը հայոց, Վենետիկ, 1901, 560 էջ:
20. Ալոյսյաննան Ա., Պատմություն հայ Կեսարիոյ, Գահիրե, հ. Ա, 1937, 1294 էջ:
21. Ալոյսյաննան Ա. Ա., Պատմություն հայ դպրոցի, Գահիրե, 1946, 626 էջ + 19 թ. նկ:
22. Անդենան Ն., Հայերեն այբուբենի գիտը, «Հանդես Ամսօրնայ», 1938, թիվ 9-12, սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 286-318:

¹⁰⁰ Մեր աշխատանքի համար սկզբնաղբյուրի արժեք ունեն ոչ միայն հին ու միջին դարերի մատենագիրների երկերը, այլև նաեւ գիտական ու գրադասական ուսումնասիրությունները, որոնք ներկայացված են ինչպես մեմուարյունների, այնպես էլ հոդվածների և այլ մեթոդներով Այդ իսկ պատճառով օգտագործված գրականության ցանկը ներկայացվում է նրա ատանց թեմատիկ բաժանումների՝ ստատիստիկայով միայն ըստ խելուների:

23. Ալինեան Ն., Մ. Մխրտաչ «Արդյազեռ. Կանգնելու և զործունեությունը հանդերձ կենսագրությունը Ս. Սահակյա, Վիեննա, 1949, 476 էջ:
24. Արսայան Դ., Հայոց զրի մասին (Գրախոսություն), «Մուրճ», 1892, № 12, էջ 1841–1851:
25. Արսայան Էդ., Գոյություն ունեցել է արդյոք համաձայնության զիր և գրականությունը – Գիտություն և տիկնիկյա, 1969, թիվ 12, էջ 33–40:
26. Արսայան Էդ., Նախնադարյան հայ զրի և գրականության, մարտության այրուքների և հարակից հարցերի մասին, ԵՊՀ հրատ., Ե., 1977, 268 էջ:
27. Արսայան Էդ., Մխրտաչ Մաշտոց, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1986, 116 էջ:
28. Արջալյան Ն., Պատմություն Հայոց գրականության, Ամբողջական երկեր, IV, «Համագրային» մատենաշար, Պեյրուք, 1970, 500 էջ:
29. Անադյան Հր., Մ. Մխրտաչի և զերու գլուխ պատմության աղբյուրներն ու անոնց ընկությունը, Փարիզ, տպ. «Բանասեր»-ի, 1907, 46 էջ:
30. Անադյան Հր., Հայոց զրերը, Վիեննա, 1928 (495 էջ, ներդիր համըլթած 8 տախտակներով):
31. Անադյան Հր., Երեք հարց Մարտության այրուքների շուրջ, «Էջմիածին», 1946, օգոստոս–հոկտեմբեր:
32. Անադյան Հր., Հայերեն արժատական բառարան, հ. I, ԵՊՀ հրատ., Ե., 1971, 700 էջ:
33. Անադյան Հր., Հայերեն արժատական բառարան, հ. II, ԵՊՀ հրատ., Ե., 1973, 688 էջ:
34. Անադյան Հր., Հայերեն արժատական բառարան, հ. III, ԵՊՀ հրատ., Ե., 1977, 636 էջ:
35. Անադյան Հր., Հայերեն արժատական բառարան, հ. IV, ԵՊՀ հրատ., Ե., 1979, 676 էջ:
36. Անադյան Հր., Հայոց զրերը, «Աշխատան» հրատ., Երևան, 1968, 400 էջ:
37. Անադյան Հր., Հայոց զրերը, ԵՊՀ հրատ., Երևան, 1984, 688 էջ:
38. Այվազյան Գ., Ուղղագրություն լեզուիս Հայոց, Թեղուրիս, 1869, 94 էջ:
39. Այվազյան Մ. Մ., Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից, «Լույս» հրատ., Ե., 1986, 112 էջ:
40. Այվազյան Մ., Վանի թագավորության սեպագիր արձանագրությունները, հ. I, ԵՊՀ հրատ., Ե., 2003, 120 էջ:
41. Այվազյան Մ., Վանի թագավորության սեպագիր արձանագրությունները, հ. II, ԵՊՀ հրատ., Ե., 2006, 252 էջ:
42. Այվազյան Մ., Ուրարտերեն – հայերեն. Թատապաշար և պատմահամեմատական բնականություն, ԵՊՀ հրատ., Ե., 2008, 400 էջ:
43. Այվազյան Մ., Ուրարտերեն. Քերականություն և հիմնական բառապաշար, ԵՊՀ հրատ., Ե., 2013, 144 էջ:
44. Անանյան Գ. Գ., Ալեհուլներ հայոց հին և միջնադարյան հրապարակախոսության, ԵՊՀ հրատ., Ե., 2005, 304 էջ:
45. Անանու ժամանակագրություն, խմբագր. յորինելու յե: դարու, Վենետիկ, 1904, 106 էջ:
46. Անադյան Հ. Մ., Հայկական մատենագիտություն, հ. II, Հայկական ՄԱԹ ԳԱ հրատ., Ե., 1959, 1230 էջ:
47. Առաքելյան Ա. Գ., Հայ ժողովրդի մասվոր մշակույթի զարգացման պատմություն (I դ. Ք.ա. – XIV դ.), Հայպետհրատ, Երևան, 1959, 724 էջ:
48. Առաքելյան Բ. Ն., «Կօշիկը» որպես սոցիալական տերմին, «Տեղեկագիր», ՄԱՀ ԳԱ հայկ. ֆիլիալի հրատ., 1940, № 3, էջ 75–79:
49. Առաքելյան Բ. Ն., Հայկական պատկերաբանականները IV–VII դարերում, ՀՄԱԹ ԳԱ հրատ., Ե., 1949, 128 էջ + 21 թ. նկարներ:
50. Առաքելյան Բ. Ն., Լատիներեն արձանագրություններ Արտաշատ մայրաքաղաքից, ՊՐՀ, 1964, № 4, էջ 302–311:
51. Առաքելյան Բ. Ն., Հին հայկական պաշտամունքը և կրոնը, ՀԺԳ, 1971, էջ 900–906:
52. Առաքելյան Բ. Ն., Արտաշատի 1979–1980 թթ. պեղումների հիմնական արդյունքները, Հայկական ՄԱՀ–ում 1979–1980 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գեկույցումների թեզիսներ, Ե., 1981, էջ 19–20:
53. Առաքելյան Բ. Ն., Խաչատրյան Ժ. Դ., Արտաշատի 1981–1982 թթ. պեղումների հիմնական արդյունքները, Հայկական ՄԱՀ–ում 1981–1982 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նախադրյան, Զեկույցումների թեզիսներ, Ե., 1983, էջ 20–21:

54. Մուսրեյան Բ. Ն., Չախուկյան Գ. Բ., Սարգսյան Գ. Խ., Ուրարտու-Հայաստան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1988, 170 էջ:
55. Մուսրեյան Բ. Ն., Տիրացյան Գ. Ա., Խաչատրյան Ժ. Գ., Հին Հայաստանի առակին (I-IV դդ.), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969, 70 էջ + 59 տախտակ:
56. Ավագյան Ն. Բ., Հայկական գուլպաները և կրանց զարդանախշերը, ՊՐՀ, 1967, № 4, էջ 250-257:
57. Ավանեսյան Լ., Հայկական զորքերի զարդապատկերների և Հայաստանի ժայռապատկերների համեմատական վերլուծության փորձ, «Լասն Հայրության», 2003, № 5, էջ 12-14:
58. Ավետիսյան Հ. Գ., Արագած (Ուրարտական ամրոցի պեղումներ), ԵՊՀ հրատ., Ե., 2001, 232 էջ:
59. Ավետիսյան Կ., Արարած և երկրային աղարվածներ, ՀՐՀ հրատ., Ե., 1995, 128 էջ:
60. Ավերեան Մ., Լիակատար վարք և վկայաբանություն սրբոց, որք կան 'ի հին Տոնացուցի եկեղեցույ Հայաստանեաց, Կ. Ե., Վենետիկ, 1813, 432 էջ + 3 նկար:
61. Բախթյան Կ., Հայ միջնադարեան գրականություն, Հնդկնաբանական հրատարակություն, Երևան, 2006, 232 էջ:
62. Բայրուրյան Ե., Հայաստանի գունազարդ կերամիկայի պորթլերը, «Տեղեկագիր» (ՀԽՍՀ Պատմ. և գրակ. ինստիտուտ), գիրք II, Ե. 1937, էջ 268-308:
63. Բաումաշեան Կ., Պատկ մը Փրփրփի Միսկերի գերեզմանին վրայ, «Բազմավայ», 1898, Կ. Օ., էջ 481-483, 533-538:
64. Բարթիկյան Հ. Մ., Գասնիի հունարեն արձանագրությունը և Մովսես Խորենացին, ՊՐՀ, 1965, № 3, էջ 229-234:
65. Բաբխուրյան Ա. Գ., Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, Հայպետհրատ, Ե., 1935, 94 էջ + LXXX էջ նկարազարդում:
66. Բարսեղյան Լ. Ա., Հայոց զինը Մաշտոցից շատ ատաղ, «Գիտություն և տեխնիկա», 1964, № 3, էջ 48-51:
67. Բժշկեանց Մ., Ճանապարհորդություն 'ի Անաստան, Վենետիկ, 1830, 425 է:
68. Բիշինե Բ., Հակոբյան Հ., Հմայկյան Մ., Պարմելիանի Ն., Արտաշես արքայի եղբայրտ սահմանադրող Մարտիրոսից, Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր. Գեորգ Տիրացյանի հիշատակին նվիրված գիտաժողովի գեկուցումներ, Ե., 2001, էջ 79-82:
69. Բորխտլ Ա., Հայաստանի Արտաշես թագավորի արձանագրությունները, «Մովսեսական Հայաստան» օրաթերթ, 1941, 16 փետրվարի, թիվ 39, էջ 3:
70. Բրիստոլ Վ., Տարեգրություն հայ ժողովրդեան պատմական ճակատագրին, թարգմ. ռուս. ընթերցելի՝ Յ. Վ. Մարգարեան, Վենետիկ, 1931, 253 էջ:
71. Գաբրիելյան Հ. Կ., Հայկական լեռնաշխարհ, ԵՊՀ հրատ., Ե., 2000, 376 էջ + 9 թերթ նկ.:
72. Գաբրիելյան Յ., Պատմություն մատենագրության հայոց, Վիեննա, 1851, 70 էջ:
73. Գայանյան Վ., Ուրարտական արձանագրությամբ բրոնզե իրեր Կամոյից, ԼՀԳ, 1984, № 2, էջ 101-102:
74. Գառնալյան Բ., Սարգսյան Գ., Ժայռանկարների եղբայրտ խումբ Գեղամալանի «Կարմիր բարանավուն», Հայաստանի նկագույն մշակույթը, 3, Ե., 2003, էջ 5-12:
75. Գառնալյան Գ., Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2009, 928 էջ:
76. Գարսազյան Ա. Մ., Քննական պատմություն Հայոց (ըստ երթագույն պատմական, լեզուաբանական և բանասիրական տեղեկությանց), մասն Դ, Հրատարակություն Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերության, № 87, Թիֆլիս, 1895, 288 էջ:
77. Գարանիճյան Հ. Գ., Լարամ-Սին և իր թշնամիներն ըստ հատեան ընթացի, ՀԱ, 1929, № 5, էջ 287-288:
78. Գիլջան Բ., Արևմտյան թաղարարկությունը և Ուրարտուն (համառոտաժ թարգմանություն), «Իրան-նամե», 1993, ք. 5, էջ 16-17:
79. Գրիգոր Մազիարտուհ Թոթոր (ընթացի յառաջարկում և ծանօթագրություններով առաջին անգամ ի լույս բերանց) Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, 352 էջ:
80. Գրիգորյան Գ., Գրի պատմությունը, ԱրմՖան հրատ., Ե., 1940, 96 էջ:
81. Գրիգորյան Գ., Հայկական վիճագրություն, «Չանգակ 97» հրատ., Եր., 2000, 208 էջ:

82. Գրիգորյան Գ., Հակոբերյան Ա., Սյունիքի պատմություն, «Հրազդան» հրատ., Ե., 2001, 316 էջ:
83. Դանիելյան Ա. Մ., Արտաշես I-ի հաստատած սահմանադրերի իրականացման նշանակությունը, ՊԲՀ, 1977, № 3, էջ 235-244:
84. Դանիելյան Է. Լ., Արտաշես I-ի հողաքնն քաղաքականության հարցի շուրջ, ՊԲՀ, 1974, № 4, էջ 129-132:
85. Դավթյան Ա., Հայկական կարգախոս, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1975, 68 էջ + 101 աղ:
86. Դիտրոսո Միկիլիսի, Պատմական գրողարան (յուրգմ., առաջաբանը և ծանոթ. Ս. Մ. Կրկաշարյանի), Օտար աղյուսիկները Հայաստանի և հայերի մասին, 14, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1985, 204 էջ:
87. Դուրբան Ե., Պատմություն հայ մատենագրության. Ի վաղ ժամանակաց մինչև մեր օրերն, Կ. Պոլիս, 1885, 120 էջ:
88. Դուրբան Ե., Ազգային պատմություն, Ամբողջ երկեր, Գ. «Դուրբան Մատենադարան», թիւ 4, Երուսաղեմ, 1934, 478 էջ:
89. Դևեկյան Ա. Հ., Ուրարտական հուշարձաններից հայտնի կոթարգեզանն կնիքների շուրջ, Էրեբունի-Երևան. Հանրագիտական գիտական հաստաշրջանի հիմնադրույթներ, ՀՀ ԳԱԱ հրատ., Ե., 1998, էջ 3-4:
90. Եղիազարյան Վ., Ավանդակներ հայոց նախամշտոցյան գրականության, «Լուսակն» հրատ., Երևան, 2011, 178 էջ:
91. Եղիազարյան Վ., Հայ էին գրականության պատմություն, «Արմավ» հրատ., Ե., 2014, 488 էջ:
92. Եղիաբեան Ա., Մխարպեան սաստերու ակունքները, Արքիպաս, 2005, 268 էջ:
93. Եղիշիկ վարդապետի Մատենագրությունը, Վենետիկ, 1859, 382 էջ:
94. Եղիշիկ վասն «Արղղանայ եւ Հայոց պատերազմին, աշխատութեամբ Ե. Տեր-Միխայելան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1957, 224 էջ:
95. Ենգիբարյան Ն. Գ., Ուրարտական դամբարաններ Նորասուիք, ՀՀ 1989-90 թթ. ԴՀԱԱՆԳՆ 2Թ, Ե. 1991, էջ 66-69:
96. Ենգիբարյան Ն. Գ., Ուրարտական կնիքով դամբարան Քուչակից, Հայաստանի հնագույն մշակույթը, 3, Երևան, 2003, էջ 110-114:
97. Եսայան Ա. Ա., Հայաստանի հնագիտություն, 1, ԵՊՀ հրատ., Ե., 1992, 318 էջ:
98. Եսայան Ա. Ա., Արաքսյան Լ. Լ., Ներքին խնձոր (Կայսի Դերն) ամրոցը, ՊԲՀ, 1991, № 1, էջ 110-121:
99. Եսայան Ա. Ա., Բիթագով Լ. Ն., Հմայակյան Ա. Գ., Կաննեյան Ա. Գ. Երևանի քիսյակական դամբարանը (2), տե՛ս Մոնթե Մելեոնյան, Ուրարտական ժայռափոր դամբարանները (Հայաստանի հնագիտական հուշարձանները), Ե. 1995, զրոյմ, էջ 55-79:
100. Եսայան Ա., Քիլիմեյան Գ., Հակոբերցոյ ամրոցը, ԼՀԳ, 1991, № 6, էջ 102-113:
101. Երանեղյան Մխարպայ Հայոց վարդապետի հոտը ընդդէմ հնայից, ՀԱ, 1958, էջ 379-381:
102. Երեմյան Ս. Տ., Նախը-ի-Ռուտոննի «Քաարա Ի Զարդուչո» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, ՊԲՀ, 1966, № 2, էջ 59-70:
103. Երեմյան Ս. Տ., Ե. Մաղո և VII դարի հայոց «Միջադարացոյց»-ը. - Մաղո և հայագիտության հարցերը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1968, էջ 75-91:
104. Երիզան Բ., Գասպարյան Բ., Ներքին Սասնաշենի քարի կորույնի նշանագրերը, Հակոբյան քաղաքակրթությունը հնագույն ժամանակներից մինչև քրիստոնեության ընդունումը, 2Թ, Ե., 2000, էջ 13-14:
105. Երևան I - Կատաղոց ԵՔՊԹ հնագիտական իրերի, I, Ե., 1964, 74 էջ + 9 ք. նկ.:
106. Երևան II - Կատաղոց ԵՔՊԹ հնագիտական իրերի, II, Ե., 1967, 115 էջ + 15 ք. նկ.:
107. Երևան III - Կատաղոց ԵՔՊԹ հնագիտական իրերի, III, Ե., 1972, 172 էջ:
108. Զամինեան Արքաիստ, Պատմություն հայոց էին գրականության, Պիկուր, 1941, 234 էջ (առաջին տպագրությունը՝ Նոր Նախիջեան, 1914):
109. Զարբանույան Գ. (Գ. Զ.), Մեր ազգին էին ձեռագրացը վաղ համասու տեղեկություն, «Քազմաձէպ», 1847, էջ 200-204:
110. Զարբանույան Գ., Պատմություն հայերէն դպրութեանց, Ա. Հին մատենագրություն, Վենետիկ, 1865, 649 էջ:

111. Չարքեանյան Գ., Հայկական էին դպրության պատմության, երրորդ տարաբնույթի յաւերածոք եւ փոփոխութեամբք, Վենետիկ, 1897, 822 էջ:
112. Էջիբեկյան Ժ. Գ., Հայաստանը եւ Սեկւկանները, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1979, 128 էջ:
113. Էրեւրուի-երևան. Հանրապետական գիտական եւստաշրջանի հիմնադրույթներ, ՀՀ ԳԱԱ հրատ., Ե., 1998, 30 էջ:
114. Թաշեան Բ. (Թարեց), Արշակունի-Հայաստանի հազարամյա փտարը, Գանիր, 1950, 558 էջ:
115. Թոխայրյան Կ., Հայկական օրագույրը ժայտարարութեանում, «Ակունք», 1991, № 5-6, էջ 20-21:
116. Թոխայրյան Կ., Մաշտոցեան տառանների եւ դրանց ժայտարարութեան եմանակների աղերսների շուրջ, «Քաղաքացի», 2003, № 1-12, էջ 44-100:
117. Թորամանյան Թ., Կրթութեան հայկական ճարտարապետութեան պատմութեան (Աշխատութեանների ժողովածու), Արման հրատ., Ե., MCMXLII (=1942), 404 էջ:
118. Թորոյան Ռ. Մ., Թեղուտի փաղ երկրագործական բնակավայրը (Ք.ա. IV հազարամյակ), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1976, 142 էջ:
119. Թորոյան Ռ. Մ., Կրկնաշրջան Մ. Մ., Հնագիտական եւրոպութեան էշմաններից, ՊԲՀ, 1971, № 1, էջ 286-290:
120. Ժամկոյան Հ. Գ., Հայաստանը եւսնաբանութեան-համայնական հասարակութեան եւ աղրկատեղութեան յրջանում, սրտակ 1, Եր., 1961:
121. Ժամկոյան Հ. Գ., Հին հայկական մշակույթը.- Հայ ժողովրդի պատմութեան, Ե., 1975, էջ 193-196:
122. Ժամկոյան Հ. Գ., Հայ ժողովրդի պատմութեան. Սկզբից մինչեւ Ք.հ. III դարի վերջը, Ե., 2006, 354 էջ:
123. Ժերեյուլ Ա. Ա., Հունարեան դամբանական արձանագրութեան գտնված Վաղարշապատում, տն'ս Քաղաքար Ա., Հին Վաղարշապատի պեղումներից, Յեր., 1935, Հաւթրված I (հայերեան եւ տուսերեան), էջ 75-83):
124. Ինճինեան Դ., Հնախտութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Խո. Գ., Վենետիկ, 1835, 394 էջ:
125. Իշխանյան Ռ. Ա., Ժայտարարութեանը պատմում եւ, «Գիտութեան եւ տեխնիկա», 1987, թիվ 5, էջ 21-24:
126. Իշխանյան Ռ., Պատկերազարդ պատմութեան հայոց, գիբք Ա, «Արևիկ» հրատ., Երևան, 1990, 160 էջ:
127. Բոցայեկյան Հ. Ռ., Պաշտամունքն ու հողատարիցք ուշ բրոնզեդարրյան Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1973, 172 էջ:
128. Բոցայեկյան Մ. Ա., Էրեւրուի թեղ-բաղայի պատմութեան, «Հայաստան» հրատ., Ե., 1971, 200 էջ + 24 թ. նկ.:
129. Կապանի Յեր., Դամբարանների պեղումների Խոթերդայի Հայաստանում, ՀԽՍՀ լուստող-կոնատ. Գիտ. ինտ., Յեր., 1931, 240 էջ:
130. Լևո, Մ. Մաթոս, Թիֆլիս, 1904, 336 էջ:
131. Լեւո, Վանի թագավորութեանը, Թիֆլիս, 1915, 384 էջ:
132. Լևո, Երկերի ժողովածու 10 հատորով, Խո. 1, «Հայաստան» հրատ., Եր., 1966, 568 էջ:
133. Լիսիցյան Մտ., Գանճի տամարի Խունարեան արձանագրութեանը, «Մովսեսական Հայաստան», 23. 09. 1945:
134. Լիսիցյան Լ., Գեղամա լեաների ժայտարարութեաններից (զովել է 1913 թ., գերմաներենից թարգմանել եւ հրատարակման է պատրաստել հնագետ Գևորգ Տիրացյանը).- ԼՀԳ, 1972, թիվ 1, էջ 51-57:
135. Լուկուկոյա Չ., Գրի զարգացումը, «Հայկեանիտատ», Ե., 1955, 360 էջ:
136. Լևոյան Գ., Մի առեղծվածային քանդակագրութեանը, «Մովսեսական արվեստ», 1941, № 2-3, էջ 69-70:
137. Խանգաղյան է. Վ., Մկրտչյան է. Հ., Պարսամյան է. Մ., Մեծամոր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1973, 218 էջ + 43 աղրտակ:
138. Խաչատրյան Ժ. Գ., Արտաշատի 5-րդ յրդի 1979-1980 թթ. պեղումների հիմնական աղրույթները, Հայկական ՍՍՀ-ում 1979-1980 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների աղրույթներին նիխրված գերույթների թեղաներ, Ե., 1981, էջ 20-22:

139. Խաչատրյան Ժ. Գ., Արտաշատ, Ի. Անտիկ դամբարանադաշտեր (1971–1977 թթ. պեղումները), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1981 (ա), 200 էջ + 16 ք. նկ. + 2 ներդիր:
140. Խաչատրյան Ժ., Արտաշատից հայտնաբերված լատիներեն արձանագրությանը դրոշմված կղմիկները և աղյուսակներ, ՊՐՀ, 2006, № 1, էջ 230–235:
141. Խաչատրյան Ժ., Կարապետյան Ի., Կամեղյան Ռ., Արտաշատի 1998–1999 թթ. պեղումների արդյունքները, Փն Հայաստանի մշակույթը, XII, Հանրապետական գիտական նախադրան, Չեկուցումների հիմնադրույթներ (նվիրվում է ակադ. Բարկին Սուրենյանի ծննդյան 90–ամյակին), Ե., 2002, էջ 51–54:
142. Խաչատրյան Մ. Մ., Արագածոտնի նախաուրարտական ջրաբաշխական համակարգի փորագրված գծագիրը.– ՊՐՀ, 1971, թիվ 3, էջ 127–137:
143. Խաչերյան Լ. Գ., Հայ դպրության պատմությունը՝ քննական տեսանկյունից, Ի. Կ. Հայ դպրության սկզբնաղբույցի վաղնջական ժամանակներից մինչև ներառնական դարաշրջանի մասին (Ք.ա. VIII դ. – IV դ. Ք.հ.), Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, 1700–ամեակի մատենադար, 6, Աբիդիստ, 2000, 372 էջ:
144. Խաչիկյան Լ., Նախամաշտոցյան գրի հարցը և ինպագրությունը, ՊՐՀ, 1963, № 4, էջ 145–167:
145. Խաչիկյան Լ., Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600–ամյակը, «Բաները Մատենադարանի», 1964 (ա), № 7, էջ 11–24:
146. Խաչիկյան Լ., Գրիգոր Պարթևի նվթագրված «Հարցումը» որպես հայ մատենագրության երախաղիք, «Բաները Մատենադարանի», 1964 (Բ), № 7, էջ 301–330:
